

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(10)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդը

Գլխավոր խմբագիր՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Գրիշա Ալեքսանի Ղարիբյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյան – պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

Հարություն Ալեքսանի Մարգարյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ Գարեգինի Մինասյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայկ Մկրտիչի Դերձյան – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հենգել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Աննա Գրիգորի Ասատրյան - արվեստագիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Պարզևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեդա Քերրորի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեյրան Արտուշայի Ջաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Մելսիկ Պարզևի Մկրտումյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝
Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.:
ԵՊՀ հրատ., 2014 թ. – 297 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2014 թ.

© Հեղ. խումբ, 2014 թ.

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԲՅՈՒՐՈ – ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼԸ

ԱՇՈՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոգվածում քննական վերլուծության են ենթարկվում Հայաստանի առաջին Հանրապետության Բյուրո-կառավարության Շանթի գլխավորած պատվիրակության Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները Մոսկվայում, որոնք սկիզբ դրեցին Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև քաղաքական հարաբերությունների հաստատման: Հեղինակը փորձում է ապացուցել, որ 1920 թ. հունիս- հուլիս ամիսներին դեռևս հստակ չէին Ռուսաստանի դիրքորոշումները Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի տարածքների պատկանելության հարցում: Մինչև Սևրի պայմանագիրը Ռուսաստանը վարել է խուսանավելու քաղաքականություն՝ հիշյալ տարածքները Թուրքիային և Ադրբեջանին նվիրաբերելու հարցում, իսկ դրանից հետո կոշտացրել է իր դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ, որը չէր հրաժարվում Դաշնակիցներից: Հայ քաղաքական ղեկավարներն իրենց հերթին չեն ցուցաբերել դիվանագիտական ճկունություն և ճիշտ չեն կողմնորոշվել բոլշևիկների և քեմալականների դաշինքի ձևավորման վճռական փուլում՝ 1920 թ. հունիս – հուլիս ամիսներին:

Բանալի բառեր. Հայաստանի Հանրապետություն, Բյուրո – կառավարություն, պատվիրակություն, բանակցություններ, Խորհրդային Ռուսաստան, Քեմալական Թուրքիա, Դաշնակիցներ, Սևրի պայմանագիր:

Հայաստանի առաջին Հանրապետության Բյուրո - կառավարությունը¹ 1920 թ. մայիսյան խռովությունների ճնշումից փոքր անց փորձեց բանակցություններ սկսեց Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների հետ, չնայած այդ առնչությամբ Դաշնակիցների բացասական վերաբերմունքին: Այդ բանակցությունները կարևոր էին, քանի որ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանները դեռևս վերջնականապես ճշգրտված չէին: Դաշնակիցների հանդեպ տաժած հույսը չէր մարել, սակայն բոլշևիկների հաղթանակն ու հատկապես Ադրբեջանի խորհրդայնացումը Բյուրո - կառավարությանն ստիպում էին բանակցել բոլշևիկների հետ: Ռուսաստանի հետ բանակցությունների մեջ ընդգրկվելու առաջարկով դեռևս 1920 թ. ապրիլի 8-ին Վլադիկավկազում ՀՀ ներկայացուցիչ Հակոբ Սառիկյանին էր դիմել Սերգո Օրջոնիկիձեն. «Ես, որպես Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ, խնդրում եմ Ձեզ հայտնել Ձեր կառավարությանը, որպեսզի նա անմիջապես բանակցություններ սկսի Ռուսաստանի հետ՝ հաշտության պայմանագիր կնքելու և փոխհարաբերությունները որոշելու համար»²:

¹ Հայաստանի կառավարությունն անվանվեց «Բյուրո-կառավարություն», որովհետև 1920թ. մայիսի 5 - ին ՀՅԴ Բյուրոն իր ամբողջ կազմով իշխանությունը երկրում կենտրոնացրեց իր ձեռքում:

² Հղումը ըստ՝ **Ալիխանյան Ս. Տ.**, Գ. Կ. Օրջոնիկիձեն և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 18:

Փաստորեն Խորհրդային Ռուսաստանը ևս շահագրգռված էր բանակցություններ սկսելու հարցում: Կարծում ենք, որ Խորհրդային իշխանության նման դիրքորոշումը հարկ է պայմանավորել Ադրբեջանի հանրապետության նկատմամբ նրա դեռևս ոչ հստակ դիրքորոշմամբ: Անտարակույս, բոլշևիկների և քեմալականների դաշինքն արդեն տեսանելի էր, բայց դեռևս հստակ չէր, թե արդե՞ր ք դրան կհարեր Ադրբեջանը: Ուստի երբ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը հռչակվեց Խորհրդային հանրապետություն՝ նաև հույս տածելով, որ իրեն կնվիրաբերվեն Հայաստանից ակնկալված տարածքները, Օրջոնիկիձեն արդեն բանակցելու և պայմանագիր կնքելու վերջնագրով դիմեց Հայաստանին, քանզի Ադրբեջանի ակնկալված տարածքները Ռուսաստանը չէր ցանկանա զիջել՝ առանց ճշտելու Հայաստանի Հանրապետության վերաբերմունքն իր նկատմամբ: Անկախ այդ համգամանքից, 1920 թ. ապրիլի 30-ին Մոսկվա մեկնեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Լևոն Շանթի գլխավորությամբ, որի առջև ըստ Միմոն Վրացյանի՝ դրված էին հետևյալ խնդիրները.

«1. Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչե Հայաստանի անկախությունը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում եւ Ղարաբաղն ու Գյուլիստանը, 2. Խորհրդային Ռուսաստանը, գոնե սկզբունքով, պետք է ընդունե թիրքափայ հողերի կցումը Հայաստանին, 3. Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտե Հայաստանի ներքին գործերին, չպիտի Հայաստանում կոմունիստական գործունեություն ցույց տայ, 4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թող տայ, որ Հիւսիսային Կովկասում եւ Ռուսաստանում գտնուող հայ գաղթականները վերադառնան Հայաստան, և մի շարք ուրիշ հարցեր»³:

Նախքան Շանթի պատվիրակության մեկնումը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանը Գեորգի Չիչերինին է ուղարկում հետևյալ հեռագիրը. «Բանվորական, զինվորական ու գիտացիական պատգամաւորների համառուսական երրորդ համագումարի որոշման համաձայն, որ յայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատութիւնը, եւ հիմնելով ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ Լենինի 1918 թ. յուն. 13 դեկրետի վրա՝ անկախ, միացեալ, դեմոկրատիկ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն առաջարկում է Ռուսաստանի ընկերվարական կառավարութեանը բանակցութիւնների մէջ մտնել նրա հետ երկու հանրապետութիւնների միջեւ պայմանագրային յարաբերութիւններ հաստատելու համար՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան ճանաչման եւ ինքնիշխանութեան հիմունքների վրա: Իմ կառավարութեան լիազօրած պատւիրակութիւնն արդէն ձեր հանրապետութեան սահմաններում է յիշած բանակցութիւնները ձեր կառավարութեան հետ վարելու համար...»⁴:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Բյուրո - կառավարության վարչապետը միամտաբար հույս էր կապում ազգերի ինքնորոշման վերաբերյալ լենինյան կեղծ դրույթների հետ, ըստ որոնց՝ Խորհրդային Ռուսաստանն իբրև թե պետք է ճանաչեր Հայաստանի անկախությունը: Նա հաշվի չէր առնում, որ բոլշևիկներն արդեն համակված էին ռուսական նախկին աշխարհակալական ձգտումներով: Մայիսի 17-ին Չիչերինը հետևյալ պատասխանն է ուղարկում.

³ *Վրացեան Ս.*, Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 453:

⁴ Նույն տեղում:

«Խորհրդային կառավարութիւնը սրանով յայտնում է իր համաձայնութիւնը կնքելու Հայաստանի կառավարութեան հետ պայմանագիր՝ երկու ժողովուրդների միջև բարեկամական յարաբերութիւններ հաստատելու նպատակով: Խորհրդ. կառավարութիւնը սպասում է ձեր պատիրակներին, որոնք արդէն ճանապարհել են դէպի Մոսկւա...»⁵: Վստահորեն կարելի է հավաստել, որ նա անկեղծ չէր, քանի որ այդ ժամանակ ամբողջ ռուսական մամուլը ներծծված էր հակահայկական քարոզչությամբ, Հայաստանը համարվում էր Անտանտի դաշնակից, իսկ Ադրբեջանն արդէն խորհրդայնացել էր, և ըստ այդմ ուներ բոլոր հիմքերը վիճարկելի համարելու Հայաստանի Հանրապետության տարածքում ընդգրկված որոշ տարածքների պատկանելությունը հայ ժողովրդին:

Շանթի պատվիրակության հետ Խորհրդային Ռուսաստանի անպտուղ բանակցությունները տևում են շուրջ երկու ամիս, որոնց իմաստն ըմբռնելու հարցում մեծապես օգնում են պատվիրակության անդամ Համբարձում Տերտերյանի հուշերը: Համաձայն նրա վկայության՝ Մոսկվա հասնելու երկրորդ կամ երրորդ օրը, զիշերվա ժամը 12-ին հայկական պատվիրակությանը հրավիրում են Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինի գրասենյակ: Այստեղ սկսվում են պատվիրակության բանակցությունները Չիչերինի և անեյյան քաղաքականությունը ղեկավարող նրա տեղակալ՝ հայագգի Լևոն Կարախանի հետ: Չիչերինը հավաստում է Հայաստանի Հանրապետության հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու Խորհրդային Ռուսաստանի անկեղծ ցանկությունը և անմիջապես անցնում բուն նյութին: Ինչպես վկայում է Տերտերյանը, նա մանրամասնել է. «Տաճիկները իրենց՝ բոլշեիկներին պետք են: Իրենք համաձայնուել են իրենց զինուորական եւ տնտեսական օժանդակութեամբ դուրս շարտելու նրանց երկրից եւրոպական աշխարհակալ «գավթիչներին»: Տաճիկները պատրաստ են անմիջապես գործողութիւնների անցնել, սակայն մտահոգուած են, որ Հայաստանի կառավարութիւնը, որպէս Դաշնակիցների կողմնակից, կարող է հարուածել իրենց թիկունքից: Ձեզ հրաւիրել ենք, որպէսզի հաշտեցնենք Ձեզ տաճիկների հետ եւ որոշ երաշխիքներ ստանանք, որ Հայաստանի կառավարութիւնը մեզ դաշնակից տաճիկների թիկունքից չի՝ հարուածի: Քանի որ ռուս-տաճկական համագործակցութիւնը այս րոպէիս Խորհրդային Ռուսաստանի համար մահու եւ կենաց խնդիր է, ուստի անհրաժեշտ է այդ խնդիրների վերաբերմամբ ճշդել Հայաստանի կառավարութեան դիրքը եւ վերաբերմունքը»⁶:

Ռուսաստանի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի խոսքերից կարելի է եզրակացնել, որ խորհրդային իշխանությունը շատ ավելի հետամուտ է եղել Դաշնակիցների դեմ քեմալականների մղած պայքարում Հայաստանի Հանրապետության չեզոքության ապահովմանը, իսկ Խորհրդային Ռուսաստանի համար խիստ կարևոր է համարել Հայաստանի վերաբերմունքի ճշգրտումը՝ քեմալական Թուրքիայի հետ բոլշեիկյան կառավարության համագործակցության վերաբերյալ: Ըստ Չիչերինի առաջադրած հարցադրումների հասկանալի է դառնում նաև, որ խորհրդային իշխանությունը ցանկանում էր միջնորդի դեր ստանձնել հայերի և թուրքերի միջև դրացիական հարաբերություններ հաստատելու գործում, պայմանով, սակայն, որ Հայաստանի Հանրապետությունն անմիջապես խզի

⁵ Նույն տեղում, էջ 454:

⁶ *Տերտերյան Հ.*, Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները, Լեւոն Շանթի պատվիրակութիւնը, տե՛ս «Հայրենիք», յունւար, 1954, թիւ 1, էջ 7-8:

հարաբերությունները Դաշնակիցների հետ և Հայկական հարցի լուծումը վերապահի բոլշևիկյան կառավարությանը: Շանթի՝ Հայաստանի կառավարությանն ուղարկած 1920 թ. հունիսի 1-ի թվակիր գեկուցագրից ևս տեղեկանում ենք, որ Խորհրդային Ռուսաստանը ցանկանում էր «միջնորդի դերում հանդես գալ Քեմալի և մեր միջև»⁷:

Ինչպես տեսնում ենք, Չիչերինն ամենևին չի անդրադարձել Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքներ համարվող Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի հիմնախնդրին, ինչը պայմանավորված էր Խորհրդային Ռուսաստանի խուսանավորական քաղաքականությանը: Առավել ևս, որ բոլշևիկյան ղեկավարությունը դեռևս վերջնականապես չէր կողմնորոշվել, թե ում էին պատկանելու այդ տարածքները:

Այս պայմաններում, Շանթի պատվիրակությանը փաստորեն անակնկալ է մատուցվում, քանի որ այն իր կառավարության կողմից լիազորված էր միայն «Մոսկուային ընդունելի դարձնել տաճկահայ հողամասերի կցումը Հայաստանին»: Ինչպես նկատել է Տերտեռյանը, «խորհրդային իշխանությունն էլ ուներ իր հաշիւները՝ Տաճկաստանին օժանդակելու համար: Նա էլ հետապնդում էր իր քաղաքական նպատակները»⁸: Թուրքերին օգնելու սպառնալիքով Խորհրդային Ռուսաստանը ցանկանում էր վախեցնել Դաշնակիցներին և ստիպել նրանց՝ ճանաչելու Ռուսաստանում հաստատված խորհրդային իշխանությունը: Դրանով հանդերձ, այն ամենևին հակված չէր լիակատար զիջումների դիմել Թուրքիայի և Ադրբեջանի պահանջների առջև և վարում էր նուրբ քաղաքականություն: Դա ակնհայտ է դառնում Չիչերինի՝ հունիսի 19-ի թվակիր Օրջոնիկիձեին հղած հեռագրից. «Կենտկոմի քաղաքական նպատակադրումներից թելադրված՝ բուրժուական Կրաստանի, դաշնակցական Հայաստանի և ազգայնական Թուրքիայի հետ խաղաղության և փոխզիջումների քաղաքականությունը պետք է անշեղորեն կատարվի... Ղարաբաղը, Ջանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Ջուլֆան չպետք է միացվեն Հայաստանին կամ Ադրբեջանին, այլ պետք է գրավվեն ռուսական օկուպացիոն զորքերի կողմից»⁹:

Ջանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի խնդիրներում Չիչերինի այս դիրքորոշումը պայմանավորված էր միմիայն Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության շահերով, որի հիմքում այդ ժամանակաշրջանում խարսխված էր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության իրականացման գաղափարը: Ուստի հանձին քեմալական Թուրքիայի՝ նա փորձում էր գտնել իր աջակցին՝ նպաստելով Դաշնակիցների դեմ պայքարում վերջինիս հաղթանակին: Սակայն **քեմալականների՝ սոցիալիստական հեղափոխության իրականացման մեջ ներագրավվելու մտադրության մեջ** վերջնականապես համոզվելու համար նրան ժամանակ էր հարկավոր:

Մեր կարծիքով, այդ հանգամանքն է կանխորոշել Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ բանակցությունների անարդյունավետ ավարտը: Հետաքրքիր է, որ երբ հայ պատվիրակները Չիչերինին հայտնում են, թե «դուք հայերուն չափ չէք ճանչնար թուրքերը, անոնք վարպետորեն կը ստեն», վերջինս պատասխանում է, որ բոլշևիկյան իշխանության ղեկավարներն այդքան

⁷ ՀՀ Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԱ), ֆ. 276, ց. 1, գ. 219, թ. 256:

⁸ «Հայրենիք», յունւար, 1954, թիւ 1, էջ 10:

⁹ Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Ереван, 1992, с. 506.

միամիտ չեն և «իրենց նպատակներից մեկն այն է, որ այդ միջոցով (**թուրքերին դաշնակիցների դեմ օգտագործելու – Ա. Ն.**) դիւրացնեն Տաճկաստանի խորհրդայնացումը մօտ ապագային»¹⁰:

Բոլշևիկներն իրոք դուրսահավատ չէին, որ խաբվեին, սակայն Դաշնակիցներին նեղուցներից վռնդելու խնդիրն առաջնային էր, որին անհնար էր լուծում տալ առանց Թուրքիայի վերածննդի: Սակայն, քանի որ Շանթի պատվիրակության հետ բանակցությունների ընթացքում ռուս-թուրքական համաձայնության բոլոր մանրամասները դեռևս կարգավորված չէին, Չիչերինն ու Կարախանը փորձում էին միաժամանակ սիրաշահել հայերին, թուրքերին և աղբյուրացիներին: Փոխարենը երբ պարզվեց, որ անիրականալի է համաշխարհային սոցիալիստական հեղափոխության իրականացումը, բոլշևիկների համար առաջնային դարձան **Թուրքիայի վերածնունդի** և Դաշնակիցներին նեղուցներից վտարելու հիմնախնդիրները: Նման իրավիճակում նրանց համար Հայկական հարցը դարձավ երկրորդական, որին լուծում տալու ձախողմանը նպաստեց նաև հայ դիվանագիտության թուլությունը, ինչն անտեսելը նպատակահարմար չէ: Դա արտահայտվեց մասնավորապես նրանում, որ հայերը գերադասեցին քեմալական Թուրքիայի հետ երկխոսությունից ձեռնպահ մնալ:

Հունիսի 3-ին Շանթը բանակցությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանը հղում է հետևյալ հեռագիրը. «Մեզ հետ բանակցությունները վարում է Կարախանը: Առաջին հանդիպումը տեղի է ունեցել մայիսի 28-ին: Խորհրդային կառավարությունը մշտապես կրկնում է, որ ոչ մի մտադրություն չունի մեր երկրում խորհրդային կարգեր հաստատելու»¹¹: Ինչպես վերստին համոզվում ենք՝ Շանթի պատվիրակության առջև Հայաստանի խորհրդայնացման խնդիր չէր դրվում:

Արևմտյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ Տերտերյանը վարում է առանձին բանակցություններ, որոնց մասին գրում է. «Թէև Հայաստանի կառավարութեան կողմից լիազօրուած չէինք տաճկահայկական հողամասերի վերաբերմամբ բանակցութեան մեջ մտնելու Մոսկուայի հետ, սակայն բանակցութիւնները չլիժեցնելու մտահոգութեամբ հարկադրանքի տակ գտնուեցանք մեր խօսակցութիւնները այդ ուղղութեամբ շարունակելու Չիչերինի հետ՝ պարզելու համար նաեւ, թէ ինչ կարող ենք ակնկալել Սովետների միջնորդութիւնից»¹²:

Տերտերյանի այս քայլը ողջունելի է, քանի որ ռուս-թուրքական մերձեցումը նոր էր կայանում և հայկական պատվիրակությունն այդ առնչությամբ բանակցությունների արդյունքում եթե որևէ բան չշահեր, ապա ոչինչ չէր կորցնի: Դիվանագիտության տարրական պահանջը հանգում էր թե՛ ռուսների և թե՛ այդ օրերին Մոսկվայում գտնվող քեմալականների հետ բանակցությունների մեջ ընդգրկվելուն: Բացի այդ, փոխվում էր Թուրքիայի նկատմամբ Դաշնակիցների վերաբերմունքը, ինչպես նաև սաղմնավորվում էին նրան մերձենալու Անգլիայի և Ֆրանսիայի ձգտումները: Սակայն, ցավոք, Շանթի դիրքորոշումը մեծապես զանազանվում էր Տերտերյանի մոտեցումներից: Այդ մասին վերջինս գրում է. «Գոհ չէր սակայն զոյացած համաձայնությունից եւ մասնաւորապէս ինձանից մեր պատուիրակութեան աւագ անդամ ընկ. Շանթը: Նա մտահոգուած էր, որ մենք անտեղի

¹⁰ «Հայրենիք», յունւար, 1954, թիւ 1, էջ 10:

¹¹ Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 477-478:

¹² «Հայրենիք», փետրուար, 1954, թիւ 2, էջ 14:

կերպով շեղուել էինք մեր սկզբունքային տեսակետից եւ որ տաճկահայկական վիլայեթների խնդիրը ենթակայ էր Դաշնակիցների խաղաղութեան խորհրդածո-դովի իրավասութեան ու մեր պատուիրակութիւնը լիազօրուած չէր այդ մասին բանակցութիւններ վարելու:

Մանրամասն բացատրութիւն տուի իմ երկու ընկերներին ինքնագլուխ վարմունքիս պատճառների մասին: Ասացի, նախ, որ իմ նպատակն էր վիճակագ-րական տուեալներով փաստել մեր դատի իրավացիութիւնը նաեւ հողը աշխա-տաւորին սկզբունքի տեսակետից եւ որ այդ սկզբունքի դէմ առարկելը դժուար էր մեզ համար, որպէս ընկերվարական կուսակցութեան անդամների: Երկրորդ՝ խորապէս համոզուած էի, որ տաճիկները երբեք չափտի համաձայնէին վերոյի-շեալ սկզբունքը Ռուսաստանի իրավարարութեան հիմք ընդունելու: Ես վերջա-պէս, համոզուած էի, որ տաճիկները չափտի ընդունէին ընդհանուր Խորհրդային Ռուսաստանի իրավարարութիւնը»¹³:

Տերտեյանը ևս համոզված չի եղել, որ Ռուսաստանի որոշումը թուրքերի համար ընդունելի կլինի: Այդուհանդերձ, այդ ուղղությամբ բանակցություններ վարելու նրա ձեռնարկած քայլերը հարկ է տեղին համարել, որովհետև եթե Արևմտյան Հայաստանի նահանգների վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի վճիռն անընդունելի համարվեր, ապա՝ վերջինս կարող էր ռազմակալել Նախի-ջևանը, Ղարաբաղը և Զանգեզուրը, ինչը **հայ ժողովրդի համար, մեղմ ասած, ա-վելի ձեռնտու էր, քան դրանք** Ադրբեջանին կցելը: Իսկ Թուրքիան, անկասկած, լի-նելու էր հարցի լուծման վերջին տարբերակի կողմնակիցը: Հետաքրքիր էր նաև տեղեկանալ, թե Ռուսաստանն ի՞նչ կխոստանար Հայաստանին, եթե նա Դաշնա-կիցներից երես դարձներ:

Կարելի է պնդել, որ 1920 թ. հունիսին Խորհրդային Ռուսաստանն անկեղծ էր հայերին օգնելու հարցում և Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանն ու Շա-րուր-Դարալագյազն Ադրբեջանի կազմում ընդգրկելու գաղափարի կողմնակիցը չէր:

Այդ մասին է վկայում ոչ միայն Չիչերինի՝ վերը հղված՝ հունիսի 19-ի թվա-կիր հեռագիրն Օրջոնիկիձեին: Շանթը ևս բանակցությունների մասին հետևյալն է հավաստել. «Բոլշեիկները կճանչնային մեր անկախութիւնը, մեզի բոլշեիկ դառնալու պահանջ չէին ըներ, կուգէին միայն, որ փոխադարձ բարեկամական դաշինք կնքէինք»¹⁴:

Այսպիսով, ինչպէս համոզվում ենք, Ռուսաստանը տակավին չէր առա-ջադրում հիշյալ տարածքներն Ադրբեջանին միավորելու և Հայաստանը խորհր-դայնացնելու խնդիրներ: Միաժամանակ հարկ ենք համարում շեշտել, որ արևմ-տահայ նահանգները Թուրքիային նվիրաբերելը ևս նրա քաղաքական օրակար-գից դուրս էր մնում: Այդ մասին է վկայում Տերտեյանը. «Տաճկահայաստանի մա-սին մեր տեղեկագիրը ներկայացնելուց մօտաւորապէս մի շաբաթ յետոյ, Յունիսի կեսերին, մեզ նորից հրաւիրեցին տեսակցութեան:

Այս տեսակցութիւնը անելի արդիւնաւետ եղաւ: Մենք ընդառաջեցինք Սո-վետական կառավարութեան միջնորդի դեր կատարելու ցանկութեանը՝ Հայաս-տանի կառավարութեան եւ Մուստաֆա Քեմալի միջեւ: Չիչերինը Խորհրդային

¹³ Նույն տեղում:

¹⁴ «Յուսաբեր», 1960, թիւ 52:

Ռուսաստանի անունից խոստացավ **հայերին** բաւարարել **էւ նրան** ապահովել ելք դէպի Մեւ ծով:

Ագերբեջանի հետ եւս մեր սահմանների խնդիրը որոշուեց մոտաւորապէս հետեւեալ ձեւով – Նախիջեւանի շրջանը եւ Զանգեզուրը անվերապահօրէն պիտի համարուէին հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղը պիտի նկատուէր վիճելի, որի իրաւական վիճակը որոշուելու էր հետագային ժողովրդական հանրաքուէով:

Բացի այդ բավարարում էին մեր պատվիրակութեան մի շարք կարեւոր առաջարկները տնտեսական ու մշակութային խնդիրների վերաբերեալ: Մոսկուայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում կենտրոնացած հայ մշակոյթին վերաբերեալ գրականութիւնը յանձնում էր Հայաստանին, թոյլատրվում էր հայ գաղթականութեան եւ ընդհանրապէս Ռուսաստանում ապրող բոլոր հայերին իրենց ամբողջ շարժական ունեցուածքով փոխադրուել Հայաստան: Մեր երկրի փոխադրական քայքայուած միջոցները մասամբ վերականգնելու նպատակով Հայաստանին ձրիաբար պիտի տրամադրուէին մի քանի տասնեակ շոգեքաշարժեր եւ վագոններ, ինչպէս եւ պիտի տրամադրուէր բաւարար քանակութեամբ վառելիք (նաֆթ) ինքնարժէքով: Խորհրդային Միութիւնը յանձնառու էր լինում անվճար փոխանցել Հայաստանին նաեւ մանարանի եւ կտոր գործելու երկու գործարան իր սարքուկարգով: Բացի այդ, որպէս օժանդակութիւն հայ ժողովրդին, Խորհրդային Միութիւնը կանխիկ պիտի վճարէր Հայաստանի կառավարութեան 2 1/2 միլիոն ռուբլի ոսկով, պիտի տրամադրէր երկրագործական գործիքներ, հացահատիկ, եւ այլն:

Չիչերինը խոստացաւ շտապ ձեւակերպել բանաւոր կայացած համաձայնութիւնը եւ ռուս-հայկական դաշնագրի բնագիրը մի երկու օրից ներկայացնել ստորագրութեան:

Կայացած համաձայնութեան մասին անմիջապէս տեղեկացրինք Երեւան եւ սկսեցինք պատրաստութիւն տեսնել մեկնելու համար:

Անցաւ երկու-երեք օր: Բայց դաշնագրի ստորագրութիւնը ձգձգում էր՝ մեզ համար անյայտ պատճառներով:

Պարզ էր, որ կայացած համաձայնութիւնը անակնկալ եւ անախորժ արգելքների էր հանդիպել թանձր վարագոյրի ետեւում»¹⁵:

Կարծում ենք, որ սույն համաձայնության կայացմանը խոչընդոտում էր այդ օրերին Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակությունը: Նրա ղեկավար Բեքիր Սամի բեյն առաջին հանդիպումը Չիչերինի հետ ունենել է 1920 թ. հուլիսի 24-ին՝ Կարախանի ներկայությամբ: Տեսակցությունից անմիջապէս հետո նա «կը հեռագրէ Անգարա, թէ թուրք պատուիրակութիւնը ջերմ ընդունելութեան արժանացած է եւ բոլշեիկները խոստացած են անգլիացիներուն հետ կնքելիք հաւանական համաձայնութեան ընթացքին նկատի ունենալ նաեւ Թուրքիոյ տեսակէտը»¹⁶:

Ինչպէս տեսնում ենք, բոլշեիկները հետապնդել են անգլիացիների հետ հարաբերությունները կարգավորելու նպատակ՝ անվերապահօրէն հաշվի առնելով Թուրքիայի շահերը: Բայց դարձյալ հարկ ենք համարում շեշտել, որ 1920 թ. հունիսի և հուլիսի դրությամբ ռուսների և թուրքերի միջև դեռևս շատ հարցեր վերջնականապէս հստակեցված չէին, որը մեր կարծիքով պետք է դրդէր Շան-

¹⁵ «Հայրենիք», փետրվար, 1954, թիւ 2, էջ 14-15:

¹⁶ **Լազեան Գ.**, Հայաստան եւ հայ դատը, հայկոսու յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 250:

թին՝ Մոսկվայում առանձին բանակցություններ վարելու քեմալականների հետ: Բայց մեծ գրողը, ցավոք, զուրկ էր դիվանագետին անհրաժեշտ ունակություններից¹⁷:

Դրանում վերջնականապես համոզվելու համար ավելի մանրակրկտորեն անդրադառնանք բոլշևիկների հետ թուրքերի վարած բանակցություններին: Հուլիսի 24-ի գիշերը տեղի է ունենում նաև Բեքիր Սամի բեյի պատվիրակության երկրորդ տեսակցությունը Կարախանի հետ: Իր հուշերում **թուրքական պատվիրակության անդամ, իսկ հետագայում՝ Մոսկվայում առաջին թուրք դեսպան, Ալի Ֆուատ փաշան** գրում է. «Մերիները շեշտած են հայկական ճամբան բանալու անհրաժեշտությունը, որպեսզի մեզի անհրաժեշտ զենք եւ պիտույք արագորեն Անատոլու փոխադրուին: Իսկ Գարախան, Լեհաստանի կարեւորությունը վեր առնելով, դժուար պիտի ըլլայ, կ'ըսէ, հոնկէ ուժեր քաշել եւ ճամբան բանալ: Առանց պատճառի Հայաստանի վրա յարձակում մը յոռի տպաւորութիւն պիտի ձգէ արեւմտեան ու ամերիկեան պետութիւններուն վրայ: Հայաստան դրկուած պատվիրակութիւնը, հայ կառավարութեան ընդդիմութեան պատճառով, չէ կրցած սահմանը անցնիլ: Քաղաքական ձեռնարկներու սկսուած ըլլալով, այս մէկ երկու շաբթուան ընթացքին կը յուսայ, որ ճամբան պիտի բացուի:

Պեքիր Սամի կը պատասխանէ. «Մեր ներկայ կացութիւնը թոյլ չի տար նոյնիսկ երկու շաբաթ սպասել»¹⁸:

Կարախանը նոր հավաստիքներ է տալիս առ այն, որ «25 փութ (հազար քիլոկրամ) ոսկի, չորսական թնդանօթով երկու մարտկոց, վեց հազար հրացան, հարիւր գնդացիք եւ առատ ռազմամթերք պատրաստ են ու պիտի դրկուին Խալիլ փաշայի եւ Էնկյուրիի դեսպանատան քարտուղարի հետ, որոնք պիտի ընկերանան Հայաստան գացող պատուիրակութեան: ՀՐԱՄԱՆ ՏՈՒԱԾ ԵՆՔ, ՈՐՊԷՍՄՁԻ Ի ՆՊԱՍՏ ԱԶՊՊԵՅՃԱՆԻ ԳՐԱԽՈՒԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ, ՆԱԽԻՋԵԻԱՆԻ, ԱԼԱԿԵՕԶԻ ԵՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ: Մինչեւ որ Լեհաստանէն նոր ուժեր գան, աւելի ընդարձակ շարժումներ կարելի չէ եւ եթէ Հայաստան յարձակի Օլթիի վրայ, որուն երեսփոխանը Ազգ. ժողովին անդամ է, պատճառ պիտի դառնայ, որ սովետական կառավարութիւնը խիստ քաղաքականութիւն մը որդեգրէ: Տեսակցութիւնը այս ձեւով վերջացավ»¹⁹:

Եզրակացությունը մեկն է՝ թե՛ հայկական և թե՛ թուրքական պատվիրակությունների հետ ընթացող բանակցությունների ժամանակ Չիչերինը և Կարախանն իրականացնում էին խուսանալողական քաղաքականություն, որովհետև Ռուսաստանը դեռևս չէր ցանկանում հարձակվել Հայաստանի վրա, անհրաժեշտ ուժեր չունենալու, ինչպես նաև այն պատճառով, որ նման քայլը կարող էր բացասաբար անդրադառնալ նրա վարքագծի վրա, իսկ Ադրբեջանին նրանք խոստանում էին այն տարածքները, մասնավորապես Զանգեզուրը և Նախիջևանը, որոնք նույն օրերին արդեն խոստացել էին հայկական պատվիրակությանը:

Ակնհայտ է, որ բոլշևիկները վերջնականապես չէին հստակեցրել իրենց քաղաքականությունը թուրքերի, հայերի և ադրբեջանցիների նկատմամբ: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ այնքան համոզիչ չեն այն պնդումները, թե իբր Չիչերինն ու Կարախանը վարել են հայամետ քաղաքակա-

¹⁷ Տե՛ս **Ղազարյան Հ.**, Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, էջ 265:

¹⁸ **Լազան Գ.**, Հայաստան եւ հայ դատը, հայ և ռուս յարաբերություններու լոյսին տակ, էջ 250:

¹⁹ Նույն տեղում, էջ 251:

նություն, որին հակադրվում էին թրքամետ Ստալինը և Օրջոնիկիձեն²⁰։ Իրականում նրանք բոլորն էին վարում Խորհրդային Ռուսաստանի ամրապնդմանը միտված արտաքին քաղաքականություն, թեպետ դրա շահեկանության տեսանկյունից՝ նրանց դիրքորոշումների միջև առկա էին զանազանություններ։

1920 թ. օգոստոսի երկրորդ կեսից Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը դառնում է հակահայկական հետևյալ պատճառներով. ա) կնքվում է Թուրքիայի մասնատումը նախատեսող Սևրի պայմանագիրը, որի հանդուրժումը Ռուսաստանի կողմից կնշանակեր հավանություն տալ նեղուցները Դաշնակիցների հսկողության ներքո թողնելուն, որոնց տիրանալը նրա դարավոր երազանքն էր։ Նրան ավելի ձեռնտու էր Թուրքիայի վերահաստատումը նեղուցներում, քան այդտեղ Դաշնակիցների դիրքերի ամրապնդումը; բ) Հայաստանի կառավարության առավել ընդգծված կողմորոշումը դեպի Դաշնակիցները; գ) թուրքական պատվիրակության ներկայությունը Մոսկվայում։

Շանթի պատվիրակության վարած բանակցությունների ժամանակ դեռևս չէր ձևավորվել ռուս-թուրքական դաշինքը։ Այդ մասին վկայում է Ալի Ֆուատ փաշան, ըստ որի՝ երբ օգոստոսի 13-ին Բեքիր Սամի բեյի պատվիրակությանը կրկին ընդունում է Չիչերինը, որը միշտ ձգձգում էր բանակցությունները և դաշինք կնքելու հարցում թուրքերին տալիս խուսափողական պատասխաններ, այս անգամ նրանց առաջարկում է «նախկին հայկական նահանգներէն՝ Պիթիսէն, Վանէն եւ Մուշէն մաս մը տալ Հայաստանի, որ հանգիստ շունչ չի կրնար քաշել»²¹։ Թուրքերը հայտարարում են, որ Թուրքիայում հայկական նահանգներ գոյություն չեն ունեցել։ Ալի Ֆուատ փաշան գտնում է, որ «ռուսերուն նպատակն էր իրենց կատարելիք օգնութեան փոխարէն մեր հողերու հաշուին սակարկութիւններ ընել ի նպաստ Հայաստանի»²²։

Հուլիսի 19-ին Չիչերինը Հայաստանի Հանրապետության կառավարությանը հեռագրում է հետևյալը. «Սովետական Ռուսաստանի բոլոր գործողությունները Կովկասում նպատակ ունեն բարեկամական ներգործություն ունենալ հայ ժողովրդի, ինչպես նաև նրա հարևան մյուս ժողովուրդների հետագա խաղաղ զարգացման վրա։ Հայ ժողովրդի և Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդների ապրած ծանր փորձությունների ժամանակ Սովետական Ռուսաստանը հանդես է գալիս որպես ամեն մի ազգության աշխատավորների անշահախնդիր բարեկամ։

Սովետական Ռուսաստանը կշարունակի ընթանալ ամեն մի ազգության աշխատավոր մասաների նկատմամբ անաչառ բարեկամական վերաբերմունքի այդ նույն ուղիով և հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա մշտական բարեկամական վերաբերմունքի ու ուժերի սահմաններում նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար»²³։

Ինչպես տեսնում ենք՝ Չիչերինը չի վերհանում Հայաստանի խորհրդայնացման խնդիրը, որի կողմնակիցներն էին Ստալինը և Օրջոնիկիձեն։ Բայց հուլիսի վերջերին Քաղբյուրոյին ներկայացրած նրա պաշտոնական գրության հետևյալ տողերը հակասում են նրա նախորդ հայտարարություններին. «Երեք ամիս

²⁰ Տե՛ս **Խորշուրյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թ., Երևան, 2002։

²¹ **Լազեան Գ.**, նշվ. աշխ., էջ 252-253։

²² Նույն տեղում, էջ 253։

²³ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 353։

առաջ հայերը համաձայն էին մեզ ազատ տրանզիտի իրավունք տալու, սակայն սահմանային վեճերում Ադրբեջանի ցուցաբերած կամակորության պատճառով պայմանագիրը թաղվեց: Այժմ հայերը խփում են թուրքերին և խիստ երես են առել: Կիրովի տեղեկությունների համաձայն, դաշնակները փամփուշտ են ստացել Վրանգելից: Ընկ. Սերգոյի խոսքերով այժմ դաշնակներից Հայաստանի վրայով, առանց որևէ հսկողության, փոխադրումների իրավունք ստանալն անհույս է: Սերգոն պնդում է, որ **Հայաստանի խորհրդայնացման համար** այնքան էլ շատ գորք չի պահանջվում: Նա խոսել է գլխավոր հրամանատարի հետ և պարզել, որ այդ գորքերը կարելի է գտնել: Նման դեպքում Հայաստանի խորհրդայնացումը ստիպողական անհրաժեշտություն է: Առանց դրա մենք Թուրքիայի հետ վերջնական շփում չունենք: Քեմալականների կործանումը մեզ ուժեղագույն հարված կհասցնի Արևելքում»²⁴:

Այսպիսով, Շանթի պատվիրակության հետ բանակցությունների օրերին Խորհրդային Ռուսաստանը դեռևս վերջնականապես չէր հակվել դեպի Թուրքիան և խուսանալով էր քեմալականների, Հայաստանի և Ադրբեջանի միջև, իսկ Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններում առաջնորդվում էր իր իսկ քաղաքական շահերով:

Չիչերինի որոշ հայամետ հայտարարությունները հիմք չեն տալիս պնդելու նրա հայասիրության մասին: Դրա վկայությունն է վերը հղված՝ հուլիսին Քաղբյուրոյին ներկայացրած նրա պաշտոնական գրությունը, որից հետո Շանթի պատվիրակությունը ետ է ուղարկվում Երևան, իսկ հանուն Հայաստանի խորհրդայնացման սկսվում է Հայաստանի Հանրապետությունում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Լեգրանի առաքելությունը: Շանթի պատվիրակության մեկնումից առաջ Չիչերինը մեկ անգամ ևս հանդիպում է նրա հետ, որի մասին Տերտերյանը գրում է. «Յուլիսի սկզբներին մեզ նորից հրավիրեցին արտաքին գործոց կոմիսարիատ, որտեղ Չիչերինը Կարախանի ներկայությամբ յայտնեց մեզ, որ խորհրդային կառավարութիւնը նշանակել էր իր լիազոր ներկայացուցիչը՝ յանձին Լեգրանի, որին յանձնարարուած էր տեղումը ծանօթանալ Զանգեզուրի բնակչութեան ցանկութիւնների հետ եւ ըստ այնմ կարգադրել Զանգեզուրի խնդիրը: Ինչ վերաբերում է միւս երկու վիճելի շրջաններից Դարաբադին եւ Նախիջեւանին, Խորհրդային կառավարութեան տեսակէտը մնում էր նոյնը, ինչ որ մեզ արդէն յայտնել էին, այն է՝ Նախիջեւանի շրջանը Հայաստանին, իսկ Դարաբադը՝ Ադրբեջանին:

Ցանկալի կլիներ,– աւելացրեց Չիչերինը,– եթէ ձեր պատուիրակութիւնը հանդիպում ունենար Լեգրանի հետ, նախքան նրա մեկնումը Մոսկուայից»²⁵:

Հանդիպումը տեղի է ունենում, որին մասնակցում է նաև Ս. Տեր-Գաբրիելյանը: «Լեգրանը մեզ յայտնեց,– հաղորդում է Տերտերյանը,– որ իր պատվիրակութիւնը մի քանի օրից պիտի մեկնի Բաքու եւ այնտեղից էլ Թիֆլիսի վրայով պիտի անցնի Երեւան՝ Մոսկուայում ընդհատուած ռուս-հայկական բանակցութիւնները շարունակելու համար: Նա հաւաստիացրեց մեզ, որ խորհրդային կառավարութիւնը միանգամայն բարեացակամ վերաբերմունք ունի Հայաստանի հանրապետութեան հանդէպ:

Համաձայն ընկեր Չիչերինի առաջարկին, որ կառավարութեան որոշումն է,– ասաց նա,– Նախիջեւանը մտնում է Հայաստանի սահմանների մէջ, իսկ Դա-

²⁴ ՀԱԱ, ֆ. 1457, գ. 2, հավելված 1, թ. 74:

²⁵ «Հայրենիք», փետրուար, 1954, թիւ 2, էջ 23:

րաբաղը յանձնվում է Ագրեջանին: Ինչ վերաբերում է Զանգեզուրին, որը առայժմ համարում ենք վիճելի, դա զուտ ձեռական յայտարարություն է եւ կարող եմ ձեզ վստահեցնել, որ Զանգեզուրը ճանաչուելու է Հայաստանի Հանրապետութեան անվիճելի հողամաս:

Նոյն հավաստիացումները տուեց նաեւ Սահակ Տէր Գաբրիէլեանը»²⁶:

Այս հայտարարությունները կրում էին ձեռական բնույթ, քանի որ ոչ մի սահմանային խնդիր վերջնականապէս ճշգրտված չէր և Ռուսաստանը պարզապէս ժամանակ էր շահում: Այս հանդիպումով ընդհատվում են Շանթի պատվիրակության բանակցությունները Մոսկվայում: Այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանը հղած՝ 1920 թ. հունիսի 29-ի հեռագրում Չիչերինը նշում է. «Հայաստանի Հանրապետությունում լիազոր ներկայացուցիչ է նշանակված ընկեր Լեզրանը, որի խնդիրն է Խորհրդային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, բոլոր վիճելի հարցերի կարգավորումը, նրանց միջև **առձակատումների** վերացումը և երկու հանրապետությունների միջև խաղաղության վերջնական ամրապնդումը»²⁷:

Շանթի պատվիրակության բանակցությունները Մոսկվայում ձախողվում են ոչ նրա մեղքով: Մենք այն կարծիքին ենք, որ 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանը խորթ չէր Խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ցանկությունը, բայց նրա հետ բանակցությունները դրական արդյունքների չհանգեցրին հետևյալ պատճառներով.

Առաջին. Խորհրդային Ռուսաստանը վերջնականապէս չէր հստակեցրել իր արևելյան քաղաքականությունը և քեմալական Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի տարածքային պահանջների խնդրում հստակ կողմնորոշումներ դեռնալու:

Երկրորդ. **Խորհրդային Ռուսաստանը** Հայաստանի Հանրապետությունը վերջնական պատասխան չէր ստանում այն մասին, որ իր հետ հարաբերություններ հաստատելուց հետո վերջինս կիրառարկեր Դաշնակիցների հետ համագործակցելուց:

Երրորդ. **Խորհրդային Ռուսաստանը** համոզված չէր, որ քեմալականներն ու ադրբեջանցիներն իր հետ անկեղծ են:

Իրավիճակը շեշտակիորեն փոխվեց, երբ ստորագրվեց Սևրի դաշնագիրը: Խորհրդային Ռուսաստանը կտրուկ կերպով հանդես եկավ քեմալական Թուրքիայի կայացման օգտին և Հայաստանի Հանրապետությանը վերջնականապէս դիտելով իբրև Անտանտի դաշնակցի՝ նրա նկատմամբ որդեգրեց բացահայտ նվաճողական **քաղաքականություն**: Եթե Մոսկվայում գտնվող հայկական պատվիրակության ղեկավարներն առանձին բանակցությունների մեջ ընդգրկվեին թուրքերի հետ, ապա դա կարող էր դրական հետևանքներ ունենալ բոլշևիկների հետ նրանց բանակցությունների համար: Բայց Շանթը չունեցավ այդ քաղաքական քաջությունը:

²⁶ Նոյն տեղում, էջ 24:

²⁷ **Саркисян Е.К.** Дипломатическая миссия РСФСР в Армении, Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, թիվ 3, էջ 37-38:

Ашот Нерсисян – Первый этап переговоров Бюро-правительства РА и Советской России. – В статье подвергаются критическому анализу переговоры возглавляемой Шантом делегации Бюро-правительства Первой республики Армения с Советской Россией в Москве, которые положили начало утверждению политических отношений между Республикой Армения и Советской Россией. Автор пытается доказать, что в июне-июле 1920 г. позиции России в вопросе принадлежности территорий Карабаха, Зангезура и Нахичевани, а также Западной Армении, еще не были четкими. До подписания Севрского договора Россия вела политику маневрирования в вопросе дарения упомянутых территорий Турции и Азербайджану, а после этого ужесточила свои позиции в отношении Армении, которая не отказывалась от Союзников. Армянские политические руководители в свою очередь не проявляли дипломатической гибкости и неправильно сориентировались на решающем этапе формирования союза большевиков с кемалистами–в июне-июле 1920 г.

Ashot Nersisyan – The first stage of negotiations of the RA Bureau-government and Soviet Russia. – The article subjects to critical analysis the negotiations of the delegation headed by Shant of the Bureau-Government of the First Republic of Armenia with Soviet Russia in Moscow, which initiated the establishment of political relations between the Republic of Armenia and Soviet Russia. The author tries to prove that Russia's positions on the issue of ownership of territories of Karabakh, Zangezur and Nakhichevan, as well as of the Western Armenia were not yet clear in June – July, 1920. Before signing the Treaty of Sevres Russia led policy of maneuvering on the issue of giving the mentioned territories to Turkey and Azerbaijan, and then toughened its positions towards Armenia that had not refused its Allies. Armenian political leaders in their turn showed no diplomatic flexibility and took the wrong way at a crucial stage of forming the alliance of the Bolshevik with the Kemalist in June-July 1920.

**ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ԿՅԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ
«ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ**

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայ ժողովրդի համար բախտորոշ իրավիճակներում, աշխարհի հզորները հաճախ մեզ խաբել են ու սեփական շահերից ելնելով գործել են ոչ ի նպաստ հայության: Իրենց տմարդի պահվածքով, թողտվությամբ, երբեմն էլ ջարդարարին խրախուսելով՝ անուղղակի մասնակիցն են դարձել հայակործան ցեղասպանությանը: Այդ դրսևորումների վերաբերյալ գրվել են մեծ թվով աշխատություններ, որոնցում դատապարտվել են որոշ երկրների կառավարություններ ու մեծ թվով հայատյաց անձինք: Համոզված ենք, խնդիրն այնքան տարողունակ է, որ դեռ շատ ուսումնասիրություններ կգրվեն և ի ցույց կդրվեն նորանոր հանցապարտներ: Սակայն, մեղադրելով օտարներին, հաճախ մոռացել ենք մեր թերություններն ու սխալները ներկայացնել, անցյալի վրիպումներից դասեր քաղել, ինչն, անկասկած, խիստ անհրաժեշտ է մերօրյա մարտահրավերներին արժանավայել դիմակայելու համար:

Այդտեսակ հրապարակումների մեջ իր յուրահատկությամբ և սեփական ժողովրդին իր ազգօգուտ նպաստը բերելու առումով բավականին ազգահաճո գործ է կատարել արևմտահայ նշանավոր մտավորական, հայ քաղաքական մամուլի առաջնեկ «Արմենիա» պարբերականի հիմնադիր և անփոփոխ խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը: 38 տարի անընդմեջ հրապարակված «Արմենիայում» հաճախ են հանդիպում հայ կյանքում տեղ գտած վնասակար սովորությունների, ազգին դիմորոշ թերությունների, օտարի դաժան տիրապետության պայմաններում մի կերպ գոյատևող հայ ժողովրդին ներսից կրժող, ազգային կյանքը թունավորող արատավոր երևույթների բացահայտմանն ու քննադատությանը նվիրված հրապարակումներ: Դրանք մեկ հիմնական նպատակ են հետապնդել. նկատել տալ հասարակ ժողովրդին այդ արատավոր երևույթները և հուշել, հորդորել ու հնարավորինս արագ ձերբազատվել դրանցից:

Ճիշտ է, «Արմենիայում» մատնանշված որոշ վնասակար արատներ վերացել են, սակայն շատերն էլ առկա են նաև մեր օրերում և խաթարում ու արգելակում են մեր ժողովրդի առաջընթացը: Այս իմաստով ավելի են կարևորվում «Արմենիայի» հրապարակումները, որոնք, հիրավի, արդիական են և, անկասկած, արժանի ավելի խորը և հանգամանալի ուսումնասիրության, ինչն էլ փորձել ենք անել մեկ հոդվածի թույլատրելի սահմաններում:

Բանալի բառեր. Թերություն, սխալ, վրիպում, պարբերական, վնասակար սովորույթ, անտարբերություն, ազգ, անհաշվենկատ քայլ, գաղթականություն, տգիտություն, դիվանագիտություն, համախմբող ուժ, հայկական խնդիր, արատավոր սովորություն, առաջնորդել, դուրահավատություն, հուսահատություն, ուժերի հարաբերակցություն, անկումային տրամադրություններ, անվանարկել, վատաբանել:

Հայ ժողովրդի համար բախտորոշ իրավիճակներում, աշխարհի հզորները հաճախ մեզ խաբել են ու սեփական շահերից ելնելով՝ իրականացրել ոչ հայանրպաստ գործողություններ: Իրենց տմարդի պահվածքով, թողտվությամբ, երբեմն էլ ջարդարարին խրախուսելով՝ նրանք անուղղակի մասնակից են դարձել հայա-

կործան ցեղասպանությանը: Այդ դրսևորումների քննադատության ոգով գրվել են մեծ թվով աշխատություններ, որոնցում դատապարտվել են որոշ երկրների կառավարություններ ու մեծ թվով հայատյաց քաղաքական գործիչներ: Համոզված ենք, խնդիրն այնքան տարողունակ է, որ էլի շատ ուսումնասիրություններ կգրվեն և ի ցույց կդրվեն նորանոր հանցապարտներ: Սակայն, մեղադրելով օտարներին, հաճախ մոռացել ենք մեր թերություններն ու սխալները ներկայացնել, անցյալի վրիպումներից դասեր քաղել, ինչն, անկասկած, խիստ անհրաժեշտ է մերօրյա մարտահրավերներին արժանավայել դիմակայելու համար:

Այդտեսակ հրապարակումների մեջ իր յուրահատկությամբ և սեփական ժողովրդին իր ազգօգուտ նպաստը բերելու առումով բավականին ազգահաճո գործ է կատարել արևմտահայ նշանավոր մտավորական, հայ քաղաքական մամուլի առաջնեկ «Արմենիա» պարբերականի հիմնադիր և անփոփոխ խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը: 38 տարի անընդմեջ հրապարակված «Արմենիայում» հաճախ են հանդիպում հայ կյանքում տեղ գտած վնասակար սովորությունների, ազգին դիմորոշ թերությունների, օտարի դաժան տիրապետության պայմաններում մի կերպ գոյատևող հայ ժողովրդին ներսից կրծող, ազգային կյանքը թունավորող արատավոր երևույթների բացահայտմանն ու քննադատությանը նվիրված հրապարակումներ: Դրանք մեկ հիմնական նպատակ են հետապնդել. նկատել տալ հասարակ ժողովրդին այդ արատավոր երևույթները և հուշել, հորդորել ու պահանջել հնարավորինս արագ ձերբազատվել դրանցից¹:

«Արմենիա» պարբերականի հենց անդրանիկ համարն ամբողջովին նվիրված է հայ ժողովրդի ժամանակի ոգուն չհետևող ընթացքի ու արատավոր կողմերի լուսաբանմանը: Լրագրի կարծիքով, որը հեռու չէր իրականությունից, մեր ժողովուրդը տարբեր պատճառներով ետ էր մնացել համաշխարհային զարգացումներից, ինչն էլ նրա հետամնացության ու օտար բռնակալների տիրապետությունն այդքան երկար հանդուրժելու կարևորագույն հետևանքներից մեկն էր: Այդ արատավոր կողմերից մեկը, թերթի տեսանկյունից, **լրագրերի հանդեպ անտարբերությունն էր ու ընթերցասեր չլինելը**: Իսկ ընթերցանության տարածված լինելու շնորհիվ նոր մտքեր, գաղափարներ, գյուտեր ու հայտագործություններ են հաղորդվում միմյանց, տարածվում, որոնց շնորհիվ ուսուցիչը, քաղաքագետը, արհեստավորն ու մշակն իրար հետ այս շփումներից «յառաջադիմություններ կունենան» անկասկած: Այնպես որ, -եզրակացնում էր պարբերականը, -«լրագիրը հացին չափ պետք է»² մեր ժողովրդին:

Մամուլը զարգացած և առաջադեմ ազգերի համար կարևոր գործոն էր, կյանքում տեղի ունեցող զարգացումներին ու փոփոխություններին տեղյակ լինելու, հասարակական, մշակութային անցուդարձին մոտ լինելու համար³: Հայ իրականության մեջ մամուլի միջոցով ժամանակի առաջավոր ընթացքին, գաղափարական նոր ուղղություններին հետևելուն խանգարում էին մի շարք օբյեկտիվ պատճառներ, դրանցից էին, օրինակ՝ ժողովրդի մեծ մասի **անգրագիտությունը**,

¹ Ճիշտ է, «Արմենիայի» ժամանակում հայությանը բնորոշ շատ թերություններ այժմ հաղթահարված են, սակայն՝ ոչ բոլորը: Այնպես որ, դրանց ներկայացումն ինչ որ տեղ և ինչ որ չափով արդիական է նաև այսօր:

² Նույն տեղում:

³ Ճիշտ է, XXI դարում ավելացել են նաև էլեկտրոնային մամուլն ու համացանցը, սակայն, ըստ էության, տարբերություններն այնքան էլ շատ չեն:

սոցիալական ծանր վիճակը և շատ դեպքերում նաև՝ մամուլի բացակայությունը: Այնպես որ հայ ժողովրդի համար ազատ, անկաշկանդ պարբերականների գոյությունն օդի նման անհրաժեշտ էին: Քանի որ դարավոր ընդարմացումից հայ մարդուն արթնացնելու, սեփական ինչքին, պատվին ու կյանքին տեր լինելու համար սթափվել, ուշքի գալ էր անհրաժեշտ: Դա կարող էր իր սրտացավ հրապարակումներով ու կազմակերպվելու, պայքարի ելնելու կոչեր անող, ժողովրդի ցավ ու դարդին դարման անելու, օտարի տիրապետությունը թոթափելու ազգանվեր գործին նվիրված պարբերականը. «Ներկայ դրության մեջ խիստ զգալի եղած էր ազգային մի ազատ թերթի պակասությունը, - այդ վեհ գիտակցությամբ արձանագրում էր «Արմենիան», ապա շարունակում, - «Արմենիա»-ն իւր առաջին թիւէն սկսաւ բողոքել Թիւրք կառավարութեան պաշտօնէից կողմէն հայոց ազգին եղած հարստահարութեանց և նոցա գործած զեղծումներու դէմ»⁴ և, պայքարի դրոշմ պարզելով, կոչ արեց ոտքի կանգնել ու թշնամու դարավոր բռնատիրությունը թոթափել:

«Ո՛վ է մեղաւոր Հայաստանի մեջ հարստահարութիւնները վերջ չը գտնելուն համար. քի՛ւրտը որ անուղղակի կը քաջալերուի իւր ընթացք շարունակելու. հա՛յը որ զինք պաշտպանելու ամեն միջոցներէ զրկուած է օրէնքով. թէ թի՛ւրք կառավարութիւնը որ անձնապաշտպանութիւնը իբր ոճիւր կը պատժէ»⁵, - տառապանքով լի, զայրացկոտ հարց է տալիս բազմաչարչար խմբագիրը, ապա նշում, որ հայերն էլ փոխանակ հետևություն անեն, ձեռքազատվեն վնասակար սովորություններից և դուրս գան պայքարի, «անմիաբանութիւն կընեն»:

Անդրադառնալով ազգի ու ազգային խնդիրներին՝ «Արմենիան» փորձում էր ներկայացնել հայությանը, ցույց տալ նրա դրական հատկանիշներն ու թերությունները: Բնութագրելով հայ ժողովրդին որպես պատերազմ չսիրող, անկախության վեհ գաղափարն իր մեջ անխաթար պահող, «ճարպիկության և ընչաքաղցության համար ճաշակով և զգոնությամբ» աչքի ընկնող և այլ դրական հատկանիշներով: Դարեր շարունակ որպես շնորհալի վաճառականներ, սեղանավորներ, աշխարհառչակ ձեռագործ վարպետներ ճանաչված հայերը, սակայն առիթը ներկայանալու դեպքում **չկուեցին**, իրենց անձն ու ինչքը պաշտպանելուց խուսափեցին և դրանք պատճառաբանում էին մի շարք հանգամանքներով: Նախ կայսրության մեջ բնակվող մյուս ժողովուրդների համեմատ, իրենց նվազ թվաքանակով: Ապա նրանով, որ առավել աշխույժ, քաջ, կազմակերպական հատկանիշներով օժտվածները բռնաճնշումներից խուսափելով, թողել-հեռացել էին երկրից: Այնուհետև, ասպատակությամբ և թալանով ապրող քրդերն էին մեր հարևանները, որոնք առիթը ներկայանալու դեպքում ավելի մեծ վնասներ էին պատճառում հայերին: Վերջապես, շարունակաբար հարձակումների ենթարկվելով թուրք, քուրդ, չերքեզ և այլ անուն ու հատկանիշներ կրող կիսավայրենի ցեղերի կողմից, «կոտորած է իրենց մեջ զօրութեան ոգին» և այն հայը, որ հանճարեղ գորապետներ է տվել պարսիկին, ռուսին, «շահեցրել Սուլթանի գանձերը», կարգավորել մյուս պետությունների հետ հարաբերությունները, կերտել է ու կառուցել հոյակապ շինություններ ու տաճարներ, ապրելով դարեր շարունակ վախի ու զրկանքների պայմաններում, միակամ ու անվախ չէր բարձրացնում զենքը անարգ ոսոխի դեմ:

⁴ «Արմենիա», № 11, 1885:

⁵ Նույն տեղում:

Պակաս կարևոր նշանակություն չունեն նաև այն հանգամանքը, որ հայերի ստվար մեծամասնությունը դարերի ընթացքում տոկաց ու հաճախ **մարտիրոսվեց հանուն քրիստոնեական հավատի**, «նախամեծար համարեց իրենց կեանք նուիրել քան թե մահմետականության ընդունիլ», իսկ քրիստոնեական տերությունները միայն հեռվից դիտում էին այդ Գողգոթան և մատը մատի չէին տալիս: Հայկական սերունդն էլ, որ «մարդկության խիստ եզակի և շահեկան ցեղերէն մին է»⁶, օր-օրի թուլակամ էր դառնում, հրաժարվում կովելուց: Հենց Մ. Փորթուգալյանի, նրա «Արմենիայի» և իրենց գաղափարակից փաղանգի մեծագույն ավանդը հայոց վերագարթնումին նպաստելն էր:

Նախկինում ազատ խոսելն ու գրելը մեծ քաջություն էր համարվում: Իսկ հետո, երբ զգալի թվով մտավորականներ համարձակորեն հանդես եկան վախկոտներին ու թուլամորթներին դատապարտող հրապարակումներով, իրադրությունն սկսեց կամաց-կամաց փոխվել և դա ակնհայտ երևում է «Արմենիայի» համարների թեկուզ թռուցիկ ուսումնասիրությունից: Տպագրված նյութերը գնալով ավելի ու ավելի համարձակ էին դառնում, պահանջկոտ ու ազատության կոչերով լի: Այդ զարգացումը հատկապես ցայտուն երևում է թերթի գլխավոր տեսաբան Մ. Փորթուգալյանի, ապագա Հնչակյան կուսակցության հիմնադիրներից՝ «Լեռենց» - Ավետիս Նազարբեկյանի, ժամանակի նշանավոր մտավորական, հասարակական-քաղաքական գործիչ «Կոռան»-Մատթեոս Շահազիզյանի և այլոց տեսական-վերլուծական, ծրագրային հոդվածներում: Սակայն կարմիր թելի նման այդ հրապարակումներում անցնում է այն միտքը, որ հարկավոր է այլևս արագ ձեռքազատվել ազգային կյանքում առկա վնասակար երևույթներից և լուրջ գործով զբաղվել՝ խոսքից անցնել գործի: Խոսելը համեմատելով սերմ ցանելու, իսկ գործելը ծլած բույսը սրտացավ խնամելու գործընթացների հետ, Մ. Փորթուգալյանն աներկբայորեն հայտարարում էր. «Գործելու ժամը հնչած է» և ավելացնում, որ հարկավոր է ճշտել, թե յուրաքանչյուր հայ մարդու, ում համար թանկ են հայրենիք ու սեփական ազգ հասկացությունները, ինչ և ինչպես անել: Տարիների սեփական և «Արմենիայի» ոգեկոչումների փորձից ելնելով Մ. Փորթուգալյանը եզրակացնում էր. «Հայի համար Ազգային պաշտպանության միակ միջոց փրկարար զենքն է այժմ»⁷, ապա ավելացնում, որ բոլոր հայերը՝ անկախ բնակվելու և գտնվելու վայրից, մեղապարտ կլինեն, եթե ազգային դատի համար մեկ մարդու նման չկազմակերպվեն և հարկ եղած դեպքում հնարավոր ու անհնարին բոլոր միջոցները չներդնեն ազգային փրկության գործի համար, եթե չմերժեն հոռի բարքերը և հպարտորեն չհաղթահարեն դրանք: Կազմակերպվելու, վնասակար թերություններից ինքնամաքվելու, միջոցներ և ուժ գոյացնելու համար, հեղինակի կարծիքով, ժամանակ և միջոցներ էին հարկավոր, որոնք հայթայթելու համար վայրկյան անգամ հապաղել չէր կարելի: Միևնույն ժամանակ, Մ. Փորթուգալյանը նշում էր, որ պետք չէ անտեսել նաև խոսքի ազդեցության ուժը: Հետևապես, հարկավոր է «խօսիլ և միանգամայն գործել. պետք է գրել և միանգամայն կազմակերպուիլ... շարժել տակաւին դանդաղ յետամնցներին և անշարժ անտարբերներին»⁸:

Շարունակելով թեման Վարանգադէն հոդվածագիրը դիմելով բոլոր հայերին, հարց էր բարձրացնում՝ ինչո՞վ էս մարդ և որքանով էս հեռու ազգավնաս

⁶ Եզական ազգ մը, «Արմենիա», № 46, 1897:

⁷ «Արմենիա», № 61, 1886:

⁸ Նույն տեղում:

բարբերից՝ այդ հարցը համարելով ընդհանուրի խղճի անողոք ձայնը: Ապա առաջարկում՝ ժամանակն է, որ յուրաքանչյուր հայ խորտակի ստորացուցիչ բոլոր նախապաշարմունքները և, թեկուզ արյան գնով, իր համար վաստակի արժանապատիվ «մարդ» կոչումը: Դա, հողվածագրի կարծիքով, հնարավոր կդառնար միայն հայրենիքի ազատությանն անմնացորդ նվիրված պայքարելով, նրա համար ոչինչ չխնայելով, քան թե թողնելով, որ հայրենիքը «թունաւորուի Տաճկաց անբարոյականացուցիչ հարստահարութեանց տակ և հետևապէս թունաւորէ ապագայ սերնդի բարոյական կազմուածքը»⁹, իսկ **անտարբերությունը**՝ համարում աններելի ոճրագործություն: Մարդը նրանով է մարդ, շեշտում էր հեղինակը, որ ունի մարդկային տարրական ազատ իրավունքներ, իսկ վեհանձն ու ազգային վեհ արժեքներն անաղարտ պահպանելու համար պատրաստ են պայքարել լոկ նրանք, ում մոտ հոգեկանն ու բարոյականը կարողանում են գերիշխել նյութականի նկատմամբ:

Հեղափոխությունից բացի, (որն այս դեպքում ավելի շուտ ազատագրական պայքարի իմաստն ուներ-Ս. Ս.), եվրոպական կառավարություններին դիմումներ ուղղելու կողմնակիցներին բացատրում էր Մ. Փոքրուզալյանը, անհրաժեշտ էր և կարևոր ավելի զգոն ու զգույշ լինել, ձեռնպահ մնալ անմիտ քայլերից ու **«դատարկապորտ» հայտարարություններ անելու վնասակար սովորությունից**, քանի որ «այդպիսի դիմումներ, ապարդյուն մնալէ գատ, Թիւրք կառավարութեան կասկածները և չարակամութիւնը հրաւիրած են իրենց վրայ»¹⁰: Ամբողջովին չմերժելով դիմումներ կատարելու գործառնության օգտակարությունը, իսկ դիմումներ կատարելու ժամանակահատվածը համարելով «հայկական խնդրի մանկական շրջանը», իր ժողովրդի ցավով տառապող խմբագիրը հայությանը կոչ էր անում սթափվել, դուրս գալ տգիտության մերժելի սովորությունից և կրթական մակարդակով ու նյութապես այն աստիճան հզորանալ, որ, ողջ կայսրության կտրվածքով, տնտեսության ու բանկային բնագավառներում դառնալ թելադրող, ուղղորդող, հետևապես և քաղաքական ասպարեզում՝ վճռական խոսքի իրավունքի տեր:

Ազգային ազատագրական շարժման սկզբից ի վեր, Մ. Փոքրուզալյանը, ամեն անգամ, երբ ականատես էր դառնում ազգային որոշ **գործիչների անխոհեմ գործելակերպին ու անհաշվենկատ քայլերին**, խորը ցավ էր ապրում: Քայլեր, որոնք հանգեցնում էին անցանկալի երևույթների, ժողովրդին կանգնեցնում կոտորած տաշտակի առաջ, իսկ հաճախ էլ, նույնիսկ, սովի ու զանգվածային կոտորածների մատնում: Իրադարձություններ, որոնք նյութական ու մարդկային մեծաքանակ կորուստներից բացի, բերում էին խորը հիասթափություն, տրամադրությունների անկում, ժողովրդի մեջ այլևս **պայքարելու ցանկության իսպառ կորուստ**, համատարած անտարբերություն ամեն ինչի նկատմամբ և, որ վատթարն էր՝ **զանգվածային արտագաղթի**: Երկիրը դատարկվում էր, անտեր մնում, իսկ մեր թշնամիներն ու նրանց քառ կամակատարները քաղցած բորենիների նման անմիջապես հարձակվում էին, կլանում ամեն ինչ, տեր դառնում մեր հող ու ջրին, մեր պապենական տարածքներին ու տներին, իրենց անամոթաբար հայտարարում տեղացիներ, մեր ապուպապի մասունքները յուրացնում, նույնիսկ հավատի մեր տները՝ եկեղեցիները, զանգվածաբար մզկիթացնում էին, իրենցը դարձնում:

⁹ «Արմենիա», № 62, 1886:

¹⁰ «Արմենիա», № 37, 1885:

Հետաքրքիր են «Արմենիայի» ու նրա անփոփոխ խմբագրի մոտեցումները գաղթականության և, ընդհանրապես, գաղթելու գործընթացի ցավալի իրողությանը: **«Գաղթականությունը ոչ միայն ինքնասպանություն է հայու համար,** այլ և ազգասպանություն: Հայաստան առանց Հայու, Հայն առանց Հայաստանի կորած են»¹¹, - գրում էր թերթը, այնուհետև բացատրում, որ թուրքական իշխանություններն ամեն տեսակ բռնարարքներով ու ճնշումներով, ինչպես նաև հայերին ինքնապաշտպանության բոլոր միջոցներից զրկելով ու «զինեալ վայրենի Քոդին յանձնելով», «թուրքաց պէս կեղեքելու, սպաննելու և կողոպտելու»¹² հեռանկարով դեպի Թուրքիա ձգտող չերքեզներին գրկաբաց ընդունելով, նպաստում են, ստիպում հայերին՝ թողնել հայրենի եզերքներն ու գաղթել օտար երկրներ: Հայ ժողովուրդը, որին դարեր շարունակ բնորոշ են եղել հողը սիրելու ունակությունը, աշխատասիրությունը, չափավորությունն ու հավատարմությունը, երբեք կամավոր չի լքել իր հայրենի տունն ու ընտանիքը, այլ անողորմ հալածանքն ու կյանքը կորցնելու իրական վտանգներն էին, որ նրան դարձրել էին տնավեր ու թափառական: «Հայն իւր գլուխն ազատելու համար թողուց երկիրը և փախաւ», իսկ քրդերն ու թուրքերը, հայոց լքյալ հողերին տիրանալով, «ամայութիւնը կրկնապատկած են»¹³: Երբեք բուրդն ու չերքեզը, - թուրքական կողմին զգուշացնում էր Մ. Փորթուգալյանը, - որ միայն թալանով ու կողոպտելով կարող են գոյատևել, շարունակ իրար միս էին ուտում, մշտական հակասությունների մեջ էին, հայի չափ պետությանը հավատարիմ և օգտակար չէին կարող լինել, «անոնց քաջութիւն անգէն անպաշտպան Հայու վրայէն անդին չանցնիր»: «Օտար սերմ Հայաստանի հողին վրայ արմատ բռնած չէ»¹⁴, - գրում էր թերթը, սակայն պատմության ընթացքն ու ժամանակը բոլորովին այլ բան ցույց տվեցին, որ նույնիսկ ամենաանորակ սերմը բերրի հողում կարող է աճել, պտուղ տալ:

Մ. Փորթուգալյանն «Արմենիայում» մի շարք այլ խնդիրներին զուգահեռ քննարկում էր նաև ազգի ու եկեղեցու հարաբերակցության հարցերը՝ այնքանով որքանով դա առնչվում էր հայության ապագային: Ազգությունը համարելով զանազան կապերով իրար հետ «միացած մարդերի» մի մեծ ընկերություն, Մ. Փորթուգալյանը գրում էր, որ Արևելքում ազգությունները տարբերվում են ցեղային, կրոնական և լեզվական միությամբ: Մեզ միշտ վնասում էր այն հոռի դրվածքը, որ ազգային պատմական հայրենիքի ըմբռնումը երբեմն ընկալվում էր կրոնական պատկանելության գործոնով: «Հայ մը մահմետականութիւն էթէ ընդունի, Տաճիկ կը դառնայ», - կարդում ենք «Արմենիայում», - իսկ Արևելքում ընդհանրապես «ազգայնութեան մը գլխաւոր յատկանիշը կը կազմէ կրօնքը»¹⁵:

Օսմանյան կայսրության ողջ տարածքում¹⁶ դարեր շարունակ «պաշտօնական թուղթերի մեջ Էրմենի միլլէթի (Հայ ազգ) կանուանէ միայն լուսաւորչական Հայերը»¹⁷: Այդպես էր նաև Ռուսաստանում՝ երբ որևէ հայ ռուսադավան էր դառնում նա ինքնաբերաբար դադարում էր հայ լինելուց և բոլոր փաստաթղթերում

¹¹ Գաղթականութեան վտանգներ, **«Արմենիա»**, № 22, 1893:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Գաղթականութեան վտանգներ, **«Արմենիա»**, № 23, 1893:

¹⁵ Հայ ազգը եւ եկեղեցին, **«Արմենիա»**, № 2, 1906:

¹⁶ Այսպես էր նաև Ռուսաստանում, Պարսկաստանում և մնացյալ բոլոր վայրերում:

¹⁷ Հայ ազգը եւ եկեղեցին, **«Արմենիա»**, № 2, 1906:

ներկայացվում էր ազգությամբ ռուս: Օրինակ՝ ժամանակին երբ Փարիզում լույս տեսնող «Թեմփս» («Temps») լրագրի խմբագիր Շարլ Գուդուլին հարցրել էր հանրահայտ Լորիս Մելիքովին ազգային պատկանելիության մասին, նա անկեղծանալով պատասխանել էր, որ «Հայաստան մը կայ, բայց Հայեր չկան»¹⁸: Ես Ռուսիա ծնած եմ, իմ հայրենիքս Ռուսիան է և ազգով Ռուս եմ, բայց հայադարան Ռուս մը»¹⁹: Սակայն եվրոպական երկրներում, Ամերիկայում և մի շարք այլ վայրերում ազգային պատկանելությունը որոշվում է տարածքային գործոնով: Այսինքն՝ որ երկրում մարդը ծնվում էր ինքնաստիքյան համարվում էր այդ ժողովրդի ներկայացուցիչը: Լեզուն, կրոնը, ազգը ոչ մի նշանակություն չունեին, դրա համար էլ երբ որևէ եվրոպացու ասվում էր, թե հայ եմ և Թուրքիայում կամ Ռուսաստանում եմ բնակվում, չէր կարողանում ըմբռնել հարցի էությունը:

Քանի որ մենք դարեր շարունակ պետականություն չենք ունեցել, գրում էր Մ. Փորթուգալյանը, մեր ազգային պատկանելությունը հնարավոր էր պահպանել ազգակցական կապերի, լեզվի և եկեղեցու միջոցով, որոնք այլ ազգերի մոտ թույլ գործոններ են եղել, իսկ մեզ համար միակն էին ու որոշիչները, և հա թե ինչու մենք «պինդ բռնենք ատոնք մեր հայ ազգությիւնը չկորսնցունելու համար»²⁰: Մեզ՝ հայերիս համար, բոլոր ժամանակներում և բոլոր դեպքերում պետք է ուղենիշ լինի այն պարզ ճշմարտությունը, որ անկախ նրանից, թե որ երկրում ենք բնակվում, ինչ լեզվով ենք խոսում, առավել ևս, ինչպիսի կրոնական և գաղափարական համոզմունքներ ունենք, պետք է հստակ գիտակցենք մեր հայ լինելը և բոլոր միջոցներով տեղ կանգնենք այդ սկզբունքին:

Շարունակելով պարզաբանել Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության ուղիներն ու հնարավորությունները, Մ. Փորթուգալյանն «Արմենիայում» գրում էր, որ հայերին շատ են խանգարել մի քանի հոռի սովորություններն ու, հատկապես՝ **տգիստությունը**: Թեև ոչ մահացու, բայց բավական վնասակար էր այն, որ հայերի մոտ տարածված էր բամբասանքի ախտը: Քննադատությունը չմերժող Մ. Փորթուգալյանը գրում էր, որ քննադատությունն անհրաժեշտություն է, «նա խթան մե յառաջադիմել տալու համար», սակայն կեղծ ու պատիիր հերյուրանքներ տարածելը խիստ վտանգավոր են, դրա համար ժողովուրդը պոռոտախոսներին «պետք է հասկցունե թե ինք բամբասանք մտիկ ընելու սեր ու յօժարութիւն չունի»²¹, որպեսզի հնարավոր դառնար բաղձալի հաղթանակին հասնել:

Մյուս կարևոր թերությունը հայերի մոտ **«ղիվանագիտություն»** բառի իսկական իմաստի **չիմացությունն** էր ու դրա նշանակության անգիտացումը, ինչն էլ «զլխաւոր պատճառներէ մին եղած է Եվրոպայի վրայ մեր չափազանց յոյսեր դնելուն»²²: Հեռատես խմբագրի կարծիքով, հայերը չափից ավելի միամիտ էին հավատալու համար, թե եվրոպական մեծ տերությունները «լոկ մեր վրայ գրաւով կուգան մեզ կը ազատեն» և դա այն դեպքում, երբ այդ նույն Եվրոպան նույնիսկ փոքրիկ շահ ունենալու համար չէր ավստոսում իր սեփական զավակներին էլ զոհելու: «մի թէ պիտի վարանի մեզի պէս օտար փոքր ազգ մը զոհելու»²³, իրավացիորեն

¹⁸ Իսկ Թուրքիայի Արտաքին գործերի նախարար Սայիդ փաշան, ճիշտ դրան հակառակ, մի բանակցությունների ժամանակ հայտարարում էր, թե Հայաստան մը չկայ, այլ Հայեր միայն կան:

¹⁹ Հայ ազգը եւ եկեղեցին, **«Արմենիա»**, № 2, 1906:

²⁰ Նույն տեղում:

²¹ Բամբասանքի սերը, **«Արմենիա»**, № 20, 1897:

²² Եւրոպական դիւանագիտութիւնը եւ հայերը, **«Արմենիա»**, № 75, 1897:

²³ Նույն տեղում:

հարցնում էր Մ. Փորթուգալյանը: Շրջահայաց տեսաբանը կոչ էր անում բոլոր հայերին սթափվել, զգուշորեն ու մանրամասն վերլուծել կատարված իրադարձությունները, փոխանակ աջ ու ձախ, սրա նրա հասցեին մեղադրանքներ հնչեցնելու, վեր հանել ու գիտակցել հատկապես սեփական սխալները՝ դրանք չկրկնելու, դրանցից ապագայում զերծ մնալու համար. «Մենք փոխանակ մեր սխալները տեսնելու, հարկավոր զգուշութիւններ ձեռք առնելու, եղած ճգնաժամէն կարելի եղածին չափ քիչ վնասով պրծնելու համար»²⁴, պիտի նախ գիտակցենք, որ յուրաքանչյուր պետություն առաջնորդվում է նախ և առաջ իր քաղաքական ու տնտեսական շահերով:

Այս ամենին ականատես մեր քաղաքական այրերը կարծես կուրացած, մոռացած իրենց կոչումն ու ժողովրդին անշահախնդիր ծառայելու բարձրագույն խոստումները, զբաղված էին երբեմն այնպիսի խնդիրներով, որոնք, մեղմ ասած, ոչ տեղին էին այդ ժամանակ ու այդպիսի պայմաններում, ոչ էլ անհրաժեշտ: Այդպիսի ոչ ցանկալի երևույթներից էր օրինակ, այսպես կոչված, «բաց ու գոցի» խնդիրը: Դրա բովանդակությունը կայանում էր նրանում, որ XX դարի սկզբին հայ քաղաքական կուսակցությունների որոշ անխոհեմ գործիչներ փորձում էին եկեղեցական բեմերն օգտագործել իրենց քարոզչական նպատակներով, ինչին, բնականաբար, ընդդիմացան ժողովրդի մեծ մասն ու շրջահայաց մտավորականությունը: Քանի որ, վերջինների տեսակետով եկեղեցին հոգևոր կենտրոն էր և պիտի հեռու մնար քաղաքական արկածախնդրական տարատեսակ մոտեցումներից:

«Արմենիան» Օրմանյան պատրիարքի հրաժարականի պահանջների կապակցությամբ անդրադառնալով այդ հարցերին, ընգծում էր, որ մենք՝ հայերս, զրկված ենք մեր իշխանության ու գործադիր մարմիններն ունենալու հնարավորությունից: Միակ համախմբող կառույցը՝ լավ թե վատ, մեր եկեղեցին է, որը «թէն թնդանօթ և գորաբանակներ չունէր զինք իբրև իշխանութիւն յարգել տալու համար»²⁵, բայց բարոյական ու հոգեկան գործությունն ունէր, ուստի **երբեք պետք չէր եկեղեցիները դարձնել քաղաքական շահարկումների առարկա և զրկել ժողովրդին նաև այդտեսակ իշխանությունից, համախմբող ուժից ու նաև հայ մարդու հոգս ու ցավի միակ ապավենից**, վերջապես, Հայկական խնդրի միակ հետապնդողից: Մեր քաղաքական կառույցները, առավել ևս, կուսակցությունները «պէտք է կանգ առնեն եկեղեցիի դուռին առջև և անկէ ներս չմտնեն, եկեղեցին պէտք է հեռու մնայ այդպիսի կոիւնքերի ասպարէզ դառնալէ»²⁶: Այս առումով Մ. Փորթուգալյանը կարևորում էր նաև պարբերականների, նրանց խմբագիրների ու մյուս հեղինակների ունենալիք կարևոր դերակատարությունը ժողովրդին ճիշտ ուղորդելու և անկանխատեսելի հետևանքներից զերծ պահելու համար, քանի որ մեր թշնամիները ակնդետ հետևում էին, հաճախ կրակին յուղ լցնում, կրքեր էին բորբոքում, որ հեշտությամբ իրականացնեին իրենց որդեգրած «բաժանիր, որ տիրես» գործելաոճը: «Իր կոչումը ըմբռնող հայ խմբագրի պարտականությունն է առաջնորդել,-գրում է Մ. Փորթուգալյանը,-հանրային կարծիքին և ոչ թե զանազան կողմերէ փշող քամիների առջև ինկած, անոնց հոսանքէն մղուիլ դէպի այս ու այն կողմ»²⁷: Այսինքն՝ վաստակաշատ խմբագիրն առաջարկում էր ցանկացած՝ այդ

²⁴ Նույն տեղում:

²⁵ Օրմանեան պատրիարք եւ «չպիտի յիշուի», **«Արմենիա»**, № 6, 1899:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Ներկայ վիճակ, **«Արմենիա»**, № 2, 1899:

թվում և եկեղեցիների հարցում, ազգանպաստ դիքորոշում ունենալ և տուրք չտալ անպատեհ և ժամանակավրեպ գործողությունների, քանի որ այդ տարիներին, երբ ըստ էության նծարի վրա էր դրված հայ ժողովրդի լինել-չլինելու խնդիրը, եկեղեցիների ազատականացման հարցը ոչ միայն տեղին չէր, այլև խիստ վնասակար՝ ազգը պառակտելու, ուժերը մասնատելու տեսանկյունից. «ազգավնաս գործունեություններ է կը զգուշացունենք մեր հայրենակիցներ, քանի որ հարստահարությունները և սովառիթ անապահովությունը չեն դադրիր Հայաստանի մէջ»²⁸: Այդ մտահոգությամբ էլ թերթը նշում էր, որ տվյալ պահին ժողովրդին նմանատիպ խնդիրների մեջ ներքաշելը կարող էր կործանարար լինել, ուստի հարկավոր էր պայքար ծավալել դրանց դեմ, քանի որ դրանք «վնասակար կրնան դառնալ հայ ժողովրդին և այդ վնասակար հոսանքների դեմ թումբեր կանգնելը քիչ դժուար աշխատանք մը չէ»²⁹:

Շեշտելով, որ վաղուց արդեն հայ ժողովուրդն սթափվել, խելքի էր եկել ու պայքարում էր իր ազատության համար, որ անգիտության ժամանակներն անցել էին, որ ցավալի իրողությունն ու կոտորածների տխուր փաստը ստիպում էին, պահանջում գոնե «զգուշություններ ձեռք առնելու», որպեսզի հեղափոխության գաղափարը մնար և «ընթանար իր ճշմարիտ կոչումին և ճանապարհին մէջ»³⁰, համոզված գրում էր «Արմենիայի» տեսաբան Մեն-Սեն,-ապա ավելացնում, որ գոնե հիմա, այսօր փորձություններից հետո ժողովուրդն իր լավն ու վատը իմանար, կարողանար ճանաչել իսկական նվիրյալին, աջակցեր նրան ու մերժեր, պախարակեր պատեհապաշտ արկածախնդիրներին, որ առիթ չտային «ամեն հասնողին ազգին խնամակալի անկոչ դերը ստանձնելով ազգին խաղցունել»³¹:

Հայերին բնորոշ թերություններից «Արմենիան» առանձնացնում էր նաև առանց լուրջ նախապատրաստական աշխատանքների, **քուպեական ոգևորությամբ քայլեր կատարելու արատավոր սովորությունը**: «Միշտ կը սխալինք ու յետոյ կը զղջանք», - գրում էր թերթը և ավելացնում, որ վտանգավոր է ընդհանրապես հայոց եկեղեցին ներքաշել քաղաքական մանկամիտ խաղերի մեջ, առավել ևս՝ արտասահմանյան երկրներում գտնվող հայկական եկեղեցիները, որոնք միակ հայապահպանություն իրականացնող կառույցներն էին և բավականին հաջող էին իրականացնում իրենց այդ վեհ առաքելությունը: «Վտանգավոր բան է,-գրում էր Մ. Փորթուգալյանը,- այդ ախտը մտցունել արտասահմանի հայ եկեղեցիներին մէջ, ժողովուրդին կարծեցնել տրուի թէ յոյս ոչ թէ իրեն վրայ դնէ, այլ օտարի, որ այդ տեսակ խժոժություններով կուզէն ազգի ընդդիմադիր ոյժը կոտրել ազգի ձեռքով»³²:

Հարկավոր էր, որ ըմբռնեինք նաև, որ «ինք ժողովուրդ չէր գործող ու յեղափոխող, նա **խաբւեցաւ գործիք ու միջոց դառնալով ուրիշների ձեռք**»³³: Իսկ այդպիսի դեպքերում, որ ամենացավալին է, ժողովուրդը կորցնում է վստահությունը առաջնորդների հանդեպ, դառնում անզգա ու անտարբեր բոլոր հարցերի ու խնդիրների նկատմամբ: Ազատության գործի նվիրյալներին մնում էր մեկ ելք՝ «հաստատել ու զօրացնել ժողովրդի վստահությունը դեպի ճշմարիտ յեղափոխա-

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Ժողովուրդին, «Արմենիա», № 32, 1899:

³¹ Նույն տեղում:

³² Միշտ կը սխալինք ու յետոյ կը զղջանք, «Արմենիա», № 4, 1899:

³³ Օայրայեղությունների վնասներ, «Արմենիա», № 30, 1899:

կան գործունեութիւնը», որպէսզի հնարավոր դառնար վերականգնել մարդկանց «թմրած հաւատքը»: Բացատրել անցյալի վնասների իրական պատճառները, թե ինչու հակառակ մեր ակտիվ ու գործուն պայքարին, չունեցանք մեր ակնկալած արդյունքները: Հարկավոր էր չինայել ոչ միջոցներ, ոչ ջանքեր, կրկին ոգևորել, ոտքի հանել ժողովրդին, որովհետև հստակ էր, որ բոլոր դեպքերում ցանկացած հեղափոխություն «ժողովրդին վրայ հիմնուելու է»³⁴, այլ կերպ ասած՝ յուրաքանչ-յուր հեղափոխության շարժիչ ուժն ու անմիջական իրագործողը հասարակ ժողովուրդն է:

«Արմենիան» ընգծում էր նաև, թե փորձը ցույց է տվել, որ հայերի մեջ գործունեությունը բանականությունից, իրական պայմաններից ավելի «առաջացել էին և իրագործուել լոկ զգացմունքից»³⁵: Բիարկե, զգացմունքը դատապարտելու խնդիր չենք առաջադրում, սակայն ազատարար շարժումների դեպքում դրանցով չէ, որ պիտի առաջնորդվեր ժողովուրդը, այլ սառը հաշվարկներով ու հստակ դատողությամբ պետք էր քննարկեր ու տեսներ բոլոր թեր և դեմ կողմերը: Հակառակ դեպքում հավանաբար չէինք ունենա, ինչ ունեցանք: Իսկ այդ ցավալի իրադարձությունները տեղի ունեցան նաև այն պատճառով, որ հաշվի չառնվեց մի պարզ հանգամանք. **բոլորը չէ, որ ունակ էին ղեկավարել, առաջնորդել** ժողովրդին, քանի որ **ինքնահռչակները** կարող էին մեծ **դժբախտությունների առիթներ** ստեղծել, որի իրավունք ոչ իրենք, առավել ևս, ոչ էլ ժողովուրդը չունեն: «Իրաւունք ունի՞ն ազգին բաղդն կոյրզկուրայն և քմածին թելադրութիւններով գահավիժելու»³⁶, - արդարացիորեն հարցնում է Մէն-Մէն:

Միևնույն ժամանակ, Մ. Փորթուգալյանը բոլորին կոչ էր անում դասեր քաղել անցյալի թույլ տված սխալներից և դադարել դյուրահավատ լինելուց, քանի որ այն զգալի վնասներ էր պատճառել ժողովրդին ու նրա ազատագրական շարժմանը: Առավել ևս, որ թուրքական իշխանությունները XX դարի նախաշեմին զգալիորեն փոխել էին իրենց մարտավարությունը հայոց ազատագրական շարժումները ճնշելու գործում: «Երբ Դուռը տեսաւ թէ արտասահմանի Հայերի ոգևորութիւնը խեղդել և նորարծարծ յեղափոխական զգացումը մարել չի կարելի հակառակաբանութիւններով, իր գործելու կերպը փոխեց և սկսաւ, համոզելու կամ վախցունելու տեղ, խաբելով և ժեզուիթական դարձուածներով իր գործ յառաջ տանիլ»³⁷:

Շատ անգամներ թշնամին չի կարողացել զենքի ուժով մեզ հաղթել, սակայն մեր **դյուրահավատությունը** հաղթել է: Թուրքերը տեսնելով, որ 1894-1896 թթ. ընթացքում, ջարդեր կազմակերպելով չկարողացան ծնկի բերել հայերին և դրանցով հնարավորություն էին ընձեռում մեծ տերություններին, այդ առիթն օգտագործելով, միջամտելու իր ներքին գործերին, կրկին որդեգրեց խարդավանքների փորձված ճանապարհը. «մեր մէջ կը տարածէ լուրեր, որոնք ժողովուրդին զգացումները շոյելով կը գրգռեն զայն, կը խաբեն, իսկ հայ ժողովուրդին օգտին համար աշխատողները կործանել կուտան հայ ժողովուրդի ձեռքով, անոր դիւրահաւատութենէն օգտուելով»³⁸: Հասկապէս «կարմիր» Աբդուլ Համիդը, որ բանսարկության

³⁴ Նույն տեղում:

³⁵ Հայրենագիտություն, «Արմենիա», № 58, 1900:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Դիւրահաւան չլինիք, «Արմենիա», № 4, 1899:

³⁸ Նույն տեղում:

և խարդավանքների մեծ վարպետ էր, անուամբ էր ամեն ինչ, որ «Հայը Հային հետ կռուեցունէ և իր չախորժածը Հայի ձեռքով պատժել կուտայ, կոչնչացնէ»³⁹:

Պատահական չէր, որ տարիների ընթացքում «Արմենիան» հաճախ էր անդրադառնում այս խնդրին և առանձնացնում **դյուրահավատությունը** որպես հայ ժողովրդի թույլ կողմերից մեկը: Հատկանիշ, որը դարեր շարունակ թեև զարդարել էր մեզ որպես մաքուր ու զուլալ կերպար ունեցող ժողովրդի, սակայն շատ էլ վնասներ էր պատճառել: Հիշենք թեկուզ բոլոր այն դեպքերը, որոնց ժամանակ հայ թագավորներն ու գորապետները հավատալով օտարի կեղծ խոստումներին ու վստահեցումներին՝ հայտնվել են թակարդում: Ըստ թերթի ներկայացման, ազատագրական պայքարի ընթացքում ևս հայերը վստահ լինելով, որ թշնամին խաբելու է, կրկին հավատում էին: Իսկ թե ինչու էր այդպես, դա էլ իր պատճառներն ուներ: Նախ՝ որ յուրաքանչյուր մարդ, ժողովուրդ իր չափանիշներով ու պատուհանից է նայում աշխարհին, իսկ հայերը մեծ հաշվով երբեք չեն խաբել և հետո՝ շատ դեպքերում այլ ելք էլ չունենալով, ստիպված տպավորություն են ստեղծել, թե հավատում են, որ գոնե ապագայում իրենց հետնորդներին հակառակորդին՝ թշնամուն մեղադրելու հնարավորություն ապահովեն: Մեր ժողովրդի դժբախտության գլխավոր պատճառներից մեկը համարելով դյուրահավատությունը՝ Մ. Փորթուգալյանը գրում էր, որ տգետ ամբոխին հաճելի լինելու համար «պետք է ցույց տալ իրեն ոչ թե ճշմարտությունը, այլ երազել տալ իրենց փափաքների գործադրության յոյսը մօտ ապագայի մեջ»⁴⁰ և նա մոտակա հաջողության երազներով ներշնչված՝ կհավատա ինչ նրան ներկայացնես ճշմարտության փոխարեն:

Ազգային փկության գործում հաջողության հասնելու համար,-գրում էր Մ. Փորթուգալյանը,-անհրաժեշտ էր «համբերատար յարատևութեամբ» աշխատել, ամեն գրածի ու ասվածի չհավատալ, այլ հարկավոր է քննել-պարզել, թե ով է ասողը և որքանով են իրական ասվածները: Կարճ ասած՝ հարկավոր է, որ մենք՝ հայերս ոչ թե հավատանք այն ամենին, ինչ ուզում ենք, ցանկանում ու երազում, այլ իրատես լինենք, հաշվի առնենք փաստերն ու իրողությունները, որոնց հիման վրա կատարված եզրակացություններն ընդունենք ի գիտություն և այդ իմացությունն օգտագործենք հօգուտ ազգաշահ գործի:

Եթե գործ ես անում,-գրում էր «Արմենիայի» խմբագիրը,-անկարելի է, որ թշնամիներ չունենաս: Եթե բարի գործ ես անում, չարերը կբանբասեն և՛ հակառակը: «Թշնամի կամ հակառակորդ չունենալու համար, պետք է պառկիլ գերեզմանին մեջ: Պտուղ չունեցող ծառին քար նետող ալ չի լինիր»⁴¹: Որպեսզի մեկը ժողովրդի բարօրության համար որևէ օգտակար գործ կատարի, նախ կարևոր է, որ այն կատարելու գիտակցությունն ունենա, հասկանա ու գիտակցի դրա անհրաժեշտությունը: Իսկ այն մարդիկ, որ չունեն իրենց սեփական համոզմունքները **«դյուրահավատութեամբ կը հետնին շատ աղմուկ հանող կողմին** և անոր անտեղի իրաւունքներ կուտան»⁴², -կարդում ենք թերթում: Հոգվածագիրն այնուհետև ցավով ավելացնում է, որ դժբախտաբար այդպիսիք հայերի մեջ «մեծ բազմութիւն կը

³⁹ Դիւրահաւան չլինինք, **«Արմենիա»**, № 22, 1899:

⁴⁰ Նույն տեղում, № 33, 1906:

⁴¹ **«Արմենիա»**, № 40, 1905:

⁴² Նույն տեղում:

կազմեն» և լավ չպատկերացնելով իրերի իսկական դրությունը, հաճախ մեծ վնասներ են պատճառում ազատագրական պայքարի գործին:

Շատ են լինում դեպքեր,-գրում է Մ. Փորթուգալյանը,-որ առանց ճշտելու, թե ով է հարցը ներկայացնողը, ինչ նպատակներ է հետապնդում, ինչից ելնելով է գովում կամ պարսավում մեկին, «դիրահաւանութեամբ կը հաւատան նրան և աջ ու ձախ կօգնեն կամ կը հարուածեն»: Պատահական չէր, որ այդ դյուրահավատությունը շատ դեպքերում վնասում էր ազգանպաստ որևէ կարևոր գործընթացի և ծանր հետևանքների պատճառ դառնում:

Տարիներ շարունակ «Արմենիան» ու նրա կողմնակիցները մոտիկից ու շատ լավ ճանաչելով թշնամուն, իմանալով նրա նենգ ու տմարդի բնույթը, քարոզում էին լինել չափազանց զգույշ ու շրջահայաց, գործել ոչ թե վաղն իսկ արդյունք ակնկալելով, այլ երկար ու շարունակաբար մտածված քայլերով: Անչափ կարևոր էր նաև, որ ամեն պատահածին հավատ չընծայվեր և այդ **դյուրահավատության ախտին** «դէմն առնելու համար ժողովուրդի դատողութիւնը զարգացունել», ինչը հնարավոր կլիներ, եթե մարդիկ գրագետ ու հետաքրքրվող դառնային, լուսավորվեին ժամանակի ընթացքում:

Քննադատելով հայության մեջ առկա թերությունները՝ Մ. Փորթուգալյանը նշում էր, որ **«ամենէն գէշ ախտն է յուսահատութիւնը»**, որից պետք է զգուշանա ցանկացած ժողովուրդ, որն ուզում է ապրել: Նույնիսկ քրիստոնեությունը չի ընդունում և դատապարտում է բոլոր նրանց, ովքեր ձեռք են բարձրացրել իրենց վրա, էլ ուր մնաց մի ամբողջ ժողովուրդ նման փորձ անի: Այնպես որ հայերն իրավունք անգամ չունեին այդ ուղղությամբ մտածելու և հուսալքվելու, այլ պիտի կորուստի ու վիրավորանքի ցավից ատամները սեղմած՝ կրկին դուրս գային պայքարի: Պատմության ընթացքում շատ են եղել դժվարին իրավիճակներ, սակայն հայերը երբեք «չեն յուսահատած իրենց ազգութիւնը պահպանել և կապրին դէռ մինչ իրենց վիճակակից շատ ազգեր ոչնչացած են», -համոզված գրում էր Փորթուգալյանը, - ապա շարունակում, որ հուսահատությունը հայի թե կրոնական թե ազգային բնավորությանը հարիր չէ և հայ ժողովուրդն իրավունք անգամ չունի հուսալքվելու: «Ով որ յուսահատօրէն կը խօսի, հայերէն չխօսիր: Ով որ կը յուսահատի, նա հայ չէ»⁴³, -յուրահատուկ սահմանում էր ազգասեր խմբագիրը: Ուղղակի այդքան կորուստներից հետո անհրաժեշտ էր ավելի սթափ, ավելի հաշվենքկատ ու նախապատրաստված լինելու դեպքում միայն սկսել ազատության համար պայքարը: Տուրք չտալ չարախոսներին ու հուսլքվողներին, հստակ պատկերացնել մի պարզ ճշմարտություն, որ «յանցատրը յեղափոխական գաղափարը չէր», ինչպես պնդում էին ոմանք, այլ «յեղափոխութեան անունով ժողովուրդին ներկայացող գործիչների մէկ մասը»⁴⁴: Պետք չէր, որ ազատագրական պայքարի ճշմարիտ ուղին որդեգրած գործիչները տուրք տային երկու ծայրահեղ թերին՝ պահպանողականներին ու անպատրաստ հեղափոխության կողմնակիցներին, այլ հանդարտ ու հաստատ քայլերով առաջ ընթանալ, քանզի առաջադիմությունը «քալելով կը լինի, ոչ թէ ցատկելով»:

Որտեղ բռնություն կա, այնտեղ կլինի նաև պայքար այդ բռնության դեմ, իսկ Արևմտյան Հայաստանում XX դարի սկզբին բռնության ծով էր, օվկիանոս:

⁴³ Յուսահատութիւն, «Արմենիա», № 2, 1901:

⁴⁴ Նույն տեղում:

Թուրքերը թալանում, բռնաբարում ու սպանում էին քրիստոնյա ժողովուրդներին ու, հատկապես, հայերին, քանի որ նրանք համարձակվել էին չհամակերպվել մորթվողի կարգավիճակին ու ըմբոստացել էին դրա դեմ: Բայց, ցավոք, սխալներն անպակաս եղան մեր պայքարում, հաշվի չառնվեցին մի շարք կարևոր գործոններ, որոնք ոչ միայն կարևոր էին, այլև վճռական, ինչի արդյունքում էլ սպասված արդյունքները չունեցանք: Նախ՝ **շարունակաբար խաբվեցինք Եվրոպայից**, բայց խելքի չեկանք: Գիտակցում էինք, որ մեր ուժերը բավարար չեն թուրքին հաղթելու համար, բայց քանի որ անհապաղ ազատություն էինք ցանկանում, **ոտքի ելանք ու, առանց հաշվի առնելու ուժերի հարաբերակցությունը**, կրակի լույսի վրա թիթեռնիկների նման այրվեցիք, մոխրացանք: **Միասնությունն էլ չկար**, կային կուսակցությունները, որոնք ավելի շատ իրենց ջանքերն «ուղղած էին իրար չեզոքացնելու քան հասարակաց թշնամիին դեմ զինելու»⁴⁵: Իհարկե, սա չի նշանակում, թե կուսակցություններ չպիտի լինեին մեզանում: Անվճելի է, որ «յառաջադիմութեան անիւր շարժող միակ ոյժը եղել է տարբեր գաղափարների մրցումն», - գրում էր Փորթուգալյանը, ապա շարունակում. «կուսակցականների մոլեռանդ հակառակությունն է որ մեզ վնասել է. մեր մեջ եւր գերազանցել է աւելի քան հասարակաց շահը»⁴⁶:

Ճիրավի, թե չէ ինչպես բացատրել, առավել ևս՝ արդարացնել **փառասիրական, եղբայրասպան** այն **դրսնորումները**, որոնցով բավական հարուստ է մեր ազատագրական շարժման պատմությունը և, որոնք վնասելով շարժմանը՝ մեծ հարված էին հասցնում ժողովրդի հավատին, ինչն ուղղակի ներելի չէր: Իսկ հայերը դժվարանում էին հասկանալ, որ թուրքական վայրագ քաղաքականությունն ուղղված էր մեկ նպատակի՝ «հայութիւնը ջնջել և տկարացունել իր բոյնին մէջ»⁴⁷: Իսկ հայությանն այդ դեպքում ոչինչ չէր մնում անելու, քան շարունակել սկսած կռիվը, որովհետև պատմության նախախնամությամբ՝ այդ կռիվում պիտի որոշվեր նրա ճակատագիրը: Ժողովուրդն ու ազգային անկախության գաղափարն, ըստ Մ. Փորթուգալյանի, այնքան «միացած են որ չէ կարելի բաժան նկատել այլևս»⁴⁸ և հայությանը մեկ բան էր մնում անելու. ավելի կազմակերպվել, հզորանալ, ճիշտ պահը ընտրել և նոր միայն դուրս գալ հրապարակ: Հակառակ դեպքում կունենայինք այն ցավալի իրողությունը, ինչ ունեցանք 1890-ական թթ. կեսերին:

Նայոց ազատագրական պայքարի ընթացքում եղան նաև խորը հիպոթափության պահեր, երբ աջ ու ձախ մեղադրանքներ էին հնչում հեղափոխական ուժերի հասցեին: **Անկումային տրամադրություններն** այնքան խորն էին, որ հոռետեսները չէին խնայում նույնիսկ հեղափոխության նվիրյալներին ու նահատակներին, նրանց ղեկավարած կուսակցություններին՝ անխոհեմ գործելակերպ որդեգրելու և թշնամուն կոտորելու անհարկի առիթներ տալու համար: Սակայն բանը նրանում էր, որ կոտորածներն ու հալածանքները պարբերաբար շարունակվում էին անկախ այն բանից «լինին պատրուակներ և կամ ոչ»⁴⁹: Ուրեմն, եզրակացնում էր «Արմենիայի» տեսաբան Մէն-Մէն, հարկավոր էր մեր բոլոր ուժերն ու կուսակցությունները, առավել ևս Դաշնակցությունը, որն, ի դեպ, ամենագորեղ

⁴⁵ Մեր դրութիւն, «Արմենիա», № 12, 1901:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Ինչու՞ չենք հասկնար, «Արմենիա», № 25, 1901:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում:

ուժն էր հայ իրականության մեջ, ընդհանրապես հուսալքվելու իրավունք չունեին, անկախ այն բանից, թե ով ինչ կբարբաջեր, ինչպես կվատաբաներ հայ հեղափոխական շարժումը: Հարկավոր էր մեկընդմիջտ հասկանալ,-գրում էր հոդվածագիրը,-որ «սիրտը գլխին մեջ չի» և սթափ ու մտածված գործել, իսկ զգացմունքներն առայժմ թող սպասեն⁵⁰:

Մի կարևոր հանգամանք էլ էին նշում «Արմենիայի» գաղափարախոսները: Դա այն էր, որ ստեղծված ծանր պայմանների ու հալածանքների արդյունքում, 1890-ական թթ. երկրորդ կեսերին, հայության կարող ուժերը՝ խուսափելով ոչընչացման իրական վտանգից, հեռացել էին երկրից ու հեղափոխության քարոզով զբաղվում էին դրսում, հիմնականում եվրոպական ազատ երկրներում: Մի հանգամանք, որն օգուտի փոխարեն վնասում էր սրբազան գործին: Այն իմաստով, որ բուն երկրում աշխատանքները գրեթե դադարել էին և հետո, դրանցով թուրքական իշխանություններին ավելի էին գազազեցնում և գրգռում ու բաց թողնում երկրում ապրող, երկիրը պահող, անգեն ու անպաշտպան ժողովրդի վրա: Ըստ «Արմենիայի», «գաղափարական գործիչը բուն երկրում միայն կրնայ արդիւնավետ գործ մը ունենալ», իսկ դրսերում արվածներն անցողիկ ու ոչինչ չփոխող գործառույթներ էին⁵¹:

Քննարկելով հայության միասնության խնդիրը և ազատագրական պայքարի դառը փորձը, «Արմենիան», շեշտում էր, որ XX դարի նախաշեմին հայ ժողովրդի խնդիրները, փաստորեն մնացին չլուծված: Դեռ ավելին, օտարերկրյա միջամտություններից զազազած թշնամին ավելի ու ավելի է կատարելագործում հայությանը ծնկի բերելու, ոչնչացնելու միջոցները: «Արմենիայի» Վահե թղթակիցը շեշտադրում էր, որ այդ պայմաններում հայ ժողովուրդն «աւելի պէտք ունի խելացի ու լուրջ մարդիկների, զօրեղ գործիչների, ովքեր կուրծք տային Հայ ազգին այս գահավիժումին դէմ», սակայն կատարվում էր հակառակը՝ հրապարակ էին գալիս մարդիկ, ովքեր նույնիսկ իրենց գոյությամբ «յուսայատութիւն կը պատճառեն, Հայը հազիւ տեսած լինին, ազատութեան գործ կուզեն դէկաւարել, քննադատութիւնը հայիոյանքն չեն կարող գանազանել, շանտաժներով ազգին ծառայութիւն կը մատուցանեն»⁵²:

Պարզապես ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր, նախ **ձեռնպահ մնալ վաղաժամկետ ու վնասակար գործելակերպից** և ամեն հնար գործադրել՝ հիասթափվելու վտանգավոր երևույթն ու անտարբերությունը կանխելու համար: Կարևոր էր գիտակցել նաև, որ հայ իրականության մեջ գոյություն ունեցող երկու ծայրահեղ ուղղություններն էլ վտանգավոր էին և ժողովրդին՝ միայն վնասակար: Հետևապես, անհրաժեշտ էր անել ամեն ինչ, նրանց նորովի աշխուժացումը կանխելու համար, քանզի դրանք հավասարապես ժողովրդի համար վտանգավոր էին ու կարող էին հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Առանց նախկինում թույլ տված սխալները բացահայտելու, ճանաչելու ու համապատասխան հետևություններ անելու՝ հնարավոր չէր առաջ գնալ. «Հիմակուհիմա մեր ներքին վնասակար կողմերը ճանաչելով զգուշանալ,-գրում էր «Արմենիան»,-մեր մեջ եղած աղտեղությունները մաքրելու ենք նախ»⁵³:

⁵⁰ Ինչու՞ չենք հասկնար, **«Արմենիա»**, № 25, 1901:

⁵¹ Ո՞վ պիտի մտածէ Հայաստանը, **«Արմենիա»**, № 34, 1901:

⁵² Մի տխուր երևույթ, **«Արմենիա»**, № 24, 1900:

⁵³ Ներկայ վիճակ, **«Արմենիա»**, № 1, 1902:

Անդրադառնալով XX դարի սկզբներին հայության մեջ ծայր առած անիմաստ **եղբայրասպան և ուժերը խիստ ջլատող կռիվներին**՝ կռիվներ, որոնք ներկուսակցական իրարասպանություններից հաճախ վերաճում էին միջկուսակցականի և մեծ վնաս հասցնում ազատագրական շարժմանը, «Արմենիան» դատապարտում էր այդ արգահատելի արարքները և անարգանքի սյունին գամում կատարողներին՝ անկախ այն բանից, թե ովքեր էին նրանք կամ նրանց պատվիրատուները: Ա. Արփիարյանի, Մխտ-Շահենի, Գ. Չիթճյանի և էլի շատ նվիրյալների սպանության ցավալի իրողությունները «Արմենիան» զարշանքով անվանելով «Թիւրքի հացին եղ քսել», այսինքն՝ անել մի բան, որն ամբողջությամբ նրա սրտով էր, ցավով արձանագրում էր, որ հայերն սպանելով իրար, կատարում էին թուրքերի ցանկությունը և մեջտեղից վերացնում նվիրյալներին: Թերթը նշում էր, որ փոխանակ «խօսքով ու գրչով մրցիլ իրար հետ, փոխանակ ռեվօլվերով իրար սպաննելու», այդ նույն ուժերը կարող էին մի ցավի, մի աղքատ ընտանիքի դարման գտնել⁵⁴: Իսկ մի փոքր ուշ, երբ այդ ահաբեկումներն սկսեցին նաև դրամ հավաքելու նպատակներ հետապնդել և իրենց մեջ ներգրավեցին հայաշատ բոլոր վայրերը, «Արմենիան» զայրացած հարցնում էր. «Իրաւունք կա՞յ այս կամ այն Հայը սպաննելու, որ չէ հետեւել քո գաղափարներուն կամ չուզեր իր դրամ տալ յեղափոխութեան Ս. Գործին անունով պահանջողներին» և ինքն էլ փորձում էր պատասխանել:

Նախ, պարզաբանում էր պարբերականն իր խմբագրականում, դրամատերը չճանաչելով պահանջողին չէր կարող վստահել նրան և հետո՝ եթե նա չի կիսում հեղափոխության գաղափարները, հետևաբար՝ համոզված չի նաև դրա հաղթանակի հնարավորությանը, ուրեմն այլ կարծիք, տեսակետ ունենալու համար պիտի սպաննէ՞լ այդ մարդուն: Իհարկե, դա ճիշտ մոտեցում չէր և հարցին իրական լուծում տալու հավանականությունն էլ զրոյական էր: Հետևապես այդպիսի սպանությունները ոճրագործություններ էին և ուրիշ ոչինչ. «ոչ մի կերպ ներելի չէ սպաննել կարծիքի ազատութեան համար», հատկապես՝ երբ ինքդ հավակնում ես այդ ազատության համար պայքարելու⁵⁵, -կարդում ենք «Արմենիայում»: Պարբերականի կարծիքով էթե շարժման գաղափարները հիմնավորապես տարածվեին ժողովրդի մեջ, մարդկանց բացատրեին հեղափոխության նպատակներն ու ներկայացնեին ապագայում սպասվելիք դրական փոփոխությունները, դրամն ինքնին կգար, քանզի մեր ժողովուրդը պատրաստ էր տալու ամեն ինչ, միայն թէ ժամ առաջ ազատվեր թուրքական այլևս անտանելի դարձած բռնատիրությունից: Իսկ երբ այդ ամենն արվում էր ստիպողաբար, ահաբեկումներով, ապա նույնիսկ նրանք, ովքեր կամովին տալիս էին այդ դրամը, կհիասթափվեին, կփոխեին իրենց կարծիքը թե շարժման թե գործիչների մասին, և իրենք էլ կդադարեին տալուց: Այնպես որ, -եզրակացնում էր թերթի տեսաբանը, -«սրբապղծութիւն է Յեղափոխութեան Ս. Գործին անունով ոճրագործութիւններ կատարելը, քանզի դրանք հայ ժողովուրդը Յեղափոխական գաղափարին բոլորովին հակակիր կը դարձունեն»⁵⁶:

Ընդհանրապես, դրամ ուզելու համար **փոխանակ համոզելու «մահ սպանալով դրամ կորզելը** երբեք յանձնարարելի գործելակերպ մը չէ» և իրար սպանե-

⁵⁴ Հայը կը սպաննէ Հային, **«Արմենիա»**, № 21, 1903:

⁵⁵ Սպանութիւններ Ս. Գործին անունով, **«Արմենիա»**, № 1, 1902:

⁵⁶ Նույն տեղում:

լու ազգակործան երևույթը սրբապղծում էին հայ ազգային ազատագրական շարժման վարկը⁵⁷, -կարդում ենք «Արմենիայում»: Հատկապես այդ շրջանում, երբ ճգնաժամ կար հայ ժողովրդի հոգեւորութուն, երբ երկու աղետալի հոսանքների միջև ազգի ոգին էր թավալվում, առավել քան կարևոր էին դառնում գիտակցական ու հաշվենկատ մոտեցումները դեպի ազատարար շարժումը: Իսկ որ այդ երկու իրար ոչ մի կերպ չզիջող հոսանքներն առկա էին հայ իրականության մեջ, կասկած չկար: Դրանք էին «ներկա պահին Յեղափոխական գաղափարին անկման և վաղը, այսօր, այս ժամուն Յեղափոխութեան ջատագովութիւնը»⁵⁸, որոնք երկուսն էլ հավասարաչափ վնասակար էին ու վտանգավոր ազգային ազատագրական շարժման համար:

Իրար անվանարկելու, վատաբանելու և սպանելու փոխարեն՝ հայ գործիչներն ավելի շատ պետք է մտածեին ազգին ջարդերից հետո խելքի բերելու, նրա ոգին ու կորովը վերականգնելու և, հատկապես ջարդերի արդյունքում անտեր մնացած բազմաթիվ որբերին հավաքելու, խնամելու մասին, քանի որ հայ ժողովրդի համար այդ շրջանում կենսական խնդիր էր հայ ազգի մնացած ուժերի պահպանումն ու վերականգնումը: Այս խորապատկերում «ինքնասպանութիւն չէ՛ր լինի, -հարցնում էր «Արմենիայի» տեսաբան Մէն-Մէն,-բիւրաւոր կորած ընտանիքների ապագայ ծիլերը անխնամ կորստեան մատնելը»⁵⁹:

Հայկական բնավորության պակասավոր ու թերի կողմերի մասին խոսելիս, «Արմենիան» հաճախ էր նշում մեր «**ինքնախաբեութեան ախտի**» մասին: Օրինակ,- գրում է Մէն Մէն,- ժամանակին հերոս կուսակցություն Հնչակը բոլորին ներշնչում էր, թե «հայ արիւնի ցուլերը և ցաւին աղաղակները պիտի դորդէին Եւրոպայի կառաւարութիւնները նոր խաչակրութիւն մը ծնեցունելու չափ զօրեղ»⁶⁰: Մակայն իրականում հայության վիճակը մագաչափ անգամ դեպի լավը չփոխվեց, հայերն էլ չխրատվեցին: «Հնչակից» հետո «Դրոշակն» էլ իջավ ասպարեզ, իր քաջագործություններով շլացրեց հայ ժողովրդին, «մինչ երկիրը միշտ նոյն անփոփոխ վիճակի մէջ և ժողովուրդն ալ իր այս բովանդակ յոյսերովն ոչ իսկ ապահով կը մնայ կոտորուելու մղձաւանջից»⁶¹: Այս ամենը մատնացուց անելով՝ «Արմենիան» ցույց էր տալիս, որ առիթը ներկայանալու դեպքում հայ կուսակցություններն էլ չէին վարանել հայության միամիտ խանդավառությունը շահագործել և զգուշացնում էր հետագայում խուսափել դրանից: Քանի որ մեզանում եղել էին ու կային տարրեր, որոնք այդ ամենն օգտագործում էին «ժողովրդի մէջ կոյր հաւատք, դրամ և անուն վաստակելու համար»⁶²: Այնպես որ, -եզրակացնում էր նյութի հեղինակը,-ինքնախաբեությունը գիտակցական ոճիր է, ազգասպանություն, իսկ պատասխանատուները հայոց մէջ գործող զանազան մարմիններն էին, որոնք հեղափոխության անունից թույլ էին տալիս սխալ սխալի ետևից:

Պակաս վտանգավոր թերություն չէր նաև **անտարբերությունը**, ինչը Մ. Փորթուգալյանի կարծիքով, ազգի թշվառ վիճակի նախապայմաններից ու նրա անբաժան ուղեկիցներից էր եղել դարեր շարունակ: Հանրային ցանկացած գործ առաջ մղելու համար՝ անհրաժեշտ է ողջ հասարակության ակտիվ օժանդակութ-

⁵⁷ Ազգակործան երևույթներ, «Արմենիա», № 29, 1905:

⁵⁸ Գիր էւ գործ, «Արմենիա», № 24, 1902:

⁵⁹ Ազգային գործերի շուրջ, «Արմենիա», № 20, 1902:

⁶⁰ Երկու երևույթներ, «Արմենիա», № 11, 1903:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում:

յունը: Իսկ երբ անտարբերները մեծամասնություն են կազմում, որևէ գործ առաջ մղելն ուղղակի անհնարին է դառնում: Առավել ևս, երբ խոսքն ազգային ազատագրական պայքարի մասին էր, ազգովին էր հարկավոր ոտքի ելնել, միասնաբար մաքառել ու հաղթահարել բոլոր տեսակի դժվարությունները: Այդպիսի ծանր, հայ ազգի համար չափազանց վատ պայմաններում, կործանման եզրին հայտնված վիճակում, ըստ Մ. Փորթուգալյանի, «անտարբերությունը չկրնար բնաւ արդարանալ, չէզոք հայրենասերներ կը նմանին անանձրն ամպերի, առանց օգտակարութեան: Իր դժբաղդ Ազգի վիճակին հանդէպ անտարբեր մնալն ալ պակաս ոճրագործութիւն մը չէ, եթէ ոչ աւելի»⁶³:

Աշխարհում գոյություն չունեն մարդիկ և ժողովուրդներ, որոնք չունենան թերություններ ու պակասավոր կողմեր: Հայ ժողովուրդն էլ բոլորի նման ունի նաև ոչ դրական հատկանիշներ, սակայն բացարձակացնել դրանք, ժողովրդին բնորոշել միայն դրանցով, պարզապես անթույլատրելի է: Առավել ևս, երբ խոսքը վերաբերվում է այնպիսի արգահատելի գծերի, ինչպիսիք են դավաճանությունը, մատնությունը, ուրիշի շահերին ծառայելը և այլն, որոնք բավական շատացել էին XIX և XX դարերի սահմանագծին: Սակայն դրանք բնորոշ ազգային հատկանիշներ համարելն աններելի սխալ է և ընդամենը ջուր է լցնում թշնամու ջրաղացին: Աշխարհի ժողովուրդներից ո՞ր մեկը սոցիալական, տնտեսական ու քաղաքական անելանելի վիճակում հայտնվելիս չի կատարել նման քայլեր: Բիարկե, բոլորի մոտ էլ ավել կամ պակաս չափերով առկա են եղել բացասական նմանատիպ դրսևորումներ: Բոլոր ժողովուրդների մեջ էլ կան մորթապաշտներ, նյութասերներ, շահամոլներ, որոնք հանուն շահի ու անձնական վայելքների պատրաստ են ցանկացած քայլի: Արդյո՞ք ճիշտ կլինի նմանատիպ թափթփուկներով բնորոշել որևէ ժողովրդի: Բիարկե՝ ոչ: Ազգային ազատագրական պայքարի ընթացքում հայերի մոտ ևս եղան որոշ բացասական դրսևորումներ, սակայն այն համազգային ոգևորությունն ու հանուն գաղափարի շատերի գոհվելու պատրաստ համատարած մտայնության դիմաց դրանք մանրուքներ էին: Հենց այս ընդհանուր պատկերացումն էլ ելակետ ունենալով էր այդ խնդրին մոտենում «Արմենիան»: Լինելով համազգային ցավի ուղղակի արտահայտիչն ու այդ ցավով տառապող պարբերական, այն չէր կարող բոլորովին չտեսնելու տալ այդ բացասական դրսևորումները և իր բոլոր հրապարակումներում հետապնդում էր մեկ նպատակ. դասեր քաղել թույլ տված սխալներից՝ ապագայում դրանցից գերծ մնալու համար, որպեսզի հանուն ազատության ներդրված ջանքերն առավել նպատակային ու արդյունավետ լինեին:

Сурен Сарксян – Недостатки армянской действительности и общественной жизни согласно периодическому изданию “Армения”. – В судьбоносных для армянского народа ситуациях великие державы часто обманывали нас и исходя из собственных интересов, действовали не в пользу армян. Бесчеловечное поведение, вседозволенность, а порой и прямое поощрение насилия сделало их косвенными участниками геноцида армян. Есть множество работ критикующих подобные проявления, осуждающих как правительства некоторых стран, так и многих анти-армянских деятелей. Проблема настолько объемна, что с уверенностью можно утверждать что ей будет посвящено еще немало исследований, изобличающих новых

⁶³ Անտարբերները, «Արմենիա», № 42, 1905:

виновников. Однако, обвиняя других, мы зачастую забывали о собственных недостатках, да и сейчас не всегда извлекаем уроки из прошлых ошибок, что, несомненно, крайне необходимо для достойных ответов вызовам современности.

В подобных публикациях особое место занимает выделяющийся благодаря своему вкладу в общенациональное дело представитель западноармянской интеллигенции, пионер армянской политической прессы, основатель и бессменный редактор периодического издания “Армения” Мкртыч Португальян. В издаваемой непрерывно в течение 38 лет “Армении” часто встречаются публикации посвященные критике отравляющих национальную жизнь порочных явлений, имевших место в армянской действительности и свойственных нашему народу вредных привычек, грызущих изнутри страдающий в условиях жестокого иноземного владычества армянский народ. Все эти публикации преследовали одну основную цель: указать простому народу на эти порочные явления, подсказать выход и призвать к скорейшему освобождению от них.

Правда, некоторые указанные в “Армении” порочные явления устранены, однако многое сохранилось до сегодняшнего дня тормозя и нанося вред прогрессу нашего народа. В этом смысле публикации “Армении” актуальны и получают большую важность. Последние, поистине, достойны более глубокого и обстоятельного исследования, что и мы попытались осуществить в допустимых статьях пределах.

Suren Sargsyan – *The shortcomings of the armenian reality and public life according to the periodical “Armenia”*. – The Armenian people during the crucial situations were often deceived by the world's powerful nations who were acting from their own counties interests and had their inhuman behavior, connivance, even sometimes encouraging perpetrators, and by these became indirect participant of the genocide of the Armenians. Plenty of researches were done about this subject in the spirit of criticism where the governments of some counties and a lot of people were condemned. This issue is very huge and important, and it needs much more detailed studies. However, usually by blaming foreigners we often have forgotten our mistakes from which we should learn the lessons and never forget in modern life.

The similar publishing has done by Mkrtich Portugalyan who was Western Armenian intellectual, the chief-editor the famous “Armenia” Periodical, and the big patriot of his nation, also. During his 38 years work in “Armenia” he wrote a lot of publications which were discovering the positive and criticizing the negative features of the Armenian people who were suffering under the foreign domination, also about the harmful traditions, and national mistakes and defects. It had one main goal: make sure ordinary people see and understand how it could be dangerous for them, and urge to get rid of the bad habits as quickly as possible.

Of course, a lot of harmful defects which were mentioned in “Armenia” now disappeared, but still many of them available and living in us by nowadays which distort and impede the progress of our nation. In this sense a lot of significant publications of “Armenia” day by day become more important which, indeed, up to date, and are certainly worthy to much more detailed study.

ЛАЗАРЕВСКИЙ ФОРМАТ ТУРКМАНЧАЙСКОГО МИРА 1828 г.

ВАЛЕРИ ТУНЯН

Доктор ист. наук, профессор

Патриотическая деятельность Христофора Лазарева в подготовке Туркманчайского мира выражалась в продвижение трех проектов: 1) переселение персидских армян в исторические территории Араратской страны; 2) защита льготного статуса армянских общин в России; 3) воссоздание армянской государственности в составе Российской державы. Создан «Армянский удел» в форме Армянской области. Лазаревский формат Туркманчайского мира определил основы развития армянской государственности в Закавказье.

Ключевые слова: Лазарева, Армения, Самодержавие, Туркманчайский мир, Армянская область.

Тема участия членов семьи Лазаревых в освобождении Восточной Армении является предметом внимания армянской историографии. Затрагивалась их отдельная деятельность по созданию армянской государственности в составе Российской державы и переселению армян. Ввод в научный оборот новых источников и комплексное рассмотрение их вклада позволяет углубить представления о значимости их участия в присоединении восточноармянских территорий к Российской империи, создание современной основы армянской государственности¹. Особенного внимания заслуживает державнопатриотическая деятельность Христофора Лазарева². Политизация исторического прошлого мифотворцами³, необходимость воссоздания реального исторического прошлого, требует углубления имеющихся знаний о Туркманчайском мире для армянской истории.



16 июля 1826 г. персидские войска без объявления войны вторглись в закавказские владения России с целью их отторжения⁴. Неудачный ход боевых действий побудил царя Николая I, помимо других мер, уделить внимание сбору собственной информации о положении дел в регионе. Интерес проявлен к возможностям братьев-миллионеров Ивана (Ованеса), Христофора и Лазаря Лазаревых⁵. Пер-

¹ **Тунян В.Г.** Россия и Армянский вопрос. Ереван, 1998, с. 3 - 29.

² **Тунян В.Г.** Восточная Армения в составе России. Ереван, 1989, с.12, 15, 16 ; Маргарян Г. К. Роль Х. Е. Лазарева в истории русско-армянских отношений. Авт. к. ист. н. М., 2006, с. 22 - 24.

³ **Тунян В.Г.** Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии. Ереван, Институт истории, 2013; Гюлистанский договор: история и современность. - www.academ-history.am/upload/files/Gjulistan.pdf

⁴ Российской государственный архив древних актов (РГАДА), ф. 1406, оп. 1, д. 250, л. 3-5.

⁵ Письма императора Николая Павловича к А. П. Ермолову. Сообщ. Д. Д. Давы - дова. - Чтения в обществе истории и древностей российских. 1862, кн. 3, №9,10, с. 225 - 227; Петербургское общество при восшествии на престол Николая Павловича. Донесения М. М. Фока к А. Х. Бенкендорфу, 1826. - Русская Старина. 1881, т. 32, с. 323.

вые двое состояли на службе в Азиатском департаменте внешнеполитического ведомства, а последний служил полковником отдельного корпуса жандармерии. Тесные связи Лазаревых с армянской церковью, широкие контакты с представителями деловых кругов Закавказья, знакомство с представителями грузинской знати являлись порукой привлечения членов семьи к различным деликатным поручениям.

В Азиатском департаменте внешнеполитического ведомства на Христофора Лазарева было возложено составление обзоров о ходе русско-персидской войны. В сводке за август месяц сообщалось о сложности ситуации во всех закавказских владения, поскольку коммерческая деятельность прекратилась, парализованной оказалась деятельность почты и прекращена была связь между отдельными областями. Сожжению подверглись города Салян и Ленкорань. Происходил угон табунов лошадей и скота за границу. Отмечались бесчинства персидских частей над армянским населением: "Персияне всюду, где нападают, и всюду, куда входят, производят опустошения, много страдают армянские селения за упорство и за то содействие, каковое жители оных оказывают в пользу России"⁶.

Продуктивность обзоров дала импульс деятельности Христофора Лазарева в созданном корпусе жандармов при III отделении канцелярии е.и.в. – высшей политической полиции⁷. 12 сентября 1826 г. состоялось прикомандирование Христофора Лазарева к шефу корпуса жандармов А. Х. Бенкендорфу для выполнения обязанностей чиновника особых поручений по "внешним (азиатским) сношениям"⁸. Решение было принято на самом высшем уровне власти. Уведомление министра иностранных дел К. В. Нессельроде Лазареву гласило: "Вследствие высочайшей вол государя императора, предписываю Вам явиться к ген.-адъютанту Бенкендорфу, исполнять все то, что от него поручено будет и состоять под его начальством. Впрочем, Вы по-прежнему остаетесь в ведомстве государственной коллегии иностранных дел".

Новое поприще рассматривалось достойным применения способностей мастера разведки: "Я уверен, что Вы усердием своим и точностью при исполнении поручений, кои на Вас возложены будут от ген. Бенкендорфа, обратите на себе благосклонное его внимание"⁹. Политический сыск, политический контроль и политическая разведка синтезировались воедино¹⁰.

Управление III особого корпуса жандармерии как новой правительственной структуры находилось в процессе становления, насчитывая в штате 16 человек, имевшей четыре экспедиции: 1) политический контроль; 2) криминально-сектантский; 3) надзор над иностранцами; 4) делопроизводство об антизаконных проявле-

⁶ Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826 - 1828 гг. (РАС). Гл. ред. Арутюнян А. О.- Вестник архивов Армении. 1978, N 8, с. 27.

⁷ Образовано III отделение Собственной е.и.в. канцелярии. - [http:// www. prilib.ru/history/pages /item.aspx?itemid=891](http://www.prilib.ru/history/pages/item.aspx?itemid=891)

⁸ Архив внешней политики Российской Федерации (АВПР), ф. ДЛС и ХД, д.1930, л. 2; д. 1932, л. 12 об, 26 об; Матенадаран, ф. Лазаревых, п. 106, д. 51, ед. хр. 32, л. 1; п. 136, ед. хр. 185, л. 1

⁹ Государственный исторический архив Российской Федерации (ГИА), ф. 109, I эксп., д. 51, 1826, л.1.

¹⁰ Указ об учреждении III отделения Собственной е.и.в. канцелярии. - [http:// www. hist. msu.ru/ER/Etext/III/449.htm](http://www.hist.msu.ru/ER/Etext/III/449.htm)

ниях¹¹. Лазареву предстояло продолжить дипломатическую деятельность, путем представления независимой информации о положении дел в Закавказье и политике сопредельных азиатских держав, но весь формат отношений был еще не определен.

Следует отметить, что в кругу ближайшего окружения известие о новом поприще деятельности Христофору Лазареву было воспринято неоднозначно. На это указывает письмо Александра Худобашева к Христофору Лазареву, с пожеланием придерживаться стандартности поведения в делопроизводстве и необходимости проявления значительных способностей: “Я пришлю Вам форму донесения в коллегию; о прикомандировании Вас к генералу Бенкендорфу не поздравляю Вас теперь с сим назначением, но только в продолжительном времени поздравим Вас с желаемым успехом вашего предприятия”¹².

Расхожее мнение рассматривало представителей высшей тайной полиции как твердых представителей закона в повседневной жизни: “Жандарм в мундире полезен только для сохранения тишины и порядка на улицах. Если он и составляет полицию, то по мундиру уже не тайную”¹³. Высшей тайной полиции вверялось право представлять реальную правду самодержавию по всем сферам управления, в том числе по внешней и внутренней политике.

16 сентября 1826 г. правительство России приняло “Декларацию” об объявлении войны Персии. Ее целью признавалось сохранение территориальной целостности империи, наказание агрессора за материальный ущерб и установление прочного мира с Персией. 17 сентября главнокомандующий Кавказского корпуса А. П. Ермолов направил рапорт царю Николаю I относительно приказа начать контрнаступление против персидских войск, одержанных побед под Шамхором и Елизаветполем¹⁴. Тайная полиция доложила 18 сентября царю Николаю I: “Внимание общества обращено на три предмета: на бюрократию; на министерство финансов и на вторжение персиян”¹⁵.

Подробности военных сражений Христофор Лазарев представил в сводке за сентябрь. Отмечалась победа ген Мадатова, разбившего 3 сентября противника в Шамхорском сражении, а 13 сентября с командующим Паскевичем в Елизаветпольском сражении. Следствием стало отступление персов с изменниками ханами из российских пределов и снятие осады крепости Шуши. Указывалось убийство на границе Шамхора дяди наследного принца Аббас-Мирзы, захвате после Елизаветпольского сражения около 2 тыс. пленных, в том числе и сына последнего Гянджинского хана Джавата. Отмечена активность командира отряда ген. Д. В. Давыдова, который действовал в Лори и Шираке, захвате провианта персидских войск в Гюмри. Против русского отряда располагался брат ереванского сардара Гасан хан, командующий войсками Ереванского ханства¹⁶. Развитию военных действий про-

¹¹ Образовано III отделение Собственной е.и.в. канцелярии. - <http://www.prilib.ru/history/pages/item.aspx?itemid=891>

¹² Матенадаран, ф. Архив Лазаревых, п. 104, ед. хр. 40, л. 2.

¹³ РГВИА, ф. 1, оп. 1 ч. 3, д. 3964, л. 47.

¹⁴ Внешняя политика России XIX и начала XX века (ВПП), М., 1985, т. VI, N 214, с. 601- 603.

¹⁵ Петербургское общество..., с. 548.

¹⁶ РАС, N 11, с. 29, 30.

тив Персии мешала военная угроза Турции, которая сосредотачивало формирования в Анатолии, и отсутствие провиантских коммуникаций¹⁷.

Переход войны из оборонительной фазы в наступательную обусловило необходимость уточнения полномочий Христофора Лазарева. “Предписанием” от 27 октября 1826 г. Бенкендорф регламентировал круг обязанностей: составление докладов “по разным видам с восточными народами”; представление информации о Персии (Закавказье, Северный Кавказа и Астрахань) и Османской Турции (Одесса-Кишинев-Яссы - Бухарест-Константинополь); изложение информации, после перевода, в виде выписок либо записок, а при необходимости сопровождение донесениями; наличие для делопроизводства двух чиновников, знающих восточные языки, использование специальной печати и шнуровой книги для переписки; ведение переписки по “внешним сношениям”. Более “определительные правила” предусматривалось составить в дальнейшем¹⁸.

Московскому и С.-Петербургскому почтамтам предписано почту Лазарева осуществлять за казенный счет. Непосредственная обработка поступаемых сведений Лазаревым была поручена чиновнику 14 класса Д. Одобашеву, сыну бывшего городского головы г. Новый Нахичеван, занимавшегося переводами с армянского и турецкого языков, и секретарю Лазаревского института восточных языков А. Шардину. Драгоманом и представителем Лазарева в Молдавии, Валахии и Бессарабии стал его шурин Манук-бей¹⁹.

4 ноября 1826 г. в Москве Христофор Лазарев направил Бенкендорфу информацию из закавказских владений и Тифлиса за 4 и 6 октября. Елизаветпольская битва представлялась решающим актом для провала персидского вторжения: “Победа генерала Паскевича столь сильно расстроила и поразила неприятеля, что он через три дня вдруг с большим уроном и неимоверной поспешностью переправился через реку Аракс в пределы Персии”. Под её воздействием персы прекратили осаду Бакинской крепости и ретировались восвояси.

Причина дезорганизационного поведения противника усматривалась в отсутствии “должного повиновения и никакой дисциплины”. Свою роль сыграли распри среди ханского окружения, которые, спасая свою шкуры, пустились в бегство и вызвали панику в армии Аббас- Мирзы. По совету последнего к Ереванскому сардару прибыл шах Фетх- Али, чтобы убедить его продолжать военные действия. Воинственно было настроено окружение шаха, советовавшее собрать земское ополчение для увеличения численности армии. Передовой отряд ген. Д. Давыдова у Еревана имел успешное столкновение с войском Гасан хана, после чего отошел к Гюмри

Были рассмотрены перспективы войны - краткосрочная и долгосрочная. Первая представлялась в немедленном занятии крепости Еревана. Лазарев отмечал: “Полагают, что если в начале зимы в удобное время и с достаточным числом войска сделают россияне нападение на Эривань, то оный с небольшим трудом могут взять, ибо персияне в зимнее время, как известно, не привыкли действовать”. В пользу этого подхода указывалось наличие панического настроения среди мусуль-

¹⁷ Там же, N 43. с. 75; N 53, с. 85.

¹⁸ РАС, N 55, с. 87.

¹⁹ ГИА, ф. 109, I экз., 1826, д. 51, л.

манских зажиточных кругов Еревана, которые стали переправлять имущество в Тавриз. Аналогично поступили бывшие ханы Шеки и Елизаветполя. Причем беглый грузинский царевич Александр укрылся в Ереване.

Долгосрочная кампания представлялась нежелательной: “Но когда продлится война до весны, то повстречаются большие затруднения и из внутренности Персии соберется значительное число войск и земских ополчений”²⁰. Общие потери персов определялись в 12-15 тыс. убитых, а россиян - погибших и раненых в тысячу. Часть пленных персов была отправлена в Тифлис, вторая - на Кавказскую линию, а третья - осталась в Елизаветполе. Другим аргументом представлялось притеснение персидским руководством братства Эчмиадзинского монастыря, из-за симпатий к христианской России, что привело к убийству и повешению ряда монахов. Сильно пострадавшим представлялось армянское население закавказских владений. “Но все вообще армяне, также и грузины, - отмечал Лазарев, - во время сражений отличались примерной неустрашимостью, противоборствуя против неприятеля с мужеством”²¹. Земское ополчение из армян и грузин было распущено, но знать осталась в русской армии для участия в боевых действиях. Командование Кавказского корпуса ожидало вспомогательных войск для продолжения наступления”²².

В донесении от 6 ноября 1826 г. из Москвы о репрессиях Ереванского сардара против армянского населения, Христофор Лазарев поднял значение роли иерарха Нерсеса Аштаракети в противодействии персидскому нашествию: “По многочисленности армянского народа обитающего по всей Грузии и по тем способам, каковые они имеют, местное правительство без содействия их не может успевать. Епархиальный архиепископ Нерсес обитающих в Грузии армян, по общему доверью паствы своей и по большим сношениям своим в Грузии и Персии, много содействовал для выгоды России, как в мирное время, так и ныне, доказал на опыте большие заслуги”²³.

Донесения Лазарева получили высокую оценку у Бенкендорфа, которая была изложена в письме за 17 ноября 1826 г.: “На письмо ваше от 4 ноября долгом поставлю вас Милостивый государь уведомить, что прежние известия касательно Персии и Турции, а равно приложенную при сем записку, заключающую в себе сведения из Грузии (Закавказья), я имел честь получить, за которые очень вам благодарен и прошу и впредь поставлять мне присылкою”²⁴.

30 ноября 1826 г. Дибич сообщил Ермолову два варианта “предположений” царя о войне с Персией. Первое предусматривало занятие Араратских ханств – Еревана и Нахичевана, наступление на Тавриз. Второе намечало перезимование войск в русских границах, блокаду Ереванской крепости и прямой поход на Тавриз. В обоих вариантах речь шла об освобождении исторического центра Восточной Армении. Главнокомандующий в Грузии отдал предпочтение второму вариан-

²⁰ РАС, N 14, с. 35.

²¹ Там же, с. 36.

²² Там же, с. 35, 36.

²³ Там же, N 15, с. 38.

²⁴ Матенадаран, п. 104, ед. хр. 27, л. 1, 1 об.

ту действий²⁵. Важное значение приобретало наличие достоверных сведений о состоянии дел в регионе.

Информация Х. Лазарева (сводки известий, выписки из полученных писем, обзоры положения дел и записки) концентрировалась у Бенкендорфа, представлявший при необходимости её царю, и в военное ведомство. Затрагивались вопросы относящиеся к Персии и Восточной Армении. В сводке известий от 21 декабря 1826 г. Лазаревым отмечалось, что в случае наступления русских войск в январе либо феврале они могут “непременно” занять Тавриз, заключить “выгодный мир” для России и обязать шаха Персии уплатить контрибуцию. Следствием представлялось формирование границы закавказских владений по естественной речной границе и получение вознаграждения за военные издержки: “До реки Аракс утвердится твердая граница, притом персияне заплатят по требованию знатную сумму контрибуции, ибо шах и народ его ныне в совершенном унынии и отчаянии, без достаточного войска, без средств и по неудобству времени не способны и не могут вести оборонительные войны”²⁶.

Представлено желание верховного католикаса Е. Дзорагехци и главы Грузинской армянской епархии Н. Аштаракеци осуществить переселение армян из Персии в закавказские провинции России, “кои составляли в прежние времена большую и малую части Армянского царства”²⁷. Это позволило бы обеспечить безопасность Грузии, усилить развитие торговли и промышленности закавказской окраины, расширить численность земского ополчения. Основой переселения, “без всякого пособия от казны”, должно было явиться обязательство самодержавия гарантировать защиту прав и собственности армянского населения.

Ставилось в известность о наличие недовольства закавказского населения местной администрацией за последние восемь лет: “Нет определенных правил ни в обязанностях, ни в повинностях, каждый высший частный начальник располагает как желает, произвольно. На приносимые жалобы вместо защиты последствием бывают гонения”²⁸. Улучшения управления Грузией позволило бы прекратить местные мятежи и содействовало бы значительному переселению из пограничных областей Персии.

Правительство России учло, в дальнейшем, предложение о переселении армянского населения из Персии, но от активных боевых операций в зимний период воздержалось. Лишь в декабре отряд кн. В. Мадатова в 6 тыс. конницы с армянским ополчением успешно осуществил разведывательный поход через реку Аракс в Карадагскую провинцию, вызвав панику в Тавризе, и вернулся в исходную дислокацию²⁹. В середине января 1827 г. окончательно возобладал план Ермолова об очередности целей военной кампании на территории противника: “Головной отряд, овладев Тавризом должен будет идти к Эривани, который занят будет означенной крепостью и быть может, не будет иметь достаточных сил овладеть

²⁵ Матенадаран, ф. Архив Лазаревых, п. 106, д. 51. Оборот титульного листа; Русско-армянское сотрудничество..., N 26, с. 53.

²⁶ РАС, N 27, с. 53.

²⁷ ГИА, ф. 109, I эксп. 1826, д. 51, л. 52.

²⁸ РАС, N 27, с. 54.

²⁹ Там же, N31, с. 59; N 77, с. 110; N 80, с. 112.

оною”³⁰. 23 января 1827 г. Николай I утвердил мнение главнокомандующего в Грузии о целесообразности зимования военных частей в закавказских провинциях, с обязательством начать наступательные действия против Персии в апреле.

19 февраля 1827 г. Христофор Лазарев обратил внимание на активность действий представителей Туманного Альбиона в персидском стане, которые противодействовали видам России: “В Персии множество ныне англичан, кои советники и распоряжениями весьма тайно действующими, дабы доставить персиянам возможность сражаться и дабы поставить преграду русским в успехе покорения”³¹. После этого было доставлено известие о прибытии принца Аббас -Мирзы в Тегеран для совещания с Фетх-Али шахом для противодействия весеннему наступлению русских войск³².

28 февраля 1827 г. Христофор Лазарев поставил в известность руководство страны о наличии напряженности отношений между главнокомандующим Кавказского отдельного корпуса Ермоловым и командующим Паскевичем³³. Последний в момент прибытия в регион имел высочайший рескрипт о смене Ермолова, который до этого представил рапорт царю, что не отвечает за сохранение закавказских провинций, но не использовал³⁴. Христофор Лазарев проецировал обострение конфликта: “Возникло опасное положение и вражда. От сего вред и худые последствия могут встретиться”³⁵.

30 марта 1827 г. Паскевич сменил Ермолова во главе Кавказского отдельного корпуса³⁶. Началась подготовка к походу на Ереван. Авангардный отряд возглавил ген.- адъютант К. Х. Бенкендорф, которого сопровождал архиепископ Аштаракец, что позволило 13 апреля занять Эчмиадзин³⁷.

Осада крепости Еревана поставила в повестку дня перспективу включения ядра Восточной Армении - Араратской страны и её управление в составе Российской империи. Свои представления Христофор Лазарев руководству России изложил в записке “Об армянах” от 1 июня 1827 г. Подчинение Араратских ханств рассматривалось возможностью воссоздания армянской государственности в рамках Российской державы: “Приобретение областей Эриванской и Нахичеванской, в которые включается округ Араратский, и Эчмиадзинский монастырь, палладиум народный, дают право России восстановить древнее царство Армянское”. Принятие соответствующего манифеста, провозглашение Николая I царем Армении, считалось могучим средством привлечения армянского населения в российские пределы из Османской империи и Индии. Компактное армянское население позволило бы России иметь “вернейший пограничный оплот” в случае войны с Турцией, создать милицейские формирования в качестве вспомогательных частей для сокра-

³⁰ РГАДА, ф. 1406, оп. 1, д. 344, л. 5.

³¹ РГВИА, ф. ВУА, д. 4338, л. 15.

³² Там же, л. 18.

³³ Там же, л.3 об.

³⁴ РГИА, ф. 1018, оп. 2, д. 85, л. 68 об, 69; ВПР, т. 6, N210, с. 589.

³⁵ РГВИА, ф. ВУА, д. 4338, л.3 об.

³⁶ Письма императора Николая Павловича к А. П. Ермолову. Сообщ. Д. Д. Давыдова. - Чтения в обществе истории и древностей российских. 1862, кн. 3, N 14, с. 231, 232; РГИА, ф. 1018, оп.1, д. 2. л.90.

³⁷ РАС, N 90, с. 120; N 95, с. 125.

щенного числа русских войск в крае, использовать “людей с достатком” для оживления экономики окраины.

Заголовок документа связан с предшествующей деятельностью фамилии Лазаревых. 21 августа 1826 г. архиерей Иоаннес, духовный глава армян обитающих в России, и руководитель Бессарабской армянской епархии епископ Григорий во время аудиенции у Николая I по случаю коронации подали две записки “Об армянах, поселившихся в России” и “О водворившихся в России армянах” с прошениями о сохранении льгот армянских общин в Российской державе. Подготовившие записки Христофор и Иван Лазаревы приложили максимум усилий для сохранения привилегий армянских обществ. В ходе рассмотрения этого вопроса комитетом министров России был получен положительный отзыв наместника Новороссийско-го края и Бессарабии М. С. Воронцова и отрицательное заключение Ермолова, которому, помимо Закавказья, подчинялись также Астраханская губерния и Кавказская область³⁸. В апреле 1827 г. обе записки поступили на рассмотрение нового руководства Кавказа И. Ф. Паскевича.³⁹ Таким образом, существует преемственность заглавий между запиской “Об армянах, поселившихся в России” 1826 г. и запиской “Об армянах” 1827 г.

Представление записки “Об армянах” диктовалось формированием содержания предстоящего мирного договора с Персией. 24 мая 1827 г. Паскевич во всеподданнейшем рапорте сообщил царю о получении от уполномоченного для ведения переговоров с Персией д. ст. с. А. Обрезкова проектов мирного и торгового договоров с дополнительными постановлениями. Намечалось взыскать с Персии 35 млн. руб. асс. контрибуции и закрепить за Россией Араратские ханства Еревана и Нахичевана.

7 июня глава внешнеполитического ведомства Нессельроде возвратил начальнику главного военного штаба Дибича депешу, полученную от Паскевича при рапорте царю с “соображениями” по статьям предполагаемого мирного договора. Главнокомандующий отдельного Кавказского корпуса запрашивал “разъяснения” по трем пунктам: 1) возможность уменьшения суммы контрибуции либо полного отказа от нее; 2) допустимость создания Талышинского ханства под протекторатом России и Персии для заключения “выгодного мира”; 3) целесообразность восстановления ханского правления в ряде закавказских провинций, уничтоженного Ермоловым, и сохранение его в новоприсоединяемых территориях: “Пологается даже выгоднейшим Ереванъ и Нахичеванъ отдать в награду ханам, которые заслугами своими будут сего достойными: ибо нравы жителей и местные обстоятельства содействуют неудобным наше правление образованное, и мы бы не подверглись вторжению персиян, если бы Карабахская, Ширванская и Шекинская области управляемы были ханами”⁴⁰.

Затронутыми вопросами стали заниматься министерство иностранных дел и начальник главного штаба. Правительство России приняло решение о присоединении Араратских ханств, но вопрос о форме управления оставался неустановлен-

³⁸ РГИА, ф. 1409, оп. 2, д. 4690, л. 3 - 15 об.

³⁹ ГИА, ф. 728, оп. 1, д. 1457, л. 69.

⁴⁰ РГВИА, ф. 1, оп. 1 ч. 2, д. 3643, л. 12 об, 13, 14.

ным. Этим моментом диктовалась необходимость обращения Х. Лазарева к монарху о возможности образования армянского царства в составе Российской державы. Предложение Лазарева не получило положительного решения. Тем более, что в конце июня русские войска сняли осаду Еревана из-за жаркой погоды и отсутствия тяжелой осадной артиллерии. Записка “Об армянах” поступила в архив.

Между тем, персы 17 августа 1827 г. предприняли попытку захватить Эчмиадзин, чтобы овладеть идущим из Тифлиса караваном с тяжелыми орудиями и выйти на просторы Грузии. Основные силы Кавказского отдельного корпуса главнокомандующего Паскевича находились у Нахичевана, а помощь Эчмиадзину и срыву плана персов мог помешать лишь осадный отряд ген. А. И. Красовского, располагавшийся в лагере Джангили. Руководитель обороны Эчмиадзина управляющий армянской церковью архиепископ Нерсес Аштаракецци запросил помощь у отряда Красовского, которая была оказана. Завязалось самое кровопролитное сражение Персидской кампании. В итоге персидский план действий был провален.

Касаясь Ошаканского сражения Христофор Лазарев 13 сентября 1827 г. сделал общее и частное описание (хотя отправка сведений датировалась 19 и 26 августом), представлявших общий характер сражения, роль иерарха Аштаракецци, возглавившему местную оборону и местных жителей. Отмечалось, что когда принц Аббас-Мирза “направил свой путь к Эчмиадзинскому монастырю, сделав столь сильное нападение, что онный находился уже в крайней опасности. Персияне были весьма в близком расстоянии и готовы были уже овладеть оным, но архиепископ Нерсес лично подавал первый разительные пример к защите, сам заряжал и стрелял из пушек; все духовенство и все жители в отчаянии соединились с ним и с помощью слабого и весьма малого гарнизона сопротивлялся”⁴¹ до подхода отряда ген. Красовского, прошедшего в жару 40 верст.

Длительность сражения определялась в 10 часов. Воздавалось должное всем участникам сражения: “С обеих сторон борьба была равная, отчаянная и неустрашимость неимоверная, россияне не поразились, а персияне с мужеством отступили”⁴². Выделана роль командира русского отряда: “Генерал Красовский действовал как герой, подавая собою пример отважности и распорядительности, жаль токмо, что мало войск и средств”⁴³. Последующий разбор Ошаканского сражения царем Николаем I завершился награждением ген.. Красовского боевым орденом св. Владимира второй степени.

Осенью 1827 г. персидско-русская война вступила в решающую фазу. 1 октября г. Ереван был освобожден от персидского владычества. Освобождение исторического центра Восточной Армении - Араратской долины получило патриотический отклик у Х. Лазарева. 20 октября он выступил за заключение выгодного геополитического мира: “Сколько для Персии может быть ныне полезен мир, столько для России онный после стольких пожертвований будет безвыгоден, ибо лучше нанести сильный удар, - взяв Еривань, утвердив свою границу по Аракс. Тогда разрешатся все обстоятельства” Обоснована необходимость организации переселенчества армянского населения Персии в российские пределы.

⁴¹ Там же, л. 61 об, 62.

⁴² Там же, л. 62.

⁴³ Там же, л. 64 об.

Предложена технология: “Впоследствии при кротком и полезном управлении, через верховного патриарха всей Армении, через епархиального архиепископа и через первых уполномоченных из нации - можно и удобно по высочайшему воззванию, по примеру прежних времен, водворить и умножить христиан, кои служить будут ограждением от нападений”. Представлено значение безопасности переселения для закавказских владений России: “Чем больше в Грузии и областях её возрастут племена и сословия из христиан, особенно из преданного армянского народа и чем число оных превосходит будет против мусульман - тем полезнее и благодетельнее будет для России. Многие опыты и самые договоры сие уже являли”⁴⁴.

В обзоре агентурных сведений от 1 ноября 1827 г. был затронут абрис предстоящих действий. Прежде всего, отмечалось предоставление управления над Ереванской крепостью и Араратскими ханствами власти ко-мандира Крымской пехотной дивизии Афанасия Красовского. После занятия Еревана русское войско с генералами Паскевичем и Бенкендорфом, выступило в направлении городов Хоя и Тавриза, куда их прибытие ожидалось 22 или 26 октября. Обосновывалась необходимость активных действий: “Скорейший поход сей на Тавриз, овладение оным необходимо, ибо после взятия крепостей и городов, нужно нанести решительный, последний удар по Персии. От сего предстоят важные выгоды - именно мир самый полезный и самый скорый может быть заключен с приобретением твердой границы и с вознаграждением других требований”.

С учетом опыта привлечения иерарха Аштаракеци к секретным переговорам, в частности при заключении Гюлистанского договора 1813 г., с правителем Тавриза 1824 г. и принцем Аббас-Мирзой, намечалось использование его возможностей: “Сообразно прежним примерам необходимо при трактациях о мире употреблять предварительно в совещаниях архиепископа Нерсеса, по испытанным знаниям и преданности, он может быть во многих отношениях весьма полезен, преимущественно по привлечению армянского народа, для большого поселения на границах, коих пространство велико”⁴⁵. Представлено время осуществления национальных надежд. Лазаревым отмечено: “Древнее царство Армения, после взятия Эчмиадзина и двух важных ханств, принадлежит ныне уже императору Российскому. Предположения Петра Великого, как первого благотворителя Армянского племени, ныне свершаются”⁴⁶.

Представления Лазарева учитывались при общей оценке ситуации, так и относительно отдельных событий. 9 ноября Христофор Лазарев представил записку “О заслугах, оказанных Верховным патриархом всея Армении и архиепископом Нерсесом”, которая являла собой представление к их награждению: “Народ Армянский в России, Бессарабии и Грузии обитающий, большей частью переселившийся из заграницы привлечением своих Архипастырей, посему и по духу религии приобвык чтить в них как бы вождей и представителей своих”⁴⁷.

⁴⁴ РГВИА, ф. ВУА, д. 4338, л. 67 об, 68.

⁴⁵ Там же, л. 72, 72 об.

⁴⁶ Там же, л. 72 об.

⁴⁷ Там же, ф. 1, оп. 1, ч. 2а, д. 3698, л. 1.

В ходе персидского вторжения в Закавказье католикос Ефрем и архиепископ Аштаракеци сумели паству “расположить духом к видам России”, путем воззваний и реальным содействием организовали повсеместно армянское сопротивление. Отмечалась активная роль Нерсеса Аштаракеци при защите Эчмиадзинского монастыря, занятие крепостей Сардарабат и Ереван. Ефрем Дзорагехци, “яко глава народа и по уважению многолетней усердной службы” представлялся к военному ордену св. Владимира 1-й степени либо высшему российскому ордену апостола Андрея Первозванного, а Нерсес Аштаракеци - ордену св. А. Невского или за “личные подвиги” к ордену св. Георгия 2-й степени.

В приписке к ходатайству Дибич указал, что для награждения Нерсеса Аштаракеци было составлено отдельное дело, по которому в январе 1828 г. состоялось награждение орденом св. А. Невского. Спустя полгода награды орденом удостоился католикос Ефрем Дзорагехци⁴⁸.

Делам Христофора активно содействовал Иван Лазарев, который в сентябре 1826 г. стал чиновником особых поручений при московском генерал-губернаторе А. А. Закревском. Через него осуществлялась доставка части информационных сводок, записок и выписок при нахождении брата в разъездах. Так, во второй половине апреля 1827 г. он представил в военное министерство записку о политическом положении дел в Закавказье, подготовке русских войск к занятию Еревана и о настроениях местного населения. Оригинал записки содержит помету Ивана Лазарева: “От 22 апреля таковая записка отправлена к г. Христофору Екимовичу и доставлена князю Д. В. Голицыну, через Ивана Екимовича, а 23 генералу Бенкендорфу послана с почтой”⁴⁹.

22 октября 1827 г. Иван Лазарев письменно выразил желание быть в курсе всех текущих сведений: “В училище все благополучно. Что по записке твоего генерала ничего не делается. Извести меня о занятии Эривана, прежде чем другие получают, дайте мне знать”⁵⁰. Внимание проявлялось к возданию должного Аштаракеци. 3 ноября об этом говорилось: “Желаю очень, чтоб награда преосвященному Нерсесу вышла по записке”⁵¹. В письме от 29 ноября указывалось получении писем от него, контакте с товарищем министра юстиции, а главное касалось ходатайства относительно награждения Аштаракеци: “Что-то скажет генерал твой на последнее моё представление, я как будто предчувствовал, что он потребует вторично записку”⁵².

21 ноября состоялось подписание конвенции о временном перемирии между русской армией и персидскими войсками. 23 ноября Николай I направил “Наставление” Паскевичу о ведении конкретных переговоров о мире, предусматривающих уплату контрибуции Персией в размере 40 млн. руб. асс. и закрепление за Россией Араратских ханств - Еревана и Нахичевана⁵³.

Одновременно Лазарев поднял вопрос об организации управления разнородных закавказских провинций, которые подчинялись власти главноуправляю-

⁴⁸ Там же, л. 1 - 2.

⁴⁹ Матенадаран, ф. Архив Лазаревых, п. 104, ед. хр. 30, л. 1;

⁵⁰ РГАДА, ф. 1252, оп. 1я, д. 736, л. 3 об.

⁵¹ Там же, л. 4.

⁵² Там же, л. 11, 11об.

⁵³ ПВА, т. 2, N 233, с. 419; РАС., N 144, с. 173 - 175.

щего Грузии, сохраняющих свои особенности. В этом виде был подготовлен управленческий обзор. Тифлисский военный губернатор Н. М. Сипягин представлялся дельным администратором, который “заботливым управлением объемля состав дел, стремится к цели благоустройства”⁵⁴. Указано стремление ген. Красовского создать эффективную систему управления в Ереванской области, что могло произойти не “в одно мгновение”, а требовало длительного времени.

Представлялось положение о необходимости дифференциации управления региона, который был отделен от метрополии непокоренным Северным Кавказом, имел разный этнический состав, где комендантское военное: управление сочеталось с гражданским, функционировало грузинское и мусульманское законодательство: “По разнородным отраслям заведования, по многочисленности частей составляющих целое - для Грузии и для её областей недостаточно одного Главного начальника, необходимы сотрудники, содействующие в общепользовательных видах. Отдаленная страна обитаемая различными племенами, по естественному своему положению требует и политического и нравственного образования, на правилах и узаконениях основанных”⁵⁵.

Желание преобразований и улучшений трактовалось как общественный глас: “Общее желание, общие обеты всех племен, состоят в том, чтобы каждый и все были законно ограждены, особенно от различных притеснений частных начальников”. Ситуация трактовалась благоприятной для импульса преобразований: “После обуздания внешних врагов следует внутреннее благоустройство земли, обильной по естественным произведениям”⁵⁶.

25 января 1828 г. Красовский отправил Дибичу “Предположения об управлении Эриванской и Нахичеванской провинциями”: ликвидация обособленности Нахичевана, где гражданской частью заведовал комендант крепости Аббас-Абад, создание Областного Совета, главного областного суда, казначейства, управу благочиния, полицию и областные правления; организация области из Ереванской и Нахичеванской провинции, где первая составлялась из девяти магалов, включая Памбак, Шорагель и Макинский магалы, а вторая - сохраняла старое деление. Сущность проекта заключалась в отказе от азиатских форм правления и использование российской, причем в качестве товарища военного губернатора намечался архиепископ Нерсес Аштаракец⁵⁷.

Предстоящее заключение мира с Персией позволило Х. Лазареву снова поднять вопрос о создании армянской государственности. В очередной сводке новостей от 17 декабря 1827 г. им сообщено Бенкендорфу: “В прежних делах бывшего в царствовании императрицы Екатерины II епархиального в России обитающих армян архиепископа Иосифа князя Аргутинского-Долгорукова, который потом был верховным патриархом, находятся некоторые сведения о предположениях князя Потемкина основать царство Армения. Главная цель состояла в том, чтобы сколько для блага народа, сколько же ограждения империи на границах её из разных частей, как то, из Шекинской, Шемахинской, Карабахской, Нахичеванской и

⁵⁴ РГАДА, ф. 1252, оп. 1, д. 531, л. 18.

⁵⁵ Там же, л. 10, 10 об.

⁵⁶ Там же, л. 10 об.

⁵⁷ **Тунян В.Г.** Восточная Армения..., с. 13, 14.

Ереванской областей - общее с первопрестольным Эчмиадзинским монастырем - яко средоточием, образовать на особых правах особый удел и одно целое составляющее страну Северная Армения. Все прежние предположения - могут ныне при благоприятной эпохе совершиться”⁵⁸.

Сведения о предшествующих видах правительства России конца XVIII в. Лазарев получил от своего родственника кн. К. Б. Аргутинского-Долгорукова, проживавшего в Григориополе⁵⁹. Информацию предлагалось использовать в соответствии с политическими веяниями: “Сообразите мои записи с обстоятельствами. Вы все должны больше знать, какое направление даст правительство Северной Армении. Ереванские стены лучше были бы в руках армян русских”⁶⁰.

Информация о видах правительства России получила обобщение. 25 декабря 1827 г. Х. Лазарев подал записку “Некоторые предположения о Грузии и сопредельных ей областей”. В ней проводилось положение о необходимости учета исторических параллелей во внешней политике Российской державы как следствие воен-ного триумфа в войне с Персией: “Разрыв с Персией, война с оною, после всех поражений и побед, одержанных победоносным оружием преславно царствующего монарха Николая I, доставили все средства к заключению выгоднейшего мира. Настоящая компания сближает к тем основным вида, кои со времен Петра Великого имелись в предположении”. Утверждалось о возможности утверждения геополитической границы: “Давно желаемое ныне свершается. Твердые границы на Араксе представляю естественный оплот против вероломного Властелина тамошних стран, преградою река и крепости. Сухопутная Азиатская торговля, получив новую жизнь и распространение, обещает источники богатств”⁶¹.

Для расширения политического влияния Российской державы и обеспечения безопасности закавказских владений предлагались следующие меры: 1) принятие Николаем I титула царя Армении; 2) создание христианских поселений, в особенности из армянского населения, вдоль границы с Персией, Турцией и горами Кавказа; 3) возвращение угнанного вглубь Персии христианского населения с правом разрешения местным армянам беспрепятственно поселиться в Восточной Армении; 4) создание добровольной пограничной стражи из армян и грузин с освобождением от рекрутства; 5) образование гвардейской Армянской дружины (эскадрона) при царе в Петербурге.

Лейтмотивом записки, - “Главная мысль о возрождении царства Армянского”, - являлось воссоздание армянской государственности. Предложение о причислении к официальному титулу императора Николая I наименования царя Армении мотивировалось нахождением под его властью значительной части исторических восточноармянских земель: “Многие области, как то древняя Нахичеванская, Ереванская, Карабахская, Шакинская и Шемахинская с первопрестольным монастырем Эчмиадзинским, составляют общее средоточие и главные основания древнего бывшего царства Армении”. Эта мера рассматривалась первым шагом по

⁵⁸ РГВИА, ф. ВУА, д. 4377, л. 21

⁵⁹ Матенадаран, ф. Архив Мсряннов, п. 197, ед. хр. 362, л. 32 об, 33; В.А. Парсамян. А. С. Грибоедов..., с. 146, 147.

⁶⁰ Там же, л. 4.

⁶¹ РГВИА, ф. ВУА, д. 4338, л. 74.

созданию армянской государственности в составе России, - “принятие титула царя Армянского подобно возрождению древнего царства Армянского”⁶², - консолидации армянского населения из разных стран под скипетром Николая I.

Созданию христианских поселений на границе и концентрации здесь населения должно было содействовать армянское высшее духовенство: “Верховный патриарх, по существующему издревле обычаю, Грамотами своими учинит общее воззвание к Константинопольскому армянскому патриарху, к епархиальным архиепископам в Смирне, в Иерусалиме, в Трапезонде и в других областях, также и в Индии находящимся”⁶³. Проводником установок высшей власти и католикаса Ефрема Дзорагехци рассматривался архиепископ Нерсес Аштаракеци.

Важной мерой создания системы безопасности на границе указывалось создание добровольной пограничной стражи с “особенными правами” в сроке службе и получение льгот после отставки: “Когда возродится добровольное соревнование в нации и во всех сочленах её быть верными защитниками своей отчизны и воскресить не существовавшее уже столько веков царство Армянское, тогда произойдет сугубая выгода: добровольное ополчение умножит число воинов, имея в предмете почести и отличия; правительство впоследствии удостоверится и приобретет в коренных жителях усердных и верных поборников, ограждающих границы, сколько для выгод России, столько же и для собственной пользы”⁶⁴.

Намечалось использовать возможности фамильного учебного заведения для подготовки квалифицированных служащих для национальной гвардии и войсковых формирований из закавказских армян: “На будущее же время стараться присылать родителями детей своих в Россию и образовать сих для Армянской гвардии и внутренней пограничной стражи и воинства в Армянской гимназии Высших наук и Восточных языков, основанной фамилией Лазаревых в Москве. Здесь, как в центральном Главном учебном заведении, будут молодые из дворян и прочих состояний армян на основании Устава приготовляемы и выпускаемы с преимуществами”.

Для образовательного процесса армянской молодежи предлагалось использовать еще возможности армянского училища Нерсесян в Тифлисе: “Сверх того Грузинские, Эриванские, Нахичеванские и Карабахские армяне могут также получать образование в Тифлисском армянском училище, учрежденным архиепископом Нерсесом”.

Интерес представляет тот факт, что Лазарев был знаком с конституцией царства Польского, находящегося в составе Российской империи, знал устройство великого княжества Финляндского и прибалтийских губерний, что сопрягалось с возрождением армянской государственности. С переселением же персидских армян связывал надежду на создание “пояса безопасности” по границе с азиатскими державами, нанесение политэкономического ущерба Персии и Турции, создание вспомогательных частей в помощь русским войскам. Поэтому предлагал создать в С.-Петербурге специальный комитет из представителей армянского народа для разработки статуса пограничной военной стражи.

⁶² Там же, л. 74, 74 об.

⁶³ Там же, л. 74 об.

⁶⁴ Там же, л. 75 об.

Записка “Некоторые предположения” официально предназначалась Дибичу. О внимательном его ознакомлении с документом свидетельствуют многочисленные подчеркивания заинтересованных мест карандашом, в частности положения о принятии титула царя Армении. Однако наибольший интерес представляют три пометы в начале записки: Д 9| 1827, “для общего доклада” и С.Ж. N 871⁶⁵.

Первая помета имеет связь с деятельностью правительственного комитета в конце октября – начале декабря о включение Ереванского ханства в состав России. Разработанный журнал “О правилах, которые должны служить основанием при управлении Эриванской провинции и пр.” Дибич подписал 9 декабря 1827 г. “Правила” предусматривали создание в Ереване временного управления в Ереванской и Нахичеванской провинциях до принятия постоянного положения на основах приближенных к русскому правлению⁶⁶. Они были посланы 15 декабря на утверждение Паскевича, обязанного дать ответ после их соображения с местными условиями.

Вторая помета свидетельствует о подготовке Дибича к изложению содержания записки при общем докладе царю в качестве начальника главного штаба. Однако отсутствие конкретных мер по поднятым вопросам свидетельствует о её принятии лишь к сведению. Третья помета означала фиксирование записки в секретном журнале военного штаба под номером 871. Здесь важным являлось то, что предоставляемая информация Лазарева шла не в общем потоке делопроизводства, а предусматривала секретность в приеме и представлении.

10 февраля 1828 г. состоялось заключение “вечного мира” между Россией и Персией, оформившего переход Араратских ханств - Еревана и Нахичевана к России и разрешавшего переселение христианского населения Персии в Закавказье⁶⁷. В конце февраля - начале марта 1828 г. Х. Лазарев подал руководству России новую записку “Дополнения к предположениям о Грузии”. В ней обосновывалась необходимость принятия Николаем I титула царя Армении после заключения Туркманчайского трактата для усиления переселения армян разных стран в российские пределы. Перед монархом встала задача определить значимость предложений Лазарева в унисон с видами правящих кругов Российской державы о будущем Южной окраины в условиях приближающейся войны с Османской Турцией.

16 марта 1828 г. последовал высочайший рескрипт на имя Петербургского военного ген.- губернатора П. В. Голенищеву-Кутузову о подписании трактата “вечного мира” с Персией, что позволило установить “твердую и безопасную границу, и сверх полного вознаграждения убытков, присоединить к своему владению ханства Эриванское и Нахичеванское, кои впредь именовать будут областью Армянскою”⁶⁸. Информация монарха представляла собой геополитическую оценку мира, новой ситуации на закавказской границе, где Армянская область была призвана стать оплотом России.

Создание Армянской области являлось частью общего видения управления Закавказья царем, которое он изложил 18 марта 1828 г. Паскевичу. Предполагалось

⁶⁵ Там же, л. 78.

⁶⁶ **Тунян В.Г.** Материалы правительственного комитета о включении Ереванского ханства в состав Российской империи. - Вестник общественных наук. 1985, N 8, с. 80 - 90.

⁶⁷ АКАК, т. 7, , N 435, с. 483 - 484; ПВА, т. 2, N 245, с. 446 - 451.

⁶⁸ НАА, ф. 400, оп. 1, д. 13, л. 12.

создание централизованного управления с разделением местной власти: общий контроль Кавказа вверялся Паскевичу, а подчиненное, командующим военными линиями - ген. Эммануэль намечен во главе Кавказской, ген. Сипягин - Грузией и закавказскими владениями, ген. Красовский - Персидской. Главы этих территорий рассматривались помощниками Паскевича, ответственных за вверенные части управления, что должно было обеспечить процветание края в составе России. Гражданское управление намечалось устроить после решения "турецких обстоятельств"⁶⁹.

21 марта 1828 г. царь Николай I подписал манифест об окончании войны с Персией и заключении Туркманчайского договора. Сообщалось о присоединении "части древней Армении" - Аратских ханств Еревана и Нахичевана и "утверждении знамени на высотах Арарата". Требования России представлялись по мирному договору умеренными: "В основание его Мы поставили оградить Империю естественными и безопасными пределами, и вознаградить в полной мере все убытки, войною нанесенные, отделить навсегда все причины к его совершению"⁷⁰. В тот же день был подписан именной указ Правительствующему Сенату о наименовании присоединенных Аратских ханств Армянской областью⁷¹.

Создание Армянской области являлось осторожной формой решения Армянского вопроса в России, где имелись национальные образования - царство Польское, великое княжество Финляндское, Верховное Грузинское правительство, Имеретинская и Бессарабская области. Монархом была выбрана областная форма национального образования. На это указывают два момента. Христофор Лазарев подал руководству России записку "Дополнения к предположениям о Грузии" о возрождении Армении в конце февраля-начале марта. 29 февраля состоялось высочайшее утверждение "Учреждения об управления Бессарабской области", с изложением органов управления - Областной совет, Областное правление, Казенная палата и проч⁷². Кроме того, Христофор Лазарев в донесениях и обзорах затрагивал положение армян Бессарабии, а также роль Манук бея в русско-турецкой войне.

Царь Николай I санкционировал создание Армянской области 21 марта 1828 г., а 25 марта был провозглашен её государем, что, в деликатной форме, учитывало пожелания армянских патриотов⁷³. Титул "государь", производные от Господа, то есть от Бога, использовался лишь императором России. Официальный титул монарха России состоял из триады: государь, царь и император, отражая путь, пройденный Московским государством до Российской империи⁷⁴. Подход венценосца учитывал военно-политические аспекты надвигающейся русско-турецкой войны, необходимость обеспечения симпатий армянского народа, укрепления безопасности новой границы и потребности экономического закрепления Закавказья.

⁶⁹ **Тунян В.Г.** Административно-экономическая политика самодержавия России в Закавказье I пол. XIX в. Ереван, 2003, с. 42, 43.

⁷⁰ Высочайший манифест. - Русский инвалид. 1829, 29 марта.

⁷¹ ПСЗРИ. 2-е изд., т. 3, N 1888.

⁷² Там же, N 1834.

⁷³ **Тунян В.Г.** Россия и Армянский вопрос. Ереван, 1998, с. 29.

⁷⁴ **Тунян В.Г.** Русская политика в Армении: мифы и реалии. Ереван, 1998, с.18,19.

Отказ от титула царя Армении был связан с желанием избежать политических осложнений как с Персией и Турцией, так с Англией и Францией имевших свои интересы в Малой Азии. Несмотря на это европейские политические круги расценили образование Армянской области как армянское “государственное образование” России⁷⁵. Основу подхода Николая I составили ряд соображений: учет военно-политических аспектов надвигающейся русско-турецкой войны, желательность обеспечения симпатии армянского народа Османской Турции, необходимость экономического закрепления Закавказья, создание “зоны безопасности” между христианским населением закавказских владений и мусульманами сопредельных стран.

Державная деятельность Христофора Лазарева в ходе персидско-русской войны 1826- начала 1828 гг. заключалась в создании независимого источника информации высшей власти о положении дел на Южной окраине - ходе военных операций, введение однородного управления закавказских провинций, присоединения Северного Кавказа, закрепления российских границ по реке Аракс, рассмотрения взаимоотношений военачальников, администраторов и чаяний местного населения, обеспечение безопасности и развития отдаленных владений.

Таким образом, патриотическая деятельность Христофора Лазарева в подготовке Туркманчайского мира выражалась в продвижение трех проектов: 1) переселение персидских армян в исторические территории Араратской страны; 2) защита льготного статуса армянских общин в России; 3) воссоздание армянской государственности в составе Российской державы. Все они получили ту или иную степень решения со стороны самодержавной власти, которая исходила из реальных интересов России.

Внимание монарха Николая I к этим проектам диктовалось пониманием значения Армянского фактора для внешнеполитических интересов Российской державы на Ближнем Востоке, особенно в Османской Турции, а с другой стороны - необходимостью закрепления Южной окраины. Расширение закавказских пределов вписывалось в попечительную политику их освоения сквозь призму разных льгот. Несостоятельным является тезис мифотворцев о “просачивании” армян в закавказские пределы⁷⁶, в то время как территория Восточной Армении доходит до реки Кура и является северной частью Армянского нагорья⁷⁷. Создан “Армянский удел” в форме Армянской области. Лазаревский формат Туркманчайского мира определил основы развития армянской государственности в Закавказье.

Վաղերի Թունյան – 1828 թ. Թուրքմանչայի պայմանագրի Հազարյան ձևաչափը: – Հոդվածում ներկայացվածը Խաչատուր Հազարյանի հայրենասիրական գործունեությունն է ռուս-պարսկական պատերազմում, հետապնդում էր երեք նախագծերի իրականացում՝ 1) պարսկահայերի վերաբնակեցումն Արարատյան երկրում, 2) Ռուսաստանի հայ համայնքների արտոնյալ կարգավիճակի պահ-

⁷⁵ **Тунян В.Г.** Материалы к новой истории Армении. - Вестник общественных наук. 1986, N 8, с. 82, 83, 88, 89.

⁷⁶ Некоторые аспекты “появления” армян в Закавказье. - <http://www.bakilar.az/ca/news/news13.html>

⁷⁷ **Тунян В.Г.** МЫ И ОНИ, ч.1, 5. - <http://www.academhistory.am/ru/2013-08-28-19-46-04/2013-09-09-10-34-14/70A5.html> -թունյան-վ,-սենք-ն-նրանք-մասս հինգ երոքդ.html

պանում, 3) հայոց պետականության վերականգնումը: Արդյունքում ստեղծվեց Հայկական մարզը, որը հետագայում դարձավ Հայոց պետականության վերականգնման հիմքը:

Valeri Tounyan – *Lazaryan's format of Turkmancha's agreement of 1828 of 1828.*

– The article touches upon Khachatur Lazaryan's patriotic activities in Russian-Persian War. It pursues the actualization of 3 projects: 1. the resettlement of Persian Armenians in Ararat country; 2. the sustenance of privileged status of Armenian communities in Russia; 3. the reestablishment of Armenian sovereignty. As a result the Armenian region was founded which later became the basis for the reestablishment of Armenian sovereignty.

**ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ
ՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ
ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ասպիրանտ

Մեղքերի թողությունը որպես այդպիսին եղել է Հայ առաքելական եկեղեցու յոթ խորհուրդներից մեկը: Մեղքերի արձակման համար հավատացյալները ենթարկվում էին ոչ միայն հոգևոր պատիժների՝ ծոմապահություն, հաղորդությունից զրկվել և այլն, այլ նաև նյութական:

1. Բոլոր նյութական «ներողությունները» կրել են պաշտոնապես կամավոր բնույթ:
2. Հայ առաքելական ու վրաց ուղղափառ եկեղեցու դեպքում նվիրատուների անունները, հետևաբար նաև նրանց կատարած կամավոր նվիրատվությունների փաստը արձանագրվում էր արձանագրությունների ու հիշատակարանների տեսքով, իսկ կաթողիկ եկեղեցում՝ թողության թղթերի:
3. Մեր եկեղեցու դեպքում մեղքերի թողությունը տրվում էր պատարագ մատուցելու ու տալու միջոցով, որ ժամանակ էլ տեղի էր ունենում մեր ու արևելյան եկեղեցիներին առավելապես բնորոշ ընդհանրական խոստովանության կարգը:
4. Եվ արևմուտքում, և արևելքում մեղքերի թողություն դիմաց նվիրատվությունները սկսվել են 11-րդ դարից, շատացել 13-14-րդ դարերում, իսկ արևմուտքում անհամեմատ նվազ կերպով շարունակվում է մինչ այժմ:
5. Ե՛վ կաթողիկ եկեղեցում, և՛ Հայ առաքելական եկեղեցում մեղքերի թողության գինը հիմնականում եղել է հստակ սահմանված:

Բանալի բաներ. մեղքերի թողություն, նյութական «ներողությունները», նվիրատվություններ, խոստովանության կարգ, մեղքերի թողության գին:

Մեղքերից ազատվելը միշտ եղել է քրիստոնյա մարդու, հատկապես միջնադարում ապրողի կյանքի գլխավոր նպատակներից մեկը: Ցանկացած քրիստոնյա, ինչպես նախնիներում, այնպես էլ հիմա ակնկալում է ունենալ հետմահու կյանք և որպես դրա տրամաբանական շարունակություն՝ արժանանալ դրախտային վայելքների: Սակայն մինչ դրան անդրադառնալը հարկ է սահմանել ինչ է մեղքը, և մեղքի ինչ տեսակներ է սահմանում Հայ առաքելական եկեղեցին: Այսպես՝ մեղք համարվում է անհազանդությունը Աստծուն, կամովին թե ակամա այն արարքը, խոսքը, զգացմունքը, միտքը, որը հակառակ է Աստծո կամքին, նրա սահմանած կարգին և նրա պատվիրաններին¹: Հայ առաքելական եկեղեցին իր՝ մեղքերի սահման մեջ առանձնացնում է յոթ մահացու մեղքեր, որոնք են. 1. հպարտություն, 2. նախանձ, 3. բարկություն, 4. ծուլություն, 5. ազահություն, 6. որկրամոլություն, 7. բոջախոհություն (պիղծ մտածմունքներ ու գործեր, վավաշոտություն)²: Վերը նշված մահացու մեղքերից են բխել մյուս բոլոր մեղքերը, որոնց

¹ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 2002, էջ 718:

² Նույն տեղում, էջ 719:

թողության համար միջնադարում հաճախ վճարել են, ոչ միայն հոգևոր գրկանքներով, այլ նաև դրամական, կայքային, այն է նյութապես: Մեղքերի թողությունը որպես այդպիսին եղել է Հայ առաքելական եկեղեցու յոթ խորհուրդներից մեկի՝ ապաշխարության, բնական շարունակությունը, որն ուղեցվել է գղջմամբ ու խոստովանությամբ՝ համաձայն Նոր Կտակարանի կոչի, ինչու չէ նաև հրահանգի. «Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեա՛լ է արքայութիւն երկնից» (Աւետարան ըստ Մատթեոսի Գլուխ Դ.17): Ապաշխարության խորհրդի պայմանները երեքն են՝ անկեղծ գղջում գործած մեղքերի համար, երկրորդ՝ խոստովանությունն է՝ գործած մեղքերի ընդունումը, որին ապա հետևում է մեղքերի թողությունը, այն է՝ արձակումը³, որի իրավունքը, բնականաբար, ունեւ միայն եկեղեցին⁴: Այդ իրավունքի առկայությունը հոգևորականները հիմնավորում էին Քրիստոսի հետևյալ խոսքերով. «Ամէն ասե՛մ զի զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեա՛լ յերկինս» եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեա՛լ յերկինս» (Աւետարան ըստ Մատթեոսի, Գլուխ ԺԸ.18), ինչպես նաև Աստվածաշնչի այս հատվածով. «Եւ զայս իբրեւ ասաց» փչեա՛ց ի նոսա՝ եւ ասէ. Առէ՛ք Հոգի Սուրբ. եթէ ում եք թողուցուք զմեղս՝ թողեա՛լ լիցի նոցա. եթէ զուրուք՝ ունիցիք՝ կալեա՛լ լիցի» (Աւետարան ըստ Յովհաննու Գլուխ Ի 22-23): Արձակման դիմաց թողություն ստացողները անում էին որևէ նվիրատվություն՝ (անշարժ և շարժական գույք) փոխարենը՝ եկեղեցական տոնին նվիրառուից (հոգևորական, սպասավոր, միաբան) ստանալով ժամ կամ պատարագ⁵: Այդ երույթը նույնիսկ կանոնակարգված էր առանձին վանքերում, ինչը կարելի է հիմնավորել հետևյալ սկզբնաղբյուրով, որն Ավետարանի հիշատակարան է. «... աստուածապատիւ կարգաւ տէր Սիմոն, ախորժական կամաւք, մեծաւ տենչմամբ ստացաւ զսա անջնջելի արձան ի միխթարութիւն անձին և յոյս փրկութեան: Եւ ես՝ յոգնամեղս և փցունս ի գրչաց, ... ի թուականիս Հայոց ԶԾԴ. (1305 թ.), ի քաղաքիս Արճէշ, ընդ հովանեաւ սրբոյն Յակովբայ: Եւ արդ, աղաչեմ զձեզ տ[երամ]բ՝ զընթերցաւոյդ զլսաւոյդ, յիշման արժանի առնել զվերոյստացեալ զտէր Սիմոն ստացաւոյ տառիս, ... առ/աւել ի ժամ սուրբ և սոսկալի պատարագին, զի արժանասցին ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ: Եւ արդ, ես՝ տէր Սարգիս, առաջնորդ սուրբ ուխտիս Վարագա միաբան եղբայրութեան դասուս, ըստ կանոնական սահմանի, կարգեցաք հաստատուն հրամանաւ, որ յամեն տարի Նոր կիւրակէն Բ. (2) ժամ առնենք ստացողի սուրբ աւետարանիս, մի՛ տէր Սիմոն, և մի Յոհանէս իրիցու և որ յետ մեզ լինին՝ առաջնորդք և եկեղեցապանք, անխափան զպ[ատարագն] ...»⁶: Այս հիշատակարանից հստակ երևում է, ու Վարագա վանքում եղել է կանոն, որով օրինակարգվել է նվիրատվությունների դիմաց պատարագների տրամադրումը, որի շրջանակներում էլ տեղի էր ունենում մեղքերի թողությունը կամ արձակումը: Նվիրատուին հուզել է իր հոգու փրկության ապահովումը, ուստի հոգ է տարվել պահովելու ժամ կամ պատարագ մատուցելու պարտավորությունը⁷: Սովորաբար նմանատիպ արձանագրությունների առաջին մասը վերագրված է նվիրատուին և վերարտադրում է նվիրատվության տեսակն ու փաստը (երբեմն և նպատակը): Երկրորդ մասը վերագրվում է նվիրառուին ու նրա հանձնառած պարտավորությանը: Սա փաստորեն պայմա-

³ Նույն տեղում, էջ 70:

⁴ **Սարգսյան Ս.**, Հայոց եկեղեցո խորհուրդներն ու ծեսերը, <<Գանձասար>>, հ. 1, Եր., 1992, էջ 72-77:

⁵ **Ս. Հարությունյան**, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Եր., 1975, էջ 55:

⁶ ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1950, 36:

⁷ **Ս. Հարությունյան**, նշվ. աշխատ., էջ 63:

նագիր է կնքված երկու կողմերի միջև, յուրաքանչյուրի պարտականության հիշատակմամբ և դրանց իրավաբանական հաստատմամբ⁸: Իրավաբանական հաստատումն էլ, ըստ էության հանդիսանում էին արձանագրություններն ու հիշատակարանները՝ որպես գրավոր վկայություն:

Ինչպես վերը նշեցինք, նվիրատու-հավատացյալները ստանում էին պատարագ: Այս խնդիրը ևս բավականին հետաքրքրական է: Ինչպե՞ս հասկանալ պատարագ ստանալու երևույթը: Հայտնի է, որ ներկայումս պատարագներ պատվիրելու հնավանդ երևույթը վերացել է կամ ոչ համատարած կերպով պահպանվում է որոշ համայնքներում կամ էլ եզակի բնույթ է կրում (Այսպես՝ ակադեմիկոս Սարգիս Հարությունյանից լսել ենք, որ բանաստեղծ Պարույր Սևակի մահվան կապակցությամբ նրա հոգու փրկության համար պատարագ է մատուցել անձամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը, հետևաբար նմանատիպ պատարագներ մատուցվել ու մատուցվում են նաև որոշ դեպքերում մեր ժամանակներում: Այդ պատարագները որպես կանոն հոգեհանգստյան պաշտոններ են և կատարվում են միայն հանգուցյալների համար⁹): Ներկայումս մեր պատարագում կան հատվածներ, որտեղ աղոթում են կոնկրետ անձանց համար, երբ արարողության ժամանակ հավատացյալները թղթի վրա գրում են իրենց նոր ու հին հանգուցյալների անունները, ու պատարագիչը, կարդալով նրանց անունները, Աստծուց խնդրում է թողություն տալ այդ մարդկանց մեղքերին, ինչպես նաև աղոթում է բոլոր ապրողների բարօրության համար և հետո բարձր ձայնով օրհնում է ժողովրդին՝ ասելով. «Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ, ընդ ամենեսեան»¹⁰: Այսպես հստակ երևում է, որ միայն պատարագն է այն միակ միջոցը, որի ընթացքում կատարվում է խոստովանության կարգը, հավատացյալն ազատվում է մեղքերից ու որպես դրա հետևանք հույս ունենում արժանանալու դրախտին:

Այժմ հարց է առաջանում՝ արդյո՞ք պատարագներ պատվիրելով իրենց նվիրատվությունների դիմաց, նվիրատու-հավատացյալի անվանը զուգահեռ կարդացվել են նաև այլ հավատացյալների անուններ՝ խնդրելով նրանց մեղքերի թողությունը ևս, թե միայն նվիրատուի: Այդ հարցին պատասխանելու համար հարկ է անդրադառնալ որոշ վիմագրերի: Այպես Դիվան հայ վիմագրության IX-րդ՝ Լոռվա պրակում, N 14 վիմագիրը (Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու ներսի հարավային պատի վրա է, 13 տող) մեղքերի թողության խնդրագիր է նաև.

«ՇՆՈՐՀԻՐՆ ԱՅ ԵՄ՝ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՄԱՏԻ-
ԹԷՈՍ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՆԱԿԱՆԱՑՍ ԲԱԼ-
ԶՄՈՒԹԻՒՆԻՆ ԵՂԲԱՐՔՍ ԼՀԱՍՏԱՏԵՅԱՔ Ի: Ծ: (50)՝
ԱԿԱՆՍ ՏԱԻՆՍ: ԳՐԻԳՈՐԻՆ ՊԱՏԱՐԱԳԼ-

⁸ Նույն տեղում, էջ 71:

⁹ Վերջերս Վաղարշապատի ու Երևանի որոշ եկեղեցիներում ու վանքերում, արգելվել է պատարագի ընթացքում հոգեհանգստյան պաշտոնը կատարել, եթե չկա պատվիրատու, որը պիտի վճարի պատարագիչ-քահանային: Իսկ եթե որևէ հավատացյալ ուզում է, որ իր հանգուցյալի անունը հիշատակվի ու նրա հոգու փրկության համար աղոթք արվի, ապա պետք է վճարի: Պատվիրատուն կարող է չվճարել, եթե վճարունակ չի: Հստակ սահմանված սակագին չկա: Գումարի չափը որոշում է հավատացյալը՝ կամավորության սկզբունքով:

¹⁰ **Վազգեն վարդապետ** (Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց), Մեր պատարագը, Ս. Էջմիածին, 2008, էջ 108-109:

Ն ԱՐՆԵՆ ԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ Ժ-
 ԱՍ ԵՒ ՀԵՏ ՄԱՀՎԱՆ ՄԱՏԹԵՈՍԻ-
 Ի ԱՌՆԵՆ ԺԱՄ: ԱՐԴ ՀԱՌՔ ԿԱՍ ԵԿԵՂԵԼ-
 ՑՊԱՆ ՈՐԶԱՓ ԵԿԵՂԵՑԻՔՍԻ ԾԻՆՈՒԹԵՆԼ:
 ՈՒ ԶԱԼՅԼՍ ԺԱՄՍ ԽԱՓԱՆԷ՝ ՆԶՈՎՍ ԱՌՑԷՂ
 ՈՒՐԴՈՒՆ **ԱՅ** ՈՒ ՅԻՇԵԱԼ ԶԱՆՈՒՆ ԳՐԻ-
 ԳՈՐԴՈՍԿԵՐԶԻՆ ՄԵՂԱՄՅ ԹՈՂՈՒԹԻՒՆԽՆԴԻԵ-
 ՑԷՔՂ

ԱՌԱԶԻ **ԱՅ** ԵՒ **ԱԾ** ՀԱՐ... ՈՂ-
 ՈՐՄԻ»¹¹:

Այս նվիրագրից պարզ է դառնում, որ պատարագ է մատուցվել միայն Գրիգորի ու Մատթեոսի համար, վերջինիս դեպքում՝ իր մահից հետո: Բնականաբար, որևէ այլ հավատացյալ այդ մատուցվող պատարագի ժամանակ չէր հիշատակվում ու մեղքերի թողություն չէր ստանում: Շատ հստակ է նաև այն հանգամանքը, որը Գրիգորին տրվելիք պատարագը կատարվել է նրա կենդանության օրով, և ոչ թե հետմահու: Հետևաբար պատարագ պատվիրելը եղել է միջոց նաև կենդանության ժամանակ մեղքերը քավելու: Այս համատեքստում հետաքրքիր լուսաբանումներ է մտցնում մեղքերի թողության ու հանդերձյալ կյանքի վերաբերյալ եկեղեցու վարդապետությունը: Համաձայն այդ վարդապետության, հանգուցյալները չեն կարող հետմահու կյանքում զոջալ ու այդպիսով քավել իրենց մեղքերը: Նրանք, ըստ արժանվույն, գտնվում են կամ հավիտենական երանության, կամ էլ հավիտենական տանջանքների մեջ¹²: Հետևաբար զոջալ չեն կարող, քանի որ երանության ու տանջանքի հոգեվիճակը կլանում է մարդու ողջ ուշադրությունը: Համաձայն եկեղեցու՝ այդ է պատճառը, որը հանգուցյալները նունիսկ չեն հիշում իրենց երկրային կյանքը: Հանդերձյալ աշխարհում գտնվողների համար ապրողները միայն կարող են աղոթել՝ դրանով իսկ թեթևացնելով նրանց վիճակը¹³: Ամենայն հավանականությանը այդ է պատճառը, որ մենք ունենք բազմաթիվ արձանագրություններ, որոնցում կենդանի մարդիկ են նվիրատվություններով փորձում քավել իրենց մեղքերը, ինչպես նաև իրենց հանգուցյալների: Հետևաբար, կենդանի մարդկանց համար տրվող պատարագները ուղղափառ էին ու չէին հակասում եկեղեցու վարդապետությանը: Այդպիսի մի վիճակի է նաև Տարսայիձ իշխանաց իշխանի որդի Լիպարտի, և նրա կին Մինախաթունի նվիրագիրը. «Յուսով ամենակալին Աստուծոյ ես Տարսայիձս իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին, եւ ամուսին իմ Մինախաթուն դուստր մեծին Դավին, ... շինեցաք Աստուածածինս ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգւոյ և յերկարութիւն կենաց մերոց ...»¹⁴:

Հետաքրքիր արձանագրություն է նաև Քոբայրի վանքի հետևյալ արձանագրությունը, որը վրացերենով է, թարգմանված հայտնի հայագետ-վրացագետ Պարույր Մուրադյանի կողմից. «Թ[ւին] ՈԼԵ. (= 1186): Ես Խաչգու[ն]դս՝ / Մամբանա

¹¹ Դիվան Հայ Վիմագրության, պրակ 9, կազմեցին **Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Մադումյան**, Եր., 2012, էջ 32:

¹² Катехизис, Киев, 1991, с. 339; Ուղղափառ եկեղեցին մինչև այժմ պահպանել է պատարագի ժամանակ նաև կենդանի մարդկանց հիշատակելու սովորություն:

¹³ Նույն տեղում, 337-346:

¹⁴ Դիվան Հայ Վիմագրության, պրակ 2, կազմեց **Ս. Բարխուդարյան**, Եր., 1960, էջ 114, N 336:

սնուցած, գնեց/ի գՔրտիս այգիս եւ ետու /ի ս(ուր)բ կաթողիկես վ(աս)ն իմ /հոգոյս: Առաջնորդ/ ով լինի ս(ուր)բ եկեղեցոյս /պարտի ինձ տարին Բ աւ/ր ժամ: Որ խափանէ՝ ի/մ մեղաց տեր ե առաջ/ի ա(ստուծո)յ: Ամէն»¹⁵: Արձանագրությունից պարզ է դառնում Խաչգունդը Քրտի այգին նվիրել է վանքին իր հոգու փրկության համար ու ստացել պատարագ: Այս վիմագրի եզակիությունը կայանում է նրանում, որ նվիրատուն հայ քաղկեդոնիկ է եղել, որից կարելի է ենթադրել

1. Վրաց եկեղեցում եւ եղել է մեղքերի թողության գնման երևույթը

2. Հավանաբար, այդ երևույթը բնորոշ է ուղղափառ աշխարհին առհասարակ:

Վիմագրերից զատ մեզ հասել են բազմաթիվ հիշատակարաններ, որտեղ եւս նվիրատուները հոգու փրկության հույսով հայցել են մեղքերի թողություն՝ կատարելով նվիրատվություններ, որպես կանոն ստանալով դրա դիմաց պատարագներ, քանի որ միայն պատարագի ժամանակ է հոգևորականը իրավասու իրականացնելու իր մեղսաքավիչ գործառույթը¹⁶: Այդ հիշատակարաններից մեկին հանդիպում ենք 1301 թ.-ի մի Ավետարանում. «Արդ, ես նուաստ եւ թարմաւոր ոգիս, յոգնամեղ եւ անարժանս ի քահանայս Թորոս փիլիսոփա, ցանկացող եղէ սուրբ եւ կենսաբեր Աւետարանիս եւ գրեցի զսա անարժան ձեռամբ իմով, յաշխարիս Կիլիկեցոց ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտս Դրագարկ...: Եւ ես նուաստ եւ մեղաւոր ոգիս Թորոս՝ աստ ծնեալ եւ աստ սնեալ, եւ ցանկացա գրել եւ առաքել ի գաւառս իմ հայրենի, յաղագս մեղաց եւ յանցանաց իմոց թողութեան: Եւ յամենայն ամի աւր մի յայտ արասցեն կամ զտան Իջման Սուրբ Հոգւոյն կամ զԱյլակերպութեան, եւ մատուցեն զպատարագն եւ ինձ հայեցեն մեղաց թողութիւն: Եւ մի իշխեսցեն հանել յայս սուրբ ուխտէս, եւ ծախել կամ գրաւ դնել, այլ մնացէ անմեկնելի յայս սուրբ ուխտս եւ որոք ջանայ հանել՝ ընդ անլուծանելի կապանաւք լիցի: Արդ, գրեցաւ սա ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտս Դրագարկ, ի թուականութեանս Հայոց 20 (1301), եւ ի թագաւորութեանս Բարեպաշտ եւ սուրբ արքային Հայոց Հեթմոյ եւ ի հովապետութեան տեր Գրիգորոյ ...»¹⁷:

Մեղքերի թողության համար մեր եկեղեցուն դիմել են անգամ օտարագրիները՝ մահմեդականները: 16-րդ դարի կեսերին Սասունում տարածված է եղել մի ավանդություն, ըստ որի, բռնակալ քուրդ իշխանը Դավթի գերեզմանից հանած և սեփականած խաչից պատուհասվելով ծածկվել է անբուժելի վերքերով և մեռել թշվառության մեջ: Նրա եղբայրը՝ Սասնո այդ ժամանակվա բարեգութ տիրակալը, այդ տեսնելով վախենում է խաչի գորությունից և քավելու համար եղբոր մեղքերը, խաչը դնում է հայկական եկեղեցում և վերջինիս մշտական վճար է սահմանում՝ խաչի առաջ ձեռքի կանթեղը միշտ վառ պահելու համար¹⁸:

¹⁵ **Պարույր Մուրադյան**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները. աղբյուրագիտական քննություն, Եր., 1977, էջ 170:

¹⁶ Պատարագի ժամանակ, կատարվում է մեղքերի թողության ընդհանրական կարգը՝ մեղքերի խոստովանությունը, և թեպետ Հայ առաքելական եկեղեցիներում եղել է նաև խոստովանության մասնավոր կարգ, բայց հնուց ի վեր մեր եկեղեցուն առավել բնորոշ է եղել ընդհանրականը:

¹⁷ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց **Լ. Խաչիկյան**, Եր., 1950, էջ 4:

¹⁸ **Սարգիս Հարությունյան**, «Կարոս Խաչ»՝ վիպերգի մի միջնադարյան պատում, էջ 21: Կարոս Խաչ/Ուսումնասիրություններ եվ բնագրեր, կազմեցին և խմբագրեցին Ս. Հարությունյան և Ժ. Խաչատրյան, Եր., 2000, էջ 17, տե՛ս նաև Roberto Gulbenkian et H. Berberian, La legend de Sassound' apresdeux voyageurs Portugais XVI' Siecle: "Revue des etudes Armeniennes", Nouvelle seri, t. VIII, Paris, 1971, s. 178-179:

Նմանատիպ վիմագրերն¹⁹ ու հիշատակարանները²⁰, բանագիտական²¹ ու ազգագրական²² նյութերը շատ են, զուտ ժամանակային առումով ընդգրկում են 11-15-րդ դարերը (բնականաբար դա չի վերաբերվում բանագիտական ու ազգագրական նյութին), ու անկախ իրենց թվական գերակշռությունից, կիրառական առումով մեկ միասնական նպատակ են հետապնդում, ուստի և օրինակների կուտակումից խուսափելու համար բերել ենք միայն մի քանի նմուշ, որոնք լիովին պատկերացում կարող են տալ քննարկվող խնդրի մասին:

Ինչպես վերը նշեցինք հայ քաղկեդոնիկ հավատացյալ Խաչգունդի մոտ նույնպես հանդիպում ենք մեղքերի թողության դիմաց տրվող նվիրատվության երևույթին: Կարելի է ենթադրել, որ վրացադավան Խաչգունդը չէր կարող քաղկեդոնիկ եկեղեցու դավանանքին հակասող որևէ քայլ կատարել: Հետևաբար, այդ երևույթը կարծես թե ուներ համաքրիստոնեական բնույթ: Համաքրիստոնեական բնույթի մասին խոսելիս, անշուշտ, անհնար է անտեսել Կաթողիկե կամ Հռոմեակաթուլիկ եկեղեցին, որը, ըստ էության, քրիստոնեական աշխարհի խոշորագույն եկեղեցին է: Ուստի հարց է առաջանում՝ ի՞նչ կերպ էր ու է դրսևորվում կաթողիկե եկեղեցում մեղքերի թողության համար կատարվող նվիրատվությունների երեվույթը: Այդ հարցին կարելի է պատասխանել հետևյալ կերպ. 11-րդ դարից սկսած և հատկապես 12-14-րդ դարերում առաջ է գալիս «Indulgentia»-ի երևույթը, որն իրենից ենթադրում էր մեղքերի խոստովանություն, Աստծո գոհացում կամավոր, բարի գործերով: Այդ կամավոր, բարի գործերը չմիայն հոգևորին էր վերաբերվում, այլ նաև նյութականին: Դրանք ուղեկցվում էին «փրկագնով», որն էլ ապահովում էր մարդուն մեղքերի թողություն ու հոգու փրկություն: Այդ փրկագինը գրեթե միշտ նյութական բնույթ էր կրում, որի դիմաց կաթուլիկ եկեղեցին տալիս

¹⁹ Դիվան Հայ Վիմագրության, պրակ 6, կազմեցին Մ. Ավագյան, Հով. Ջանփոլադյան, Եր., 1977, էջ 52-53՝ N 104, էջ 55՝ N 110, էջ 70՝ N 140 և այլն:

²⁰ Ավետարան, Լիմ, 1592 թ., ՄՄ. N 5011, էջ 305ա «...եղբարքն իւր՝ Բնկիբէկ, Յովասափ, Դաւլվաթիար լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն. ամէն: Դարձեալ փծուն գրիչս Դաւիթ զիմ անարժան երեսս ձեզ ի գետին դնելով աղաչեմ զամենեսեան և զիս միոյ Աստուած ողորմոյ արժանի արարէք զծնաւոյն իմ՝ զՄկրտիչն և զԷթարփաշէն, և զուսուցիչն իմ՝ գրեաջ քարտաւարն Ջաքարիայ արքեպիսկոպոսն, և ի ժամ տոսկալի պատարագին լի բերանով Աստուած ողորմի ասացէք: Եւ զհոգևոր եղբարքս գտեր Յոհանէս արքեպիսկոպոսն, գտեր Գեորգն, գտեր Սարգիսն, գտեր Մելքեսէթն, գտեր Ստեփանոսն, և գտեր Պետրոսն, գտեր Պաւղոսն Տէր Աստուած դասակից և պսակակից Սուրբ Ղևոնդեանցն արասցէ. ամէն»: Մաշտոց Ձեռագ, Լիմ, ՄՄ. N 5976, 149աբ. «Արդ, գրեցաւ Մաշտոցս յերկիր Գնոնէայ, վանքս, որ կոչի Լիմ ընդ հովանեաւ Գրեորգեա զաւրավարիս Եւ այլ սբբոցն, որ աստ կանձ Եւ ի հայրապետութեան Տեառն Ջաքարեայ արին (149բ)[եպ]սկոպոսի, որ զմեզ հարական գթով ///թեաց զմեզ յայսչափ բանս խասուր Աստուած, գուր մեղք թողնու եւ գուր ծնող[ա]ց, ամէն ...»: Մեկ այլ գրիչ՝ Ստեփանոսը, 1464 թ. ավարտելով ճաշոցը, դիմում է հետագա սերունդների խնդրելով՝ «Աստուած ողորմի իւրեն և մարն իմոյ Էմինին ...», ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Եր., 1958, 215 և այլն:

²¹ Սասնա Ծռեր, Բ հատոր, մասն յերկրորդ, խմբագրեց ակադեմիկոս Մ. Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Մ. Ռհանջանյան, Յերևան, 1951 թ., էջ 575-576., Սասունցի Դավիթ, պատմեց մշեցի Հարություն Դավթյան, գրի է առնված 1915 թ., Ցասման ժամ և ավագակ դները. «Մեկ որ լե ելավ առավոտուն Դավիթ, քչեց հորթեր, գնաց, տեսավ, որ տղա չկա, հորթեր չկա: Եղ տղայի գեղ լե ցավ, հիվանդություն շատ կրլնի: Եղ գեղացիք լե պատարագ կենին, աղաչանք կենին, որ Աստված փարատություն տա»:

²² Ազգրագական հանդէս, XII գիրք, Թիֆլիս, 1905, էջ 145. «Եթէ փոքրահասակ էր ննջեցեալը՝ անմիջապէս կատարում էին թաղման կարգը և տանում գերեզմանատուն, իսկ եթէ չափահաս՝ սկսում էին պատարագ անել» (Գողթան գավառ):

էր թողության թուղթ²³: Ինդուլգենցիայի ուսմունքը որպես այդպիսին պահպանվում է կաթոլիկ եկեղեցում մինչև այժմ: Հայ կաթողիկե միջավայրում այն անվանում են «ներողություններ»²⁴: «Ներողությունների» ուսմունքի հիմքում ընկած են նաև 20-րդ դարի Հռոմի պապերի դավանաբանական եզրահանգումները, մասնավորապես Պողոս Զ-ինը. «Լավ տրամադրված հավատացյալը այս թողությունը կընդունի որոշված պայմաններով (*ՀՀ - այսինքն կամավոր նվիրատվություններով*) և ներգործված եկեղեցով, որը իբրև փրկչագործության մատակարար՝ Քրիստոսի ու սրբերի հատուցման գանձը իր իշխանությամբ կբաշխի և կտնօրինի»²⁵:

Քննելով կաթոլիկ եկեղեցու մեղքերի թողության գնման երևույթը, այն է Ինդուլգենցիայի ուսմունքը՝ կատարելով համեմատական առաքելական, ուղղափառ, մասնավորապես վրացադավան եկեղեցիների նույն ուսմունքի հետ, կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Վերոնշյալ եկեղեցիներում ապաշխարիության խորհրդի շրջանակներում կատարվել է խոստովանության կարգը, որին հաջորդել է մեղքերի թողությունը կամ արձակումը:

2. Մեղքերի արձակման համար հավատացյալները ենթարկվում էին ոչ միայն հոգևոր պատիժների՝ ծոմապահություն, հաղորդությունից զրկվել և այլն, այլ նաև նյութական:

3. Բոլոր նյութական «ներողությունները» կրել են պաշտոնապես կամավոր բնույթ: Սակայն այս հարցում ամեն ինչ չէ, որ միանշանակ է: Հոգևոր դասը միայն իրավունք ուներ Աստծու անունից ազատել մարդուն մեղքերից: Հետևաբար կարելի է ենթադրել, որ այդ «կամավոր» նվիրատվությունները կատարվում էին հոգևորականների հուշելուց հետո, կամ էլ, ինչպես վերը նշեցինք, Վարագա վանքի պարագայում «ըստ կանոնական սահմանի», թեպետ «Կանոնք Ներսեսի եւ Ներշապիոյ»-ի կանոններերից մեկով արգելվում էր վարձ ուզելը մեղքերի թողության համար. ՈԻԶ (ՈԻԲ) ԺԸ. «Եւ քահանայք զապաշխարութիւն վաճառականութեամբ մի՛ իշխեսցեն տալ, այլ դաստիարակութեամբ հոգասցին խրատել իբրեւ զկարեկիցս, զի ապրեսցին եւ հաս մի՛ առցեն ի նոցանէ մաքսաւորաբար, ձրի առնեմք եւ ձրի տամք» (Մատթ. Ժ, 8): ՈԻԷ (ՈԻԳ) ԺԹ. «Եթէ ոք ի քահանայից յայտնեսցէ երբեք զբանն ապաշխարութեան ապաշխարողացն, նզովիւք լուծցի եւ ամեն իրօք ջնջեսցի ի քահանայական ժառանգութենէն»²⁶: Այս ամենից կարելի է ենթադրել, որ մեղքերի թողության վաճառքի, հետևաբար նաև գնման երևույթ եղել է անգամ վաղ միջնադարում, որ կարիք է եղել հատուկ կանոններով այն արգելել:

4. Հայ առաքելական ու վրաց ուղղափառ եկեղեցու դեպքում նվիրատուների անունները, հետևաբար նաև նրանց կատարած կամավոր նվիրատվությունների փաստը արձանագրվում էր արձանագրությունների ու հիշատակարանների տեսքով, իսկ կաթոլիկ եկեղեցում՝ թողության թղթերի:

5. Մեր եկեղեցու դեպքում մեղքերի թողությունը տրվում էր պատարագ մատուցելու ու տալու միջոցով, որ ժամանակ էլ տեղի էր ունենում մեր ու արևելյան եկեղեցիներին առավելապես բնորոշ ընդհանրական խոստովանության

²³ Христианство, энциклопедический словарь, том 1, ред. *С. Аверинцев, А. Мешков, Ю. Попов*, М., 1993, с. 606-607.

²⁴ Քրիստոնեական Կաթողիկե Եկեղեցույ, Վատիկան, 1997, էջ 591:

²⁵ *Պողոս Զ*, Առաք. Մատթ. Indulgentiarum doctrina, Normae, 2. AAS 59, 1967, s. 21.

²⁶ Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատ. *Վ. Հակոբյանի*, Եր., 1964, էջ 486:

կարգը: Կաթոլիկ եկեղեցու պարագայում հավատացյալը մասնավոր խոստովանության կարգի միջոցով էր ստանում մեղքերի արձակում, իսկ մասնավոր խոստովանության կարգի դեպքում պատարագի անհրաժեշտություն չկար: Այդ է պատճառը որ որպես մեղքերի թողության առհավատյա կաթոլիկ եկեղեցին տալիս էր թողության թղթեր, ոչ թե արձանագրում էր այդ փաստը եկեղեցու պատերին:

6. Եվ արևմուտքում, և արևելքում մեղքերի թողություն դիմաց նվիրատվությունները սկսվել են 11րդ դարից, շատացել 13-14-րդ դարերում, իսկ արևմուտքում անհամեմատ նվազ կերպով շարունակվում է մինչ այժմ:

7. Ե՛վ կաթոլիկ եկեղեցում, և՛ Հայ առաքելական եկեղեցում մեղքերի թողության գինը հիմնականում եղել է հստակ սահմանված: Ամեն մի տարածաշրջան, հաճախ նաև վանք ունեցել է իր գինը, որն էլ վճարելով, հավատացյալ մարդը ստացել է մեղքերի արձակում²⁷: Չնայած մեր եկեղեցու առավել ուշ շրջանի հեղինակները՝ մասնավորապես Արշակ Տեր-Միքելյանը, հեքում է կամ տեղյակ չէ այդ փաստին.. «Հայաստանյայց Ս. Եկեղեցին չափով-կշռով պարտավորություններ չի կարող սահմանել յուրաքանչյուրի համար և ելնել առաքելական պողոտայից՝ ըստ Հռովմեական մոլորության: Պահքի թե՛ դրական ու թե՛ բացասական կողմն այն ժամանակ կարե արդյունավոր լինել, եթե միայն ի սրտե լինի և ըստ կարողության չափին: Եվ որպեսզի յուրաքանչյուր հայ հիշե նաև յուր մեղաց ապաշխարությունն և առաքինական պատերազմը, դրված են պահքի օրեր և շաբաթներ ի հուշ և ի հիշատակ և ի օրինակ քրիստոնեական պահքի և առաքինությանց հանդեսների»²⁸: Այստեղ ուշադրություն պետք է այնուամենայնիվ դարձնել «միայն ի սրտե լինի և ըստ կարողության չափին» արտահայտության վրա, որը, ըստ էության, ենթադրում է իրենից կամավոր նվիրատվության երևույթ: Անգամ հայոց լեզվում կա հատուկ բառ, որն է Ժամոց (Ժամուց) ու նշանակում է «Պատարագիչ քահանային տրվող դրամական նվեր»²⁹: Անշուշտ, այդ եզրույթի առկայությունը պատահական չէ, և այդ բառը ևս մեկ անգամ գալիս է հիմնավորելու վերոնշյալ տեսակետը:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ արևելյան եկեղեցիները մշտապես քննադատության են ենթարկել կաթոլիկ եկեղեցուն, նրան մեղադրելով հավատացյալների հաշվին հարստանալու մեջ՝ շեշտելով այն հանգամանքը, որ հավատացյալի մեղքը չի ներվի միայն գումարով: Այնինչ կաթոլիկ եկեղեցու ինդուլգենցիայի մասին ուսմունքը հստակ շեշտում է նաև հոգևոր ասպեկտը՝ մեծ ուշադրություն դարձնելով ապաշխարիության ու զղջման վրա: Նույն սկզբունքով առաջնորդվել են նաև արևելյան, մասնավորապես Հայ առաքելական եկեղեցին: Ուստի կարելի է եզրահանգել, որ մենք նույնպես ունեցել ենք կաթոլիկների պես մեղքերի կամավոր գնման երևույթը, ոչ ուսմունքի մակարդակի հասցված, ինչպես կաթոլիկների մոտ, բայց և այնպես ոչ գրեթե իսպառ բացակայող, ինչը որ կա ներկայումս:

²⁷ *Ավդայբեգյան Թադ.*, Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 305-337:

²⁸ *Արշակ Տեր-Միքելյան*, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 434:

²⁹ *Ռ.Կ. Մաքսպետյան*, Արևելահայերենի և Արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները (զուգադրական քննություն), Եր., 2004, 40:

Айк Акопян – Одна особенность явления отпущения грехов в средневековых источниках. – Отпущение грехов является как таковым естественным продолжением покаяния – одного из семи таинств Армянской Апостольской церкви. Для отпущения грехов верующие подвергались не только духовным наказаниям – воздержанию, лишению евхаристии и т. д., но и материальным.

1. Все материальные “извинения” официально несли добровольный характер.
2. В случае Армянской Апостольской и Грузинской православной церкви имена дарителей, а так же факт их добровольных пожертвований фиксировались в виде эпиграфических и библиографических источников, а в Католической церкви – в индульгенции.
3. В случае нашей церкви опущение грехов происходило в виде литургии, во время которой происходит всеобщая исповедь, которая в основном присуща нам и восточным церквям.
4. И на западе, и на востоке в ответ на отпущения грехов пожертвования начали делаться с 11-го века, их количество увеличилось в 13-14 веках, а на западе в значительно меньшей степени продолжается до сих пор.
5. Как в Армянской Апостольской, так и в Католической церкви цена опущения грехов была конкретно устоявлена.

Hayk Hakobyan – Some peculiarity of the phenomenon of the remission of sin in the medieval sources. – Remission of sins is a continuation of repentance, which is one of the seven sacraments of the Armenian Apostolic Church. For the remission of the sins of believers were subjected not only to the spiritual punishment – abstinence, deprivation of the Eucharist, and so on – but also to material punishment.

1. All the material “apology” officially were carried voluntary.
2. In the case of the Armenian Apostolic and the Georgian Orthodox Church, the names of the donors, as well as the fact of their volunteer donations were recorded in the form of epigraphic and bibliographic sources, as in the Roman Catholic Church in indulgences.
3. In the case of our Church, remission of sins occurred in the form of the Liturgy, during which the universal confession, which is basically inherent in us and Eastern churches.
4. Both in the West and in the East in response to the remission of sins donations began to be done with 11th century, their number increased in 13-12 centuries, and in the West in much the less extent are continuing till now.
5. As in Armenian Apostolic and Catholic Churches, the price of the remission of sins was exactly established.

ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ՀԱՅԿ ՀԱԿՈՒԹՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ասպիրանտ

Միջնադարում տարածված երևույթ էր պատարագ գնելու երևույթը: Պատարագների փոխհատուցման խնդրի լուսաբանումը մեծ կարևորություն է ներկայացնում միջնադարի տնտեսության ուսումնասիրության հարցում: Պատարագ ստանալու համար նվիրատուները կատարում էին բազմաթիվ նվիրատվություններ (անշարժ և շարժական գույք), կառուցում եկեղեցիներ և այլն: Սակայն հաճախ են եղել նաև դեպքերը, որ նվիրատուն ուղղակի նվիրել է որոշակի քանակությամբ գումար, դրա դիմաց ստանալով որոշակի քանակությամբ պատարագ: Մեծ Հայքի յուրաքանչյուր տարածաշրջան, երբեմն նույնիսկ յուրաքանչյուր վանք ունեցել է իր կողովից սահմանված պատարագ պատվիրելու հստակ սակագին:

Բանալի բառեր. պատարագ գնել, պատարագների փոխհատուցում, նվիրատու, պատարագի սակագին:

Պատարագների փոխհատուցման խնդրի լուսաբանումը մեծ կարևորություն է ներկայացնում միջնադարի տնտեսության, տարատեսակ ապրանքների, շարժական ու անշարժ գույքի գների հստակեցման համատեքստում: Պատարագ ստանալու համար նվիրատուները կատարում էին բազմաթիվ նվիրատվություններ (անշարժ և շարժական գույք), կառուցում եկեղեցիներ և այլն: Սակայն հաճախ են եղել նաև դեպքերը, որ նվիրատուն ուղղակի նվիրել է որոշակի քանակությամբ գումար, դրա դիմաց ստանալով որոշակի քանակությամբ պատարագ: Հաճախ նվիրատվությունը եղել է և՛ դրամական, և՛ գույքային, ինչպես օրինակ այս նվիրագրինը, որում պատարագ ստանալու երևույթը անվանվում է պատարագ ուղղակի առնել.

«ԿԱՄԱՆ **Ս**ԵՍ՝ ԱՂԵԿԱՃՈՐՏ ԵՒ ԱՄՈՒՄԻՆ ԻՄ ՀԱԵԹ, ... ԱՌԱՔ :Ա: (1) ԺԱՍ ԶԿԱՐԴԱԲԱՐԻՆ ԿԻՐԱԿԷՆ ... [ԹՎԻՆ] ԶԺԱ (1262)»¹:

Պատարագ գնելու երևույթը կանոնակարգված է եղել յուրաքանչյուր վանքում, հավանաբար յուրովի՝ կախված տվյալ վանքի վանահոր ու միաբանների ցանկությունից: Այդ եզրահանգմանը կարելի է հասնել, որոշ նվիրագրերի ոչ երկիմաստ բնագրերից: Օրինակ՝

«Կաման **Ս** ես Դաւիթ և միաբանքս գրեցաք Ա (1) արլ ժամ ... և որ *ես ուկի գին* **Կ** եկեղեցոյս և տուաք մեր ... Գրիգորի կի- հասկեինո ...»²:

¹ Դիվան Հայ Վիմագրության, պրակ 9, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Մաղումյան, Եր., 2012, արձ. N 577, էջ 274

² Գ. Մարգարյան, Մակարավանք, ՊԲՀ, Եր., 1954, մայիս-հունիս, էջ 34; տե՛ս նույն տեղում նաև էջ 35, 36: Պատարագ գնելու սովորություն եղել է նաև հարևան Վրաց եկեղեցում, այսինքն կարելի է եզրահանգել, որ քաղկեդոնիկ աշխարհին ևս այն բնորոշ էր: տե՛ս *Такыйшвили Е.*, Суджунская церковь и ее древности, Христианский Восток, Том V, выпуск I, Петроград, типография императорской академии наук, 1916, стр. 45, 50:

Այս վիմագրի մեջ առկա «*ես ոսկի գին*» ¹ *եկեղեցոյս*» արտահայտությունից պարզ է դառնում, որ վանքերը ունեցել են իրենց սահմանած հստակ գինը:

Ուստի, մենք կարող ենք նվիրաբերված գումարի ու պատարագի թվի բաժանումով իմանալ, թե ինչ է արժեցել մեկ պատարագը, իսկ մեկ պատարագի գինը ճշգրտման շնորհիվ արդեն հստակ կլինի տարատեսակ արձանագրությունների մեջ այգիների, ջրաղացների, ավետարանների, եկեղեցական սպասքի, շուրջառների, նվիրաբերած կենդանիների և այլն արժեքի ճշգրտումը: Ցավոք սրտի, քիչ են մեզ հայտնի այն արձանագրությունները, որոնցում նշված է միայն որոշակի գումարաչափ, որի դիմաց նվիրատուն ստացել է որևէ քանակի պատարագաժամեր: Առաջին անգամ այս խնդրին անդրադարձել է Թադ. Ավդալբեգյանը իր «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրության մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար» հոդվածում²: Իր այդ հոդվածում նա հիմնավոր կերպով բացատրում ու բացահայտում է պատարագ պատվիրելու համար անհրաժեշտ գումարը, որն է 20-ից մինչև 25 դահեկանը՝ իհարկե այդ արժեքը ստանալով թվաբանական միջին հանելով³: Հարկ է սակայն հաշվի առնել, որ Թադ. Ավդալբեգյանի ժամանակ հայտնի վիմագրերի թիվը անհամեմատ ավելի քիչ էր, քան կա ներկայումս: Բացի այդ իր այդ ուսումնասիրության մեջ նա անտեսել էր մատենագիր սկզբնաղբյուրները, այն է հիշատակարանները: Հաշվի առնելով այդ ամենը մենք կփորձենք այս գլխում հնարավորինս ճշգրտել ու լրացումներ մտցնել մեծանուն գիտնականի եզրահանգումներում: Ինչպես նշում է Թադ. Ավդալբեգյանը պատարագների գնի հստակեցումը հնարավորություն կտա, որ կազմվեն կայքերի ու այլ ապրանքների գների տախտակներ, իսկ պատարագ պատվիրելու միջին սակագնի հայտնագործումը հնարավորություն կընձեռնի ստեղծելու յուրահատուկ մի «Վիմական Ջամբո»⁴: Ինչպես նշում է հեղինակը, չկա պատարագի սակագին, որը չունենա շեղումներ, և ինչպես ցույց է տալիս նրա ուսումնասիրության երկրորդ տախտակը այդ շեղումները տատանվում են 5-ից մինչև 75 դահեկան⁵: Մեծանուն գիտնականը շատ ճշգրիտ կերպով վերլուծում ու մեզ է ներկայացնում արծաթ-ոսկի փոխհարաբերակցությունները՝ ապացուցելով, որ միջնադարում ոսկու և արծաթի հարաբերությունը եղել է 1 առ 10⁶: Նա նաև շատ ճշգրիտ քննության է ենթարկում յուրաքանչյուր դրամատեսակի քաշը, համեմատում դրանց գինը իր ժամանակ շրջանառության մեջ գտնվող խորհրդային ռուբլու հետ, ուստի, ժամանակ չկորցնելու համար մենք չենք անդրադառնում այդ հարցերին⁸: Իր ուսումնասիրության մեջ նա օգտագործել ու քննել է հետևյալ վանքերի արձանագրությունները՝ 1. Այրի-

³ Թադ. Ավդալբեգյանը, «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրության մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար», Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 305-337: պատարագների գների անդրադարձ է կատարել նաև Գ. Հովսեփյանը, Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պոռոշեանք Հայոց պատմության մեջ, Նյու-Յորք, 1942/1943, հատ. 3, էջ ԻԲ-ԻԳ:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Թադ. Ավդալբեգյանը, «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրության մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար», էջ 328:

⁶ Նույն տեղում, էջ 318:

⁷ Թադ. Ավդալբեգյանը, «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրության մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար», էջ 331:

⁸ Նույն տեղում, էջ 309-314:

վանք, 2. Աղջոց ս. Ստեփանոս, 3. Արգաքանի Նեղոսի ս. Աստվածածին, 4. Բագնայր, 5. Գոշավանք, 6. Դսեղի Բարձրաքաշ, 7. Թանահատ, 8. Կեչառիս, 9. Հաղբատ, 10. Հաուց թառ, 10. Հոռոմայր, 11. Հոռոմոս, 12. Մակարավանք, 13. Նորավանք, 14. Թորոտ⁹: Ուստի մենք կանդրադառնանք միայն վերոնշյալ վանքերի Իր աշխատանքի Թաղ. Ավդալբեգյանին անհայտ նվիրագրերին, իհարկե մեր կողմից կազմված աղյուսակները հարստացնելով նաև այլ հոգևոր հաստատությունների նվիրագրերով: Իր հոդվածի վերջում նա բերել է մի շարք թեզիսներ: Նա գրում է.

«1. Հայաստանում ուշ միջնադարի ժամ-պատարագները ենեցել են իրենց սակագինը և 2. Այս սակագնի հիման վրա կարելի է հաշվել և եզրակացություններ անել ուշ միջնադարի տնտեսական կյանքի զանազան երևույթների մասին»¹⁰:

Ապա Թաղ. Ավդալբեգյանը արդարացիորեն նշում է. «Մեզ թվում է, որ այս թեզիսները հաստատուն են ու անտարակուսելի: Մնացած չորս թեզիսը մեր առաջին թեզիսի կենկրետացման են վերաբերվում»¹¹:

Այժմ անդրադառնանք այդ վերջին երկու¹² թեզիսներին ու փորձենք քննել դրանք մեկ առ մեկ: Դրանք են.

«1. Ուշ միջնադարում ժամ-պատարագների միջին սակագինը 20-25 դահեկանն է կամ 200-250 գրամ, սակագնի տատանման սահմաններն են՝ ցածից 5 դահեկան ու բարձրից 75 դահեկան:

2. Միջին սակագնի միջնադարյան արծաթի կշիռն է 200-ից մինչև 1000 գրամ ...»¹³:

Հիմնվելով մեծանուն գիտնականի հաշվարկների վրա կարելի է եզրահանգել, որ նրա հաշվարկած պատարագի միջին գինն այժմ հավասար կլիներ 9900 դրամից մինչև 50000 դրամ¹⁴, ինչը զարմանալի զուգադիպությամբ պահպանվել է նաև ներկայումս¹⁵:

Ինչպես գրել է հենց ինքը՝ այս խնդրի առաջին ուսումնասիրողը, սակագնի տատանման սահմաններն են՝ ցածից 5 դահեկան ու բարձրից 75 դահեկան: Հարց է առաջանում. արդյո՞ք այդքան մեծ տատանման պարագայում նպատակահարմար էր կատարել ժամ-պատարագների սակագնի միջինացում: Այս հարցին պատասխանելու համար մենք կազմել ենք աղյուսակներ: Եվ այդ աղյուսակների կազմման ժամանակ հասել մի շարք եզրահանգումների.

1. Ըստ էության, Մեծ Հայքի յուրաքանչյուր տարածաշրջան, երբեմն նույնիսկ յուրաքանչյուր վանք ունեցել է իր կողմից սահմանված գինը:

2. Այդ գինը պայմանավորվել է մի շարք չափանիշներով:

ա. Կարելի է ենթադրել, որ գնի տատանումը հաճախ պայմանավորված է եղել, թե որ տոնի ժամանակ է հավատացյալը պատվիրել պատարագել իր համար: Ըստ այդմ էլ նույն վանքի ներսում եղել են տոներ, մասնավորապես տաղա-

⁹ Նույն տեղում, էջ 308:

¹⁰ Նույն տեղում, էջ 336:

¹¹ Նույն տեղում:

¹² Թաղ. Ավդալբեգյանի 5 ու 6-րդ թեզիսները զուտ ժամանակային ու գնային առումով հնացած են, ուստի դրանց անդրադառնալու կարիք չկա:

¹³ Թաղ. Ավդալբեգյանը. «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրության մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար», էջ 336:

¹⁴ Հաշվարկը կատարված է՝ հիմնվելով Թաղ. Ավդալբեգյանի կատարած հաշվարկների ու դոլար/խորհրդային ռուբլի փոխառնչությունների հիման վրա:

¹⁵ Այդ մասին մեզ բանավոր պատմել է Հովհաննավանքի հոգևոր հովիվ տեր քահանա Զարգարյանը:

վար տոները, կամ այն սրբերի, որոնց պաշտամունքը լայն տարածում էր գտել տվյալ տարածքներում (օրինակ՝ Սբ. Սարգսի տոնը), որոնք արժեցել են ավելի թանկ, քան մյուս տոների ժամանակ մատուցվելիք պատարագների գները: Անհամեմատ ավելի բարձր գին են ունեցել տվյալ վանքի ուխտի օրերին մատուցվելիք պատարագները:

բ. Պատարագի գինը պայմանավորված է եղել նաև տվյալ վանքի մեծահռոչակությամբ:

3. Ինչպես հայտնի է՝ Մեծ Հայքի նահանգները ունեցել են տնտեսական տարբեր զարգացվածություն, ուստի առավել նպատակահարմար է պատարագների միջին գին սահմանել առանձին տարածաշրջանների, նույնիսկ առանձին վանքերի պարագայում, այն է, յուրաքանչյուր նահանգի ցուցաբերել «անհատական» մոտեցում:

Սակայն մեկ պատարագաժի համար տրվելիք գումարի հաշվարկումը հաճախ բարդանում է, երբ նվիրատուն տալիս հստակ գումար ու պատվիրում իր համար պատարագել տվյալ վանքի բոլոր եկեղեցիներում: Որպեսզի հնարավոր լինի ճշտել այդ մեկ պատարագի գինը, մենք առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքով: Բանն այն է, որ միջնադարյան Հայաստանում եկեղեցի ասելով հասկացել են ոչ միայն առանձին եկեղեցու կառույցը, այլև եկեղեցու ներսում գտնվող պատարագի սեղան ունեցող խորանը կամ խորանները¹⁶:

Հարկ է նկատել, որ (ինչպես վերը ասվեց) խորաններ ունեցել են ոչ միայն եկեղեցիները, այլև զանգակատները, մատուռները, նույնիսկ մատուռ-տապանատները, որոնք վիմագրերում հաճախ «եկեղեցի» են կոչվել:

Այժմ ըստ մեր կողմից քննված վիմագրերի կարելի է փորձել սահմանել վերոնշյալ միջին գինը: Պատկերը հետևյալն է Անի մայրաքաղաքում՝ 8,5 դահեկան (իհարկե աղյուսակից հստակ է, որ կան նաև բացառություններ), Վայոց Ձորում՝ 20 դահեկանը (Այն փաստը, որ Սբ. Զատիկի տոնը արժեցել է 100 դահեկան, իսկ Տեառնընդառաջը և Բուն Բարեկենդանն յուրաքանչյուրը 50 դահեկան, հերթական անգամ ապացուցում է այն փաստը, որ պատարագի գինը կախված է եղել նաև այն հանգամանքից, թե որ տոնի ժամանակ է այն պատվիրվել: Ըստ այդմ էլ մենք ականատես ենք այս գնային տատանումներին), Տավուշում՝ 20 դահեկանը, Լոռիում՝ 26 դահեկանը, Արագածոտնում՝ 33 դահեկանը, Կոտայքում՝ 23 դահեկանը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ս. Մարինե եկեղեցում թողած Խէչանի նվիրագիրը, որը ամենաուշ մեզ հայտնի պատարագ պատվիրելու վիմագիրն է, 1847 թվականի է. նվիրատուն 25 թուման է նվիրաբերում՝ ստանալով մեկ պատարագ¹⁷:

Այսպիսով կարելի է եզրահանգել.

1. Մեծ Հայքի յուրաքանչյուր տարածաշրջան, երբեմն նույնիսկ յուրաքանչյուր վանք ունեցել է իր կողմից սահմանված գինը:

2. Այդ գինը պայմանավորվել է, թե որ տոնի ժամանակ է հավատացյալը պատվիրել պատարագել իր համար: Ըստ այդմ էլ նույն վանքի ներսում եղել են տոներ, մասնավորապես տաղավար տոները, կամ այն սրբերի, որոնց պաշտա-

¹⁶ Գ. Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 180:

¹⁷ Մաղում., Աշտ., 214:

մունքը լայն տարածում էր գտել տվյալ տարածքներում (օրինակ՝ Մբ. Սարգսի տունը), որոնք արժեցել են ավելի թանկ, քան մյուս տոների ժամանակ մատուցվելիք պատարագների գները: Անհամեմատ ավելի բարձր գին են ունեցել տվյալ վանքի ուխտի օրերին մատուցվելիք պատարագները:

բ. Պատարագի գինը պայմանավորված է եղել նաև տվյալ վանքի մեծահերոջակությամբ:

3. Մեծ Հայքի մյուս նահանգներում պատարագ պատվիրելու միջին գինը վերջնականապես հնարավոր կլինի որոշել միայն տարիներ հետո, երբ յուրաքանչյուր տարածաշրջանից գիտական շրջանառության մեջ դրված կլինեն բավարար քանակությամբ արձանագրություններ:

Айк Акопян – Проблема возмещения литургий. – В период развитого средневековья было распространено явление покупки литургии. Освещение проблемы возмещения литургий имеет большое значение в вопросе исследования экономики средневековья. Для получения литургии дарители делали много пожертвований (недвижимая и движимая собственность), строили церкви и др. Однако были многие случаи, когда даритель просто дарил некую сумму денег и взамен получал определенное количество литургий. Каждый регион Великой Армении, а иногда даже каждый монастырь, имел конкретно установленные тарифы для получения литургий.

Hayk Hakobyan – The problem of indemnification of liturgies. – The phenomenon of mass purchasing was widespread during the High Middle Ages. The interpretation of the problem of liturgy indemnification is very important in the research of economical aspects of the Middle Ages. The donators donated real estate and movable property, built churches etc. to get liturgies. But it often happened that the donator has donated certain sum directly in return for certain liturgies. Every region of Greater Armenia, sometimes even every monastery had prescribed price list for ordering the liturgy.

ՊԱՅՔԱՐ ՎՐԱՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ՀԱՄԱՐ (1906-1907թթ.)

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՑԱՆ

ԵՊՄՀ համաշխարհային պատմ. ամբիոնի ասպիրանտ

Ռուսաստանում առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը (1905-1907) իր խոր հետքը թողեց նաև վրաց հոգևորականության եկեղեցական ինքնագիտակցության վրա: Վրաց հոգևոր գործիչների մեջ հասունացավ իրենց եկեղեցու ինքնավարության վերականգման անհրաժեշտության պահանջը, որոնք սկսեցին բացահայտորեն հակադրվել Վրացական Էկզարխատին:

Վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման հարցը քննարկվեց <<Նախախորհրդարանի Աշխատանքների>> նիստերում, որի ընթացքում էլ ուժեղացան ուղղափառ վրացիների եկեղեցական ինքնավարության ձգտումները: Սակայն, այս նիստերում, որի հետ սկզբնական շրջանում վրաց հոգևորականությունը մեծ հույսեր էր կապում, վրացական եկեղեցու հարցը քննարկվում էր զուտ տեսականորեն: Վրաց հոգևորականությունը ամեն կերպ՝ պատմական անցյալի հիմնավորումներով, իրավական, բարոյական տեսանկյունից փորձում էր ապացուցել, որ <<ինքնավարական շարժումը>> զուտ հեղափոխական է, քաղաքական, անջատողական, որը միավորել էր եկեղեցական կարիերիստներին և հեղափոխական-դեմոկրատներին, որոնք երազում էին Վրաստանի անկախության մասին:

Նախախորհրդարանի Աշխատանքները վրացական կողմի համար դրական որևէ արդյունք չտվեցին, և հենց որ հեղափոխությունը կայսրությունում մարեց (1907 հունիս) թուլացավ նաև հարցի հրատապությունը: Շատերը կարծիք հայտնեցին, որ վրացիների ինքնավարությունը կվնասի քաղաքական միասնությանը և հակասում է Ռուսաստանի պետական շահերին: Վրացական եկեղեցական հարցը այդպես էլ լուծում չստացավ:

Բանալի բաներ. Ռուսաստան, ինքնակալություն, եկեղեցական քաղաքականություն, վրացական Էկզարխատ, նախախորհրդարանի աշխատանքներ:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման հարցը, ռուսական եկեղեցու կառուցվածքային բարեփոխումների կոնտեքստում, դեռևս պահպանել է իր արդիականությունը՝ XX դ. սկզբին Անդրկովկասում ինքնակալության եկեղեցական քաղաքականության ուսումնասիրման ժամանակ:

XIX դ. սկզբին ռուսական ինքնակալությունը Արևելյան և Արևմտյան Վրաստանում վերացրեց կաթողիկոսական համակարգը՝ նրանց փոխարեն ստեղծելով Վրացական Էկզարխատը: Կարթվելական եկեղեցու՝ ինքնուրույնության վերականգման վրաց հոգևորականության ձգտումները իր արտահայտումը գտավ ռուսական հեղափոխության ժամանակ: Տեղի հոգևորականությունը վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման հարցը բարձրացրեց 1905 թ. օգոստոսի 10-ին, ինչը բացասաբար գնահատվեց Վրացական Էկզարխատի ղեկավարության կողմից¹: Նիկոլայ II կողմից 1905 թ. հոկտեմբերի 17-ի Մանիֆեստի

¹ Национальный архив Грузии (НАГ), ф. 1458, д. 173, л. 16, 16 об

հրատարակում, որը կոչված էր կայսրությունում ճնշելու հեղափոխությունը, քաղաքացիական, այդ թվում նաև եկեղեցական ազատություններ շնորհեց²:

1905թ. վրաց հոգևորականության կողմից վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման փորձից հետո Սուրբ Սինոդը 1906թ. որոշեց այդ հարցը փոխանցել Համառուսական Ժողովի քննարկմանը: Սինոդը հենվում էր եկեղեցական օրենքների վրա՝ հիշատակվելով, որ եկեղեցին ինքնավար հռչակելու համար պահանջվում է այն եկեղեցու թույլտվությունը, որի իրավասության մեջ է մտնում անկախություն խնդրող եկեղեցին³:

1906թ. հունվարի 16-ին ցարական բարձրագույն հրամանով ստեղծվեց այսպես կոչված <<Նախախորհրդարանի Աշխատանքներ>> հատուկ մարմինը, որը կոչված էր իրականացնելու աստվածաբանական և կանոնական բոլոր այն հարցերի նախնական մշակումը, որոնք պետք է ներկայացվեին առաջիկայում հրավիրող Տեղական Ժողովի քննարկմանը: Նախախորհրդարանի նախագահ նշանակվեց Պետերբուրգի միտրոպոլիտ Անտոնին (Վադկովսկի)⁴:

Նախախորհրդարանի Աշխատանքների կազմի մեջ մտան եկեղեցական բարձրաստիճանավորներ, աշխարհիկ անձիք, որոնք աստվածաբանության, եկեղեցու պատմության, կանոնական իրավունքի ասպարեզում հայտնի էին իրենց գիտական աշխատանքներով: Նախախորհրդարանը կազմված էր յոթ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը մշակելու էր հարցերի որոշակի շրջանակ: Երկրորդ բաժինը քննարկելու էր հարցեր՝ կապված թեմական կառավարման, դրանց բարեփոխման և թեմական բարձրաստիճանավորների իրավունքների ընդարձակման հետ կապված հարցեր: Միևնույն ժամանակ այս բաժինը քննարկելու էր շատ բարդ և բավականին հիվանդագին՝ Ռուսական ուղղափառ եկեղեցու կազմում Վրացական եկեղեցու կարգավիճակի մասին հարցը: Երկրորդ բաժինը գլխավորում էր Լիտվիայի արքեպիսկոպոս Նիկանդրը: Հենց նախախորհրդարանի Աշխատանքների ընթացքում էլ (1906-1907թթ.) ուժեղացան ուղղափառ վրացիների <<ինքնավարական>> ձգտումները: Այդ ժամանակից սկսած եկեղեցու ինքնավարության հարցը արդեն չէր իջնում օրակարգից:

1906թ. հունվար-փետրվար ամիսներին Սուրբ Սինոդում այլ թեմաների հետ մեկտեղ քննարկվեց նաև վրացական եկեղեցական հարցը: Այդ նպատակով Սուրբ Սինոդին կից ստեղծվեց Հատուկ Խորհրդակցությունը, որի նախագահ նշանակվեց նախկին Էկզարխ միտրոպոլիտ Վլադիմիրը: Հարց բարձրացվեց այն մասին, որ եպիսկոպոսները Էկզարխաթում չունեն սեփական կոնսիստորիա (եկեղեցական վարչական հիմնարկ) և կախված են Վրաց-Իմերեթական սինոդական գրասենյակից, որը ոչ կանոնական հաստատություն էր և գործելով որպես վարչական հաստատություն՝ սահմանափակում էր եպիսկոպոսների իրավունքները:

Էկզարխաթի բարձրաստիճան հոգևորականների հաշվետվությունում նշվում էր, որ Էկզարխաթի հոգևոր հաստատությունները չեն համապատասխանում իրենց նշանակությանը, դասավանդումը անցկացվում է հնացած դասագրքերով, որոնցում բավականաչափ տեղ չի հատկացվում վրացերենին, ինչի հետե-

² *Ольденберг С. С.* Царствование императора Николая II. М., 1992, с. 289 - 291.

³ *Скुरат К.Е.*, История Поместных Православных церквей, М., 1994, с. 31,32

⁴ *Щеглов Г.Э.*, Степан Григорьевич Рункевич (1867-1924): Жизнь и служение на переломе эпох, Минск, 2008 г., с... 191-192

վանքով էլ հոգևորականությունը պատրաստ չի լինում իր հոտին ծառայելուն, քանի որ նրանք ավարտում են ճեմարանական դասընթացը՝ առանց իմանալու վրաց եկեղեցական լեզուն: Հոտի ներսում զգացվում էր պատվի պակասը, երբեմն անհավատությունը, ինչը ըստ վրաց եպիսկոպոսների կապված էր կրոնական տրամադրությունների անկման և սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման հետ⁵:

Վրացական էկզարխաթի եկեղեցական կառավարման մեջ և եկեղեցական կյանքում առաջացած անկարգությունները քննարկելուց հետո խորհրդակցությունը անցավ այն միջոցների քննարկմանը, որոնք կարող էին հարթել այդ թերությունները և որոնք հետո պետք է տրվեին Համառուսական եկեղեցական ժողովի դիտարկմանը: Առաջարկվեց մեղմ ծրագիր: Ընդունելով տեղացի եպիսկոպոսներին լիարժեք իշխանություն շնորհելու անհրաժեշտությունը՝ խորհրդակցությունը առաջարկեց Վրացական թեմը բաժանել երկու ինքնուրույն թեմերի՝ Կարսի և Թիֆլիսի: Վրացական բոլոր թեմերը դարձնել ինքնուրույն: Սակայն, Հատուկ խորհրդակցությանը մասնակցող վրաց եպիսկոպետները՝ Կիրիոնը և Լեոնիդը մերժեցին Վրացական ինքնավարության վերականգնումը: Ինքնավարության վերականգնման հարցը Հատուկ խորհրդակցությունում այդպես էլ չքննարկվեց:

Հատկանշանակ է, որ մինչև այս պահը, հստակ չէր կառավարության դիրքորոշումը՝ կապված վրացական եկեղեցական հարցի հետ: Անորոշ էր նաև Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի տեսակետը: Նա եկեղեցական ինքնավարության հարցը համարում էր կանոնական, որը դուրս էր փոխանորդի իրավասության սահմաններից⁶: Սակայն աստիճանաբար, շարժման ընդլայնումը սկսեց Պետերբուրգին սպառնացող թվալ: Փոխարքային ուղղված նամակում Սուրբ Սինոդի օբեր-պրոկուրոր Ս. Դ. Օբելենսկին մատնանշեց Ռուսաստանում ուղղափառ եկեղեցու հատուկ կարգավիճակը, ընդգծելով, որ ինքնուրույն եկեղեցական միավորի կազմավորումը մի եկեղեցու լիովին տարանջատումն է մյուսից: Հետևաբար նա մտահոգվում էր, որ նման բաժանումը կասրության տարբեր հատվածներում տարբեր ուղղափառ եկեղեցական ռեժիմներ կառաջացնի: Իր այս եզրահանգումները Ս. Դ. Օբելենսկին 1906թ. ապրիլին ներկայացրեց նաև կայսր Նիկոլայ II: Վրջինս հարցը հանձնեց սպասվող Համառուսական ժողովի քննարկմանը⁷:

Հարցի քննարկումը թեժ բնույթ էր կրում հատկապես մամուլում: Հենց սկզբից ընդիմախոսները սկսեցին հայտարարել, որ <<ինքնավարները>>, անտեսելով իրենց հոգևոր պարտականությունները, զբաղվում են քաղաքականությամբ և ըստ էության անջատողականներ են, որոնք իրականում փորձում են հասնել Վրաստանի անկախությանը: Վրաց հոգևորականությունը հաճախ մեղադրվում էր այս կամ այն հեղափոխական ուժերի հետ կապված լինելու մեջ: Իրենք՝ ինքնավարության կողմնակիցները <<անջատողականությունը>> համարում էին շատ լուրջ, բայց մշուշոտ մեղադրանք: <<Նորից վրացիների հասցեին հնչում են

⁵ *Джемал Гамахария*, Святой Священномученик Кирион II(Садзагашвили) и Абязия, Тбилиси, 2006 г., с. 105-106.

⁶ Пол Верт, Православие, инославие, иноверие: очерки по истории религиозного разнообразия Российской империи, М., 2012г., с...81.

⁷ Նույն տեղում, էջ 82.

մեղադրանքներ անջատողականության համար...և նորից մենք մեր կողմից կավելացնենք, որ ոչինչ դրանից դուրս չի գա: Անջատողականություն չկա...եթե չլինի իրականում էլ, ապա կլինի պարոնների պատկերացումներում, ովքեր սիրում են պղտոր ջրում ձուկ որսալ... Եվ այսպես դեռ երկար կլինի, մինչև այն ժամանակ, քանի դեռ հին բյուրոկրատիզմը ապրում է Ռուսաստանում>>⁸:

Ինքնավարության կողմնակիցները հաճախ էին զուգահեռներ անցկացնում Ռուսաստանի և Վրաստանի եկեղեցական բարեփոխումների միջև պնդելով, որ մեղադրել վրացիներին անջատողականության մեջ այն բանի համար, որ նրանք ցանկանում են ունենալ ընտրված կաթողիկոս, այնքան անհիմն կլինի, ինչպես մեղադրել ռուսներին նույն ցանկության համար՝ ունենալ ընտրված պատրիարք⁹: Վրացական անջատողականության մեղադրանքներին պատասխանում է նաև եպիսկոպոս Կիրիլոն: Նա Վրաց ժողովրդի ինքնավարության պահանջը գուտ եկեղեցական է համարում, որում պետք չէր քաղաքական մոտիվներ փնտրել:

Իրականում իսկապես ակնհայտ էր, որ ընդդիմախոսները անգամ չէին կարողանում հաշտվել՝ վրացական եկեղեցու ինքնավարության մասին հարցի քննարկաման փաստի հետ: 1906թ. Հունվարի 26-ին պատմաբան Ն. Դուռնովոն գրում է. <<...վրացական եկեղեցու կանոնական ինքնավարությունը վերադարձնելու մասին հարցը ռուսաֆիկատորների կողմից ծայրահեղ դժգոհություն է առաջացնում: Նրանց քիչ է այն... որ նրանք վրաց ժողովրդին դուրս են հանել Ռուսաստանի և ողջ ռուսականի դեմ, նրանք հիմա ողջ ուժերով փորձում են թույլ չտալ վրացական եկեղեցու վերածնունդը և ընդմիջտ տատանել երկու միահավատ ժողովուրդների միջև եղբայրական զգացմունքները, որոնք գոյություն ունեին մինչև իշխան Գուլիգինի և ավագ երեց Ի. Վոստորգովի Կովկաս ժամանելը>>: Ապա շարունակելով Ն. Դուռնովոն համոզմունք է հայտնում, որ Սուրբ Սինոդը չի ցանկանա խզել իր կապերը վրացական եկեղեցու հետ և կաշխատի մինչև եկեղեցական ժողովի հրավիրումը վերականգնել ռուսական և վրացական եկեղեցիների եղբայրական հարաբերությունները¹⁰:

Վրացական եկեղեցու ինքնավարության մասին հարցը պաշտոնապես բարձրացվեց Նախախորհրդարանի Աշխատանքների եկրորդ բաժնի նիստերի ժամանակ: Այն իր աշխատանքը սկսեց 1906թ. հունիսի 2-ին արքեպիսկոպոս Նիկանդր Ֆենոմենովի (Թիֆլիսի հեզևոր նախկին ռեկտոր) նախագահությամբ: Բոլոր նիստերին ներկա էին՝ Նիկանդրը, եպիսկոպոս Ստեֆանը, պրոֆեսորներ Ի. Ս. Բերդիևիկովը, Ա. Ի. Ալմազովը, Ի. Ի. Սոկոլովը, իսկ վրացական կողմից՝ Սուխումի եպիսկոպոս Կիրիլոն, Իմերեթիայի եպիսկոպոս Լեոնիդը, վրաց պրոֆեսորներ՝ Ա. Խախանովը, Ա. Յագարելին, Ա. Պ. Մալցևը և այլք, ընդհանուր երեսուներկու մարդ:

Նախախորհրդարանի նիստերում լավեցին մի շարք զեկույցներ, որոնք նվիրված էին ինչպես վրացական եկեղեցու ինքնավարության պատմական հիմնավորմանը, այնպես էլ այդ հիմնավորումների հերքմանը: Բացի այդ մի քանի զեկույցներ նվիրված էին՝ Սուրբ Սինոդին վրացական եկեղեցու միավորման պատմությանն ու Էկզարխատի շրջանի գնահատմանը: Ինչպես Հատուկ Խորհրդ-

⁸ Сеператизм и грузины.-Тифлисский листок.-1906, 13 января.

⁹ Пол Верт, Православие, инославие, иноверие..., с. 82.

¹⁰ По поводу агитации против автокефалии грузинской церкви.-Тифлисский листок. 1906, 26 января.

դակցության, այնպես էլ Նախախորհրդարանի Աշխատանքների ժամանակ ակտիվ գործունեություն ծավալեց եպիսկոպոս Կիրիոնը: Նա անգամ հանդգնեց քննադատել Կովկասում ռուս ինքնակալների գործունեությունը: Իր ելույթում Կիրիոնը պնդում էր, որ <<VIIIդ. կեսերից մինչև 1811թ. Վրացական եկեղեցին լիովին անկախ է եղել, և կաթողիկոսները դատել ու ղեկավարել են անկախ որևէ արտաքին ուժի ազդեցության՝ Աստծո խոսքի, առաքելական օրենքների և եկեղեցական կանոնների հիման վրա... սակայն վրաց վերջին՝ Անտոնիո II կաթողիկոսը 1810թ. հրավիրվել է Սուրբ Սինոդ՝ վրաց եկեղեցական հարցերի քննարկմանը մասնակցելու համար, իսկ 1811թ. հունիսի 30-ին նրա փոխարեն, ի խաղտումն Սուրբ Սինոդի 30 և 35 կանոնների Վրաստանի էկզարխի է նշանակվել Սցխեթի Վաղլամը: Նման կերպով խաղտվել են եկեղեցական կանոներն ու իրականացվել է անլսելի անարդարություն՝ եկեղեցական պատմության մեջ չունենալով ոչ մի անալոգիա>>¹¹:

Եթե քննարկման մասնակիցներից մեծամասնությունը կենտրոնացել էին էկզարխների և նրա վարչակազմի նկատմամբ կոնկրետ բողոքների վրա, ապա Կիրիոնը ձգտում էր <<ինքնավարության>> հարցին տալ տեսական հիմնավորում՝ վրացական եկեղեցական հարցը լուսաբանելով նաև իրավական տեսանկյունից: <<Վրաստանը, որը մինչ 1811թ. ունեցել է ինքնուրույն եկեղեցական կառավարում, ի լրումն իր երկու հազարամյա ինքնավարության, ժողովրդական սկզբունքի հիման վրա իր ազգային անկախ եկեղեցու գոյության իրավունքն ունի, որը հռչակվել է քրիստոնեական դարաշրջանի սկզբում>>¹²:

Կիրիոնը տալիս է այն հստակ գաղափարը, որ եկեղեցական հարաբերություններում յուրաքանչյուր ազգ պետք է օգտվի ազատ ինքնորոշումից: Փաստորեն այս կերպ Կիրիոնը բացահայտորեն քննադատում է ցարիզմի եկեղեցական գաղութացման քաղաքականությունը:

Մեծ ուշադրություն դարձվեց եպիսկոպոս Լեոնիդի զեկույցին, որում շեշտվում է, որ վրացական բոլոր էկզարխները, սկսած 1817թ. ռուսներ էին և չէին տիրապետում իրենց հոտի լեզվին: Նրանք օտար էին մնում տեղի եկեղեցական սովորույթներին, ծանոթ չէին վրացական եկեղեցու առանձնահատկություններին և իրենց գրասենյակից այն կողմ ոչինչ չէին տեսնում: Ի պատասխան դրան պահպանողական եկեղեցական ծառայող, ավագ երեց Իոհան Վոստորգովը, որը Կովկասում վարչական ծառայության տասնմեկ տարվա փորձ ուներ, հերքեց էկզարխաթի կառավարման դեմ հնչեցված բոլոր մեղադրանքները: Նա հայտարարեց, որ կարող է բերել բազմաթիվ օրինակներ և մատնանշել տասնյակ ծխեր, որոնցում <<բռնի արմատավորվել է վրացական լեզուն>>¹³:

Այսպես, էկզարխաթի կառավարման դեմ, վրացական կողմի մեղադրանքները, չափազանցված համարվեցին: Ռուս գործիչները համոզված էին, որ <<ինքնավարական շարժումը>> զուտ հեղափոխական է, քաղաքական, որը միավորել էր եկեղեցական կարերիստներին և հեղափոխական-դեմոկրատներին, որոնք երազում էին Գասպիսից մինչև Սև ծով Վրաստանի անկախության մասին:

Այսպիսով, նախախորհրդարանի նիստերին միմյանց կտրուկ հակադրվեցին երկու կողմեր՝ վրացական կողմից եպիսկոպոսներ Կիրիոնը, Լեոնիդը, պրո-

¹¹ *Джемал Гамахария*, Святой Священномученик Кирион II..., с. 395, 396.

¹² Пол Верг. Православие, инославие, иноверие..., с. 83.

¹³ Նույն տեղում, էջ 84:

Ֆետորներ Ա. Ցագարելին և Ն. Մառը, որոնք անդում էին, որ Էկզարխաթը վրացական եկեղեցուն տարել է անկման, և ռուսական կողմը, ի դեմս եպիսկոպոս Ստեֆանի (Մոզիլելսկի), Իոհան Վոստորգովի, պրոֆետորներ Ի. Բերդինկովի, Ա. Ալմազովի և Ն. Գլուբոկովսկու, որոնք տեղին էին համարում Էկզարխաթի կառավարումը:

Նախախորհրդարանի Աշխատանքների երկորդ բաժնի հունիսյան (2-ին և 8-ին) նիստերը, որոնք ընթացան սուր քննարկումներով, ավարտվեցին ոչ թե ինքնավարության ճանաչումով, այլ Վրաստանի նոր Էկզարխի նշանակումով: Նոր Էկզարխ դարձավ արքեպիսկոպոս Նիկոնը (Մոֆիսկի) (1906-1908թթ.): <<Թվում է՝ Մինոդն այսպես է հասկանում ինքնավարության մասին հարցը>>¹⁴, այդ կապակցությամբ այսպես արձագանքեց Կիրիոնը:

Նիկոնը (Մոֆիսկի) Վրաստանի Էկզարխ նշանակվեց (1906թ. հունիսի 9) այն ժամանակ, երբ Վրացական ուղղափառ եկեղեցու ինքնավարության վերականգման համար պայքարը հասել էր իր գագաթնակետին և վրաց հոգևորականությունը բացահայտորեն արտահայտում էր իր դժգոհությունը: Նիկոնը, բնականաբար, լավ էր հասկանում վրացական տրամադրությունները: Նա վառ պատերակացու էր նաև այն փորձությունները, որոնց միջով ստիպված էր անցնելու, նամանավանդ որ նրա նշանակումից հետո, երբ դեռ չէր էլ ժամանել Վրաստան, վրաց հոգևորականության համագումարը հեռագիր ուղարկեց Պետերբուրգ, ուր բողոքարկում էր Նիկոնի նշանակումը: Եվ՝ Նիկոնը, և՛ Մինոդը նաև <<նախազգուշացվեցին>> վրացական հեզևորականության կողմից, որպեսզի Էկզարխը Կովկաս չժամանի:

Չնայած այս բացահայտ սպառնալիքներին, այնուամենայնիվ, Նիկոնը պաշտոնը ստանձնելու լուրջ մտադրությամբ 1906թ. օգոստոսի 26-ին ժամանեց Թիֆլիս: Երկաթուղային կայարանում նրան դիմավորեց ռուս հոգևորականության պատվիրակությունը՝ վրաց հազևորականության լիովին բացակայությամբ: Փաստորեն սկսվեց բացահայտ բոյկոտ նրա կառավարման դեմ: Սուրբ Մինոդի նոր օբեր-պրոկուրոր Պյոտր Պետրովիչ Իզվոլսկին (1906-1909թթ.) վրաց հոգևորականության բոյկոտը բացատրում է նրանով, որ Նիկոնը <<ձագումով ռուս էր և ոչ թե վրացի>>: Նա համզել էր այն համոզմանը, որ շարժման իրական ոգեշնչողները նրանք էին, ովքեր ոչ մի ընդհանրություն չունեին եկեղեցու հետ, ուստի և ողջ շարժումը ուներ միայն անցումային նշանակություն, որպես քայլ և միջոց քաղաքացիա-վարչական ինքնավարության հասնելու համար¹⁵:

Միոնսկի տաճարում պաշտոնական ընդունելության ժամանակ Էկզարխ Նիկոնին դիմավորեցին միայն ռուս քահանաները և մեկ վրացի՝ Գորիի եպիսկոպես Պետրոսը (Կոնչոշվիլի), ով իր պաշտոնական ողջույնի խոսքում բացահայտորեն սպառնաց Էկզարխին՝ կոչ անելով նրան <<խաղաղությամբ>> ապրել վրացիների հետ: Իր պատասխան ելույթում Նիկոնը հանգիստ և հավասարակշռված շարադրեց Վրաստանում իր գործունեության ծրագիրը: Նա ասաց, որ ինքնավարության մասին հարցի լուծումը իրենից կախված չէ և պատկանում է Ժողովի որոշմանը և որ անհրաժեշտ է բազմակողմանի ուսումնասիրել հարցը՝ նրա ճիշտ հանգուձալուցմանը նպաստելու համար¹⁶:

¹⁴ *Джемал Гамахария*, Святой Священномученик Кирион II..., с. 74.

¹⁵ Всеподданнейший отчёт Обер-прокурора Святейшего Синода по ведомству православного исповедания за 1905- 1907гг., СПб, 1910 г., с. 167, 169.

¹⁶ *Л.И. Софийский*, Высокопреосвященный Никон, архиепископ Карталинский и Кахетинский, Экзарх Грузии (1861-1908), СПб, 1909, с. 115-116.

Բնական է, որ նման հայտարարությունները, ինչքան էլ զուտ կանոնական տեսանկյունից ճիշտ լինեին, դժվար թե դուր կգային վրաց եկեղեցական ծառայողներին: Բոլորտ հայտարարելով նրան՝ վերջիններս փորձում էին անտեսել նրան և վրացական թերթերում չեղած փասեր հրատարակելով՝ նրա դեմ դուրս հանել վրաց ժողովրդին: Չնայած դրան, մամուլում գտնվեցին անկախ թերթեր, որոնք գնահատեցին Էկզարխի առաջին իսկ քայլից ցուցաբերած հեռատեսությունը, իմաստությունը և մեծ համբերությունը:

Շարունակելով բացահայտ պայքարը վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման համար, 1906թ. հոկտեմբերի 12-14-ը Թիֆլիսում գումարվեց մասնավոր խորհրդակցություն՝ եպիսկոպոսներ Լեոնիդի (Իմերեթիա), Կիրիլոնի (Սուխում), Գեորգիի (Գուրի-Մինգրելսկ) և Պետրոսի (Ալավերդի) մասնակցությամբ, որոնք լիազորված էին թեմերի հոգևորականության կողմից: Խորհրդակցությունը որոշում կայացրեց, մինչև ինքնավարության մասին հարցին վերադառնալը, Էկզարխի հետ ունենալ միայն վարչական հարաբերություններ: Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 17-ին, Թիֆլիսում եպիսկոպոս Կիրիլոնի գլխավորությամբ կազմվեց <<ինքնավարների միությունը>>: Միևնույն ժամանակ Իմերեթիում <<ինքնավարության>> շարժման ղեկավարման համար ստեղծվեց հատուկ բյուրո՝ կազմված տաս մարդուց¹⁷:

1906թ. նոյեմբերին Պետերբուրգում վերսկսվեց Նախախորհրդարանի երկրորդ բաժնի նիստերը, որտեղ այս անգամ գիտակցաբար չհրավիրվեց Սուխումի եպիսկոպոս Կիրիլոնը: Վրաց հոգևորականությանը ներկայացնում էր Իմերեթիի եպիսկոպոս Լեոնիդը, որի պահանջով բաժնի աշխատանքներում ներգրավվեցին Պետերբուրգում աշխատող գիտնականներ՝ Ն. Մառը և Ա. Ցագարելին: 1906թ. դեկտեմբերի 5-ին վեցերորդ նիստում զեկույցով հանդես եկավ Ա. Ցագարելին և Ա. Խախանաշվիլին: Իր կամքից անկախ, եպիսկոպոս Կիրիլոնը չմասնակցեց երրորդից վեցերորդ նիստերին: Սակայն, այնուամենայնիվ, նա հրավիրվեց Պետերբուրգ և այլևս Սուխում չվերադարձավ:

Նախախորհրդարանի բոլոր քննարկումները, սակայն, ապարդյուն էին անցնում, քանզի գնալով վրացական կողմի համար ակնառու էր դառնում այն միտումը, որ հնչող զեկույցները տարվում էին՝ Անդրկովկասում ընդհանուր եկեղեցական հարցերը գնահատելու ուղղությամբ: Լավ հասկանալով դա, վրաց հոգևորականները և գիտնականները, ի նշան բողոքի, հրաժարվեցին Նախախորհրդարանի հետագա աշխատանքներին մասնակցելուց: Վերջին երկու՝ ութերորդ (դեկտեմբերի 12) և իններորդ (դեկտեմբերի 13) նիստերում վրացական եկեղեցու ինքնավարությունը դիտարկվում էր տեսականորեն: Այդ նիստերին վրացական կողմը ներկա չէր: 1906թ. դեկտեմբերի 13-ին Նախախորհրդարանի Աշխատանքների երկրորդ բաժնի վերջին իններորդ նիստում, որին մասնակցում էին ընդհամենը 10 հոգի, ավագ երեց Ի. Գոստորգովը քննարկմանը ներկայացրեց՝ Վրաստանում եկեղեցու վերակազմավորման երկու նախագիծ:

Առաջին նախագծով առաջարկում էր Վրացական Էկզարխաթը պահպանել առանց փոփոխությունների: Միայն Սուխումի թեմը առանձնանալու էր Էկզարխաթից՝ մնալով կա՛մ ինքնուրույն, կա՛մ ներգրավվելու էր Ստավրոպոլի թեմի

¹⁷ *Дякин В.С.*, Национальный вопрос во внутренней политике царизма (XIX-началоXX вв), СПб, 1988 г., с. 658, 659.

կազմի մեջ: Ոչ վրացի ծխերի համար պետք է կազմվեր ռուսական թեմ՝ Էկզարխ միտրոպոլիտի գլխավորությամբ: Նախագծով ենթադրվում էր երկու ճեմարանների գոյություն՝ վրացական և ռուսական: Երկրորդ նախագծով Վրացական Էկզարխաթը վերացվում էր, և հիմնվում է Կովկասյան երկու միտրոպոլյան շրջաններ: Մեկը գուտ վրացական, որի կազմի մեջ պետք է մտնեին Վրաստանի, Իմերեթի, Գուրի և Մինգրելի թեմերը: Ոչ վրաց հասարակության, հատկապես ռուսների համար, Անդրկովկասում ստեղծելու էր ռուսական միտրոպոլյան շրջան, որը ղեկավարում էր ռուս միտրոպոլիտի կողմից, իսկ կենտրոնը պետք է լիներ Թիֆլիսը: Այս շրջանի կազմի մեջ մտնելու էր Սուվաուրի թեմը՝ Բաթում և Վլադիկավկազ քաղաքներով:

Երկրորդ նախագծը ընդունվեց 7 կողմ և 3 դեմ ձայներով: Վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման մասին նախագիծը մերժվեց: Պատմական փաստերով և եկեղեցական կանոններով ինքնավարության հիմնավորումը կասկածելի համարվեցին: Այսպես, ինքնավարության վերականգման ծրագիրը այս անգամ էլ ձախողվեց: Շատերը կարծիք հայտնեցին, որ վրացիների ինքնավարությունը կվնասի քաղաքական միասնությանը և հակասում է Ռուսաստանի պետական շահերին: Վրացական եկեղեցական հարցը այդպես էլ լուծում չստացավ¹⁸:

1907թ. ապրիլին Վրաստանի քաղաքական կուսակցությունների և եկեղեցական շրջանների ներկայացուցիչների ժողովը պաշտոնական դիմում հղեց Պետական Դումային, որում պահանջում էր Վրաց ուղղափառ եկեղեցու ինքնավարության վերականգնումը: Սակայն Վրացական Էկզարխաթի հոգևոր իշխանությունները շարունակում էին մնալ այն համոզմանը, որ Վրացական Ուղղափառ եկեղեցու ենթակայությունը Սուրբ Մինդիին ամենևին էլ չի հակասում եկեղեցական կանոններին, իսկ ինքնավարների շարժման ետևում թաքնված են Կովկասի քաղաքական-հեղափոխական ուժերը:

Որքան մոտենում էր Համառուսական եկեղեցական ժողովի հրավիրումը, այնքան ավելանում էր տագնապը վրաց հոգևերականության շրջանում: Վերջիններս տարակուսում էին. <<Գարե՞լի է արդյոք հույս դնել ռուսական բարձրաստիճանավորների ժողովի վրա՝ հնագույն Իվերական եկեղեցու ճակատագրի անաչառ որոշման համար, որոնց տրամադրությունները բավականին ակնհայտ էր Նախախորհրդարանի Աշխատանքների ժամանակ... Անդամների մեծամասնությունը դեմ արտահայտվեցին վրացական եկեղեցու ինքնավարությանը ո՛չ նրա համար, որ Իվերական եկեղեցին չունի բավական համոզիչ պատմական և կանոնական փաստեր, մոտավորապես 100 տարի առաջ կորցրած ինքնավարությունը վերականգնելու համար, այլ միայն նկատի ունենալով այն պատկերացումները, որ վրացական եկեղեցու ինքնավարությունը կապված է Վրաստանի ինքնավարության հետ, հետևաբար այդ հարցը ոչ այնքան եկեղեցական է, որքան քաղաքական, ինչը կարող է սպառնալ ռուսական կասրության ամբողջականությունը>>¹⁹:

Կարծես կանխատեսելով Համառուսական ժողովի դիրքորոշումը՝ վրաց հոգևորականության մի մասը անհրաժեշտ գտավ հետաձգել հարցի լուծումը

¹⁸ *Джема́л Гамаха́рия*, Святой Священномученик Кирион II..., с. 81, 82.

¹⁹ К вопросу об автокефалия грузинской церкви, - Закавказье, - 1907г., 8 августа.

<<առավել արդյունավետ պահի>> հասկանալով, որ իրենք պետք է աշխատանքներ տանեն ռուս եկեղեցականներին համոզելու համար, որ <<վրացիները անջատողականներ չեն և որ վրացիների ձգտումները ուղղված են բարեկեցիկ եկեղեցական կյանքի ստեղծմանը>>²⁰:

Սակայն բոլոր այս քննարկումները իզուր եղան: Հենց որ հեղափոխությունը կասրությունում մարեց (1907թ, հունիս), և ներքին գործերի նախարար Պ. Ա. Ստոլիպինը գիտակցեց, թե ինչպիսի կրքեր կարող են բորբոքվել, եթե հոգևորականությանը թույլատրեն հավաքել, ժողովի հրավիրումը անիրական դարձավ:

Իսկապես, կարելի է ենթադրել, որ այս ժամանակից սկսած <<ինքնավարության>> հարցը մասամբ կորցրեց իր հրատապությունը: Հենց այդպես էր Վորոնցով-Դաշկովը իր կառավարման առաջին երկու տարվա հաշվետվությունում գնահատում իրավիճակը, որը 1907թ. հուլիսին ներկայացրեց կայսր Նիկոլայ II: <<Վրացական անջատողականությունը, եթե այդպիսին կա, առավել վառ արտահայտվել է վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման մասին հարցի բարձրացումով, բայց... այդ շարժումը իրենից խորը երևույթ չի ներկայացնում, հետաքրքիր է միայն հոգևորականության, այն էլ բարձրաստիճան հոգևորականության համար>>: Փոխարքան փաստում է, որ հասարակ ժողովուրդը չի մասնակցում այդ շարժմանը և իր հոգևորականության շահերին ծայրահեղ անտարբեր է: Նա հաստատում է, որ շարժումը <<ծագել է բացառապես ընդհանուր հեղափոխական շարժումների ճնշման ներքո>> և, շնորհիվ 1907թ. իրադրության կայունացման, հարցը կարող էր ինքն իրեն չքանալ, եթե բավարարվեին վրաց հոգևորականության որոշակի պահանջները: Ամփոփելով <<Վրացական եկեղեցու ինքնավարության մասին>> իր հաշվետվությունը՝ Վորոնցով-Դաշկովը ցարին հավաստիացնում է, որ ներկա պահին վրաց հոգևորականությունը հարցին այլևս չի վերագրում այնպիսի <<այրող նշանակություն>>, ինչպես առաջ և ի հակառակ իր նախկին հայտարարությունների պատրաստ էր շատ զիջումների>>²¹:

Եվ այսպես, վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման պահանջների առաջացումը սերտորեն կապված էր 1905թ. կասրությունում առաջացած քաղաքական իրավիճակի հետ, երբ ցարական ռեժիմը հայտնվեց ճգնաժամի եզրին, իսկ ծայրամասերի ժողովուրդները սկսեցին ակտիվորեն հանդես գալ իշխանության դեմ: Այն նաև կապված էր Անդրկովկասում ստեղծած ուղղափառ եկեղեցական Կազմակերպության բնույթի հետ: Դժվար է հաստատել՝ իրոք Արևելյան Վրաստանում եկեղեցին մինչև Ռուսաստանին միավորվելը դեյուրե ինքնավարություն ուներ, ինչպես պնդում էին <<ինքնավարները>>, սակայն ակնհայտ է այն փաստը, որ երբ 1811թ. վերացվեց կաթողիկոսական համակարգը և նրա փոխարեն ստեղծվեց Վրացական Էկզարխատը՝ վրացական եկեղեցու անկախությունը դեֆակտո դադարեց: Այն, որ Անդրկովկասում, Էկզարխատի գոյության ժամանակ, եկեղեցին ենթարկվեց լայն վերակազմավորման, երբ նկատելիորեն կրճատվեցին թեմերի քանակը, ստեղծվեցին սինոդական գրասենյակները, վերացվեց կաթողիկոսի պաշտոնը և այլն, միայն հաստատում էր անկախության կորուստը:

²⁰ Пол Верг, Православие, инославие, иноверие: очерки ..., с. 85.

²¹ Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерал-адъютанта графа Воронцова-Дашкова, Тифлис, 1907, с. 22, 23.

Сатеник Авоян – Борьба за восстановление автокефалии грузинской церкви (1906 - 1907 гг.). – Первая буржуазно-демократическая революция в России (1905-1907) оставила свой глубокий след на церковном самосознании грузинского духовенства. Внутри грузинских духовных деятелей возникло требование о восстановлении автокефалии своей церкви, которые начали открыто противопоставлять Грузинскому Экзархату.

Вопрос о восстановлении автокефалии грузинской церкви обсуждался на съездах Предсоборного Присутствия (1906-1907), в ходе которого и были усилены автокефальные устремления духовенства православной Грузии. С началом этих заседаний грузинское духовенство связывало большие надежды, но вопрос автокефалии обсуждался лишь теоретически. Грузинское духовенство, используя разные обоснования - историческое прошлое, юридически, нравственные пыталось доказать, что восстановление грузинской церковной автокефалии это право грузинского народа, а русская сторона находила, что автокефальное движение лишь революционная, сепаратическая тенденция, которая объединила церковных карьеристов и революционных – демократов, которые мечтали о независимости Грузии.

Предсоборное Присутствие не дало ничего положительного для грузинской стороны и как только в Империи утасла революция (июнь 1907 г.) ослабла жгучесть вопроса. Многие представители русского православия и политики считали, что автокефалия Грузии повредит политическому единству и противоречит интересам Российского государства. Грузинский церковный вопрос так и не получил решения.

Satenik Avoyan – Struggle for the autonomy restoration of Georgian Church (1906 - 1907). – The first bourgeois democratic revolution which began in 1905 in Tsarist Russia also left a deep imprint upon the Georgian peoples' religious consciousness. Among the religious leaders matured the necessary requirement to restore the autonomy of their church, which obviously opposed to Georgian ekzarkhat. The restoration of the autonomy of Georgian Church was discussed during <the pre-parliamentary works> sessions created by the Holy Synod, during which the Orthodox Georgians' religious aspirations for autonomy intensified. But it is important to note, that during this sessions through which Georgian Church was initially pinned hopes, the issue of the Georgian Church was discussed only hypothetically. The Georgian Church tried to prove in any way with the justifications of historical past, the legal and moral point of view, that the restoration of the autonomy of Georgian Church is the Georgian peoples' right, but Russia tried to prove that "the autonomous movement is only revolutionary, political, secessionist which combined the religious careers and revolutionary-democrats, that dreamed about the independence of Georgia. Nevertheless, pre-parliamentary works didn't give any positive result for Georgians and as soon as the revolution faded in Empire (June 1907), also weakened the publication of the issue. Many people expressed the opinion that Georgian autonomy will spoil the political unity and it contradicts Russia's state interests. The Georgian religious issue wasn't resolved.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

ԱՐՄԱՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

Հոդվածում ներկայացված է Եվրոպական Միության ծագման գաղափարը, որը դարերի պատմություն ունի: Այն առաջ է քաշվել բազմաթիվ փիլիսոփաների, մտավորականների, եվրոպական արքունիքների նշանավոր գործիչների կողմից: Եվրոպայի միավորման փորձ է կատարվել թե՛ խաղաղ և թե՛ ռազմական ճանապարհով: Այդուհանդերձ, այդ բոլոր փորձերը ձախողվել են մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Միայն դրա ավարտից հետո 1950 թ. հնարավոր եղավ կյանքի կոչել միավորված Եվրոպայի գաղափար՝ Եվրոպական համայնքի ստեղծմամբ, որը 1993 թվականից անվանվեց Եվրոպական Միություն:

Բանալի բառեր. Եվրոպայի միավորում, Շումանի պլան, Աժիսի և պողպատի Եվրոպական համայնք, Միասնական եվրոպական ակտ, Եվրոպական Միություն:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո եվրոպական պետությունների առջև ծառացած հիմնական մարտահրավերն էին քայքայված տնտեսության, քաղաքական ազդեցության վերականգնումը, ինչպես նաև հերթական ռազմական բախումների կանխումը և, ինչն առավել կարևոր է, հետպատերազմյան խաղաղության ապահովումը: Այդ մարտահրավերների լուծմամբ էր պայմանավորված այն հանգամանքը, որ աշխարհի ամենատարբեր անկյուններից կոչեր էին հնչում եվրոպական պետությունների համապարփակ միավորում ստեղծելու վերաբերյալ, ինչը հնարավորություն կընձեռեր համատեղ ջանքերի ու միջոցների գործադրմամբ հաղթահարել հետպատերազմյան ճգնաժամերը և ապահովել կայուն խաղաղություն: Թերևս նշված գործոնների ազդեցության շնորհիվ է, որ պատմական կարճ ժամանակահատվածում միավորման որոշակի գործոնների հետևանքով Եվրոպա աշխարհամասում ստեղծվեց մի այնպիսի վերպետական հատկանիշներով օժտված աննախադեպ կազմավորում, ինչպիսին Եվրոպական միությունն (այսուհետ՝ ԵՄ) է¹:

Եվրոպական պետությունների ու ժողովուրդների միավորման կարգախոսը դարերի ընթացքում առաջ է քաշվել բազմաթիվ հասարակական-քաղաքական, մշակութային գործիչների, փիլիսոփաների կողմից: Եվրոպայի միավորման առաջին հստակ նախագծերը վերագրվում են 13-15-րդ դարերին և պատկանում են Ֆրանսիայի թագավորական դատախազ Պիեռ Դուբուային և չեխ թագավոր Իրժի Պոդեբրադին: Հարկ է նշել, որ երկու հեղինակներն էլ ելնում էին աշխարհիկ իշխանության գերակայությունից²: Նմանատիպ նախագծերի առաջարկներով էին հանդես եկել նաև Հենրիխ Դ-Սուլլին, Վիլյամ(Ուիլյամ) Փենը, Ջոն Բեյլեսը, Շառլ դե Սեն-Պիեռը, Վիկտոր Հյուգոն, Իմանուել Կանտը և այլք: 20-րդ դարի սկզբին ծնունդ է առնում Եվրոպայի միավորման նոր ծրագիր, որի հեղինակն էր կոմս Կուդենհովե-Կալերգին: Նա հրապարակեց «Պան Եվրոպա» գիրքը և կոչ արեց ստեղծել պանեվրոպական շարժումը³: Վերջինիս գաղափարները փորձեց

¹ Տե՛ս **Борко Ю.А.**, Общий европейский дом: что мы о нем думаем?, Москва, 1991, с. 13:

² Տե՛ս **Борко Ю.А.**, նշվ., աշխ., с. 88:

³ Տե՛ս **Чубарьян А.О.**, Европейская идея в истории. Проблемы войны и мира, Москва, 1997, с. 258-259:

գարգացնել Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Արիստիտ Բրիանը: 1929 թ. Բրիանը Ժնևում իր ելույթում նշում էր, որ Եվրոպայի ժողովուրդները, որոնք միմյանց հետ առնչվում են դարեր շարունակ, պետք է կապված լինեն նաև դաշնային կապերով: Այդ ժողովուրդները պետք է հնարավորություն ունենան քննարկելու իրենց շահերից բխող հարցեր և ընդունել ընդհանուր որոշումներ, օգնել միմյանց կարևորագույն պահերին: Այս գաղափարի զարգացման համար Բրիանը 1930թ. մայիսի 1-ին դիմեց Ազգերի լիգայի եվրոպական քսանյոթ պետությունների՝ առաջարկելով ստեղծել Դաշնային միություն Եվրոպայում⁴: Ազգերի լիգայի անդամների կողմից նախագիծն արժանացավ անբարյացակամ վերաբերմունքի, քանզի վերջիններս պատրաստ չէին հրաժարվել «Լիակատար ինքնիշխանության» հայեցակետից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ բրիանյան նախաձեռնության անհաջողության պատճառը նաև այն էր, որ դրա հիմքում ոչ թե Եվրոպայում խաղաղության պահպանման և անվտանգության ապահովման խնդիրն էր դրված, այլ գլխավորապես Ֆրանսիայի ցանկությունը վերադարձնել իշխող դիրքերը Եվրոպայում⁵:

Ինչպես արդեն նշվեց, Երկրորդ համաշխարհային պատերազմը վիթխարի կորուստներ պատճառեց Եվրոպա աշխարհամասին: Պատերազմի ավարտից անմիջապես հետո նախկին դաշնակիցները դարձան մրցակիցներ, և աշխարհում հաստատվեց երկբևեռ համակարգ՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գլխավորությամբ: Եվրոպան գտնվելով այս երկու հզոր ուժերի միջև՝ բաժանվեց ազդեցության գոտիների: Նրա արևելյան մասը անցավ Խորհրդային Միության ազդեցության տակ, իսկ արևմուտքում իշխող դիրքեր գրավեց ԱՄՆ-ը: Պատերազմի ընթացքում և դրանից հետո շարունակվում էին քննարկումները եվրոպական համապարփակ միություն ստեղծելու վերաբերյալ: Հաշվի առնելով անցյալի սխալները, Եվրոպան քաղաքական հիմքի վրա միավորելու ձգտումը, եվրոպական առաջատար երկրների ղեկավարները փորձեցին Եվրոպան միավորել տնտեսապես: Եվրոպայի տնտեսության վերականգնումը մտահոգում էր բոլոր քաղաքական գործիչներին: Միայն համատեղ ջանքերի գործադրմամբ և փոխօգնությամբ էր հնարավոր վերականգնել և զարգացնել ավերված Եվրոպայի տնտեսությունը: Արևելյան Եվրոպան պատերազմից հետո ընկավ Խորհրդային Միության ազդեցության ներքո, այդ իսկ պատճառով Եվրոպայի երկրների միավորման առաջին նախագծերը հայտնվեցին Արևմուտքում: Արևմտյան Եվրոպայի քաղաքական և հասարակական գործիչները հասկանալով ժամանակի հրամայականը՝ սկսեցին միջոցներ փնտրել Եվրոպայի միավորման համար:

Եվրոպայի միավորման առաջին լուրջ փորձը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կատարեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբերտ Շումանը: Նա 1950 թ. Ժան Մոնեի խորհրդով առաջ քաշեց Ֆրանսիայի և Գերմանիայի ածխի և պողպատի արդյունաբերությունների միավորման գաղափարը և առաջարկեց մյուս ազգերին ևս միանալ այս նախաձեռնությանը: Շումանի ծրագիրը նպատակ ուներ վերջ տալ ֆրանս-գերմանական պատմական թշնամությանը, որն այդքան տառապանքներ պատճառեց ոչ միայն երկու երկրներին, այլև ողջ Եվրոպային: Այս նախագծով փորձ էր կատարվում բացառել պատերազմը երկու երկրների միջև: Հարկ է նշել, որ այս նախագիծը 1946 թ. սեպտեմբերի

⁴ Տե՛ս նույն տեղում, c. 262:

⁵ Տե՛ս *Torbiorn Kjell M.*, Destination Europe, the political and economic growth of a continent, Manchester, 2003, p. 18:

19-ին Ցյուրիխի համալսարանում Ուինսթոն Չերչիլի արտասանած հայտնի ելույթի շարունակությունն էր, որտեղ կոչ էր արվում միավորել Եվրոպան, քանզի վերջինս գտնվելով երկու հզոր ուժերի միջև, չէր կարող միանյակ զարգանալ:

Շումանի առաջարկը նպատակ էր հետապնդում միավորել աճիսի, երկաթի, պողպատի արտադրությունը, վերացնել քվոտաները, մաքսային հարկերը և ստեղծել ընդհանուր շուկա, որտեղ մասնակիցներից յուրաքանչյուրը օժտված էր լինելու որոշակի իրավունքներով: Շումանի պլանով որոշվեց Սաարի մարզը հանձնել Գերմանիային, եթե նա համաձայնեի դառնալ Աժխի և պողպատի եվրոպական համայնքի լիիրավ անդամ: Այս նախագծով հնարավորություն էր տրվում Գերմանիային բարձրացնելու իր միջազգային հեղինակությունը, վերանայելու տնտեսության զարգացման խոչընդոտները և փորձ կատարելու իշխող դիրք գրավել Եվրոպայի կենտրոնական շրջանում⁶:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Կոնրադ Ադենաուերը ջերմորեն արձագանքեց այդ ուղերձին, քանզի տվյալ կառույցին անդամագրվելը ոչ միայն հնարավորություն կտար վերականգնելու Գերմանիայի տնտեսական և ռազմական հզորությունը, այլև ստանձնելու առաջատարի դերը միջազգային հարաբերությունների ոլորտում: Իտալիայի վարչապետ Ալիսիդե դե Գասպարին նույնպես մեծ ոգևորությամբ արձագանքեց Շումանի առաջարկին՝ նպատակ ունենալով Իտալիան կապել Արևմտյան Եվրոպայի տնտեսություններին և նվազեցնել կոմունիստների ազդեցությունը երկրում: Բենիյուքսի փոքր երկրները՝ Բելգիան, Նիդեռլանդները, Լյուքսեմբուրգը չունեին տնտեսությունը զարգացնելու լայն հնարավորություն, ուստի ձգտում էին սերտացնել հարաբերությունները Գերմանիայի և Ֆրանսիայի հետ⁷:

Մեծ Բրիտանիան, չունենալով քաղաքական կամք՝ ընդունելու և հետևելու ԱՊԵՀ-ի սկզբունքներին, դուրս մնաց այդ կառույցից, ինչը բացատրվում էր նրանով, որ վերջինս չէր ցանկանում իր արդյունաբերությունը դնել ԱՊԵՀ-ի վերահսկողության տակ: Թերևս դա է պատճառը, որ 1960 թ. նա, ի հակակշիռ ԱՊԵՀ-ի, ստեղծեց Ազատ առևտրի եվրոպական ասոցացիա (այսուհետ՝ ԱԱԵԱ), որի մեջ էին մտնում Նորվեգիան, Շվեդիան, Դանիան, Շվեյցարիան, Ավստրիան և Պորտուգալիան: Հարկ է նշել, որ այն իր առջև խնդիր էր դրել միայն դյուրացնել անդամ երկրների միջև առևտուրը և մեղմացնել արդյունաբերական արտադրանքի սակագները: Դա չէր վերաբերում գյուղատնտեսական արտադրանքին և չէր սահմանում ընդհանուր արտաքին սակագին, իսկ անդամ երկրները կարող էին ցանկացած պահի դուրս գալ համաձայնագրից⁸:

Այսպիսով, 1951թ. ստեղծված ԱՊԵՀ-ը ավելի կայուն և ուժեղ միություն էր, քան ԱԱԵԱ-ն: Վերջինս չէր ձգտում միավորել Եվրոպան: Աժխի և պողպատի եվրոպական համայնքի անդամ երկրները սկսեցին համագործակցել իրենց ստեղծած քաղաքական, տնտեսական ասպարեզներում: Հաջողությունը երկար սպասեցնել չտվեց: Կառույցի երկրները տնտեսական աճ գրանցեցին: Գերմանիայում նույնիսկ այն որակվեց տնտեսական հրաշք: Ոգևորված տնտեսական այս ձեռքբերումներով՝ վեց անդամ երկրները փորձեցին զարգացնել նաև համագործակցությունը ռազմական և անվտանգության բնագավառներում: ԱՊԵՀ անդամ վեց երկրները՝ Ֆրանսիան, Արևմտյան Գերմանիան, Իտալիան, Նիդեռլանդները, Բել-

⁶ St' u European politics, edited by Colin Hay and Anand Menon, New York, 2007, p. 155-156:

⁷ St' u The European Union in detail, Yerevan, 2006, p. 12:

⁸ St' u *Torbiorn Kjell M.*, նշվ. աշխ., p. 20-21:

գիան, Լյուքսեմբուրգը, 1951թ. սկսեցին բանակցությունները: Եվրոպական միացյալ բանակի ստեղծման մասին համաձայնագիրը կնքվեց 1952թ. մայիսին: Նպատակների իրագործումը և միասնական Եվրոպայի ստեղծումը դրդեց նրանց շարունակել իրենց առաջընթացը: Եվրոպական բանակի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար քայլեր ձեռնարկվեցին քաղաքական միավորումը խորացնելու համար: 1953 թ. Բենիլյուքսի երկրների կողմից առաջարկվեց ստեղծել նաև քաղաքական համայնք, որն իր մեջ պետք է ներառներ նախկինում ստեղծված կառույցները:

Եվրոպական շարժումը թվում էր թե մոտ է իր նպատակի իրագործմանը: Վեց երկրներն արդեն ակնհայտ հաջողությունների էին հասել տնտեսության համագործակցության բնագավառում, մասնավորապես ածխի և պողպատի արտադրության ոլորտում: Նրանք արդեն ստորագրել էին պաշտպանական և քաղաքական միություն հիմնելու համաձայնագրեր, սակայն ամբողջական տնտեսական միավորում դեռ չէր ստեղծվել: Հենց Ֆրանսիայի խորհրդարանն էլ տալով պաշտպանական միություն ստեղծելու համաձայնագիրը՝ չվավերացնելով այն: Պաշտպանական միության ստեղծման ձախողման մեջ մեղավոր էին Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, որոնց քաղաքականությունն այդ համաձայնագրի տապալման էր ուղղված⁹: Ձախողվելով համաձայնագրի վավերացման մեջ՝ այնուամենայնիվ վեց երկրները շարունակեցին իրենց միավորման գործընթացները և 1957 թ. Հռոմում ևս երկու համաձայնագիր ստորագրեցին: Այդ համաձայնագրերով հիմք դրվեց Եվրոպական ատոմային համայնքի (այսուհետ Եվրատոմ) և Եվրոպական տնտեսական համայնքի (այսուհետ ԵՏՀ) ստեղծմանը: Վերջինս անվանում էին նաև ընդհանուր շուկա:

ԵՏՀ համաձայնագիրը նախատեսում էր երկրների միջև ներմուծման հարկերի և քվոտաների աստիճանական վերացում և ընդհանուր արտաքին սակագրերի սահմանում: Անդամ երկրները պայմանավորվեցին բեռնափոխադրումների, գյուղատնտեսության և սոցիալական ապահովագրության ընդհանուր քաղաքականություն իրականացնել և թույլ տալ ֆինանսական ռեսուրսների ու մարդկանց ազատ տեղաշարժ համայնքի սահմանների ներսում: Համաձայնագրի գլխավոր դրույթներից մեկն էլ այն էր, որ վերջինս չէր կարող չեղյալ համարվել մեկ առանձին անդամի կողմից. համայնքի հետագա որոշումները պետք է ընդունվեին անդամ-երկրների ձայների մեծամասնությամբ և ոչ թե միաձայն¹⁰: Հռոմի պայմանագիրով նախատեսվում էր նաև աշխատանքի և կապիտալի ազատ տեղաշարժ, ընդհանուր քաղաքականության կիրառում գյուղատնտեսության, տրանսպորտի և մրցակցության ոլորտում¹¹:

Տնտեսական արագ զարգացումը 1950-1960 թթ. Եվրոպական տնտեսական համայնքի անդամ երկրներում դրդեց Մեծ Բրիտանիային քայլեր ձեռնարկել միանալու ԵՏՀ-ին: Սկսվեցին բանակցություններ Մեծ Բրիտանիայի անդամակցության հետ կապված, բայց Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլը նախ 1963 թվականին, ապա երկրորդ անգամ 1967 թվականին մերժեց Մեծ Բրիտանիայի անդամակցությունը:

1967 թվականի հուլիսին երեք կազմակերպությունները՝ ԵՏՀ-ն, ԱՊԵՀ-ը և Եվրատոմը միավորվեցին՝ ստեղծելով Եվրոպական համայնք: ԵՏՀ համաձայնագ-

⁹ St' u The European Union in detail, նշվ. աշխ., p. 11:

¹⁰ St' u **M. Donald Hancock**, Politics in Europe, New York, 2003, p. 470:

¹¹ St' u **M. Donald Hancock**, նշվ. աշխ., p. 470:

րերի տնտեսական հիմնական դրույթները աստիճանաբար իրականացվեցին և 1968 թվականին անդամ երկրները վերացրեցին առևտրական բոլոր արգելքները:

Մինչև 1969 թ., Շառլ դը Գոլի պաշտոնաթողությունը, Եվրոպական համայնքի (այսուհետ՝ ԵՀ) ընդլայնման ուղղությամբ առաջընթաց չգրանցվեց: Ֆրանսիայի հաջորդ նախագահ Ժորժ Պոմպիդուն ավելի բարյացակամ էր տրամադրված ԵՀ-ի ընդլայնման քաղաքականության նկատմամբ: 1969 թ. դեկտեմբերին Հաագայի հանդիպման ժամանակ քննարկվեց ԵՀ-ի ընդլայնման, մշտական ֆինանսավորման համակարգի ստեղծման, անդամ երկրների միջև արտաքին քաղաքականության համագործակցության հարցեր: Համաձայնություն ձեռք բերվեց Միացյալ թագավորության, Իռլանդիայի, Դանիայի, Նորվեգիայի անդամակցության բանակցությունների մեկնարկի վերաբերյալ:

Այսպիսով, Եվրոպական շարժումը, որ լայն թափ առավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, աստիճանաբար հասնում էր իր առջև դրված խնդիրների լուծմանը:

Արևմտյան Եվրոպայի երկրները, փորձելով միաձուլել միմյանց տարբեր քաղաքական և տնտեսական ուղղությունները, հսկայական առաջընթաց գրանցեցին միավորման գործընթացում և ամուր հիմքեր դրեցին հետագա ընդհանուր քաղաքականության մշակման համար: Արևմտյան Եվրոպան Եվրոպայի աճիսի և պողպատի, Եվրատոմի և Եվրոպական տնտեսական համայնքի շնորհիվ բուռն զարգացում ապրեց: Ծրագրեր էին մշակվում միավորման գործընթացները խորացնելու, նոր երկրներ անդամագրելու, Եվրոպայի դերը աշխարհաքաղաքական գործընթացներում բարձրացնելու համար: Եվրոպական միավորումը ավելի նշանակալի արդյունքներ կգրանցեր, եթե նրա արևելյան հատվածը չլիներ Խորհրդային Միության ազդեցության ներքո:

Մեծ Բրիտանիան, Դանիան, Իռլանդիան միացան Եվրոպական համայնքին 1973 թվականին: Ազգային հանրաքվեով Նորվեգիայի բնակչությունը դեմ քվեարկեց անդամակցությանը: 1981թ. Հունաստանը դարձավ Եվրոպական համայնքի անդամ, 1986 թ. նրան հետևեցին Իսպանիան և Պորտուգալիան¹²:

1980-ական թվականների դրությամբ, գոյության 30 տարիներից հետո, ԵՀ-ն չէր իրականացրել իր ամենամիլիական ձգտումը՝ Եվրոպայի միացյալ նահանգների ստեղծումը: Նրան չէր հաջողվել վերացնել ԵՀ-ում առևտրի բոլոր սահմանափակումները, ինչպես նաև ներքին մաքսային սահմանները: Ավելի նվազ զարգացած Միջերկրածովյան երկրների անդամակցությունը հանգեցրեց մի շարք նոր խնդիրների, որոնք պայմանավորված էին վերջիններիս տնտեսական ցածր զարգացվածությամբ: Այս երկրների մեծ կախվածությունը գյուղատնտեսությունից ենթադրում էր, որ ԵՀ-ն գյուղատնտեսության օժանդակության համար նախատեսված դրամական միջոցների զգալի մասը կուղղի նորանդամ երկրներին: Մա անհանգստություն առաջացրեց ԵՀ-ի որոշ հատվածներում, մասնավորապես Իռլանդիայում: Նմանատիպ բազմաթիվ խնդիրներին լուծում տալու համար 1985 թ. Եվրոպայի խորհուրդը, բաղկացած լինելով ԵՀ անդամ երկրների ղեկավարներից, որոշեց հետագա միավորման հաջորդ քայլը անել: 1986թ. փետրվարին նրանք ստորագրեցին Միասնական եվրոպական ակտ (այսուհետ՝ ՄԵԱ): Այս ակտով նախատեսվում էր իրականացնել մոտ 300 միջոցառում՝ վերացնելու միասնական շուկայի ստեղծման ֆինանսական, տեխնիկական, հարկային խո-

¹² St' u The European Union in detail, նշվ. աշխ., p. 13-14:

չընդոտները: Անդամ երկրները համաձայնություն ձեռք բերեցին ընդունել ընդհանուր քաղաքականություն, սահմանել ընդհանուր չափորոշիչներ հարկերի, զբաղվածության, առողջապահության, բնապահպանության և այլ ոլորտներում: Յուրաքանչյուր անդամ երկիր որոշեց իր տնտեսական և դրամական քաղաքականությունը ներդաշնակել հարևանների քաղաքականություններին: ՄԵԱ-ն ուժի մեջ մտավ 1987թ. հուլիսին:

1980-ականների վերջերին քաղաքական արագընթաց փոփոխությունները ևս մեկ անգամ հանգեցրին ԵՀ-ում համագործակցության և միավորման աստիճանի բարձրացմանը: Խորհրդային համակարգի փլուզումից հետո Արևելյան Եվրոպայի երկրներն իրենց հայացքն ուղղեցին դեպի ԵՀ: Վերջինս որոշեց աջակցել այդ երկրներին՝ միևնույն ժամանակ թույլ չտալով նրանց անմիջական անդամակցությունը կառույցին: Բացառություն արվեց միայն Արևելյան Գերմանիային, որը Գերմանիայի վերամիավորումից հետո ինքնըստինքյան ներգրավվեց ԵՀ-ում:

Քաղաքական անկախության շնորհիվ Արևմտյան Գերմանիան և Ֆրանսիան առաջարկեցին Միջկառավարական կոնֆերանս հրավիրել (այսուհետ՝ ՄԿԿ)՝ Եվրոպական համայնքը ավելի ամրապնդելու նպատակով: ՄԿԿ-ն անդամների համաժողով է, որը սկսում է ԵՀ-ի համաձայնագրերի փոփոխությունների պաշտոնական գործընթացը:

ՄԿԿ-ն սկսեց աշխատանքները պայմանագրերի մի փաթեթի վրա, որը հետագայում դառնալու էր Եվրոպական Միության մասին համաձայնագիր՝ հիմք հանդիսանալով Եվրոպական Միության ստեղծման համար¹³:

1990-ական թվականներին ավելի ընդլայնվեց ԵՀ-ը, ամենից առաջ Ազատ առևտրի եվրոպական ասոցացիայի երկրների հաշվին: 1993թ. նոյեմբերին ուժի մեջ մտավ Մասստրիխտյան համաձայնագիրը՝ եվրոպական քաղաքական, տնտեսական և տարադրամային միության՝ Եվրամիության ստեղծման վերաբերյալ:

Арман Хачикян – *Идея возникновения Европейского Союза.* – В статье представлена возникновения идеи Европейского союза, которая имеет многовековую историю. Эта идея была выдвинута многими философами, представителями интеллигенции, видными деятелями королевского двора. Европу пытались объединить как мирным так и военным путем, но все эти попытки заканчивались неудачой до конца Второй мировой войны. Только в 1950 году стало возможно реализовать идею единой Европы с помощью создания Европейского Сообщества, которое с 1993 года именуется Европейский Союз.

Arman Khachikyan – *The idea of origin of the European Union.* – The given article presents the origin of the idea of the European Union, which has a long history. This idea was suggested by many philosophers, intellectuals, prominent figures in the royal court. Europe tried to unite both peaceful and military means, but all these attempts failed until the end of World War II. Only in 1950 it became possible to realize the idea of a united Europe by creating the European Community, which in 1993 called the European Union.

¹³ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում հայ ուղափառ եկեղեցիոյ անցքերը սկզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Գ հատոր մասն Ա, Բ տպագրութիւն, Պէյրոս 1961:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 1894-1902ԹԹ.

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ

Համիդյան ժամանակաշրջանում Կիլիկյո կաթողիկոսության նկատմամբ օսմանյան ղեկավարությունը իրականացնում էր կաթողիկոսության աստիճանական լուծարման քաղաքականություն, որը առավել արտահայտիչ դարձավ 1890 ականներին: 1895-1902թթ կաթողիկոսությունը չունեի օրինական ընտրված հոգևոր առաջնորդ, որի հիմնական պատճառը թուրքական իշխանությունների կողմից հարուցած խոչընդոտներն էին: Այս հարցի շուրջ մտահոգված էին Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյանը և Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ խրիմյանը: Վերջիններս գաղտնի նամակագրական կապով քննարկել են այս հարցը և ի վերջո լուծել այն: Այս նամակագրական կապի մասին մինչ օրս քիչ տեղեկություններ են հայտնի, և ուսումնասիրելով այն հանգում ենք եզրակացության, որ կաթողիկոսի ընտրության համար հիմնական խոչընդոտը հանդիսացել են օսմանյան ղեկավար շրջանները:

Բանալի բաներ. Կիլիկիո կաթողիկոսություն, կաթողիկոսական ընտրություններ, Ազգային ընդհանուր ժողով, կաթողիկոսի ժամանակավոր տեղապահ, Մահակ եպիսկոպոս Խապայան:

Կիլիկիայում գործող հայոց կաթողիկոսությունը հատկապես 19-րդ դարի վերջին քառորդում ենթարկվել է բազմաթիվ փորձությունների: Հիշյալ ժամանակահատվածի կարևորագույն խնդիրներից էր հանդիսանում կաթողիկոսի ընտրության հարցը և դրա շուրջ ծավալված պայքարը: Դրա վերաբերյալ պատմագրությունում գրեթե տեղեկություններ չկան, իսկ հարցի քիչ թե շատ լուսաբանմանը անդրադարձել է Մաղաքիա արք. Օրմանյանը¹, որը, սակայն, ելնելով տիրող քաղաքական մթնոլորտից, հարցը ներկայացրել է եկեղեցու պատմության համընդհանուր տեսանկյունից՝ թաքցնելով պատմական ճշմարտացիության բազմաթիվ դրսևորումներ: Վերոհիշյալի խոստն փաստեր են հանդիսանում արխիվային տարբեր ձեռագիր նյութեր (հիմնականում ձեռագիր նամակներ, որոնք առաջին անգամ են դրվում գիտական լայն շրջանառության մեջ), որոնք ցույց են տալիս, որ Օրմանյանը հարցին քաջածանոթ է եղել և Մկրտիչ Ա. կաթողիկոսի հետ փնտրել է տարբեր լուծումներ:

Այս պայքարը առավել ուժեղացավ 1866թ.-ից սկսած, երբ օրինական կաթողիկոս Կիրակոս Բ-ն մահացավ: Այսուհետ Կիլիկիայի հայոց կաթողիկոսական աթոռի շուրջ ծագած պայքարի վերաբերյալ «Հասկ» ամսագիրը հայտնում է հետևյալը. «Եվ յարմար առիթ մալ ներկայացավ Կիլիկիո Աջապահեան վերջին կաթողիկոսին՝ Կիրակոս Բ-ին մահէն վերջը (1866թ. ղեկտեմբեր), թույլ չտալու համար, որ նոր Աջապահեան մը տիրանայ Աթոռին, Պատրեարքարանը փութաց Կաթողիկոսական տեղապահ նշանակել՝ Այնթեպի Առաջնորդ Մկրտիչ եպս. Սէմէրճեանը և ծրագրեց օր առաջ կաթողիկոսական ընտրություն կատարել տալ:

¹ «Հասկ» ամսաթերթ, ԺԱ տարի, թիվ 3-4, մարտ-ապրիլ 1942թ., էջ 41 :

Բայց Ստյ մեջ՝ Նիկողայոս Եպիսկոպոս Կիլիկիեանը, որ մօր կողմանե Աջապահեան էր և Առաջնորդ բերոյ Վիճակին, ասելի փութկոտ և ճարպիկ գտնուեցան և գաղտագողի կաթողիկոս օծուեցան (1866թ. Յունիս) մի այլ ոմն Աջապահեկան է (Ռուբինեան Յարութիւն Եպիսկոպոս): Պատրիարքարանը դիմեց Բ Դռանը և պահանջեց ընդ հսկողությամբ Պոլիս բերել տալ Նիկողայոսը, և Յարութիւն Եպիսկոպոսը՝ Կիպրոս կղզին աքսորել»²: Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը գրում է հետևյալը. «Կ. Պոլսոյ պատրիարքարանը փութացեր էր Կիլիկիոյ աթոռին տեղապահ նշանակել Այնթապի առաջնորդ Մկրտիչ Մէմերճեան եպիսկոպոսը, առաջիկային թողելով յաջորդի ընտրութեան խնդիրը»³: Մ. Օրմանյանի նշված տեղեկությունը որոշակիորեն արհեստական է ներկայացված, քանի որ աղբյուրների ուսումնասիրությունը նշված հարցի վերաբերյալ ցույց է տալիս, որ այս խնդիրը ոչ թե փորձել է լուծել Կ. Պոլսի պատրիարքարանը այլ Կիլիկիոյ պատրիարքարանը, որի ընթացքում առաջացած վեճից հետո նոր վերջիններս դիմում են Կ. Պոլսի պատրիարքությանը և օսմանյան իշխանություններին հարցին լուծում տալու համար: Արխիվային ձեռագրերի ուսումնասիրությունը հաստատում են տվյալ փաստը, որոնց վրա հենվելով ներկայացրել ենք խնդրի բուն էությունը և ճշմարտացիությունը:

Բնականաբար թուրքական իշխանությունները պետք է ողջունեին Կիլիկիայի կաթողիկոսության շուրջ ծավալված պայքարի փաստը: Դա է վկայում նաև այն, որ Նիկողայոսին չձեռքակալեցին, այլ, նրան վերապահելով որոշակի իրավունքներ և արտոնություններ, հետագայում ուղարկեցին Արմաշի վանքը (1887թ. օգոստոս)⁴:

Օսմանյան իշխանությունները ոչինչ չձեռնարկեցին վերոհիշյալ խնդրի լուծման համար, իսկ Կիլիկիոյ պատրիարքարանը միջոցներ էր որոնում կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու և օրինական կաթողիկոս ունենալու համար: Այդ պատճառով պատրիարքարանը «Կիլիկիոյ Աթոռը բարեկարգելու և Պատրիարքարանին և Մայր Աթոռին կապելու համար ծրագիր կը մշակե և հրահանգ մը կգծէ»⁵: Որոշվեց ընտրությունները վստահել պատրիարքարանին, իսկ ընտրված կաթողիկոսի հաստատումը հանձնել Կեդրոնին (ազգային ընդհ. Ժողով, Կ. Պոլիս): 1871թ. Իրականացվող ընտրության նախագահ է նշանակվում Մկրտիչ Ա. Քէֆսիզեանը, իբրև Կեդրոնի պատվիրակ՝ Սիմեոն եպիսկոպոս Մէֆերանը: Ի վերջո հոկտեմբերի 23-ին առաջադրվածներից Մկրտիչ Եպիս. Քէֆսիզեանին պատվիրակները ընտրում են որպես Կիլիկիոյ կաթողիկոս և ուղարկում Կ. Պոլիս ազգային ընդհանուր ժողովի հաստատմանը: Այս անգամ Կիլիկիոյ կաթողիկոսի ձեռնադրմանը դեմ է դուրս գալիս Ամենայն Հայոց Հայրապետ Գևորգ Դ-ն, որը Կեդրոնի և Կիլիկիայի պատրիարքարանի կազմակերպած ընտրությունները համարում է անօրինական և անվավեր՝ հաշվի առնելով, որ այս ընտրության համար պետք է լինեին Ամենայն Հայոց Կաթողիկոսի թույլտվությունն ու հովանավորությունը⁶: Վերոհիշյալի կապակցությամբ Մ. արք. Օրմանյանը գրում է հետևյալը. «Մայր Աթոռին ընդհանուր իրավասութիւնը ճանաչել, ընտրական

² Տես *Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան*, Ազգապատում ..., էջ 392:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում էջ 42; Տես նաև *Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան*, Ազգապատում ..., էջ 465-468:

⁶ *Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան*, Ազգապատում..., էջ 463:

գործողութեանց մէջ Մայր Աթոռը դուրս թողուլ, թեմականերու իրաւունքը յարգել, Կ. Պոլսոյ և ազգային պատրիարքարանի գլխաւորութիւնը նուիրագործել: Այդ եղելութեանց գլխաւոր շարժառիթներն եղան Մայր Աթոռոյ պօլօժէնիով կաշկանդուած, և Կ. Պոլսոյ պատրեարքութեան Ամենայն Հայոց կաթողիկոսութեան ներկայացուցիչը ճանաչուած ըլլալը, ինչ որ շեշտուած էր Ջալալեանի միջադէպով»⁷: Նշվածով Օրմանյանը փորձում է ցույց տալ, որ Մայր Աթոռի իրավասութիւնները Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նկատմամբ սահմանափակվեցին նաև օրենքով, սակայն աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ դա վերածվել էր հետզհետե խորացող ճգնաժամի և թշնամանքի:

Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ հիշյալ տարաձայնությունները ավելի հեռացրեց առանց այն էլ տարանջատված հայոց հայրապետական թեմերն ու Մայր Աթոռը, քանի որ այլևս հաշվի չառնվեց Ամենայն Հայոց կաթողիկոսի կարծիքն ու հայրապետական օրհնությունն: Այսուհետ Կիլիկիոյ աթոռի համար ձեռնարկված կաթողիկոսական ընտրությունը սկսեց իրականացնել բացառապէս Կ. Պոլսի կողմից հատուկ կազմված Ազգային ընդհանուր ժողովը: Դա է վկայում Մկրտիչ Ա. Քեֆաիզեանի մահից հետո (15 Նոյեմբերի 1894թ.) անցկացված հերթական կաթողիկոսական ընտրությունը: Կաթողիկոսի ժամանակավոր տեղապահ էր նշանակվել Կիրակոս եպիս. Յովհաննէսեանը, որը «1895թ. Ապրիլի 26-ին կը կազմէ պատգամավորական ժողովը»⁸: Այս ընտրությունները ևս վավեր ճանաչվեցին Ազգային ընդհանուր ժողովի կողմից և ներկայացվեցին Բ. Դոան հաստատմանը, որը, սակայն, չվավերացրեց այն: Այս կապակցությամբ դարձյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում «Հասկ» ամսաթերթը նշելով, որ «Ազգային Կեդրոնի վարչութիւնը Պատրիարքարանին հեղինակությունը բարձր եւ առանձնաշնորհութիւնը անխախտ պահելու համար, կորոշէ ուրիշ կաթողիկոս չընտրել ցորչափ ողջ մնաց ընտրեալ կաթողիկոս»⁹:

Հիշյալ տեղեկությունը թույլ է տալիս եզրակացնել, որ, փաստորեն, Կիլիկիոյ կաթողիկոսությունը 1894 թ.-ից սկսած օրինական կաթողիկոս չունէր և, որ թուրքական իշխանությունները հասկացան, որ Էջմիածնից ևս կաթողիկոսությունը աջակցություն չի ստանում: Ուստի ձեռնարկեցին նրա աստիճանական վախճանը և այլևս չհաստատեցին Կիլիկիոյ պատրիարքարանի և Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընտրված կաթողիկոսներին: Այս առթիվ «Հասկ» ամսաթերթը դարձյալ գրում է հետևյալը. «Բոլոր նրանք որոնք տեղյակ են մանրամասնութեան մեր նուիրապետական զոյգ Աթոռներու անցեալ մօտ երեք դարու պատ-

⁷ Նույն տեղում էջ 43: Հիշյալ խնդրի վերաբերյալ Օրմանյանը գրում է հետևյալը «...Սոյո եպիսկոպոսներէն Նիկողայոս Դաթեան և Յովհաննէս Գազանճեան և Աբրահամ Մամիկոնեան, իրենց գործակից ունենալով Կէօթեան Կիրակոս վարդապետը, յունիսի 14-ին, ընտրութենէն շաբաթ մը ետքը յանուն Կիլիկիոյ թեմականերու բողոքագրի մատուցին կառավարութեան թէ եղած ընտրութիւնը ընկալեալ սովորութեանց և տիրող կանոնաց հակառակ է...: Խնդիրը անլուծ մնաց Իզմիրլեանի (Կ. Պոլսի հայոց պատրիարքը. ընգծումը մերն է) պատրեարքութեան ժամանակ, ոչ սա յանձնառու եղալ իր միտքը փոխել, և ոչ էլ կառավարութիւնը ետ կեցաւ իր մտադրութենէն, Գազանճեանի ալ չզլացաւ իր գաղտնի և անուղղակի պաշտոնութիւնը, որ կրցաւ համարձակ գործել կողմնակիցներ շահիլ, և իրեն դիրքը քիչուշատ ամրացնել, կառավարութիւնն ալ իրեն նպաստավոր պահել, հավանաբար իբրեւ Իզմիրլեանի հակառակ ցույց մը, մինչև իսկ յաջողիլ Ատանայի եկեղեցին հանդիսաւոր մուտք գործել, քանի որ կառավարութիւնը մինչև վերջը շարունակեց թի ընդիմութիւնը, և վերջապէս մերժեց Ալեքսանի կաթողիկոսական ընտրութիւնը»: Տես Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում..., էջ 710:

⁸ Նույն տեղում:

⁹ «Հասկ» ամսաթերթ, Ժ. Տարի թ. 7-8, Յուլիս- Օգոստոս 1941թ. էջ 98:

մութեան, կը յիշեն անշուշտ՝ մասնաւորաբար Գեորգ Դ-րդ մեծագործ Կաթողիկոսի և Կիլիկիոյ Տանն Մկրտիչ Քէֆաիզեանի միջև ծագած և տարիներ տևող անբաղձալի խնդիրներն ու վեճերը, պարզապէս արդիւնք անձնական հակառակութեան, նախամեծար ձգտումներու և փառամոլութեան: Յաւալի է նշել հոս՝ որ սկսուած հակառակութիւնը զոյգ Գահակալներու միջև՝ հետզհետեւ այնքան սուր հանգամանք ստացուած և յառաջ տարուած էր՝ որ Գեորգ Դ-րդ Կաթողիկոսի օրով Էջմիածին տպուած ձեռնադրութեան Մայր Մաշտոցին մեջ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսները անվավեր հռչակուած են և Կիլիկեան եպիսկոպոսներ չեն արտօնուած պաշտօնավարելու Էջմիածնայ թեմերէն ներս»¹⁰: Պետք է փաստել նաև այն, որ հայ իրականության մեջ կաթողիկոսությունը միշտ էլ համախմբիչ դեր ու նշանակություն է ունեցել և հայապահպանության գլխավոր երաշխիք է հանդիսացել: Այս հանգամանքը ևս հաշվի առնելով, թուրքական վերնախավը լավ էր գիտակցում, որ եթէ չկա կաթողիկոսություն, ապա աստիճանաբար չի լինի նաև կայուն և միացյալ հայ համայնք: Ուստի նշված խռովությունը, որը սկսվել էր դեռևս 1866թ.-ից, ձեռնադրու էր համիդյան ոճրագործներին, որոնք սկսել էին պետական մակարդակով իրականացնել Արևմտահայության ցեղասպանության առաջին փուլը:

Կիլիկիոյ կաթողիկոսության խնդրի լուծման հարցում շահագրգիռ կողմ էին հանդիսանում հատկապէս Մաղաքիա արք. Օրմանյանը և տվյալ ժամանակաշրջանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Մ. Խրիմյանը¹¹:

Մաղաքիա արք. Օրմանյանը խնդիր էությունը և հետագա լուծման ճանապարհը: Սակայն այստեղ հեղինակը խնդիրը դիտարկում է որպէս կաթողիկոսական աթոռների միջև ծագած անհամապատասխանության և ոչ փոխըմբռնման տեսանկյունից, նշելով, որ այն ի վերջո լուծում է ստանում 1902թ, երբ Կիլիկիոյ կաթողիկոս է ընտրվում Սահակ արք. Խապատեանը: Սակայն վերլուծելով Մ. Խրիմյանի և Մաղաքիա արք. Օրմանյանի միջև գրված նամակների բովանդակությունը, հանգում ենք այլ եզրակացության, և բացահայտում, որ Մաղաքիա արք. Օրմանյանը հասկանում էր նշված խնդրի բարդությունը և գիտակցում, որ դա իր մեջ պարունակում է օտար ուժերի միջամտություն, որի մասին սակայն կարծում ենք նա չի ցանկացել բարձրաձայնել իր «Ազգապատում» աշխատությունում: 1897թ. հուլիսի 1-ի թվակիր նամակում Մաղաքիա արք. Օրմանյանը Մկրտիչ Ա կաթողիկոսին գրում է հետևյալը. «...տ. Աբրահամ Մամիկոնեան, և ի վերջին ժամանակս տ. Նիկողայոս եպիսկոպոս Դաւթեան և տ. Կիրակոս վարդապետ Կեօքճան **դարձ առնէին** ի Կոստանդինուպոլիս, **ոչ դադարեալ յանտէղի** ջանից իտեանց վասն ինքնակոչ Կաթողիկոսութեան վերաբերելոյ Գազանճեան Յովհաննոս եպիսկոպոսի ընդդէմ որոյ և Պատրիարքարանս զամենայն ջան ի գործ եղեալ զհետ լինէր բարձման գայթակղութեան ...»¹²:

¹⁰ Կիլիկիոյ կաթողիկոսության խնդրի լուծման հարցում կաթողիկոս Խրիմյանի դիրքորաշույնը Մաղաքիա արք. Օրմանյանը ներկայացնում է հետևյալ կերպ. «...Կիլիկիոյ և Աղթամարաց կաթողիկոսութեանց հնացյալ խնդիրներուն յարմար ընթացք մը տալ, հինէն տրուած որոշումներով չկաշկանդուիլ, վերաքննութիւնը դիւրացնել, և որ և իցէ խնդիրին լուծում մը պատրաստել» գրում է Մ. Օրմանյանը, Ազգապատում, էջ 459:

¹¹ ՀԱՍ, ֆ. 56, ց. 14, գ. 185, թ. 33:

¹² **Օրմանեան Մ. Արքեպիսկոպոս**, Խոհք և խոսք իր կեանքին վերջին շրջանին մեջ, Երուսաղէմ 1931, էջ 233:

Վերոհիշյալից հստակ երևում է, որ Մաղաքիա արք. Օրմանյանն առավել քան համոզված է, որ հիշյալ խնդրում շահագրգռված են թուրքական իշխանությունները և վերջիններս էլ ստեղծել են այդ լարված իրավիճակը: Օրմանյանը հասկանում էր, որ խնդիրն աստիճանաբար ավելի է թեժանում և կարող է հանգեցնել Կիլիկիո կաթողիկոսության վերջնական անջատմանը և կապերի խզմանը Մայր Աթոռից: Այդ պատճառով նա Մ. Խրիմյանին առաջարկում է. «Կիլիկյոյ կաթողիկոսութեան աթոռակալը Մայր Աթոռոյ աթոռակից հռչակել, որպէսզի եթե երբեք Էջմիածնի կաթողիկոսը բռնութեան ենթարկուի, կամ մահուանէն ետքը նոր ընտրութեան արգիլմամբ աթոռը թափուր մնայ, Հայ Եկեղեցին իր գլուխն ու կաթողիկոսն ունենայ Ռուսաստանի սահմաններէն դուրս...»¹³:

Պետք է նշել, որ Մաղաքիա արք. Օրմանյանը ջանում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսության գերակայությունը պահպանել բոլոր հայկական թեմերի ու նվիրապետական աթոռների հանդեպ, և թույլ չտալ նրանց առանձնանալուն ու անկախ գործելուն:

Էջմիածնի կաթողիկոսության գերակա դիրքի պահպանման ու առհասարակ Կիլիկիո կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքության միջև միասնության պահպանման համար իր մտահոգությունն է հայտնում նաև Նիկողայոս Եպիս. Դավթյան Խոռխոռունին Մաղաքիա արք. Օրմանյանին գրած իր մեղայագրում, որտեղ նշում է, որ «...Կաթողիկոսութիւն մը ձևացնելու համար կատարուած ձեռնակութիւնք հակառակ են եկեղեցական կարգաց և կանոնաց և ազգային իրաւաց, որով ներկայիս նուիրական պարտականութիւն կը համարիմ ինձ յարգել միշտ Կ.Պոլսոյ Պատրիարքության և Կիլիկյո Կաթողիկոսական աթոռոյն մէջ հաստատուած վաղեմի յարաբերութիւններն և նկրտել պահպանելու միշտ Հայաստանեայց եկեղեցոյ միաբանութիւնը»¹⁴:

Մաղաքիա արք. Օրմանյանի հետ մեկտեղ, ինչպես արդեն նշվել էր, Կիլիկիո կաթողիկոսության հարցի լուծման գործում շահագրգռված էր նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանը, որը հատուկ կոնդակով (որը թվագրվում է 11 փետրվար 1899թ.) դիմում է Օրմանյանին: Իր կոնդակում կաթողիկոսը անդրադառնում է Կիլիկիայի ողբալի վիճակին, Սսի նոր կաթողիկոսն ընտրելու դժվարություններին, արժանավոր գահակալի ընտրությունը արագացնելու անհրաժեշտությանը և այդ առթիվ նշում է, որ «Ես չը գիտեմ, թե ինչ մտածում է Պօլսոյ Ազգային վարչութիւն արտյօք անձնուէր քաջ հովիւ կորոնէ Կիլիկյոյ լքեալ մոռացեալ Աթոռին համար և ուր է այդ լավագունին տենչալով՝ չլավն ևս չէ կարող որոշել և ընտրել...: Ուստի նա ոչ միայն հացի սով կրում է, ավաղ, կրում է նաև Աստուծոյ Բանին սով. Որոյ պատասխանատուութիւնը առավել Մեր վերայ կը ծանրանայ, քանզի Ես ևս հաւասար Ձեզ պատասխանատու կը ճանաչնամ զիս վասն զի Սոյ հինավուրձ Աթոռն իբրև հակաթոռ Էջմիածնոյ Հայրապետութեան չեմ ըմբռներ, որպէս ոմանք ի նախորդած Մերոց այնպես ըմբռնելով հակառակ վարուած են. յամենայն սրտէ կը ցանկամ, որ հաստատ և ապահով մնայ այդ Աթոռ իւր անցեալ յիշատակներ»¹⁵:

Ելնելով հիշյալ դժվարություններից և խոչնդոտներից Մաղաքիա արք. Օրմանյանը միջոցներ է ձեռնարկում Սսի կաթողիկոսի հարցը լուծելու և վերջնա-

¹³ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 185, թ. 36:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1820, թ. 1:

¹⁵ Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1821, թ. 6:

կան ընտրություն կազմակերպելու համար: Այդ կապակցությամբ առաջարկվում է Սահակ եպիս. Խապանեանի թեկնածությունը, որը պետք է ընտրվեր Կիլիկիո կաթողիկոս: Սակայն այս անգամ նշված ընտրությանը դեմ է դուրս գալիս Բ Դուռը: Այդ առթիվ ուշագրավ տեղեկություն է հաղորդում կրկին Մաղաքիա արք. Օրմանյանը՝ Մկրտիչ Ա. Կաթողիկոսին ուղարկած իր նամակում (թվագրվում է 1900թ. փետրվարի 12):

«...Կայսերական առաջին իրատե մը եղաւ յուլիս 27-ին, որ կառավարութեան առաջարկը քաղել է յետոյ, կը յավելոյր թէ պետք է ընտրութիւնը կատարել յառաջագոյն կատարուած կերպով: Մենք այդ վերջին պայմանով միայն ուզեցինք գործադրութեան անցնել և պատգամաւորի ընտրութիւնը հաղորդեցինք յանձին տ. Սահակ եպիս. Խապայեան, այլ Բ դուռն չհամակերպեցաւ մեր տեսութեան և դարձեալ սկսաւ ձգձգել, և երբ գործը այդ դժվարութեանց մեջ էր, ազգայնոց երթնելի գործը ծանրացաւ, և անտանելի դարձաւ»¹⁶:

Սակայն Մ. Օրմանյանը չհամակերպվեց կառավարության կողմից հարուցած խոչնդոտների հետ և ակտիվ բանակցությունների շնորհիվ ի վերջո հասավ նրան, որ թուրքական կառավարությունը համաձայնեց ընդունել որոշում, ըստ որի Սսի կաթողիկոսության հարցը շուտափույթ պետք է լուծվի:

Սակայն թուրքական կառավարությունը այդ թույլտվությունը տվեց միայն մի պայմանով, որ նշված ընտրություններին պետք է մասնակցեր նաև իր լիազոր ներկայացուցիչը՝ իրավունք ունենալով կաթողիկոսական աթոռի համար առաջարկել թեկնածու: Սա ևս ցույց է տալիս, որ օսմանյան իշխանությունները ամեն գնով ցանկանում էին խորացնել թշնամանքը հայոց հայրապետական թեմերի և Մայր Աթոռի մրջև ու վերջնականորեն խզել նրանց կապը: Այս առթիվ Մ. Օրմանյանը Մկրտիչ Ա. Խրիմյանին ուղղված իր բովանդակալից նամակում գրում է հետևյալը. «...պետական պատգամաւորը անմիջապէս պիտի ուղևորի յԱտանա ընտրութեան ձեռնարկել տալու և թէ Պատրիարքարանը կրնայ իր պատգամաւորը յղել: ...Կառավարական պատգամաւորն որ է Կրօնական գործոց տեսչութեան օգնական Պէհա պէյ, փետրվարի 6-ին իրօք մեկնեցաւ աստի ի Մերսին, և մենք ալ փետրվարի 8-ին հեռագրեցինք ս. Երուսաղէմայ Ամեն Պատրիարքին որպէս զի գէր. Սահակ Սրբազաբը ճամբայ հանել տայ դէպի Մերսին, ու պիտի յղենք պաշտօնական գրութիւնները, այսինքն և նախարարական յանձնարարական Սահակ Սրբազանի համար ուղեալ Ատանայի կուսակալին (որ է Ձեր ս. Օծութեան ծանօթ Պահրի փաշա) և ընտրողական գործողութեանց հրահանգներ...»¹⁷:

Այս անգամ ևս թուրքական իշխանությունների կողմից ամեն ինչ արվում էր կաթողիկոսի ընտրությունը ձգձգելու և չկայացնելու համար: Բազմաթիվ խոչնդոտներ են հարուցվում Սահակ եպիսկոպոսին չընդունելու համար: Վերջինիս հանդեպ նույնիսկ կառավարական ուժերի կողմից սահմանվում է խիստ հսկողություն և այդ գործում օսմանյան պատվիրակներին կրկին աջակից են լինում տարբեր հայազգի հոգևորականներ, որոնցից գլխավորը Գերաշնորհ Կիրակոս Սրբազանն էր, որը ամեն քայլ գործադրում էր Կիլիկիո կաթողիկոս ընտրվելու համար:

Այս առթիվ Մ. արք. Օրմանյանին Սահակ եպիս. Խապանեանը հեռագրում է հետևյալը. «...թղթաբերին օր նախ կը պրպտին թղթատունը իմանալու համար թէ

¹⁶ Նույն տեղում, թ. 7-8:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 421, ց. 2, գ. 7, թ. 12:

իմ հասցեիս նամակ կա՞յ, եթե ապահովեալ չէ՝ կը բանան կը կարդան, ապա կը յանձնեն ցրուիչին, որ հասցեին յանցնէ, այս անարգ պաշտօնը կը կատարէ կառավարութեան թարգմանը, ամբողջ Կիլիկիո պատուհասը: Երբ կիմանան թե ապահովեալ նամակ ունիմ, անմիջապէս թարգմանը կուգայ և կը հարցնէ. «Ի՞նչ նոր լուր», ես ալ ըստ պարագային կը յետևիմ..»¹⁸:

Ադանայում հավաքված պատվիրակները, աստիճանաբար, տարբեր պատճառաբանություններով սկսում են հեռանալ: Այստեղ ստեղծված քառասային իրավիճակը թույլ չտվեց, որպէսզի այս անգամ էլ իրականացվի Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունը: Թուրքական իշխանությունների կողմից ուղարկված պատվիրակները երկակի խաղ էին խաղում և ամեն անգամ մի անհիմն պատճառ էին ներկայացնում, որպէսզի ընտրությունը հետաձգվի: Մ. արք. Օրմանյանը իր 1900թ հուլիսի 4-ի թվակիր նամակում Մկրտիչ Ա. Կաթողիկոսին մանրամասն ներկայացնում է ընտրության ձախողման պատճառները և հստակորեն մատնանշում, որ նշված ձախողումներն տեղի էին ունենում օսմանյան իշխանությունների պատվիրակների թելադրանքով. «Իսկ Ատանայի մեջ նոր բան մը եղած չէ և կառավարութիւնը և ժողով կը սպասեն Կ. Պօլսէն գալու հրահանգին: Անդ միջոցին Աբրահամ եպիսկոպոս որ կառավարութեան ձեռամբ Պատրիարքարանի դէմ Ատանա դրկած էր, ետ դարձաւ Կ.Պօլիսհասաւ ի յունիսի 19 և իր ընթացից անյաջողութիւնը տեսնելով, այժմ մեղայական գրով Պատրիարքարան կդիմէ, որովրայ կրօնական ժողովը պիտի խորհի մերձաւոր նիստին: Իսկ պետական պատգամաւոր Պէպուէյ Ատանայի մեջ առողջութիւնը խանգարած զգալով, հրաման ստացան Կ. Պօլիս գալ, և հասաւ ի յունիսի 29 և կսուի թե տեղը ուրիշ մը պիտի անուանուի: Ամեն պարագայի մեջ Ատանայի կուսակալ Պահրի փաշա, արդեն մտած է թերևս ալ նա ինքն շարունակէ պետութեան կողմէ գործել»¹⁹:

Վերոգրյալից պարզ երևում է, որ Օրմանյանը մանրամասնորեն տեղյակ էր ընտրության ընթացքից և, որ այդ ընթացքի գլխավոր խոչնդոտները թուրքական իշխանությունների կողմից հատուկ հրահանգավորված պաշտոնյաներն էին, որոնք տարբեր առիթներ էին օգտագործում ոչ միայն ընտրությունները ձախողելու, այլև հայազգի տարբեր կրոնական առաջնորդների միմյանց հետ թշնամացնելու համար: Մ. արք. Օրմանյանի ակտիվ նամակագրական կապի ուսումնասիրման միջոցավ պարզ է դառնում, որ 1900թ. սկսած օսմանյան իշխանությունների միջամտությամբ խաթարվող Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունները փորձեր էին վերջ դնելու Կիլիկիո կաթողիկոսության գոյությանը: 1902թ փետրվարին օսմանյան կառավարությունը որոշում է Կ. Պոլսի պատրիարքի հետ վարչական իրավասությամբ կապված Կիլիկիո Աթոռն անջատել և առանձին կենտրոն սահմանել: Այս առիթով Մ. արք. Օրմանյանը ներկայացնում է իր թվով երրորդ հրաժարականը և հայտարարագիրը ուղարկում Արդարադատության նախարարություն, որտեղ հայտարարում է. «Բովանդակ օսմանեան հայութեան պատրեարք ընտրուած ըլլալով՝ ինքզինքս ազատ կզգամ երբոր մէկ մասը ինէ կիլուի, և միայն մնացեալ մասին պատրիարք կը պարտաւորիմ»²⁰: Օգոստոսի 18-ին պատրիարքին պաշտոնապէս տեղեկացնում են, որ Աթոռների հարաբերությունները պետք

¹⁸ Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1821, թ. 34:

¹⁹ *Օրմանյան Մ. Արքեպիսկոպոս*, Խոիք և խոսք իր կեանքին վերջին շրջանին մեջ, էջ 199:

²⁰ *Հ. Գուրոնեան*, Հայ ազատագրական փորձ մը ԺԶ դարուն, տե՛ս «Անահիտ» հանդես, թիվ 5 – 6, Փարիզ, 1937, էջ 59:

է հստակեցվեն ելնելով տեղական առանձնահատկություններից և ավանդույթներից: Ի վերջո համառ պայքարից հետո, օսմանյան ղեկավարությունը, հաշվի առնելով ստեղծված անջրպետը Կիլիկիո կաթողիկոսության, Մայր Աթոռի և Կ. Պոլսի Պատրիարքության միջև, թույլ է տալիս իրականացնել կաթողիկոսական ընտրություն, և 1902թ. հոկտեմբերի 12-ին 53 ամյա Սահակ եպիսկոպոս Խապայեանը (1902-1939թթ.) Կիլիկիո թեմի 62 պատգամավորների կողմից միաձայն ընտրվում է Կիլիկիո կաթողիկոս, և վերջ է տրվում տասնամյակներ տևած անլուծելի խնդրին:

Այսպիսով, ուսումնասիրելով Մ. Արք. Օրմանյանի հաղորդագրությունները տարբեր գործիչների և հատկապես տվյալ ժամանակաշրջանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Մ. Խրիմյանի հետ ունեցած նամակագրական կապը, հանգում ենք այն եզրակացությանը, որ Կիլիկիո կաթողիկոսության խնդիրը ուներ արհեստածին բնույթ և օգտագործվում էր օսմանյան իշխանությունների կողմից հայկական համայնքը Կիլիկիայում ջլատելու և ոչնչացնելու նպատակով: Այդ պատճառով կիրառվում էին տարբեր միջոցներ ու լծակներ կաթողիկոսի ընտրությունը ձախողելու համար: Այն ի վերջո տեղի չունեցավ, և ընտրված Կաթողիկոս Սահակ եպիսկոպոս Խապայեանին հաջողվեց հետագա տարիներին մեծ ջանքերի գնով ոչ միայն վերականգնել ոչնչացման եզրին հայտնված Կիլիկիո Կաթողիկոսությունը, այլև ամուր կապեր հաստատվեցին Մայր Աթոռի և Կ. Պոլսի պատրիարքության հետ:

Արամ Խաչատրյան – Проблема армянского патриархата Киликии в 1894-1902гг.

– В эпоху Гамида по отношению к армянской патриархии в Киликии велась так называемая политика постепенной ликвидации, это наиболее ясно проявилось в 1890-ых годах. В 1895-1902 гг. патриархия не имела законно избранного духовного правителя, причиной этому являлись те трудности, которые создавало турецкое правительство. По поводу этого вопроса были обеспокоены архиепископ Магакии Орманиян и патриарх Всех Армян МкртычХримян. Они с помощью потайной письменной связи между собой смогли решить этот вопрос. Об этой связи до сих пор много неизвестного, и, изучив все обстоятельства, мы приходим к выводу, что основной трудностью по избранию армянского патриарха в Киликии являлось турецкое правительство.

Aram Khachatryan – The problem of armenian patriarchate of Kilikia in 1894-1902. – During Hamidian government the Osmaniaan leaders realized the policy of gradually demolishing the Cilician partriarchate, which became especially obvious during 1890s. From 1895 – 1902 the patriarchate didn't have a legally elected primate. The main reason were the obstacles created by the Turkish government. People, deeply interested and troubled about this problem, were the bishop Ormanyan and the patriarch of all Armenians Mkrtych Khrimyan. They had discussed the question secretly by letter-writing and finally solved the problem. Today little information is known about that letter-writing and having studied it, we come to the conclusion that the main opposite power against the elections of the patriarch were Osmaniaan rulers.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ ԵՎ ՄԻՔԱՅԵԼ ՍԵՔԱՍՏԱՑԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՊՀ Քաղաքագիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ

Հոդվածում վերլուծության են ենթարկվում Ստեփանոս Սալմաստեցի և Միքայել Սեբաստացի կաթողիկոսների քաղաքական հայեցակարգերը Հայաստանի ազատագրության վերաբերյալ: Այն տեսակետն է հիմնավորվում, որ վերջիններս ընտրել էին մի ճանապարհ, որը խոստումնալից չէր հայության ազատագրման տեսանկյունից: Հայաստանի ազատագրման նրանց հայեցակարգերում գնահատված չէին սեփական հնարավորությունները և փոխարենը գերազնահատված Արևմուտքի տերությունների հնարավորությունները, մշակված չէին հստակ քաղաքական ծրագրեր, այլ քաղաքական հարցեր էին փորձ արվում լուծել աղերսագրերի կամ դիմումագրերի միջոցով, մոռանալով, որ քրիստոնյա տերությունները իրենց պատմության ընթացքում երբեք քաղաքական գործելակերպի հիմքում չեն դրել քրիստոնեական բարոյական արժեքները, այլ՝ քաղաքական շահերը, թեկուզ և դրանք հակասում էին քրիստոնեական արժեքներին: Նրանք մոռանում էին այն հանգամանքը, որ կաթողիկոսություն ընդունելը չէր կարող պայման հանդիսանալ Հայաստանի ազատագրության համար և վաղուց արդեն պայլը կորցրել էր խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի իր դերը: Ստ. Սալմաստեցու և Միքայել Սեբաստացու հայեցակարգերը հետագայում ևս ընկան քաղաքական ծրագրերի հիմքում, որոնք իրենց հետևանքներն ունեցան հայ քաղաքական մտքի շարունակական պարտությունների վրա:

Բանալի բանեք. հայեցակարգ, քաղաքական միտք, քաղաքական ծրագրեր, Հռոմի պապ, Եվրոպական տերություններ, Հայաստանի ազատագրություն, կաթողիկոսություն, եկեղեցական ժողով:

Ստեփանոս Սալմաստեցի և Միքայել Սեբաստացի կաթողիկոսների գործունեությանը հայ պատմագրությունը բազմիցս անդրադարձել է, բայց կարծում ենք, այն քաղաքական դասերը, որոնք անհրաժեշտ է քաղել վերջիններիս գործունեությունից, գրեթե չեն մատնանշվել և նրանց հայեցակարգային մոտեցումները հայության քաղաքական ազատության վերականգնման վերաբերյալ լուրջ հաշվեկշռի չի ենթարկվել:

Անհրաժեշտ է նաև մատնանշել, որ քրիստոնյա տերությունների օգնությամբ ազատագրվելու հայեցակետը սկզբնավորվել է Մայր Աթոռից, որն այն համոզմունքն ուներ, թե հայ ժողովուրդը սեփական ուժերով անկարող է ազատագրվել, որը ճիշտ չէր և այդ ազատագրությունը կարող էր լինել միայն Արևմուտքի կողմից, ավելին՝ Հռոմի պապի, մոռանալով, որ վաղուց անցել էին խաչակրաց արշավանքների ժամանակները: Այստեղ, իհարկե, իր դերն ուներ նաև հայ նախարարական կամ իշխանական տների մեծամասամբ ոչնչացված լինելու հանգամանքը, որն ինքնին եկեղեցուն ուղորդում էր դեպի քրիստոնյա տերություններ տանող խոտոր ճանապարհը:

Դա վերաբերվում է նախ և առաջ Ստեփանոս Ե Սալմաստեցի կաթողիկոսին, որը 1547թ. հրավիրեց խորհրդածողով Էջմիածնում, և պատրաստեց մի աղերսագիր՝ ուղղված Վենետիկի դոժին՝ հայցելով նրա օժանդակությունը «այլադենից» ազատագրվելու համար: Խորհրդածողովին մասնակցում են բարձրաստիճանի հոգևորականներ, առևտրականներ, մելիքներ: Պատվիրակությունը 1548թ. Կ. Պոլսի վրայով մեկնում է Եվրոպա և առաջին հանգրվանն է կատարում Վենետիկում: Ժամանակին այն տեսակետն է շրջանառվել, որ հայերի և վենետիկցիների միջև առկա առևտրական սերտ կապերն են ստիպել, որ պատվիրակությունն սկզբում իջևանի այնտեղ¹: Պատվիրակության անդամները թերևս մտորել են նաև Վենետիկում քաղաքական կշիռ ունեցող հայ վաճառականների օգնությամբ դոժին ներկայացնել իրենց խնդիրը: Դ. Ալիշանը վկայում է, որ դոժին ուղղված իրենց աղերսագրում հայ հեղինակները գրում էին, որ Վենետիկ են հղում կաթողիկոսին՝ իրենց վիճակի մասին զեկուցելու և միաժամանակ խնդրում էին, որ վերջինս օժանդակի հայոց կաթողիկոսին Հռոմ մեկնելու և պապին ներկայանալու համար²:

Ստեփանոս Սալմաստեցին նույն 1548թ.-ին հանդիպում է ունենում Վենետիկի դոժի հետ, որին ներկայացնում է Հայաստանի կացությունը և առաջարկում է այն մահմեդականների լծից ազատագրելու համար Եվրոպայում ստեղծել համադաշնություն՝ Վենետիկի հանրապետության առաջատար դերակատարությամբ: Դոժը նրան սիրաշահում է, քանի որ այդ ընթացքում սրված էին Վենետիկի և Թուրքիայի հարաբերությունները: Սակայն նրա միակ օժանդակող քայլն այն է լինում, որ նպաստում է կաթողիկոսի Հռոմ մեկնելուն 1549թ.-ին, ուր նա շարունակում է բանակցությունները Հոլիոս 3-րդ պապի հետ: Վատիկանում նրա հանդիսավոր ընդունելությունը դրական արդյունք չի տալիս այն պարզ պատճառով, որ Հռոմի պապը, եթե ուզենար էլ, ոչ մի քաղաքական և ռազմական օգնություն չէր կարող տրամադրել հայերին, հետևյալ պատճառներով. ա) Հռոմի պապը վաղուց կորցրել էր եվրոպական տերություններին համախմբելու իր դերը, բ) Թուրքիան ապրում էր իր վերելքային շրջանը և Եվրոպան ինքը խնդիր ուներ նրա ռազմաքաղաքական նկրտումների առաջն առնելու, որը նշանակում էր, որ քաղաքական ռոմանտիզմով տարվել էր նշանակում Հռոմի պապի հետ հույսեր կապելը: Ուստի և, ամենևին թող զարմանալի չհնչի այն հանգամանքը, որ քաղաքական բանակցությունները վեր են ածվում կրոնադավանաբանականի: Քաջ հասկանալով, որ հայերը միամտորեն իր հետ հույսեր են կապում և մտածելով, որ այդ հույսերը կարող են ստիպել կաթողիկոսին ազգովի դավանափոխության առաջարկին համաձայնվել, պապը հենց այդ խնդիրն էլ դնում է որպես օգնության պայման, որին միամտորեն հավատում է Սալմաստեցին: Քաղաքական միամտությամբ ներշնչված Սալմաստեցին նույնիսկ տալիս է կաթողիկոսություն ընդունելու համաձայնություն, 1549թ. օգոստոսի 2-ին գրավոր հնազանդություն հայտնելով Հռոմի պապին: Խնդիրը դրանով էլ փակվում է: Հետաքրքիր է, որ կաթողիկ աղբյուրների վկայությամբ Ս. Սալմաստեցին Հռոմ է մեկնել հենց պապին հնազանդվելու առաջարկություն անելու և իր ու իրեն ենթակա 27 եպիսկոպոսների կողմից կաթողիկոսություն ընդունելու առաջարկի համար: Եթե սա ճիշտ համարենք, ապա՝ պետք է այն տեսակետը չվիճարկենք, որ նա մինչև հանդիպումն

¹ Ալիշան, Հայ – Վենետ, Վենետիկ, 1896, էջ 329:

² Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. 4, Երևան, 1972, էջ 92:

արդեն ծրագրել էր կաթողիկոսություն ընդունել, միայն թե իր ժողովրդին ազատագրեր մահմեդական լծից³:

Անկախ այն հանգամանքից, Հռոմում է եղել նրան այդ առաջարկը, թե՞ մինչև այնտեղ մեկնելը կաթողիկոսն էր այդպես որոշել, պետք է այն գիտակցությունն ունենային, որ դավանափոխ լինելով հայության ազատագրության ձգտումներն անհնար էր իրականություն դարձնել և իսկապես «ծանր պատճառներ կային», «որոնք խանգարում էին նրա ջանքերի իրականացմանը»⁴:

Խնդիրը դրական լուծում չէր կարող ունենալ ոչ դավանափոխ լինելով ոչ էլ Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ մնալով, քանզի տվյալ իրավիճակում կրոնը ոչ մի գործոն չէր կարող լինել հայության ազատագրության համար և վստահորեն կարելի է պնդել, որ երբեք չի էլ եղել, եթե այսօր թոթափված համարենք պատմաբանների և քաղաքագետների այն ըմբռնումները, որ Ռուսաստանի կողմից հետագայում Արևելյան Հայաստանը ոչ թե ազատագրվել է, այլ՝ գրավվել:

Հռոմի պապի կողմից հայոց ազատագրական ձգտումները շահարկվում էին, իսկ հայ հոգևոր ղեկավարները դա չէին հասկանում: Եվ չհասկանալով, պապի հանձնարարականով Սալմաստեցին անցնում է Վիեննա, ապա՝ Վարշավա, ուր բանակցություններ է վարում գերմանական կայսր Կառլոս 5-ի ու Լեհաստանի թագավոր Սիգիզմունդ 2-ի հետ, անշուշտ նույն խնդրով, բայց բնականաբար՝ ապարդյուն: 1551թ. նա ձեռնունայն վերադառնում է Հայաստան:

Ընդհանրացնելով հարկ է շեշտել, որ Ս. Սալմաստեցու հայեցակարգը Հայաստանի ազատագրության մասին չէր բխում քաղաքական իրավիճակի սթափ վերլուծությունից, այն բխում էր մասնավորապես հետքրիստոնեական հայկական պետականությունների շրջանում և դրանց անկումից հետո ձևավորված այն քաղաքական թյուր ըմբռնումից, որ պետք է լինել միշտ քրիստոնյա տերությունների կողքին: Պետք է նաև մեկ անգամ էլ ավելացնել, որ նրա հայեցակարգում հստակորեն մատնանշված չէ այն կարգավիճակը, որը պետք է ունենար իր քաղաքական ծրագրի իրականացման դեպքում ազատագրված Հայաստանը: Համենայն դեպս, այն փաստերը, որոնք առկա են նրա գործունեության մասին, ավելի շատ ենթադրել են տալիս, որ նա ձգտել է հասնել ոչ թե պետականության վերականգնման, այլ՝ քրիստոնյա տերության հովանավորության:

Ստեփանոս Սալմաստեցու քաղաքական հետևորդն էր կաթողիկոս Միքայել Ա Սեբաստացին: Վերջինիս նախաձեռնությամբ 1562թ. մայիսի 20-ին Սեբաստիայի Ս. Աստվածածին եկեղեցում գումարում է գաղտնի ժողով, որին մասնակցում էին արևմտահայ և արևելահայ գործիչներ, ինչը վկայում է այն մասին, որ դրվել է երկու՝ Հայաստանի ազատագրման խնդիրը: Ժողովի մասնակիցները, ցավոք, շարունակում են Հռոմի պապին ընկալել որպես արևմտավրդպական քաղաքական ձգտումներն ընդհանրացնող անձնավորության, ինչը նշանակում է, որ նրանք ի սկզբանե սխալ քաղաքական դիրքորոշում են որդեգրել: Ժողովը կազմում է մի պատվիրակություն Աբգար դպիր Թոխատեցու (Եվդոկացու) գլխավորությամբ, որը պետք է մեկնել Եվրոպա Հռոմի պապի հետ բանակցություններ վարելու՝ հանուն Հայաստանի ազատագրության: Աբգարը սերում էր Արծրունիների տոհմից, զարգացած և գիտուն մարդ էր: Նա նախ մեկնում է Վենետիկ, ուր դեգերում է մինչև 1564թ. աշունը: Մինչև նրա այնտեղ հասնելը Հռոմում ստա-

³ Գ. Վարդապետ Պետրովիչ, Ստեփանոս Ե Սալմաստեցի, կաթողիկոս Էջմիածնի, Վենետիկ, 1964, էջ 9:

⁴ Raynaldus, Annales Ecclesiastici, t. 14, Anno, 1549, p. 51.

նում են Միքայել Մեքաստացու ծածկագիր գրությունը, ուր «Հայոց տերանց» անունից, որի տակ պետք է հասկանալ հայ բարձրագույն եկեղեցականներին և մեծատուններին, պատրաստակամություն էր հայտնվում ենթարկվելու պապի գերիշխանությանը՝ եթե նրա օգնությամբ ազատագրվեր Հայաստանը: Իսկ Աբգար դավի Թոխատեցու՝ պապին ուղղված թղթում կարդում ենք՝ «Հարկ է, որ լինի մի հոտ և մի հովիվ և այդպես լինելուց հետո ժամանակն է, որ կարողանանք ձեր բազմությունը ազատվել այս գերությունից»⁵:

Ինչպես համոզվում ենք, խնդիրը դրվում էր այսպես՝ հայ ժողովուրդն ընդունում էր կաթոլիկությունը, որը նշանակում է՝ պապի հոգևոր իշխանությանն ենթարկվելը, պայմանով, որ նա օգնի հայությանն ազատվելու մահմեդական գերությունից: Չուզենալով քննարկել այն հարցը, թե այս դիմումը որքանով էր բխում հայրենասիրական ձգտումներից, ուզում ենք դարձյալ ընդգծել, որ ընտրված ճանապարհը նման ձգտումներն իրագործելու համար սխալ էր ընտրված: Նույնիսկ զարմանալի է հնչում, թե ինչպե՞ս կարելի էր հույսեր փայփայել պապից, որը ռազմական և քաղաքական առումներով իրենից ոչ մի ուժ չէր ներկայացնում: Եթե հույսը դրվում էր նրա վրա, որ կաթոլիկ դառնալով կարելի էր շահել Եվրոպական տերությունների համակրանքը, ապա՝ տարրական քաղաքական ըմբռնումը պետք է ստիպեր խորհելու, որ կաթոլիկության հանգամանքն արգելք չհանդիսացավ Բյուզանդիայի նման տերության կործանմանը, որին մատների արանքով նայեցին Արևմտաեվրոպական մյուս տերությունները: Ուրեմն, եզրակացությունը կրկին նույնն է՝ հայ քաղաքական միտքն ընթանում էր մի ճանապարհով, որը տանում էր դեպի փակուղի:

Սակայն Հռոմի պապն այդքան անհեռատես չէր Աբգար Թոխատեցուն՝ հայոց հոգևոր առաջնորդի պատգամաբերին մերժելու համար, քանզի վերջինիս և հայոց առաջնորդների ցանկությունները կարող էին նպաստել իր հոգևոր իշխանության շրջանակների ընդլայնմանը: Եւ պատահական չէ, որ Հռոմի Պիոս 4–րդ պապն ընդունում է Աբգարին, որը նրան հասկացնում է, թե հայոց կաթողիկոսը պատրաստ է ազգովի հնազանդվել լատինական եկեղեցուն, եթե նա ստանձնի հայ ժողովրդի ազատագրության գործը: Եվ սա Աբգարը ներկայացնում է որպես նախապայման՝ կաթոլիկության ընդունման, առանց որի իրականացման անհրճառ համարելով դավանափոխությունը: Հետաքրքիր է, որ դրվել է ինչպես թուրքական, այնպես էլ՝ պարսկական տիրապետությունից ազատվելու խնդիրը, որի առավել քան անհնարինությունը չէր գիտակցվում:

Բայց այդ գիտակցումն, անշուշտ, Հռոմում կար, քանի որ ցանկանալով ժամանակ շահել, Աբգարին ուղարկում են Հայաստան, որպեսզի Հռոմ առաջնորդի կաթողիկոսին՝ բանակցությունները շարունակելու նպատակով: Ինչպես վկայում է Աշ. Հովհաննիսյանը՝ Հռոմում պապը Աբգարին սիրաշահում է այն խոսքերով, թե Հայաստանից Հռոմ ժամանեցի որպես արքայազն, հիմա քեզ մեծարելով իբրև արքայի՝ ուղարկում եմ Հայաստան՝ ինձ մոտ առաջնորդելու նաև հայոց պատրիարքին:

Աբգարը 1569թ. հայոց կաթողիկոսին է ներկայացնում մանրամասն զեկուցագիր իր առաքելության մասին, որով փաստորեն ավարտ են գտնում Միքայել Մեքաստացու և իր բանագնացի քաղաքական դեգերումները: Բայց ժամանակա-

⁵ Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2 – րդ, Երևան, 1959, էջ 43:

վորապես, քանի որ Աբգարի գործունեությունը շարունակում է որդին՝ Սուլթան-շահը: Վերջինս մնալով Հռոմում՝ ձեռք է բերում պապի հովանավորությունը՝ ստանալով տեղի հայ գաղութի վերակացուի պաշտոնը: Նա միաժամանակ զբաղվում է հրատարակչական գործունեությամբ՝ Վենետիկում շարունակելով իր հոր սկսած «Սաղմոսի» հրատարակությունը: Սակայն կարևոր է այն, որ նա շարունակում է մնալ իր հոր քաղաքական հայացքների հետևորդը, որը դարձյալ քաղաքական իրավիճակի ընկալունակությունից չէ, որ բխում էր: Քանի որ Հռոմում պետք է կայանար համաքրիստոնեական համաժողով, Սուլթանշահը ցանկանում է ապահովել դրան հայոց եկեղեցու մասնակցությունը: Նա 1575թ. հրավիրագրեր է ուղարկում հայկական եկեղեցիների ղեկավարներին այդ մասնակցությունն ապահովելու համար, փորձելով նրանց համոզել, որ այդ խորհրդածոյվը կլինի հայերի քաղաքական ազատագրման նախաձեռնողը: Ըստ երևույթին այս հույսի փայփայմամբ պետք է պայմանավորել այն, որ 1575թ. հայոց կաթողիկոս Թադևոսը ժամանում է Լվով, Վենետիկ և ապա՝ Հռոմ, բանակցություններ վարելու պապի, Վենետիկի դոժի և Լեհաստանի թագավորի հետ: Բանակցությունները տեղի են ունենում, սակայն ոչ մի արդյունք չեն տալիս: Նույն թվականին Սսի Խաչատուր Բ Ձեյթունցի կաթողիկոսը հատուկ ուղերձով դիմում է Գրիգորի 13-րդ պապին օգնության խնդրանքով, բայց դարձյալ ապարդյուն: Իսկ նրա հաջորդ Ազարիա Ա Ջուղայեցին 1584-ին Վատիկան է ուղարկում մի դիմումնագիր, ուր շեշտում է, թե հայերը պատրաստ են ընդունելու կաթոլիկություն, եթե նրանց ռազմական օգնություն ցույց տրվի ընդդեմ թուրքերի և Հայաստանն ազատագրվի անօրեններից: Բայց այն նույնպես նախորդների պես մնում է թղթի վրա:

Ամփոփելով վերոշարադրյալը, անհրաժեշտ է հետևյալ եզրակացությունները կատարել.

Առաջին. Հայ քաղաքական միտքը 16-րդ դարում ամեննին չէր բխում այն ռազմաքաղաքական իրադրության ճիշտ ընկալումից, որը տիրում էր Արևմուտքում և Մերձավոր ու Միջին Արևելքում:

Երկրորդ. Այդ մտքի հայոց քաղաքական ազատության վերաբերյալ պատկերացումներում լրիվ անտեսված էր այն հանգամանքը, որ ժամանակաշրջանի մեծ տերություններին դիմելուց առաջ անհրաժեշտ էր ճշտել նաև սեփական ժողովրդի պայքարի հնարավորությունը, որը տվյալ իրավիճակում բացառված էր, քանի որ դեռևս Թուրքիան և Պարսկաստանը պատերազմական իրավիճակում էին գտնվում միմյաց հետ հանուն Հայաստանի, որի պայմաններում անհնար էր հայության համախմբումը և պայքարը, առանց որի անհնար էր որևէ դրսի օժանդակություն: Բացառված էր այն ըմբռնումը, որ քանի դեռ ռազմական առումով քեզանից ոչինչ չես ներկայացնում, անհնար է որևէ գերտերության հաշվի նստելը քո ձգտումների հետ:

Երրորդ. Հայաստանի ազատագրման հայեցակարգերում գնահատված չէին սեփական հնարավորությունները և փոխաբենը գերազնահատված Արևմուտքի մեր մատնանշած տերությունների հնարավորությունները, մշակված չէին հստակ քաղաքական ծրագրեր, այլ քաղաքական հարցեր էին փորձ արվում լուծել աղերսագրերի կամ դիմումնագրերի միջոցով, մոռանալով, որ քրիստոնյա տերությունները իրենց պատմության ընթացքում երբեք քաղաքական գործելակերպի հիմքում չեն դրել քրիստոնեական բարոյական արժեքները, այլ՝ քաղաքական շահերը, թեկուզ և դրանք հակասում էին քրիստոնեական արժեքներին:

Չորրորդ. Մոռացվում էր այն հանգամանքը, որ կաթոլիկություն ընդունելը չէր կարող պայման հանդիսանալ Հայաստանի ազատագրության համար և վաղուց արդեն պապը կորցրել էր խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի իր դերը, թեև այդ շրջանում էլ քրիստոնեական արժեքները մահմեդականներից փրկելու կարգախոսները վարագուրում էին քաղաքական ցանկությունները:

Յավով պետք է ավելացնել, որ Ստ. Սալմաստեցու և Միքայել Սեբաստացու հայեցակարգերը հետագայում ևս ընկած մնացին քաղաքական ծրագրերի հիմքում, որոնք իրենց հետևանքներն ունեցան հայ քաղաքական մտքի շարունակական պարտությունների վրա:

Айк Маргарян – Концепции католиков Степаноса Салмастеци и Микаэла Себастаци об освобождении армянского народа. – В статье подвергаются анализу политические концепции католиков Степаноса Салмастеци и Микаэла Себастаци об освобождении Армении. Обосновывается та позиция, что последние выбрали путь, который не был многообещающим с точки зрения освобождения армянства. В их концепциях освобождения Армении не были оценены собственные возможности, а взамен – переоценены возможности держав Запада, не были разработаны четкие политические программы, предпринимались попытки решения других политических вопросов посредством прошений и заявлений, забыв о том, что христианские державы в течение своей истории никогда не закладывали в основу политического образа действий христианские моральные ценности, а – политические интересы, хотя они и противоречили христианским ценностям. Они забывали то обстоятельство, что принятие католичества не могло являться условием для освобождения Армении, и давно уже Папа Римский утратил свою роль периода крестовых походов. Концепции Степаноса Салмастеци и Микаэла Себастаци в дальнейшем также были заложены в основу политических программ, которые имели свои последствия на последовательных поражениях армянской политической мысли.

Hayk Margaryan – The concepts of catholicoses Stepanos Salmastetsi and Michael Sebastatsi on the liberation of the armenian people. – This article analyzes the political concepts of Catholicoses Stepanos Salmastetsi and Michael Sebastatsi on the liberation of Armenia. It substantiates the position that the latter chose the way that was not promising in terms of the liberation of the Armenians. Their own possibilities were not estimated, but the possibilities of the Western powers were overvalued instead, clear political programs were not developed, and the attempts to address other political issues through petitions and written requests were made in their concepts of the liberation of Armenia, forgetting that the Christian powers in the course of their history had never taken Christian moral values but political interests as the principle for political line of action, even though they contradicted the Christian values. They forgot the circumstance that the adoption of Catholicism could not be a condition for the liberation of Armenia, and the Pope had lost his role as that of during the Crusades for a long time. The concepts of Stepanos Salmastetsi and Michael Sebastatsi further also underlay the political programs that had their effects on successive defeats of the Armenian political thought.

ИЗ ВОЕННО - ДИПЛОМАТИЧЕСКОЙ ИСТОРИИ СЕМИЛЕТНЕЙ ВОЙНЫ (1756 - 1763)

ТАРОН САКОЯН

Преподаватель истории и права

Данная статья является чистым обобщением по вопросам военно-политических деяний европейских стран в предверии семилетней войны. В статье представлены так же причины возникновения войны, проводимые дипломатические меры и анализ их мотивов. Автором отводится особое место к освещению военных действий, которые проводились с двух сторон, показывает их результаты, а так же закулисные интриги, которые происходили в европейских дворах. Так же подчеркивается их влияние на процесс войны и на ее результат.

Ключевые слова: внешнеполитическая переориентация, колониальное соперничество, реванш, угроза государственным границам, европейский конфликт, анти-прусская коалиция, гегемония в Центральной Европе, территориальные приобретения, господство на морях.

Обозначение «семилетняя» война получила в 80-х годах XVIII века, до того о ней говорили как о «недавней» войне. Этот межгосударственный конфликт частично нарушил сложившуюся в Европе (после войны за Австрийское наследство) систему военно-политических союзов и вызвал внешнеполитическую переориентацию ряда европейских держав. Традиционное соперничество между Австрией и Францией за гегемонию на континенте было ослаблено появлением третьей силы: Пруссия, после прихода к власти в 1740 году Фридриха II, начала претендовать на ведущую роль в европейской политике. Получив от отца Фридриха Вильгельма I, цветущее государство и полную казну, Фридрих II реформировал армию, сделав ее образцовой, и сделался одним из величайших полководцев в мировой истории. Он обогатил военное искусство знаменитым косым боевым порядком¹. Его изречение: «Солдат должен бояться палки капрала больше, чем пули врага» стало крылатым². Многие современники Фридриха II называли его самым просвещенным из монархов. Действительно, он увлекался литературой, философией, музыкой, риторикой. Император Франции Наполеон Бонапарт, высоко ценивший военное искусство прусского короля-полководца, в 1806 г. так отозвался о нём, отдавая честь его памяти: «Будь он жив, не бывать бы нам сейчас в Пруссии»³. Фридрих не собирался ограничивать свою деятельность только внутригосударственными делами. Пруссия, превратившаяся при Фридрихе Вильгельме в сильное военное государство, должна была, по его мнению, потеснить старые европейские державы, прежде всего Австрию, чтобы занять среди них подобающее ей место. Теперь наступило время, – писал король философу-просветителю Вольтеру, – когда старой полити-

¹ ЗУЗ, р. Երկրի, 1986թ., հատոր 12, էջ 735

² Е.Г. Жадько, «Сто великих династий», г. Москва, 2001г., с. 195

³ А.В. Шипов, «Сто великих военачальников», г. Москва, 2000г., с. 300

ческой системе должно дать совершенно новое направление; оторвался камень, который скатится на многоцветный истукан Навуходоносора и сокрушит его до основания⁴. Внешнюю политику своей страны Фридриха II вел лично.

С воцарением на прусском престоле Фридриха II обстановка в Европе стала напряжённой. Как талантливый полководец Фридрих II впервые заявил о себе во время первой (1740-1742) и второй (1744-1745) Силезских войн, ставших частью общеевропейской борьбы за Австрийское наследство. Прусский монарх, успевший к тому времени создать довольно сильную армию, нанёс ряд крупных поражений лучшим полководцам Австрии и Саксонии. Победив в Силезских войнах, Фридрих отнял у Австрии Силезию, одну из ее богатейших провинций, которая окончательно осталась за Пруссией в результате Аахенского мирного договора 1748 года. Для Австрии становилось ясно, что отныне Пруссия, как новая европейская держава, будет ее опасным соперником в германских делах. И хотя несмотря на это, Австрия не могла так просто смириться с потерей Силезии. Главной причиной войны было столкновение колониальных интересов Великобритании и Франции. Первые выстрелы Семилетней войны раздались задолго до её официального объявления, и не в Европе, а за океаном. В 1754-1755 гг. англо-французское колониальное соперничество в Северной Америке привело к пограничным стычкам между английскими и французскими колонистами. К лету 1755 года столкновения вылились в открытый вооруженный конфликт. В 1756 году Великобритания официально объявила войну Франции. Начав войну с Францией, Великобритания в январе 1756 года заключила союзный договор с Пруссией (Вестминстерская конвенция), желая тем самым обезопасить себя от угрозы французского нападения на Ганновер, наследственное владение английского короля на континенте. Фридрих, справедливо считая войну с Австрией неизбежной и сознавая ограниченность своих материальных ресурсов, сделал ставку на английское золото, рассчитывая так же с помощью существующих тесных связей между Великобританией и Россией, удержать последнюю от возможного участия в предстоящей войне на стороне Австрии и избежать, тем самым, войны на два фронта. Однако, как показало будущее, он ошибся. Переоценив влияние Англии на Россию, он, в то же время, явно недооценил возмущение, вызванное его договором с англичанами во Франции. В итоге Фридриху пришлось воевать с коалицией из трёх сильнейших континентальных держав и их союзников. Очутившись в тяжелом положении Фридриху было понятно то, что Англия, не имеющая сильной сухопутной армии, кроме субсидий, мало чем сможет ему помочь. Английские сухопутные войска почти не участвовали в боевых действиях на европейской территории – Великобритания в той войне свои силы направила на захват французских колоний в Америке, в чём и преуспела. А на британские субсидии Фридрих II завербовал и вооружил нужное количество наёмников. Союз Великобритании и Пруссии сохранялся на протяжении всей войны, британские субсидии позволили Фридриху II в течение нескольких лет довольно успешно противостоять антипрусской коалиции. Заключение англо-прусского союза подтолкнуло Австрию, жаждущую реванша за потерю Силезии, пойти на сближение со своим старым врагом – Францией, для которой Пруссия отныне так-

⁴ И.А. Мусский, “Сто великих дипломатов”, г. Москва, 2001г., с. 232

же стала врагом. Автором нового внешнеполитического курса Австрии стал знаменитый дипломат того времени граф Кауниц. Между Францией и Австрией был подписан в Версале оборонительный союз, к которому в конце 1756 года присоединилась Россия. В России усиление Пруссии воспринималось как реальная угроза её западным границам и интересам в Прибалтике и на севере Европы. В России были не на шутку встревожены усилением Пруссии. Канцлер Бестужев-Рюмин занял решительную позицию против нее, находя опасной для России, «по причине ее соседства и увеличения ее могущества»⁵. Тесные связи с Австрией, союзный договор с которой был подписан ещё в 1746 году, также повлияли на определение позиции России в назревающем европейском конфликте. Любопытно то, что разрыв дипломатических отношений с Пруссией задолго до начала войны, Россия, тем не менее, в течение всей войны не порывает дипломатических отношений с союзницей Пруссии Англией. Шла энергичная дипломатическая работа в результате чего в так называемую Семилетнюю войну была вовлечена почти вся Европа. В антипрусской коалиции состояли Франция, Россия, Австрия, Саксония, Польша и Швеция. Последняя, в свою очередь считала, что складывающаяся в Европе обстановка благоприятствует возвращению померанских владений, утраченных Швецией в пользу Пруссии в 1720 году (в ходе Великой Северной войны 1700-1721 гг.)⁶. К войне Швецию подталкивала также и французская дипломатия. Основную тяжесть Семилетней войны вынесла на себе Пруссия, которой пришлось одновременно воевать против сил Франции, Австрии, Саксонии, Польши, Швеции и России. Союзники выставили против Пруссии огромную армию в количестве 419 000 солдат. В распоряжении Фридриха II было лишь 200 000 солдат плюс 50 000 защитников Ганновера, нанятых за английские деньги⁷. Стратегическое положение Пруссии казалось критическим. Однако в ходе войны союзники действовали несогласованно, порознь друг от друга на широком фронте. Фридрих II опередил своих противников, в очередной раз проявляя себя талантливым полководцем. Быстро перебрасывая войска из одного фронта в другое и нанося стремительные удары, Фридрих не только поначалу отражал все их нападения, но и сумел одержать целую серию блистательных побед, которые повергли в изумление всю Европу.

Семилетняя война началась в августе 1756 г. нападением Пруссии на соседнюю Саксонию. 95-тысячная королевская армия окружила 18-тысячную саксонскую армию, которую возглавлял король Польши Август III (одновременно являлся саксонским курфюрстом). 4 октября саксонская армия капитулировала (при Пирне), ее солдаты влились в ряды прусских войск. Сам Август III бежал в Польшу. После в войну вступили Австрия и Франция. Фридрих II сначала выступил против Австрии. Весной 1757 года Фридрих вторгся в Богемию с войском в 121,5 тысячи человек. 6 мая под Прагой прусский король нанёс поражение 60-тысячной австрийской армии под командованием фельдмаршала М. Брауна и блокировал её в Праге. Однако тому на выручку подоспела 50-тысячная австрийская армия фельд-

⁵ там же, с. 234

⁶ **Б.В. Соколов**, «Сто великих войн», г. Москва, 2001 г. с. 272

⁷ **К.В. Рыжов**, «Сто великих монархов», г. Москва, 2005 г., с. 229, **А.В. Шишов**, «Сто великих военачальников», г. Москва, 2000 г., с. 303

маршала Л. Доуна, которая в сражении при Колине разбила прусские войска. Король был вынужден покинуть Чехию. К этому времени с запада начали наступать французские войска, которые захватили Ганновер и стали угрожать вторжением в Прусское королевство. Незамедлительно перебросив главные силы своей армии от границ с Австрией на запад, Фридрих в ноябре 1757 года при Росбахе одержал блестящую победу над франко-австрийскими силами Ш. де Субиза и Хильдбургхаузена. Росбахская победа обезопасила Пруссию от вражеского вторжения. Она же позволила королю Фридриху II перебросить главные силы своей армии (40 тысяч человек) форсированным маршем в Силезию, где прусские войска терпели поражение. В декабре 1757 года у деревушки Лейтен (Силезия) разгорелась ожесточенная битва между прусскими (33-тысячной) и австрийскими (свыше 60 тысяч) силами. Прусская кавалерия, под командованием генерала Зейдлица, действовала блестяще. Победа прусских сил была решающей, австрийский главнокомандующий герцог Карл Лотарингский был вынужден отступить. Вскоре был захвачен Бреславль, где 18 тысяч австрийцев сдались в плен. Силезия вновь оказалась под прусским контролем. Оставив австрийский фронт, Фридрих поспешил в Восточную Пруссию, в которой разворачивалась русская армия. После долгих колебаний императрица Елизавета Петровна решила двинуть в Европу русскую армию, на чём так упорно настаивал венский двор. Теперь ситуация на европейском театре военных действий стала складываться не в пользу Прусского королевства, которое оказалось в одиночестве против мощной коалиции. Великобритания не собиралась посылать своих солдат на материк, продолжая щедро субсидировать Берлин и успешно воевать против Франции на морях и в американских колониях.

Еще летом 1757 года 65-тысячная русская армия под командованием генерал-фельдмаршала Апраксина двинулась в Литву, собираясь овладеть Восточной Пруссией. В августе русские войска подошли к Кенигсбергу. В том же месяце у деревни Гросс-Егерсдорф, прусский корпус (28 тысяч) генерал-фельдмаршала Левальда был разбит превосходящими силами русских (55 тысяч). Несмотря на победу, Апраксин, к крайнему изумлению пруссаков, приказал отступить, мотивируя это недостатком снабжения и отрывом армии от своих баз. Фельдмаршала обвинили в измене и предали суду⁸.

Оказалось, что Апраксин действовал в данном случае по тайному указанию канцлера Бестужева, напуганного внезапной болезнью императрицы Елизаветы, и опасался перемены в русской политике, которая должна была неминуемо произойти в случае кончины Елизаветы, так как наследник престола (Петр III) был сильно расположен к Фридриху. Государыня, разгневанная таким самовольным способом действий канцлера Бестужева, приказала немедленно предать суду и его, и Апраксина.

В 1758 году новый русский главнокомандующий граф В. Фермор с 70-тысячной армией занял Восточную Пруссию, овладел Кенигсбергом и продолжил наступление на запад. В августе 1758 года произошло кровопролитное сражение у Цорндорфа. Русские были разбиты во многих местах, но упорно не желали отступать. Только темнота положила конец сражению. На следующий день битва не возобновилась и Фридрих направился в Саксонию. В 1759 году Фермора сменил граф

⁸ *Б.В. Соколов*, "Сто великих войн", г. Москва, 2001 г. с. 274

П. Салтыков. В июне русская армия выступила из Познани к реке Одер. 23 июля во Франкфурте-на-Одере она соединилась с 20-тысячным австрийским корпусом генерала Лаудона. Салтыков предложил австрийцам двинуться на Берлин, однако те не согласились взамен предлагая совместными силами двинуться в Силезию, что соответствовало интересам самой Австрии. Встревоженный соединением вражеских сил, 31 июля Фридрих с 48-тысячной армией выступил к реке Одер и занял позицию у селения Кунерсдорф, в окрестностях которой расположился лагерь союзников (59-тысяч). Битва, в августе 1759 года, у деревни Кунерсдорф, завершилась полным поражением Фридриха II. Прусская армия вместе со своим королём в беспорядке бежала с поля битвы. Король отправил в Берлин сообщение: «Все потеряно, спасайте двор и архивы»⁹. После битвы у Фридриха под рукой осталось всего 3 тысячи солдат, так как прочие рассеялись по окрестным деревням, и их пришлось собирать под знамена в течение нескольких дней. Пруссаки потеряли убитыми и ранеными 18 тысяч человек, русские – 13 тысяч, а австрийцы – 2 тысячи¹⁰. Все ранее одержанные блестящие победы Фридриха II были сведены на нет. Пруссия очутилась на краю военной катастрофы. Однако из-за больших потерь и усталости солдат союзники не смогли организовать преследования, что спасло Фридриха от окончательного разгрома. За блестящую победу над прусской армией при Кунерсдорфе Салтыков удостоился звания генерал-фельдмаршала. Очередное предложение русского главнокомандующего пойти на Берлин союзная сторона вновь отклонила. Более того, у Салтыкова с высшим австрийским командованием возникло разногласие по вопросам ведения войны против Пруссии. После Кунерсдорфа русская армия была переброшена в Силезию. Из-за разногласий главнокомандующих союзными армиями война затягивалась. Салтыков как мог противодействовал намерениям австрийцев. Из Вены в Санкт-Петербург на него поступали многочисленные жалобы. Хотя кампания 1760 года протекала вяло, в сентябре 1760 года войскам генерала Чернышева удалось захватить Берлин. Фридрих в это время вёл тяжёлую войну в Саксонии против австрийцев и одержал над ними очень трудную победу на берегах Эльбы. В столице Пруссии было захвачено 57 орудий и взорваны пороховые заводы и арсенал. Поскольку к Берлину начал спешить Фридрих с главными силами армии, фельдмаршал Салтыков приказал корпусу Чернышева отступить.

В том же 1760 году, Салтыков вошёл в конфликт и с Высшим военным советом в российской столице. Сковываемый инструкциями из Петербурга и бесконечными согласованиями с Веной, Салтыков тяготился тем, что фактически не имел возможности самостоятельно организовывать решительные наступательные операции. В конце 1760 года, ссылаясь на пошатнувшееся здоровье, он отпросился у императрицы уехать в Познань для лечения и вскоре покинул пост главнокомандующего.

Кампания 1761 года протекала столь же вяло, как и предыдущая. В декабре корпус Румянцева взял Кольберг.

К началу 1762 года положение Фридриха стало настолько тяжелым, что в письме к своему брату, принцу Генриху, он писал: «Если, вопреки нашим надеж-

⁹ **А.В. Шипов**, «Сто великих военачальников», г. Москва, 2000г., с. 299

¹⁰ **Б.В. Соколов**, «Сто великих войн», г. Москва, 2001г. с. 275

дам, никто не придет нам на помощь – прямо говорю вам, что я не вижу никакой возможности отсрочить или предотвратить нашу гибель»¹¹.

Только изменение политической ситуации в российской столице Санкт-Петербурге спасло Пруссию от полного поражения. В январе 1762 года скончалась императрица Елизавета Петровна. Воцарившийся на российском престоле фанатичный поклонник Фридриха II Пётр III сразу же вывел Россию из Семилетней войны, вернул Пруссии все захваченные русской армией территории и в мае 1762 г. заключил с Берлином союзный договор. Вслед за Россией из войны вышла Швеция. События разворачивались с головокружительной быстротой. Фридрих II как многоопытный дипломат, видел нарастание недовольства среди правящих кругов России. В своих письмах прусский король пытался дать советы, предостеречь столь расположенного к нему Пётра III от совершения ошибочных и опрометчивых действий¹².

В кампании 1762 года прусские войска с помощью русского корпуса генерала Чернышёва вытеснили австрийцев из Силезии и Саксонии и одержали победу над имперской армией в сражении при Фрейбурге.

В июле 1762 года Пётр III был свергнут своей женой Екатериной II. Король Пруссии узнав о происшедшем воскликнул: «Он позволил свергнуть себя с престола, как ребёнок, которого посылают спать»¹³. Хотя Екатерина расторгла русско-прусский союз, но продолжать войну не стала. Ослабление Пруссии было не в интересах России, так как могло привести к чрезмерному усилению гегемонии Австрии в Центральной Европе.

Одновременно, после уничтожения англичанами ее флота, из войны вышла Франция, потерпевшая ряд поражений от англичан в Северной Америке и Индии. Предварительные условия мира между Великобританией и Францией были подписаны в ноябре 1762 года.

Австрия не в силах была продолжать войну в одиночку и тоже склонилась на переговоры. В конце 1762 года истощённые войной стороны подписали перемирие – сперва между Пруссией и Францией, а затем 15 февраля 1763 года между Пруссией, Австрией и Саксонией был подписан Губертсбургский мир, положивший конец Семилетней войне. Фридрих вынужден был отказаться от претензий на Саксонию, но сохранил за собой Силезию и графство Глац. Хотя война не принесла Фридриху территориальных приобретений, она сделала ему громкую славу по всей Европе. Даже во Франции и в Австрии у него было множество восторженных сторонников, заслуженно считавших прусского короля лучшим полководцем своего времени. Окончательный мир между Великобританией и Францией был подписан 10 февраля 1763 года в Париже. Французы потеряли свои владения в Канаде и Индии, сохранив в своих руках лишь пять индийских городов. Левый берег Миссисипи также перешел от Франции к Англии. В Африке Франция потеряла земли в Сенегале. Таким образом, по итогам мира Англия приобрела колониальное государство, заключавшее Канаду и все нынешние Соединённые Штаты к востоку от Миссисипи¹⁴. Помимо территориальных приобретений Англии и её установивше-

¹¹ **И.А. Мусский**, «Сто великих дипломатов», г. Москва, 2001г., с. 235

¹² Там же, с. 236

¹³ **Г. Оболенский**, «Император Павел I», г. Москва, 2001г., с. 97

¹⁴ **Б.В. Соколов**, «Сто великих войн», г. Москва, 2001г. с. 276

гося морского господства она также приобрела большой престиж и положение в глазах других держав.

Таким образом, Семилетняя война на западе покончила с колониальным могуществом Франции, обеспечила полную гегемонию Великобритании на морях, а на востоке явилась первым шагом к будущей гегемонии Пруссии в Германии.

Տարոն Սաքոյան – Յոթնամյա պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից: – Սույն հոդվածը հանդիսանում վերաբերվում է յոթնամյա պատերազմի նախօրյակին եվրոպական պետությունների ուեցած ռազմաքաղաքական նկրտումներին: Այն վերլուծության են ենթարկվում պատերազմի ծագման պատճառները և ծավալվող դիվանագիտական զարգացումները: Հեղինակը զգալի տեղ է հատկացրել նաև կողմերի վարած ռազմական գործողությունների և դրանց արդյունքների լուսաբանմանը, եվրոպական արքունիքների անդրկուլիսյան բանակցություններին և, մասնավորապես, դրանց թողած ազդեցությանը պատերազմի ընթացքի և արդյունքների վրա: Վերջում հանրագումարի են բերվում յոթնամյա պատերազմի քաղաքական արդյունքները:

Taron Saqoyan – *From the military and diplomatic history of «Seven-year's war».*
– This article is a summary and concerns to the aspirations of European countries on «Seven-year's war» eve. In the article are also introduced the reasons which caused the war and the analysis of the ongoing diplomatic developments and their motivations. The author has paid much attention also to the process of military actions taken by the sides, and to their elucidation , to the events developing behind the scenes in European courts, especially to the influence on process and results of the war. In the epilogue are summed up the political results of the «Seven-year's war».

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՆ ԼԵԳԵՆԴՆԵՐՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հոդվածում քննության են առնվել տարբեր մոտիվներով (թշնամուց հայրենիքը պաշտպանելու, ազգային պատկանելությունը չուրանալու, հայրենի հողի զորության ու ձգողական ուժի, հայրենաբաղձության և այլն) գրված Բսահակյանի չափածո լեգենդները: Ցույց է տրված, թե ինչպես Բսահակյանը, խորանալով հայ և այլ ժողովուրդների պատմական անցյալի մեջ, գեղարվեստական մեծ ուժով ընդհանրացրել է ազգային արժանապատվության, ազատասիրության, հզորության մասին իր պատկերացումներն ու գաղափարները:

Բանալի բաներ. Չափածո լեգենդներ, ձև, բովանդակություն, ժանր, թեմատիկ-գաղափարական հատկանիշներ, հայրենիք, սեր, կյանք և մահ, պատկերավորման միջոցներ:

«Բսահակյանի պոեզիան հայրենասիրական բովանդակություն ունի. դա ծննդյան օրից մարդու մեջ ներարկված գաղափար է, որ սրբագործված է պատմությամբ և ժողովրդի ապրելու կամքով: Հայրենիքն այդ պոեզիայում, գրել է Լ. Ասմարյանը, - վերացական հասկացողություն չէ, այլ միանգամայն իրական: Դա տունն է, հայրենի օջախը, նրա ծուխը, հայրենի լեռն ու քարը»¹:

Հայրենիքի գաղափարը գեղարվեստական իմաստավորում է ստացել Վարպետի մի շարք չափածո լեգենդներում: 1894 թ. Բսահակյանը գրեց «Իգիթ Սարդար» (Զրույց Գալոց օրերից) լեգենդը, որի շարժառիթը թուրքերի կողմից իրագործված Սասունի կոտորածն էր (ավելի քան 10 հազար զոհ). «Հայրենի Ալեքսանդրապոլից հասնող տագնապալի լուրերը հաղորդում էին այդ օրերի հուրն ու զարհուրը: Ռուսահայ կամավորական զինված խմբերը Ալեքսանդրապոլի վրայով մեկնում էին «երկիր»՝ Արևմտյան Հայաստան, հայ եղբայրներին օգնելու, մեկնում էին իբրև երդվյալ նահատակներ: Դեպքերի անմիջական տպավորության տակ Բսահակյանը Լայպցիգում ստեղծեց ժողովրդական բառ ու բանով «Իգիթ Սարդար» գրույցը...»²:

Բսահակյանի այս չափածո լեգենդը «մշուշի պես դուռ ու երդկին» չորսած թշնամուց հայրենիքը պաշտպանելու, «վաթանի սիրու համար» մեռնելու բանաստեղծական կոչ է՝ արտահայտված աշուղի բերանով.

-Մշուշի պես մեր թշնամին
Դուռ ու երդկին հասել է,
Տղա՛, վե՛ր ել, աղջի՛, վե՛ր ել,

¹ Լ. Ասմարյան, Ավետիք Բսահակյան, Եր., 1975, էջ 18:

² Ա. Մուշեղյան, Ավետիք Բսահակյան, Եր., 1983, էջ 248:

Փառքի օրը հասել է:
Էս ի՞նչ օր է, տարի ու դար,
Որ փախնում եք կովելուց,
Մեր վաթանի սիրու համար
Վախենում եք մեռնելուց³...

Իգիթ Սարդարը, հետևելով աշուղի կոչին, վեր ելավ, գենք ու զրահ կապեց և իր սիրեցյալ Սանամի ու ժողովրդի ողջերթի ներքո շտապեց հայրենիքը պաշտպանելու.

Սարդարն եռաց, Սարդարն թնդաց,
Ալ ձին հեծավ, չափ տվավ,
Երկինք հանեց թոզ ու դուման,
Ղոշունի գլուխն անցավ (էջ 163):

Կովի դաշտում զարկվեց իգիթ Սարդարը: Բայց քանի որ զարկվեց հայրենիքի սիրո համար, չմեռավ, այլ անմահացավ.

...Սարդարը զարկվեց-զարկվավ,
Երկինք թռավ, աստղ դարձավ:

Հայ ժողովրդի պատմության մեջ լայնորեն տարածված ողբերգական երեվոյթներից մեկը սիրո համապատկերում արտացոլվել է «Արաքսի ծնունդը» (Աշուղ Վշտալիի գրույցը, Հատված «Ուստա Կարո»-ից) չափածո լեգենդում: Խոսքը վերաբերում է թշնամու կողմից հայոց աղջիկներին առևանգելու ցավալի իրողությանը:

«Արաքսի ծնունդը» (1904) լեգենդը ժողովրդական հարազատ ոգով Իսահակյանը հյուսել է Շիրակի մի ավանդազրույցի հիման վրա: Ըստ այդ գրույցի՝ թշնամին առևանգում է հովվի սիրած աղջկան: Հովիվը վրեժն առնում է՝ դաշույնը խրելով բռնավորի սիրտը: Բայց վերջինիս ծառաներն անմիջապես սպանում են տղային ու աղջկան: Մար ու քար ընկած մայրը վերջապես գտնում է որդու և հարսի դիակները, համբուրում նրանց նշխարները և ավանդում հողին: Մոր, հարսի և որդու արցունքից հազար ակնաղբյուր է բխում, իսկ նրանց թափված արյունից՝ հազարաթույր ծաղիկ բուսնում.

Արդար արյունը չի կորչի իզուր.-
Աստծու հրաշքով՝ մոր, հարսի, տղի
Արյուն-արցունքեն հազար ակն-աղբյուր
Բխեցին նման լուսեղեն աստղի:
Եվ գետին թափված պուտերն արյունի
Անուշ հոտերով ծաղիկներ դառան.
Անուշ հոտերով հազարան գույնի,
Աղբերաց-արյուն, շուշան անթառամ (էջ 168):

Ի դեպ, արյունից ծաղիկներ՝ մասնավորապես կակաչներ ծնվելու ժողովրդական մոտիվը բազմիցս գործածվել է հայ բանաստեղծների կողմից: Հիշենք հայտնի օրինակներից երկուսը.

³ Ավ. Բաախակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 2, Եր., 1974, էջ 162-163 (Բաախակյանի այս հատորից մյուս մեջբերումների էջը կնշվի տեղում):

⁴ Աստղ դառնալու ձևով անմահանալը բնորոշ է անմուրազ սիրահարների համար, ինչպիսին էր նաև իր Սանամի մոտ չղարձած, մուրազը չառած Իգիթ Սարդարը:

Վաղն այս բարի արյունեն վեր պիտ ելլեն
Խառնվելով ցորենին
Նոր սերունդի կարմիր-կարմիր կակաչներ...
(Դ. Վարուժան, «Վաղվան բողբոջներ»)

...Երբ որ Խջեն, Սիամանթոն ընկան սիրո կես ճամփին,
Ընկան, հանգան, բայց սուրբ սիրուց աշխարհ եկան վերստին:
Աշխարհ եկան կակաչ դարձած, որ բացվում են դեռ այսպես՝
Իրենք կարմիր, սրտները սև՝ իրենց էն սև բախտի պես...
(Հ. Շիրազ, «Սիամանթոն և Խջեզարե»)

Հենց այդ սև բախտի ու վառ ծաղիկների հակադրամիասնության պատկերով էր իր լեզենդում Իսահակյանը ներկայացրել Արաքսի ծնունդը.

Այն սև օրվանեն բյուրակն են կոչվել
Գմբեթ սարերը բյուր-աղբյուրներով.
Այն սև օրվանեն սարերն են գուգվել
Ձոհված արյունի վառ ծաղիկներով:
Ու այդ ակները հայոց սարերեն
Իջել են, կուգան ու կիջնեն էլի՝
Հյուսվելով իրար՝ մեկտեղ դառել են
Մեր Մայր-Արաքսը՝ հազար սիրելի (էջ 168):

Հայրենի հողի գորության ու ձգողական ուժի, հայրենաբաղձության գեղարվեստական մի անմահ կոթող է Իսահակյանի «Հայրենի հողը» (1920) չափածո լեզենդը:

«Առանց կենսագրական տարրի բանաստեղծություն և, առհասարակ, գրականություն չի եղել ու չի կարող լինել»⁴: Ասվածը միանգամայն բնորոշ է Իսահակյանի ստեղծագործության և հատկապես «Հայրենի հողը» լեզենդի համար: Իսահակյանը ստիպված է եղել թողնել հայրենիքը, դեգերել օտարության մեջ, սակայն ուր էլ որ գնացել է, այրվել է հայրենիքի կարոտով: Հայրենաբաղձ բանաստեղծը, ինչպես ինքն է խոստովանել, Հայաստանը մշտապես կրել է իր հոգում: Նայելով Մոնթլանին՝ տեսել է Մասիսը, կանգնելով Աթենքի Պարթենոնի առաջ՝ զգացել է Երեբունյքը և Հռիփսիմե տաճարը: Լսելով Նեապոլի ժողովրդական երգերը՝ հուզվել է մեր ժողովրդի երգով⁵: Իսկ Եղիշե Չարենցի հետ զրուցելիս իր վերադարձը դեպի հայրենիք Իսահակյանն այսպես է հիմնավորել. «-Եղիշե, ... ես երկար ճանապարհ էի ընկել այն օրից, որ գնացի 1911 թվին, համարյա ամեն գիշեր երազում Հայաստանում էի: ...Մի բան է սիստեմը, իշխանությունը, դեկավարները, որոնք վերջին հաշվով «մի ժամվա դալիֆա» են, և այլ բան է **Հայրենի հողը** (ընդգծ.՝ Հ. Վ.), ժողովուրդը, Էջմիածինը: Նա կա և կմնա, ես նրա մոտ եմ եկել, առանց որի այլևս չէի կարող ապրել»⁶:

Հեղինակի այս զգացումները գեղարվեստական մեծ ընդհանրացման են հասել «Հայրենի հողը» լեզենդում, որի համար հիմք է ծառայել Ղազարապատ գյուղում լսած մի զրույց: Այդ զրույցի համաձայն՝ մի քաջ զորավար է եղել, որի

⁴ Պ. Մնակ, ԵԺ 3 հատորով, հ. 3, Եր., 1983, էջ 253:

⁵ Տե՛ս Ավ. Բաճակյան, ԵԺ 6 հատորով, հ. 5, Եր., 1977, էջ 185:

⁶ Վ. Բաճակյան, Հայրս, Եր., 2000, էջ 572-573:

սուրը երբեք առանց հաղթանակի չի մտել պատյան: Նրա սարսափից թշնամիները չեն համարձակվել մոտենալ երկրի սահմաններին:

Թագավորը, նախանձելով գորավարի ձեռք բերած փառքին ու հեղինակությանը, դավեր է նյութում՝ նրան կորստյան մատնելու: Զորավարը, խիստ զայրանալով, իր հավատարիմ համհարզների հետ թողնում է և հեռանում երկրից: Թշնամին, օգտվելով առիթից, հարձակում է գործում: Ժողովուրդը խնդրում է թագավորին, որ հայրենիք վերադարձնի իրենց գորավարին⁷:

Բսահակյանի լեզենդում բավականին համոզիչ է տրված գորավարի հոգին փոթորկող իրարամերժ զգացումների՝ ոտնահարված արժանապատվության և հայրենասիրության պայքարը այն պահին, երբ թագավորի ու ծերակույտի խնդիրքով եկած պատվիրակները ներկայացնում էին հայրենիքի թշվառ վիճակը.

Տարածեց ձեռքը իշխանը փութով,
Լռեց դահլիճը պերճ ապարանքի.
Պատվիրակները պատմեցին վշտով
Թշվառ վիճակը մայր հայրենիքի:
Լսում էր տխուր պատգամը նրանց,
Վարանմունքի մեջ վշտակոծ հոգին,
Վաղեմի քենը բռնկվեց հանկարծ
Եվ ձեռքը ժխտող տարածեց ուժգին (էջ 193):

Ժողովրդի պահանջով նրա մոտ են գալիս հին գուսանը՝ ոսկելար տավիղը ուսին, և ծեր գեղջուկը՝ հայրենի հողի քսակը ձեռքին: Երգում է գուսանը զմրուխտ արտերի ծփանքն ու մթին կիրճերում վիթերի վազքը, խրճիթների ոլորուն ծուխն ու վարդ-աղջիկների կարոտի կանչը: Գուսանի երգը խորապես ազդում է գորավարի վրա.

Մռայլ ճակատը դողդոջուն ձեռքին
Եվ աչքերը գոց՝ երագով տարված,
Լսում էր քաջը գուսանի երգին,
Լսում էր՝ սրտին ականջը դրած:
Ինչպե՞ս մայրենի խոսքերով անուշ
Կանչում են նրան, կանչում կարոտած.
Եվ վաղուց մեռած մոր ձայնը քնքուշ
Անհուն քաղցրությամբ լսում է հանկարծ (էջ 195):

Բայց մայրենի տաղից առավել գորեղ է հայրենի հողը, որն անպարտելի ուժով ձգում է նրան.

Այդ հողն է նրան ծընել ու սընել,
Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել,
Եվ հայրենիքն է, ժողովուրդն անմեռ,
Եվ նախնիքները, որ հող են դառել:
Լսում է խորին այդ անհուն ձայնին,
Մայր ժողովրդի կոչին դարավոր,
Օ՛, ինչքան ուժով քաշում է նրան
Հայրենի հողի խորհուրդը հրգոր (էջ 196):

⁷ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», Եր., 1934, հունվարի 6, N1, էջ 10-12:

Եթե «Հայրենի հողը» լեզենդում իշխում էր հայրենի հողի գործության գաղափարը, ապա «Հրեական առասպել»-ում արտահայտված է ընդհանրապես հողի և մարդու՝ իբրև մոր և զավակի դաշնության գաղափարը:

Յահվեն՝ մարդուն հողից ստեղծելիս երկրի չորս ծայրից է հող վերցրել, որպեսզի մարդը (անկախ նրանից, թե որ երկրից է) կարողանա հանգիստ առնել նրա գրկում.

... Որպեսզի մարդը, ուր որ դեգերե,
Ամեն տեղ իրան ըզգա իր երկրում.
Եվ երբ որ հոգնի և մահը բերե
Նրա անհագուրդ տենչանքներին վերջ,
Ամեն տեղ լսե ձայնը մայրական.-

«Արի, որդյակ իմ, հանգչիր գրկիս մեջ» (Էջ 216):

Ի տարբերություն «Հրեական առասպել»-ի՝ «Յահվեի վրեժը» (1936) լեզենդում արտահայտվել է այն հիմնական միտքը, թե մարդ չպիտի երբևէ ուրանա իր ազգային պատկանելությունը, այլապես չի կարող արժանի լինել հայրենի հողին:

Իսահակյանի այս լեզենդի ատաղձը եզիպտական փարավոնի դստեր որդեգիր, բայց ազգությամբ հրեա Մովսեսի և Յահվեի մասին հրեական ավանդավեպն է:

«Հին Կտակարան»-ից հայտնի է, որ եզիպտական փարավոնի կարգադրությամբ ոչնչացվում են Եզիպտոսի հրեա նորածինները: Նրանցից փրկվում է մի մանուկ՝ Մովսեսը, որն էլ դառնում է փարավոնների տոհմի միակ ժառանգորդը: Մովսեսը, իմանալով, որ ինքը իսրայելցի է, անասելի տքնանքով ու ջանքով ազատում է իր ցեղակիցներին՝ հասցնելով մինչև Մովսեի լեռները: Սակայն խստադատ Յահվեի կամքով Մովսեսը չի արժանանում Ավետյաց երկիրը ոտք դնելու, Երազի հողը համբուրելու և այդտեղ հանգչելու բախտին, քանի որ պատանության ժամանակ մի անգամ ուրացել էր իր ազգությունը՝ իրեն եզիպտացի կոչելով:

Հրեական այս ավանդավեպը մշակելիս Իսահակյանը նպատակահարմար չի համարել անդրադառնալու փարավոնի կարգադրությանը կամ Մովսեսին որդեգրելու պատմությանը: Փոխարենն ընդգծել է այն գաղափարը, որ ազգուրացությունը խստագույնս դատապարտելի արարք է, որը չի կարող մոռացության տրվել նույնիսկ ազգանվեր գործունեությամբ.

Սակայն Յահվեն՝ վատին ռիսերիմ,
Հագուրդ չըտվեց Մովսեսի ըղձին,
Միշտ մտքի մեջ էր նրա վաղեմի
Ուրացումն իրեն արյան ու ցեղին:
Եվ արդարադատ Յահվեն խստաբար
Պատժեց Մովսեսին, իբրև դրուժանի.
Օտար վայրում նա մեռավ տենչավառ,
Հայրերի հողին չեղավ արժանի (Էջ 218):

Աստծո պատիժն է գործում Իսահակյանի մեկ այլ՝ «Հայաստանը» (1946) չափածո լեզենդում: Այստեղ հայերին բնորոշ բացասական գծերից անմիաբանության ու նախանձի առկայությամբ է բացատրվել իբրև Աստծո պատիժ տրված

* Յահվե - հրեական աստված:

աշխարհագրական դիրքը (չար ու ամբարիշտ հարևանով) և տեղանքը (ժայռոտ ու քարքարոտ)։

Եվ աստված պատժեց հայ ժողովրդին,
Եվ Հայաստանից հավաքեց տարավ
Գետեր, վտակներ, աղբյուրներ հորդուն,
Եվ թողեց հողերն անջուր ու ծարավ:
Եվ աստված տվեց դրանց փոխարեն
Բոցակեզ ժայռեր, առապար ու քար,
Եվ դարեր անդուլ զարկող խստադեմ
Մի նենգ հարևան, ամբարիշտ ու չար (Էջ 227):

«Խոր արմատներով կապված լինելով հայ ժողովրդի և նրա պատմության հետ՝ Իսահակյանը իր ստեղծագործություններում շարունակել ու զարգացրել է հայ գրականության ազատասիրական և հայրենասիրական ավանդույթները, գրել է Ա. Ինճիկյանը: - Մշտավառ սերը դեպի հայրենիքը, խոր կարեկցությունն ու վիշտը դարերով հալածված ու տառապած իր ժողովրդի նկատմամբ՝ Իսահակյանի ստեղծագործության հիմնական բովանդակությունն է»⁸:

Հայ ժողովրդից բացի՝ Իսահակյանը խորացել է տարբեր ժողովուրդների պատմական անցյալի, բանահյուսական հարուստ ժառանգության մեջ՝ գեղարվեստական մեծ ուժով արտահայտելով ազգային արժանապատվության, հզորության, ազատասիրության մասին իր ըմբռնումներն ու գաղափարները:

Հայ և այլ ժողովուրդների պատմական անցյալին են վերաբերում Իսահակյանի չափածո լեզենդներից «Մեր նախահայրերը» (1917), «Աթթիլան և իր սուրը» (1932), «Ժողովրդի քնարը» (1937):

Պատմական թեմատիկային դիմելը Իսահակյանի համար ինքնանպատակ չի եղել: Դա է վկայում «Մեր նախահայրերը» չափածո լեզենդը: Հայ ժողովրդի ինքնահաստատման, հերոսականության մասին այս փառահեղ ուղերձն ունեցել է իր կոնկրետ հասցեատերը: Հ. Ղանալանյանի հետ գրույցի ընթացքում բացահայտելով «Մեր նախահայրերը» գրելու դրդապատճառը՝ Իսահակյանը խոստովանել է. «Գրության շարժառիթը 1915-1916 թթ. գերմանացիների հրահրած և թուրքերի ձեռքով ի կատար ածված հայկական ջարդերն են: Այդ կոտորածների անմիջական տպավորության տակ եմ գրել «Մեր նախահայրերը», որը մի տեսակ հակաթեզ է, հակաթույն սուլթանիզմի այդ հոտենտոտական (աֆրիկական ժողովրդին հատուկ - Հ. Վ.) քաղաքականության դեմ: Ասելիքս այն էր, որ ինչքան էլ սուլթանը մոլեգնի, հայ ժողովուրդը երկրի վրա կա, պիտի լինի ու ապրի...»⁹:

Լեզենդում գեղարվեստորեն վերարտադրվել է մ.թ.ա. II հազարամյակի կեսերից հայ ժողովրդի կազմավորումը, Ուրուստրի ցեղախմբի հիման վրա ստեղծված Ուրարտու պետության (մ.թ.ա. 9-7-րդ դդ.) անկումն ու հայկական պետության հիմնադրումը:

Հիմ դրեցին, վառեցին իրենց երդը սրբազան,
Եվ ծուխն ելավ ու փռվեց գետերն ի վար Նաիրյան...
...Եղան նրանք քաջ պետեր՝ հայեր սեպուհ, հաղթական,
Աշխարհն եղավ Հայաստան և պիտ մնա Հայաստան՝

⁸ Ա. Ինճիկյան, Ավետիք Իսահակյան, Եր., 1977, էջ 15:

⁹ Հ. Ղանալանյան, Ավետիք Իսահակյան, Եր., 1985, էջ 56-57:

Մինչև արևը հանգչի և ցուրտ աճյունը նրա

Չյունե համայն ազգերի հայրենիքների վրա... (էջ 185)

Իհարկե վիճելի է իբրև եկվոր ներկայացված հայերի կողմից ուրարտացիների դուրս մղելու պատմական ելակետը: Սակայն էականը տվյալ դեպքում ոչ այնքան պատմական իրողությունն է, որքան Իսահակյանի հանդես բերած գեղարվեստական միտումը՝ հայ ժողովրդի հզորության ու հարատևության հաստատումը՝ ի հակադրություն նրա նկատմամբ գործադրված բռնության ու կոտորածի: Այս համատեքստում անընդունելի է գրականագետի այն դիտարկումը, թե «...Բանաստեղծի այս գործում արտահայտված է ազգայնական պատմահայեցողության ազդեցություն: Նախ, որ ռումանտիզացիայի է ենթարկված նախահայրերի հերոսականությունն ու նրանց հեթանոսական կրոնը և ապա՝ հայ ազգի հավիտենականության միտքն է զարգացված, իդեալիստական մի հայացք, որ հակասում է ազգերի ու ժողովուրդների պատմական զարգացման հեռանկարներին»¹⁰:

Հայացք նետելով պատմական անցյալին՝ 1932 թ. «Աթթիլան և իր սուրը» չափածո լեզենդով Իսահակյանն անդրադարձավ հոների դաժան արքա Աթթիլայի (5-րդ դար) կերպարին:

Իսահակյանից առաջ՝ 1915-1916 թթ., այդ կերպարին դիմել էր Ե. Չարենցը՝ գրելով «Աթթիլան» պոեմը: Սակայն եթե Չարենցի պոեմում հոների արքան «ճշմարտության մերկ խարազան» է, մի գորեղ ուժի մարմնացում, որը կոչված է խորտակելու արատավոր հին աշխարհը, ապա Իսահակյանի լեզենդում գեղարվեստական իմաստավորումն այլ է: Ոճրագործությունը կարելի է վերացնել ոչ թե գործիքի (սուր), այլ դա գործադրողի (ոճրագործ) ոչնչացումով. սա է Իսահակյանի «Աթթիլան և իր սուրը» լեզենդի հիմնական գաղափարը:

Ահեղ Աթթիլան իր հին պապերի սրով ջարդեց, փշրեց ու ավերեց, հրի մատնեց Արևմտյան աշխարհի (Հռոմ, Բյուզանդիա) ոստաններն ու դղյակները, քաղաքներն ու գյուղերը: Սրի քաշեց ամենքին՝ հովիվ, ազատ, թե ռամիկ: Արյան մեջ հեղեղեց հեզ Եվրոպան ու Գալլիան... Բայց որքան արյուն խմեց, այնքան ավելի մոլեգնեց արյան ծարավը սրի.

Արյան անհագ արբեցումի

Տենչով վառված սուրն ահավոր

Տանջում էր հույժ Աթթիլային

Երազներում և արթըմնի:

Ընդվզում էր մտնել պատյան,

Չէր դադարում պատյանի մեջ... (էջ 211)

Եվ միայն արյունահեղ տիրոջ արյամբ հազեցավ անկուշտ սուրը.

Մըխվեց սրտում Աթթիլայի,

Ընկավ մեռած՝ Աթթիլան վար,-

Եվ խաղաղվեց սուրը վայրագ,

Արյան ծարավը հազեցավ (էջ 211):

Մեկ այլ բռնակալի արյունոտ ջարդերի և ժողովրդի երգչի անկոտրում ոգու հակադրությունն է արտացոլվել «Ժողովրդի քնարը» (1937) լեզենդում՝ «Մերբիայի դահիճ» Աբդուլլահ փաշայի և սերբ գուսլյար ծեր Միրկոյի կերպարների միջոցով.

¹⁰ **Սս. Մասադյան**, Ավետիք Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը, Եր., 1940, էջ 77:

«Ժողովրդի քնարը» լեգենդում,- գրել է Ա. Ինճիկյանը,- ի դեմս գուսլյար Միրկոյի, Իսահակյանը մարմնավորել է սերբ ժողովրդի - և ընդհանրապես իր ազգային գոյության համար մարտնչող փոքր, ճնշված ժողովուրդների - ազատասիրական անընկճելի ոգին: Բանաստեղծի ստեղծագործությունը հավաստումն է պատմական այն ճշմարտության, որ թշնամին կարող է նվաճել երկիրը, կեղեքել ու կոտորել ժողովրդին, բայց անկարող է նվաճել ու ընկճել նրա ազատասեր ոգին»¹¹:

Ավ. Իսահակյանի այս լեգենդի գաղափարական բովանդակությունն ընկալելու իմաստով արժեքավոր հուշ է թողել Ստ. Զորյանը.

«Եվ մի օր էլ եկավ տունս և ծոցից հանեց մի քանի թերթ.

- Ինձ ասում են ներքող գրի բռնակալին (Իսահակյանը նկատի ունի Ստալինին - Ն. Վ.) Ահա իմ պատասխանը: Կարդա:

Կարդում եմ վերնագիրը՝ «Ժողովրդի քնարը» (սերբական լեգենդ 18 դարի):

Երբ ավարտում եմ վաղուց գրած այդ փոքրիկ պոեմը, հարցնում եմ.

- Բայց ո՞վ կիմանա, որ սա Ձեր պատասխանն է:

- Դու՛ իմացիր,- ասում է,- և ձեռագիրը ետ առնում: - Այո՛, ժողովրդի քնարը երբեք չի կարող ստել...»¹²:

Իսահակյանի «Ժողովրդի քնարը» սերբական ժողովրդական մի լեգենդի չափածո բարձրարվեստ մշակումն է: Նշված ժողովրդական լեգենդի մեջ ահեղ բռնակալը Թոփալ փաշան է՝ ազգն ուրացած մի սերբ, որը, արյունով հեղեղելով ողջ Սերբիան, դրա պատվին խնջույք է կազմակերպում: Ապա կանչել է տալիս հզոր երգով սերբերի սրտում կրակ վառած Միրկոյին, որ նա արդար գուսլեով իր անարգ գործերը տարփողի: Սակայն Միրկոն կյանքի գնով հրաժարվում է՝ գետնին զարկելով ու ջարդուփշուր անելով իր քնարը: Սերբական լեգենդի վերջում ազգուրաց փաշան դարձի է գալիս, խաչակնքում է երեսը, համբուրում ջարդված քնարը: Փաշայի այդ արարքը պատճառ է դառնում թուրք զինվորներից մեկի կողմից նրա սպանության¹³:

Իսահակյանի չափածո լեգենդում բռնակալը ոչ թե Թոփալ, այլ Աբդուլլահ փաշան է, որի սերբ և ազգուրաց լինելու մասին այստեղ չի խոսվում: Դրա փոխարեն հեղինակը գեղարվեստական լայն թափով պատկերել է Աբդուլլահ փաշայի իրագործած վայրագ ջարդերն ու իր ստահող փառքը տոնելու համար սարքած խրախճանքը.

Աբդուլլահ փաշան, ահեղ բռնակալ,
Այսօր շատ ուրախ, երջանիկ է շատ,
Իր կազմած վայրագ ջարդերի համար
Ստացել է նա Սուլթանից խալաթ:
Աբդուլլահ փաշան, Սերբիայի դահիճ,
Ճերմակ Բելգրադի պերճ ապարանքում
Այսօր ի պատիվ բարձրը պարզնին
Խնջույք է տալիս, փարթամ կերուխում (էջ 221):

¹¹ Ա. Ինճիկյան, Ավետիք Իսահակյան, Եր., 1977, էջ 165-166:

¹² Ստ. Զորյան, Հուշերի գիրք, Եր., 1991, էջ 140:

¹³ Տե՛ս Ա. Ղանալանյան, Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Եր., 1955, էջ 42-43:

Մեծ վարպետությամբ է կերտված այն դրվագը, ուր փաշան, համոզվելով, որ ժողովրդի երգչին ոչնչով հնարավոր չէ կաշառել, արյունոտ մատը դնում է հայրական նվիրական զգացմունքի վրա՝ սպառնալով նրա չորս զավակին էլ ոչնչացնել:

Ո՛վ թշվառ գյավուր, գոռում է փաշան,
Երգի՛ր, անհապաղ, հրամայում եմ,
Իսկ եթե չերգես, վկա է ալլահն,
Չորս զավակիդ էլ ցրցի կհանեն (էջ 223):

Հեզ որդիներին փրկելու համար ծեր Միրկոն ճգնում է շարժել լարերը, ենթարկել խոսքերը սրտին, բայց իզուր: Ինչպես որ Բահակյանը, այնպես էլ իր հերոսը չկարողացավ «սրտին մի խոսք հասկացնել»: Տեսնելով, որ կեռ յաթաղանը դեռ փայլատակում է Մերբիայի վրա՝ ըմբոստ ոտքի է կանգնում Միրկոն: Եվ հենց այս խրոխտ շեշտով է Բահակյանը նպատակադրված կերպով եզրափակում իր չափածո լեզենդը.

Միրկոն ցասումով կանգնում է ոտքի,
Զարկում է թափով գուլեն հատակին,
Եվ երեսնիվեր ահեղ փաշայի
Միրկոն հաղթական ճչում է ուժգին.
-Ո՛վ սրիկաներ, ճիվաղ, տմարդի,
Մորթեցե՛ք, լափե՛ք ավել, առավել,
Սակայն իմացեք,
Որ ժողովրդի քնարը երբեք
Չի կարող ստել... (էջ 223-224):

Այսպիսով՝ Ավետիք Բահակյանի չափածո լեզենդներում գեղարվեստական մեծ վարպետությամբ արտացոլվել է հայրենիքի գաղափարը՝ իր հող ու ջրով, սար ու ձորով, ազգային արժանապատվության ու հզորության, ժողովրդի ազատասիրության ու անկոտրում ոգու մասին հեղինակի պատկերացումներով:

Асмик Ванян – Осмысление родины в легендах в стихах Ав. Исаакяна. – В статье исследовались легенды в стихах Ав. Исаакяна различной тематики: защиты родины от врагов, неизменности национальной принадлежности, мощи родной земли, притягательной силы родины, ностальгии и т.д.

Здесь показано, как Ав. Исаакян, углубляясь в историческое прошлое армянского и других народов, с большой художественной силой обобщил свои восприятия и идеи национального достоинства, свободолюбия, процветания.

Hasmik Vanyan – Comprehension of motherland in Av. Isahakyan's legends in verse. – In the application studied Isahakyan's legends defending motherland from the enemy, dying for "Vatan" love, not denial of national identity, the power and magnetism of motherland and nostalgia.

It has been shown how Av. Isahakyan looked deeply into Armenian and other nations' history, generalized his perceptions and ideas of national dignity, strength, liberty with great power of fiction.

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՇԵՂ ՄԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հոդվածում քննության են առնվում Գուրգեն Մահարու ստեղծագործություններում և ինքնակենսագրականում առատորեն տեղ գտած աստվածաշնչյան հիշատակությունները, դրանց հեղինակային մեկնաբանությունները: Հոդվածում վեր են հանվում նաև Մահարու ստեղծագործություններում աստվածաշնչյան զանազան դրվագների հիշատակման գաղափարական շարժառիթները, գեղագիտական շերտերը:

Գրողի կենսագրական փաստերը համադրելով նրա ստեղծագործություններում հաճախ հանդիպող սուրբգրային հիշատակումների հետ, այն համոզմունքն է արտահայտվում, որ Մահարու աստվածամերժությունը առավելապես պայմանավորված էր հայոց ցեղասպանության իրողությամբ:

Բանալի բաներ. Ցեղասպանություն, աստվածավախ, արդարադատ, բարձրյալ, սուրբգրային, աստվածաշնչյան, աստվածամերժություն, խստասիրտ, անեղ, ամենակարող, հիշատակություններ, ջերմեռանդ, աղոթք, հավատ, հոգևորական, կաթողիկոս:

Հայոց ցեղասպանությունը հիմնահատակ տակնուվրա արեց մեր կյանքը: Ողբերգությունը դուրս էր բանականության սահմաններից, ցավի ծավալումները՝ անընդգրկելի: Ահա թե ինչու երկրի վրա չգտնելով ցեղասպանության պատճառների շատ պատասխաններ՝ աստվածավախ հայր իր ցասումն ու աղերսը հղեց ամենատես ու արդարադատ բարձրյալին: Այս ամենը, բնական է, իր արտահայտությունը գտավ մեր գեղարվեստական մտածողության մեջ, ավելին, եղեռնով պայմանավորվեց հատկապես մեր գեղարվեստական գրականության հետագա ընթացքը: Այս առումով թերևս ամենաբնութագրականը թումանյանական «խանգարված ժողովրդի խանգարված գրականություն» բնորոշումն է:

Այս խորշակից չխուսափեց նաև Վանում ծնված և իր ստեղծագործության ծանրակշիռ մասը Վանին նվիրած Գուրգեն Մահարին: Եղեռնը կայծակի նման հարվածեց ու բեկեց նրա կյանքի ու ստեղծագործության ուղին:

Հայտնի է, որ Մահարին կենսագրական վերապրումի հեղինակ է, և նրա ստեղծագործությունը սկիզբ է առնում ոսկեծամ մանկության ծվեններից, որը եղերաբար ընդհատվում է, և ծայր է առնում գաղթի ողիսականը... ձգվում մինչև Սիբիր:

Մեր ուսումնասիրության խնդրի տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում Մահարու պատանության շրջանի մի բանաստեղծություն, որը ըստ էության ջերմեռանդ աղոթք է.

Երբ գիշերը իր մագերը կը փռէ,
Ու աստղերը երկինքէ վար կը նային՝
Դուն խուցիդ մէջ կանթեղի մը տակ անլոյս
Ճերմակ մագերդ ուսիդ թողած քմահաճ,
Աչերդ յառած ոչնչութեան գրկի մէջ,

Սուրբ աղոթքներ կը մրմնջես հաւատքով
Քո երկիւղած սրտի խորունկ խորքերէն
Դուն, ծերունի՜, իմ կողմէն ալ աղօթէ,
Իմ կողմէն ալ... հաւատքիս ուժ պակսած է՜...

Մահարու որդին՝ Գրիգոր Աճեմյանը վկայում է, որ հոր «մանկությունը եղել է աստվածավախ», քանի որ «ջերմ հաւատացեալ էին տատը, մայրը, ինքը չէր կարող չլինել այդպիսին»²: Սակայն «անսպասելիորեն», նախորդ բանաստեղծությունից մեկ տարի անց Մահարին գրում է մի բանաստեղծություն, ուր աղոթքն այլևս նրա համար որևէ արժեք չունի.

Մեռաւ Հաւատքս ինձ համար
Ու Հաւատքիս հետ դուն, մեծ Ոչինչ...
Եկեղեցիներուն զանգերը ու բոլոր օրհներգները
Հեզնանք մը եղան ինձի համար,
Ու ամբոխին ծնրադրումը՝ Հսկայ խելագարութիւն³...

Բանաստեղծության հրատարակման թվականը գուցե այլ մտորումների տեղիք տա և փորձ արվի պատանի բանաստեղծի աստվածամերժությունը պայմանավորել սոցիալիզմի աթեիստական հովերով, բայց սա բնավ քննության չի դիմանում: Գրիգոր Աճեմյանը երևույթը պայմանավորում է բացառապես ցեղասպանության իրողությամբ. «Մահարին հաւատացեալ էլ կը մնար, եթէ նրա վաղ պատանեկութիւնը չընդհատուէր ցեղասպանութեան, գաղթի, սայլերով հաւաքուող դիակների եւ եղբայրական գերեզմանների պատկերներով: Բանաստեղծական զգայուն հոգու համար այդ փորձութիւններն աւելի ծանր եղան, քան աստվածաշնչեան Յոբի (2004, էջ 558)»:

Աճեմյանի այս դիտարկումն առավել հիմնավոր ու համոզիչ է դառնում Մահարու՝ տարբեր տարիներին գրված ստեղծագործություններին և գրություններին անգամ թռուցիկ հայացք նետելու դեպքում: Մեզ է հասել հեղինակի կյանքի սիրելի շրջանի մի վավերաթուղթ, որը լույս է սփռում այս իրողության վրա. «Տեր աստուած,- մրմնջաց մայրիկը,- որը բարին է, է՛ն կատարես...: Մանկությունից շատ անգամ լսել էի մայրիկից այդ բացականչությունը, բայց միշտ չէր, որ աստուած կամեցել էր այն, ինչ բարին է եղել: Բարի կամեցողութեան արդիւնք էր, որ մի ամբողջ ժողովուրդ խեղդուէր հրի ու արեան մէջ, իսկ նրա մնացուկները թողնէին իրենց հայրենի հողն ու երկինքը ու աշնան հողմավար տերեւների նման քշուէին դէպի Կովկասի քաղաքներն ու գիւղերը...»⁴:

Աստվածամերժության օրինակներն առատ են նրա «Այրվող այգեստաններ»-ը վկայում: Սա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ դրա պատճառը ամենատեսի աչքի առաջ կատարված մի ողջ ժողովրդի սպանությունն ու լլկումն էր:

Այնուհանդերձ հարկ է ընդգծել նաև, որ նման օրինակները առատ են նաև Մահարու այլ գործերում ևս: Սակայն դառնանք «Այրվող այգեստաններ» վեպին. ստեղծագործության նախնական, անխաթար տարբերակի հենց սկզբում՝ «նախաբան վերջաբանի փոխարեն» գրության մեջ, որն ըստ էության բովանդակում է

¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Գ. Մահարու ֆոնդ, թիվ 59:

² **Գ. Մահարի**, Այրուող այգեստաններ, Երևան, 2004, էջ 558: Այսուհետ այս վեպից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ նշելով միայն հրատարակության տարեթիվը և էջը:

³ **Գ. Մահարի**, Հեթանոսական խոյանքներ, Վան-Տոսպ, Թիֆլիս, 1918, թիվ 3:

⁴ ԳԱԹ, Մահարու ֆոնդ, թիվ 15:

Աստծո նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, այսպիսի ցնցող տողերի ենք հանդիպում. «Կ' ուզենայի, որ եթե այս գործում կա դոյզն իսկ կրակ, հասներ այն ընթերցողի սրտին, իսկ իմ չնաշխարհիկ ծննդավայրի այրուած այգեստանների ծուխն՝ աստծոյ եւ՝ նրա բագում ստեղծածների անզգայ միրուքին (2004, էջ 13)»: Ուշագրավ է, որ վեպի մյուս հրատարակություններում այս տողերը չկան, և Մահարին բավարարվում է միայն իր «այրվող այգեստանների ծուխը հասցնել» իր «մեծ նախնիքների ստեղծած փառապանծ կոթողների բարձրությամբ...» (1996, էջ 6)»: Ուշագրավ է, որ այս միտքը ևս ընկել է վեպի սուր անկյունների կոկման վնասակար հոսանքի մեջ:

Աստվածաշնչյան հիշատակություններում ևս նկատելի են դառնում Մահարու գրելակերպի առանձնահատկությունները: Նրա կերպարները այս առումով ևս ինքնաբերական են: Պատահական չէ, որ վեպում կան նաև կերպարներ (Օհանես աղայի և Տիգրանի մայրերը, ասորի Հորմզը և այլք), որոնք անվերապահորեն հավատում են Աստծուն: Սակայն ակնհայտ է, որ բոլոր այն դեպքերում, երբ հավատի շուրջ հանդիպում ենք հեղինակային մեկնաբանությանը, այն հեզմական է, դառը և մերժողական: Այս մտայնությունը Մահարին արտահայտում է ոչ ուղղակիորեն, հրապարակախոսական պաթոսով, այլ իր գրչին հատուկ գեղարվեստական նրբին միջոցներով: Ահա օրինակ նրա կոլորիտային և հաջողված կերպարներից մեկին՝ Օհանես աղային հանդիպում ենք մի իրադրության մեջ, ուր դժվարանում ենք զանազանել, քանի որ նա «քթի տակ ինչ-որ մրմնջում է եւ հայտնի չէ, աղօթո՞ւմ, թե հաշիւ է անում (2004, էջ 23)»: Կերպարի հոգեբանության ընկալման այս երկվությունը շատ հետաքրքրական է: Հեղինակը սուր հակադրության միջոցով «համատեղում» է անհամատեղելին՝ Աստված և Մամոնա:

Սրան զուգահեռ, հեղինակային միտումը հավատքի հարցում հստակ է. առավոտ և Աստված զուգահեռում Մահարին մերժում է Աստծո գոյությունը. «Զուարթ նայում է առաւօտը, եւ առաւօտը առաւօտ է իր համար, աստծու նման գեղեցիկ եւ նրա նման պայծառ, որը չգիտի, թե ո՞վ է պաշտում իրեն, ո՞վ է կեղծում, ու՞մ համար ահ ու սարսափ է եւ ո՞վ է նայում իրեն, արցունքով լեցուն աչքերով: Բայց եթե չկայ աստուած, առաւօտը կա՞յ (2004, էջ 25)»:

Վեպում ուշագրավ է հատկապես հոգևորականի կերպարը, որը իրականում կոչված է Աստծո պատգամները անխաթար կերպով պահել, կյանքի կոչել, միջոցորդ դառնալ հասարակ մահկանացուների ու Աստծո միջև: Սակայն վեպում տեր Խորենի կերպարը առավել աշխարհիկ երանգներ ունի: Պատահական չէ, որ Օհանես աղայի մոտ տեր Խորենի վերաբերյալ հարցեր են առաջանում. «Էդ ի՞նչ զարմանալի քահանայ է, թե մարդ... Զարմանալի տերտեր է այդ... քահանան...» (2004, էջ 63)»: Իսկ այս հարցերը ծագում են Օհանես աղայի տանը կազմակերպված խնջույքից անմիջապես հետո, ուր տեր Խորենը գինուց բավականաչափ զվարթացած երգում է «Հայոց աղջիկները» և զվարճաբանում տատներ Թադևիկի հետ: Վեպում հանդիպում ենք մեկ այլ հոգևորականի կերպարի ևս, որին տեսնում ենք շատ ավելի լուրջ իրադրություններում: Աղթամարի վանքում տեղի ունեցած հայտնի թալանին ու սպանություններին նախորդում է վանքի տեղապահ Արսեն հայր սուրբի մղձավանջային երազը, որը ծնվում է վանահոր անցյալից (վանքի կրթորուհի Դոդիկի հետ ունեցած սիրավեպ, վերջինիս ամուսնու՝ կասկածելի հանգամանքներում մահ) ակնհայտորեն երևում է, որ հոգևորականը բնավ էլ սրբակենցաղ վարքով չի ապրել: Վանահոր երազին հավելվում է նաև հե-

դինակային հեգնանքը, որտեղից պարզ է դառնում տեղապահի հոգու սնանկությունը: Ահա «գնում է հայոց դաշտերով Աղթամարի կաթողիկոսական տեղապահ եւ վանահայր Արսեն հայր սուրբը, գնում է դարերի եւ պատմութեան միջով»: Ահա այդ «դարավոր երթի» ընթացքում էլ նա «հանդիպում» է Տիգրան Մեծին՝ «արքայ Մեծն Հայաստանի» երեսունվեց միլիոն բնակիչներով, ու էլի թագաւորն էր հայոց, խեղ կամ խոհուն, ապիկար կամ շինարար», որոնց Արսեն հայր սուրբը ճանաչում է «մէկիկ-մէկիկ, մինչեւ թիվն 1393...»: Իսկ այս թվականը հայտնի է, որ գումար է մեր վերջին թագավորության վախճանը: Այս կորստյան մեջ անկասկած ոչ երկրորդական մեղքի բաժինն ունեցանք նաև մենք: Եվ սրան պիտի հաջորդէր հետևյալ դառը մտահանգումը. «Զի հեծաւ հայը, աստծուն մոռացաւ, ձիուց վար իջաւ, ձիու՝ն մոռացաւ (2004, էջ 100)»: Սա հար և նման է Զարենցի հայտնի պոեմի հետևյալ տողերին.

Այդ մե՛նք ենք երևի այն ուղտը հաստակող,
Որ Հիսուսի առակին հակառակ-
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
Ապագայի դրախտը անարատ⁵...

Ուշագրավ է այն փաստը, որ հավատքին անդրադառնալիս հեղինակը առաջին պլան է մղում կերպարին, ներկայացնում նրա հոգևոր պատկերացումները և հետո նոր ներկայացնում հեղինակային միտումը: Այս առումով տեղին է հիշատակել «Այրվող այգեստաններ» վեպի ամենաբարդ ու հակասական կերպարներից մեկին՝ Միհրան Մանասերյանին, որը թուրք մյուտուրի ուղղակի հարցին, թե «հաւատաւում է աստծուն, թե՞ ոչ», չի կարողանում ուղղակի պատասխանել և նրան «օգնության» է հասնում հեղինակը և ակնհայտորեն հեգնում. «Դպրոցում նա անցել է կրօն,- Հին Կտակարան, Նոր Կտակարան. Բսահակ ծնավ Յակոբ ծնաւ... ու մ ծնաւ Յակոբ, նա չի յիշում, եւ ընդհանրապէս ինչպե՞ս Բսահակը կամ Յակոբը կարող են ծնել. իսկ ինչո՞ւ վ են զբաղված եղել նրանց սիրասուն կանայք... Մինայ լեռ, թուրատ Մովսէս Մարգարէ, կոյսից ծնուած Յիսուս, որ աւանակ հեծած Նազարէթ թե Երուսաղէմ է մտնում այնպէս, ինչպէս Մուղսաղան՝ Վանի շուկան... Ինչ-որ թաղեցի (թե՞ Մաքթաղինացի), նրան քարկոծող բազմութիւն... Պիղատոս-միղատոս...(2004, էջ 236)»:

Նույն կծու հեգնանքն է տիրապետողը նաև Արամին կերպավորելու պարագայում: Այստեղ Մահարին վարպետորեն հիշատակում է կուսակցական հրահանգով կատարված «մաքրումները», երբ ոմանք հենց «այն աշխարհն են ուղարկել իր (Արամի-Մ.Ս.) և Իշխանի կարգադրությամբ... Լաւ, որ աստուած չկայ. չկայ ուրեմն հանդերձյալ կեանք, այլապէս ինքը եւ Իշխանը տարտարոսի բաժին կը դառնային: Իսկ Վոսմեա՞նը: Երևի նրան Սերովբէ եւ Քերովբէ հրեշտակապետները դրախտ առաջնորդէին (2004, էջ 202)»: Նկատենք, որ այս դրվագում հեղինակը ոչ միայն շեշտում է Արամի աստվածամերժությունը, այլ նաև «բացահայտում» է նրանց՝ արյան մեղքի տակ մտնելու փաստը: Ինչպէս նշեցինք, վեպում քիչ չեն նաև ջերմեռանդ հավատացյալները, որոնց աղոթքի նկատմամբ խիստ վերապահ վերաբերմունք է դրսևորում հեղինակը: Միհրանի մայրը չնայած օրը սկսում է աղոթքով, այնուամենայնիվ կյանքը դրանից արդար ու բարի չի դառնում, չարը չի հալածվում. «Նա չոքում է խոնաւ յատակին ևւ աղօթում: Եթէ վան-

⁵ Ե. Զարենց, Երկրի ժողովածու, հատոր երրորդ, Երևան, 1987, էջ 40:

քի սուրբը, որը կոչում է Գեորգ (սրբերն ընդհանրապես ազգանուն չունեն...), լսեր նրա աղօթքները, ամեն ինչ կարգին կը լիներ, ամեն բան իր տեղում.-ոչ սպանություն, ո՛չ Ջեվդեթ փաշա, ո՛չ հալածանք, ո՛չ յեղափոխություն, ո՛չ Արամ- Իշխան (2004, էջ 230)»:

Աղոթքի այս պատկերի հիշատակմամբ Մահարին շեշտում է հենց կյանքի աններդաշնակությունը՝ ցավը, արյունը, ավերը, որը սփռել է Ջևդեդ փաշան, իսկ նա, ի դեպ, «Աւետարան չի կարդացել» և որի դեմ էլ ըմբոստացել են Արամը, Իշխանը... Ժողովուրդը: Հայության ճակատագրի թեման Մահարին զուգահեռում է աստվածաշնչյան պատգամներին, և շատ տպավորիչ է հատկապես այն, որ այս ամենը գրողը ներկայացնում է օտար մեկի՝ դոկտոր Աշերի միջոցով, որը անկողմնակալ ձևով տալիս է իրականության պատկերը. «Ավետարանական այս ժողովուրդը դարերի ընթացքում մեծանալու փոխարեն փոքրացել է, հալչել արևելքի եւ արևմուտքի արիւնոտ բախումների խաչմերուկներում: Գիշերը Յիսուսը բոքիկ ոտներով անցնում է ոստանից ոստան, շէնից շէն, տնից տուն, բարակ մատներով դռներն է ծեծում եւ համբերութեան ու հնազանդութեան երգեր երգում (2004, էջ436)»:

Հայտնի իրողություն է, որ Մահարու երգիծանքի դրսևորումներից մեկն էլ դրության կոմիզմի ստեղծումն է, որը շատ հաճախ ստանում է դրամատիկ, ողբերգական երանգներ: Կովի ամենաթեժ, սարսափազդու օրերին, երբ «կրակոցներն աւելի սարսափելի եւ ահագոյ» են դառնում, վաճառական Օհանես աղան կնոջը ստիպում է, որ գնդակների տարափի տակ վերին հարկից իր համար ներքն բերի Աստվածաշունչը: Ահա «Բարեպաշտ» Օհանես աղան վերցնում է ծանր Աստվածաշունչը և «պատահական» մի էջ բացելով, բարձրաձայն կարդում է. «Մեր մօրթը փութի պէս սեւացաւ... Կանանցը Սիոնի մէջ բռնադատեցին, կոյսերին՝ Յուդայի քաղաքներումը... Իշխանները կախուեցան իրանց ձեռովը, ծերերի երեսը չարգուեցաւ»⁶: Երեմիայի ողբի հատվածը Օհանես աղան շփոթում է Ադանայի ջարդերի հետ, մտատանջության մեջ է ընկնում, երբ կարդում է աստվածաշնչյան պատվիրանները՝ հիշելով եղբոր կնոջ հետ ունեցած սիրավեպը: Աստվածաշունչը այս պարագայում դառնում է մարդու բարոյական նկարագրի չափանիշը: Սակայն գերակշիռ դեպքերում սուրբգրային հիշատակությունները զուգահեռի մեջ ցույց են տալիս երկրային կյանքի աններդաշնակությունը, որը ստեղծվել է թուրք մեծապետականության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության հետևանքով:

«Այրվող այգեստաններ» վեպում քիչ չեն թուրքերի դաժանությունները ներկայացնող պատկերները, որոնց սակավ նկարագրության մեջ ի դեպ, քննադատության կողմից հանիրավի մեղադրվել է հեղինակը, սակայն մեզ առավել հետաքրքրում է ոչ թե գազանությունների բուն նկարագրությունը, այլ այլ բան. նկատենք, որ այդ արյունալի սպանող տեղի է ունեցել Աստվածաշեն գյուղում (ուշադրություն դարձնենք գյուղի անվանմանը): Պատկերի շարունակությունը առավել քան ցնցող է: Էրիմերի վանքում կացնահար են արել վանքի սպասավոր Մանվելին հենց այն ժամանակ, երբ նա «զբաղուած է եղել Տիգրան Մեծի ժամանակուա Հայաստանի գունաւոր քարտեզը գծելով»: Պատկերը առավել մոռալ երանգներ է ստանում, ուր գերիշխողը դառնում է արյան կարմիրը. «Նրանք ոտքի

⁶ Երեմիայի ողբերը, էջ 10-11:

տակ են առել քարտեզը, կացնահարել են Մանուելին, եւ Մուրդեանը տեսել է քարտեզի վրա փռռուած նրա դիակը, կարմիր արիւնը խառնուած Հայաստանի աշխարհագրական վառ գոյներին (2004, էջ 525)»: Սեղմ, բայց հուզականությամբ հագեցած պատկերում նկատելի է հեղինակային խոսքի ենթատեքստը. ամենատեսի աչքի առաջ ավերում են նրա տունը, սրի քաշում նրա սպասավորին: Այստեղ նկատելի է նաև հեղինակային մեկ այլ, ոչ պակաս դառը դիտարկում ևս. երբեմնի ծովից ծով Հայաստանից մեզ մնացել է միայն նրա քարտեզը՝ կացնահար Մանուելի արյամբ շաղախված:

Աստվածաշնչյան պատմությունների միջոցով գրողը բացահայտում է նաև որոշ կերպարների հոգեբանության նրբերանգները: Հաջողված օրինակ է հատկապես Վերծինի կանացի խորամանկությունն ընդգծելու դրվագը, երբ հեղինակը զուգահեռ է տանում աստվածաշնչյան Եվայի հետ. «Նա մտածում է, որ Աստուածաշնչի Եւան, որին, ըստ նոյն Աստուածաշնչի, խաբել է օձը, միամիտ հարիֆի մեկն է եղել. եթէ Եւայի տեղը Վերծինը լինէր, օձը չէր կարողանալ խաբել նրան, եւ նա ու մարդկութիւնը չէին գրկուի դրախտից... «Վերծին որ կայե սատանից երեք օր առաջ է ծնուէ», -մտածում է Օհանէս աղան (2004, էջ 531)»:

Սուրբգրային օրինակների հանդիպում ենք նաև Մահարու այլ ստեղծագործություններում ևս. ակնառու օրինակ է հատկապես նրա ինքնակենսագրական արձակը: «Մանկությունից» մինչև «Երիտասարդություն» ցեղասպանության փաստը աստվածաշնչյան զուգահեռների միջոցով շարունակում է սովերի պես հետապնդել նրա գրականությանը: «Պատանեկություն» վիպակում Էջմիածնի պատերի տակ հիվանդ ու սովահար գաղթականության հետ Թումանյանի հանդիպումը հոգեցունց դրվագ է: Այստեղ Մահարին պատկերը կառուցում է սուր հակադրությունների ֆոնի վրա. եկեղեցի՝ Աստծո տուն, բիրիլական Արարատ լեռ և ցեղասպանություն բեկորներ. «Շրջում է մահը, իսկ նրա հետևից՝ դագաղփորգոնը: Նիհար ձիերը գլխիկոր և հնազանդ տանում են իրենց զարհուրելի բեռը վանքի պատերից դուրս, դեպի բաց դաշտը: Այնտեղ ամեն օր փորվում է մի մեծ սենյակի չափ փոս: Գերեզմանափորներն ընդունում են ֆուրգոնները և սկըսում են դատարկել: Շարտում են փոսի մեջ իրար վրա ձեր, կին, աղջիկ, տղա, ծծկեր երեխաներ. ընկնում են նրանք կողքի, փորի, կոնակի վրա, բաց, քարացած աչքերով նայում են նրանք մինչև գալիս են նորերը և ծածկում նրանց մի նոր շերտով»⁷: Ահա այս ահասարսուռ տեսարանների ակնատեսն է լինում Հովհաննես Թումանյանը՝ այցի գալով Էջմիածնի պատերի տակ հանգչող գաղթականներին. «Եկավ Հովհաննես Թումանյանը և շրջապատեց իրեն որբերով. ես նրան գիտեի. այդ նա է, որը գրել է «Մի կաթիլ մեղրը», «Շունն ու կատուն»: Նա հագել էր սպիտակ շորեր և կեպի: Կեռ քթով, սպիտակ ընչացքով, խաղաղ դեմքով կանգնեց նա, լուռ նայեց բոլորին, հետո նայեց հեռու և հեռացավ:

Հետագայում, երբ ես կարդացի նրա «Հոգեհանգիստը», ինձ թվաց, որ նա հենց այդ օրը, մեզնից հեռանալուց հետո գրեց այն:

...Կապտում են Մապիսներն ավելի և ավելի, ու մահու թելերով իջնում է գիշերը վանքի և աշխարհի վրա»⁸: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ պատկերը ավարտվում է մահվան նկարագրությամբ, որը հավասարապես տիրապետող է դառնում Մապիսների և վանքի վրա, ուր իջել է միաձինը:

⁷ Գ.Մահարի, Պատանեկություն, Երևան, 1956, էջ 89:

⁸ Նույն տեղում, էջ 91:

«Երիտասարդություն» վիպակում Մահարին երևույթը վեր է հանում այս անգամ մեկ այլ՝ համադրության գրական հնարանքի միջոցով: Որբանոցային գորշ, կիսաքաղց առօրյայի, մշուշապատ ապագայի և «սիրուն-սևավոր» Վանի հիշողություններն են տիրապետողը վիպակում: Իսկ այս մթնոլորտի դրամատիզմը ողբերգական շեշտեր է ստանում հատկապես պատումի սկզբից մինչև վերջ ձգվող եկեղեցական արարողության տարտամ նկարագրությամբ, որը հավանաբար հոգեհանգստի կարգ է... Վիպակի սկզբում, ինչպես «Այգեստաններում» հեղինակը սուր հեգնանքով անրադառնում է բարձրային. «մեր օրերում ամենակարողներն ավելի խանգարում են, քան օգնում, գալով երկնային ամենակարողին՝ մեկը լինի, նրան օգնի»⁹: Այստեղ հեղինակը «խաղաղ» ձևով շեշտում է, որ ամենակարողը մեկը չէ և միաժամանակ ընդգծում է երկնային ամենակարողի «անկարողությունը»:

Իբրև ճակատագրի չար կատակ, Մահարին իր չգործած մեղքերի համար կրկնակի անգամ անցավ Սիրիի քավարաններով և ինչպես նշում է «Ծաղկած փշալարեր» վիպակում, իր աքսորական կյանքի մի հատվածը անցկացրեց մի ճամբարում, որը ոչ ավել և ոչ պակաս ժամանակին սուրբ հայրերի մենաստան էր եղել: Ահա թե ինչպես է ներկայացնում հեղինակն իր աքսորավայրը. «Մենք հիմա գիտենք, որ գտնվում ենք Վոլոգդայի քաղաքական մեկուսարանում: Մեկուսարանի շենքը ժամանակին եղել է վանական սուրբ հայրերի կացարանը: Այո, այստեղ, այս պատերից ներս ապրել ու ճգնել են աշխարհից խռոված մարդիկ: Նրանք կամավոր կերպով չարչարել են իրենց մարմինը, իսկ հոգին նվիրել խստասիրտ ու դժվարահաճ աստծուն»¹⁰: Այնուհետև Մահարին անդրադառնում է այդ շենքի նախկին ու ներկա բնակիչներին և նրանց միջև սոսկ «աննշան» տարբերություններ է տեսնում, երբ մի դեպքում նրանք իրենց կամքով են հայտնվել այնտեղ, իսկ մյուս դեպքում՝ հակառակը. «Մեծ տարբերություն չկա այս մոռյալ շենքի նախկին ու ներկա բնակիչների միջև: Աշխարհից խռոված՝ մենք էլ ենք ճգնում, մեր մարմինն էլ է չարչարված, իսկ մեր հոգիները՝ զոհաբերված խստասիրտ ու դժվարահաճ աստծուն»¹¹: Ուշագրավ, անգամ ցնցող է Մահարու հաջորդ գուգահեռը, որը մեկ անգամ ևս վերահաստատում է գրողի վերաբերմունքը Աստծո նկատմամբ, քանի որ համեմատության մյուս կողմում ժողովուրդների հայր հորջորջված, սակայն իրականում մարդկության մեծագույն դահիճ Ստալինի կերպարն է. «Աստվածների մեջ մի փոքր տարբերություն կա: Նրանց աստվածը զառամած, ալեհեր բեղ-մորուքով է, մերը՝ մաքուր սափրված, ալեխառն բեղերով: Այս է եղածը: Մի աննշան տարբերություն էլ կա՝ մինչ այս շենքի նախկին բնակիչներն իրենց ձեռքով էին փակել դուռն իրենց վրա, ապա նոր բնակիչներն իրենց կամքից ու ցանկությունից անկախ, շա տ, շա տ, շա տ հարգելի պատճառով նստած են փակ դռներից ներս»: Հարկ է նկատել, որ այստեղ տիրապետող է ճամբարային անհույս կյանքի դառնությունը ցմրուր դատարկած կալանավորի մոռյալ տրամադրությունը: Շեշտենք նաև, որ այս սեղմ շարադրանքում Մահարին Աստծուն երկու անգամ էլ բնորոշում է միևնույն՝ «խստասիրտ» ու «դժվարահաճ» մակդիրներով:

Ինքնակենսագրականում Մահարին իր խոսքին հատուկ դարձդարձիկությամբ ու սեղմությամբ բանաձևում է սեփական կյանքի կեռմաններով լի ուղին՝

⁹ Նույն տեղում էջ 102:

¹⁰ Գ. Մահարի, Երկերի ժողովածու, հատոր 5, Երևան 1989, էջ 300:

¹¹ Նույն տեղում էջ 103:

վկայակոչելով Եհովայի հավանական առաջարկի ընտրության հնարավորությունը. «Եթե այս թույլին ներս մտնեք ահեղ և ամենակարող Եհովան, նստեք իմ դիմաց, մի ծխախոտ վառեք և ասեք.

- Տալիս եմ քեզ երկրորդ կյանք, գծիր քո երկրորդ կյանքի ուղին օրորոցից մինչև գերեզման, ինչպես որ ցանկաս, և կկատարվի քո կամքը...ինչպես և կուզեիր ապրել...

Ես նրան կպատասխանեի առանց վարանելու...

- Ճիշտ այնպես, ինչպես ապրեցի»¹²:

Վերոհիշյալ քաղվածքում ուշադրության է արժանի այն, որ հեղինակը Աստծուն դիմում է նրան պատշաճող «խստասիրտե, «ահեղ» և «ամենակարող» մակդիրներով, սակայն շարունակության մեջ Մահարին նրան իջեցնում է աստվածային բարձունքից, ծխախոտը ձեռքին նստեցնում իր դիմաց և... հրաժարվում ամենակարողի գայթակղիչ առաջարկից:

Վերստին դառնալով «Այրվող այգեստաններ» վեպին՝ նշենք, որ աստվածաշնչյան հիշատակությունների միջոցով Մահարին շեշտում է ազգային ողբերգության տիեզերական ծավալումները՝ միաժամանակ կրկին ընդգծելով նաև երկնավորի՝ մեր ցավին անհաղորդ մնալու հեղինակային միտումը. «Գիտություն եւ քաղաքներում՝ եկեղեցիներ, բոլոր վայրերում վանքեր ու սրբավայրեր, ամենակարողի, ամենատեսի աչքերի առաջ այսքան խժոժություն ու ոճիր, ու ոչ մի միջամտություն:

Չէ՛, միլիոնավոր գոհերի մահամօտ հոփնդ չի հասնում նրա ականջին եւ ոչ էլ արեան հոտն է հասնում նրա ռունգերին, չէ՛, այրուղ գիւղերի եւ քաղաքների ծովը չի հասնում նրա բիրլիական երկար, ալեհեր մօրուքին (2004, էջ 409)»:

Հիշյալ քաղվածքը մեկ անգամ ևս հաստատում է այն համոզմունքը, որ գրողի աստվածամերժությունը պայմանավորված էր դեռևս մանկությունից նրա հոգում անջնջելի մնացած եղեռնի մղձավանջներով ու տատի անկատար մնացած «տե՛ր աստված, որը բարին է, է՛ն կատարես» աղոթքով:

Мушег Сарухян – Гурген Маари и христианство. – В статье исследуются библейские упоминания и их авторские интерпретации занявшие значительное место в творчестве и автобиографии Г. Маари. В его произведениях были выявлены идеологические аспекты и эстетические особенности разных библейских эпизодов.

Сопоставляя факты жизни автора с упоминанием священного писания, убеждаемся, что безбожие Гургена Маари, обусловлено фактом геноцида армян.

Mushegh Sarukhanyan – Gurgen Mahary and Christianity. – The Biblikal mentions, their authorial and “non authorial” commentaries, generously used in Gurgen Mahary’s works and autobiography, are discussed in the article. At is also exsposed in the article ideological motives, aesthetic layers of Bibblikal episodes mentioned in Mahary’s works.

Comparing the writer’s biographical facts with the Bibblikal mentions, often met in his works, express the conviction that Mahary’s atheism was mostly conditioned by the fact of Armenian Genocide.

¹² **Գ.Մահարի**, Սիբիրական, Երևան, 2009, էջ 25: Գրողի ինքնակենսագրականից մեջբերումը կատարվել է այս գրքից, քանի որ այն ամբողջական տեսքով հրատարակվել է այստեղ:

ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐՄԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

ԵՊՀ Իմ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

Դ. Վարուժանը 20-րդ դարասկզբի արևմտահայ գրականության ինքնատիպ ներկայացուցիչներից է: Հոգևածում դիտարկվում են Վարուժանի ստեղծագործության նեոռոմանտիկական դրսևորումները: Հայ նեոռոմանտիկների շրջանակում նա թերևս ամենից շատն է հավակնում նեոռոմանտիկ կոչվելու: Նրա ստեղծագործական մեթոդի յուրահատկությունն այն է, որ դարասկզբին վերընձնուղավորված նոր ռոմանտիզմը նա փորձեց հարստացնել գրական տարբեր դպրոցների լավագույն հատկանիշներով: Թեև բանաստեղծի «Ցեղին սիրտը» ժողովածուն արդեն իսկ կրում է հեթանոս կենսամտածողության կնիքը, բայց այս դիտանկյունից հատկանշականը «Հեթանոս երգեր» ժողովածուն է՝ հայկական նեոռոմանտիզմի տիպական արտահայտություններից մեկը, ուր միահյուսված են Արևելքի գույներն ու Արևմուտքի մեծությունը:

Բանալի քառեր. Ռոմանտիզմ, նեոռոմանտիզմ, գրական դպրոց, ստեղծագործական մեթոդ, հեթանոս շարժում, «Ցեղին սիրտը», Վերածնություն, «Հեթանոս երգեր», սիմվոլիզմ, իրապաշտություն:

«Ռոմանտիզմը նման է տնային ոգու. շատերն են հավատում նրա գոյությանը: Կա համոզվածություն, որ նա գոյություն ունի, բայց որտե՞ղ փնտրել այն, ինչպե՞ս անվանել, ինչպե՞ս այն մատնացույց անել»¹, - 19-րդ դարի ռուս ճանաչված բանաստեղծ և գրաքննադատ Պ. Ա. Վյազեմսկու այս սրամիտ բնորոշումը, կարծում ենք, չի կորցնի իր ինքնատիպությունը, եթե այն շրջաբերենք նեոռոմանտիզմի վերաբերմամբ: Այն ժամանակային տիրույթը, որին պատկանում է հիշյալ ձևակերպումը, դեռևս հեռու էր ռոմանտիզմի՝ որպես նորաբույս գրական երևույթի ամբողջական և համակողմանի բնութագրման հնարավորությունից, շատ հարցեր դեռ չունեին իրենց պատասխանները, ուստի ռոմանտիզմի «գրական կարգավիճակը» գրեթե նույնն էր, ինչպիսին հաջորդող դարասկզբին վիճակվեց նրա «հոգեզավակին»՝ նեոռոմանտիզմին:

Եթե հաշվի առնենք հայկական նեոռոմանտիզմի ճանաչման և սահմանման հարցի առանձնահատկությունները, ապա հարցի շուրջ թևածող անորոշ կամ թեական մեկնություններով հանդերձ՝ հայ նեոռոմանտիկների շրջանակում Դանիել Վարուժանը թերևս ամենից շատն է հավակնում նեոռոմանտիկ կոչվելու: Հայ դասական գրականագիտության մեջ լրջմիտ հետազոտողների մի խումբ թեքվում է դեպի այս կողմնորոշումը: Այսպես՝ Ստ. Թոփչյանը Դ. Վարուժանին համարում է հայկական նեոռոմանտիզմի ամենավաղ ներկայացուցիչներից մեկը, Էդ. Զրբաշյանի համոզմամբ՝ «...նեոռոմանտիկական ըմբռնումների տեսակետից արևմտահայ գրականության ամենից ավելի ցայտուն և ամբողջական երևույթը դարասկզբի խոշորագույն գրական դեմքերից մեկի՝ Դանիել Վարուժա-

¹ Տե՛ս **В. Ванслов**, Эстетика романтизма, М., 1966, с. 36:

նի ստեղծագործությունն է»²: Համանման տեսակետ է առաջադրում գրականագետ Վ. Գաբրիելյանը՝ բանաստեղծին անվանելով «նորագույն ռոմանտիզմի ներկայացուցիչ»: Գրականագետն ընդգծում և տարբերանշում է Վարուժանի ստեղծագործական մեթոդի յուրօրինակությունը, ինքնատիպ, բարդ համադրությունը, որով նա առանձնանում էր ինչպես ռեալիստ գրողներից, այնպես էլ իրեն սերընդակից արևմտահայ մյուս ռոմանտիկներից. «Վարուժանի ստեղծագործությունը մնաց հիմնականում նեոռոմանտիզմի շրջանակներում: Նորագույն շրջանին բնորոշ այդ ռոմանտիզմը նա փորձեց հարստացնել գրական տարբեր դպրոցների լավագույն հատկանիշներով»³: Այս պարագայում, փաստորեն, չենք անտեսում ավանդույթի ուժ ստացած այս մոտեցման «առաձգականությունը», քանզի վերոնշյալ բոլոր հետազոտողներն անպայմանորեն շեշտում են հայկական նեոռոմանտիզմի և այս դեպքում նաև Դ. Վարուժանի ստեղծագործության հիմնային առանձնահատկությունները, ինքնաբավ և բազմաձև հոլովույթը: Նեոռոմանտիզմի այս հատկանիշը մղում է խոսելու երևույթի անկադապարելիության մասին՝ յուրահատկություն, որ նպատակահարմար ենք համարում անվանել «կառուցիկ ծփունություն», և որն առավել նկարագրելու բազմաշերտ վետևետումներով կոհակվեց Դ. Վարուժանի ստեղծագործության մեջ: Այս տարերային հոսքն իր հիմնահատակում գաղափարագեղարվեստական զարմանալի բացահայտումների, ստեղծագործ մտքի հոգեպարար թռիչքի, արվեստագետ-գեղագետի մեծ երազանքի գեղահրաշ մարգարիտներն է թաքցնում: Եվ պատահական չէ, որ արևմտահայ բանաստեղծության այս կենսաբոլոր ու ներհուն քրմապետի ստեղծագործությունը, որ նվիրական գոհաբերություն եղավ ազգային մշակույթի արևագոծ բազմին, խրոխտ ու առնագեղ հմայք հաղորդեց 20-րդ դարասկզբի հայ գրականությանը. այդ դյուցազնական հմայքով էր օծված և նրա «ամենահեթանոսական» հյուսվածքի հնօրյա հերոսը՝ Տրդատ Բագրատունին...

Այնքան ինքնօրինակ ու աննախադեպ էր այդ հայտնությունը, որ որոշ ժամանակակիցներ՝ նույնիսկ հայ մեծանուն գրողներից ոմանք (Ալ. Շիրվանզադե, Վ. Տերյան), ճիշտ չըմբռնեցին նրա գրական վաստակի առանձին դրսևորումները, ասելիքի խորքայնությունն ու բովանդակության նորարարությունը: Եվ սա այն դեպքում, երբ նույն այդ ժամանակահատվածում նոր խոսքի ներուժը գնահատեցին ռուս մտավորականները: Վ. Բրյուսովն, օրինակ, ինչպես Վարուժանի, այնպես էլ Սիմանյոնի համար հատկանշական էր համարում բովանդակությանը մեծ խորություն ու ծավալ հաղորդելու ակնառու միտումը⁴:

Դ. Վարուժանի «նեոռոմանտիկական դիմանկարը» կազմելիս խնդրի կիզակետում են հայտնվում բանաստեղծի գրական դավանանքի և նախասիրությունների, ստեղծագործական մեթոդի առանձնահատկության, գրական որևէ ուղղության կամ դպրոցի պատկանելության հարցերը: Եվ այս տեսանկյունից հնչած կարծիքներն ու տրված գնահատականները տարաբնույթ ու բազմազան են: Հին հնդկական փիլիսոփայություն ու հունահռոմեական գեղարվեստ, ֆլամանդական գեղանկարչություն և գերմանական փիլիսոփայություն, խորհրդապաշտություն, իրապաշտություն, 20-րդ դարասկզբի գեղագիտական – գեղարվեստական

² Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Եր., 1979, էջ 92: Նույնը նաև՝ **Էդ. Ջրբաշյան**, Գեղագիտություն և գրականություն, Եր., 1983, էջ 258:

³ Վ. Գաբրիելյան, Դ. Վարուժան, Եր., 1978, էջ 132:

⁴ St u Poesia Armenii (под ред. **В. Брюсова**), Ереван, 1966, с. 92:

տարբեր հոսանքների ու դպրոցների ազդեցություններ... Այս բարդ ու բազմազանի խճանկարն էլ ավելի է հաստատում Վարուժանի գրական կողմնորոշման ոչ միատարր բնույթը:

Բանաստեղծի «Հեթանոս երգեր» ժողովածուի քննարկմանը նվիրված Գրական ասուլիսի բանախոսներից մեկը՝ Տիգրան Զյոկյուրյանը, հպանցիկ անդրադառնալով նրա գրական դավանանքի հարցին, նշում է հեթանոս անցյալի բնեբանգների, կենցաղավարության ու նիստուկացի, հագուկապի և տիպական այլ դրսևորումների վարուժանական վարպետ իմացությունը՝ դրանցով պայմանավորելով գրողի ստեղծագործության իրապաշտական շեշտադրումը, բայց և չսահմանափակվելով այդ շրջանակում. «...ասոնցմով մանաւանդ իր գործերուն մէջ տիրող իրապաշտութիւնն ալ կը զօրանայ, թէն չի դադրիր փոխնի փոխ խորհրդապաշտ եւ նոյն իսկ ռոմանթիք ալ ըլլալէ»⁵: Իսկ մեկ ուրիշ բանախոս՝ Էդ. Գոլանձյանը, անուրանալի համարելով բելգիական գրականության երկու ականավոր ջահակիրների՝ Վերհառնի ու Մետերլինկի գրական ազդեցությունները երիտասարդ հայ քերթողի բանաստեղծական գործերի վրա, ընդգծում է այդ ազդեցությունների յուրօրինակ «հայացման», դրանք մեր ազգային քիմքին ու կենսաընկալմանը հարազատ, ներդաշն դարձնելու Վարուժանի տաղանդը. «Վարուժանի մեծ տաղանդը իրապէս կրցած է մեր աչքին այնքան հարազատ ցուցնել բոլոր այս տեսարաններն ու անոնց տակ թաքնուած ցաւերը, ա՛յնքան հարազատ թերևս որքան հարազատ են իր հայրենաբաղձ շինականի արևոտ շեշտերն ու վճիտ հեծեծմունքը»⁶: Իսկ ահա գրող Ռ. Զարդարյանն իր գրչակից ընկերոջ քերթվածներում նկատում է «չափազանցութեան տարուած իրապաշտութիւն»:

Անգամ այնքան ցանկալի և անհրաժեշտ իրապաշտությունը չպետք է հատի գրական չափի և թույլատրելիի Ռուբիկոնը, չպետք է աղավաղվի չափազանցությամբ՝ այդպիսով խաթարելով բանաստեղծության հրապույրը: Այս ճշմարտությանն էր միտվում նաև Զարդարյանը, երբ նշում էր, թե ծայրագույնս շեշտված իրապաշտության դեպքում խաթարվում է բանաստեղծությանը հմայք հաղորդող «մշուշապատ խորհրդաւորութիւնը»⁷:

Արևմտահայ գրականության երախտավորներից մեկին՝ Հ. Օշականին, Վարուժանի ստեղծագործության մեջ հիացնում է դասականության և ռոմանտիզմի առեղծվածային միախառնումը՝ մի համադրություն, որտեղ դասականությունն արտահայտված է բառի իրական իմաստով. դա «յաւիտենական դասականութիւն» որակված ճշմարիտ ու լայնահուն, բարի և մեծ արվեստն է՝ «քիչիկ մը քրմօրէն ըմբռնուած», իսկ ռոմանտիզմը «յուզման, խռովքի, տառապանքի մէջ հասունցած գեղումն է». այդ արդար, ինքնաբերական ռոմանտիզմը «ջիղերու, զգայնութեան» ծնունդ է և ոչ թե գրագիտական մարզանք⁸:

Տեսակետների ու բնութագրումների մշտահոլով հորձանքն ամեն դեպքում տեղի է տալիս հեղինակային ընկալումների առաջ՝ նրա մտավիճակների բյուրեղացումներ հանդիսացող քերթվածների և գրական հայացքների քննության համապատկերում: Հոգու և մտքի այդ տրամադրությունները փոփոխվում են ժողո-

⁵ Գրական ասուլիսներ, Գ, Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր»-ը, Կ. Պոլիս, 1913, էջ 35:

⁶ Նույն տեղում, էջ 20;

⁷ Տե՛ս Գրական ասուլիսներ, Գ, Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր»-ը, էջ 42:

⁸ Տե՛ս **Յ. Օշական**, Համապատկեր արևմտահայ գրականութեան, վեցերորդ հատոր, Պեյրուս, 1968, էջ 211-212:

վածուից ժողովածու, շարքից շարք, հարստանում ու համալրվում են նոր ու զարմանալի խտացումներով, դառնում ուրույն, միայն և միայն *վարուժանական* բացահայտում-ընդհանրացումներ... Եվ վերոնշյալ բազմաբարդ ազդեցությունների ու համակրանքների շղարշը երբեմնակի տարածվում է նրա ստեղծագործական ուղու տարբեր հանգրվանների վրա՝ անկարող լինելով, սակայն, իր լուսաթափանց ծայքերում ամփոփել ու պարտակել ազգային մշակույթի դարավոր ակունքներից սնված հզոր տաղանդի թարմ ու անկրկնելի, անհատական դիմագիծը:

Հետևաբար, համակարծիք ենք արևմտահայ բանաստեղծ և գրական գործիչ Լ. Էսաճանյանի այն բնորոշմանը, թե «Վարուժանի արուեստը ազգային տարազը կը հագնի: Բանաստեղծը արուեստի ամեն աղբիւրներէն լիայազ կ'ըմպէ, ի ձեռն իր սեփական բաժակը ունի»⁹:

Բանաստեղծի առաջին իսկ՝ «Մարստուներ» ժողովածուում նշմարվում են ռոմանտիզմի և անգամ սենտիմենտալիզմի թեթև տարրեր՝ պարուրված իրականության նկարագրության զարմանալի ճշգրիտ գագաղոթյամբ: Ուստի վստահորեն կարող ենք ասել, որ Վարուժանի ստեղծագործական մեթոդին բնորոշ համադրական միտումն արդեն իսկ դրսևորվում է նրա առաջին ժողովածուում: Ռոմանտիկական հույզը, ապրումը թևածում է ժողովածուի բոլոր քերթվածներում, դառնում դեռաբույս սրտի վշտալուր աղաղակ, որ ի ցույց է հանում կյանքի թշվառ պատկերները, դիցուհի Տիքեի* քամահրանքին արժանացած խեղճերի ու լքյալների անլուր տառապանքը: Այս դրվագները, իսկապես, կյանքից քաղված և ցավի, անպատում կսկիծի արցունքներով ողողված իրապատում էջեր են, որ վկայում են սկսնակ բանաստեղծի՝ իրականության սթափ ընկալման ու ճշմարիտ արվեստի իսկական կոչմանը գիտակից լինելու ապշեցուցիչ և հասուն ունակության մասին: Ժողովածուն բացող «Մուսային» բանաստեղծության մեջ պատանի քերթողը մեկնաբանում է «Մարստուներ» խորագրի ընտրությունը. դրանք իր իսկ հոգու, իր իսկ արյան սարսուռներն են՝ Գթասրտության, քրիստոնեական Սիրո համաձավալ կոչերով:

Երգերն անոր պիտի պատմեն *Մարստուներ*⁹
Մարմնավորած իմ արյունես, շարժումես,
Ներշնչելով տողեր, փուշի ակոսներ¹⁰,
Ուր, հողմակոծ, պիտ' ծրլի վիշտն աղեկեզ:

Պիտի մորնչեն զարհուրանքները կյանքին՝
Մե' ջը սուգած՝ արդարության, բարության.
Սըրբազա ն քնար, պիտ' լարերն իր մըկըրտվին՝
Մարտիրոսված եղբայրության ավազանն¹¹:

⁹ Լ. Էսաճանեան, Դանիել Վարուժան (կեանքը եւ գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 9:

* Հունական դիցաբանության մեջ ճակատագրի, երջանկության և բարօրության աստվածուհին

¹⁰ Բանաստեղծի արխիվում պահպանված ձեռագիր տետրերից մեկը վերնագրված է «Փուշի ակոսներ», որը, ըստ բանասիրական հետազոտությունների, հիմք է հանդիսացել «Մարստուներ»-ի համար (առավել մանրամասն տե՛ս Դ. Վարուժանի երկերի եռահատորյակի առաջին հատորի «Ծանոթագրություններ» բաժինը, Եր., 1986, էջ 541-546):

¹¹ Դ. Վարուժան, ԵԼԺ, երեք հատորով, հ. 1, Եր., 1986, էջ 14 (Դ. Վարուժանի եռահատորյակից բերված մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ՝ անմիջաբար, կնշվեն միայն հատորը և էջը):

«Մարտուններ»-ում ամփոփված բանաստեղծությունների վերնագրերն արտացոլում են ժողովածուի հիմնանյութը՝ ճակատագրից մերժված հասարակ, չքավոր մարդու ողբերգական դատապարտվածությունը՝ «Չյունե դագաղը», «Հաշիշ», «Տղա՛ք, ներեցեք», «Մոխիրներուն առջև», «Վիժածը», «Մուրացիկը», «Հիվանդ է»... Ահա, օրինակ, «Չյունե դագաղը». գինետան դռնից դեպի մահ գլորված թշվառի ցնցող վախճանի ներքին պատճառները հեղինակը բացատրում է ոչ միայն սոցիալական անկատար հարաբերություններով, այլև մարդկային անտարբերությամբ, մարդ էակի՝ իր նմանի հանդեպ սիրո ու կարեկցության բացակայությամբ.

Ու երեկվան հեզ մերժվածն (այս գիտնա ք)
Այսօրվան կույր կորսը վաճն է՝ գոր կ'ատեն:
Այն նոթի տղան՝ որ կը վրոնսվեր մեր դռնեն՝
Այս մոլորած մարդն է...
Ան՝ մեր հրածն է, որ խոցոտ քա՛ն թե գինով,
Հոս տեղ ինկա՛վ, պատե ի պատ երթալով:
... ..
Զիրենք մոռցող աշխարհն մոռնալ կը ճըգնին՝
Ալքովի մեջ խեղդելով կյանքը վըշտին:

(1, 22)

Կյանքի դժխեմ պատկերները, այսպիսով, չափակցվում են բանաստեղծի զգայուն, զգացող սրտի ելևէջներով, և զարմանալի չէ, որ երբեմն ժողովածուի որոշ բանաստեղծություններում («Վշտին», «Մեռածին համբույր մը», «Երագ և խոհ») առկայծում են սենտիմենտալ թրթիռներ, որոնք առանձին դեպքերում գուցակցվում են մեղմ նատուրալիստական գույներով («Վիժածը»): Միննույն ժամանակ ռեալիստական ընդգծված գունդերանգներ կան այնպիսի քնարական պատկերներում, ինչպիսիք են «Մոխիրներուն առջև», «Մուրացիկը», «Հիվանդ է» և այլ քերթվածներ:

Ռոմանտիկական ավանդույթների վերածնունդը առավել կոնկրետ ու մարմնեղեն գծեր է ստանում բանաստեղծի հաջորդ՝ «Ցեղին սիրտը» ժողովածուում՝ իր ամենավառ ու շենշող, բարձրագույն արտահայտությունը գտնելով «Հեթանոս երգեր»-ում, բայց դա, ինչպես վերը նշվեց, Վարուժանի հոգեմտավոր զգայնություններով պայմանավորված գեղարվեստական բարդ ու բազմալար համակարգ էր, որ, շփման ինչ-ինչ եզրեր ունենալով հանդերձ ժամանակի արևմտահայ այլ բանաստեղծների (Միամանթո) ստեղծագործական միտումների հետ, հզորապես տարբերվում էր բոլորից և բանաստեղծի անգուգական հանճարի շքեղ դրոշմն էր կրում: Հենց այս ժողովածուներում ցոլացած ցավի ու տառապանքի տրամադրությունները, միաժամանակ պայքարի ու գոտեպնդման, ոգեշունչ անցյալից ավանդված կորովի և ներշնչանքի առողջ սերմերը վերընձյուղավորելու կոչերը բացահայտում էին ազգային կյանքի ցավատանջ դրվագները և հուշում ազգի ընտրելիք ուղին: Այդ հայրենական, ցեղային բնեղանգներն ու ոգին կենդանագրող ռոմանտիզմը հիմք տվեց Հ. Օշականին՝ Վարուժանի ռոմանտիզմը համարելու հայ քաջագուն հերոսների՝ Վարդանների, Մուշեղների, Վահանների, Սմբատների... «արդիացած արձագանգը»՝ այն ուրույնացնելով իբրև «ցեղային ռոմանտիզմ». «Մեր ցեղային ռոմանտիզմին իրական արտայայտիչն է Դանիել Վարուժան»¹²:

¹² **Թ. Օշական**, Համապատկեր արևմտահայ գրականության, վեցերորդ հատոր, էջ 213:

Փառավոր անցյալի հանդեպ անսքող հետաքրքրությունը, որ նոր ու հագեցած գույներով արտափայլեց «Հեթանոս երգեր»-ում, նկատելիորեն երանգավորվում է նախորդ՝ «Ցեղին սիրտը» ժողովածուում: Մասնավորապես հատկանշական է հարուստ հիշատակներով լի գեղեցիկ անցյալի և մոայլ ու փառագուրկ ներկայի տխուր հակադրությունը, ակներև են այդ ներկան վերափոխելու, ազգի քաջակորով դիմագիծը վերադարձնելու անխոնջ ջանքերը: Ահա «Հայրենի լեռներ» բանաստեղծությունը: Վարուժանն ասես տեսանելի մի կտավի վրա տարածում է հայոց լեռների՝ իր թախծի ու անհուն գորովի շնչով ջերմացած էպիկական պատկերը. հայրենի լեռներն այս դեպքում ևս, ինչպես Թումանյանի «Հայոց լեռներ»-ում, կրում են ազգային ճակատագրի կնիքը, դառնում ազգային պատմության վառ ու մթամած էջերն արտացոլող հայելի: Վարուժանը, սակայն, իրեն բնահատուկ ռոմանտիկական վառ ու տարողունակ կրքով է կերպավորում պատմական Հայաստանի տարբեր շրջափուլերը հավերժացնող գոռ ու երկնանիստ լեռները՝ իրենց շողապսակ փառքերից ու հնօրյա հերոսներից զրկված այդ «անմահական դշխոներին»: Բանաստեղծի գրչի տակ շնչավորվում, մարմին են առնում հեթանոսական ու քրիստոնեական կյանքի թե՛ նշանավոր, թե՛ աննշան, կենցաղային դեպքերը, հայոց մեծերի քաջազնական ու ստեղծարար ուժը: Ահա, օրինակ, հայոց դիցական գետի՝ Եփրատի կամակոր ու դժվարասանձ տարերքի մասին հնավանդ ասքը՝ հիշեցնող վարուժանական շքեղ «տարբերակը».

Արշակ կապեց կամուրջներ Եփրատին վրա դիվաձայն՝
Ռոռնք այդ խեռ դիցուհվույն ճապուկ մեջքը պարուրող
Եղան գոտի ալեսանձ՝ որոնցմե վար կախվեցան
Մորմենիներ աղամոդ:

(1, 167)

Մեր առջև իսկապես հառնում է գիսախաղիվ մագերով ջրեղեն դիցուհին...

Հեթանոս արշալույսից վերադառնալով թափուր ներկային՝ բանաստեղծը դարձյալ հայրենի լեռների մթին այրերի մեջ ու բարձրագահ ժայռերի վրա է տեսնում ցեղի փրկությունը. այնտեղ բնության ստեղծագործ հանճարի ամեն մի ցայտքը դառնում է փրկաբեր խորհրդանիշ.

Հոդ ջրվեժներն՝ որոնց քով վարդենիներ կը ծաղկին՝
Կու տան հրավեր պայքարի:

.....

Եվ թող տրոփեն վեհորեն լոկ քաջերո՛ւն ոտքին տակ
Հըրաբուխներն ըսքողված, ձեր սըրտերն այդ ծրծմբաեռ...

(1, 168)

Լևոն Հսաճանյանի բնորոշմամբ՝ «Իրապաշտ գեղեցկագիտութեան և ռոմանթիք յստակատեսութեան զմայլելի խառնուրդ մըն է իր (Դ. Վարուժանի – Ա. Ա.) «Հայրենի լեռները»»¹³: Ինչ վերաբերում է արվեստագետի գրական – գեղարվեստական մեթոդի խնդրին, ապա վերլուծաբանը նշում է. «Ռոմանթիք կ'որակենմ զինքը»¹⁴, թեև այս դեպքում նա առաջնորդվում է ռոմանտիզմի այն ըմբռնումով,

* Ըստ հին հայկական ժողովրդական հավատալիքների՝ Եփրատը պատկերացվել է հերթական ջրախեղ գոհին հետամուտ կնոջ կերպարանքով. «Եփրատ գետը կին է՝ խռիվ մագերով, քուրձեր հագած: Ամեն տարի նա հարյուրավոր մարդիկ է կուլ տալիս: Երբ գալիս է Վարդավառը, Եփրատը նայում է դիմացի ժայռին ու ասում.

- Վարդուհրն եկալ, մեկը չեկալ» (տե՛ս **Մ. Հարությունյան**, Հայ հին վիպաշխարհը, Եր., 1987, էջ 23):

¹³ **Լ. Հսաճանյան**, Դանիել Վարուժան, էջ 88:

¹⁴ Նույն տեղում, էջ 87:

թե այն (վիպականությունը) երևակայությամբ իրականին ձգտելու հանգամանքը, իրողությունն է, որ բանաստեղծին դարձնում է «հստակատես»: Էսաճանյանը միաժամանակ քննում է Վարուժանի ստեղծագործության նրբաթել ու բազմահանգույց հյուսվածքը, ուր Մետերլինկը և Վերհաոնն իրենց արվեստի լույսերն են «կաթեցուցած», և սիմվոլիզմի բնահունչ ու մաքուր ճշմարտություններն են գրավում բանաստեղծին, ուր իրապաշտությունն ընդելուզվում է միստիկ ջրդեղումներով...

«Յեղին սիրտը» գիրքը մի յուրօրինակ նախագավիթ է դառնում այն բուռն ու կենսալիք, հեթանոսաշունչ հուզերանգների համար, որոնք, սկզբնավորվելով այս ժողովածուից, լցնում ու պարագրկում են «Հեթանոս երգեր»-ը: Հիշատակելի է, օրինակ, «Յեղին սրտի» խորհրդակիր էջերից մեկը՝ «Հաղթողը» բանաստեղծությունը, ուր հեթանոս օրերի պերճագեղ գույներով վերարտադրվում է վաղեմի ժամանակների կերպրնկալումն ու հաղթողներին արժանավորապես դիմավորելու ցնծուն անմիջականությունը՝ այդ ամենը համեմված մեհենական – ծիսական ավանդությով: Գեղեցիկ ու նվիրական է պատկերը համալրող ամեն մի դրվագ՝ և՛ վարդերը ձեռքներին Աստղիկին դիմող կույսերը՝ Հաղթողի քաջ զինակիրներից որևէ մեկին իրենց սիրո տերը դարձնելու խնդրանքով, և՛ Վահագնի արձանի դեմ կենդանի ողջակեզի խարույկները բորբոքող քրմերը, և՛ արմավենու ոստեր բռնած տղեկներն ու հիրիկներով զարդարված աղջնակները, և՛ սափորներից հոսող գինու մեջ հեծյալի ձիու տղմոտ ամբակները լվացող կանայք, Անահիտի մեհյանին նվիրված քառասուն կույսերը՝ գիշեր – ցերեկ իրենց Փրկչի ծիրանին գոհարներով հյուսող... Սուրբ Սոսյաց անտառներից է ընտրված նրա գավազանը, և Արամազդն ինքը պիտի թագադրի նրան մարգարտյա պսակով: Եվ այս շքեղ ու վառվռուն ծիսահանդեսի բովում Վարուժանը կարևորում և արդար հաղթանակի ջահակիր է դարձնում Հաղթողին՝ ոգեկոչելով անցյալի փառապանծ հերոսներին: Այսպիսով հառնում է Հերոսի կամ Առաքյալի այն բաղձալի կերպարը, որը կերտում է ապագա, որն ազգակից է անմահներին. հառնում է Գերմարդու կերպարը: Ի դեպ, Հաղթողը ցեղի նվիրյալի միակ կերպավորումը չէ վերոնշյալ ժողովածուում. «Կովի երթ», «Առևանգիչը», «Առաքյալը», «Դյուցազնի մը սուրին», «Վիրավորը» քերթվածների անանուն հերոսները նրա եղբայրակիցներն ու գաղափարակիցներն են:

Գերմարդու կամ Առաքյալի, Հերոսի գաղափարական ակունքները, ինչպես գիտենք, բխում են Շոպենհաուերի և Նիցշեի փիլիսոփայությունից: Մակայն հարկ է անպայմանորեն ընդգծել այն նրբագիծը, որ հայ նեոռոմանտիկների, հատկապես Սիամանթոյի ու Վարուժանի ստեղծագործության մեջ ինչպես հիշյալ, այնպես էլ մյուս գաղափարները հիմնովին կերպափոխվում են՝ ըստ հեղինակային վերաբերմունքի և ազգային կեցության պահանջների: Այս առումով դիպուկ ու ելակետային է Մտ. Թոփչյանի հետևությունը. «Շոպենհաուերի և հատկապես Նիցշեի գաղափարները հայ իրականության մեջ տարածվում էին որոշակի բեկբեկումով և որոշակի մեկնաբանությամբ՝ ծառայելով հայ ազատագրության գործին: Հայ նեոռոմանտիկներն ընդունում են դրանք՝ զարգացնելով յուրովի, շատ հաճախ շեղվելով ու անջատվելով դրանց բուն բովանդակությունից»¹⁵:

¹⁵ Հայ էսթետիկական մտքի պատմությունից (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), հետազոտությունների ժողովածու, գիրք 1, **Մտ. Թոփչյան**, Հայկական նեոռոմանտիզմի էսթետիկայի ուրվագիծ, Եր., 1974, էջ 194:

Ուշագրավ է այն փաստը, որ Հերոսի գաղափարով ներշնչված Վարուժանը նրան մարմնավորել է ոչ միայն իր գեղարվեստական գործերում, այլև անդրադարձել արձակ էջերում և հոդվածներում («Ռահվիրաները», «Հերոսը»): Այս հանգամանքը միանշանակ խոսում է այն մասին, որ Գերմարդու խնդիրը նրա ստեղծագործության առանցքային հիմնակետերից մեկն է եղել և լուրջ մտորումների տեղիք է տվել: «Հերոսը» գրվածքում երիտասարդ հեղինակը յուրովսանն նկարագծում է իր Հերոսի դիմապատկերը. նա կյանքի օրենսդիրն է, դյուցազն է՝ սերված դիցերի զարմից, նա անցել է մարդ – հերոս – Աստված աստիճանակարգով, բայց նա աստված չէ, այլ՝ մարդ, որի մեջ «մարդիկ տեսան աստվածի մը սաղմը և աստվածուհիի մը վարդաբույր համբույրը անոր ճակատին վրա» (3, 116): Այս կատարյալ Հերոսի, Մարդ – Աստծո բնութագրական հատկանիշը հոգու և մարմնի մաքուր ներդաշնակությունն է. աստվածային հոգին պահանջում է աստվածային մարմին. «.... Հերոս ըլլալու համար հարկավոր է, որ մարմինը հոգիին հավասար աստվածացած ըլլա» (3, 116 - 117): Բայց Վարուժանի Առաքյալը կամ Գերմարդը նահատակ, զոհ է՝ Գաղափարի ու Իդեալի հաստատման ճանապարհին, նա քաղաքակրթության և առաջադիմության, այն է՝ լավագույն ապագայի կերտման աննկուն ու անձնագոհ ասպետն է: Սրբազան զոհաբերությունը նրա կոչման և անցնելիք ուղու նվիրական խորհուրդն է. «Այս գոեհիկ աշխարհին վրա ամեն գերմարդ զոհ մըն է: Եվ առանց զոհի հերոս չկա» (3, 117): Այս պատկերացմամբ է բանաստեղծը հանդես բերում իր ցեղի պահպանման ու վերածնության համար մարտնչող ու նահատակվող հայ հերոսին, որ անմահանում է իր սիրանքով, վեր կանգնում Խավարի դժնատեսիլ կրողներից: Այդ ռահվիրաներն են մի օր, ազնիվ զայրությամբ համակված, Երազի «գեփյուտե զգեստը» փոխարինում «աստղեր ցնցող մրրիկով», իրենց արյունի ու վրեժի պատգամով օրորում գալիք հրաշլի Հայկականների օրոցքը:

Հերոսի, Առաքյալի ըմբռնումը հայկական նեոռոմանտիզմի գաղափարական – գեղագիտական առանձնահատկություններից է, որի ընդհանրական հիմները, սակայն, կամրջվում են համաեվրոպական նեոռոմանտիկական ավանդույթներին: Հերոսական դարաշրջանի իրենց ընկալումներում «հայ նեոռոմանտիկները գտան զարմանալի ներդաշնակություն ազատության, կամքի, ուժի, գեղեցկի, հերոսականության միջև՝ կատեգորիաներ, որոնք բուն էսթետիկական են կամ ունեն որոշակի էսթետիկական բեռնվածություն»¹⁶:

Դ. Վարուժանի Գերմարդու գաղափարին հանդիպադրվում է ուշարժան մի մտահղացում, որն արդեն պատկանում է արևելահայ գրականության անգուցական քնարերգականներից մեկին՝ Ավ. Բաահակյանին: Վերջինին՝ 1890-ական թվականների հիշատակարանային գրառումները ցույց են տալիս, որ նրան ևս գայթակղել է Նիցշեի Գերմարդը, սակայն պետք է նշել, որ ընդհանուր գաղափարը փոխառնելով գերմանացի մտածողից՝ բանաստեղծն առաջնորդվում էր Գերմարդու կերպավորման իր՝ իսահակյանական նկատառումներով՝ էապես տարբեր նիցշեական հերոսի մերժողամիտ ու սառը հոգեկերտվածքից: Միննույն ժամանակ նա, հանձին իր ստեղծելիք կերպարի, որին նպատակադրվել էր անվանել «Մոս – հերոս Մանթաշեցի», ներկայացնելու էր իրեն՝ իր հոգին: Դիտելի է, որ Իսահակյանի Գերհերոսը առնչության հետաքրքիր եզրեր ունի Գերմարդու վարու-

¹⁶ Նույն տեղում, էջ 198:

ժանական ըմբռնման հետ: Այսպես՝ Իսահակյանի ըղձացած հերոսը «պիտի պատվասեր ու ասպետ լինի, հերոս ու դյուցազն, պատերազմում զենքը ձեռին պիտի մեռնի տանջվողի ու թշվառի համար և պիտի հսկա քարի տակ թաղվի՝ զինվորների հետ, ուռենու տակ: Նա պիտի ... ավագակի պես՝ հարստահարողին պատժե...»¹⁷: Եվ ամենակարևորը՝ «Նա **պիտի բոլորին կարեկցե** (ընդգծումը մերն է՝ Ա. Ա.), բայց պիտի բոլորից սիրվի ու պաշտվի»¹⁸:

Ըստ էության՝ 20-րդ դարասկզբի հայկական ռոմանտիզմի այս երկու հսկաների հայացքները՝ մարդասիրության և մարդկային բարօրության վերաբերյալ, համընկնում էին:

Կարելի է ասել, որ Իսահակյանի մտահղացած Գերմարդու հոգին, էությունը՝ իր սիրո ու ժխտման տիեզերական ծավալով, խոհափիլիսոփայական որոնումների անեզրությամբ, բնության հոգեպարար հրաշալիքների ու անդիմադրելի հնարավորությունների պաշտամունքով, ավելի ուշ «սեփականացվեց» «Աբու-Լալա Մահարու» համանուն հերոսի կողմից: Ինչ-ինչ պատճառներով իսահակյանական Գերհերոսի ուրվագիծը մնաց սոսկ «Հիշատակարան»-ի էջերում, որ տարիների անջրպետից հետո ձևաբովանդակային որոշ տարբերություններով վերակերպավորվեց՝ ի դեմս Աբու-Լալա Մահարու:

Նշենք, որ Առաքյալի կամ սուրբ Գաղափարակրի կերպարը գեղարվեստական ուրույն մեկնաբանություն ստացավ նաև Սիամանթոյի ստեղծագործության մեջ:

«Յեղին սիրտը» ժողովածուում Վարուժանը կիրառում է մի շարք սիմվոլներ, որոնք, հատկանշելով արվեստագետի նեոռոմանտիզմի խորհրդապաշտական ենթալարը, դառնում են բառ-ընդհանրացումներ կամ պատկեր-ընդհանրացումներ՝ ուղղակիորեն աղերսվելով ազգային կյանքի ու ճակատագրի վերաբերյալ բանաստեղծի խոհերին: Այս դիտանկյունից խորհրդանշական է «Օձը» բանաստեղծությունը: Դարավոր թշնամու հավաքական մարմնացումն է մատղաշ պատանուն իր երկաթե անլուծելի գալարների մեջ օղակած օձը, որ սողունի իր ամենակուլ քաղցը հագեցնում է հայ ժողովրդին խորհրդանշող պատանյակի արյուն – արցունքով... Միմվոլիկ իմաստ է ստանում և հեղինակային բնաբանը. «Իսկ ապրող Հայերն ալ՝ այսպես ապրեցան»... Եվ ի՛նչ հանճարեղ տիպականությամբ է Վարուժանը բացում երկու հակընդդեմ ժողովուրդներին պատկերող այս խորհրդանշարի շերտերը: Հայ ժողովրդի իմաստության լույսն է արտացոլվել խավարամիտ ու արյունառուշտ ամբոխի դեղնաբիբ աչքերում, փոքր-ինչ զսպել նրա գազանային բնագղը, որ շիթ առ շիթ, ումպ առ ումպ կլանել, քամել է հայի ստեղծագործ վաստակը: Եվ առաջընթացի ու քաղաքակրթության դժվար գառի-թափով թուրք մուլեռանդը միշտ ցած է սողացել, իսկ հայն՝ առաջ՝ դեպի վեր... Օձի խորհրդանիշը առկա է ևս երկու՝ «Անիի ավերակներուն մեջ» և «Ծեր կռունկը» քերթվածներում: Ծեր կռունկը համանուն բանաստեղծության մեջ դարերով տանջված, հայրենի վաթանից հեռու մորմոքող հոգնաբեկ հայ պանդուխտի տխուր մարմնավորումն է, որի ուժասպառ օրհասին սառնասիրտ համբերատարությամբ սպասող սողունը հանգիստ չի թողնում նրան անգամ մահվան հոգեվարքում...

¹⁷ **Ավ. Իսահակյան**, Երկեր, Եր., 1987, էջ 603:

¹⁸ Նույն տեղում, էջ 604:

Հոն օձ մ'որ լուռ, երկա՛ր ատեն կը դիտեր
Այդ ճըզնաժամն ակընկառույց բիբերով՝
Գետեզրեն վեր կը սողա
Ու վրեժէ մ'հին օրերու,
Վատ ոստումով մ'հապշտապ
Անոր մեռած պարանոցին կ'ոլորվի...

(1, 121)

Մեկ ուրիշ բանաստեղծության մեջ («Արծիվներու կարավանը») իրար են հակադրվում «գաղափարի քաջերեն աշտանակված» և ահեղ թռչնով սև ամպերը ճեղքող արծիվների ու նրանց գոռ կռնչուններից թաքնվող ագռավների սիմվոլ – պատկերները: Այս բանաստեղծության մեջ Վարուժանը ստեղծում է այլաբանական մեկ այլ պատկեր ևս.

....Մինչդեռ անդին գիշերվան մեջ, կասկածոտ,
Լուսնին **Մահիկը** ցըրտադող սարսափով
Տավրոսին վրա կը դեղնի :

(1, 165)

Վարուժանի կողմից տարբեր բանաստեղծություններում իմաստավորվում և խոսուն խտացումներ են դառնում բազմաթիվ բառ-գաղափարներ՝ Նեմեսիս, Վրիժուհի, Վերածնություն, Բռնություն, Ազատություն, Ուժ, Արվեստ, Ապագա...

«Ապրիլ» բանաստեղծության մեջ հեղինակը մարդեղենացնում է Վերածնության ոգեղեն գաղափարը՝ ստեղծելով լեռների աղջկա՝ «մրբրկին պես գորեղ, վարդին պես գողտրիկ» Վերածնունդու հմայագեղ կերպարը: Գարնան և հոգու ապստամբությունը մարդկանց թմրած սրտերին բերած ծաղկապարույր գեղեցկուհին ամպրոպի պես է անցնում անտառով՝ կյանքի ու արգասավորության բորբ ու ոսկեղեն սերմերով լցնելով ողջ բնությունն ու աշխարհը, երգ պարզնելով հովերին և սեր՝ սրտերին: Անմիջապես հիշում ենք մեկ ուրիշ աղջնակ – խորհրդադանիշ՝ մեր քնարերգության մեջ այնքան պաշտելի տերյանական Տիտություն – Աղջկա պատկերը, որ քնքուշ մութի պես սահում է դաշտերով և հուզում տերև ու ծաղիկ... Իհարկե, առաջին օրինակում անձնավորված է երևույթը, գաղափարը, երկրորդ օրինակում՝ տրամադրությունը, մի դեպքում հրճվանքի և վարարուն տարերքի շքահանդեսն է, մյուս դեպքում՝ նրբադոտ ու քնքշանվաղ թախծի աննշմար սահքը: Երկու դեպքում էլ, սակայն, խորհրդապաշտ շղարշով են քողավորվում գաղափարն ու հոգեվիճակը, հուզապարունը: Ակամայից ծնվում է և երրորդ գուգահեռը՝ միանգամայն այլ «միջավայրից» քաղված. մեր առջև պարզվում է ֆրանսիացի գեղանկարիչ Էժեն Դելակրուայի հանրահայտ կտավի* հիասքանչ հերոսուհին՝ մարմնեղեն ու մարմնագեղ Ազատությունը, վեհ ու խանդաբորբ Գաղափարը՝ չքնաղ կնոջ կերպարանքով...

Վարուժանի վերոհիշյալ բանաստեղծությունը ինքնագրերում խորագրված է «Ապրիլ», իսկ տպագրվածներում՝ «Ապրիլ». այս երկու անվանումներն ասես միաձուլում ու համահունչ են դարձնում գարնան *ծաղկուն ամսվա* լուսեղեն խորհուրդն ու *ապրելու* մեծ տենչը: Ճակատագրի դաժան հեզնանքով, սակայն, ապրիլը, որ այնքան շատ էր սիրում բանաստեղծը, անագորույն վախճանի չարա-

* Խոսքը հանրահայտ «Ժողովրդին առաջնորդող Ազատությունը» («Ազատությունը բարիկաղների վրա») կտավի մասին է:

գույժ կոչնակ դարձավ Վարուժանի համար. նա ձերբակալվեց ապրիլին: Սարսուռ է ազդում այն հայտնությունը, որ մեծ նահատակը մահից տարիներ առաջ ենթագիտակցաբար զգացել, գուշակել է իրեն և հայ ժողովրդին դարանակալած աներակայելի, մեծագույն սպանողը, ենթագիտակցաբար «անմահացրել» նրա իրագործման ամսանունը՝ Ապրիլ... և դարձյալ՝ նույն «Ապրիլ»-ի մեջ. սև մազերը հովին տված ոտաբորիկ Վերածնունդին՝ Ապրիլը,

Կը վազե կու գա: Բիբերով հըրձիգ՝

Կարծես լի դողով մը նոր եղեռնի... (ընդգծումը մերն է՝ Ա. Ա.)

(1, 155)

«Հեթանոս երգեր» ժողովածուն դարձավ Դ. Վարուժանի ռոմանտիկ մտահայեցության, գեղապաշտ ոգու արվավետումը, նրա արվեստի վճիտ հաղթանակը: Այս ժողովածուն առանձնացավ Վարուժանի ստեղծագործության կենսամատյանում, դարձավ ամենավառը և ինքնատիպը. նրա գրքերից և ոչ մեկն այնքան իրարամերժ քննադատական գնահատականների ու մեկնաբանությունների չարժանացավ, որքան՝ «Հեթանոս երգեր»-ը: Հակասական ու բուռն վեճերի և կարծիքների հիմնային թիրախն այն համարձակ ու անմիջական զգայական հորձանքն էր, որ ակնախիտը քարերի կուրացուցիչ փայլով հեղեղեց բանաստեղծական պատկերներն ու անսպասելի հարված հասցրեց բարոյական կեղծ ըմբռնումների կարծրացած պատնեշին: Այս գիրքը, իսկապես, բնության, կյանքի, ուժի և գեղեցիկի ճանաչման ու իմաստավորման նոր հնարավորություններ բացահայտեց, առաջադրեց նոր իդեալներ, բացեց դարերով ծրարված հեթանոս զգայնությունների քողակապը...

Լ. Էսաճանյանը, գնահատելով ժամանակաշրջանի յուրակերպությունն ու պահանջները, գրում էր. «Վերածնությունն ալ ունի իր հեթանոսութիւնը. դարը կ'ապրի այսօր վերածնութեան շրջանը հեթանոսական իմացումով... Վերածնությունը կը կանգնի կանգնագեղ հեթանոսական թներով»¹⁹:

Այդ հեթանոս հուժկու ալիքը, Վարուժանի երգերում ներհյուսելով մեծաշեն Արևմուտքի՝ հզոր քաղաքակրթության և երփնագեղ Արևելքի՝ գրգանքի օրրանի սարսուռները, երբեք չզրկվեց Ցեղի ինքնության աննման դրոշմից. այն հանդերձավորվեց ազգային դիմորոշ տարազով:

«Հեթանոս երգեր»-ի գունային տիրույթն անեզր է, գեղարվեստական լուծումները՝ անսպառ: Հերոսներն ու միջավայրերը աշխարհագրորեն կաշկանդված չեն. մի դրվագում փթթուն ծիրաննու շուքի տակ նստած մամի ու ծերուկի վաղեմի սերն է արտասվում շողազրկված, ուժազրկված իր հրայրքների մոխրի վրա՝ նրանց հիշողության մեջ վերարծարծելով վաղուց ապրված զգացողություններ և արյան հրդեհումներ, բայց թարշամ հոգին արդեն համբույրի երգը չունի («Հին սեր»):

Պապուն նայվածքն աչվրներուն մեջ մամուն

Կը նվաղի՝ չըթափանցած դեռ սըրտին.

Եվ կը մըսի գաղջ ճառագայթն արևուն

Անոնց ծոցին մեջ ցըրտին:

Եթե փորձէ՛ն իսկ տարփանքի փորձ մ'անմեղ

¹⁹ Լ. Էսաճանյան, Դանիէլ Վարուժան, էջ 45:

Գարնան դրրդիչ բուրումներեն սրբարքած՝
Կը փըշրի՝ սիրտն՝ իբրև բաժակ մը բյուրեղ
Հանկարծ կրակին դեմ ճաթած:

(2, 35)

Մեկ ուրիշ գեղարվեստական պատկերում լիաբուռն քաղցրությամբ փառաբանվում է անմահ մնացած միակ դիցը՝ բարեբերության ու հողի արգասավորության հզոր աստված Վանատուրը. նրա սերմով պտղավորված մայր հողն օժված է աստծո պարարտ եզի շողիքով... Ամբարները խաղաղությամբ են լցված, կարասները՝ ցնծությամբ: Գինու խնդումներես աստված Վանատուրն անմահ է հողի և կրակի պես:

Մի այլ դրվագում Եգիպտոսի քմահաճ վարդը՝ Կլեոպատրան է նավում Անտոնիոսի հայրենական ափերը՝ Իզիսի աստվածային համբույրներով կաշկանդելու Հռոմի մարտավառ Մարսին, և գողտր է պատմական փաստի վարուժանական մեկնությունը.

Իսկ համբույրով մ'այն գիշեր
Կին մ' Իտալիան նըվաճեց,
Մարդ մը՝ Բուրգերն հաղթածեռ:

(2, 18)

Ժողովածուի զարդը «Հարճը» պոեմն է, որտեղ հեթանոս գունեղանքներն առավելագույն խտացմամբ են շողշողում: Հրաշագեղ վարձակը՝ Նազենիկը, կերպավորվում է հեթանոս հմայքի ողջ տարերայնությամբ, Տրդատը՝ առնագեղ ուժի և քաջության մրրկածուփ թափով:

Ինչպես հայտնի է, ժողովածուի մի շարք բանաստեղծություններ ժամանակին խիստ բացասական և կոպիտ արձագանքների տեղիք տվեցին, քանզի հատկանշվում էին զգայական բացերն երանգներով, հոլանի մարմնի մեղկ խայտանքի նկարագրություններով: Ալ. Շիրվանզադեն մոլեգին զայրությամբ ծառացավ «...Ո՛վ Լալագե» բանաստեղծության դեմ. «զազրելի ոտանավոր» բնորոշումն ամենամեղմն է նրա կողմից «...Ո՛վ Լալագե»-ին ուղղված որակումների մեջ...

Ինքը՝ բանաստեղծը, անհամեմատ զուսպ գտնվեց՝ Շիրվանզադեին անվանելով «բանաեղծ, թեև կարող թատերգակ» (3, 462) ...

«Հեթանոս երգեր»-ին նվիրված Գրական ասուլիսի ժամանակ Տ. Չոկյուրյանը նույն այդ գրվածքն անվանեց «հոյակապ քերթված». «Վարուժան այնքան խորապես կը մտնէ նիւթերուն և զգացման մեջ՝ որ ամենէն մերկ ձեւերը կը սրբանան իմ աչքիս»²⁰: Չոկյուրյանը նաև կարևորում էր բնության և մարդու միաձուլման, այդ երկուսի ստեղծագործ հանճարի հարաբերակցության, ասել է թե «բնութեան համաստուածութեանը հետ» նույնանալու գործոնը²¹, որը, ինչ խոսք, «...Ո՛վ Լալագե» բանաստեղծության խորքը, ատաղձն է, և որը դարասկզբի հայկական ռոմանտիզմի բնութագրական միտումներից էր:

Ի դեպ, Ռ. Զարդարյանը նույն այդ Գրական ասուլիսի ժամանակ նշում է, թե «Վարուժան իր շատ մը գեղեցիկ էջերուն մեջ երբեմն այնպիսի տողեր կը սպրդեցնէ՝ որոնք պատկերին ընդհանուր գեղեցկութիւնը կը խաթարեն: Այսպէս՝ *Արեւելեան բաղնիքին* մեջ: Յետոյ, Վարուժանի քերթուածներուն մեջ զգա-

²⁰ Գրական ասուլիսներ, Գ, էջ 30:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 31:

յասիրութիւնը չափէն աւելի շեշտուած է, և ուղղակի կիրքին փառաբանութիւնն է որ կ'ընդնշմարուի տեղ տեղ»²²: Բանախոսը, ըստ էության, մի փոքր այլ մեկնակետով է դիտարկում իրողութիւնը՝ այն որակելով իբրև չափազանցված իրապաշտութիւն: Կարծում ենք՝ դա ոչ թէ իրապաշտութիւն, այլ նատուրալիստական որոշ տարրերի առկայութիւն է:

Չէր սխալվում Լ. Էսաճանյանը, երբ պնդում էր, թէ «Հեթանոս երգեր»-ի հատորը միայն մի ճշմարտութիւն է հռչակում. «Վարուժան մտաւորական բանաստեղծ մըն է քան պարզախոհ զգայավար, զգայամոլ մը»²³:

Ավելի ուշ բանաստեղծի համախմբագրած «Նավասարդ» գրական – գեղարվեստական տարեգրքի համար գրված և հրաշալի մուտք հանդիսացած «Նավասարդյան»-ը, որ Հայկյան Հանճարի ոգեկոչման ձոն էր և վերածնության հզոր փափագ, յուրովի բանաձևեց ու ամփոփեց «Հեթանոս երգեր»-ի նպատկամիտումն ու կոչումը.

Հանո՛ւն Ույժին, հանո՛ւն Գեղին, մըտիր մեհյանն

Աստվածներուն.

Ջահը ձեռքիդ՝ բազնե բազին համասըփոն՝

Հուր ու արյուն:

(2, 219)

Բանաստեղծի մահից հետո տպագրված «Հացին երգը» ժողովածուում նուրբ ու կանչող է հայրենի հողի, մշակների աշխատության և գյուղական կյանքի խաղաղ մեծությունների երգը:

Դ. Վարուժանը չէր ընդունում գրական – գեղարվեստական դպրոցների տարբերակման միտումները. նրա համոզմամբ՝ Գեղեցիկը, որ բնորոշ է բոլոր դպրոցներին, չի պատկանում նրանցից սոսկ մեկին. դա մի «բազմանկյուն հաստվածակողմ մըն է», որի բոլոր անկյունները հավասարապէս շողարձակում են:

Գեղեցիկի այդ հավաստամբին երիտասարդ բանաստեղծը հավատարիմ մնաց իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում:

Армине Адамян – Проявление неоромантизма в творчестве Д. Варужана. –

Д. Варужан – один из знаменитых представителей западноармянской литературы начала 20-ого века.

В статье рассматриваются неоромантические особенности поэзии Д. Варужана в панораме армянского неоромантизма. Он обогатил неоромантизм самыми лучшими качествами разных литературных школ. Обратившись к языческой жизни, многие элементы которой употреблены во втором сборнике поэта "Сердце нации", Варужан написал новый цикл стихотворений "Языческие песни". Сборник "Языческие песни" – один из самых типичных выражений армянского неоромантизма. Там сочетаются цвета Востока и величие искусства Запада.

Неоромантические тенденции начала 20-ого века особнным образом проявились во всем творчестве Варужана.

²² Գրական ասուլիսներ, Գ, էջ 42-43:

²³ Լ. Էսաճանյան, Դանիէլ Վարուժան, էջ 65:

Armine Adamyan – *The manifestation of neoromanticism in the works of D. Varoujan.* – D. Varoujan is one of the famous representatives of Western Armenian literature.

D. Varoujan's works are observed in the panorama of the Armenian Neoromanticism at the beginning of the 20th century. He enriched the new romanticism with the best attributes of various literary schools. Many elements of the pagan life are found in poet's second collection, "The Heart of the Race". Varoujan wrote a whole new cycle of poems "Pagan Songs". It's a splendid hymn to life in luscious, glittering imagery, fusing colors of the East and the art of the West.

"Pagan Songs" is one of the most typical expressions of the Armenian Neoromanticism. The new romantic tendencies at the beginning of the 20th century were originally expressed in Varoujan's whole works.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԶԻՎԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ՄԱՐԻՆԵ ԱՆԴՐԱՍՅԱՆ

ԵՊՀ Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ

Հոդվածում ուսումնասիրվում է 20-րդ դարի Ամերիկայի սոցիալական կյանքի ազդեցությունը միջին խավին պատկանող ամերիկացու հոգեբանության, ներաշխարհի և գիտակցության վրա: Չիվերն իր պատմվածքներում արծարծելով այս թեման՝ գլխավոր հերոսի դերում հիմնականում պատկերում է միջին խավին պատկանող տղամարդուն, ով ֆինանսական խնդիրների պատճառով լուրջ տարաձայնություններ ունի իր ընտանիքի անդամների՝ կնոջ, երեխաների և ծնողների հետ ու այս հանգամանքի պատճառով է, որ զրկված է ընտանեկան ջերմությունից, ինչն էլ ավելի խորացնում նրա հոգեկան անկումը: Պատմվածքներում ակնհայտ է հեղինակի երկակի վերաբերմունքը. քննադատատելով իր հերոսներին, գրողը միևնույն ժամանակ արտահայտում է իր կարեկցանքը այն մարդկանց նկատմամբ, ովքեր դարձել են ժամանակի սոցիալական հանգամանքների զոհերը:

Բանալի բաներ. սոցիալական կյանք, սոցիալական կարգավիճակ, միայնակության զգացողություններ, հոգևոր անկում, միջին խավի կենսակերպ, հերոսի ներքին անհանգստություններ, երգիծական վերաբերմունք, լավատեսական ավարտ, բարեկեցիկ կյանք, մարդասիրական զգացողություն:

Ռուս գրականագետ Վ. Օլենևան որպես հակադրություն 1975 թվականին «La Nouvelle Revue Française» ֆրանսիական ամսագրում գրականագետների կողմից հնչեցրած այն տեսակետին, թե պատմվածքն, ի տարբերություն վեպի, սոցիալական վերլուծություն չի ենթադրում, «Ամերիկյան պատմվածքագրության սոցիալական մոտիվները» գրքում գրում է, որ պատմվածքը, որպես ժանր, առանձնանում է հատկապես սոցիալական կյանքը դիտալու սրությամբ և մարդու ներաշխարհի և նրան շրջապատող միջավայրի մեջ ներթափանցմամբ: «Սոցիալական քննադատական հայացքը իրականության նկատմամբ բնորոշ է պատմվածքի ժանրին նրա գոյության և զարգացման բոլոր ժամանակահատվածներում և նրա սերտ կապը սոցիալական իրականության հետ այս ժանրին բնորոշ առանձնահատկություններից է»¹: Ամերիկայի սոցիալական խնդիրները յուրովի մեկնաբանությամբ արծարծեցին ժամանակի շատ գրողներ՝ Շ. Անդերսոնը, Ֆ. Ս. Ֆիցջերալդը, Է. Հեմինգուեյը, Ջոն Օ Հարան, Ի. Շոուն, Ջ. Ափոլայքը, Ռ. Բրեդերիին: Կարող ենք ասել, որ ամերիկյան պատմվածքագիր Ջոն Չիվերի ստեղծագործության մեջ առավել լայնորեն և մանրամասնորեն է ուսումնասիրվում միջին խավին պատկանող ամերիկացու կյանքը և կենսակերպի փոփոխությունը: 1929թ. Մեծ ճգնաժամի հետևանքով Ամերիկայում ստեղծված անկայուն սոցիալ-տնտեսական իրավիճակը, ինչպես նաև Երկրորդ աշխարհամարտից հետո երկրի ներսում շարունակվող լարվածությունը էական ազդեցություն են ունենում ոչ միայն մարդկանց սոցիալական կյանքի, այլև անձի հոգեբանության, ներաշխարհի և գիտակցության վրա, ինչի արդյունքում փոխվում է նաև բարոյական արժե-

¹ **Оленева В.И.** «Социальные мотивы в американской новеллистике» Киев «Наукова думка», 1978 стр. 5.

համակարգը: Ետպատերազմյան շրջանում ամերիկյան պատմվածքագրության մեջ միջին խավին պատկանող ամերիկացու կյանքը ներկայացվում է իր հակադրությունների և բարդությունների ամբողջականությամբ և բազմաբովանդակությամբ: Սոցիալական կարգավիճակից առաջացած հակասությունները բնորոշվում են ոչ միայն մարդու արտաքին աշխարհի հետ հարաբերություններում, այլ նաև նրա ներաշխարհում: Չիվերն իր պատմվածքներում գրում է, թե ինչպես է ամերիկացու նյութական կարգավիճակն ազդեցություն ունենում նրա ընտանեկան կյանքի վրա, ստեղծում լարվածություն ընտանիքի անդամների միջև, առաջացնում միմյանց նկատմամբ անտարբերություն: Ամերիկացի գրող և գրաքննադատ Ալֆրեդ Քազինն իր հոդվածում գրում է, որ Չիվերը «The New Yorker» ամսագրի այն գրողներից է, ով առաջինը պարզորեն խոսեց Ամերիկայի կյանքի որակի մասին կամ առաջ քաշեց այն հարցադրումը, թե ինչպես ենք մենք ապրում հիմա: Քազինը, շարունակելով իր միտքը, գրում է, որ, ի տարբերություն «The New Yorker» ամսագրի մյուս գրողների, Չիվերի՝ Ամերիկյան կյանքի նկատմամբ բողոքն ավելի կոնկրետ էր, իսկ արձակն ավելի սպասելի²: Գրողը թեև քննադատության է ենթարկում միջին խավին պատկանող մարդու կենսակերպը, սակայն չի ծաղրում և չի նսեմացնում կյանքի փակուղում հայտնված մարդուն ու նրա երազանքները: Ինչպես Չիվերի կենսագիր Բլեյք Բելլին է գրում իր «Չիվեր: Կյանքը» («Cheever: A Life») գրքում Չիվերը չի արհամարհում իր հայրենակից արվարձանաբնակներին որպես խավի. «Նա խելագարվում էր արվարձանի համար»³: Ամերիկյան արվարձանների թշվառության, սոցիալական անհավասարության պայմաններում մարդը երագում է ապահովության, խաղաղ կյանքի, երջանկության մասին և, երբեմն, արտաքուստ ստեղծում բարեկեցիկ կյանքի պատրանքի տպավորություն, ուրիշներին ցույց տալիս իրենց ներսի աշխարհի անխտովությունը, բայց այդ խաբուսիկ պատկերն ի վերջո հանգեցնում է թշվառության, զայրույթի և արբեցողության: Սոցիոլոգ Դենիել Բուրսթինը ընդգծում է, որ ամերիկացիները թաքցնում են իրականությունը իրենք իրենցից, և գտնվում են ինքախաբեության գերության մեջ. «Պատրանքի արտադրությունը ողողեց մեր կյանքը և դարձավ Ամերիկայի ամենից անհրաժեշտ և հարգված բիզնեսը»⁴: Թեև Չիվերը մարդու անձնական անկման պատճառները միայն սոցիալական հանգամանքով չի պայմանավորում, սակայն ցույց է տալիս դրա ազդեցությունը ոչ միայն անձի ճակատագրի, այլ նաև ընտանեկան հարաբերություններում: Վաղ շրջանի գրեթե բոլոր պատվածքներում նկատելի է հերոսների լինելիության պայմանավորումը դրամով: Նկատելի է, որ մարդիկ ավելի շատ մտածում են նյութի, գումար կուտակելու, քան ընտանեկան համերաշխությունը, միմյանց նկատմամբ ջերմությունը պահպանելու մասին: «Սարսափելի ռադիոն» պատմվածքի հերոսներից մեկի բռնությունը ասած «մարդիկ նյարդային են և, կարծես թե, խելագարվում են փող կուտակելու համար»⁵: Նյութական արժեքներն ավելի վեր դասելով, մարդը անտեսում է նաև ամենից պարզ մարդկային փոխհարաբերությունները, որն էլ շատ դեպքերում բերում են նրան հիասթափության և միայնակության զգացողություններ: Չիվերն իր պատմվածքներում արծարծելով այս թեման՝ զլխավոր հերոսի դերում հիմնականում պատկերում է միջին խավին պատկանող տղամարդուն, ով ֆինանսական խնդիրների պատճառով լուրջ տարաձայնություններ ունի իր

² *Colins R. G.*, Critical essays on John Cheever. G. K. Hall & Co. Boston, Massachusetts 1982, p. 122.

³ http://www.nytimes.com/2009/05/03/nyregion/connecticut/03cheeverCT.html?pagewanted=all&_r=0

⁴ *Boorstin D.*, The image or What happened to the American dream. London, 1961, p. 5.

⁵ *John Cheever* «The stories of John Cheever», Alfred A. Knopf, New York. 1978, p. 39.

ընտանիքի անդամների՝ կնոջ, երեխաների և ծնողների հետ ու այս հանգամանքի պատճառով է, որ զրկված է ընտանեկան ջերմությունից, ինչն էլ ավելի խորացնում նրա հոգեկան անկումը: Ներկայացնելով հերոսի ներքին անհանգստությունները՝ գրողը ցույց է տալիս նաև հասարակության մեջ գոյություն ունեցող հակասությունները և բախումները:

Հեղինակը «Ոսկու կճուճը» («The Pot of Gold» (1950) պատվածքի հենց առաջին տողերում հայտնում է, որ հերոսները՝ Բալֆը և Լորան, պարտրված են հարստություն կուտակելու մասին երազանքով և պատմվածքն ամբողջությամբ Բալֆի ֆինանսական գործարքների մանրամասն հաշվետվությունն է: Հերոսուհու ամբողջ մտահոգությունը ամուսնու նոր պաշտոնի անցնելն է, որը կարող է միանգամից վերափոխել իրենց կյանքը և նոր ժամանակաշրջան բացել իրենց առջև:

«Ծանոթները Լորայից լսում էին, որ նա անհանգստությունից չի քնում, քանի որ Բալֆը շուտով լավ պաշտոն է ստանալու»: Հերոսներից մեկն ասում է, որ «Հանուն փողի ինքն ամեն ինչի պատրաստ է, նա կանգ չէր առնի անգամ մարդասպանության առաջ»⁶: Իհարկե, հեղինակի վերաբերմունքը երկակի է, քննադատատելով իր հերոսներին, հեղինակը միևնույն ժամանակ արտահայտում է իր կարեկցանքը այն մարդկանց նկատմամբ, ովքեր դարձել են ժամանակի սոցիալական հանգամանքների զոհերը: Լորայի և Բալֆի բոլոր երազանքները, ապահով կյանքի ձգտումը կապված են լավ աշխատանք գտնելու հետ, սակայն նրանց այդ հոգեկան անհանգիստ վիճակը զուգորդվում է սպասումների անհաջող ավարտով. որտեղ էլ որ Բալֆը դիմում է, նրան մերժում են: Այնուամենայնիվ Չիվերի պատմվածքները լավատեսական ավարտ ունեն. չնայած բոլոր անհաջողություններին, հերոսները չեն կորցնում այն հույսի նշույլը, որն օգնում է հավատալ լավ կյանքի գալիքին: «Բաժանության եղանակը» («The Season of Divorce» (1950) պատմվածքում սպասվում է ամուսինների բաժանություն, ամուսինը տարված է շատ գումար վաստակելու մոլուցքով և անուշադրության է մատնել կնոջը: «Ես միշտ կլանված եմ ավելի ու ավելի շատ գումար աշխատելու անհրաժեշտությամբ և սրտային խնդիրների համար հոգի չկա»⁷: Պատմվածքի հերոսուհին՝ Էթելը, Ֆրանսիայում փայլուն կրթություն է ստացել, սակայն հայրենիք վերադառնալով, պարզվում է, որ իր դիպլոմը ոչնչի պետք չէ: Ամուսինը հիշում է, որ «կինն ամուսնանալուն պես, դիպլոմը կախեց խոհանոցի պատից և թե որտեղ է պետք եկել այս դիպլոմը, չգիտի»⁸: Դիպլոմի մասին ամուսնու կատակով ասված խոսքերը այն մասին են խոսում, որ նրան հասկանալի չէ կնոջ հոգևոր աշխարհը, իսկ ստեղծված իրավիճակը կնոջը հոգևոր մահի է բերում: Էթելի և ամուսնու հարաբերությունները արտացոլում են հասարակության սթրեսային վիճակը, թաքրնված վրդովմունքը և իրավիճակը ներկայացնելով հեզանքի միջոցով՝ Չիվերը արտաքուստ անվտանգ և ապահով միջավայրում անկայունության և անհուսության զգացողություն է առաջացնում: Ամուսնու համար սովորական է անգամ, երբ հարևան Թրենչերը սիրահարվում է կնոջը: «Մարսափելի ռադիոն» («The Enormous radio» (1947) պատմվածքի հերոսների Ջիմ և Այրին Ուեսքոթների ընտանեկան պատմությունն այլ է, թեև այստեղ նույնպես նկատելի է ընտանեկան հարաբերություններում նյութական խնդիրների հետևանքները: Ուեսքոթները նույն-

⁶ Նույն տեղում, էջ 104:

⁷ Նույն տեղում, էջ 165:

⁸ Նույն տեղում, էջ 137:

պես պատկանում են միջին խավին, նույնպես ունեն ֆինանսական խնդիրներ. «Ազնվորեն կասեմ մեր փողային խնդիրներն ինձ շատ մտահոգում են: Ես բոլորովին վստահ չեմ վաղվա օրվա վրա և ոչ ոք վստահ չէ: Գործերս դասավորվեցին ավելի վատ, քան ես սպասում էի և հիմա, դժվար թե, կարգավորվեն»⁹: Երբ երեխան մորը հայտնում է, որ դպրոցը, որտեղ ծնողներն իրեն ուղարկում են, ատելի է, մայրը բերում է իր համար անդիմադրելի փաստարկը. «Մենք վճարել ենք ութ հարյուր դոլլար, որպեսզի քեզ տեղավորենք այդ դպրոցում, և դու կգնաս այդտեղ, անգամ մեռնելով»¹⁰:

Ուսքոթների, թերևս, միակ առանձնահատկությունը մյուս ընտանիքների համեմատությամբ, ինչպես հեղինակն է նկարագրում, դասական երաժշտություն ունկնդրելն էր: Երբ Ուեսքոթների հին ռադիոն այլևս դառնում է ոչ պիտանի, Ջիմ Ուեսքոթը կնոջը երջանկացնելու համար նոր ռադիո է գնում, սակայն այն հետագայում ավելի շատ անհանգստություններ է նրանց պատճառում, դառնում ամուսինների միջև լարվածության առաջացման պատճառ: Ռադիոն Այրինին լսելի է դարձնում հարևանների տխուր պատմությունները, նրանց խնդիրները և ի վերջո բացահայտում նաև իր խնամքով թաքցրած գաղտնիքները: Պարզվում է, որ Այրինն ամբողջությամբ յուրացրել է մորից ստացած ժառանգությունը՝ բաժին չհանելով կարիքի մեջ գտնվող քրոջը:

«Սաթն փլեյսյան պատմություն» (*Sutton Place Story*) 1946) պատմվածքում, երբ որևէ մեկը կշտամբում է շվայտ կյանք վարող ծնողներին, որ նրանք անուշադիր են իրենց փոքր երեխայի հանդեպ և չեն զբաղվում նրա դաստիարակությամբ, երեխայի մայրը պատասխանում է. «Բանկում նրա անունով ութ հազար դոլար պարունակությամբ բացված հաշիվ կա»¹¹, և միանգամայն համոզված է, որ այս պատասխանով նա հերքեց իրեն ուղված բոլոր մեղադրանքները: **Պատմվածքում Թենիսոնների ընտանեկան միջադեպը՝ երեխայի անհայտացումը, կարծես, թե մի պահ ծնողներին մտածել է տալիս իրենց ապրած կյանքի մասին, սակայն քիչ հավանական է, որ երեխայի կորստի զգացողությունը կարող է փոխել իրավիճակը:**

Շերոսների՝ փողի նկատմամբ մոլուցքն ի վերջո ոչ մի լավ բանի չի հանգեցնում, նրանք իրենց իսկ նյութական ձգտումների զոհն են դառնում և այս անկմանը Չիվերը նրանց միանգամից չի հասցնում այլ քայլ առ քայլ:

Մարդկանց նկատմամբ հավատի և կարեկցության մասին գրողի պատկերացումներն արտահայտվում են «Սուրբ ծնունդը տխուր ժամանակ է աղքատների համար» (*«Christmas is a sad season for the poor»* 1949) պատմվածքում: Սուրբ ծնունդը վերելակավար Չարլիի համար տխուր տոն է: Միայնակության զգացումն այդ օրն ավելի քան զգալի է ընտանիք և երեխաներ չունեցող հերոսի համար: Հարևան բնակիչները հանկարծ նրա նկատմամբ դառնում են ավելի բարեհաճ և առատաձեռն: Կարեկցելով ընտանիք չունեցող Չարլիին՝ բոլորը նրան նվիրում են տարբեր նվերներ, հյուրասիրում համեղ ուտեստներ, և այս անակնկալ առատաձեռնությունն ու բարեհաճությունը մի պահ վերափոխում է Չարլիին ու նրա վերաբերմունքը դեպի մարդը. «Նրա դեմքը փայլում էր. Նա սիրում է մարդկանց և դա փոխադարձ է. Որքան հետաքրքիր է նրա կյանքը. Որքան վառ և զարմանալի»¹² և այս ոգևորությամբ պարուրված Չարլին աշխատանքի ժամա-

⁹ Նույն տեղում, էջ 41:

¹⁰ Նույն տեղում, էջ 37:

¹¹ Նույն տեղում, էջ 80:

¹² Նույն տեղում, էջ 134:

նակ բնակիչներից մեկի հետ փորձում է կատակել, որի պատճառով նրան հեռացնում են աշխատանքից: Այնուամենայնիվ Չարլին չարությամբ լցված չէ. նա շարունակ մտածում է աղքատ ու թշվառ երեխաների մասին, ովքեր երագում են Սուրբ ծննդյան նախաշեմին խաղալիքներ նվեր ստանալ: Երբ բնակիչներից մեկը նրան ասում է. «Չարլի, ես ցավում եմ ձեզ համար, ես էլ ձեզ նման միայնակ եմ, չունեմ ընտանիք», Չարլիի մոտ կնոջ դժբախտ վիճակը ոչ մի հույզ չի առաջացնում, նա մտածում է, որ ամեն դեպքում «կինն իր բնակարանում տասը սենյակ ունի, երեք սպասուհի, փող, ադամանդ, և ինչպիսի ընթրիք են նրան մատուցում: Ամեն օր աղբը նետվող ուտելիքը մի ամբողջական խնջույք կլիներ ետնախորշում ապրող երեխաների համար»¹³: Չարլին, հեռանալով Նյու Յորքից Իսթ սայդ, մի ընտանիքի նվիրաբերում է իր սուրբ ծննդյան ողջ նվերները:

Չիվերը, ձգտելով կյանքը ճշգրտորեն ներկայացնել, նկարագրում է այն իր ամբողջ բարդությամբ, վերհանում նաև իր հերոսների հոգեբանության հակասական բնույթը: Թվում է, թե հեղինակը խստորեն է վերաբերվում հերոսներին, նրա մեջ մարդասիրական զգացողությունը բացակայում է, սակայն, իրականում այդպես չէ. Չիվերը մարդկանց ներկայացնելով տարբեր փոխհարաբերություններում, ընտանեկան բարդ իրավիճակներում, արտահայտում է իր երգիծական վերաբերմունքը, ոչ այնքան կերպարների, որքան այն իրավիճակների վերաբերյալ, որում մարդիկ հայտնվել են:

Չիվերը, թեև շատ պատմվածքներում ցույց է տալիս փողի ազդեցությունը մարդու վրա, սակայն շատ դեպքերում չի թաքցնում նրանց մեջ գտնվող լույսը, բարությունը, մարդկանց նկատմամբ կարեկցական վերաբերմունքը, որը վերջին պատմվածքում՝ Չարլիի պարագայում, առավել քան ակնհայտ է:

Марине Андрасян – Проявление социальной жизни Америки в пидцказах Джона Чивера. – В статье исследуется влияние социальной жизни Америки 20-го века на психологии, внутренний мир и сознаний американца средней классы. Исследуя эту тему Чивер в основном в роле главного героя изображает человека средней классы, у которого по причину финансовых проблем есть серезные разногласия с членами семьи, с женой, детьми и родителей, и по этому причину он лишается семейного тепла, что еще больше усугубляет его душевный спад. В рассказах очевидно двойственное отношение автора. Критикуя своих героев, писатель одновременно выражает свою симпатию к людям, которые стали жертвами обстоятельств времени.

Marine Andrasyan – The Manifestation of the Social Life of America in John Cheever's Stories. – In the article we analyze the influence of the 20th century social life of America in the psychology, insights and consciousness of the middleclass American. Rising this topic in his stories, John Chiveer portrays his protagonist as a middle-class man, who has serious disagreements with his family, wife, children and parents because of the financial problems and is deprived of family warmth, which makes his mental decline more deeper. In John Chiveer's stories we can observe the author's dual attitude towards his protagonists. By criticizing his heroes, the writer meanwhile expresses his sympathy to the people, who have become victims of the circumstances of time.

¹³ Նույն տեղում, էջ 130:

**«ԱՆԻ» ԱՄՍԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՑՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՏԱԹԵՎԻԿ ԱՇՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ

Հոդվածում ներկայացված է «Անի» հանդեսի ստեղծման և հետագա զարգացման ընթացքի պատմությունը, որի գլխավոր խմբագիրն էր սփյուռքահայ ավագ սերնդի գրող, քննադատ և հրապարակախոս Վահե-Վահայնը: Գաղթաշխարհի իրականության մեջ հրատարակվող հանդեսների և պարբերականների շարքում «Անի»-ն ունեցավ իր դիրքորոշումն ու հստակ դիմագիծը, ինչպես նաև գաղափարաբանությունն ու ծրագրային ուղղվածությունը: Հրատարակման շուրջ տասը տարիների ընթացքում այն հետևողականորեն ներկայացրեց ինչպես սփյուռքահայ, այնպես էլ հայրենական գրողներին և արվեստագետներին: Ի տարբերություն սփյուռքահայ այլ ամսագրերի ու թերթերի՝ «Անի»-ի հիմնադիրները հենց սկզբից որդեգրեցին դրական վերաբերմունք խորհրդային կարգերի, հետևաբար նաև խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Բանալի քաղեր. Սփյուռք, քաղաքական դիրքորոշում, հայապահպանման գործընթաց, հայալեզու գրականության զարգացում, լիբանանահայ գրական մամուլ, «Անի» ամսագիր, մամուլի համապատկեր, գրական միջակություններ, գրական չափանիշներ, Հայաստանի գրողների երկրորդ համագումար, գրական քաղաքականություն:

Հայ մամուլն իբրև մեկնակետ ունենալով Հարություն Շմավոնյանի 1794 թվականին լույս տեսած «Ազդարարը», արդեն ավելի քան երկդարյա պատմություն ունի: Այդ ընթացքում հրատարակվել են հազարավոր անուն թերթեր, ամսագրեր, հանդեսներ ու տարաբնույթ պարբերականներ, որոնցից շատերը նշանակալի հետք են թողել հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, գրական ու մշակութային կյանքում:

Մեծ եղեռնից հետո ստեղծված հասարակական-քաղաքական կացությունը, գլխավորապես հայկական բազմաթիվ գաղթօջախների ձևավորումը աշխարհի այլևայլ երկրներում, Սփյուռքի գոյավորումը հայալեզու առանց այն էլ բազմաանուն մամուլը դարձրին ուղղակի անհաշվելի: «Օտար ավերում սփռված հայությունը...»- գրում է գրականագետ Վազգեն Գաբրիելյանը, «...լցված ծննդավայրի ու հայրենիքի զգացողությամբ, իր սրտի խորքում փայփայելով վերադարձի հույսը, մշտապես ձգտել է ոչ միայն գոյատևել, այլև ապրել հայորեն»¹: Եվ այդ գոյատևումի, «հայորեն» ապրելու հիմնական միջոցներից մեկն էլ, ըստ Վազգեն Գաբրիելյանի, մամուլն է²:

Ահա թե ինչու Սփյուռքում լույս տեսած յուրաքանչյուր թերթ ու ամսագիր, անկախ իր քաղաքական դիրքորոշումից, կարևորվել է: Դրանք բոլորն էլ յուրովի

¹ **Գաբրիելյան Վ.**, Սփյուռքահայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 8:

² Նույն տեղում:

նպաստել են Սփյուռքում հայապահպանման գործընթացին: «...մեր թերթերը մեր պատմությունն են ամեն տեղ», - չափազանց դիպուկ ու տարողունակ է Մինաս Թեօլեօլեանի այս նկատում-բանաձևումը³:

Այնուամենայնիվ, պետք է առանձնացնել գրական մամուլը, որը հայապահպանման գաղափարն իրականացնում էր առավել համապարփակ ու հեռագնա բնույթով՝ ապահովելով նաև հայալեզու գրականության զարգացումը:

Լիբանանահայ գրական մամուլն իր հերթին բազմաթիվ անուններով է հատկանշվում⁴, և դրանցից յուրաքանչյուրն էլ որոշակի նպաստ է բերել գրական ընթացքի զարգացմանը՝ անկախ քաղաքական և այլ կողմնորոշումներից: Փաստ է այն, որ Լիբանանը, մասնավորապես՝ մայրաքաղաք Բեյրութը, աստիճանաբար դարձավ սփյուռքահայ գրականության կենտրոն. «Պէյրութ շարունակեց մնալ կեդրոնը Սփիւռքի հրատարակչական եւ գրական ճիգին, ոչ միայն հասաւ Լիբանանի գրական կարիքներուն, այլեւ լայնօրէն գոհացուց նաեւ արտասահմանը: Ամերիկա, Ֆրանսա կամ Պարսկաստան ապրող տասնեակ մը հեղինակներ, մեկ կողմէ աշխատակցեցան պէյրութահայ գրական մամուլին, միւս կողմէ առանձին հատորներ մեր քաղաքին մէջ: ...Պէյրութ դարձաւ նաեւ Սփիւռքի գրականութեան գնահատող միտքը»⁵, - մի առիթով նկատում է Գրիգոր Շահինյանը:

Վահե-Վահյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ Բեյրութում 1946-1955 թվականների ընթացքում հրատարակված «Անի» ամսագիրը կամ խմբագրության բնորոշմամբ՝ «ամսագիր գրականութեան եւ արուեստի», լիբանանահայ ու ընդհանրապես Սփյուռքի մամուլի պարագծում իր ուրույն տեղն ունի: «1946-ին, գրող, մանկավարժ եւ խմբագիր Վահե-Վահեանը Պէյրութի մէջ լոյս ընծայեց «Անի» գրական ամսագիրը. տոյն հանդէսը հրատարակուեցաւ մինչեւ 1955, եւ իր գոյութեան տարիներուն ընթացքին յաջողեցաւ գրական անփոխարինելի միջավայր ու մթնոլորտ պատրաստել գրականութեան համար»⁶, - գրում է Մանվել Աղամյանը:

Իր հերթին Արմեն Դարյանը, փոքր-ինչ չափազանցնելով, այսպես է արժևորում «Անի» ամսագրի դերն ու տեղը սփյուռքահայ հատկապես գրական մամուլի համապատկերում, «Թէ՛ «Անի»-էն առաջ եւ «Անի»-էն ետք կային, եղան ու դեռ պիտի ըլլան գրական հանդէսներ... Բայց ոչ մէկ կասկած... թէ այդ նոր ու նորակերտ Անիին անկումէն ետք, հակառակ Պէյրութի, Բարիզի կամ Ամերիկայի մէջ լոյս տեսնող բազմանուն մեր հանդէսներուն, չունեցանք եւ պիտի չունենանք ալ, դժբախտաբար, անոր ծանրութեամբ եւ տարողութեամբ գրական այլ հանդէս մը...»⁷:

Հատկապես 1945 թվականի ընթացքում թե՛ սփյուռքահայ, թե՛ հայաստանյան գրողներին ու մտավորականներին Վահե-Վահյանի գրած նամակներից պարզ է դառնում, որ «Անի» ամսագրի հրատարակության նախաձեռնությունն ու նյութերի հավաքագրումն ավելի վաղ էր սկսվել, քան ամսագրի բուն հրատարակությունը: Համենայն դեպս Արսեն Երկաթին ուղղված 17 հոկտեմբեր 1945 թվա-

³ Թեօլեօլեան Մ., Դար մը գրականութիւն, հատոր Բ., 1920-1980, Նիւ Եորք, Ոսկետառ, 1982, էջ 100:

⁴ Դանիէլեան Շ., Բանասիրութեան բաւիղներուն մէջ (Երևան, Մուղնի, 2011) գրքում, էջ 87-146:

⁵ Շահինեան Գ., Գրական հաշվեկշիռ, Ահեկան, Պէյրութ, 1968, թիւ 3-4:

⁶ Աղամեան Մ., Գրական մամուլը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, ԱԶԳ օրաթերթ - Մշակույթ, 2010, 24 հուլիս, թիվ 11:

⁷ Դաթեան Ա., Բանաստեղծը եւ իր գործը, տե՛ս Վահե-Վահեան, Հատընտիր (Պէյրութ, 1986) գրքում, էջ 15:

կիր նամակի՝ «Հատորին (նկատի ունի ամսագիրը – Տ. Ա.) հրատարակումը պիտի յապաղի քիչ մը, հետադարձ երկիրներէ ակնկալուած աշխատակցութիւններու սպասումով»⁸ պատճառաբանությունը, գրեթէ նույնությամբ առկա է նաև հետագա օրերին Արշակ Չոպանյանին, Ավետիք Իսահակյանին, Բենիամին Նուրիկյանին, Նիկողոս Սարաֆյանին, Բյուզանդ Թովալյանին և այլ ականավոր գրագետներին գրված նամակներում⁹:

Ամսագրի համար «Անի» անունն արդէն իսկ գեղագիտական առաջադրույթի արժէք ունէր և ծրագրային էր. «Երկիւղածութեամբ ու հաւատաւոր խանդավառութեամբ յարդարեցինք հիմերը՝ հոգեկան ու իմացական կառոյցի մը գոր «Անի» կը յորջորջենք, **ոգեկոչելով աւելի փառահէ՛ղօրէն կրկնելի անցեալի մը ուժեղ թելադրանքները**»¹⁰ (ընդգծումը մերն է – Տ. Ա.): Մյուս կողմից՝ հստակ է արժեքայնության, գեղարվեստական բարձր չափանիշների պահպանման խնդիրը, որը, թերևս, օրախնդիր էր թէ՛ Միյուռքում, թէ՛ Հայաստանում:

Միյուռքում իրադրության թելադրանքով հայերենով գրող յուրաքանչյուր ստեղծագործողի արարք հերոսության պէս էր ընկալվում, որովհետև այդ կերպ ապահովվում էր դիմագրավումը համատարած ուժացումին, և այդ պայմաններում փոքր-ինչ դժվար էր առանձնացնել իրական արժեքները: «Իհարկէ, սփյուռքահայ գրականության քանակական կշիռն միշտ չէ, որ համապատասխանում է որակական կշիռը», – այս առումով նկատում է Գեղամ Սևանը և հավելում, որ սփյուռքահայ գրականությունն ասվածի տակ հատկապէս այդ շրջանում մտնում էին «միայն սնափառությունից մեկնած ու սեփական փողի հաշվին, տարբեր գրական դավանանքի, ոճերի և ժանրային ձևերի պատկանող և ամենատարբեր գեղարվեստական մակարդակն ունեցող երկեր, չասելու համար, երևի, ոչ մի մակարդակ չներկայացնող, պարզապէս ապշեցնող և զարմանահարույց «գործեր»¹¹:

Իրական արժեքների առանձնացման կարիքը իսկապէս կար, որովհետև լեզվապահպանման խնդրին զուգահեռ կար նաև բարձր արժեհամակարգ ու հեռագնա գաղափարաբանությունն ապահովելու խնդիրը:

Ահա այս նպատակադրումով է «Անի» ամսագիրն իր առաջին համարի «Մեմին վրայ» վերնագրով առաջնորդողում հայտարարում. ««Անին»... հիմնովին կը մերժէ մանր փառասիրութիւններ շքեղազարդելու կոչում մը, որ շատ յաճախ եղած է ապերջանիկ շարժառիթը՝ Սփիւռքի իմացական պիտակով ձեռնարկներուն»¹²: Նույն խնդրին է անդրադառնում Վահէ-Վահյանը Բենիամին Նուրիկյանին գրած նամակներից մեկում. «Նորերը ոտքի կեցնելու, իրենց վարանոտ քայլերուն վստահութիւն ներշնչելու գործը շատ կարեւոր պարտականութիւն մըն է անշուշտ. բայց գրական հանդէս մը իր այդ առաքելութեան համար իսկ, կը կարօտի ներկայութիւնը նախ՝ ապացուցուած շուք ու շնորհ ունեցող դէմքերու»¹³:

Մինչդէռ Հայաստանում պատկերը նույնպէս հուսադրող չէր: 1930-ականների կեսերից Եղիշէ Չարենցի, Ակսել Բակունցի, Վահան Թոթովենցի մահը,

⁸ **Վահէ-Վահեան**, Բանաստեղծին սիրտը. նամակներ, կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Արամ Սեփեթեան, Պէրոյթ, Սիփան հրատ., 2012, էջ 97:

⁹ Նույն տեղում, էջ 97-107:

¹⁰ Անի ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէրոյթ, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

¹¹ **Մեմին Վ.**, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985), Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 1997, էջ 27:

¹² Անի ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէրոյթ, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

¹³ **Վահէ-Վահեան**, Բանաստեղծին սիրտը. նամակներ, Ակսել Բակունցի, Սիփան հրատ., 2012, էջ 184:

Գուրգեն Մահարու և մյուսների աքսորն ու գրական գործունեության, ըստ էության, արգելակումը, լայն ասպարեզ էին բացել գրական միջակությունների ու ներքողագիր աշուղների առջև: Գաղափարական, այսպես կոչված, «պատվերը» հայ գրականությունից ուղղակի դուրս էր մղում ազգային խնդիրները: Գաղափարականացված գրականության պարագայում արժեքայնության գործոնը թելադրվում էր «վերններից», և գրական ընթացքը ոչ այնքան հստակ օրինաչափություններ ու խոստումնալից անուններ էր երևան բերում:

Այդ առումով՝ Սփյուռքի հայության ու մասնավորապես մտավորականների համար դժվար էր կողմնորոշվել հայաստանյան գրականության գնահատման գործում: Մանավանդ որ ԽՍՀՄ-ը «փակ» երկիր էր և նրա ներսում կատարվող շատ քիչ երևույթներ էին ինչպես հարկն է ներկայացվում դրսում:

Թեպետ գրականագետ Վազգեն Գաբրիելյանը պնդում է, թե «...գոյություն ունեցող հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի նկատմամբ սեր ու հավատ ներշնչելու (երբեմն էլ Հայաստանում համահավաքի) մեջ էին տեսնում գրեթե բոլոր գրողները»¹⁴ իրենց առաջնային խնդիրը, այնուամենայնիվ, հատկապես 1920-30-ական թվականներին, ընդհուպ 1940-ականների սկիզբը, Խորհրդային Հայաստանի ու այնտեղ ստեղծվող հայ գրականության հանդեպ վերաբերմունքը Սփյուռքի՝ հատկապես ազգային կուսակցություններին անդամակցող գրողների ու մտավորականների շրջանում գրեթե թշնամական էր: Իրավացի է գրականագետ Սուրեն Դանիելյանը՝ ամրագրելով հետևյալ իրողությունը. «Սփյուռքահայ գրամշակութային գծին վրայ պետք է նկատի ունենալ աանդակաև կուսակցութիւնների, քաղաքական-ընկերային շարժումների ու հոսանքների խաղացած էական դերը՝ նոյնիսկ միտումի, կողմնորոշումի՝ երբեմն ծայրայեղութեան հասնող դրսևորումներով յանդերձ: ...յատկապես ձեւաւորման շրջանում **սփյուռքահայ գրականութիւնը նկատելիօրէն գաղափարացած է**»¹⁵:

Ուսումնասիրողները առանձնացնում են Սփյուռքի՝ Խորհրդային Հայաստանի հանդեպ ունեցած վերաբերմունքի երկու ընկալում.

ա. Մերժում և քննադատություն, որը հիմնականում պայմանավորված էր Հայաստանի խորհրդայնացման փաստով: Այս կերպընկալումը հոռետեսական երանգներ էր պարունակում, քանզի հայության հավատը սահմանափակվում էր Սփյուռքի պարագծում իշխող դրական մտայնություններով, իսկ այստեղ վիճակն այնքան էլ բարվոք չէր, և դրա վկայությունը «նահանջի» գրականություն տարագումն ստացած գրականիրողությունն է՝ իր թեկուզև բարձրարվեստ գեղարվեստական իրացումներով:

բ. Ընդունում և ներբողում, որը պայմանավորված էր հայության փրկված բեկորներն ապահով տեսնելու մտահոգությամբ»¹⁶:

Ընդ որում՝ Հայաստանի հանդեպ վերաբերմունքից, ստեղծագործություններում պատկերվածի հատկապես գաղափարական բնույթից է կախված եղել, թե այդ գրողը կներկայացվի՝ հայաստանյան ընթերցողին, թե՛ ոչ, կամ՝ ինչպե՞ս կներկայացվի՝ մամուլային հրապարակումներով, ինչ-որ ժողովածուների մեջ,

¹⁴ Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 17:

¹⁵ Դանիելյան Ս., Միջուկի տրոհումը: Սփյուռքահայ գրականութեան պատմութիւն: Գիրք 1. Ներածութիւն, Եր., Զանգակ-97, 2011, էջ 58-59:

¹⁶ Տե՛ս Մարիբէկյան Հ., Նիկողոսյան Ա., Հայաստանի՝ իբրև հայկական ինքնության առանց-քի ընկալումը սփյուռքահայ արդի գրականության համապատկերում, Եր., ՀՀ ԳԱՄ Ս. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2010, էջ 4:

թե՞ առանձին գրքերով: Այս հանգամանքը, բնականաբար, Սփյուռքի գրականության մասին թույլ ու ոչ լիարժեք պատկերացում էր ձևավորում Խորհրդային Հայաստանում: Այս առումով Գրիգոր Հակոբյանն իր «Դարձ» հոդվածում նկատում է. «...խորհրդային շրջանում Սփյուռքի գրականության հրատարակության չափանիշը միշտ չէ, որ արվեստի հրամայականն էր, բազմաթիվ հեղինակներ ու գրքեր էին տպագրվում արտագեղարվեստական պատճառներով և դեռ փորձում էին հրամցնել իբրև ներկայանալի գրականություն, արտերկրի մշակույթի այցեքարտ: Միտալները տարբեր դահլիճներում փառաբանվում էին, իսկ Հակոբ Օշականն ու Նիկողոս Սարաֆյանը, Շավարշ Նարդունին ու Կոստան Զարյանը, Արամ Հակագն ու Էդուարդ Պոյաճյանը, Նշան Պեշիկթաշյանը, Ղևոնդ Մելոյանը, Կարապետ Փոլատյանը, Ահարոն Տատուրյանը և շատ-շատերը արգելված էին, մոռացված, և, որ ամենաահավորն ու նողկալին է, ընթերցողի փոխարեն որոշել էին, որ կարդալու, հրատարակելու չեն»¹⁷:

Անունների ու երևույթների նման «շրջունությունն» ու հստակ չափանիշների բացակայությունն առկա էր նաև հայաստանյան գրականությունը Սփյուռքում ներկայացնելու պարագայում: Ճիշտ է, անհատի պաշտամունքի դրսևորման մեջ գազաթնակետին հասած տարիներին Հայաստանում խոսք չէր կարող լինել խորհրդային կարգերը բացահայտորեն քննադատող գրողների մասին, որոնք իրենց հերթին ջերմ ընդունելության արժանանալին Սփյուռքի հակախորհրդային վերաբերմունք ունեցող գրական շրջանակների կողմից, իսկ ահա դրական վերաբերմունք ունեցողներին էլ մեծ մասամբ հրամցվում էր Հայաստանում ստեղծվող գրական-գաղափարական խոտանը:

Գալով «Անի» հանդեսի՝ այդ իրարամերժ վերաբերմունքների մեջ կողմնորոշումների խնդրին՝ ընդգծենք այն կարևոր պարագան, որ ամսագրի առաջին համարը լույս տեսավ 1946 թվականի ապրիլին: Տարեթիվ, որ նախ ընկալվում է բազմահազար սփյուռքահայերի Խորհրդային Հայաստան ներգաղթով: Մյուս կողմից՝ 1946 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը տեղի ունեցավ Խորհրդային Հայաստանի գրողների երկրորդ համագումարը, որի նիստերին մասնակցելու համար հրավիրված էին նաև որոշ սփյուռքահայ գրողներ, այդ թվում՝ «Անի» ամսագրի խմբագիր Վահե-Վահյանը, և որտեղ հատուկ անդրադարձ կատարվեց սփյուռքահայ գրականությանը: Այդ առթիվ, ի դեպ, ամսագրի «Վարչական» վերտառությամբ ծանուցման մեջ կարդում ենք. ««Անի»-ի խմբագիրը հրափրուած է Սովետ. Հայաստան՝ մասնակցելու համար Հայաստանի Սովետական Գրողներու Երկրորդ Համագումարին, որ տեղի պիտի ունենայ այս Սեպտեմբերին, Երեւանի մէջ»¹⁸: Որքան էլ տեղեկատվությունը ներկայացվում է ինչ-ինչ պարզաբանումների նպատակով («Խմբագիրին բացակայութեան հետեւանքով «Անի»-ի Զ. թիւը լոյս պիտի տեսնէ յապաղումով», նույն տեղում), այդուհանդերձ կարծում ենք, որ այս ծանուցման նպատակը ոչ այնքան արդարացում է ամսագրի հերթական համարի ուշացման համար, որքան մայր հայրենիքում գրողների համագումարին հրավիրված լինելու փաստի ընդգծումը:

Այդ համագումարում հիշատակվեց հատկապես Ավետիք Իսահակյանի ելույթը, որտեղ բանաստեղծը կարևորեց արևելահայ գրականության շուրջ մեկ միասնական գրականություն ձանաչելու գաղափարը, ինչպես նաև Սփյուռքում

¹⁷ **Հակոբյան Գ.**, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռի հրատ. 2007, էջ 492:

¹⁸ Տե՛ս Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուք, 1946, Ա. տարի, օգոստոս, թիւ 5, էջ 282:

Խորհրդային Հայաստանի՝ իբրև «բոլոր հայերի հայրենիքի» գիտակցության արթնացումը: «Մեր գրչակիցները...,- շեշտում է Ավ. Բասահայանը,- պիտի վառ պահեն ազգային ինքնագիտակցությունը և ազգային պատկանելությունը: Բոլոր միջոցներով պիտի ձգտեն հեռու պահել հայությանը այլասերումից»¹⁹: Եվ ապա՝ «Մեր համագումարի ամենաարժեքավոր արդյունքն այն կլինի, որ ավելի սերտանան ու մտերմանան փոխադարձ հարաբերությունները մայր հայրենիքի և սփյուռքի գրականությունների միջև»²⁰:

Եվ վերջապես, պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ յուրաքանչյուր բախտորոշ ժամանակաշրջանի ու իրադարձության դեպքում սփյուռքահայ ու գրական շրջանակներում Խորհրդային Հայաստանի հանդեպ վերաբերմունքի փոփոխություն է նկատվել դեպի դրականը: Իսկ 1946 թվականին նախորդել էր Հայրենական մեծ պատերազմի փաստը, որի հնարավոր զարգացումներից մեկը հայության համար Հայաստանի վերջնական չգոյությունն էր, ինչը, բարեբախտաբար, տեղի չունեցավ:

Վերը նշված բոլոր պարագաներով ու հանգամանքներով էլ պայմանավորված են «Անի» ամսագրում ուղենշվող՝ հիմնադրման, գրական քաղաքականության կազմակերպման ու գաղափարական դիրքորոշման յուրահատկությունները:

Հենց առաջին համարից՝ պարզ է դառնում, որ «Անի»-ն, ի տարբերություն որոշ այլ գրական ու ոչ գրական պարբերականների, միասնական գրական ընթացքի քաղաքականություն է որդեգրում: Այլ կերպ չես բացատրի հեղինակների այն համամասնությունը, որն առկա է ամսագրի առաջին իսկ համարում: Մի կողմից՝ Բյուզանդ Թովալյան, Զարեհ Որբունի, Արսեն Երկաթ և ուրիշ սփյուռքահայ գրագետներ, մյուս կողմից՝ Սիլվա Կապուտիկյան, Հովհաննես Շիրազ, Գեղամ Սարյան, Աղավնի ու Աշոտ Գրաշի: Այդ կապակցությամբ առաջին համարի առաջնորդողում հստակ ամրագրված է. ««Անի»-ն ինքն իրեն արտօնած է փառասիրութիւնը՝ հանդիսանալու հանգրուանային այն ոստանը, ուր, կարօտագին սրտազեղումով մը, իրարու ձեռք պիտի տան մարդկային եղբայրութեան ու հայ հոգիի փառքին հաւատալորները, Խորհրդային Հայաստանէն եւ Սփիւռքի բոլոր կեդրոններէն, Իրան-Իրագէն մինչեւ Սուրիա-Լիբանան, Եգիպտոսէն մինչեւ Նոր Աշխարհ, Պալքաններէն մինչեւ Ֆրանսա»²¹:

«Անի»-ն միացավ Սփյուռքի այն պարբերականներին ու հանդեսներին, որոնց դիրքորոշումը Խորհրդային Հայաստանի հանդեպ դրական էր: ««Անին» կը յենի համոզումի մը, որ հաւատքի նուիրականութիւն եւ ո՛յժ է ստացած,- կարդում ենք ամսագրի առաջին համարի առաջնորդողում:- Եւ այդ հաւատքը կը դաւանի, թէ 1920-ին՝ նահատակ հայ ժողովուրդի կեանքին մէջ պատահեցաւ դեպք մը, ուր երջանկաբաղձ զանգուածներու տարերային ուժերը բռնեցին մեր Պատմութեան սայլը թաւալող ցուկերուն եղջիւններէն, շրջեցի՛ն այդ սայլին անիւները, ու նզովքը վերածեցին օրհնութեան»²²:

¹⁹ Բացման խոսք Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահ Ավ Բասահայանի, Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուս, 1946, Ա. տարի, հոկտեմբեր, թիւ 7, էջ 342:

²⁰ Բացման խոսք Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահ Ավ Բասահայանի, Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուս, 1946, Ա. տարի, հոկտեմբեր, թիւ 7, էջ 342:

²¹ Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուս, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

²² Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուս, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

Շարեւի է ասել, որ ամսագրի կարճատև կենսագրությունը, ավելի ստույգ՝ տասը տարին, եղել է առաջին համարում ամրագրված հանգանակային այս ձևակերպումների իրականացման կայուն ընթացք:

Татевик Ашчян — Особенности основания и организации литературной деятельности журнала «Ани». — В статье представлена история создания и дальнейшего развитие журнала «Ани», созданного представителем старшего поколения армянской диаспоры, писателем и публицистом Ваэ-Вайяном. В действительности армянской диаспоры издается множество газет и переодических изданий, в этом перечне «Ани» имеет свою позицию и черты, праграмное направление и идейность. Журнал, издаваемый почти десять лет (1946-1955гг.), последовательно представлял писателей и искусствоведов не только диаспоры, но также и отечественных, становясь особым мостом между родиной и диаспорой. В отличие от ряда других переодических изданий, издаваемых диаспорой, основатели журнала «Ани» симпатизировали советскому строю и имели положительную ориентацию по отношению к родине.

Tatevik Ashchyan – Spesifics of foundation and literary management of journal «Ani». — The process of creation and further development of the journal «Ani» revised by the representative of the senior generation of the Armenian diaspora, writer, publicist Vahe Vahyan presented in the article. Among many newspapers and periodicals «Ani» had its unique place. As it was characterized by the editorial staff the periodical consistently preseted not only Lebanese-armenian writers but also other Armenian writers and artists serving as a kind of bridge between diaspora and Motherland. In contrast to other periodicals published abroad «Ani» sympathized with the Soviet regime.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՆ ՄԵՐՈ ԽԱՆԶԱՐՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Մերո Խանգաղյանի գրական ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում պատերազմի և հետպատերազմյան թեմաներով գրված պատմվածքները: Պատմվածքների այս շարքում հիմնականում կոնկրետ իրողություններ են, կոնկրետ մարդիկ, որոնց հետ գրողն անցել է պատերազմի դժվարին ճանապարհներով, տեսել բազմաթիվ ողբերգություններ, բազմիցս դեմ առ դեմ հանդիպել մահվան: Պատերազմի թեմայով պատմվածքներից շատերը գրված են օրագրային հարուստ նյութի հիման վրա և արտացոլում են բուն ռազմաճակատային իրողությունները, որոնք յուրահատուկ նախադրու հանդիսացան նրա մեծ կտավի ստեղծագործությունների՝ «Մեր գնդի մարդիկ» վեպի և «Երեք տարի 291 օր» գեղարվեստական հուշապատումի համար:

Բանալի բառեր. Պատմվածք, ժամանակ և տարածություն, ձև և բովանդակություն, կերպար, ժանր, հերոս, թեմա, կերպ և ոճ, գեղարվեստական նկարագիր, անհատի դրամա:

Մերո Խանգաղյանի գրական հարուստ ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում պատերազմի և հետպատերազմյան գյուղի թեմաներով գրված պատմվածքները, որոնք մի դեպքում արտացոլում են ռազմաճակատային կյանքը, թիկունքի ծանր, հոգսաշատ առօրյան, մյուս դեպքում՝ պատերազմից հաղթանակով ու ապագայի վառ հույսերով վերադարձած, բայց հետագայում խոր հիասթափություն ապրած, թերարժեքության բարդությամբ համակված զինվորի հոգեկան ծանր ապրումներն ու դրաման:

Հայրենական մեծ պատերազմը կտրուկ փոխեց նաև գրականության առաջընթացի ուղին՝ այն տեղափոխելով «ռազմական ռելսերի» վրա: Կատարվեց եղանակի «կտրուկ փոփոխություն» (Դ. Դեմիրճյան), գրողների ուշադրություն ամբողջությամբ սևեռվեց հայրենիքի պաշտպանության, ռազմաճակատում կրո՜վող զինվորի կերպարի բացահայտման, պատերազմական իրադարձությունների ներկայացման, թիկունքի ու ռազմաճակատի միասնականության և բազմաթիվ նման այլ հարցերի վրա: Գրականությունն այդ տարիներին հասարակական գործ կատարեց ռազմաճակատային առօրյա դեպքերին անդրադառնալու, զինվորների մարտական ոգին բարձրացնելու, հայրենասիրական ջերմ զգացմունքներ սերմանելու առումով:

«Եղանակների կտրուկ փոփոխության» հետևանքով հաղթահարվեց նախապատերազմական տարիների գաղափարախոսական կաշկանդվածությունը, ինչն ավելի ցայտուն կերպով դրսևորվեց պատմական թեմատիկայի արծարծումներում: Ուստի ճիշտ կլինի պատերազմական թեմաներով գրված հատկապես փոքր կտավի ստեղծագործություններն արժևորել ոչ թե գեղարվեստի չափանիշներով ու սկզբունքներով, այլ գրապատմական տվյալ ժամանակաշրջանի յուրահատկությունների տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ դրանք գրվել են, այսպես

ասած, «ոտքի վրա», շատ հաճախ մարտերի ընդմիջումներին, խրամատներում, թիկունքի ծանր պայմաններում:

«Իսկական առումով գրող,- ինքնակենսագրականում գրում է Ս. Խանգաղյանը,- ես ինձ զգացել եմ թերևս պատերազմում», որը, ինչպես նկատում է Դ. Դեմիրճյանը, նպաստել է «հասնելու գլխավորին, խորապես հասկանալու մարդուն և վերստեղծելու նրա բնավորությունը»:

Պատմվածքների այս շարքում հիմնականում կոնկրետ իրողություններ են, կոնկրետ մարդիկ, որոնց հետ գրողն անցել է պատերազմի դժվարին ճանապարհներով, տեսել բազմաթիվ ողբերգություններ, բազմիցս դեմ առ դեմ հանդիպել մահվան, և մի անգամ չէ, որ նշվել է, թե «պատերազմը, որի բովով անցել էր երիտասարդ գրողը, իր կնիքն էր դրել նրա աշխարհատեսության վրա, առաջադրել իր հրամայականը՝ իրեն ու երևույթները արժեքավորելու բոլորովին նոր մեկնակետ-սկզբունքը»:

Պատերազմի թեմայով պատմվածքներից շատերը գրված են օրագրային հարուստ նյութի հիման վրա և արտացոլում են բուն ռազմաճակատային իրողությունները: Վոլխովի ափին հուպիտալից նոր վերադարձած լեյտենանտը ռմբակոծության պահին մարմնով փակում է գնդապետին ու իր կյանքի գնով փրկում նրան (Ներիի ինձ): Նարվա գետի ափին դաժան մարտեր է մղում մայոր Վասիլի Պետրովի գումարտակը, և ծանր վիրավորված շարքային Գևոյանը շտաբ է հասցնում քարտեզի մի պատառիկ, որտեղ նշված էին հակառակորդի դիրքերի դասավորության կետերը, խրամատները, հրետանու բները, ու իր մահկանացուն կնքում հրամանատարի ձեռքերի վրա (Քարտեզի պատառիկը): Բազմաթիվ մահեր տեսած զինվորները չեն կարողանում համակերպվել երիտասարդ բուժքրոջ մահվան հետ (Սպանված աղջիկը): Ընդամենը տասներկու տարեկան Սաշան, ում մորն ու մեծ քրոջը սպանել են ֆաշիստները, հրկիզել հայրենական տունը, հպարտանում է, որ ինքն էլ արդեն զինվոր է և շատերի պես ինքն էլ է վիրավորվել (Ջերմակ վիրակապ): Ֆաշիստ զինվորի կողմից վիրավորված շունը վերջին շնչում հարձակվում է տիրոջ միակ աղջիկ թոռան և իր միակ ձագի թաքստոցին մոտեցող ֆաշիստի վրա (Աստվածամոր քրքիջը):

Փոխգնդապետ, պատերազմի ժամանակ իր քաջագործություններով բազմիցս աչքի ընկած Պավել Անտոնովիչի սիրած աղջիկը՝ Աննա Իվանովան, որն արդեն ծերունազարդ կին է, դեռևս սպասում է իր սիրած տղային: Բելոռուսական գյուղերից մեկում հայ զինվոր Գևորգյանը, ծանր վնասվածքներ ստանալով, գերմանական ռումբից հրկիզված խրճիթից դուրս է հանում ծեր կնոջն ու նրա միակ որբացած թոռանը...

Բազմաթիվ այսպիսի պատմություններ են ներկայացված պատերազմական թեմաներով գրված Ս. Խանգաղյանի պատմվածքներում, որոնց մեջ հեղինակը փորձում է կերտել խորհրդային զինվորի հերոսական կերպարը, բացահայտել նրա մարդկային բարձր որակները:

Հատկապես մեծ թիվ են կազմում այն պատմվածքները, որոնց հերոսները հայազգի զինվորներ են, ռուսական, բելոռուսական, ուկրաինական բնակավայրերում արմատավորված հայ մարդիկ, որոնք իրենց մեջ կրում և վառ են պահում ազգային հիշողությունները:

Ռազմաճակատում կռվող հայ զինվորները, որոնց մեջ կան նաև եղեռնից փրկվածների զավակներ ու թոռներ, կռվում են եղեռնին զոհ դարձած իրենց արյունակիցների վրեժը սրտներում:

Ս. Խանգաղյանի այս շարքի պատմվածքներում կան նաև կին հերոսներ, որոնք պատրաստ են հանուն իրենց պատվի ու արժանապատվության գնալ ինքնագոհության: Ապրելով օտար ափերում՝ նրանք չեն կորցրել հայ կնոջը յուրահատուկ որակները՝ հյուրընկալության գենետիկ սովորույթները, օջախի պահապանի առաքելությունը, մարդու մեջ միայն լավը տեսնելու դարերով արմատավորված զգացումը:

Դռնի ափին սփռված գյուղերից մեկում է ապրում այրի Սրբուհին, ում բալում որպես սրբություն կա «մի հին խաչքար, որ, ասում են, այս գյուղի նախնիներն են իրենց հետ բերել հեռավոր մի ժամանակ, իրենց հեռավոր-հայրենի Անի քաղաքից, երբ մորիկի բերան ընկած՝ ցրվում էին աշխարհով մեկ»¹:

Մինչև պատերազմը «ամեն ինչ այնպես մեղմ, այնպես խաղաղ էր այրի Սրբուհու կյանքում: Նույնիսկ ամուսնու մահն էր խաղաղ, բնական: Աշխարհի բոլոր մարդիկ բարի են, մտերիմ, ցավի հասնող: Իր խաղաղ օրն ու կյանքը նրա համար հավիտենական էր» (VI, 165):

Սրբուհին վատ չի մտածում նույնիսկ կեսգիշերին իր տանը հայտնված գերմանացիների մասին, հյուրասիրում է նրանց («դե, մարդիկ են, մի հավն ինչ մեծ բան է, որ խնայեն»):

Հետո գերմանացի հարբած զինվորի հարվածից ուշաթափված ու բռնաբարված Սրբուհին սպանում է գերմանացուն ու չի հավատում, որ ինքը մարդ է սպանել (Մեղա՛, մեղա՛ : Ես մարդ սպանեցի: Մեղա՛ ...):

Սովորական մի գյուղացի է «Խցանը» պատմվածքի հերոս Գևորգը, ով հայտնվել է գերության մեջ ու իր նման քսան թե երեսուն հազար մարդկանց հետ ենթարկվում է ամենօրյա կտտանքների ու նվաստացումների, ինչի հետևանքով նրա մեջ օրեցօր ահագնանում է վրեժի զգացումը: Վերջապես նա հասնում է իր նպատակին. նրա ազդանշանով խորհրդային ռմբակոծիչները ոչնչացնում են թշնամու տանկային զորասյունը, ու Գևորգն իրեն լիարժեք մարդ է զգում...

Պատերազմի թեմաներով զրկված պատմվածքների մի զգալի մասը գրվել են հենց պատերազմի տարիներին՝ «իրադարձությունների տաք հետքերով» և, բնականաբար, չեն կարող գերծ լինել այդ ժամանակահատվածի պատմվածքներից շատերին յուրահատուկ պարզունակությունից: Դրանք մեծ մասամբ նկարագրական բնույթի են, առանց խորքային ներթափանցումների ու գեղարվեստական արժեքների: Սակայն, եթե հաշվի առնենք այդ պատմվածքների գրվելու ժամանակաշրջանում գրականությանն առաջադրվող պահանջները, տվյալ ժամանակահատվածի գրականության առջև դրված խնդիրներն ու նպատակները, հասկանալի կդառնա, թե ինչու էին այդ տարիներին դրանք արժևորվում որպես խորհրդային զինվորին, ընդհանրապես խորհրդային մարդուն բնութագրող, նրան ոգեշնչող, հաղթանակի նկատմամբ հավատ ներշնչող ստեղծագործություններ:

Առավել խորքային են Ս. Խանգաղյանի՝ թիկունքի կյանքը պատկերող ստեղծագործությունները, որոնց մեջ կան և հոգեբանական ներթափանցումներ, և ժողովրդական կենսափիլիսոփայության գեղարվեստական խտացումներ, և, վերջապես, մարդկային ցավ ու տառապանք, կարեկցանք, նաև մարդու նկատմամբ անտարբերության, չարության, անհարգի վերաբերմունքի դրսևորումներ:

¹ **Խանգաղյան Ս.**, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Ե., 1983, էջ 164: Այսուհետև բնագրում կնշվի միայն հատորը՝ հոմեական, էջը՝ արաբական նիշերով:

Թիկունքին նվիրված ստեղծագործությունները գալիս են լրացնելու հայրենի եզերքի գեղարվեստական տարեգրությունը, այն հարստացնելու նոր գույներով ու նրբերանգներով:

Եթե բուն պատերազմական իրադարձություններին նվիրված պատմվածքներն ավելի շատ նկարագրական են և հիմնականում ունեն պաթետիկ երանգավորումներ, ապա թիկունքի կյանքը պատկերող ստեղծագործություններում, որոնք գրվել են հիմնականում 1960-1970-ական թվականներին, Ս. Խանգադյանի ուշադրության կենտրոնում մարդ-անհատն է, իրենց որդիներին, ամուսիններին, սիրած տղաներին ռազմաճակատ ուղարկած հայ մայրերն ու աղջիկները, իրենց հայրերով հպարտացող, ավելի շուտ՝ հայրերին կորցրած զավակները, որոնք ոչ պակաս ծանր օրեր են ապրում, քան ռազմաճակատի տարբեր հատվածներում կռվող իրենց հարազատները:

Պատերազմը նոր էր վերջացել, և պատերազմից վերադարձած հատուկենտ տղամարդկանցից «մեկի խունացած շինելի մի թնն էր դատարկ, մյուսի շավարի փողքը՝ տեղը հենակ, երրորդից դեռ հիվանդանոցի հոտ էր գալիս» (VI, 165): Պատմվածքի հերոսը, որ ժամանակին տավարած է եղել, պատերազմից վերադարձել է ֆիզիկապես խեղված վերջույթներով ու հիմա իրեն զգում է «ինչպես դեն գցած կոշիկ, մեջը թրթուրը կերած դդում»: Ոչ ոք չէր հիշում, որ ջահել տարիներին ինքը մի քանի լեզու գիտեր, առույգ ու քաջարի տղամարդ էր, ով համարձակորեն մտել է «գրահավոր ավտոներով իրենց լեռները ներխուժած բրիտանական զենեքալի «ռեզիդենցիան»» ու նրան զարմացրել, որ այս «թմրած» լեռներում մի «բարբարոս» խոսում է անգլերեն: Նա ատորճանակի սպառնալիքով փախուստի է մատնել վախեցած զենեքալին ու խորտակել նրա պլանները:

Գրողը նուրբ դիտարկումներով է բացահայտում իր հերոսի հոգեկան ծանր ապրումները: Հիմա նրան ոչ ոք չի հիշում, հիմա ինքը մեն-մենակ է այս դաժան աշխարհում ու գոյություն ունի միայն սեփական հիշողություններում:

Երկիրը պարտավոր էր փառքով դիմավորել պատերազմից հաղթանակով վերադարձած իր զավակներին, բայց չգիտես ինչու նրանցից շատերին աքսորեց հեռավոր սիբիրներ, շատերին էլ մոռացավ, թողեց իրենց ծանր ապրումների մեջ, նրանց հոգիները լցրեց թերաթժեքության, ավելորդության ահավոր զգացումներով (Կապույտ ձին):

Նույն ծանր ապրումներն ունի նաև Բալաստոն լճի մոտ վիրավորված ջրաղացպանը, ով գյուղի միակ ջրաղացում առանձնացել է իր հոգսերի, ցավերի ու մտատանջությունների հետ, իր միակ ունեցվածքի՝ կապտավուն ձիու հետ, որի վրնջոցը տարիներ առաջ «զրնգում էր ձորերում, նրա սլացքից շփոթվում էին նույնիսկ փորձված ձիերը» (VI, 59):

Հիմա և՛ ինքն է ավելորդ, և՛ իր կապույտ հովատակը: Հիմա և՛ ինքն է ծեր ու մոռացված, և՛ իր երբեմնի հրեղեն ձին, որ ծանր տնքում է բեռների տակ ու պոչով ալարկոտ քշում իրեն անհանգստացնող ճանճերին:

Մարդը և կենդանին - երկու խեղված ու հաշմված ճակատագրեր, որ նախում են իրար ու խղճահարությամբ լցվում միմյանց նկատմամբ:

Առավել ողբերգական են երեխաների ճակատագրերը՝ որբացած, կիսամերկ, օրվա հացի կարոտ:

«Յոթերորդ աղբյուրը», «Կորած արահետներ», «Կարմիր շուշաններ» պատմվածքների շարքերում առավել հաջողված են այն պատումները, որոնցով

գրողն անդրադառնում է մարդկային հոգիներում պատերազմի կատարած ավերածություններին:

Խիստ բնութագրական է «Յոթերորդ աղբյուրը» շարքի համանուն պատմրվածքը՝ իր հոգեբանական նուրբ թափանցումներով, հերոսների ցավագին ապրումների նկարագրություններով:

Սյունյաց լեռնաշխարհում աղբյուր-հուշարձաններով հանգուցյալների հիշատակը հավերժացնելու դարերի խորքից եկող մի հիմնալի ավանդույթ կա: Դրանցով սյունեցիներն իրենց հարգանքի տուրքն են մատուցում այն մարդկանց հիշատակին, ովքեր գոհվել են հայրենիքի պաշտպանության ժամանակ, դարձել անմեղ նահատակներ... Առանձնապես շատ են Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում իրենց կյանքը հայրենիքի պաշտպանության գոհասեղանին դրած զինվորների ու ազատամարտիկների հիշատակին կառուցված աղբյուր-հուշարձանները, որոնք ուխտատեղի են դարձել սյունեցիների համար:

Սյունիքում ճանաչված վարպետ է Մարգարը, ով բազմաթիվ աղբյուր-հուշարձաններ է կառուցել տարբեր բնակավայրերում: Վարպետ Մարգարի շինած յուրաքանչյուր աղբյուր իր պատմությունն ունի, բայց վեցերորդը նվիրական է նրա համար, որ կառուցել էր ճարտարապետականն ավարտած որդու հետ: Որոշել էին կառուցել նաև յոթերորդը, բայց պատերազմը խանգարեց... Շատերի հետ պատերազմ մեկնեց նաև Վարպետ Մարգարի որդին՝ Արամը, ով կռվի առաջին տարիներին կանոնավոր կերպով նամակներ էր գրում ծնողներին, ուրախությամբ ու հպարտությամբ լցնում նրանց սրտերը: Բայց շուտով Արամի «նամակները կտրվեցին ցամաքած աղբյուրի պես», իսկ հետո, երբ էլի նամակներ չեկան, ծերունու սիրտը մի մույթ կասկած ընկավ: Արամը գոհվեց ռազմաճակատում, ու որդու հիշատակին յոթերորդ աղբյուրը Վարպետ Մարգարը մենակ կառուցեց:

Պատմվածքում հոգեբանական նուրբ դիտարկումներով են ներկայացված թե՛ վարպետ Մարգարի, թե՛ Մանուշակ նանի ցավագին ապրումները: Երկուսն էլ առանձին-առանձին գիտեին, որ Արամը գոհվել է, բայց երկուսն էլ յուրովի մխիթարում էին իրար, հույս ներշնչում, որ որդին մի օր կգա ու վերջ կդնի իրենց տառապանքներին: Ու վարպետ Մարգարը որդու հիշատակին կառուցում է յոթերորդ աղբյուրը, որի մոտ «ամեն ծեղին ստվերի պես երևում է պառավ Մանուշակը: Ճոճվող ծնկները դնելով խոնավ սալերին՝ նա համբուրում է աղբյուրի թաց քարերն ու արցունքի հետ ձեռքի ծաղիկները շաղ տալիս նրանց վրա: Խմում էր Մանուշակ նանը աղբյուրի ջուրը, ու ոչ թե անեծքի, այլ օրինանքի խոսքեր են շշնջում նրա շուրթերը. «Յոթերորդ աղբյուրն իմ Արամն է: Թող էլ ո՛չ մի ծնող չկորցնի իր որդուն. չլինի պատերազմ» (VI, 89):

Պատերազմական թեմաներով գրված Ս. Խանգադյանի պատմվածքների հերոսները, ովքեր հայ աշխատավոր մարդիկ են, մտավորականներ, կանայք ու տղամարդիկ, հիմնականում օժտված են մարդկային բարձր արժանիքներով և ամենածանր իրավիճակներում անգամ չեն կորցնում իրենց արժանապատվությունը:

Ս. Խանգադյանի՝ պատերազմական թեմաներով գրված պատմվածքները, հուշագրությունները յուրահատուկ նախադրու հանդիսացան նրա մեծ կտավի ստեղծագործությունների՝ «Մեր գնդի մարդիկ» վեպի և «Երեք տարի 291 օր» գեղարվեստական հուշապատումի համար:

Ваган Агабабян – Тема Великой Отечественной Войны в рассказах Серо Ханзадяна. – В литературном наследии С. Ханзадяна большое место занимают рассказы военной и послевоенной тематики. В этом ряде рассказов в основном показана реальная действительность, конкретные люди с которыми писатель прошел по трудным военным дорогам, был очевидцем драматических событий, часто оказывался лицом к лицу со смертью. Многие из рассказов на военную тематику написаны на богатом материале дневников и отражают фронтовые реалии, которые явились своеобразным преддверием для его великих произведений: романа “Люди нашего полка” и художественных мемуаров “3 года и 291 день”.

Vahan Aghababayan – Theme of World War II in stories of Sero Khanzadyan. – Written stories of war and post war occupy a great place in Sero Khanzadyan’s literary inheritance. In the series of stories are basically certain realities, certain people, with whom the writer passed the difficult way of war, saw many tragedies, and many time faced the death. Most of the war stories were written on the rich diary material and reflects the main battlefield realities, which became unique foreground for his great painting works - “Our regiment people” novel and “Three years and 291 days” fictional memoirs.

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՅԱՆԻ ԱՐԽԻՎՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս

Վահան Տերյանի մահվանից հետո նրա ուսանողական ընկերը՝ Պողոս Մակինցյանը, ձեռնամուխ եղավ պոետի գրական ժառանգության հավաքմանը՝ դա հիմնավորելով նրանով, որ պատրաստվում է դրանք տպագրել: Մակայն չորսհատորյակի տպագրությունից հետո Մակինցյանը պոետի արխիվը չհանձնեց պետական արխիվին: Հռոկվածում քննվում են Մակինցյանի արարքի իրական դրդապատճառները, ինչպես նաև այն նամակների հատվածները, որոնք Մակինցյանի աղջիկը համաձայնել է հրատարակել: Բացի դրանից՝ հռոկվածում ներկայացվում են այն զեղծարարությունները, որոնք Մակինցյանների ընտանիքն արդեն մոտ մեկ դար շարունակում է իրականացնել:

Բանալի բաներ. Վահան Տերյան, Պողոս Մակինցյան, նամակների, կրճատումներ, Առաջին համաշխարհային պատերազմ, Հոկտեմբերյան հեղափոխություն, բոլշևիկներ, զեղծարարություն:

Վահան Տերյանի ստեղծագործությունների՝ իր կազմած չորսհատորյակի առաջին գրքում ներկայացնելով, թե ինչպիսի կառուցվածք է ունենալու իր ձեռնարկած հինգհատորյակը¹, Պողոս Մակինցյանը գրում է. «*Հինգերորդ հատորը* – Այլևայլ ինքնուրույն և թարգմանական բանաստեղծությունների սևագրություններ, պոետի նամակագրությունը, կենսագրական նյութեր և վերջապես՝ գրախոսություն»²: Մեկ տարի անց չորրորդ հատորում գրականագետը գրում է, որ «Տերյանի հինգերորդ հատորը հավանորեն հնարավոր չի լինելու մոտիկ ժամանակում լույս ընծայել շնորհիվ նրան, որ մեր պոետի «նամակագրությունն» ու նրան վերաբերյալ «կենսագրական» նյութերը ներկայումս հրատարակելն անհնար է», և հավելում. «Բացի այդ մեր հավաքած նամակները – թեև արդեն իսկ պատկառելի հավաքածու են կազմում, այնու հանդերձ տակավին հեռու են լիակատար լինելու»³:

Հարկ է նշել, որ բացի նամակների «պատկառելի հավաքածուից»՝ Պ.Մակինցյանի անձնական արխիվում են պահվում բազմաթիվ անտիպ բանաստեղծություններ և տպագրված բանաստեղծությունների տարբերակներ, կարևորագույն փաստաթղթեր, ինչպիսին օրինակ՝ Վահան Տերյանի դիմումն է՝ գրված 1919 թվականի սկզբին, որով պոետը դուրս է գալիս Գուրգեն Հայկունու ղեկավարած Հայաստանի կոմունիստական կուսակցությունից, որտեղ Տերյանը նկարագրում է իր հանդեպ եղած հալածանքները՝ իրեն ռազմաճակատ ուղարկելու փորձը, զբաղեցրած պաշտոնից ազատելը, մեղադրանքները՝ նացիոնալիզմի մեջ, վերակազմավորված Լազարյան ճեմարանի դեմ շարժումը և այլն⁴:

¹ Պողոս Մակինցյանը մտադիր էր հինգհատորյակ տպելու, սակայն ի վերջո, իր նախաձեռնությունը սահմանափակվեց չորս հատորով – Գ.Է.-Տ.:

² *Տերյան Վ.*, Երկերի ժողովածու, հ. I, Կ. Պոլիս, 1923, էջ VI:

³ *Տերյան Վ.*, Երկերի ժողովածու, հ. IV, Եր., 1925, էջ 347:

⁴ Դիմումի մասին 2006-ին ինձ պատմել է Անահիտ Մակինցյանը – Գ.Է.-Տ.:

Հայտնի է, որ Վահան Տերյանի մահվանից անմիջապես հետո Պողոս Մակինցյանը ձեռնամուխ է եղել նրա ձեռագրերի հավաքմանը՝ պետականացման և արխիվացման անվան տակ, սակայն հետագայում այդ ամբողջը պահել է իր մոտ, իսկ 1938 թվականին Մակինցյանի գնդակահարությունից հետո արխիվը մնացել է նրա կնոջ՝ Մեֆարի, ապա աղջկա՝ Անահիտ Մակինցյանի մոտ:

Թեև դժվար է որոշակիացնել, թե որքան նամակ կա Պողոս Մակինցյանի՝ այժմ նրա աղջկա՝ Անահիտ Մակինցյանի մոտ գտնվող արխիվում, սակայն կան որոշակի փաստեր, որոնց հիման վրա կարելի է եզրակացություններ կամ գոնե ենթադրություններ անել:

Առաջին փաստը հենց Պողոս Մակինցյանի՝ տարբեր հոգվածներում և ուսումնասիրություններում արված մեջբերումներն են, որոնք դարձել են նամակների հետագա հրատարակությունների համար սկզբնաղբյուրներ: Սակայն հատկանշական է, որ դրանց մեջ կան նաև այնպիսիները, որոնք բացարձակապես կտրված են համատեքստից և կարող են հակոտնյա մեկնաբանությունների առիթ դառնալ, օրինակ՝ 1919 թվականի հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբի նամակում Տերյանը գրում է. «Ես ինձ լուսավոր ու ջինջ եմ զգում, ինչպես հավանորեն իրենց զգում էին առաջին քրիստոնյաները»⁵: Սա մի ժամանակաշրջան էր, երբ արդեն Տերյանը հեռացվել էր իր պաշտոնից և հալածանքների էր ենթարկվում, նախապատրաստվում էր կամ արդեն իր վերջին փախուստ-ճամբորդության ճանապարհին էր: Հետևաբար, մեջբերված հատվածից կարելի է հասկանալ.

1. Տերյանը կարծում էր, որ կոմունիզմը փրկության միակ ճանապարհն է, մարդիկ չեն հասկանում դա, և ինքը ստիպված է առաջին քրիստոնյաների նման տարածել ճշմարտությունը:

2. Տերյանը ենթարկվում էր այնպիսի ծանր հալածանքների, որոնք համեմատելի են միայն առաջին քրիստոնյաների հանդեպ կիրառված հետապնդումներին, սակայն գիտակցելով իր իրավացիությունն ու դերը հայկական մշակույթի մեջ՝ Տերյանն իրեն «լուսավոր ու ջինջ է զգացել»:

Կամ գրեթե նույն ժամանակահատվածում՝ 1919 թ. հոկտեմբերին, Ալեքսանդր Մյասնիկյանին ուղարկված նամակից տպագրված պատառիկում կարդում ենք. «Օրհնյալ լինես, Հոկտեմբեր, որ այսքան ոգևորություն էս ներշնչում անգամ ինձ նման անդամալույծներին...»⁶: Կրկին առանց որևէ համատեքստի մի հատված, որը քննելիս պետք է հաշվի առնել.

Ա. Վահան Տերյանի և Ալեքսանդր Մյասնիկյանի ընկերական հարաբերությունները «բացարձակ» չեն եղել. երրորդ անձանց՝ թեկուզ ընկերներին, ուղարկված նամակներում Տերյանը Մյասնիկյանին հաճախ ասում է Մեսնիկ կամ Մյասնիկ, որը ասոցացվում է ռուսերեն մագործ բառի հետ, իսկ «Ալեքսանդր Մյասնիկյան-Մարտունի (Այոռա)» դիմանկարի փորձում և՛ Տերյանին, և՛ Մյասնիկյանին շատ լավ ճանաչող Յուլիա Խանգադյանը, նշելով, որ Մյասնիկյանը «անդառնալի կերպով գիտեր ինչ էր կամենում», գրում է. «Այս տեսակետից Մյասնիկյանի հոգեբանական հակոտնյան էր բանաստեղծ Վահան Տերյանը, որ ոչ միայն ծայրահեղ զգայունությամբ էր օժտված, այլ և մտքի փիլիսոփայական արտահայտված թեքում ուներ. ավելի անուրջի մարդ, քան թե իրական կյանքի՝ որոնող ոգի,

⁵ *Տերյան Վ.*, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1979, էջ 337:

⁶ Նույն տեղում:

գրեթե ցավագարության հասնող նուրբ նյարդային սխտեմ», ապա հավելում. «Եվ սիրող ընկերները, Մյասնիկյանն ու Տերյանը, հաճախ ընդհարվում էին, կռվում:

Մեկը՝ նյարդային, հիստերիկ սուր ձայնով, մտահույզ, երբեմն կոպիտ, անհամբերող, մյուսը՝ հանգիստ, համբերող, ինքնավստահ (բայց երբեք ինքնահավան կամ մեծամիտ), գրեթե անտարբեր...»⁷:

Բ. Տերյանը գտնվում էր խորը հուսահատության մեջ, որովհետև իր բոլոր նախաձեռնությունները՝ «Թուրքահայաստանի մասին դեկրետից» մինչև Լազարյան ճեմարանի ռեֆորմը, տապալված էին, ինքը հեռացված էր պաշտոնից, Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավար Գ.Հայկունին սանձազերծել էր բանասարկությունների և հետապնդումների ալիք:

Գ. 1919 թվականի ապրիլից Մոսկվայում գտնվող Ալեքսանդր Մյասնիկյանի⁸ և Վահան Տերյանի՝ այդ ժամանակահատվածի հարաբերությունների մասին որևէ հիշատակություն չկա, ինչից կարելի է ենթադրել, որ դրանք այլևս առաջվա ջերմությունը չունեին:

Դ. Սրան կարելի է հավելել նաև այն, որ առաջին կինը՝ Սուսաննա Պախալովան, ով արդեն երկու տարի էր, ինչ հեռացել էր Տերյանից, Մյասնիկյանի՝ Հայաստան վերադառնալուց հետո՝ 1921-ին, դառնում է վերջինիս կինը, ինչի նախանշանները պետք է լինեին նաև 1919-ին:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ եթե նույնիսկ տպագրված հատվածը կեղծիք չէ, ապա համատեքստից կտրելը և այն առանձին ներկայացնելը հիմնովին փոխել են նամակի տրամաբանությունն ու իմաստը:

Մեկ օրինակ ևս: Պողոս Մակինցյանը չորսհատորյակի նախաբանում գրում է. «Մնում էր ասպարեզում հայ մեջանականությունը և նրան ներկայացնող՝ Դաշնակցությունը: Իր նամակներում Վահանը հաճախ խոսում է այն մասին, որ այդ կուսակցության քայքայման նախապայմանները օրըստօրե հասունանում են և Դաշնակցության կազմալուծումը – մոտիկ ապագայի խնդիր է»⁹: Հատկանշական է, որ Պ.Մակինցյանը որևէ հղում չի տալիս: Մակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Տերյանի նամակագրական ժառանգության առանցքային գծերից մեկը պոետի անկեղծությունն է, և տարբեր մարդկանց գրված նամակներում Տերյանը ավել կամ պակաս չափով անդրադառնում է այն խնդիրներին, որոնք իրեն այդ ժամանակաշրջանում անհանգստացրել են, ինչպես նաև այն, որ Վ. Տերյանը, չնայած հնչեցրել է բազմաթիվ դժգոհություններ, դիտողություններ և ամենասուր քննադատություններ, սակայն որևէ նամակում չի արծարծում Դաշնակցության լուծարման մասին որևէ միտք, կարելի է եզրակացնել, որ կա՛մ Պողոս Մակինցյանը կեղծում է՝ տուրք տալով ժամանակի քաղաքական պահանջներին, կա՛մ նկատի ունի մի կոնկրետ նամակ, որտեղ այդ մասին ակնարկվում է:

Նկարագրելով Վահան Տերյանի նամակների հավաքման գործընթացին՝ Սաքո Սուքիասյանը գրում է, որ այդ նպատակով 1934թ. առաջին կեսին այցելել է Գարեգին Լևոնյանին, ով պարզաբանելով, թե Տերյանի՝ «Գեղարվեստ»-ի հասցեով իրեն ուղարկված 10 նամակները Պողոս Մակինցյանի մոտ են, երկտող է

⁷ *Խանգաղյան Յ.*, Հոգովածների ժողովածու, Եր., 1963, էջ 119:

⁸ Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 3, Եր., 1999, էջ 751:

⁹ *Տերյան Վ.*, Երկերի ժողովածու, հ. I, Կ.Պոլիս, 1923, էջ VI:

գրում վերջինիս՝ խնդրելով, որ Մակինցյանն այդ նամակները փոխանցի Ս.Սուքիասյանին:

«Հիշված 10 նամակները այդպես էլ չստացվեցին մինչև այսօր, թեպետ և արձագանքը եղավ մի ընդարձակ նամակ, որով Պ.Մակինցյանը իր գոհունակությունն էր հայտնում Հայպետհրատի այդ ձեռնարկության մասին...»¹⁰, - «Էջեր Վահան Տերյանի կյանքից» գրքում գրում է Սաքո Սուքիասյանը:

Հայտնի է, որ Վահան Տերյանի 100-ամյակի նախօրեին Էդվարդ Ջրբաշյանը մեկ անգամ ևս փորձել է Տերյանի ձեռագրերը վերադարձնել Հայաստան և ստացել է Անահիտ Մակինցյանի նախնական համաձայնությունը՝ պայմանով, որ մինչ վերադարձը հրատարակվի իր հոր՝ Պողոս Մակինցյանի քննադատական հոդվածների ժողովածուն: Ժողովածուն հրատարակվել է¹¹. Անահիտ Մակինցյանը կազմել է, իսկ Էդ. Ջրբաշյանը՝ խմբագրել ու առաջաբանը գրել: Հրատարակումից հետո գրականագետը մեկնել է Մոսկվա՝ արխիվը բերելու, սակայն Ա.Մակինցյանը չի եկել հանդիպմանը և այդ օրերին հեռախոսազանգերին չի պատասխանել:

2006 թվականին Անահիտ Մակինցյանը, ով բնակվում է Մոսկվայում, եկավ Երևան՝ մասնակցելու իր «Штрихи к портрету»¹² գրքի շնորհանդեսին: Գիրքը նվիրված է Պողոս Մակինցյանի գործնեության և կերպարի ամբողջացմանը, սակայն ըստ էության չի բացահայտում Մակինցյանի անվան հետ կապված և ոչ մի իրական պատմություն՝ ո՛չ Կարսի պայմանագրի ստորագրման մանրամասները, ոչ ուղղագրության փոփոխության պատմությունը և հետագայում լատինատառ հայերենի կիրառության միտքը, ոչ էլ մի որևէ այլ իրողություն: Գրքում «կարմիր թելով» անցնում է այն գաղափարը, որ Վահան Տերյանն ու Պողոս Մակինցյանը շատ մտերիմ ընկերներ էին, ակնարկվում է, որ Վահան Տերյանի՝ որպես մեծագույն պոետի ձևավորման վրա անուրանալի ազդեցություն է ունեցել Պ.Մակինցյանը, Տերյանը միշտ անհանգստացած է եղել Մակինցյանի ճակատագրով, բացի դրանից՝ ինչպես է Մակինցյանը հետագայում «համոզել» Ավետիք Իսահակյանին և Շիրվանզադեին՝ վերադառնալ հայրենիք:

Գրքի միակ լուրջ արժանիքն այն է, որ այն ներառում է Վահան Տերյանի գրած 25 անտիպ նամակներից հատվածներ, Վահան Տերյանի մեկ բանաստեղծության անտիպ տարբերակ և 11 անտիպ նամակներից հատվածներ՝ Ավետիք Իսահակյանի, Վալերի Բրյուսովի, Պ.Մակինցյանի, Շիրվանզադեի և Ասքանազ Մռավյանի կողմից գրված: Հատկանշական է այն հանգամանքը, որ Անահիտ Մակինցյանը շարունակում է հոր ավանդույթը՝ հրատարակելով նամակները միայն հատվածաբար և միայն նրանք, որոնցում Մակինցյանը դրական լույսի ներքո է ներկայանում: Այս մոտեցումը հիմք է տալիս ենթադրելու, որ չհրատարակված նամակները Պողոս Մակինցյանի «լուսավոր» կերպարի համար այնքան էլ նպաստավոր չէին լինի:

Նկարագրելով Ալեքսանդր Մյասնիկյանի մուտքը Լազարյան ճեմարան, ում համար Ավետիք Իսահակյանը ուսանողներին «բարեխոսել էր»՝ ասելով. «Շատ լավ տղա է, պատրաստված»¹³, Յուլիկ Խանզադյանը գրում է. «Բնական է,

¹⁰ *Սուքիասյան Ս.*, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Եր., 1959, էջ 193:

¹¹ *Մակինցյան Պ.*, Դիմագծեր, Եր., 1980:

¹² «Նրբագծեր»՝ դիմանկարին:

¹³ *Խանզադյան Յ.*, Հոդվածների ժողովածու, Եր., 1963, էջ 116:

որ ճեմարան մտնելուն պես նա պիտի աչքի ընկներ և մտներ դպրոցական «մտավորականության» շարքերը, որի գլխավոր առաջնորդներն էին Վահան Տեր-Գրիգորյան (Տերյանը) և իր փայլուն աշխատակից Պողոս Մակինցյանը»¹⁴։ Այս հարաբերությունը, անկասկած, արտահայտված է նաև նամակներում։

Վահան Տերյանի անտիպ նամակների առաջին մեջբերումը գրքում վերաբերում է Վահան Տերյան-Յուլյա Խանգադյան-Պողոս Մակինցյան ընկերությանը։

1914թ. հուլիսին գրված այս նամակում Տերյանը նկարել է եռանկյուն՝ որպես «երրորդության» նշան.

«Սիրելիք Պո և Յո.

Ահա դրոշմեցի նշանն այս սուրբ, որ է նշան երրորդության մեր անմահական և սրբազան շաղկապին մեր։ Սա է «կնիք հավատո» և նշանակ սիրո ... Եղեցի (եղիցի – ԳԷ-Տ) սա կնիք մեր աշխատությանն սիրո և նշան մեր գրվանց այսուհետև և մինչև հավիտյան»¹⁵։

Ս.Մակինցյանը, շարունակելով հոր «ավանդույթը», անտիպ նամակից հատված է հրապարակում՝ առանց նշելու ամսաթիվը և հասցեատիրոջը. նամակի միակ իմաստն այն է, որ Տերյանը փաստորեն այնքան էլ մտերիմ չէր Ս.Գորկու հետ և պակաս կարևոր դերակատարում ուներ հայ գրականության անթուղզիայի կազմման գործում.

«Երեկ Գորկին ասաց, որ Մառի հոդվածը անհարմար է ժողովածուի համար և ավելացրեց»- Павел Никитич нам напишет!¹⁶։

Ռուս գրող Դմիտրի Սեմենովսկին իր «Տերյանը Գորկու մոտ» հուշագրության մեջ նկարագրում է հետևյալը. «Դիմելով Տիխոնովին և Տերյանին, Ալեքսեյ Մաքսիմովիչը խոսք բաց արեց հայ գրականության ժողովածու հրատարակելու մասին։ Սեղանի վրա հայտնվեցին թուղթ և մատիտ։ Տերյանը տալիս էր հայ գրականագետների և ռուս բանաստեղծ-թարգմանիչների ազգանունները, որոնց կարելի էր ներգրավել ժողովածուի աշխատանքներին։ Գորկին գրի էր առնում»¹⁷։

Հարկ է նշել, որ Գորկին այնքան հիացած էր Տերյանի գրական-գեղագիտական ընկալումներով և ռուսերենով, որ նյութական վիճակը բարելավելու և ավելի մեծ ճանաչման համար առաջարկել էր Վահան Տերյանին ռուսերեն բանաստեղծություններ գրել¹⁸։ Ազդված Գորկու առաջարկությունից՝ պոետը գրում է իր նշանավոր «Չեմ դավաճանի իմ Նվարդին...» տրիոլետը։

Տերյան-Գորկի հարաբերություններում փոխվստահությունը ներկայացնող մի հետաքրքիր դրվագ ևս կա Սեմենովսկու հուշագրությունում։ Ըստ վերջինիս՝ Մաքսիմ Գորկին, շատ աղոտ ծանոթ լինելով իր գրչակցի ստեղծագործությանը, Սերգեյ Եսենինի մասին առաջին դրվատական խոսքը լսում է հենց Վահան Տերյանից. «Հետո խոսակցություն բացվեց գրական աշխարհի նորությունների մասին։ Տերյանը պատմում էր, որ Պետրոգրադի գրական սալոններում հայտնվել է մի տաղանդավոր գյուղացիական բանաստեղծ (крестьянский поэт), դեռ բոլորո-

¹⁴ Նույն տեղում։

Ըստ Վ.Պարտիզունու՝ Յուլյա Խանգադյանը այս հոդվածի ձեռագրում «փայլուն աշխատակիցը» ձևակերպման փոխարեն գրել է «փայլուն համարը» (*Պարտիզունի Վ.*, Տերյանի կենսագրությունը, Ե., 1984, էջ 82)։

¹⁵ *Макинцян А.*, Штрихи к портрету, Եր., 2006, էջ 15։

¹⁶ Նույն տեղում, էջ 16։

¹⁷ Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1964, էջ 369։

¹⁸ Նույն տեղում, էջ 370։

վին պատանի, նա իր վառ, պատկերավոր բանաստեղծություններով գրավել է ընդհանուրի ուշադրությունը»¹⁹:

Մեջբերելով Վահան Տերյանի գրած նամակներից Պողոս Մակինցյանի մասին միայն հիացական հատվածները՝ Անահիտ Մակինցյանը նույն սկզբունքը չի կիրառում Մակինցյանի՝ Տերյանին ուղղված նամակներում: 1916թ. նոյեմբերին Տերյանին գրած նամակում Պողոս Մակինցյանը ասես հեգնում է պոետին՝ միաժամանակ մեջբերված հատվածում ցույց է տրվում, թե ինչպիսի ջանասիրությամբ է Մակինցյանը ժամանակին «տարածել» Տերյանի պոեզիան:

«Տիար, նույն առաջարկն արել ենք Լեոյին, Ավ.Իսահակյանին և Հով. Թումանյանին... Мы писали: «մեզ համար ձեր բարեկամությունը մի մեծ գրավական է մեր գործի հաջողության, нет разве?»... «Բոլորի համար պարզ է քո նշանակությունը մեր գրականության մեջ... Անցել է անդարձ այն ժամանակը, երբ ես քո ելանչի փափկվանի (և - ԳԷ-Տ) նման, ավելի վայելուչ՝ քո առաքյալը՝ «Անուրջները» ձեռքիս ման էի գալիս քաղաքից քաղաք և քո գովքը երգում: В Нахчивани, я помню, прославился как друг Териана, знорхиская եմ... Այժմ կարիք չկա քեզ պրոպագանդելու – Դու արդեն անտարակույս ես»²⁰:

Անահիտ Մակինցյանը իր գրքում չի խորշում ուղղակիորեն հայտարարելուց, թե Վահան Տերյանի՝ որպես պոետի ճանաչումը Պողոս Մակինցյանի «քարոզչության» արդյունքն է. «Последовательная, энергичная пропаганда Макинцяном поэзии Терьяна давала свой результат: расширялся круг читателей, возрастал интерес к поэту, переходили из рук в руки быстро исчезающие из продажи экземпляры сборника «Грезы сумерек»»²¹:

Գրքում տեղ է գտել թարգմանական մեկ կոպիտ սխալ: Լինելով ռուսախոս՝ Անահիտ Մակինցյանը փորձել է ընդգծել Վահան Տերյանի և Պողոս Մակինցյանի ճեմարանական մյուս ընկերոջ՝ Յուլի Խանզադյանի գնահատականը՝ Տերյանի երկերի հրատարակության առթիվ և թարգմանել է գրաբարյան արտահայտությունը ռուսերենի, թեև պետք է նշել, որ գրքույկում տեղ գտած հայերեն մյուս մեջբերումները թարգմանված չեն: Արդյունքում Յ.Խանզադյանի՝ Պ.Մակինցյանին ուղղված նամակի (1924, նոյեմբեր) մի ձևակերպումը՝ «ծանյա գ Վահանն», թարգմանվել է «так вознесся ввысь наш Ваан»²², այնինչ «ծանել» բայը նշանակում է ճանաչել. այդ հատվածի ամբողջական մեջբերումը.

«Հէյ դու, Պաուլ, ինձ շատ ու շատ ավելի սիրելի դարձար, վասն զի միայն քո միջոցով, ծանյա գ Վահանն», (Гей ты, Паоло, я возлюбил тебя еще сильнее, ибо только твоими усилиями так вознесся ввысь наш Ваан)»²³:

Տերյանագիտության մեջ հաճախ է շրջանառվել Ավետիք Իսահակյանի՝ Տերյանին տրված այն գնահատականը, թե «հիմա քո հազարն է»: Սակայն այս ձևակերպման ուղղակի վկայությունը՝ բուն նամակը, հրապարակված չէր: Անա-

¹⁹ Նույն տեղում, էջ 369:

²⁰ **Макинцян А.**, Штрихи к портрету, Եր., 2006, էջ 20:

²¹ Նույն տեղում, էջ 22:

«Մակինցյանի կողմից Տերյանի պոեզիայի հետևողական, եռանդուն քարոզչությունը տալիս էր իր արդյունքը. ընդլայնվում էր ընթերցողների շրջանակը, աճում էր պոետի հանդեպ հետաքրքրությունը, ձեռքից ձեռք էին փոխանցվում «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի՝ արագորեն վաճառվող օրինակները»:

²² «Այսքան վեր բարձունքների է հասել մեր Վահանը»:

²³ **Макинцян А.**, Штрихи к портрету, Եր., 2006, էջ 35:

հիտ Մակինցյանը, հոր կողմից մեջբերված գնահատականի հավաստիությունը հաստատելու համար, իր գրքում գետեղել է Ավետիք Բսահակյանի՝ Վահան Տերյանին ուղղված նամակից մի հատված՝ թվագրված 1910թ. ապրիլով.

«Սիրելի Վանիկ, ստացա նամակդ... Սիրելի՛ս, դու իսկական բանաստեղծ ես, և որ գլխավորն է՝ մեր գրականության մեջ միանգամից անկախ և ինքնուրույն տեղ գրաված. ազատ ես ամեն ազդեցություններից և ունես սեփական ստիլ... Դու այն դերն ես կատարում ներկայումս մեր գրականության մեջ, ինչ որ Հով. Հովհաննիսյանը 80-ական թվականներում, ինչ որ ես 90-ական թվականներում. սրանից հետո քո ազդեցության շրջանն է, քո «հազարն» է, ինչպես ասում էին հին պարսիկները... Այժմ բոլոր նոր գրողները քեզ են հետևում: Վերջապես մենք էլ ունեցանք մի իսկական «մոդերն» բանաստեղծ. տասնյակ տարիներ թրջահայերը ամենայն անշնորհքությամբ կրկնում էին Վերլենի և Բողերի պատկերները. բայց դու եղար միակ տաղանդավոր աշակերտը այդ նոր արվեստագետների»²⁴:

Այս գրքույկում ևս մի քանի անտիպ նամակներից մեջբերումներ կան՝ գրված Ավետիք Բսահակյանի ձեռքով: Մեջբերումները չեն հակասում գրքույկի ընդհանուր տրամաբանությանը և ներառված են, քանի որ «բարձրացնում են» Պողոս Մակինցյանին: Օրինակ՝ Անահիտ Մակինցյանը փորձում է ցույց տալ, որ բացի Վահան Տերյանին «բացահայտելուց» և «կերտելուց»՝ իր հայրը նույնը արել է և Եղիշե Չարենցի հանդեպ, նույնիսկ այն ժամանակ, երբ հայ գրականության նահապետը՝ Ա.Բսահակյանը, կարծում էր Չարենցն ու նրա ստեղծագործությունները գերազնահատված են: Նամակը թվագրված է 1923թ. 16 ապրիլով, գրված Վենետիկից.

«Սիրելի Պողոս ջան... Չարենցի հիշատակումը աններդաշն տգեղություն բերեց: Չարենցից մինչև «Նորքի» ստանալը բան չեմ կարդացել, իսկ «Նորքի» մեջ եղածը ոչ մի շնորհ չի ներկայացնում. բոլշևիկ լինելը բավական չէ, որ մարդ գրող հռչակվի. և ինձ թվում է, թե ձեր խանդավառությունը, սաստիկ պիտի վնասե նրան. սակայն ինձ ի՞նչ. ճաշակի խնդիր է. պաշտեցե՛ք նրան, ու տղան էլ ժամանակավորապես ուրախ կլինի. փառք ու փող կունենա. կարող եք դասագրքերի մեջ մտցնել... Բայց իմացիր. որ ոչ Մարքս, ոչ Լենին, ոչ Կարմիր բանակ – անգոր են գրական գեշը լավցնելու, և լավը գեշցնելու: Ես զարմանում եմ քո ճաշակի անկման վրա. Վահանից հետո հանդուրժել նրա՞ն... իսկապես *օուսք* եմ ես այդ ըմբռնելու, ինչպես և անկարող եմ ըմբռնել քո սոցիալիզմը: Բաբելոնի խառնակություն է մտել. իրար լեզու չենք հասկանում...»²⁵:

Վահան Տերյանի նամակների մի կարևոր առանձնահատկություն է այն, որ նույնիսկ ամենապաշտոնական գրություններում մշտապես զգացվում է պոետի անկեղծությունը, և հենց անկեղծությունն է պատճառը, որ նամակներում տեղ են գտնում շատ սուր գնահատականներ: Անահիտ Մակինցյանը մեջ է բերում 1912-ին Մակինցյանին ուղղված Տերյանի նամակից մի հատված, որտեղ բանաստեղծը ներկայացնում է իր դժգոհությունը քննադատների թերագնահատումից.

«Теперь я тебе могу окончательно заявить, что «Оризонисты» негласно объявили бойкот... «Характерно» - Агбалян где-то на собрании объявил, что Ваан Терьян явление "скоропреходящее", а в своем «Обзоре» армянской литературы от на-

²⁴ Նույն տեղում, էջ 21:

²⁵ Նույն տեղում, էջ 21-22:

чало до наших дней не упомянул моего имени, объявив, что сейчас есть три поэта – Туманян, Исаакян, Демирчян»²⁶.

Հայտնի է, որ Վահան Տերյանը շատ հանգիստ էր վերաբերվում իր պոեզիայի բացասական քննադատությանը: Նա բազմիցս անձամբ է ներկա եղել իր պոեզիայի «դատափետման» դասախոսություններին: Օրինակ՝ պահպանվել է դերասանուհի Հայկուհի Գարագաշի հուշը՝ Մամբրե Մատենձյանի թիֆլիսյան դասախոսության վերաբերյալ, որին ներկա է եղել նաև Վահան Տերյանը.

«Մատենձյանը եկավ ու սկսեց զեկուցումը, որ տևեց մոտ երկու ժամ: Սկզբից մինչև վերջ նա ոչնչացնում էր Տերյանին: Նրա ստեղծագործությունը համարում էր անարվեստ, ոչ հայկական, անբովանդակ, կեղծ և մեղադրում էր երիտասարդությանը՝ այդ դատարկ ոտանավորներով տարված լինելու համար: Մի խոսքով, դա մի անգուսպ պարսավանք էր Տերյանի և նրա քնարերգության հասցեին:

Մենք աչքի տակով նայում էինք Տերյանին: Վերաբերվում ուսին էր, մի արմունկով կռթնել էր դիմացի նստարանին, գլուխը ավիին հենած, լուռ, հայացքը հառել գետնին: Այդպես մնաց ամբողջ զեկուցման ժամանակ: Երբ զեկուցումն ավարտվեց, վեր կացավ, այդպես էլ լուռ հեռացավ:

Բոլորս վշտացած էինք, ցավում էինք, և այդ օրվանից ավելի շատ սիրեցինք Տերյանին»²⁷:

Սակայն անկախ տերյանական ընկալումից՝ Անահիտ Մակինցյանի վերաբերյալ մեջբերումը շատ կարևոր է՝ գրականագիտական մի շարք հարցադրումների պատասխանները ստանալու համար: Անդրադառնալով Վահան Տերյան – Նիկոլ Աղբալյան հարաբերությանը և նշելով, որ Աղբալյանն առաջին քննադատներից էր, որ նկատեց ու բարձր գնահատեց Տերյանի առաջին ժողովածուն՝ «Մթնշաղի անուրջները», Էդվարդ Ջրբաշյանն իր տարակուսանքն է արտահայտում, թե ինչու է 1912 թվականին գրական քննադատը լռել Վահան Տերյանի երկրորդ ժողովածուի առիթով, թեև հայտնի է, որ երկու տարի անց չափազանց բարձր է գնահատել ժողովածուն. «Իհարկե, պետք է ավստոսալ, որ ականավոր քննադատը, որ հատկապես այդ տարիներին՝ 1912-1914թթ. շատ ակտիվորեն զբաղվում էր ընթացիկ գրականության և նոր հրատարակությունների գնահատմամբ, առանձին հոդված չի նվիրել Տերյանի այդ նոր՝ ըստ էության հանրագումարային գրքին: Դժվար է ասել, թե ինչն է եղել «ձեռնպահ մնալու» պատճառը: Համենայնդեպս, վստահորեն կարելի է ասել, որ այս դեպքում գրքի նկատմամբ որևէ վերապահություն կամ սկզբունքային դիտողություն չի եղել»²⁸:

Հարկ է նշել, որ Անահիտ Մակինցյանը նույնությամբ կրկնում է Վահան Տերյանի ձեռագրերի և ընդհանրապես նամակների հրատարակության «հայրական» ավանդույթը. բացի նրանից, որ ամբողջությամբ չի հրատարակում նամակները, երբեմն չի նշում նամակների ուղարկման ամսաթիվը, ոչ մի նամակի հա-

²⁶ Նույն տեղում, էջ 23:

«Այժմ ես կարող եմ քեզ վերջնականապես հայտարարել, որ «Հորիզոնիստները» լուռ հայտարարել են բոլորս... «Բնութագրական է»՝ Աղբալյանը ինչ-որ ժողովի ժամանակ հայտարարել է, որ Վահան Տերյանը «վաղանցիկ» երևույթ է, իսկ հայ գրականության ձևավորումից մինչև մեր օրերն ընդգրկող իր «Ակնարկում» չի հիշատակել իմ անունը՝ հայտարարելով, որ այժմ կա երեք պոետ՝ Թումանյան, Իսահակյան, Դեմիրձյան»:

²⁷ *Իշխանյան Ռ.*, Տերյանն ինչպես որ կա, Եր., 1990, էջ 34:

²⁸ *Ջրբաշյան Է.*, Փաստերի հետքերով (գրականագետի նոթեր), Եր., 2001, էջ 113:

մար չի նշում ուղարկման տեղը, և որ ամենագավեշտալին է, Պողոս Մակինցյանի օրինակով, ով նամակները վերնագրում էր՝ «ընկերներից մեկին», չի նշում նամակի հասցեատիրոջը՝ նշելով միայն «ընկերոջը: Օրինակ՝ Անահիտ Մակինցյանը մեջբերում է հոր՝ Պողոսի նամակը՝ գրված «ընկերոջը» 1915թ. նոյեմբերի 20-ին.

«Թումանովի բնակարանից խոսեցի Դերենիկի հետ: Ասի, որ գա և ոտանավորներ բերի: Խոսեցինք, պատմեցի, որ իմ սկզբնական ծրագիրս է եղել զետեղել լոկ Հով. Հովհաննիսյանին, Հով. Թումանյանին, Ավ. Իսահակյանին և Վ. Տերյանին: ... Կատաղեց. իրա խոսքերը բերեմ բառացի: Որ այդպես է՝ ինձ չղնեք: Ես Թումանյանից և Իսահակյանից բարձր բանաստեղծ եմ: Վերջապես Տերյանը ի՞նչ է, որ նա մտել է առաջնակարգ բանաստեղծների շարքը, իսկ ես ոչ: Ես քեզ ասում եմ, որ ապագայում դուք կճնշվեք, կջախջախվեք իմ մեծության ներքո...»²⁹:

Շարունակելով Վահան Տերյանի գրած տողերով ցույց տալ Պողոս Մակինցյանի «բարձրությունը»՝ քննադատի դուստրը գրքում զետեղում է Տերյանի գրած նամակը Մակինցյանին (1912):

«Միակ ցանկությունս է, որ հաղթող լինես և որ գլխավորն է՝ քո և մեր բոլորիս ռիսերիմ ու նենգավոր թշնամիներին ուրախանալու առիթ չլինի: Մանավանդ քո վրա ատամ սրողներ և հաչողներ շատ կան և կլինեն և միակ երկյուղս այն է, որ դրանք օգտվեն այդ հանգամանքից վրադ ցեխ նետելու: Բայց «հույս աստված» (ինչպես ասում են մեր գյուղացիք) նրանց ցեխն ու թուքը իրանց երեսին թափվի, որովհետև վեր թքնողի վիճակն այդ է»³⁰:

Ա.Մակինցյանի գրքում կան նույնիսկ այնպիսի մեջբերումներ, որոնք նույնիսկ մեկ նախադասություն չեն, և կա մ բազմաթիվ տարբերությունների տեղիք կարող են տալ, մանավանդ եթե հաշվի առնենք այն, որ Տերյանը նամակներում բազմիցս կիրառում է հեզնանքի այնպիսի ձևեր, որ իր ոճին անձանոթ մարդուն կարող է թվալ, թե պոետը դա գրել է ամենայն լրջությամբ, կա՛մ ընդհանրապես անհասկանալի են դարձնում մեջբերված խոսքի կոնկրետ նշանակությունը՝ միակ «ապավեն» դարձնելով մեջբերողի (իմա՝ Ա.Մակինցյանի) տեսակետը. ահա լավագույն օրինակներից մեկը՝ Տերյանը գրում է Մակինցյանին (1912).

«Խոսքս քո «պայքարին» է վերաբերվում, որ համառ կերպով առաջ ես տանում...»³¹:

Իր գրքույկում Անահիտ Մակինցյանը, բնականաբար, նրբորեն շրջանցում է բոլոր այն հարցերը, որոնք կարող են ստվեր գցել իր հոր կերպարին: Օրինակ՝ Վահան Տերյանի ջերմ ու հոգատար վերաբերմունքը Պ.Մակինցյանի հանդեպ ցույց տալու համար Ա.Մակինցյանը մեջբերում է մի հատված 1914-ին գրված նամակից՝ միտումնավոր չնշելով նամակի կոնկրետ ամսաթիվը.

«(Ինչի՞ց սկսեմ: Քո «սկանդալից» իհարկե... Ցավում եմ, որ այդպես է պատահել և մաղթում եմ, որ վերջը բարի լինի: Կուզեի, որ այդ գործը առիթ չտար մեր զգվելի մամուլին անունդ ծամծմելու ու մեր թշնամիներին իրանց չարախիտքները հագեցնելու: Բայց քո նյութականը... ի՞նչ պիտի լինի, չգիտեմ): Ինչպես պիտի յուր գնաս այդ թշվառական ռոճիկով – չգիտեմ: Եթե այդ պաշտոնը հաջողվի,

²⁹ *Макинцян А.*, Штрихи к портрету, Եր., 2006, էջ 23-24:

³⁰ Նույն տեղում, էջ 26:

³¹ Նույն տեղում, էջ 26:

ես քեզ ամսե ամիս կուղարկեմ, - փառք Աստծո, վրաս այնքան փող ունես, որ ապահով կարող ես ստանալ...

...Ես լրբորեն մշակել եմ այն գոռոզ կարծիքը, որ ինձ և քեզ փող տալն ինքնին արդեն հայ գրականության ծառայել է և սիրում եմ հավատալ, որ դու նույն կարծիքին ես, իսկ եթե չես՝ շատ վատ ես անում»³²:

Ինչ սկանդալի մասին է գրում պոետը և ինչո՞ւ է գրում «ինձ և քեզ փող տալը»:

Հայտնի է, որ Պողոս Մակինցյանը, թեև աշխատում էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այդուհանդերձ, մեծ վերապահությամբ էր վերաբերվում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերին և հետևաբար նաև՝ Ամենայն հայոց կաթողիկոսին: 1913 թ. նոյեմբերի վերջին Ամենայն հայոց Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսն ընդունելություն է կազմակերպում Գևորգյան ճեմարանի ուսուցիչների և լավագույն աշակերտների համար: Ընդունելությանը ներկա Պողոս Մակինցյանը հրաժարվում է աջամբույրից և փորձում է պարզապես սեղմել կաթողիկոսի աջը: Այս վերաբերմունքը հոգևորականությանն այնքան է վիրավորում, որ նույն օրը՝ երեկոյան, Պ.Մակինցյանը ազատվում է ճեմարանի գրականության ուսուցիչ պաշտոնից և հայտնվում դրսում: Վահան Տերյանի նամականիում պահպանվում է պոետի հղած հեռագիրը Հովհաննես Թումանյանին, որը թվագրվում է մոտավորապես՝ 1913 նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 1, որով Տերյանը պարքով փող է խնդրում Թումանյանից.

«Հիվանդ եմ, նյութականս ծայրահեղ դժվարին վիճակում, խնդրում եմ, եթե հնարավոր է, ճարեցեք փոխարինաբար 150 ռուբլի: Հուսով եմ ինձ կպաշտպանեք ստորագումներից, ավելորդ խոսակցությունից: Ընդունում եմ նյութական բնույթի ամեն պայման: Սպասում եմ շուտափույթ հեռագրական պատասխանի»³³:

Իրականում Վահան Տերյանն այդ գումարը խնդրել է Պողոս Մակինցյանին փոխանցելու համար. Տերյանի հեռագրի և «սկանդալի» կապը ցույց չտալու համար է Ա.Մակինցյանը թաքցնում նամակի ամիսը, որը, ըստ երևույթին, պետք է լինի 1914թ հունվարը: Բնական է, որ այս պարագայում գրքույկի հեղինակը չէր կարող ծանոթագրել, թե ինչ «սկանդալի» մասին է խոսում Տերյանը: Բացի դրանից՝ պարզ է դառնում, թե ինչ նկատի ունի Տերյանը՝ «ինձ և քեզ փող տալն ինքնին արդեն հայ գրականության ծառայել է» ասելով:

Վահան Տերյանի նամակից հաջորդ հատվածական մեջբերումը թվագրված է մանրամասնորեն՝ 1914թ. մայիսի 8.

«Լսեցի, որ քեզ բոլորոս են անում – վախենալու բան չունես – բարձր պահիր դրոշդ և մի երկնյի: Плюй – мы еще придем!»³⁴:

Հատկանշական է, որ Ա.Մակինցյանը խուսափում է ծանոթագրություններից, և հաջորդ մեջբերման մեջ (1914թ.) նշվող «լեկցիան» անհայտ է, թե կոնկրետ ինչին է վերաբերում.

«Լեկցիայիդ մասին գրիր: Մի վախենա և արի եղիր – плюй на это вонючее общество, которое не выносит искреннего и правдивого слова, а только лицемерное сюсюканье»³⁵:

³² Նույն տեղում:

³³ *Տերյան Վ.*, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1979, էջ 126:

³⁴ *Макинцян А.*, Штрихи к портрету, Եր., 2006, էջ 26:

«Թքած ունեցիր. մենք դեռ կգանք»:

Վահան Տերյանի հասարակական իդեալի բացահայտում է Ա.Մակինցյանի գրքույկում տեղ գտած հաջորդ մեջբերումը՝ թվագրված 1914թ. հուլիսով: Տերյանագիտությանը հայտնի է, որ պոետը դեմ էր հայկական իրականության մեջ խորը արմատներ ունեցող «թայֆայական» մոտեցումներին: Օրինակ՝ «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունից հետո Վահան Տերյանը «ընկերներից մեկին» (արդեն հասկանալի է, որ նամակի այս հատվածը տպագրել է Պ.Մակինցյանը) գրում է.

«Դաշնակները-հորիզոնիստները կատաղած էին, թեև այդ կատաղությունը զանազան արտահայտություն գտավ նայած ամեն մեկի կեղծավորության չափին: Իսկ քանի որ այստեղ ինչ հորիզոնիստներին կատաղություն է պատճառում համարվում է («բնականից») մշակիստների կողմնակցություն – ուստի մշակիստները ինձ ողջունում էին: «Մշակ»-ը առաջարկեց ամբողջ լեկցիա տպել, ես էլ համաձայնեցի, բայց հետո մի կողմից հալ չկար կարգի բերելու գրածս տպագրության հանձնելու համար, մյուս կողմից էլ լավ համարեցի առայժմ վերապահ մնալ:

Առհասարակ չեմ կարող ասել, որ այստեղի «գրական» ընտանիքը սիրով ընդունեց ինձ – ընդհակառակը, ես ինձ շարունակ շատ մենակ ու հեռու եմ զգում:

Առաջարկություն եղավ նույնպես առանձին տպելու լեկցիա, բայց ես հրաժարվեցի այդ բոլորից, չկամենալով երկու թայֆաներից որևէ մեկին հենարան ծառայել կամ գործիք լինել:

Առերես հետս լավ են, իհարկե, բոլորը: Բայց զգում եմ խորը և գիտեմ հաստատ, որ լավ չէ նրանց սիրտը իմ վերաբերմամբ»³⁶:

Ահա այս համատեքստում չափազանց կարևոր է Ա.Մակինցյանի տպագրած հատվածը (1914), թեև չի բացառվում, որ երկու հատվածներն էլ նույն նամակից են.

«... Ամուր կաց և մի թուլանար, թեկուզ բոլորն էլ ծառանան: ... Մեր երկրում էլ վերջապես պետք է ազատ խոսք հնչե, թե՞ մեր սերունդն էլ պիտի մնա մեր խնամիական անձնական ցեխի մեջ, որի մեջ խրված է մեր մամուլը այսօր, մեր ամբողջ կյանքը... Ես չեմ նեղանա, եթե մի օր համոզվելով, որ իմ պոեզիան անպետք է. դուրս գաս և հրապարակավ ասես այդ: Եվ ես կմնամ նույն Վահանը և դու նույն Պոլը: Այլ դեպքում պիտի մեռնի մեր միտքը, ամենը, ինչ որ կա լավ, պիտի մոնստրավենք, գնանք»³⁷:

Հաջորդ երկու նամակները (1914թ. նոյեմբեր և 1914 (Ա.Մակինցյանը ամիսը չի նշում՝ ենթադրաբար, նոյեմբերի վերջ կամ դեկտեմբեր)) ներկայացնում են պոետի հոգեվիճակը.

«Պոեզներ գրեթե բոլորովին չեմ գրում. և առհասարակ հավասս փախել է ամեն բանից... բայց մի վիատվիր իմ սիրելի Պառ, գուցե դեռ մեր համար էլ բացվի մի լավ օր – ես դեռ վերջնական հուսահատության ... չեմ հասել:

Սուսաննան Ստավրոպոլում է - «քույր է» դարձել: Շատ շատ կարոտել եմ քեզ և եթե ազատ լինեի ու հնար լիներ կնստեի պոեզիայի և կգայի Կապկազ, բայց մեզ արքայություն ո՞վ է տվել: ... Երբ շատ երկար լռում ես սկսում եմ վատ բաներ մտածել և շատ մենակ եմ զգում ինձ»³⁸:

³⁵ Նույն տեղում, էջ 27:

«Թքիր այդ հոտած հասարակության վրա, որը չի կարողանում ընդունել անկեղծ և ճշմարտացի խոսքը, այլ միայն երեսպաշտ սպվոցը»:

³⁶ *Տերյան Վ.*, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1979, էջ 156:

³⁷ *Макинцян А.*, Штрихи к портрету, Եր., 2006, էջ 27:

³⁸ Նույն տեղում:

«... Ես երջանիկ կլինեմ, եթե դու այստեղ լինեիր և միասին պարապեինք: Համենայնդեպս, մի՞թե մենք վերջ ի վերջո մի տեղ միասին չպիտի հաստատվենք... Այսպես մեր կյանքը կործանվեց, ով իմ Պալ: Մի՞թե «հավետ և ընդմիշտ» ... և միթե այսպես պիտի մահանանք ու գնանք»³⁹:

Ըստ Ա.Մակինցյանի՝ վերջին նամակին կցված է «Գիշերն եկավ սև ու չաքաչք» բանաստեղծության առաջին տարբերակը, որը որոշակի խմբագրումից հետո տպագրվել է 1917թ. բանաստեղծության այս տարբերակն անտիպ է.

Գիշերն իջավ սև ու չաքաչք
Լինենք խաղաղ, մեղմ աղոթենք. –
Գուցե բացվի մի սուրբ հրաշք.

Գուցե ցրվի խավարակոտ
Մշուշն անծիր և ազատվենք. –
Լինենք մանուկ, լինենք մաքուր. –

Մեր սրտերում պահենք մի հուր
Խաղաղ մի լույս խավարում չար
Գուցե հնչե աշխարհը լուռ ...

Օրհնենք բոլորն, ինչ էլ որ գա
Եվ ընդունենք սրտով հոժար
Գուցե մի սիրտ մեր վիշտն զգա⁴⁰:

Վահան Տերյանի՝ Պ.Մակինցյանին ուղղված նամակների հաջորդ մեջբերումներում պոետը ոգևորում է ընկերոջը.

«... Вперед, не робей! Пусть все нас покинут – авось не погибнем и⁴¹ մեր չաքախոսների աչքը թող ճաքի, լսո՞ւմ ես ինձ, ով իմ Պո! Погоди, погоди, мы еще вернемся...» (1914)⁴²:

«...Այժմ ես տեսնում եմ, որ մեր «սքանչելի երկրում» քննադատ լինելը ավելի հեշտ չէ, քան պոետ լինելը – зато тем благороднее, тем выше должно быть сознание и твердо, ибо те, что лают, и те это знают и чувствуют (не оттого ли так яростен их лай?) Но ведь испокон веков все собаки мира сего лают на высокую луну, а она «բարձրագնաց» идет себе спокойно путем небесным, совершая назначение свое ясное и роковое»⁴³ (1916, «Поэзия Армении» ժողովածուից հետո):

Ա.Մակինցյանն իր գրքույկում համեմատաբար ծավալուն անդրադարձ է կատարում իր հոր՝ Պողոս Մակինցյանի զինվորական ծառայության և դրանից ազատման խնդրին՝ «ձեռքի հետ» որոշելով նաև Վահան Տերյանի դիրքորոշումը Առաջին համաշխարհային պատերազմի նկատմամբ: «1914 год. Война. Армейс-

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում, էջ 28:

⁴¹ «...Առաջ, մի՛ տրտնջա: Թող բոլորը մեզ լքեն. գուցե չկործանվենք և»

⁴² Նույն տեղում:

«Մպասիր, սպասիր, մենք դեռ կվերադառնանք»:

⁴³ Նույն տեղում:

«... փոխարենն էլ ավելի ազնիվ, էլ ավելի բարձր և ամուր պետք է լինի գիտակցությունը, քանի որ նրանք, որ հաշում են, նույնիսկ իրենք գիտեն և զգում են դա (մի՞թե դա չէ պատճառը, որ այդքան կատաղի է նրանց վայրահաչը): Բայց չէ՞ որ դարերի խորքից այս աշխարհի բոլոր շները հաշում են բարձր լուսնի վրա, իսկ նա («բարձրագնաց») իր երկնային հանգիստ ուղիով ընթանում է՝ իրականացնելով իր պարզ ու ճակատագրական կոչումը»:

кая проблема обрела особую остроту. И Макницян, и Терьян считали империалистическую войну антонародной, развязанной амбициозной правительственной верхушкой в своих интересах. Оба друга стояли на позициях пораженчества»⁴⁴, - գրում է Անահիտ Մակինցյանը:

Զուտ լեզվական մակարդակում՝ մեջբերման ձևակերպումներից կարելի է հասկանալ, թե ինչ մտածողության կրող է Ա.Մակինցյանը: Պարզ է, որ մի կողմից խորհրդային ժամանակների ձևակերպումները հաղթահարված չեն, մյուս կողմից՝ հոր պահվածքն արդարացնելու ձգտումը հանգեցրել է Վահան Տերյանի աշխարհայացքի հետ համահարթեցմանը:

«Երկաթյա» է նաև այն տրամաբանությունը, որ եթե Տերյանը կողմ էր, որ Մակինցյանն ազատվի զինվորական ծառայությունից, ավելին՝ ինքն էլ չէր պատրաստվում ռազմաճակատ «կամավոր» մեկնելուն և 1916 թվականի վերջին զինվորական ծառայությունից ազատվելու նպատակով եկել էր Երևան, հետևաբար Վահան Տերյանը դեմ էր Առաջին համաշխարհային պատերազմին:

Մինչ պոետի «վերակերպավորման» խորհրդային այս հերթական հորինվածքին անդրադառնալը՝ նախ ամբողջացնենք Ա.Մակինցյանի՝ Վահան Տերյանի նամակներից այս թեմայով արված բոլոր մեջբերումները.

«Ինչպե՞ս է գործող զինվորական, գրիր շուտափույթ, ազատում են, չէ՞, հոգևոր դպրոցի ուսուցիչներին»⁴⁵ (պատերազմի սկիզբը, 1914):

«Ցեղից նամակ կար – գրում է թե սկանդալ ես անում ու հեռանում էջմիածնից... Չեմ կարծում, որ էդքան զիժ լինես ու վեր կենաս էդ էջերի համար սալդաթ գնաս»⁴⁶ (1914):

«Մի՞թե ոչ մի հնար չկա այդ զինվորությունից մի կերպ ազատվելու: Լոկ փողի՞՞ հարց է... Պետք է ռիսկ անել ու բացառիկ միջոցների դիմել... Ուրիշ ճար չըկա... Ради Бога, Пауль, не мешкай, брось эту апатию, ради Бога! Меня не так пугает то, что ты можешь не кончить университета, как то, что пойдешь в солдаты. Плюнь на все и обратись и к тому, и к другому. Если целиком нельзя достать, может можно по частям – делай все, делай, не сиди сложа руки, не жди чуда, я тебя прошу, умоляю тебя, не унывай – чтонибудь нужно сделать во что бы ни стало, чего бы не стоило... Будь решительнее и смелее, плюй на самолюбие на этот раз, что поделаешь... Слышишь Паоло? В таких случаях, когда горит дом, не думают о стеклах!»⁴⁷ (1914):

⁴⁴ Նույն տեղում, էջ 29:

«1914թ.: Պատերազմ: Զինվորական ծառայության խնդիրը ձեռք է բերել յուրահատուկ սրություն: Ե՛վ Մակինցյանը, և՛ Տերյանը իմպերիալիստական պատերազմը համարում էին հակաժողովրդական, սանձազերծված կառավարական վերնախավի կողմից՝ սեփական հետաքրքրությունների բավարարման համար: Երկու ընկերն էլ պարտավորականության դիրքերում էին»:

⁴⁵ Նույն տեղում, էջ 30:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

«Ի սեր Աստծո, Պաուլ, մի՛ հապաղիր, դեն նետիր ապատիադ, ի սեր Աստծո: Ինձ այնքան չի վախեցնում այն, որ դու կարող է չավարտես համալսարանը, որքան որ զինվոր կդառնաս: Թքի՛ր ամեն ինչի վրա և դիմիր և՛ նրան, և՛ մյուսին: Եթե ամբողջությամբ հնարավոր չէ ձեռք բերել, գուցե հնարավոր է մաս առ մաս. ամեն ինչ արա, արա, ձեռքերդ ծալած մի՛ նստիր, մի՛ սպասիր հրաշքի, ես քեզ խնդրում եմ, պաղատում եմ քեզ, մի՛ վիստվիր. ինչ-որ բան պետք է անել, ինչ էլ որ լինի, ինչ էլ արժենա... Եղի՛ր ավելի վճռական և խիզախ, թքի՛ր այս անգամ ինքնասիրության վրա, ինչ արած... Լսո՞ւմ ես, Պաուլ: Այսպիսի դեպքերում, երբ այրվում է տունը, ապակիների մասին չեն մտածում»:

«Բանն այն է, որ երբ քեզ ասում են կճարեմ – վճռում են դիմել **ամենա ծայրահեղ** միջոցների, որովհետև ինչքան էլ նեղ լինեմ, էլի հո կարող եմ այս ամենի վրա թքել ու ապրել (հասկանում եմ) որքան էլ դա ծանր լինի, իսկ քեզ սալդաթ տանելը ինձ սաստիկ վախեցնում է, որովհետև մտածում եմ, թե բոլորովին կկորչեմ և ուղղակի սարսափում եմ այդ մտքից.. Ես պատրաստ եմ ամեն գոհողության հանձ առնել (հանձն- ԳԷ-Տ) դրա համար»⁴⁸(1914թ. հունիս):

«... Я думал, что этот вопрос о воинской повинности у тебя решен окончательно. Если правда, что Цатурян хочет мне послать деньги (тем более, если это более или менее ощутимая сумма), я с наслаждением уступаю эти деньги на фонд для твоего дела – я предприму что-нибудь другое... знай, что я готов сделать все, что даст благой результат – т.е. деньги – к кому хочешь обращай (я сам подумаю, думай и ты и напиши, если придумаешь), вообще, рискну и может рублей до 100 для тебя достану... Пусть ругают, плевать мне на то, что будут говорить, надо – напишу что смертельно болен, или что-нибудь в этом роде»⁴⁹(1914):

«Ինձ շատ է զբաղեցնում քո զինվորության հարցը: Բայց դու այնքան հանգիստ տոնով ես գրում այդ մասին, որ ես էլ հանգստացա. երևի մի բան գիտես, որ հանգիստ ես: Շատ ուրախ եմ եթե այդպես է – այսինքն «մի բան գիտես»: Այդ մասին «շուտափույտ» լուծում տուր ինձ»⁵⁰ (1914):

«... Ով սիրելի իմ Պառլո, գրիր ինձ **անհապաղ**, եթե ձեռնարկես մի բան (մանավանդ զինվորությունից ազատվելու վերաբերմամբ) ես նախ կաշխատեմ ճարել որքան որ հաջողվի, եթե մի բան մտադրվես անելու: Իբրև զարանտիա, որ ձեռքիցս եղածը կանեմ առանց հետաձգելու, քո տրամադրության տակ եմ դնում իմ բոլոր գրքերը (ոչ թե իմ բանաստեղծությունները) այլ գրքերս – գրադարանս, որ առանց տատանվելու կարող ես ծախել (մի ծիծաղիր և մի վախենալ) – ես կարծում եմ, որ՝ մինչև 100 ռ կարող են տալ: (Գրքերս 300 ռ արժեն, մի 100 ռ էլ չեն տա, միթե): Չկարծես թե առանձնապես կափսոսամ: Ի՞նչ մի մեծ բան է 300 ռ – մի քիչ գործերս կարգի կգան մի երկու երեք տարուց նորից կառնեմ, այնպես չէ: Վերջապես գուցե այն ժամանակ դու հանկարծ, կամ ես հարստանանք – ես հարստացա կառնեմ, դու հարստացար մի շքեղ գրադարան կառնես կնվիրես ինձ «в дар священный»⁵¹...

Դու չգիտես թե որպիսի ծանր հարված կլինի քո կործանումը ինձ համար: Քո հարցը ես առաջին տեղումն եմ դնում այժմ և իմ գլխավոր մտահոգությունը դա է – մնացյալը (մինչև իսկ իմ բռնած գործը) ես կարևոր չեմ համարում դրա հետ համեմատած: ... Դեհ, քեզ տեսնեմ Պո, շուտ արա, մի ծուլանար և «գժվիր», չէ որ դու գիտես երբեմն այդպես «գժվել», и, словом, вперед, не робей!»⁵² (1914):

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում, էջ 31:

«... Ես կարծում էի, որ քո զինվորական ծառայության այդ հարցը վերջնականապես լուծված է: Եթե ճիշտ է, որ Օստոլոյանն ուզում է ինձ փող ուղարկել (մանավանդ որ դա քիչ թե շատ շոշափելի գումար է), ես այդ փողը հաճույքով զիջում եմ քո գործի ֆոնդին. ես այլ բան կձեռնարկեմ... իմացիր, որ ես պատրաստ եմ անել այն ամենը, ինչ դրական արդյունք կտա, այսինքն՝ փող. ում ուզես՝ կդիմեմ (ես ինքս կմտածեմ, դու էլ մտածիր ու գրիր, եթե ինչ-որ բան միտքդ գա), կարճ ասած՝ ոչիսկի կգնամ և գուցե քեզ համար մինչև 100 ռուբլի ճարեմ... Թող հայիոյեն, թքած ունեմ, թե ինչ կլիտես. եթե պետք է, կգրեմ, որ մահացու հիվանդ եմ կամ էլ նման մի բան»:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ «Սրբազան ընծա»:

⁵² Նույն տեղում, էջ 31-32:

Ապա Ա.Մակինցյանը կարճ մեջբերում է անում Պողոս Մակինցյանի՝ Վահան Տերյանին պատասխանից, որով պարզ է դառնում, որ Պ.Մակինցյանի զինվորական ծառայության խնդիրը լուծված է: Հատկանշական է, որ այս հատվածի թվագրությունը հստակ է՝ 1914թ. նոյեմբեր.

«Իմ այս տարվա վարձքն ու աշխատանքն է – զինվորությունից ազատվելը – ополченец второго разряда! И бессрочный паспорт»⁵³! Գիտե՞ս ինչ կոշմարից եմ պրծել»⁵⁴:

Ապա առանց ամսաթվի՝ Տերյանի անդրադարձն է.

«Փառք Աստծո, փրկվեցիր այդ կոշմարից»⁵⁵:

Հարկ է նշել, որ Խորհրդային Միության գաղափարական պարտադրանքներին հագուլդ տալու և Վահան Տերյանին «ուղղափառ» կոմունիստ ներկայացնելու ձգտումը տերյանագիտության մեջ հանգեցրել է պոետի՝ Առաջին համաշխարհային պատերազմի հանդեպ ունեցած վերաբերմունքի խեղաթյուրմանը, ինչը արտացոլված է նաև «Штрихи к портрету» գրքով: Հատկանշական է, որ նույնիսկ Պողոս Մակինցյանը պարզապես ակնարկում է Տերյանի բացասական վերաբերմունքի մասին՝ կոնկրետ գնահատականներ չգրելով: Փոխարենն այս մոտեցումը տեսնում ենք Սամվել Ալիխանյանի և Վաչե Պարտիզունու վերլուծություններում:

«Տերյանի մոտ բեկումը սկսվել էր վաղուց: Ահա գրեթե բացասական վերաբերմունքը դեպի պատերազմը՝ տակավին 1915-ի փետրվարին գրած մի հոդվածում»⁵⁶, - գրում է Պարտիզունին ու անում մի մեջբերում, որտեղ բացարձակապես բուն պատերազմի հանդեպ ոչ մի դիրքորոշում չկա. «Այդ՝ չգիտես ինչու «հայկական» կոչվող ակումբի ղեկավարներն ու անդամները ուսանողներին մտաբերեցին միայն այն ժամանակ, երբ պետք էր նրանց կովի դաշտ ուղարկել իբրև կամավորների. այն ժամանակ այդ պարոնների ոգևորությունը հասավ այն աստիճանին, որ մինչև անգամ ճանապարհաձախս տվին կռիվ գնացող ուսանողներին ... **եկեղեցու** փողերից»:

Կամ՝ Պարտիզունու հաջորդ հետևությունը. ««Երկիր Նաիրի» շարքը ստեղծվել է հիմնականում պատերազմի հետ կապված հիասթափությունից հետո»⁵⁷:

Իսկ Սամվել Ալիխանյանը գրում է. «Տերյանը հատկապես առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին անողորմ պայքար ծավալեց և մերկացրեց հայ կյանքի այդ ցեցերին (նկատի ունի դաշնակցականներին – Գ.Է.-Տ.)»⁵⁸: Բայց նույնիսկ Ս.Ալիխանյանը, ում գրքում բազմաթիվ են փաստագրական նյութի զեղծարարությունները (օրինակ՝ Լենինը Տերյանին կոշիկ է նվիրել, կամ Տերյանը ողջունել է Լենինին Ֆինլանդական կայարանում), Առաջին համաշխարհային վերաբերյալ Տերյանի գնահատականների հարցում չափազանց զգուշավոր է.

«... Եվ մի խոսքով, առաջ, մի՛ վիատվիր»:

⁵³ «Երկրորդ կարգի աշխարհագրային: Եվ անժամկետ անձնագիր»:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ **Պարտիզունի Վ.**, Վահան Տերյան. Ստեղծագործությունը, Եր., 1968, էջ 223:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ **Ալիխանյան Ս.**, Վահան Տերյանի պետական գործունեությունը, Եր., 1956, էջ 28:

«Տերյանը մինչև 1917 թվականը, դժբախտաբար, չկարողացավ հասնել ինչ-պես առաջին համաշխարհային պատերազմի իմերիալիստական բնույթի, այն-պես էլ նրա ելքի վերաբերյալ բոլշևիկների տակտիկայի ըմբռնմանը: Չհասկանալով պատերազմի իմպերիալիստական բնույթը, չհասկանալով, որ պատերազմը ամենից առաջ ուղղված է թույլ ու փոքր ժողովուրդների դեմ, նա կարծում էր, թե այդ՝ բոլոր ազգերի, այդ թվում նաև հայերի «ճակատագիրն է վճռում»⁵⁹:

Փոխարենը Վ.Պարտիզունին չհրապարակեց Տերյանի «Մեր պարտքը», «Նամակներ հյուսիսից» և «Ռուսաստան և Կովկաս» հոդվածները, քանի որ պոետը դրանցում անդրադառնում էր համաշխարհային պատերազմին ու ընդ որում, բնավ ոչ բացասական դիրքերից:

Իսկ ինչ վերաբերում է Պողոս Մակինցյանի զինվորական ծառայության խնդրին, ակնհայտ է, որ նախ Տերյանը հոգևոր հայրենիքի զինվորին՝ մտավորականին, նույնքան բարձր էր գնահատում, որքան պատերազմի դաշտում կռվողին, և ապա Պ.Մակինցյանին համարում էր հոգեպես ոչ հավասարակշիռ և զինվորական կարգապահությանը ոչ հարիր անձնավորություն:

«Ահա թե ինչու ես միշտ գնահատում եմ մեր Պատվոյին նրա սուբյեկտիվ կրիտիցիզմով հանդերձ: Հենց դրա համար էլ նրան ատում են բոլոր քարացածները: Ես շատ լավ գիտեմ նրա **սարսափելի** բնավորությունը, երբեմն նրա **անտանելի** արարքները, բայց նա Սիմ.Հակոբյանների և նման ուրիշների թայը չէ...»⁶⁰ (ընդգծումները Վ. Տերյանինն են – Գ.Է.-Տ.):

Ս.Մակինցյանի գրքույկում տեղ են գտել Վահան Տերյանի գրած նամակներից ևս մի քանի հատվածներ, որոնք, ըստ հեղինակի, պետք է բացահայտեն երկու ընկերների հոգեհարազատության և փոխվստահության աստիճանը: Նրանցից առաջինը Տերյանը գրել է 1912-ին.

«Ծայրահեղ դեպքում կզնամ գյուղ – դա ավելի լավ է, քան այստեղ մնալ: Իհարկե եթե սալդաթ չտարան: ... Գամ ինձ համար Կովկաս այս տարին ոտանավորներ գրեմ, գուցե Կովկասն ուժ տա ու հանկարծ «վեպս» էլ գրեմ. ինչ կասես – լավ չի լինի»⁶¹:

Հաջորդ նամակի հետ, որը թվագրված է 1915թ. սեպտեմբերով, Տերյանը Մակինցյանին է ուղարկել «Բանաստեղծությունների առաջին հատորը»՝ «Եկան օրեր ու անցան» գազելով՝ որպես ընծայագիր.

«Ով իմ սիրելի Պատվո, երբ պիտի ես ազատվեմ այս բոլոր մունտառ բաներից, որ քեզ համար գրեմ մի կարգին բան, քնքույշ ու գեղեցիկ և արժանի մեր երրորդության: (Նորերս վերցրի «Գարունի» III գիրքը և կարդացի (ոչ ամբողջը) ձեր (քո և Ցելի) հոդվածները – при всех дефектах (кои и вы, конечно, видите) ей Богу, ничего подобного в нашей «критич. литер.» никогда не было! (Беззастенчивая самореклама!)»⁶².

Պայծառ եղիր իմ Պառ: Ես անարգ կործանված եմ – դու ծագիր պայծառ – թող «Հայոց Աստվածը» որ մեծ է (ըստ «Արևի») քեզ գործություն տա, որ պայծառացնես մեր երրորդության անունը, և մեր (իմ) «ընկած» սիրտը մի քիչ մխիթարես:

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ *Վահան Տերյան*. Նամակներ, Գարուն, 2005, N1 (455), էջ 23:

⁶¹ *Макинцян А.*, Штрихи к портрету, Եր., 2006, էջ 33:

⁶² «Բոլոր թերություններով հանդերձ (որոնք դուք էլ, իհարկե, տեսնում եք), Աստված վկա, նմանատիպ ոչինչ մեր «քննադատական գրականության» մեջ երբեք չի եղել: (Անամոթ ինքնագովազդ):»

С Богом⁶³!

Գրիր. քոնն Վահան: Ի Պետրոգրադ: Թագավորությանն մերում 10-երորդ տարի և երրորդության 17-երորդ (так ли? Исследуй. О! Геродот!)⁶⁴»⁶⁵:

Հաջորդ երկու մեջբերումները թվագրված չեն և այնքան կարճ են, որ հնարավոր չէ հասկանալ, թե որ պոետի կյանքի շրջանին են վերաբերում.

«Այս տողերը միանգամայն «կոնֆիդենցիալ» ասում եմ քեզ և դու ոչ ոքին չցույց տաս նամակս: Ազնիվ ընկեր, մեռնում եմ»⁶⁶:

«Այս «փիլիսոփայության» համար չհայիոյես» – это я написал на скорую руку только для тебя. Страшная тоска, Пао! Тяжкая тоска⁶⁷! Քոնն Վահան»⁶⁸:

Ամփոփելով պետք է նշել, որ հենց իր՝ Անահիտ Մակինցյանի խոսքով, գրքույկում մեջբերված հատվածները մի չնչին մասն են Պողոս Մակինցյանի արխիվի: Այսօր հստակ հնարավոր չէ ասել, թե ինչ է ներառում այդ արխիվը, բայց կարելի է ենթադրել, որ դա մի անգին գանձ է՝ հայ ժողովրդի մշակույթի համար: Մակայն առավել ցավալի է այն, որ ոչ միայն տեսանելի չեն արխիվի վերադարձի ուղիները, քանի որ Ա.Մակինցյանը խուսափում է դրան վերաբերող յուրաքանչյուր խոսքից, այլև ներկա պահին նույնիսկ հնարավոր չէ ասել, թե որտեղ է գտնվում արխիվը:

Геворг Эмин-Терян – Письма Ваана Терьяна в архивах Погоса Макинцяна. –

После смерти Ваана Терьяна его друг студенческих лет Погос Макинцян приступил к сбору наследия поэта, мотивируя, что в будущем опубликует их. Однако после публикации четырехтомника, Макинцян не сдал архив в государственный музей. В статье исследуются реальные причины такого поведения Макинцяна, а также отрывки тех писем, которые согласилась опубликовать дочь Макинцяна. Кроме того в статье показаны те фальсификации, которые в течение почти века последовательно осуществляет семья Макинцянов.

Gevorg Emin-Teryan – Vahan Teryan's letters in Poghos Makintsyans' archives. –

After Vahan Teryan's death his friend of student years Poghos Makintsyans has started collecting heritage of the poet, motivating that he will publish them in the future. However, after the publication of the four part book, Makintsyans has not passed the archives to the State Museum. In the article are studied the real reasons of Makintsyans' such kind of behavior and also the fragments of the letters which Makintsyans' daughter agreed to publish. Besides, in the article are shown falsifications, which are consistently performed by Makintsyans family for nearly a century.

⁶³ «Աստծով»:

⁶⁴ «Այդպե՛ս է: Հետազոտի՛ր: Ով Հերոդոտոս»:

⁶⁵ Նույն տեղում, էջ 37:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ «Ես դա արագ գրել եմ միայն քեզ համար: Մարսափելի ծանձրույթ է, Պաո: Մոռալ ծանձրույթ է»:

⁶⁸ Նույն տեղում, էջ 38:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՍՈՍ ՄԱՀՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՌԴԱ ՄԱՐՀԱՏՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հոդվածում դիտարկվել են Հ. Սահյանի քնարերգության մեջ հաճախադեպ ու վարպետորեն գործածված կրկնությունները, որը խոսում է մեծ քնարերգուի ստեղծագործական նախասիրության մասին: Սահյանի քնարերգության մեջ կրկնվող ամեն մի հնչյուն, բառ ու բառակապակցություն, տող ու նախադասություն խոր խորհուրդ ունեն իրենց մեջ և գործածվում են որպես պատկերաստեղծ արտահայտչամիջոցներ և շեշտում հեղինակի՝ մեծ սիրուց, մեծ տառապանքից ու մեծ երազանքներից ծնված հուզառատ ապրումները:

Բանալի բառեր. կրկնություն, քնարերգու, ստեղծագործական նախասիրություն, արտահայտչական և պատկերավորման միջոցներ, հուզազգացական ապրումներ, ռիթմ, մեղեդայնություն:

...Տիեզերքն է ինձանով լի
Թե՛ ես եմ լի տիեզերքով...

Հարուստ ու բազմազան են Սահյանի բարձրարվեստ քնարերգության մեջ գործածված լեզվառճական հնարները: Այստեղ ոճույթներ են դառնում հնչյուններն ու բառերի ձևախմբաստային խմբերի յուրաքանչյուր միավոր, խոսքի մասերի ձևաբանական առանձնահատկություններ, շարահյուսական դարձույթներ, պատկերավորման ու արտահայտչական բազմազան միջոցներ: Մենք պիտի դիտարկենք դրանցից մեկը՝ կրկնությունները, որոնց հաճախադեպ ու վարպետ գործածությունը խոսում է մեծ քնարերգուի ստեղծագործական նախասիրության մասին: Նրա բանաստեղծություններում առկա բոլոր կրկնությունները ոչ թե ինքնանպատակ, այլ ոճական որոշակի նպատակներով են արվել. «Ամեն կրկնության դեպքում գրողը նոր գույն է տեսնում, նոր երանգ նկատում, նոր ձայն է լսում և ավելացնում է դրանք: Տարբեր տեսակի կրկնություններ ունեն լեզվական, ոճական-արտահայտչական տարբեր արժեքներ: Եթե կրկնավոր բառերը արտահայտում են հատկանիշի սաստկություն, բազմակիություն, բաշխականություն, ապա բառերի կապակցությունների, բանաստեղծական տների, պատկերների կրկնությունները շեշտում, ընդգծում են բառի, տողի, տան կարևորությունը, ուշադրությունը կենտրոնացնում դրանց վրա, դառնում ռիթմի, հանգավորման միջոցներ, որ մեծապես նպաստում են նաև հուզականության ուժեղացմանը: Կրկնությունները արտահայտչական տարածված միջոցներ են հատկապես ժողովրդական երգերում, գրույցներում և ունեն ընդգծված ժողովրդական երանգ»¹:

Սահյանի քնարերգության մեջ կրկնվող ամեն մի հնչյուն, բառ ու բառակապակցություն, տող ու նախադասություն խոր խորհուրդ ունեն իրենց մեջ և գործածվում են որպես պատկերաստեղծ արտահայտչամիջոցներ, շեշտում հեղինակի այս կամ այն տրամադրությունը, որը թափանցում է ընթերցողի ներաշխարհը,

¹ Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Եր., 1986, էջ 192:

վարակում նրան բազմաեղանի հույզերով: Կրկնություններով շեշտված նրա զգացում-ապրումները խորունկ ակունքներից են սնվում՝ մանկությունից, պատանեկությունից, հազար ցավ ու դավեր պարունակող ժամանակներից ու մարդակալիկ բազմաբնույթ հոգեվիճակներից, որոնցից ոչ մեկը խորթ չէ Սահյանին, որոնցից ոչ մեկը հպանցիկ ու մակերեսային արտացոլանք չէ, այլ խորունկ է, ներգործուն, բազմաշերտ՝ ծնված մեծ սիրուց, մեծ ատելությունից, մեծ տառապանքից, մեծ հիասթափությունից, մեծ երազանքներից: Ու մեծ, չափազանց մեծ է կրկնությունների դերը դրանք կարևորելու, ընդգծելու և առավել շեշտելու համար:

Բայց կրկնություններից նրա խոսքը չի երկարում, չի հոգնեցնում, միօրինակ չի դառնում, ընդհակառակը, տողից տող նոր պատկերներ ու էջեր են բացվում, իսկ խոսքը կարծես նույնիսկ սեղմվում է, դառնում ավելի հակիրճ, արագասահ: Այն կարծիքն է հայտնվել, որ «...նա իր որոշ ստեղծագործություններում, մեղմ ասած, հարկ եղածից ավելի է դիմում կրկնության ձևին, եթե չասենք՝ չարաշահում է այն»²:

Հ.Սահյանն ունի իր «արդարացումը»․ «Կրկնում եմ ես ինձ: Անշուշտ կրկնում եմ: Սիրում եմ արտի ինքնակրկնությունը, որ ամեն տարի կանաչում ու բերք է տալիս. Նրա բերքը նման է նախորդին, բայց ուրիշ է: Սիրում եմ ծառի ինքնակրկնությունը, հոսող ջրի ինքնակրկնությունը, լուսաբացների և մայրամուտների կրկնությունը: Առանց այդ կրկնությունների կյանք չկա, էլ ու՞ր մնաց ստեղծագործություն...»³:

Կրկնություններին անդրադառնալով՝ մենք նախ կբացահայտենք Սահյանի մի շարք բանաստեղծությունների թեմատիկ-գաղափարական շերտերի խորհուրդը, ապա կրկնությունների գործածության առանձնահատկությունները՝ որպես պատկերավորման կամ արտահայտչական ոճաստեղծ միջոցներ:

Բառի կրկնություններով բանաստեղծը բովանդակային մեծ խտացումների է հասնում, կատարում նուրբ ու խոր ընդհանրացումներ:

Նրա գրչի տակ շնչավորվում- անձնավորվում են Հայաստան աշխարհի բնության բոլոր մասնիկները՝ սարն ու ձորը, հողն ու ջուրը, արտն ու լորը, հայրենն ու հորովելը և, իհարկե, քարն ու քարափը: Պատահական չէր, որ նա կյանքի վերջին օրերին գրչնկներին առաջարկեց իր վերջին ժողովածուն վերնագրել «Քարե պատարագ»⁴...

Բանաստեղծը վարպետորեն բացում-բացահայտում է Հայաստանի խորհրդանիշներ դարձած բառերի խորհուրդը: Այդ խորհրդանիշներից մեկն էլ Հայաստանի **քարերն են**, որոնք կենսագրություն ունեն, ու Սահյանը մեկ առ մեկ ճանաչում է սարերն ի վար հոսող, երկինքն ի վեր հոսող, շանթ ու հողմից բեկված, թափառելուց հոգնած, պարիսպներից պոկված ու **քանի՜~ քանի՜ անգամ** շիկնած ու ահաբեկված, իրենց բախտի հետ հաշտված, մաշված ու տաշված քարերը, ճանաչում իրենց գույներով ու ձևերով, իրենց „երազանքներով,„ /«**Քարեր, քարեր Հայաստանի**»/ՀՄ-2-62/: Բանաստեղծության մեջ քանիցս կրկնվում է **քարեր** բառը, կրկնվում են նրան բնութագրող, նրա անցած ուղու մասին պատմող բառերը /բերվող հատվածում՝ **քանի** հարցահարաբերական դերանունը **անգամ** բառի

² **Ա. Պապոյան**, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր. Հ. Սահյան, Վ. Դավթյան, Եր., 1976, էջ 104:

³ Քննադատների ու բանաստեղծի երկխոսությունը, <<Սովետական գրականություն>>, 1970, համար 9:

⁴ Տե՛ս **Հ. Սահյան**, Քարե պատարագ, Հատընտիր, Եր., 2009, էջ, 6-րդ:

հետ, որով շեշտվում-ընդգծվում է **խորհրդանիշ** քարերի բազմիցս խոցված ու փորձված, լքված ու գրկված լինելու հանգամանքը.

...**Քանի՜, քանի՜** անգամ խոցված,
Փորձանքներում փորձված **քարեր**,
Քանի՜, քանի՜ անգամ լքված,
Քանի՜ քանի՜ անգամ գրկված,
Քանի՜, քանի՜, քանի՜ անգամ
Փրկված **քարեր** Հայաստանի...

Սահյանի քնարերգության մեջ **քարը** դադարում է սուկ **քար** լինելուց: **Քարը**՝ բանաստեղծության մեջ 66 անգամ կրկնված **քար** բառը ամփոփում է **66** հաստ-կանիշ, **66** խորհուրդ: Բայց բանաստեղծությունը կրկնություններից ոչ թե ծավալվում-ընդարձակվում է, այլ սեղմվում, դառնում է քարե համաձուլվածք, որը ոչ մի ավելորդ ելուստ չունի, կոկ է, հղկված ու ողորկ: **Քարը** հայ ժողովրդի անցած ճանապարհն է, Հայաստան աշխարհի բնությունը, հայի օջախը, հայի բախտն ու պատիժը, ոգին, թոփաթը, քարե մատյանը, Գեղարդն ու Գառնին, նաև գրահը, զենքը, զինվորը, ի վերջո՝ մենք... Բանաստեղծությունը կազմված է 66 պարզ համառոտ նախադասություններից, որոնց ենթական **քարն** է, բաղադրյալ ստորոգյալի հատկանիշ-ստորոգելիները՝ 65 գոյականներ /66-րդը **մենք** դերանունն է/: Ձեռն-ված են բոլոր հանգույցները: Անթերի ճշգրտությամբ են հանգավորված բոլոր տների համապատասխան տողերը, որոնք ապահովում են ստեղծագործության ռիթմը՝ այն դարձնելով քարե սիմֆոնիա.

...**Քարը**՝ թռիչք, **քարը**՝ մատյան,
Քարը՝ կոչ:
Քարը՝ ոգի, **քարը**՝ ուստան,
Քարը՝ ոճ:

Քարը զայրույթ, **քարը**՝ զրահ.
Քարը՝ զենք:
Քարը՝ զորեղ, **քարը**՝ զինվոր,
Քարը՝ մենք: /ԿԿԱ-15/

Կրկնվող յուրաքանչյուր բառ ու տողի մեջ խորհուրդ կա, իմաստ, որը բացահայտելն էլ դառնում է բանաստեղծի շեշտադրված նպատակադրումը:

«Բառերի և բառակապակցությունների կրկնությունները, անկախ դիրքից, ընդգծում, ավելի առարկայական երանգ են հաղորդում բանաստեղծական խոսքին: Տարածված են նաև տողերի կամ բառակապակցությունների կրկնությունները, /վերջույթ/, որոնք ոչ միայն խոսքին հաղորդում են հուզականություն, երաժշտականություն, այլև նպաստում են բանաստեղծական տողի հանգավորմանն ու ապահովում անցումները բանատողերի միջև»⁵:

Քարը թերևս ամենագործածական գոյականներից մեկն է Սահյանի երգերում: **Քարը** մե՛կ գոյական է, մե՛կ դառնում է ածական, մե՛կ՝ բայ, մեկ բարդվում է ու ածանցվում, գործածվում մե՛կ ուղիղ, մե՛կ փոխաբերական իմաստներով, ստեղծում բնանկար, պատմություն, դառնում **դրախտի պատկեր**՝ կրկնությամբ խորացնելով, ընդգծելով **քարի** թարմ ու ինքնատիպ մեկնությունների հարստությունը, ընդգծելով **դրախտի քարի** արժեքն ու **քարե դրախտի** գոյության խորհուրդը: Սահյանի բանաստեղծություններում կրկնության առավել հաճախ հանդիպվող ձևերից է շարահյուսական այն կառուցվածքը, որի դեպքում բանաստեղծության բոլոր տողերը կամ դրանց մի մասը սկսվում են միևնույն բառով, բառակապակցությամբ կամ արտահայտությամբ.

⁵ **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 363:

Իմ քարակուռ,
Իմ քարքարոտ,
Քարե սարսուռ,
Քարե կարոտ:
Քարե ծաղիկ,
Քարե մրմուռ,
Քարե ալիք,

Եվ քարե գուռ:
Քարե մի վանք,
Քարե մի տուն,...
Քարե ճախրանք,
Քարե միտում:
Դրախտի քար,
Քարե դրախտ... /ՂԾ, Քարե դրախտ-28/

«Քարափների երգը» ժողովածուում քարափները դիտվում են իբրև բարության, մարդկայնության աղբյուրներ: Առհասարակ Սահյանի ստեղծագործության մեջ և հատկապես այս գրքում լայն տեղ է գրավում քարափը՝ իբրև խորհրդանիշ: Այդ երևույթին տարբեր բացատրություններ են տվել: Վ. Դավթյանն, օրինակ, մի հոդվածում դա բացատրում է Սահյանի՝ ծննդավայրի զանգեզուրյան ժայռերն ու քարափները պոեզիա բերելու միտումով: Մեկ ուրիշը գտնում է, որ, լինելով քարի աշխարհի ծնունդ, Սահյանն արտահայտում է իր ծննդյան շարժառիթը՝ «Քարերից ծնված բանաստեղծությունը»: «Քարը,- գտնում է Վլ. Գուսեր, - Հայաստանի կոլորիտն է, ֆոնը: Այն հայրենիքի խորհրդանիշն է. այն ինքը աշխարհի «իրողությունն է»⁶:

Ընթերցողը անձանձրույթ հետևում է բանաստեղծի մտքի ճախրանքին, որ քարին ու քարաձևերին շունչ ու թներ է տալիս, ոգի, բովանդակություն, դարձնում գոյության ու արարչագործության խորհրդանիշներ: Սահյանը միաժամանակ ոճական մի քանի հնարներ է կիրառում նույն բանաստեղծության մեջ: Ու թեև մեր նպատակը գերազանցապես կրկնությունների քննությունն է, սակայն անհնար է շրջանցել վերջիններիս հետ ներդաշն կիրառվող ոճական մյուս միջոցները՝ հարակրկնությունները, վերջույթը, աստիճանավորումը և խոսքին բարեհնչունություն ու երաժշտականություն հաղորդող բաղաձայնությունները, տաղաչափական հետաքրքիր դրսևորումները և այլն, որոնք բացառիկ բարձր արվեստով են գործածվում նրա երգերում:

Քարե դրախտի նկարագրությունը շարունակվում է «**Ու որ նայում եմ**» բանաստեղծության մեջ/ՄԲ-30/: Սահյանը **քարե** ածականի կրկնությամբ կերտել է Հայաստանի **քարե** հուշարձանը, Հայաստանի **քարե** հարթաքանդակը: Եթե «Քարը» բանաստեղծության մեջ քարը գործածվում էր որպես գոյական, այստեղ արդեն այն դարձել է ածական և **երեսուն տողում** կրկնվել **երեսուն անգամ**: Այստեղ ամեն ինչ **քարե է՝ արցունքն ու ժպիտը, խաչերն ու մագաղաթները, բերդերն ու վանքերը, քիվերին թառած արծիվներն ու ծաղկունքը**.

Ուր որնայում եմ, **քարե բարձունք է,**
Քարե արցունք է, քարե ժպիտ,
Քարե սարսուռ է ու քարե սունկ է,
Քարե ծաղկունքի քնքշանք է բիրտ:

Քարերի վրա **քարե վագրեր են,**
Ուր որ է պիտի պատռեն իրար,
Քարե երդեր են, քարե վանքեր են,
Քարե հավքեր են քիվերն ի վար:

Սահյանի կրկնությունները բացառիկ բարձր արվեստով են կիրառվում, բացառիկ ճաշակով են ընտրված ու անկրկնելիության չափ ինքնատիպ են:

Այնքան բուռն ու անեզր է Սահյանի սերը հայրենի եզերքի շնչավոր ու անշունչ բոլոր առարկաների ու երևույթների նկատմամբ, որ մի անգամ ասել-ընդգծելով ասես սիրտը չի հովանում, չի հանգստանում. կրկնում է ու նորից կրկնում,

⁶ Մ. Աղաբաբյան, Արդի հայ գրականության պատմություն, 2, ԳԱ, Եր., 1993, էջ 342:

կրկնում այնքան ու այնպես, որ բնապատկերը, իր ողջ գեղեցկությամբ հմայելով, հասնի բոլորին. Եթե ոչ կրկնությամբ, ուրիշ ինչպե՞ս ներկայացնի այն **թելիկ-մե-
լիկ առունները, ուլունք- ուլունք մաստրները...** Հինգ տան մեջ բանաստեղծը հինգ անգամ կրկնում է **թելիկ-մելիկ առու, ուլունք- ուլունք մաստր** տողերը.

Թելիկ-մելիկ առու,

Ուլունք-ուլունք մաստր...

Այցելության գալու

Անրջանքներ լազուր:

Թելիկ-մելիկ առու,

Ուլունք-ուլունք մաստր...

Մամուռի տակ՝ մի բուռ

Պատանության մասունք:

Թելիկ-մելիկ առու,

Ուլունք-ուլունք մաստր.../ՀՄ 2-383/

Բանաստեղծի հայրենասիրական զգացումը իր շիկացմանն է հասնում «**Հայաստան ասելիս...**» բանաստեղծության մեջ: **Հայաստան** հատուկ անունը կրկնվում է ութ անգամ, **Զգիտեմ ինչու՝ է այդպես** տողը՝ երեք: Սահյանը սիրո խոստովանություն չի անում Հայաստանին. կարծես ինքն անգամ «**չգիտի**» իր ճարտասանական հարցերի պատասխանները. **այտերը այրվում են, ծնկները՝ ծալվում, շրթունքը ճաքում է, աչքերը՝ լցվում, թևերը բացվում են Հայաստան ասելիս**, բայց «**չգիտի**»՝ **ինչու է այդպես...** Նրա ճարտասանական հարցերի պատասխանը գիտի ընթերցողը...

Այսպիսի տիեզերաչափ սիրով իր լեռնաշխարհը սիրող մարդը կարո՞ղ է թողնել ու հեռանալ, վեր կենալ գնալ ու մնալ ուրիշ տեղ... «**Ախր ես ինչպես...**» բանաստեղծությունը այդ մեծ, հոգին ավիեափ լցրած սիրո՝ **կրկնություններով արտահայտված** գեղարվեստական հզոր ու շռայլ պոռթկումն է: «...» **Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան, Ախր ուրիշ տեղ հորովել չկա, Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում Մեփական հոգին խորովել չկա**» և այլն և այլն: Խնդիրը ոչ միայն այս բանաստեղծության լուռ տառապանքի բովանդակությունն է, այլև կառուցվածքի նորությունը: Սահյանի բառերի դասավորման սարքն ու կարգը, որ իսկապես երևույթ է հայոց բանաստեղծության մեջ⁷, գրում է գրականագետ Ս. Աղաբաբյանը⁷:

Սա տուկ բանաստեղծություն չէ, սա դա՛ս է, խորհու՛րդ է, պատգա՛մ է, կո՛չ է բոլոր նրանց, ովքեր թողնում-լքում են հայրենի եզերքը և հեռանում-գնում... **Ախր** վերաբերականը կրկնվում է 15 անգամ, **Ախր ես ինչպես վեր կենամ գնամ, Ախր ես ինչպես ուրիշ տեղ մնամ** երկտողը՝ երեք անգամ, **Ախր ուրիշ տեղ** բառակապակցությունը՝ **8 անգամ**, իսկ ուրիշ տեղ մնալու ժխտումն արտահայտվում է **9 անգամ կրկնվող չկա** բառով, որ ժխտում է ուրիշ տեղ հայրենի հարազատ մասունքների գոյությունը, ուրեմն՝

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...

Բազմաբնույթ կրկնություններով բանաստեղծը բնության մի նոր պատկեր է «նկարել», կարոտի մի նուրբ երգ հյուսել «**Հեքիաթ**» բանաստեղծության մեջ, որի

⁷ Տե՛ս Ս. Աղաբաբյան, նույն տեղում, էջ 358:

հերոսը բնաշխարհի սարերի, ձորերի ու լոթերի կարոտից կրակ կտրած **երկինքոս մի պատանի** է, որին մանկությունը հայտնվում է միայն երագներում՝ հիշեցնելով փոքրիկ մի դրվագ՝ կտրից չիր գողանալը, որի ամոթից կարմրելն ու կծկվելը, քրտնելն ու ջուր դառնալը մեծանալուց հետո այսպիսի երգ-հեքիաթ է դարձել...

Ամբողջ բանաստեղծությունը **կրկնվող բառերով ու բառաձևերով, կրկնվող նույնահունչ բաղաձայններով** վրձնած մի կտավ է՝ հայկական բնապատկերով՝ երկինք մխրճված սարեր, երկնքով լցված ձորեր: Ըստ որում, **երկինք** բառը գործածվում է գրեթե բոլոր հոլովներով, ապա դառնում ածական **/երկինքոս/**: Երրորդ և չորրորդ տողերում **թուխ, թուխս, թխիկ** նրբահունչ բառերի **թ-խ, գ-կ բաղաձայնություններն են կրկնվում**՝ բանաստեղծությունը դարձնելով մեղեդի:

**Սարերով լիքը երկինք,
Երկինքով լիքը սարեր...
Հասկերի թուխ ստվերում
Թուխս նստած թխիկ լորեր...**

.....
**Սարերով լիքը երկինք,
Երկինքով լիքը ձորեր.../ԿԿԱ-6/**

Ակամա հիշում ես Պուշկինի բանաստեղծություններից մեկի մասին Բելինսկու հիացական բացականչությունը, որ կարելի է տարածել Սահյանի շատ բանաստեղծությունների վրա. «Ի՞նչ է սա՝ բանաստեղծություն⁸, նկարչություն⁹, թե՞ երաժշտություն,- և ապա բացականչում,- թե՞ բանաստեղծություն է, թե՞ նրկարչություն և թե՞ երաժշտություն...»

Ինչպես Մեծ Լոռեցին է ասել. «Կարոտից է ծնվում ամեն լավ բան»: Կարոտից ծնված քանի՜ երգեր ունի Սահյանը, որոնցում միևնույն պատկերի կրկնությամբ ստեղծված նուրբ քնարականությամբ նա մանկության անմոռաց աշխարհի գեղեցկություններն է բացում.

**Մանկության աշխարհ, ի՞նչ ասեմ հողիդ
Եվ որտե՞ղ փնտրեմ քեզ պես աշխարհ...
Հովիտը՝ երկինք, երկինքը՝ հովիտ,
Քարը քարայծ է, քարայծը՝ քար.../ԿԿԱ-21**

Բանաստեղծության մեջ պատկերները բազմաթիվ են՝ համեմված համեմատություններով, փոխաբերություններով, անձնավորմամբ.

Սարը հեծյալ է սարի թամբին, Ժայռը կոտրված կուժ է՝ ջրի ճամփին Միաձանով է քրտինքը սրբում Իմաստուն հասկը մայրամուտին: Աղբյուրի ջուրը՝ քերծերի տակից Մանուշակ կերած քարայծի կաթ:

Կարդալով Սահյանի բանաստեղծությունները՝ Լև Օզերովը գրել է. «Դուք խոսքի նկարիչ եք: Բնանկարի մեջ Դուք կարողանում եք տալ դիմանկար, դիմանկարի մեջ՝ բնանկար:

...Սարի ստվերը ծառին է փարվում,
Ժայռի ստվերը ծառին է փարվում:

Դա ես տեսնում եմ: Դրանք բառեր են, որ թղթից պետք է փոխադրվեն կտավի վրա: Այնպես, ինչպես Ձեր մյուս տողերը: Խոսելով կտավի մասին, ես պետք է խոսեմ նաև գույների մասին: Դուք կոլորիտի վարպետ եք: Ձեր ներկապնակի շոալությունը պետք է զգա յուրաքանչյուր անկանխակալ մարդ⁸:

⁸ **Լև Օզերով**, Նամակ Համո Սահյանին, Մեզամ բացվիր ժողովածուի վերջաբանը, Եր., 1972, էջ 269:

Նույն եղանակաժամանակային ձևերի /սահմանական եղանակի անկատար ներկա/ կրկնությամբ /եռատողերի սկզբում և վերջում/ բացառիկ մի բնապատկեր է բացվում ընթերցողի առաջ **«Հողմը անտառում»** բանաստեղծության մեջ: Այնքան կենդանի, այնքան բնական է ներկայացվել հողմակոծ անտառը, որ ընթերցողը զգում է բնության տարերքի ուժը տապալվող կաղնիների վրա, հավքերի ու դատարկվող բներից փախչող ձտերի դողն ու սարսուռը, նրանց հառաչն ու շառաբ... Բանաստեղծի լեզուն նման է ջրվեժի, որից հզոր հորձանք են տալիս հնչյունները, բառերը, պատկերները... իսկ ջրվեժը տարերք է, գեղեցկություն. կանաչ տարերք է դառնում նաև անտառը հողմի ժամանակ... Սա բնականորեն Սահյանի՝ Այվազովսկու վրձնին հատուկ կտավ է, մեր անտառերգության «Իներտորդ ալիքը»... Այնքան մեծ է պատկերի տեսողականությանն ու այնքան բնական տարերքի աղմուկի հնչեղությամբ, որ հողմի ժամանակ երբեք անտառում չեղած մարդը լիարժեք պատկերացում է կազմում երևույթի մասին:

«Կարծես բնությունը իր հավերժապտույտ կրկնությունների մանրապատկերներով տեղափոխվում է Սահյանի բանաստեղծության մեջ, որի կառուցվածքը ևս բնության ձևերի հայելային արտացոլքն է դառնում»⁹:

Նկարագրությունը կատարվում է գերազանցապես սահմանականի անկատար ներկայի ժամանակաձևերով ու գոյականներով, ու խոսքը դրանից շահում է՝ դառնալով արագասահ այն հողմի պես, որ իր ճանապարհին ավերել է գույներն ու գեղեցկությունները, խաթարել խաղաղությունը... Անտառի պատկերը հողմը խեղել է՝ իրենից հետո թողնելով բնության փլատակները. անթառ հավքեր, շյուղերից կախված դողացող ձտեր, շառաչող կաղնիներ, իրար կառչած, իրարից փախչող հողմահալած ծառեր՝ հսկաներ **տապալված** և բներ **խափանված**:

Բայց հողմերը անցողիկ են, իսկ բնությունը՝ մշտանորոգ. վերջում կրկնվող **Եղև էք երբևէ անտառում...** առաջին եռատողի խորհուրդը հենց սա է... դարձյալ ճշում են հավքերը, թռչում են մեղուները... ծովի պես խաղաղվել է անտառը. կյանքը շարունակվում է... /ԿԿԱ-34

«Նրա հոգու գաղտնարաններում,- գրում է Ս. Աղաբաբյանը,- երևի թե կան բնության տեսիլքների անսպառ պաշարներ, մեծաքանակ գաղտնիքներ, որոնք էլ ճակատագրական ներշնչանքի պահերին վերածում են բանաստեղծական հայտնությունների»¹⁰:

Ասում են՝ իսկական սերը ազահ է և անկուշտ, սիրո մեկ խոստովանությունը քի՛չ է, քի՛չ է, այն անընդհատ պիտի կրկնել... Սահյանը քա՜ջ գիտի այս հավերժական ճշմարտությունը և պատրաստ է հազար անգամ կրկնել **Նրա** մոտ գնալու և իր սիրո զգացման մեծությունն ու չափն արտահայտելու ցանկությունը: **«Կգամ»**-ը սիրո անգուգական պոռթկում է: Սիրած կնոջ մոտ գնալու բուռն ապրումը խորացնում ու խտացնում է բանաստեղծությանը հուզական անկրկնելի արտահայտչականություն հաղորդող **տասվեց անգամ** կրկնված **կգամ**-ը... Սերը սահմաններ չի ճանաչում, ժամանակ ու տարածություն չի ճանաչում, որովհետև սիրող էակը եթե անգամ այս աշխարհում չլինի, **կգա**, եթե անգամ լույսը մարած ու ինքն էլ կուրացած լինի, **կգա**, եթե անգամ հազար սարի ետև հազար կապով կապված ու հազար խաչով խաչված լինի, միևնույն է, **կգա**, եթե չկանչի էլ, **կգա**,

⁹ Ս. Հովակիմյան, Համո Սահյան, Պոետիկայի հարցեր, Եր., 2008, էջ 169:

¹⁰ Ս. Աղաբաբյան, նույն տեղում, էջ 352:

կգա գետնի տակից, հեռավոր ու անհայտ մի մոլորակից **կգա...** Թվում է՝ ոչ թե կարդում, այլ լսում ես բանաստեղծի ձայնը, որ գալիս է հեռավոր մոլորակներից, երկրի ընդերքից, Գյազբեից ու Ադոթասարից... Մքանչելի այս բանաստեղծությունը այսքան ներգործուն էր լինի, եթե չկրկնվեր **կգամ**-ը: ...

Եթե մինչև անգամ մեքս ծալված լինի,
Եթե մինչև անգամ ոտքս վառված լինի,
Եվ ճակատիս հազար հողմի հարված լինի,
Միննույն է, **կգամ**, ուր էլ լինեմ, **կգամ**:
Գետնի տակից **կգամ**,

Մի հեռավոր անհայտ մոլորակից **կգամ**:

Կգամ ու թափ կտամ

Հարդագողի փռշի շենքիդ վրա: /ՄԲ-80/

Անգուգական լեզվական արվեստով են հյուսված նրա երգերը. «Նրա հըն-
չումները մերթ նուրբ են ու մեղմ՝ թավշյա խավի պես, մերթ խրոխտ են, կայծակ-
նացայտ ու շանթող, ինչպես սամում, միշտ մնալով արինքնող ու անկրկնելիորեն
ինքնատիպ: Խոսքը ձուլյ է ու միահյուս՝ իր հայրենի ժեռ ապառաժների պես, դո-
ղանջուն է ու գեղեցիկ, ինչպես հարազատ Զանգեզուրի լեռնային աղբյուրները,
մաքուր ու վճիտ, ինչպես տառապանքի արցունքը՝ սիրահարի տամուկ աչքերի
մեջ»¹¹:

Կրկնությունները բացում-բացահայտում են նաև Սահյանի քնարերգու-
յան խոհափիլիսոփայական խորունկ խորքերի անձնական ու անանձնական
շերտերը: Դրանցում հոլովվում-քննության են առնվում կյանքն ու աշխարհը,
բնութագրվում բոլոր կողմերով՝ բացահայտելով տաղանդավոր Խորհողի աշ-
խարհաճանաչողության բացառիկ կարողությունները, ինքնատիպ լեզվամտածո-
ությունը: Նրա խոհերը լույս ու մթին աշխարհի մասին են, աշխարհի, որ այն-
պե՛ս բազմազան է, այնպե՛ս անբացատրելի, այնպե՛ս առեղծվածային: «**Աշ-
խարհն այնպես լույս ու մթին**» բանաստեղծությունը /ԿԿԱ-43/ քսանչորս տողից է
բաղկացած, որից քսաներկուսն սկսվում են **Աշխարհն այնպես** բառերով, այ-
սինքն՝ **հարակրկնությամբ /նույնասկիզբ/**, որով հենց սկզբից ընթերցողի ուշադ-
րությունը կենտրոնանում է հեղինակի աշխարհաբնութագրման վրա, որ կա-
տարվում է **հակադրություններով**: Տողերն իրարից տարբերվում են աշխարհը
բնութագրող հականիշ բառերով՝ **լույս ու մթին, պարզ ու խրթին, շիտակ ու խոր,**
հոգնածխոր, բաժան-բաժան, խենթ ու խելոք, անօգնական, անտիրական: Սրանք
ընդգծում են հակադրվող բառերի իմաստը և խոսքը դարձնում արտահայտիչ ու
պատկերավոր: Աշխարհը ավի մեջ առած՝ բանաստեղծը շարունակում է աշ-
խարհի քննությունը՝ ընթերցողի ուշադրությունը չշեղելու համար շարունակ
շեշտելով **աշխարհ** գոյականը.

Ազգեր են հեռանում **աշխարհից**, Ազգեր են ներխուժում **աշխարհը**, Ծովերը
պատաններ են դառնում, Լեռները՝ տապաններ, բայց դարձյալ

Աշխարհը չի շահում դրանից,

Դրանից չի տուժում **աշխարհը**.../ԿԿԱ-45/

Սահյանի քնարերգությանը բնորոշ են տարբեր խոսքի մասերի՝ հատկա-
պես գոյականների, դերանունների, բայերի, շաղկապների հարակրկնություննե-

¹¹ Տե՛ս **Արտ. Պապոյան**, նույն տեղում, էջ 161:

ըր: Ահա մի օրինակ, որի տողերն սկսվում են դերանուններով ու վերաբերականներով.

Ուրիշ ամպեր են նստել սարերին,
Ուրիշ մամուռ է ծաղկել քարերին,
Ուրիշ աչքեր են նայում արևին:
Միայն սարերն են նույնը մնացել,
Միայն քարերն են նույնը մնացել,
Միայն արևն է նույնը մնացել.../ՄԲ-33/

Ահա և բայական հարակրկնությամբ և վերջույթով կառույցի օրինակ.

Գնամ հավքերիս ներգաղթն **ընդունեմ**,
Գնամ դաշտերիս դրախտն **ընդունեմ**...

Մարդասիրությունն ու բարությունը Սահյանի քնարերգության հնչյուն լաբերից են, նրա գաղափարախոսության ուսանելի շերտն ու խորհուրդը: Մարդուն մարդ տեսնելը, մարդ դարձնելը հայոց մեծերի՝ Նարեկացու և Թումանյանի, Իսահակյանի ու Սևակի հետ նաև Սահյանի երազանքն էր: Բնությունն է ամենամեծ ուսուցիչը, նրանից պիտի մարդկային լավագույն հատկանիշներ սովորի մարդը: Բոլոր տողերն ունեն կրկնությունների նույն կաղապարները՝ գոյականների **բացառական հոլովաձևեր+սովորեմ+անորոշ դերբայ +մարդուն** գոյականի հայցական հոլովաձև. Բոլոր տողերը իրարից տարբերվում են բացառականով դրված գոյականներով ու անորոշ դերբայներով, որոնք էլ ունեն բացառականի ու անորոշի նույն կրկնվող վերջավորությունները՝ **ից, ել**:

«**Հողից սովորեմ**» բանաստեղծությունը մարդու հանդեպ ունեցած անանձնական սիրո և առարկայական աշխարհի բոլոր տարրերից մարդուն անհրաժեշտ ու օգտակար գծերը սովորելով՝ մարդուն Նարեկյան ինքնամաքրումի մղելու, մարդու մեջ մարդուն արթնացնելու անգուսպ ձգտումն է.

Հողից սովորեմ՝ գոհացնել **մարդուն**,
Հովից սովորեմ՝ հովացնել **մարդուն**:
Ծովից սովորեմ՝ խորացնել **մարդուն**,
Հասկից սովորեմ՝ զորացնել **մարդուն**:
...**Ծաղկից սովորեմ**՝ հիացնել **մարդուն**:
Սիրուց սովորեմ՝ վերածնել **նրան**...

Լուսից սովորեմ՝ արթնացնել **մարդուն**:/ ԿԿԱ-52/

Ինչպես երևում է օրինակներից, հարուստ ու բազմազան են **հնչյունական, ձևությային, բառապաշարային ու քերականական դրսևորումների** կրկնությունների խորհուրդները, նրանց ռճական արժեքն ու հուզարտահայտչական հնարավորությունները: Տարբեր խոսքի մասեր օժտված են ռճական տարբեր առանձնահատկություններով, որոնցից յուրաքանչյուրի կրկնության դիպուկ, ճաշակով ու վարպետ կիրառությունը իմաստային ու հուզական նուրբ ելևէջումներ է հաղորդում խոսքին:

Մերերով, երազներով, տառապանքով ու հուսախաբությամբ, ցավով ու կարոտով լի տարիներն է խտացնում հուզարտահայտչական խոր նրբերանգներով լի «**Տարիներս**» բանաստեղծությունը: 17 անգամ կրկնվող **տարիներս** գոյականի կրկնության մեջ մի ամբողջ կյանք է ամփոփված, որը մի շարք ածականներից բացի, բնութագրվում-գնահատվում է նաև **գույների լեզվով, գույների կրկնությամբ՝ Կանաչ, կարմիր, Սև, սպիտակ** /առաջին և վերջին տներում/: Ի տար-

բերություն **կանաչ ու կարմիր** գույների՝ **սև**-ը նույն տողում շեշտված կրկնվում է երեք անգամ.

...Որքան ցավեր տվին, առա՛ն,

Որքա **սևե՛ր, սևե՛ր, սևե՛ր.**,

Տարինե՛րս, տարինե՛րս:

Նույն հատվածում կրկնվում են **չասված** բայն ու **սերե՛ր** գոյականը.

Որքան չասված խոսքեր տարան,

Որքան չասված սերե՛ր, սերե՛ր,

Տարիներս: /ՔԵ-181/

Բանաստեղծությունը կյանքի մայրամուտին տարիների հեռվից հեռվում մնացած, անդառնալիորեն անցած տարիներին ապրածի ու չապրածի մորմոքն է, գղջումը, ափսոսանքը, զգացումներ, որ ավելի են ուժգնանում դրանք շեշտելու թերևս ամենագորեղ միջոցի՝ կրկնությունների շնորհիվ:

Առաջին ու վերջին տողերի **տարիներս** ասես իրենց շրջանի մեջ են առնում մի ամբողջ կյանք՝ բացելով, ապա փակելով ներկայացվող բանաստեղծություն-դրամայի վարագույրները...

Եթե անժխտելի է, որ Սահյանի քնարերգությունը գույն ու մեղեդի ունի, ապա անժխտելի է նաև, որ Սահյանը դրամատուրգ է. մի շարք բանաստեղծություններ նրա անձնական ու անանձնական դրամայի արարներն են, պատկերներն են:

Իր ապրած տարիներին արածների ու չարածների համար դրամատիկ խոհերից ծնված այս բանաստեղծությունը համահունչ է Տերյանի՝ ասույթ դարձած բանաստեղծությունը.

...Արածներիդ համար երբեք չես ասելու ախ ու ափսոս,

Չարածներիդ համար պիտի ասես ափսոս, հազար ափսոս,

Վահան Տերյանն ասաց.- ավա՛ղ, ինչո՞ւ դրի սրտիս կապանք,

Քանի՜ սերեր, քանի՜ հուրեր լուռ հանգցրի. հազար ափսոս...

Գունային **ածականները** խորհրդանիշներ են, որոնց կրկնությունները ընդգծում-շեշտում են մերթ մանկության ու պատանության պաճառ, զարնանաբույր օրերը, մերթ երիտասարդության հրալյքոտ, կյանքով լի օրերը, մերթ ցավն ու հրճվանքը ու մերթ էլ դատա՛րկ-դատա՛րկ օրերը: Այդ օրերը գույներ ունեն՝ **կանաչ, կարմիր, դեղին ու սպիտակ...**

...Հետո եկան, եկան...**Կանաչ օրեր** եկան,

Կարմիր օրեր եկան, **դեղին օրեր** եկան...

Եվ **սպիտակ:**

...Ու չեմ հիշում ոչինչ: Եվ չի եղել ոչինչ.

Ոչ կանաչ է եղել, ոչ կարմիր է եղել,

Ոչ դեղին է եղել... Կյանքս թուղթ է

կարծես

Դեռ սպիտակ: /ԿԿԱ-141/

Չկան դեպքեր, իրադարձություններ, բացատրություններ. Ամեն ինչ ասվում է գույների խոստուն լեզվով՝ **կանաչ, կարմիր, դեղին ու սպիտակ**, և ընդգծվում կրկնությամբ: Սակայն ցավով է արձանագրվում, որ մոռացվել-ջնջվել են բոլոր գույները, միայն **սպիտակն** է մնացել... Իսկ **ոչ** շաղկապի կրկնությամբ Սահյանը ընդգծում- ժխտում է իր չապրածը, իր չունեցածը, իր անկրակ այրվելը բոլորի համար.

Ոչ կարգին քնել եմ աշխարհում,
Ոչ կարգին արթուն եմ մնացել.
Ոչ տուն եմ ունեցել մի կարգին,
Ոչ կարգին անտուն եմ մնացել...

Սահյանի խոսքարվեստը գեղանկարչություն է, որտեղ կյանքը, օրերը, զբաղմունքներն ու բնության երևույթները գույներ ունեն, որոնք դառնում են պատկերավորման միջոցներ՝ մակդիրներ և կրկնությամբ խոսքին հաղորդում համաչափություն, ներդաշնակություն ու նուրբ երաժշտականություն. **կանաչ բույրեր, կանաչ սարսուռ, կանաչ շրշյուն, կապույտ թրթիռ, կապույտ ծիվ-ծիվ, կապույտ մորմոք:** Ու սրանց կողքին՝ **դեղին բեղերով բողբոջ, կարմիր կակաչ, ճերմակ թիթեռ՝ մոխրագույն հասկի** ուռած կոպերին, իսկ հնձած խոտերի վրա՝ հավքերի թափահարվող թևեր՝ որպես **սև ստվերների դրոշներ սև...** /ԿԿԱ-85/

«Կրկնության միջոցով ոչ միայն ապահովվում են չափածո խոսքի ռիթմն ու երաժշտականությունը, այլև զգալի չափով մեծանում է նրա հուզական ներգործությունն ու գեղագիտական արժեքը: Կրկնությունը դառնում է հույզի, ապրումի, տրամադրության դրսևորման միջոց՝ միահյուսելով մտքերն ու բանաստեղծերը: Եվ եթե դա կատարվում է լեզվական բարձր ճաշակով, չափի զգացումով, մեծանում է նրա հուզական ներգործությունը»¹²: Սահյանի խոսքի գեղարվեստական հնչեղությունը մեծանում է նույն հատվածում կրկնվող տարբեր խոսքի մասեր կիրառելու շնորհիվ: **«Խելքդ գլխի՛դ պահիր, հու՛յս»** բանաստեղծության մեջ առաջին հատվածում կրկնվում են նույն **շաղկապները, գոյականները, դերանունները**, միայն ածականներն են տարբեր՝ **եվ-տարիները- իմ+** տարբեր ածականներ.

Մի թե եկել են անցել
Բոլոր սերերը իմ սուրբ,
Եվ տարիները իմ սոթ,
Եվ տարիները իմ ցուրտ:

Մի այլ հատվածում կրկնվում են **ցուցական դերանուն+գոյական** բառակապակցությունները՝ ածական-որոշիչներով.

Ի՞նչ են ուզում ինձանից
Այս գիշերները մթին,
Այս վերհուշները անքուն,
Այս վերհուշները խրթին.../ԿԿԱ-205/

Խոսքի մասերից յուրաքանչյուրն իր իմաստային ու քերականական հատկանիշներով ոճական յուրատեսակ նրբերանգներ է հաղորդում խոսքին, արթնացնում ապրած տարիների, ապրած սերերի հուշերը:

Բանաստեղծությունն ավարտվում է առաջին քառատողի կրկնությամբ: Ոճական այս հնարանքը սաստկացնում է ասելիքի տպավորությունը:

Ժամանակի մակբայների կրկնությամբ ընդգծվում բնության հավերժության ու մարդու անցողիկության հակադրությունը: **«Կմբսեն, կտաքանան...»** փիլիսոփայական խոհում չգիտես՝ լեզվաոճական որ հնարն է առավել նպաստել՝ արտահայտելու այլևս անվերադարձ անցած օրերի ետ չգալուց ծնված թախիծը՝ աստիճանավորու՞մը, բառակրկնություննե՞րը, անձնավորու՞մը, փոխաբերություննե՞րը, բաղաձայնությունե՞րը, ընդհատու՞մը...

¹² Ս. Մարության, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2001, էջ 169:

Կմբսեն, կտաքանան,
 Կծաղկեն ձորերը **նորից**,
 Կքնեն, վեր կկենան
 Գյազբելիդ հովերը **նորից**,
 Տուն կգան, բուն կդնեն
 Քո **Լորի լորերը նորից**.
 Ափսո՜ւ, որ ետ չեն գալու
 Քո ապրած օրերը **նորից...** /ԿԿԱ-149/

Սահյանը, կրկնություններին զուգահեռ, միաժամանակ ոճական մի քանի հնարներ է կիրառում նույն բանաստեղծության մեջ, որոնք, բացառիկ բարձր արվեստով գործածվելով, խոսքին բարեհնչունություն ու երաժշտականություն են հաղորդում, բացահայտում ու հուզազգացական շեշտադրումներով ընդգծում բանաստեղծի թեմատիկ նպատակադրումները՝ ժողովրդի բախտ ու ճակատագիր, հայրենասիրություն, մարդ ու բնություն ...

Аида Саргатян – Сталистическое значение повторов в поэзии Амо Сагияна.

– В статье рассмотрены многочисленные повторы, мастерски использованные в поэзии Амо Сагияна, что говорит о творческих предпочтениях великого лирика. Каждый звук, слово и словосочетание, строка и предложение повторяющиеся в лирике Сагияна в себе глубокий смысл и используются в качестве выразительных и изобразительных средств, которые подчеркивают эмоциональные переживания автора, рожденные от великой любви, великих грез и страданий.

Aida Sarhatyan – Stylistic value repeats in poetry Hamo Sahyan. – Common and skillfully used repetitions of H. Sahyan lyrics were indicated in the article which speaks of the great lyricist creativity preference. Every sound, word, phrase, line or sentence repeated in Sahyan lyrics have deep advice in them and are used as expressions and author stress: emotional feelings born from great love, great suffering and great dreams.

ИГРА СЛОВ КАК ХУДОЖЕСТВЕННЫЙ ПРИЕМ

МАРАТ ЗУРАБЯН

Кандидат фил. наук, доцент

В статье анализируется функция игры слов в романе М. Булгакова «Мастер и Маргарита». У Булгакова игра слов чаще ориентирована не на комизм фразы, а ставит целью выделение мысли и сосредоточение на ней внимания через эффект неожиданности, «обманутого ожидания». Комизм, если он и есть, создает дополнительный, а не основной эффект. Случаи игры слов в романе обладают своей спецификой: они, как правило, ориентированы не на микроконтекст, а на контекст всего произведения и прежде всего работают на роман в целом.

Ключевые слова: Игра слов, Мастер и Маргарита, переводческое мастерство, адекватный перевод, оригинал, каламбур, омонимия, фразеология, inferнальный компонент, фразеологический оборот.

Игра слов является художественно выразительным элементом содержания литературного произведения. К тому же, нередко она обладает относительной автономией в тексте, представляя интерес и сама по себе. Не случайно игра слов так часто встречается в очень популярных сейчас мини-жанрах литературы: максимах, сентенциях, наконец, в пословицах. Что касается романа М.Булгакова «Мастер и Маргарита», то одна из ее разновидностей даже вырастает в самостоятельный мотив. В то же время игра слов встречается далеко не во всех произведениях литературы и поэтому с переводческой точки зрения представляет скорее узкоспециальную проблему: можно перевести не одно художественное произведение, практически не столкнувшись с нею. С другой стороны, есть произведения, изобилующие игрой слов (напр., «Алиса в стране чудес» или «Гаргантюа и Пантагрюэль») и, соответственно, накоплен опыт преодоления трудностей. Однако перевод игры слов по-прежнему представляет большой интерес, и суть этого интереса хорошо сформулировал А.В.Федоров, к определению которого часто апеллируют другие авторы: «в практической плоскости по особой трудности задачи, а в плоскости теоретической по чрезвычайной яркости соотношения между формальной категорией (омонимическое тождество или близость слов) и ее смысловым, в конечном счете образным использованием в контексте»¹.

В конечном итоге, перевод игры слов есть пробный камень переводческого мастерства, поскольку является, совершенно очевидно, творческой проблемой и, в то же время, показывает исполнительский характер этого творчества: в отличие от автора оригинала переводчик творит в четко очерченных рамках, переступить которые не может.

Среди классификаций игры слов наиболее логичной представляется та, в основу которой положены, в конечном итоге, уровни языка. В соответствии с ней игра слов может быть основана а) на созвучии, т.е. в конечном итоге, на фонетичес-

¹ **Федоров А.В.**, Основы общей теории перевода. – М., Высшая школа, 1983г., стр. 261

ком уровне языка; б) на многозначности слова, омонимии (совпадении внешней формы слов при несовпадении их значений) или паронимии (частичном совпадении формы и, как правило, родстве корней – и разнице в смысле), т.е. на лексическом уровне; в) на столкновении фразеологически связанного и поэлементного значений устойчивого оборота, т.е. на фразеологическом уровне.

Конечно, эта классификация, как и все классификации, несколько условна, поскольку в одной остроте могут сочетаться несколько признаков, относящих ее к разным уровням.

Приведем один пример:

- Ноблесс облич, - заметил кот и налил Маргарите какой-то прозрачной жидкости в лафитный стакан.

- Это водка? – слабо спросила Маргарита.

Кот подпрыгнул на стуле от обиды.

- Помилуйте, королева, - прохрипел он, - разве я позволил бы себе налить даме водки? Это – чистый спирт!

- Նոբլեսս օրիժ, - նկատեց կատուն և ինչ-որ թափանցիկ հեղուկ լցրեց ըմպանակի մեջ:

- Օդի է, - թույլ ձայնով հարցրեց Մարգարիտան: Վիրավորանքից կատուն վեր ցատկեց աթոռի վրա:

- Ողորմած եղեք, թագուհի, - խոխրոացրեց նա, - միթե ես ինձ թույլ կտայի տիկնոջն օդի լցնել: Սա մաքուր սպիրտ է²:

Обида кота и его явно риторический вопрос дают основания полагать, что даме предложат, по этикету, что-нибудь легкое, тем более, что лафит – сорт красного виноградного вина, и стакан не мог быть крошечным. Однако реализуется эффект обманутого ожидания: спирт еще гораздо крепче водки. Эта часть двусоставной остроты не имеет отношения к собственно игре слов. Однако в заключительной фразе есть и словесная игра – на многозначности слова **чистый**: реализуются сразу два значения: 1) не разбавленный, не разведенный; 2) изысканный, благородный – в противовес плебейской водке (ср. «чистая публика») Армянский перевод адекватен в смысле игры слов, хотя острота несколько смазана словом ըմպանակ – рюмка. Впрочем, здесь следует признать полную правоту переводчика, т.к. в дальнейшем и Маргарита, и Бегемот пьют спирт стопками, а это небольшой стаканчик. В оригинале здесь еще раз реализуется эффект обманутого ожидания.

Совершенно очевидно также, что при игре слов ярче, чем где-либо, язык выступает именно в своей эстетической функции, реализуемой в художественной речи в контексте словесно-художественного творчества, в том числе в индивидуально-авторском употреблении.

Определенных оговорок требует сам выбор термина. Во многих авторитетных изданиях каламбур и игра слов рассматриваются как синонимы. Однако ряд исследователей считает, что каламбур по значению уже, чем игра слов, которая, в свою очередь, уже понятия «острота». Так, например, из теоретиков перевода счи-

² **Булгаков М.**, Мастер и Маргарита. Собрание сочинений в 5 томах, т. V. – М., Художественная литература, 1990, стр. 268.

Բուլգակով Մ., Վարպետը և Մարգարիտան – Երևան, Սովետական գրող, 1985. է. 308. В дальнейшем все цитаты оригинала даются в тексте работы по данному изданию с указанием страницы.

тают С.Влахов и С.Флорин³. Мы присоединяемся к этой точке зрения. К тому же, каламбур преследует, прежде всего, комический эффект. Между тем, игра слов может быть ориентирована не на комизм фразы, а ставит целью выделение мысли и сосредоточение на ней внимания через эффект неожиданности, «обманутого ожидания». Именно поэтому, например, в английской устной и письменной речи благодаря свойствам английского языка с его меньшей слитностью устойчивых сочетаний чем, скажем, в русском, прием обновления фразеологических единиц широко применяется во всех видах эмоционально окрашенной речи «и по праву может считаться характерной особенностью стилистики английского языка»⁴.

В романе М. Булгакова речь может идти в основном именно не о комическом эффекте, который, если он и есть, создает дополнительный, а не основной эффект.

Известно, что М. Булгаков, как и В.Маяковский, был прославленным острословом своего времени, не только как автор, но и просто как человек. Этот факт зафиксирован не только в воспоминаниях современников, но даже в энциклопедических словарях и справочниках (в словарных статьях «остроумие» и т.п.). У него есть брызжащие речевым юмором произведения (напр., «Зойкина квартира»). Казалось бы, в главном романе Булгакова, хотя бы при описании Москвы 30-х годов, словесной игры должно быть с избытком. «Сатирическая ткань романа «Мастер и Маргарита» необыкновенно богата, ярка, красочна, подвижна. Речь весело украшена замечаниями, порою сближающими Булгакова-сатирика с Ильфом и Петровым»⁵.

Все это верно. Но, как видно уже из приведенного ранее примера, остроумие не сводится к игре слов и, тем более, к каламбурам. Потому что, при полном нашем согласии с приведенной характеристикой, анализ текста показывает, что собственно игры слов в пределах приведенной выше классификации в романе не так уж много, а фонетической, т.е. игры на созвучиях, нет совсем. Имеющиеся же случаи игры слов обладают своей спецификой, самое существенное в которой то, что они, как правило, ориентированы не на микроконтекст, как обычно, а на контекст всего произведения. Даже решая свою локальную задачу, они прежде всего работают на роман в целом.

Конечно, в романе встречается и игра слов в относительно чистом виде.

Приведем несколько примеров:

1. Я – **историк**, - подтвердил ученый и добавил ни к селу, ни к городу: – Сегодня вечером на Патриарших будет интересная **история!** (19)

- **Պատմաբան եմ**, - հաստատեց գիտնականը և անտեղի-անհարկի ավելացրեց, – այսօր երեկոյան Պատրիարքական լճով հետաքրքիր **պատմություն է լինելու:** (17)

Русское слово **история** и армянское պատմություն оба совмещают в себе, будучи многозначными, значения «наука о прошлом человеческого общества» и «происшествие, случай». Таким образом, адекватность перевода реализуется благодаря благоприятным возможностям, предоставляемым двумя языками.

³ Влахов С., Флорин С. Непереваемое в переводе. -М., Высшая школа, 1986г., стр.359

⁴ Левицкая Т.Р., Фитерман А.М. Проблемы перевода. -М., ИМО,1976г., стр.188

⁵ Яновская Л., Творческий путь М. Булгакова.-М. Советский писатель, 1983г. стр. 241-242.

2. – А на голову не обращайтесь внимания (...), – ответил буфетчик, – **на голову плюньте**, она здесь ни при чем. Рак **печени**, прошу остановить. (206)

Очевидно, что «плюньте» в этом контексте реализует сразу и прямое значение, и переносное «не обращайтесь внимания». Голова буфетчика перевязана; это обстоятельство, равно как и упоминание о печени, усиливают эффект.

3. – Простите, гражданочка, – вдруг обратился Василий Степанович к девице, – **кот** к вам черный не заходил?..

– Какой там **кот**? – в злобе закричала девица. – **Осел** у нас в филиале сидит, **осел**! – И, прибавив к этому: – Пусть слышит! Я все расскажу, – действительно рассказала о том, что случилось. (187)

Как видим, здесь использованы два слова, относящиеся к одному классу понятий, т.е. к животным, одно из которых употреблено в прямом (кот), а другое (осел) в переносном смысле. Однако это первое впечатление неполно, что лишний раз показывает ущербность узкого контекста, когда речь идет о булгаковском романе. Каламбур начинается раньше, с вопроса бухгалтера. Он имел в виду собственно кота, хотя и необычного, а собеседница, ничего обо всей этой истории не зная, невольно завершила каламбур, перейдя от одного слова в переносном употреблении (так как по логике дела речь должна идти о человеке, а у разъяренной собеседницы не было времени задуматься, при чем тут кот) к другому, тоже в переносном смысле. Здесь хотелось бы попутно отметить, что вернее по общему тону эпизода было бы употребить не **ушшшш**, а **тэ**. В русском тексте (особенно во времена Булгакова) слово «ишак» употреблено быть не могло, т.к. это был бы экзотизм. **Ушшшш** – слишком литературно для данного контекста. Не менее неуместно слово **орпирп** вместо **девицы**, стилистически сниженного слова, вполне соответствующего манерам и поведению героини.

4. – Товарищи! – неистово закричал председатель. – Держите их! У нас в доме нечистая сила!

И тут уж неизвестно что померещилось Пелагее Антоновне, но только она, всплеснув руками, вскричала:

– Покайся, Иваныч! Тебе скидка выйдет! (101)

– Իսկ գլխիս ուշադրություն մի դարձրեք (...), – պատասխանեց բուֆետապանը, – **գլխի վրա թըքած** (...) **Լյարդի** քաղցկեղ է, խնդրում եմ՝ դեմն ատեք: (236)

– Ներեցեք, ընկերուհի, – Վասիլի Ստեպանովիչը հանկարծ դիմեց օրիորդին, – մի սև կատու չի մտել այստեղ:

– Ինչ կատու, – չարացած բղավեց օրիորդը, – ավանա՛կ է նստած մեր մասնաճյուղում, ավանակ, – ու դրան ավելացնելով, – Թող լսի: Ամեն ինչ կպատմեմ, – իսկապես, պատմեց կատարվածի մասին: (215)

– Ընկերներ, – մոլեգնած բղավեց նախագահը, – բռնեցեք դրանց: Մեր տանը սատանա կա:

Եվ տեղնուտեղը չգիտես ինչ երևաց Պելագեյա Անտոնովնայի աչքերին, միայն թե նա, ձեռքերն իրար զարկելով, ճչաց.

– Խոստովանի, Իվանիչ: Մի բան կպակսեցնեն: (112)

Уже в этом случае предшествующий собственно игре слов контекст позволяет воспринимать слово **покайся** не только в значении «признайся», но и в церковном, т.е. «исповедайся в своих грехах». В дальнейшем, при беседе в «одном учреждении» Никанор Иванович следует именно этому совету:

- Бог истинный, бог всемогущий (...) все видит, а мне туда и дорога (...) Господь меня наказует за скверну мою, - с чувством продолжал Никанор Иванович, то застегивая рубашку, то расстегивая, то крестясь, - брал! Брал, но брал нашими, советскими! (156) И далее: «он, дрожа, крестил воздух, метался к двери и обратно, запел какую-то молитву». Русский глагол **каяться** (покаяться) означает как церковное «признаваться в своих грехах; исповедоваться», так и «признаваться в своей вине, ошибке» перед кем-то или кому-то. Армянское խոստովանել также совмещает в себе оба эти значения, что и дает возможность перевести отрывок адекватно. Специфична здесь лишь разделенность двух реализаций в тексте: обычно оба варианта реализуются одновременно, как это и сделано в первых, вполне традиционных примерах.

Эта тенденция ориентирования игры слов на текст в целом настолько очевидна, что иногда игра слов, не имеющая принципиального значения для текста или художественно проходная, может быть и опущена в переводе. Нам это представляется вполне оправданным, тем более, что таких случаев мало. Приведем для наглядности один пример:

Гроза бушевала с полной силой, вода с грохотом и воем низвергалась в канализационные отверстия, всюду пузырилось, вздувались волны, с крыш хлестало мимо труб, из подворотней бежали пенные потоки. Все живое **смылось** с Садовой, и спасти Ивана Савельевича было некому. (111-112)

Ամպրոպը մոլեգնել էր ամբողջ ուժով, ջուրը դրդոցով ու շալչունով թափվում էր կոյուղու անցքերի մեջ, ամենուրեք ալիքներ էին պղպջակվում և ուռչում, տանիքներից ջուրը չոռում էր ջրորդանների կողքով, դարպասատակերից փրփրակալած առուներ էին վազում: Կենդանի ամենայն ինչ **աքրվել էր** Սադովայայից, և Իվան Սավելիչին փրկող մեկը չկար: (125)

Здесь по-русски игра на многозначности слова смыться: 1)быть смытым и 2) разг. удрать, сбежать.

Переводчик остановился на одном, только первом значении, и передал его очень хорошо. Думается, этой проходной деталью (попутной игрой слов) вполне можно было пренебречь без ущерба для целого. Важнее было воссоздать мощь разбушевавшейся стихии, что и передано переводчиком как подбором слов во всем отрывке, так и точным выбором слова ւրբիլ, как бы подводящим итог картине грозы.

Не всегда, однако, с потерей игры слов смиряешься так легко. Например, глава 12 называется «Черная магия и ее разоблачение» (115). По-армянски это переведено как «Մի մոգությունն ու նրա քննադրումը» (130). Все совершенно верно, если не учитывать, что кроме морального разоблачения присутствующих, начиная с Семплеярова и кончая зрителями в целом, через главу, т.е. в главе 14, описываются и вполне физические разоблачения, т.е. раздевания: дамы, поддавшиеся

уговорам Фагота и К° и облачившиеся в дармовые парижские туалеты, оказались разоблаченными, т.е. лишились этой одежды, оставшись на улице в одном белье, что вызвало скандал. Каламбур, конечно, не слишком важный для романа в целом, а все-таки жаль. Может быть, если бы переводчик его заметил, он сумел бы найти адекватный выход. Нам кажется возможным использовать слово մերկացում, совмещающее в себе оба значения.

Наконец, следует отметить единственный случай, когда переводчика явно постигла неудача при переводе игры слов. Правда, случай действительно незауряден по трудности, поскольку здесь игра слов осложнена ситуативной реалией, что исключает обращение к аналогии.

Итак, попав в Торгсин, парочка Коровьев-Бегемот ведет себя не по правилам этого валютного магазина, а по правилам «естественного человека», что показывает искусственность торгсиновских правил, но вызывает ужас у продавцов. Боясь ответственности, они вызывают милицию. И тогда Коровьев произносит «политически вредную вещь» о неравенстве трудового человека и иностранцев, и заканчивает ее этой самой игрой слов:

...он (иностранец, а как потом оказалось, вообще соотечественник, только богатый – М.З.), видите ли, в парадном сиреневом костюме, от лососины весь распух, он весь набит валютой, а нашему-то, нашему-то?! **Горько мне! Горько! Горько!** – завыл Коровьев, **как шафер на старинной свадьбе.** (340)

... մանուշակագույն տոնական կոստյում է հագել, ուռել-փքվել է սաղմոնից, գրպանները լիքը վալյուտա է, իսկ մերոնց, մերոնց: **Ես դառնացած եմ, ինձ պաշէք. Պաշէք. Պաշէք,** - ոռնաց Կորովկը, **ինչպես խաչեղբայրը հին հարսանիքներին:** (393)

Камнем преткновения здесь, безусловно, стало отсутствие обычая на армянской свадьбе целоваться жениху и невесте по требованию гостей. Между тем, крики «Горько!» как раз и являются на русской свадьбе выражением этого требования. Отсюда и упоминание об этом у Булгакова, призванное несколько завуалировать опасный намек.

Ошибка переводчика в том, что эту броскую, но не самую важную в данной игре слов деталь (поцелуй на свадьбе) он слишком выпятил, приняв, по-видимому, за главную: она повторена три раза, к тому же, превратившись в требование целовать его, Коровьева, очевидно за отсутствием жениха и невесты. Все это еще бы ничего, в конце концов, Коровьев – шут и любит паясничать. Беда в том, что выражение получилось совершенно непонятным. Что еще хуже, оно никак не вяжется с реакцией слушателей, а затем и их поступками, вызванными речью Коровьева:

Вся эта глупейшая, бестактная и, вероятно, политически вредная речь заставила гневно содрогаться Павла Иосифовича, но, как это ни странно, по глазам столпившейся публики видно было, что в очень многих людях она вызвала сочувствие! (340)

Հիմարագույն, անտակտ և, հավանորեն, քաղաքականապես վնասակար այդ խոսքերը ստիպեցին սարսռալ Պավել Իոսիֆովիչին, բայց, որքան էլ տարօրինակ լինի, խոնված հասարակության ացքերից երևում էր, որ շատ մարդկանց մեջ դա կարեկցանք էր առաջացրել: (393)

Попутно отметим, что переводить «сочувствие» как *qurŋqurŋ* также представляется не лучшим вариантом. Перед нами, в сущности, еще одна игра слов, несколько заслоненная своей блестящей предшественницей. Конечно, в реакции окружающих есть и элемент сочувствия к «работяге» Бегемоту, но не это здесь главное. *qurŋqurŋ* – это реакция окружающих на чужую беду. Между тем, люди, покупавшие какое-нибудь лакомство детям или больным (вспомним, что ударил мнимого иностранца бедно, но чистенько одетый старичок, покупавший три миндальных пирожных, за которые, может быть, отдал последнюю золотую вещь(цу) или ситцы и обувь (вещь нестандартную и хорошего качества можно было купить только здесь) вынуждены были расплачиваться за это припрятанными на черный день скромными золотыми изделиями (за сданные за бесценок золотые вещи выдавали боны, на которые можно было что-то купить в Торгсине). Как избавляли от валюты и драгоценностей их предполагаемых владельцев, если ценностей было побольше, хорошо, хотя и слишком идилически по сравнению с реальностью, описано в главе 15 («Сон Никанора Ивановича»). Не случайно в гастрономическом и кондитерском отделениях «было очень просторно, гражданки в платочках и беретиках не напирали на прилавки, как в ситцевом отделении» (338): без лососины можно обойтись. Так что слушатели испытывают не столько жалость к «работяге» Бегемоту, сколько сочувствие со словами Коровьева, т.е. испытывают те же чувства, что и он, соглашаются с ним. Если переводчику не удастся перевести игру слов игрой же и пришлось выбирать одно из двух значений слова «сочувствие», безусловно предпочтительнее был бы выбор второго. Главное в эпизоде, что жизнь труженика, «гегемона» горька: «Горько мне! Горько! Горько!» Другими словами, это и есть инвариант, который надо сохранить во что бы то ни стало, учитывая его роль в эпизоде в целом. А вторая часть вариабельна, т.е. допускает замену (объяснение в сноске здесь не годится именно из-за инвариантности мысли о горечи советской жизни, которую нельзя дробить или эмоционально ослаблять).

Игра слов в целом здесь создается на классической для многозначности или омонимии схеме. Обычно в конкретном контексте реализуется одно значение слова, благодаря чему речь становится понятна собеседнику и реализуется важнейшая функция языка – коммуникативная, т.е. обеспечивается возможность адекватного понимания и адекватного ответа. Но если контекст построен так, что в нем созданы условия для одновременной реализации двух значений, возникает каламбур или, шире, игра слов. В нашем случае слово **мне** («Горько **мне**!») помогает реализации одного значения слова «горько» (т.е. плохо), а ссылка на свадьбу – другого (требования поцелуя жениха и невесты). «В таких случаях роль контекста огромна. Именно он обязывает воспринимать слово или оборот в двух значениях, апеллируя к их полисемантичности, раскрывая двоякое содержание единой словесной формы»⁶.

Кстати говоря, прежде смысл возгласа «Горько!» был в том, что поцелуем надо подсластить свадьбу, чтобы было радостнее. Отголоски этого мы видим, например, в пушкинской «Русалке»: «Ай да мед! И в голову, и в ноги так и бьет. Жаль, горек, подсластить его не худо б», – говорит дружка, и молодые целуются. Но сегодня – это разные, разошедшиеся смыслы.

⁶ **Виноградов В.С.**, Лексические вопросы перевода художественной прозы. –М., МГУ, 1978г. стр.167

Трудно предлагать свои варианты там, где неудача постигла такого мастера, как А.Ованнисян, но, может быть, стоило бы, заменив вторую часть более подходящей к ситуации, передать игру слов чем-то вроде: «Դառն է կյանքը, դառը, քաղցրացնել պետք է, քաղցրացնել, - բղավում էր Կորովը, կարծես պահանջում էր կենաց քաղցրացնել».

Однако основные случаи игры слов в романе Булгакова относятся к сфере фразеологии.

Специфика фразеологизма состоит в том, что каждое слово, входя в состав сложного целого, отличающегося различной степенью слитности, в то же время хотя бы потенциально сохраняет свои возможности как самостоятельная единица языка: ведь компоненты единого фразеологизма пишутся раздельно, между ними есть синтаксические связи; в определенно организованном контексте они могут быть оживлены, т.е. тогда одновременно реализуются как фразеологическое значение, так и свободное словосочетание с тем же набором компонентов.

Актуализация фразеологизмов достигается целым рядом способов: например, может происходить так называемое разложение, т.е. замена одного из компонентов другим словом (скажем, антонимом или близким по звучанию), может быть введено дополнительное слово (так называемое вклинивание) и т.д. Однако в романе М.Булгакова для актуализации фразеологизмов практически используется лишь один прием. а именно, восстановление первичного свободного значения хотя бы одного из входящих в состав фразеологизма компонентов.

Чаще всего, как это обычно и бывает, так происходит с метафорическими по своему характеру фразеологизмами (по известной классификации В.В.Виноградова это фразеологические единства).

- Что бы нам такое с ним сделать?

- **Голову ему оторвать!** – сказал кто-то сурово на галерке. (122-123).

- Ինչ անենք ւրան:

- **Գլուխը պոկեք**, - խստորեն տասց ինչ-որ մեկը վերնաշարահից: (138)

Говоривший, безусловно, имел в виду переносное, метафорическое, т.е. фразеологически связанное значение «строго наказать». Однако Фагот и Бегемот истолковали это высказывание буквально, и Бегемот действительно оторвал конференсье голову. Перевод очень облегчается тем, что в армянском языке есть сходный оборот.

О конференсье Жорже Бенгальском:

...всеконечно подвергаться глумливым вопросам о том, как ему лучше: **с головой или без головы?** – слишком мучительно. (378)

ու մշտապես ծաղրական հարցեր ունկնդրելը, թե ինչպե՞ս է ավելի լավ՝ **գլուխն ուտերի՞ն, թե տանց գլխի**, չափազանց տանջալի բան է: (436)

«С головой» - очень умный, толковый, способный.

«Без головы» - неумный, туповатый, несообразительный. Переведена игра слов очень хорошо.

Однако особенно часто актуализируются фразеологизмы с inferнальным компонентом, так называемые «чертыхания». Они не только составляют львиную

долю обыгранных в тексте фразеологизмов, но и многочисленны сами по себе. В частности (это не раз отмечалось в литературе вопроса), в одной лишь небольшой первой главе, где происходит первая встреча героев и читателей с Воландом и его свитой, насчитывается 5 «чертыханий» (магическое число, отсюда пентаграмма, в которой оказывается обычно вызываемый дух) и 11 слов (число дьявола) с определением или корнем «черный» или «черт» (черные глаза, брови, черная магия; чернокнижник, очертил и т.п.), не считая знаменитого «предчувствуя вечернюю прохладу бесшумно чертили черные птицы», о чем уже говорилось ранее. Это нагнетание «предвестников» появления inferнальных сил воздействует на сознание читателя и психологически подготавливает его к дальнейшему. К сожалению, передать все это при переводе очень сложно; к еще большему сожалению, переводчик, по-видимому, не знал о наличии этого приема и не до конца использовал даже те возможности, которые были.

Исследователи отмечали также, что «чертыхания» настолько многочисленны, что могут рассматриваться как своего рода мотив, причем функция мотива меняется: если в первых «московских» главах он выполняет функцию «предвестника» нечистой силы, то в дальнейшем – по преимуществу свою основную функцию игры слов, «реализуя, в сущности, театральный прием «арат»: в театре персонаж произносит «в сторону» слова, которые слышит зритель, но якобы не слышит собеседник; в романе Булгакова персонаж воспринимает оборот как фразеологический, а читатель – как свободное словосочетание, то есть буквально»⁷. В этом специфика «чертыханий» булгаковского произведения. Как это типично для стилистики романа, прямая «подсказка» читателю делается тогда, когда он уже сам обо всем догадался – в главе 17 («Беспокойный день»).

В этой главе, как мы помним, «черти взяли» начальника учреждения в ответ и наказание за невоздержанное чертыхание, оставив выполнять начальственные функции его костюм, прекрасно заменивший хозяина (явная переключка с «Прозаседавшимися» В. Маяковского). Секретарша излагает происшедшее так:

...терпение Прохора Петровича лопнуло, и он вскричал: «Да что ж это такое? Вывести его вон, черти б меня взяли!» А тот, вообразите, улыбнулся и говорит: «Черти чтоб взяли? А что ж, это можно!» И, трах, я не успела вскрикнуть, смотрю: нету этого с кошачьей мордой и си...сидит... костюм... (185)

...Պրոխոր Պետրովիչի համբերությունը հատեց, և նա բղավեց. «Մա ինչ բան է: Դուրս տարեք դրան, սատանան տանի ինձ»: Իսկ նա, պատկերացրեք, ժպտաց ու ասաց. «Մատանան տանի: Է, ինչ կա որ, կարելի է:» Ու, շրախիկ, չէի հասցրել բղավել, տեսնեմ, այդ կատվի մոտիքովը չկա և նստ... նստած է... կոստյումը... (212)

А вот и ее объяснение происшедшего, кстати, переведенное не лучшим образом:

⁷ *Хачатурян Н.А.*, Из наблюдений над имплицитными религиозно-мифологическими элементами текста в романе М.Булгакова «Мастер и Маргарита» -В сб.: Лингвистические исследования, Ереван, ЕГУ, 2002г. стр.154

- Я всегда, всегда останавливала его, когда он чертыхался! Вот и до- чертыхался! (184)

- Ես նրան միշտ, միշտ զսպում էի, երբ սատանայի անուն էր տալիս: Ահա, այսպես եղավ... (211)

В русском языке чертыхания чрезвычайно частотны и, вдобавок, допускают замену inferнальной части: «ну его к черту (дьяволу, бесу, к чертовой матери, ба-бушке, ко всем чертям и т.п.)» Как уже говорилось, в армянском языке сама номенклатура inferнальных сил не так дифференцирована, и, в сущности, реально сводится к словам *ւիւշիւշ* и *զրոյ*. Однако прием надо передать, он инвариантен, это переводчик понимает очень четко, отсюда иногда в переводе появление не употребляющихся в реальной жизни оборотов. В том же случае с Прохором Петровичем гораздо естественнее было бы «*զրոյը (ինձ) տանի*».

Приведем несколько примеров игры слов и их перевода, отметив заранее, что наиболее частотен оборот **черт знает**, который при буквальном понимании говорит о нечеловеческой осведомленности помощников Воланда и, тем более, его самого.

1. Черт, слышал все... - подумал Берлиоз. (о Воланде) (18)

- Սատանա, ամեն ինչ լսել է... – մտածեց Բերլիոզը:(16)

2. сказал (Воланд – М.З.), но уже без всякого акцента, который у него, черт знает почему, то пропадал, то появлялся. (44)

Նա ասաց, բայց արդեն առանց որևիցե առողանության, որը սատանան գիտե, թե ինչու, մեկ անհետանում էր, մեկ երևան գալիս:(45)

Надо полагать, что черт, тем более главный, это действительно знает.

3. – Когда же Лиходеев едет в Ялту?

- Իսկ Լիխոդեւը երբ է գնում Յալտա:

- Да он уж уехал, уехал! – закричал переводчик (...) уж он черт знает где! (96)

- Նա արդեն գնացել է, գնացել է, - բղավեց թարգմանիչը (...) Սատանան գիտե, թե որտեղ է նա:(106)

Напомним, что Лиходеева выбросили в Ялту именно черти, и они-то уж точно знают, где он.

4. Черт знает откуда взявшаяся рыжая девица (Гелла – М.З.) (124)

Սատանան գիտե, թե որտեղից մեջտեղ եկած շիկամազ մի դիցուհի: (140)

5. Да ведь он тут черт знает чего натворит! (Иван о Воланде) (134)

Ախր նա այստեղ սատանան գիտե, թե ինչեր կանի: (151)

6. Тыфу ты, дьявол! (Римский о скандале в Варьете). (148)

Թու՞հ, սատանան տանի: (381)

7. А я черт знает чем занялся! (115)

Իսկ ես սատանան գիտե, թե ինչով զբաղվեցի: (129)

8. Сogласна идти к черту на ку-
лички! (222)

Համաձայն եմ սատանայի ծոցը
գնալ: (255)

9. Пошел ты к чертовой матери!
(238)

Կորի գնա գրողի մոր ծոցը: (273)

10. Тьфу ты, черт! (329)

Թո՛ւհ, սատանան տանի: (382)

Нетрудно заметить даже из приведенных примеров, которые далеко не исчерпывают всех случаев актуализации infernalного компонента (черт) в фразеологических оборотах романа, что армянский вариант почти всегда оставляет ощущение некоторой (иногда и сильной) искусственности. Это происходит прежде всего, из-за относительной малочисленности армянских эквивалентов. Наиболее актуальный для романа фразеологический оборот **черт знает**, употребляемый в самых различных ситуациях, имеет еще и синонимы **кто знает**, **шут знает**, **бес знает** и даже **Бог знает** (наиболее употребительный, кстати говоря, по-армянски в подобных случаях), а также ряд непечатных вариантов. В армянском языке в основном употребляются фразеологизмы со словами *սիւսինի գրող*, причем второй компонент гораздо активнее. Не следует ли из этого, что переводчику стоило бы увеличить количество оборотов с этим компонентом, придать ему равноправный статус? Иначе обороты, явно утяжеляющие прозу Булгакова, за которой прочно утвердился эпитет «летающая», вступают иногда в противоречие и с характером персонажа. Так, молодой партиз, «красный директор» Степа Лиходеев вряд ли чувствует, да еще с перепою, что «*ցած կգահալիժի տարտարու, սիւսինայի մոր ծոցը*» (к чертовой матери вТартар). Степа, наверное, вообще не слышал слово Тартар, а ведь перед нами несобственно-прямая речь. Очевидно, здесь опять-таки нужна была большая смелость в манипулировании фразеологизмами при постоянном учете инварианта (черт). Скажем, можно было придумать для того же Степы что-нибудь вроде «*դժխտի հատակը, գրողի (մոր) ծոցը*». Ведь «чертова мать» и даже «чертова бабушка» синонимичны «черту», поскольку все они десемантизированы и означают, в сущности, одно: очень далеко. В рамках требований конкретного романа infernalный компонент нельзя отменить, но можно заменить более естественным синонимом того же круга. Наконец, в просторечно окрашенном контексте возможно использование просторечной же формы «*սիւսինի*» вместо литературного «*սիւսինայի*».

На столкновении буквального и переносного значений «infernalных» слов и оборотов построен блестящий образец игры слов, хорошо переведенный и А.Ованнисяном. Эта игра, помещенная в главе 30-ой, т.е. в самом конце романа, интересна тем, что перед нами диалог Мастера и Маргариты, в котором он употребляет названную лексику и фразеологию в переносном смысле, а она – в прямом:

- Конечно, конечно, - иронически
сказал мастер, - теперь, стало быть,
налицо вместо одного сумасшедшего
двое! И муж, и жена. – Он воздел ру-

- Բիարկէ, իհարկէ, - հեգնաբար
սաաց վարպետը, - իմա, ուրեմն, մի
խելագարի փոխարեն երկուսը կան:
Ամուսինն էլ, կինն էլ: - Նա ձեռքերը

ки к небу и закричал: - Нет, это черт знает, что такое, черт, черт, черт!

.....
- Ты сейчас невольно сказал правду, - заговорила она, - черт знает, что такое, и черт, поверь мне, все устроит! (...) – Как я счастлива, как я счастлива, что вступила с ним в сделку! О дьявол, дьявол! Придется вам, мой милый, жить с ведьмой!

.....
- А ты действительно стала похожей на ведьму.

- А я этого и не отрицаю, - ответила Маргарита, - я ведьма и очень этим довольна.

- Ну, хорошо, - говорил мастер, - ведьма так ведьма. (...)Но скажи ты мне ради всего святого, чем и как мы будем жить? (354-355)

երկինք բարձրացրեց և բղավեց. – Չէ, սատանան գիտէ, թէ սա ինչ բան է, սատանան, սատանան, սատանան:

.....
- Նոր դու ականա ճմարտությունն ասեցիր, - սկսեց նա, - սատանա՛ն գիտէ, թէ ինչ, և, հավատա ինձ, սատանան ամեն ինչ կդասավորի: (...) Որքան երջանիկ եմ, որքան երջանիկ եմ, որքան երջանիկ եմ ես, որ գործարքի մեջ մտա նրա հետ: Օ՛, սատանա, սատանա: Միրելիս, ստիպված եք լինելու ապրել վիուկի հետ:

.....
- Իսկ դու իսկապես դարձել ես վիուկի նման:

- Չեմ էլ ժխտում, - պատասխանեց Մարգարիտան, - ես վիուկ եմ ու շատ գոհ եմ, որ այդպես է:

- Դե լավ, - խոսեց վարպետը, - վիուկ ես, վիուկ էլ մնա: (...) բայց հանուն ամենայն սրբության ասա ինձ, ինչով և ինչպե՞ս պիտի ապրենք: (409-410)

По поводу этого последнего эпизода исследователи, имея в виду игру на прямых и переносных значениях «инфернальных» и «сакральных» слов и выражений, указывают: «Речь Мастера сама по себе достаточно традиционна с обыденной точки зрения и весьма парадоксальна с религиозной (...). Но восклицания Мастера, неуместные с точки зрения религиозной формы, по-видимому, не вызывают раздражения у высших сил: Мастер, интересовавшийся *ради всего святого*, как сложится их дальнейшая жизнь, получил ответ и от Света: Иешуа попросил Воланда устроить судьбу и Мастера, и Маргариты»⁸.

Благодаря адекватному переводу А.Ованнисяна армянский читатель в этом весьма существенном для концепции романа эпизоде приходит к тем же выводам, что и русский.

Трудно, да и неэтично, не будучи переводчиком, давать конкретные примеры перевода в поучение такому мастеру, как А.Ованнисян. Мы хотели только напомнить о возможностях, которые подсказывает теория, а конкретное ее применение – прерогатива переводчика.

⁸ *Хачатурян Н.А.* Из наблюдений над имплицитными религиозно-мифологическими элементами текста в романе М.Булгакова «Мастер и Маргарита» -В сб.: Лингвистические исследования, Ереван, ЕГУ, 2002г. стр.157

Մարատ Զուրաբյան – Բառախաղը որպես գեղարվեստական պատկերավորման միջոց: – Հոդվածում քննության է առնվում բառախաղի դերը Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» վեպի բնագրում: Գրողի մոտ բառախաղը հաճախ պայմանավորված է ոչ թե խոսքի կոմիզմով, այլ նպատակ է հետապնդում առավելապես շեշտը դնել նրա անսպասելիության վրա «խաբված սպասում»: Իսկ եթե վեպում կա կոմիզմի դրսևորում, ապա այն ստեղծում է ոչ թե հիմնական, այլ լրացուցիչ տպավորություն: Ստեղծագործության մեջ բառախաղի դրսևորումները ունեն իրենց առանձնահատկությունները. Նրանք որպես կանոն կենտրոնանում են ոչ թե վեպի մի կրոտեքստի, այլ բնութագրական են դառնում ողջ համատեքստի համար:

Marat Zurabyan – *Pun as an artistic expressive means.* – The role of the pun in the original of M. Bulgakov's novel "Master and Margarita" is discussed in the article. For the writer the pun is not only conditioned by the comic of the word, but also is aimed to lay stress on its unexpectedness /deceived waiting/. But if there is manifestation of the comic in the text, it creates not only basic but also additional impression. In the work the manifestation of the pun have their peculiarities: they, as a rule, are concentrated not only on the microtext but also become characteristic for the whole context.

**ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ-ՀԱՏԿԱՑՑԱԼ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ
«ՊԱՏՄՈՒԹՅԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ**

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ ԻՄ մասնաճյուղի ասիստենտ*

Հոդվածում քննության են առնվում V դարի պատմիչ Փ. Բուզանդի «Պատմություն Հայոց» երկի հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունները, դրանց համաձայնության և շարադասության հարցերը, հատկացուցչի արտահայտությունը տարբեր խոսքի մասերով: Ներկայացվում է նաև վիճակագրական հաշվարկ՝ հատկացուցչի շարադասության վերաբերյալ:

Բանալի բառեր. Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն, համաձայնություն, շարադասություն, հատկացուցչի արտահայտությունները, վիճակագրական հաշվարկ, հատկացուցչի բնագրային օրինակներ:

Հատկացուցիչ-հատկացյալ եզրույթներն առաջին անգամ 18-րդ դարում գործածել է Պաղտասար Դպիրը, սակայն լայն իմաստով: Նա հատկացուցիչ է համարել նաև որոշիչ որակական ածականը կամ անհոլով գոյականը¹: Հատկացուցիչ-հատկացյալին առավել մանրամասնորեն անդրադարձել է Արսեն Բագրատունին, որն իր աշխատության մեջ² բնորոշում է հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը, ներկայացնում նախադաս և հետադաս կիրառությունները, սակայն որոշչային որոշ կիրառություններ ևս համարում է հատկացուցիչ, օր. «փառք աստուածային», «երկնաւոր արքայութիւն»:

Ինչպես Պաղտասար Դպիրը, այնպես էլ Ստ. Պալասանյանը ածականով արտահայտված որոշիչը հատկացուցիչ են համարել՝ գրելով. «Այն բառերը, որոնք որոշում են մի առարկա ուրիշ իւր նման առարկաներից, ցոյց տալով նրա որպիսութիւնը կամ պատկանելութիւնը, կոչւում են յատկացուցիչ»³: Սահմանումը հիմնավորելու համար Պալասանյանը բերում է հետևյալ օրինակը. «Հայկի որդիքը երկար ժամանակ հովուական կեանք են վարել» և բացատրում է. «Նախադասութեան մէջ *Հայկի* եւ *հովուական* յատկացուցիչ են *որդիքը* եւ *կեանք* բառերի, որոնք այս պատճառով կոչւում են յատկացեալ»⁴:

Այս հարցում Պալասանյանին քննադատել է Մ. Աբեղյանը, որը հատկացուցիչն անվանում է «սեռական խնդիր» կամ «սեռական վերադիր»⁵:

Հայագետ լեզվաբան Մ. Մինասյանը «Յատկացուցիչ-յատկացեալ կապակցութիւնը գրաբարում» աշխատության մեջ մանրամասն և կանոնակարգված ներկայացրել է այս հիմնախնդիրը՝ կատարելով կարևորագույն եզրահանգումներ:

¹ Տե՛ս **Պաղտասար Դպիր**, Պարզաբանութիւն քերականութեան, Կ. Պոլիս, 1736, հ. 2-րդ, էջ 378:

² **Բագրատունի Ա.**, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

³ **Պալասանեան Ստ.**, Քերականութիւն մայրենի լեզուի, մասն I, Թիֆլիս, 1874, էջ 12:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Գրաբարի համառոտ քերականութիւն, Վաղարշապատ, 1907, էջ 156, 163, Աշխարհաբարի շարահիւսութիւն, Վաղարշապատ, 1912, էջ 73, 78, 177, 191 և այլն:

Իր «Գրաբարի բառակապակցությունները» աշխատության «Գոյականի լրացումները դերանուններով» ենթաբաժնում Վ. Քոսյանն ընդհանուր գծերով գրել է նաև հատկացուցիչ-հատկացյալ կապակցության վերաբերյալ՝⁶ անդրադառնալով անձնական, փոխադարձ, ցուցական, ստացական դերանուններին՝ որպես գոյականի լրացում՝ նկատի ունենալով նաև հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունների շարադասության և համաձայնության հարցերը:

Գրաբարում հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը շարահյուսական առումով հետաքրքրություն ներկայացնող կառույց է, որի բաղադրիչների շարահյուսական առանձնահատկությունները դրսևորվում են տարբեր խոսքի-մասային արտահայտություններով, համաձայնության և շարադասության գործառնություններով:

Քերականների ուշադրության կենտրոնում եղել են հատկապես հատկացուցիչ-հատկացյալ կապակցության շարադասությունը և համաձայնությունը:

Հատկացուցիչ-հատկացյալի շարադասության վերաբերյալ կան ընդհանուր և հաճախ ոչ որոշակի կարծիքներ: Ա. Այտընյանը գրել է. «Հին գրաբարի մեջ թեև հասարակօրէն յատկացուցիչն եւ ստացականը յետադաս է, բայց շատ անգամ նախադաս ալ կ'ըլլար, մանաւանդ ընտանեկան լեզուի մէջ: Իսկ Ե դարէն ետքը շատ սովորական է նախադասը՝ ռամիկ լեզուի մէջ, մինչեւ որ ետքի դարերուն մէջ ընդհանուր կանոն եղած է»⁷:

Մ. Մալխասյանը համակարծիք է Ա. Այտընյանի այս բնորոշմանը⁸: Նա նկատել է նաև, որ V դարում հատկացուցչի հետադաս կիրառությունը բնորոշ է եղել Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը, որն էլ ազդել է այդ դարաշրջանի գրավոր խոսքի վրա:

Իսկապես, հետագա դարերում ինչպես որոշիչը, այնպես էլ հատկացուցիչը աստիճանաբար մեծ մասամբ շարադասվում են նախադաս: Այնուհետև, հատկապես արդի շրջանում գրված գրաբարի դասագրքերում վերջնականապես ընդունվել է Աբեղյանի կարծիքը՝ ըստ որի «Սեռական խնդիրը կամ յատկացուցիչը սովորաբար իր խնդրառու անունից յետոյ է դրւում, բայց կարող է եւ առաջ դրուել»⁹:

Իհարկէ, այս ամենին լավատեղյակ է եղել Մ. Մինասյանը, սակայն, չգիտես ինչու, իր «Յատկացուցիչ-յատկացեալ կապակցութիւնը գրաբարում» աշխատության մեջ հատկացուցիչ-հատկացյալի շարադասությունը այլ հեղինակների աշխատություններում ներկայացնելիս գրել է «*Յատկացուցչի շարադասութիւնն ազատ է*» վերնագիր, որը հակասում է իր ամբողջ շարադրանքին և անգամ աշխատության վերջում դրված հատկացուցչի շարադասության վիճակագրությունը պատկերող աղյուսակում եղած փաստերին, ըստ որի՝ V դարի տարբեր հեղինակների երկերից ընտրովի քաղված հատվածներում հատկացուցիչը նախադաս գործածվել է 101 անգամ, իսկ հետադաս՝ 699 անգամ, այսինքն՝ V դարի մատենագրությունում իսկապես գերիշխել է հատկացուցչի հետադաս գործածությունը նախադասի համեմատությամբ: Իսկ սա ցույց է տալիս, որ, իսկապես, հատկացուցիչ-հատկացյալի շարադասությունը V դարում բացարձակորեն ազատ չի եղել: Հաշվի առնելով այս ակնհայտ փաստերը՝ Մ. Մինասյանը աշխատության

⁶ Քոսյան Վ., Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 48-61:

⁷ Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 47:

⁸ Մ. Մալխասյան, Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 86:

⁹ Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Երևան, 1936, էջ 159:

վերջին մասերում տվել է այսպիսի բնորոշում. «... հինգերորդ դարի հայերենում գերազանցող է ետադաս յատկացուցիչը՝ արտայայտուած գոյականով եւ ստացական կամ այլ դերանուններով, բացառութեամբ յարաբերական և հարցական դերանունների, որոնցով արտայայտուած յատկացուցիչները միայն նախադաս են»¹⁰: Ապա ավելացնում է. «Իրենց հերթին նախադաս յատկացուցիչների մեջ գոյականների համեմատութեամբ գերակշռում են դերանուններով, յատկապէս *հար-*ով արտայայտուած յատկացուցիչները»¹¹:

Նկատի ունենալով հատկացուցիչ-հատկացյալ կապակցության վերաբերյալ եղած կարծիքները և հատկապէս V դարի կեսերի պատմիչ Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց»¹² երկում առկա փաստերը՝ մենք նպատակահարմար ենք համարում V դարում հատկացուցիչ-հատկացյալի շարադասությունը բնորոշել հետևյալ կերպ. հատկացուցիչ-հատկացյալ կապակցության շարադասությունը գրաբարում, հատկապէս V դարի սկզբնական շրջանի թարգմանական և ինքնուրույն գրականության մեջ, այդ թվում նաև Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում *ոչ կայուն հետադաս* է, այսինքն՝ այն ազատ չէ, և հարկ եղած դեպքում եղել են նաև նախադաս գործածություններ:

Ինչպէս ժամանակակից հայերենում, այնպէս էլ գրաբարում հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով: Այս ընդհանուր կանոնը վերաբերում է բոլոր խոսքի մասերով արտահայտված հատկացուցիչներին, բացի ստացական դերանուններից¹³ և անհոլով *հարաքանչիւր* դերանունից: Սակայն նշված կանոնից կատարվում են նաև հազվադեպ շեղումներ: Այսպէս, Ս. Ղազարյանը նշում է, որ բացի սեռականից հատկացուցիչը կարող է դրվել նաև այլ հոլովներով¹⁴:

Ս. Մինասյանը նշում է, որ հատկացուցիչը շարահյուսական անհետևողությամբ երբեմն դրվում է ուղղական կամ հայցական, իր հատկացյալի հոլովի ձգողությամբ՝ բացառական կամ գործիական հոլովներով, երբեմն էլ ստանում է տրական հոլովով անուղղակի խնդրի բնույթ¹⁵:

Է. Մկրտչյանը կարծում է, որ ուղղական և հայցական հոլովներով հատկացուցիչ համարվածները օրինաչափորեն գործածված շարահյուսական միավորներ չեն, այլ իմաստից բխեցված երևույթներ կամ օտարաբանություններ են¹⁶:

Հատկացուցիչը բազմազան է նաև իր արտահայտած իմաստներով՝ պատկանելության, սերման կամ ծագման, հատկացման, վերաբերության, տարածական և այլ իմաստներով¹⁷:

Խոսքի մասերից հատկացուցիչ են դառնում գոյականները, գոյականաբար առնված բառերը, անձներական թվականները, դերանունները, դերբայները, բացի ապառնի դերբայից:

¹⁰ Մինասեան Ս., նշվ. աշխ., էջ 270-271:

¹¹ Նույն տեղում, էջ 271:

¹² Փաւստոսի Բուզանդացոյ պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 50: Բնագրային բոլոր օրինակներն այսուհետև բերվելու են այս հրատարակությունից: Օրինակի մոտ՝ փակագծերում, կնշենք էջը:

¹³ Ինչպէս կտեսնենք հետագա շարադրանքում, ստացական դերանունները հատկացուցիչ են դառնում բոլոր հոլովներով:

¹⁴ Տե՛ս Ղազարյան Ս., Հայոց գրական լեզվի պատմություն, հատոր Ա, Եր., 1961, էջ 418:

¹⁵ Տե՛ս Մինասեան Ս., նշվ. աշխ., էջ 24:

¹⁶ Տե՛ս Մկրտչյան Է., Հատկացուցիչ և հատկացյալի համաձայնությունը գրաբարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1999, N 2, էջ 158:

¹⁷ Հարցի քննությունը տե՛ս Ղազարյան Ս., նշվ. աշխ., էջ 418-425; Քոսյան Վ., նշվ. աշխ., էջ 14-18:

Ա. Գոյականը որպէս հատկացուցիչ

Պայմանավորված լրացում-լրացյալի իմաստային տարբեր փոխհարաբերություններով՝ նախադաս և հետադաս հատկացուցիչները հատկացյալներին թվով կարող են համաձայնել կամ չհամաձայնել:

Նշենք համապատասխան օրինակներ:

ա) Հետադաս եզակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ.

«Իսկ նա գնացեալ անտի մեծաւ տրտմութեամբ ըստ *հրամանի պատուիրանին* տեառն իւրոյ ...» (21): «Դիւրին է մալխոյ մտանել ընդ *ծակ ասղան*, քան մեծատան ագահի յարքայութիւն աստուծոյ» (66):

բ) Հետադաս հոգնակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ.

«Եւ նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ռոճիկս, և *պատանս աղքատաց*» (64): «Եւ *գորքն Յունաց*, որ էին յԵռանդին ի Բախշանն, ի մի վայր ժողովեցան առ թագաւորն Պապ» (161):

գ) Հետադաս եզակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ.

«Բայց *զկանայսն Շապիոյ թագաւորին* Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ գնոսա ումեք» (159): «Ապա գնային հասանէին ի մի վայր ամենայն գորքն *Հայաստան երկրին* ...» (133):

դ) Հետադաս հոգնակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ.

«Որոյ *զյօժարութիւն արայեցւոցն* վասն *պաշտման սրբոցն* ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց» (66): «Որք խօսեցան ձեզ *զբանն կենաց*» (67):

ե) Հետադաս բազմակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ.

«Եւ բազում *զանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց* պատուականաց ի ձեռն նոցա՝ արքային առաքէր» (76): «Եւ դադարք գազանաց և *որջք բորենից և ճագարաց և աղուեսոց, բոյն խորդոց և ագռաւուց*» (95):

զ) Հետադաս բազմաստիճան հատկացուցիչներ.

«Եւ առցես քեզէն զձեռանէ *արքային Հայոց Արշակայ...*» (141): «Նախ բազում ոսկի *զօրավարին Հայոց Վասակայ* Անդովկն մատուցանէր» (113):

Հարկավոր է նշել նաև հետևյալը. երբ բազմաստիճան հատկացուցիչներին մեկը դերանուն է, այն սովորաբար դրվում է գոյականով արտահայտված հատկացուցիչի հետո:

«Յաղագս անօրէնութեան թագաւորին Արշակայ, թէ ո՛րպէս եսպան *գորդի եղբոր իւրոյ...*» (98): «Եւ *համբաւ գեղոյ նորա* յաճախեալ բազմանայր և հնչէր» (99):

Այս կառույցում պատահում են նաև դերանվան նախադաս կիրառություններ, ինչպէս՝ «Յաղագս Վարդանայ մահուն ի թագաւորէն Արշակայ, նենգութեամբ *իւրոյ եղբօրն Վասակայ սպարապետին*» (108):

ը) Նախադաս եզակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ.

«Եւ կամ որպէս երեցն դրան արքային, Մրջինիկն, *զմահուն դեղն* տալով ընդ օրէնսն՝ սպանանէր զՈղոմբին խորհրդով նենգութեամբն Փառանձեմայ» (52):

թ) Նախադաս հոգնակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ.

«Եւ կամօք իւրեանց կերակուր գէշ թշնամութեան գայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին *աթենացւոց քաղաքին*» (29):

ժ) Նախադաս հոգնակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ.

«Եւ զբերեալ *պարգևացն զշնորհս* իւրեանց յօժարութեամբ ընդունէին» (21)

Բ. Գոյականաբար առնված բառերն իբրև հատկացուցիչ

Բուզանդի երկում գոյականաբար են գործածվել անորոշ և անցյալ դերբայները և ածականը՝ հետադաս շարադասությամբ: Բերենք համապատասխան օրինակներ:

Անցյալ դերբայով. «Բսկ *կինն սպանելոյն* Փառանձեմն զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր» (102): «Պատգամ յղէր առ *կին մեռելոյն*» (103):

Անորոշ դերբայով. «Եւ էր ժամանակն *գայգիսն յատելոյ*» (227):

Ածականով. «... առ ամենայն *ազգս բանաւորաց* և *շնչաւորաց* յախտենից զնշանակն զփայտն ապրեցուցիչ» (21): «Մանաւանդ *գունդք նիզակաւորացն* յարձակեալք մոլեգնեալք, քաջութեամբ զախոյեանս ի վերուստ յերիվարացն յերկիր կործանելին յանդիման թագաւորին Պարսից Շապիոյ» (168):

Ենթակայական դերբայը, ինչպէս նաև թվականը որպէս հատկացուցիչ Բուզանդի երկում չեն գործածվել:

Գ. Ղերանուններն իբրև հատկացուցիչ

Հատկացուցիչ դառնում են առարկա ցույց տվող ղերանունները: Մյուս ղերանունները կարող են հատկացուցիչ դառնալ միայն փոխանվանաբար կիրառվելիս: Հատկացուցչի պաշտոնով հանդես գալիս ղերանունները որոշ առանձնահատկություններ են դրսևորում: Ներկայացնենք դրանք առանձին-առանձին:

ա. Անձնական ղերանուններ

Այս ղերանունները (ես, դու, նա, ինքն, իւր, նաև՝ հոգնակի թվով) սեռական հոլովաձևերով (իմ, քո, նորա, ինքեան, իւր, մեր, ձեր, նոցա, իւրեանց, ինքեանց) հանդես են գալիս որպէս հատկացուցիչներ: Ընդ որում, սրանց շարադասությունը առավել հետադաս է, քան նախադաս: Այս ղերանուններն ունենում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվով հատկացալներ: Բերենք օրինակներ:

Նախադաս կիրառություն. «Եւ ոչ ընդ *հրեանց ծնիչսն* հայրն Յուսիկ նայեցան» (31): «Եւ գան դարձեալ *յիւրեանց աշխարհն* խաղաղութեամբ» (38): «Եւ այս երևոյթ նշանակս մնացէ *յիմ յիշատակի*» (46): «Եւ արձակեաց *յիւր աշխարհէն* յերկիրն Հայոց» (49): «Որք... տեսանէին զնա ըստ *նորա կամացն*» (72): «Զի ոչ եթէ *նորա բանիւ* մանուկն կեայր կամ մեռանէր» (74): «Յուշ լիցի քեզ *քո տէրն*» (101): «Ի թագաւորացն Հայոց ստացաւ *հիւր գեւղս*» (228): «Ներսէս լիցի *մեր հովիւ*» (58): «Որ ըստ *նոցա կամացն* վարիցէ» (30):

Հետադաս կիրառություն. «Եւ արկ *գայթոռ նորա* ի վերոյ քան զբազումս ի նոցանէ» (23): «Եւ յետ այսորիկ երող ձեզ գամենայն *վնասս ձեր*, և ետ ձեզ վարդապետս *զսիրելիս հիւր*» (34): «Եւ լռեցոյց շուրջ *զթշնամիս նոցա*» (40): «Զնախնի թագաւորութիւն այսրէն *առ որդի* և *առ գաւակ նոցա յազգս իմ* և *ի տունս իմ* և *յանձն իմ* դարձուցանեմ» (43): «Գործք քո ճշմարիտ են» (165): «Նա և *գորքն հիւր* անկանելին ի ձեռս զօրացն Հայոց» (53): «Ի *գլուխ մեր* դարձցին այն մեղք» (59): «Բերին *ի գաւառն հիւրեանց*» (13):

Քանի որ գրաբարի անձնական ղերանունների սեռական հոլովաձևերից ծագել են ստացական ղերանունները, հետևաբար անձնական ղերանունների սեռական և ստացական ղերանունների ուղղական հոլովաձևերը ձևով իրար նման են, որի հետևանքով էլ գրաբարյան բնագրերում դրանք երբեմն գործածվել են մեկը մյուսի փոխարեն: Գրաբարի քերականները փորձել են իմաստային և գործա-

ռական տարբերություններ գտնել այս երկու դերանունները միմյանցից տարբերելու համար:

Խոսելով Բուզանդի երկում անձնական դերանուններով արտահայտված հատկացուցիչների շարադասության մասին՝ հարկ է նշել, որ այն բազմաձև է՝ հետադասի գերակայությամբ, որը պարզորոշ երևում է Հավելված 2-ում բերված մեր կազմած վիճակագրական աղյուսակից:

Ինչպես երևում է բերված աղյուսակից, *հւր* դերանունից բացի մյուս բոլոր անձնական դերանունների հետադաս գործածությունը գերազանցում է նախադաս կիրառությանը: Բացի այդ, *ինքեան* և *ինքեանք* եզակի և հոգնակի թվի սեռականները որպես հատկացուցիչ չեն գործածվել:

բ. Ստացական դերանուններ

Ստացական դերանուններն այն առանձնահատկությունն ունեն, որ համաձայնում են իրենց հատկացյալին հոլովով և թվով: Հետևաբար նրանք՝ որպես նախադասության անդամ, հատկացուցիչներ են ոչ միայն ուղղական, այլև մյուս բոլոր հոլովներով: Մ. Մինասյանն այս համաձայնության մասին գրում է. «Բհարկէ, տրամաբանօրէն եւ իմաստային տեսակետից ամենեւին էլ անհրաժեշտ չէ, որ ստացական դերանունն իր յատկացեալի հետ միասին հոլովվի: Նրանց ուղիղ ձեւն ինքնին սեռական հոլովաձեւ է եւ նախադասութեան մէջ ինքնին ի վիճակի է իբրեւ յատկացուցիչ հանդէս գալու»¹⁸: Ապա ավելացնում է, որ նրանց, ինչպես նաև որոշիչների համաձայնությունը ունի շարահյուսական նշանակություն. «այն ցոյց է տալիս, որ տուեալ ստացական դերանունը իբրեւ յատկացուցիչ, կապուած է նախադասութեան տուեալ անդամի հետ, վերաբերում է նրան. դա ձեւաբանական-շարահիւսական յարաբերութիւն է»¹⁹:

Ստացական դերանուն հատկացուցիչներն իրենց հատկացյալի հետ գործածվում են և՛ նախադաս, և՛ հետադաս՝ երկու դեպքում էլ համաձայնելով նրան հոլովով և թվով, բացի հոգնակի ուղղական, հոգնակի հայցական, մասամբ էլ՝ հոգնակի գործիական հոլովներից, որտեղ մնում են եզակի: Ընդ որում, հատկացյալները Մ. Մինասյանն առանձնացնում է երեք խմբի՝ արտահայտված սովորական գոյականներով, անեզական գոյականներով և հավաքական գոյականներով²⁰: Հավաքական անուն հատկացյալների դեպքում հատկացուցիչը դրվում է եզակի, քանի որ հավաքական գոյականները միշտ ձևով եզակի են: Անեզական հատկացյալների դեպքում հատկացուցիչը դրվում է հոգնակի, քանի որ անեզականները ձևով հոգնակի են:

Նախ բերենք նախադաս գործածության օրինակներ. «Առնոյր *հւր կին* Արշակ թագաւորն» (52): «... և մեք աւարաւ *զմեր աշխարհս* լցցուք» (13): «Ես ոչ կարեմ *զձեր մեղսդ* ընդ անձամբ բառնալ» (59) «Ինքն եղև օրինակ *մերոյ կենդանութեանս*» (70): «Եւ ետուր զյուսոյ զհաւատս յարութեան ամենայն *քոց արարածոց*» (189): «Ապա երթեալ գտանէին գնա *յիւրում գաւառին* ի Տայս» (109): «... *յիւմէ քաղաքէ* անտի գալ հասանէլ ի լերինս Հայոց» (19): «*Բւրով մարդասիրութեամբ* բուծանէ զնոսա» (94): «Եւ Մանուէլ սպարապետն հասանէր *յիւրով գնդաւն* ի նոյն տեղի» (203):

¹⁸ *Մինասեան Մ.*, նշվ. աշխ., էջ 93:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 91:

Հայտնի է, որ գրաբարում **pn** ստացական դերանունն ունի հոլովման երկու ձև՝ կարճ և երկար (քոյ-քոյոյ, քոց-քոյոց, քով-քոյով, քովք-քոյովք և այլն): Սովորաբար կարճ ձևը գործածվում է հետադաս, իսկ երկարը՝ նախադաս: Բայց Բուզանդն իր երկրում նախադաս կիրառության ժամանակ էլ հիմնականում գործածել է կարճ հոլովաձևը: Օրինակ՝ «Եւ զիս, զայր անարժան, արժանի արարեր *քում ծառայութեանդ*» (149): «Իսկ դու խստացար ընդ իս և *քովք կամօք՝* առանց իմոց կամաց եղեր ընդ իս թշնամի» (141): Հետևյալ օրինակում նախադաս դիրքում գործածվել է կանոնավոր երկար ձևը. «Եւ անցին *գքոյով պատուիրանօքդ*» (188):

Բերենք նաև հետադաս գործածության օրինակներ. «... խնդրեցին *երեսք իմ զերեսս քո*» (72): «Եւ էած զօրս արքային Պարսից *ի թիկունս իւր*» (18): «Արիստակէս հօրն էր գործակից զամենայն աուրս *կենաց իւրոց*» (6): «... մահ առն *իմոյ վասն իմ եղև*» (103): «Որք ոչ հաւանեալ գործոց *մեղացն ձերոց...*» (35): «Արշակայ *թագաւորին մերոյ* գոհ լիջիր» (168): «Զի լուեալ տէր *աղօթից քոց*» (72): «Եհար *ի սրտի իւրում*» (175): «Դարձցի սրտմտութիւն Բարկութեան քո *յուխտէ քումմէ*» (166): «Թագաւորեաց յերկրին ասորեստանեայց *հանդերձ հարբն իւրով* և ամենայն *ընտանեօքն իւրովք*» (55):

Նշենք, որ ստացական դերանուններով արտահայտված հատկացուցիչները հիմնականում հետադաս են գործածվել: Հատկապես շատ են **իւրոյ** հատկացուցի օրինակները, որոնք հիմնականում հետադաս են կիրառված:

Երբեմն թեք հոլովներում ստացական դերանուն հատկացուցիչները չեն համաձայնում իրենց հատկացյալին: Հետևյալ օրինակներում նախադաս գործածված **իւր** դերանունը իր հատկացյալին հոլովով համաձայնել է, իսկ թվով՝ ոչ. «Որ *իւրոյ հարցն* նմանեալ...» (11): «... յաղագս *իւրոյ զօրացն*» (174): «Եւ խոյս ետ *թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն*» (14):

Ինչպես նշել ենք արդեն, երբեմն գործիական հոլովում դերանունը մնում է եզակի. «... անցին *գքոյով պատուիրանօքդ* » (188)²¹:

Թվային անհամաձայնության մասին Մ. Մինասյանը գրում է. «Այդ եզակի երևույթները, վերջիվերջոյ, թերեւս առանձին դրսևորումներ են այն ընդհանուր ձգտման, որ նկատելի է հին հայերէնում. լրիւ ազատուել ստացական դերանուն յատկացուցչի համաձայնութիւնից»²²:

Ավելի հաճախ հանդիպում են ստացական դերանուն հատկացուցիչների լրիվ՝ թե՛ հոլովական, թե՛ թվային անհամաձայնության օրինակներ, այսինքն՝ անկախ հատկացյալի հոլովից և թվից՝ ստացական դերանուն հատկացուցիչը մնում է եզակի ուղղականով: Հետաքրքիր է, որ անհամաձայն օրինակներում առավել շատ են նախադաս գործածությունները:

Բերենք օրինակներ. «Եւ մինչ նա հոգացեալ վասն *իւր* ծննդոց մնացելոց *զաւակին...*» (11): «Եւ զինքնին Տիրան *թագաւորն Պարսից արձակեաց յիւր աշխարհէն* յերկիրն Հայոց» (49): «... զի ի *թիկունս* հասցես *քո գնդաւդ*» (110):

Մ. Մինասյանը հակադրվում է այն լեզվաբանների կարծիքին, որոնք այս դերանունները անհամաձայնության դեպքում համարում են ոչ թե ստացական, այլ անձնական դերանուններ: Ըստ նրա՝ եթե այս դեպքում դրանք անձնական են համարվում, ապա հոգնակի թվի ուղիղ հոլովներում էլ պետք է անձնական հա-

²¹ Հարցի մասին տե՛ս նաև **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 97:

²² **Մինասեան Մ.**, նշվ. աշխ., էջ 108:

մարվեն, մինչդեռ այս վերջին դեպքում դրանք ստացական են դիտվում: Մ. Մի-նայանի կարծիքով՝ **իմ, քո, իւր, մեր, ձեր** դերանունները անձնական դերանուն-ներ են միայն հետևյալ դեպքերում:

ա. Բայերի անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալի հետ՝ որպես նրանց սեռական ենթական.

բ. *Եւ, գոյ, կայ, լինիմ* բայերով արտահայտված ստորոգյալների հետ՝ որ-պես նրանց սեռական ենթական.

գ. Նախադրությունների և **ընդ** նախդրի հետ կիրառվելիս²³:

Մյուս բոլոր դեպքերում նա այս դերանունները համարում է ստացական:

Ստացական դերանունների գործածության աղյուսակը բերված է Հավել-ված 3-ում:

գ. Ցուցական դերանուններ

Ցուցական դերանուններից **այս, այդ, այն** դերանունները համեմատաբար սակավ են հանդիպում հատկացուցչի պաշտոնում, քանի որ դրանք հիմնակա-նում որոշային կիրառություններ ունեն: Բուզանդի երկում հատկացուցչի պաշ-տոնով դրանք ընդհանրապես չեն կիրառվել:

Մա, դա, նա, սոյն, դոյն, նոյն դերանունները և նրանց հոգնակի ձևերը ան-կախ կիրառություն ունեն և գոյականների հետ չեն գործածվում²⁴: Մրանց սեռա-կան հոլովաձևերը դառնում են հատկացուցիչներ: **Սորա, դորա, նորա, սորին (սորուն), դորին (դորուն), նորին (նորուն)** հոլովաձևերով արտահայտված հատ-կացուցիչները նշում են եզակի թվով առարկայի մեկ կամ մի քանի հատկացյալ-ները, իսկ **սոցա, դոցա, նոցա, սոցին (սոցունց), դոցին (դոցունց), նոցին (նոցունց)** հոլովաձևերով արտահայտվածները՝ բազմաթիվ առարկաների ունեցած մեկ կամ բազմաթիվ իրերը: Իմաստային այս նրբերանգները նկատելի են հետևյալ օ-րինակներում. «Յաւուրս սորա եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօր» (6): «... յամս յաւուրս սոցա աճել բազմացաւ» (6): «Ի քարոզութենէն Թադէոսի և նորուն յելից... ի ձեռն այլոցն գրեցան» (5): «Սակայն նորին արեամբ բազում և պէսպէս նշանօք խրատեաց ձեզ» (34): «Փոխանակ նորա տեղի նորուն գոր կացուցին գՅու-սիկ» (190): «Եթէ այր լինելոց է ի սորա գաւակէ» (60): «Տրդատ լեալ էր սոցա ըն-կէր» (230): «Ի ձեռն դորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն» (167):

Ցուցական դերանուններով արտահայտված հատկացուցիչներն ըստ նա-խադաս և հետադաս շարադասության ներկայացնում են հետևյալ պատկերը.

	նախադաս	հետադաս
սորա	6	7
սոցա	5	1
դորա	-	4
դոցա	1	-
նորա	-	-
նոցա	-	-
ընդամենը	12	12

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 115-116:

²⁴ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 90:

Հաշվարկված չեն **նա** դերանվան եզակի **նորա** և հոգնակի **նոցա** սեռականները, քանի որ դրանք ոչ թե ցուցական դերանուններ են, այլ **նա** անձնական դերանվան եզակի և հոգնակի սեռականի հոլովածները:

Նշենք, որ երբեմն անձնական և ցուցական դերանուն հատկացուցիչները համաձայնում են հատկացալին թեք հոլովներում: Ներկայացնենք այդպիսի եզակի օրինակ. «... ոչ ինչ ածեր ընդ միտ զսեր թագաւորին կամ *ի նմանէ կուսէ* զպատուեալսն» (11):

Մ. Մինասյանը բացատրական և գործիական հոլովներով դրված հատկացուցիչները համարում է հատկացալի հոլովի ձգողության հետևանք²⁵:

դ. Որոշյալ դերանուններ

Բուզանդի երկում որոշյալ դերանուններից հատկացուցչի պաշտոն են զբաղեցրել հետևյալ ձևերը՝ **ամենեցուն**, **ամենայն** և **յւրաքանչիւր**: Բերենք օրինակներ. «Յայնժամ եղ տէր *ի միտս ամենեցուն* խնդրել իւրեանց հովիւ» (60): «*Ամենեցուն միաբանութեամբ ... արձակեցան և գնացին*» (60): «Քանզի մեծութիւն աստուծոյ արար զամենայն և կացոյց զմարդն *տէր ամենայնի*» (70):

Որոշյալ դերանունների մեջ հատկացուցչի պաշտոնում հանդես գալիս ուսումնասիրության առումով հետաքրքրություն է ներկայացնում **յւրաքանչիւր** դերանունը:

Հինգերորդ դարի առաջին կեսում **յւրաքանչիւր** և նրան հոմանիշ **անձնիւր**, **անցնիւր** դերանունները չեն հոլովվում. դրանց ուղիղ ձևերը կիրառվում են նաև սեռական հոլովի իմաստով: Բերենք օրինակներ. «... յայնմ ժամանակի զօրավարքն չէին անդ, տոյնպէս և զօրքն արքունի *յիւրաքանչիւր տունս, յիւրաքանչիւր կայեանս, յիւրաքանչիւր դադարս* դադարեալ էին» (45): «... և մինչ դեռ *յիւրաքանչիւր լերին* նստէին սոքա ի ժամու, յորում մեռաւ սուրբն Ներսէս, տեսանէին սոքա *յիւրաքանչիւր լեանէ* զՆերսէս...» (184):

Նշենք, որ **յւրաքանչիւր** դերանունը հիմնականում նախադաս է կիրառված:

Բուզանդի երկում **անձնիւր** հատկացուցչի միայն մեկ գործածություն կա. «... ամենայն ոք *յանձնիւր տուն* անձկացեալ էր» (113):

ե. Անորոշ դերանուններ

Անորոշ դերանուններից հատկացուցիչ են դարձել **այլ**, **ոք**, **ումն** դերանունները: Օրինակ՝ «... և որ զնոցուն հակառակ ընդդիմակաց, այն ամենայն *ի ձեռն այլոցն* գրեցան» (5): «... նախ զանձն ապրեցուցանելոյ, և վասն *այլոց հոգւոց* զնոյն առնել կամէր» (27): «Եթէ արինահան ոք իցէ, կամ *զկին ուրուք* տարեալ իցէ, կամ ոք ուրուք կարասի ունիցի...» (91): «... անցանէր առ *այգեօք ուրումն*» (227):

զ. Փոխադարձ դերանուններ

Փոխադարձ դերանուններով արտահայտված հատկացուցչի միայն մեկ օրինակ ենք նկատել Բուզանդի երկում. «... հաւանեցաւ մեծաւ սիրով առնել *զկամս միմեանց*» (55):

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 29:

Է. Հարցական-հարաբերական դերանուններ

Այս դերանուններից հատկացուցչի պաշտոնում հանդես է եկել **որ** դերանունը, որը գործածության որոշակի առանձնահատկություններ ունի: Այս դերանվան եզակի և հոգնակի սեռական հոլովաձևերը նախադաս կիրառությամբ դառնում են հատկացուցիչ և չեն համաձայնում հատկացյալին: Օրինակ՝ «Այլ վասն վրիժագործ ժողովրդեանն, *որոց զթիկունսն* ի տերունսն և կործան յերեսս՝ տիրադրուծք իւրեանցակուռ ձուլելոյն երկիր պագանէին» (20): «... *որոյ ձեռքն* արարին և հաստատեցին զամենայն զերեսս երկնից» (68):

Որ դերանունը նախադասության մեջ կարող է կրկնվել **իւր** ստացական դերանունով կամ **նորա**, **իւրեանց**, **նոցա** սեռական հոլովաձևերով՝ թվային համաձայնությամբ: Օրինակ՝ «Կամ զիա ըդ բառնայցեմ զձեռս իմ աղօթիւք առ աստուած վասն այնոցիկ, *որոց ձեռք իւրեանց* շաղախեալ են արեամբ սրբոյ տեառն» (36):

Որոյ, որոց հատկացուցիչները երբեմն կրկնվում են նաև սեռական հոլովով դրված իրենց հարաբերյալով: Օրինակ՝ «... իսկ հլուացն, *որոց* ականջք *սրտիցն* բացեալ էին» (62):

Այս իրողությունը Մ. Մինապյանը բացատրում է նրանով, որ հարաբերական դերանունից հետո վերականգնելով հարաբերյալը՝ հեղինակը պարզաբանում է իր միտքը, մեկնաբանում հարաբերական դերանվան բովանդակությունը²⁶:

Երբեմն **որ** դերանունը նախադասության մեջ հանդես է գալիս որպես **անուն** հասարակ գոյականով արտահայտված հատկացյալի հատկացուցիչ: Այս դեպքում այն առաջին հերթին դրվում է սեռական հոլովով: Օրինակ՝ «Ապա ինքն յայտնեալ երևեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, *որոյ անուն* կոչէր Եպիփան» (37): «... ոչ ինչ պակաս քան զղն էր մոլորութեամբ, *որոյ անուն* Փիսակ կոչիւր» (42):

Շատ հաճախ դերանունը կարող է դրվել տրական հոլովով: Օրինակ՝ «Ձայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն մծբնացոց, *որում անուն* Յակոբ» (19): «Մեծ զօրավարն Հայոց, *որում անուն* էր Վասակ» (38): Երբեմն այս դեպքում **որ** դերանունը կարող է դրվել նաև ուղղական հոլովով: Այսպիսի ընդամենը մեկ օրինակ ենք առանձնացրել Բուզանդի երկից. «Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին կայր կենդանի Արշակ արքայ... յԱնդմըշն բերդին, այս ինքն *որ անուն* Անյուշ բերդն կոչեն» (172):

ը. Փոխանուն սեռական

Փոխանուն սեռականի գործածություններ կան V դարի թարգմանական և ինքնուրույն մատենագրությունում, այդ թվում նաև Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում:

Փոխանուն սեռականին անդրադարձել են տարբեր քերականներ՝ Ա. Բագրատունին, Մ. Աբեղյանը, Գ. Սևակը, Մ. Մինապյանը և ուրիշներ:

Ըստ Մ. Մինապյանի՝ զեղչված հատկացյալի իմաստը ներառող և նախադասության մեջ միաժամանակ իր և նրա պաշտոնով հանդես եկող հատկացուցիչը կոչվում է փոխանուն սեռական²⁷: Փոխանուն սեռականն իմաստի առումով

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 199:

²⁷ Տե՛ս *Միասեան Մ.*, նշվ. աշխ., էջ 43:

հանդես է գալիս թե՛ որպես հատկացյալ և թե՛ որպես հատկացուցիչ: Ջեղչված հատկացյալի փոխարեն դրվում է նրա նախդիրը և ավելացվում է **և** հոդը: Գրաբարում փոխանուն սեռականները ուղղական, հայցական հոլովածներից բացի կարող են գործածվել մյուս հոլովների իմաստով՝ կրելով **ի, առ, ընդ** նախդիրներ և **իբրեւ, որպէս, քան** նախադրություններ²⁸:

Բերենք օրինակներ Բուզանդի երկից. «Ձի եթէ ոչ՝ նախ դու գնորա զաւարն դարձուցես, և ապա **զքոյդ** դարձուցից» (49) (զքոյդ = զքոյ աւարն):

Այս նախադասության մեջ զեղչված է **աւարն** հատկացյալը: Նախադաս **քոյ** ստացական դերանունը պահպանել է հատկացյալի՝ նախադաս հատկացուցչի վրա դրված **զ** նախդիրը: Ավելացել է նաև **դ** ստացական հոդը: Այլ օրինակներ.

«Կոչեցին զանուն առաջնոյն Պապ, **զերկրորդին**՝ Աթանագինէս» (10) (զերկրորդին = զանուն երկրորդին):

«Ամենայն աշխարհիս նախարարքն կամին զտէրութինն նորա ի վերայ իւրեանց առաւել քան **զքո**» (99) (զքո = զտէրութինն քո):

Այսպիսով, հատկացուցիչ-հատկացյալ կառույցը գրաբարի շարահյուսական հետաքրքիր իրողություններից է: Հատկացուցիչ-հատկացյալի համաձայնությունը օրինաչափ է ստացական դերանունների դեպքում: Մյուս խոսքի մասերով արտահայտված հատկացուցիչները, որպես կանոն, չեն համաձայնում: Իսկ հատկացուցչի շարադասության վերաբերյալ մեկ անգամ ևս նշենք, որ մեր կատարած ուսումնասիրության վիճակագրական արդյունքների համաձայն՝ այն Փավստոսի երկում ոչ կայուն հետադաս է:

Հավելված 1

Անձնական դերանունների սեռական հոլովածներ	նախադաս կիրառություն	հետադաս կիրառություն
իմ	11	25
մեր	13	26
քո	17	77
ձեր	6	29
նորա	4*...	44...
նոցա	5	34...
իւր	14	5
իւրեանց	8...	34...
ինքեան	-	-
ինքեանց	-	-
ընդամենը	78	274

²⁸ Հարցի մանրամասն քննությունը տե՛ս նույն տեղում, էջ 40-73:
 * Բազմակետերը ցույց են տալիս, որ Բուզանդի գրքում համապատասխան գործածությունները շատ են: Մենք նման դեպքերում հաշվել ենք ոչ բոլորը:

Ստացական դերանունների հաճախականության աղյուսակ

իւր	էտ.	60 / 50	14(+9) / 2	144 / -	9 / 5	20 / 13	326
	նախ.	34 / 16	13(+8) / 5	38 / -	9 / -	17 / 10	150
		իւրոյ / իւրոց	իւրում / իւրոց	(զ) իւր	յիւրմէ / յիւրոց	իւրով / իւրովք	
ձեր	էտ.	5 / 20	- / 3	- / -	1 / 2	- / -	31
	նախ.	- / -	3 / -	- / -	- / -	- / -	3
		ձերոյ / ձերոց	ձերում / ձերոց	(զ) ձեր	ի ձերմէ / ի ձերոց	ձերով / ձերովք	
մեր	էտ.	13 / 10	- / -	- / -	2 / 1	- / -	26
	նախ.	7 / 1	-(+1) / -	- / -	- / -	- / -	9
		մերոյ / մերոց	մերում / մերոց	(զ) մեր	ի մերմէ / ի մերոց	մերով / մերովք	
ք	էտ.	- / 19	1(+1) / 2	- / -	3 / 1	1 / 1	29
	նախ.	- / 2	3(+1) / 1	- / -	- / -	1 / 1	9
		քոյ, քոյոյ / քոց, քոյոց	քում, քոյում / քոց, քոյոց	զ (ք)	ի քումէ, ի քոյոյ / ի քոց, ի քոյոց	քով, քոյով / քովք, քոյովք	
իմ	էտ.	7 / 10	-(+5) / -	- / -	3 / 2	- / -	27
	նախ.	- / 2	1(+5)* / -	- / -	- / -	3 / -	11
		իմոյ / իմոց	իմում / իմոց	(զ) իմ	յիմմէ / յիմոց	իմով / իմովք	
	սեռ.		սղ.	հայց.	բաց.	գործ.	Ընդամենը

* + նշանով ներկայացվում է ներդրականի կազմությունը

Карине Погосян – Связь определения и определяемого в произведении Павстоса Бюзанда “История Армении”. – В статье рассматриваются сочетания несогласованное определение – определяемое слово в сочинении историка V века Павстоса Бюзанда “История Армении”, вопросы их согласования и порядка слов, способы выражения несогласованного определения различными частями речи. Представляются также статистические данные относительно их расположения в предложении.

Karine Pogosyan – Attribute - determined combination in Pavstos Buzand's “History of Armenia” work. – The fifth century historiographer P. Buzand's “History of Armenia” novel's attribute-determined combinations, the questions of their agreement and word-order, attributive expressions with different parts of speech are discussed in the article. There is also presented statistical calculation about word order of attribute.

XIX ԴԱՐԻ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՐՑԵՐԸ
ՍՏ. ՆԱԶԱՐՅԱՆԻ «ՀԱՆՈՒՏ ՆՈՐ
ՀԱՅԱՌԾՈՒԹԵԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ԻՄ ասիստենտ

Հոդվածում քննության է առնվում XIX դարի հայ նշանավոր գործիչ, հրապարակախոս Ստ. Նազարյանի «Հանդես նոր հայախօսութեան» աշխատությունը, որտեղ հեղինակը հանդես է գալիս կենդանի լեզվի՝ աշխարհաբարի հասարակական դերի և նշանակության հիմնավորումներով: Կարևորն այն չէ, թե ինչպիսին է Նազարյանի անհատական ոճը, այլ այն, որ նա բացեց մի նոր հանդես, որը պետք է նպաստեր հայ գրականության զարգացմանը՝ այն դարձնելով ավելի կենսունակ ու մատչելի հասարակության լայն խավերին՝ միաժամանակ կամուրջ դառնալով հայ և եվրոպական մշակույթի միջև:

Բանալի բառեր. Ստ. Նազարյան, Հանդես նոր հայախօսութեան, գրաբար, աշխարհաբար, գրական լեզու, գիտական ժողովածու, հայախոսություն, Լազարյաններ, Մխիթարյաններ:

Հայ նշանավոր գրական գործիչ, հրապարակախոս և խմբագիր Ստ. Նազարյանցի ազգային-լուսավորական գործունեությունը նշանակալից տեղ է գրավում հայ հասարակական մտքի և մշակույթի պատմության մեջ: XIXդ. 50-70-ական թվականներին, երբ սուր պայքար էր մղվում աշխարհաբար գրական լեզվի իրավունքների և նրա համակարգի շուրջը, նա նպաստում է հայ ազգային գրականության աշխարհիկ բովանդակության ստեղծմանը, հանդես է գալիս կենդանի լեզվի՝ աշխարհաբարի հասարակական դերի ու նշանակության հիմնավորումներով:

Նազարյանցն աշխատում էր ավելի բազմաբովանդակ նյութեր պատրաստել հայ ընթերցողի համար: Այս աշխատասիրության արդյունքն էին «Հանդես նոր հայախօսութեան» աշխատության երկու մեծածավալ հատորները: Այդ երկու հատորների լույս աշխարհ գալը թարմ ու կարևոր երևույթ էր տվյալ ժամանակի համար: Ժողովրդին էր հանձնվում նոր մշակվող գրական լեզվով ընթերցանության գիրք, որը կոչված էր տարածելու և հիմնավորելու նոր հայախոսությունը:

Հետևելով ռուս գրականության և մամուլի մեջ առատորեն ներթափանցվող եվրոպական լուսավորության նվաճումներին՝ Նազարյանցը նույնպես հրապարակ է հանում իր՝ տարիներ շարունակ աշխարհաբար լեզվով մշակված նյութերը, որոնք վերցված են եվրոպական աղբյուրներից: Այդ նյութերի մեջ մեծ տեղ են գրավում բնապատմական, պատմական, գեղարվեստական տարբեր աղբյուրներից հանված ակնարկներ, հեքիաթներ, բարոյախոսական բնույթի խորհրդածություններ, ասացվածքներ և այլն:

Իհարկե, այսպիսի ծավալուն բովանդակությամբ ժողովածու հրատարակելը չէր կարող հեշտ լինել: 1854թ. վերջերին հասարակական գործիչ Ն. Շանշյանի միջոցով «Հանդես նոր հայախօսութեան» առաջին հատորը հասնում է Լազարյաններին՝ տպագրության թույլտվություն ստանալու համար: Վերջիններս հայտ-

նում են, որ ընդունելի չեն համարում ո՛չ գրքի վերնագիրը, ո՛չ լեզուն և ո՛չ էլ բովանդակությունը: Նրանք խորհուրդ են տալիս լեզվի հարցում հետևել Մխիթարյաններին:

Դեռևս 1843թ. Հ. Լազարյանին Ստ. Նազարյանի գրած նամակից առաջին անգամ տեղեկանում ենք Մխիթարյանների մասին նրա ըմբռնումների մասին: Ըստ Նազարյանի՝ Մխիթարյանների ջանքերի շնորհիվ եվրոպական գիտական աշխարհն իր ուշադրությունը դարձրեց հայ հին մշակույթին և ձեռնամուխ եղավ նրա ուսումնասիրմանը: Մխիթարյանների նպատակն է եղել հավաքել հայ մատենագրության բեկորները և դրանց ուսումնասիրմամբ հիմք դնել ազգային լուսավորությանը: Հայ մտավոր մշակույթի պահպանումը, ի մի բերումը և հետագա զարգացումն ու լեզվի հարստացումը՝ բնագրերին ոչնչով չզիջող թարգմանություններով, ահա սրանք է համարում Նազարյանը այդ մեղվաջան գիտական միաբանության ծառայությունը, որը պետք է լինի «մշտնջենական երախտագիտության արժանի»: Միաժամանակ Նազարյանը նշում է, որ «Մխիթարյանները չափազանց քիչ են ըմբռնում ներկայի պահանջմունքները և հաճախ սխալվում են հայ երեխաների համար կրթության միջոցներ ընտրելիս»¹:

Նույն թվականի դեկտեմբերի 21-ին, Նազարյանը պաշտպանելով իր սկզբունքները, պատասխանում է Լազարյաններին, որ հայերը պետք է ենթարկվեն զարգացման նույն օրենքներին, ինչին եվրոպական ազգերը, ուստի և չպետք է Մխիթարյաններին օրինակ բերելով հավատացնել, թե մեռած գրաբարը կարող է երբևէ վերակենդանանալ: Սակայն Նազարյանը չի ժխտում գրաբարի դերը նոր գրական լեզվի կազմավորման գործում: Նա գտնում է, որ հին լեզվի հարստությունը կարևոր է նոր լեզվի մշակման համար, և պետք է նրան անհրաժեշտն ու պակասը լրացնել հին լեզվից. «Հայոց հնություններով զբաղումներին նվիրված ուսեսեալ հայր, ժողովրդախոսակցական լեզուով գրող հայր միշտ կդիմեն նվիրական հին հայերենի սրբութեանը, առաջինը ժողովրդական հնութեան հուշարձանների համար, իսկ վերջինը՝ հնագոյն խոսքի անսպառ ակունքներից ժողովրդական բառարանը հարստացնելու և վսեմացնելու համար»²: Նազարյանը, Մխիթարյաններին բարձր գնահատելով որպես հայագետների, չի ընդունում նրանց առաջատար դերը ժամանակի գիտությունների տարածման ասպարեզում: Գտնում է, որ Մխիթարյանների և արևելահայերի միջև մշակութային կապերը թույլ են, որը բացասաբար է անդրադառնում «պապական թեքում» ունեցող Մխիթարյանների ձեռքբերումները յուրացնելու գործում: Նկատում է, որ Մխիթարյանների տպած գրքերը խիստ թանկ են, դժվար են ձեռք բերվում և այլն: Նազարյանը նշում է, որ տակավին չկա գիտական-կրթական մի համազգային մարմին, որ նպատակաւրջաւ ուղղության մղեր հայ մտավոր եռանդը:

Եվրոպական մտքին, ազգերի պատմությանը քաջ ծանոթ այս գործիչը լավ գիտեր, որ գրաբարը այլևս հարություն չի առնի, որքան էլ աշխատեն այն հղկել ու զարդարել: Նամակում Նազարյանցը նշում է, որ եվրոպական բոլոր ազգերի լեզուներն էլ վերածնունդ են ապրել: Նա բերում է իտալական գրական լեզվի օրինակը, թե ինչպես XIII դարում ընդդեմ մեռած լատիներենի ծնունդ առավ մի ուժեղ պայքար, և Դանթե Ալիգերին իր «Աստվածայի կատակերգություն» ստեղծագործությամբ նոր աստիճանի բարձրացրեց ժողովրդական բարբառը և մշակեց

¹ Ստ. Նազարյան, Նամականի, Եր., 1969, էջ 77:

² Ստ. Նազարյան, նշվ. աշխ., էջ 171:

նոր իտալերենը: Անգամ այնպիսի երկրներում, որտեղ վերածնության հարց չկար, լեզվի վերանորոգումը դարձյալ պահանջ էր: Նույնիսկ ֆրանսերեն սքանչելի լեզուն շնորհալի գրողների գրչի տակ բազմաթիվ խեղաթյուրված ու աղավաղված ձևերից պետք է աստիճանաբար դառնար ներկայիս լեզուն՝ ժողովրդական տարրերի օգնությամբ:

Մեռած ու կենդանի լեզուների փաստը, հների փոխարինումը նորերով՝ Նազարյանից առաջ դեռևս Խ. Աբովյանը համարում էր ժամանակի ոգու և պահանջի արտահայտությունը բոլոր ժողովուրդների կյանքում. «Հույները,- ասում էր նա,- նման անհրաժեշտության հետևանքով, թողել են իրենց գեղեցիկ հին լեզուն: Իտալացիք այդպիսի ուժ ունեցող լատիներենը փոխարինեցին իտալերենով: Այդքան շատ տարածված ու դարեր շարունակ որպես կրթական լեզու գործածված սլավոներենը հարկադրված էր տեղի տալ ժամանակի ոգուն և պահանջին: Մի թե հայերը պետք է մյուս ազգերից ետ մնան և թողնվեն հոգեկան խավարի այդպիսի ստրկական կապանքների մեջ: Սակայն սա մի առանձին անձի գործ չէ, այլ բարեհաճ, ընդհանուր բարօրության մասին այնպես հայրաբար հոգացող իշխանության գործն է: Որքան էլ նախապաշարմունքներն ու սնահավատությունները առաջին փորձին որոշ չափով դեմ գնան, այնուամենայնիվ ճշմարտությունը և այդպիսի բարձր նպատակների ձգտումը կհաղթանակեն երջանիկ գալիքի համար»³:

Այն, ինչ նոր էր սկսվում հայ հասարակական կյանքում, իրականություն էր արդեն մի շարք այլ ժողովուրդների մոտ: Եվ ահա Նազարյանցը ևս, ելնելով հասարակական կյանքում աշխարհաբարի ունեցած նշանակության ու դերի ըմբռնումից, գրաբարի փոխարինումը աշխարհաբարով համարում է անհրաժեշտություն և անխուսափելի մի երևույթ:

Լազարյանները չեն պատասխանում Ստ. Նազարյանի նամակին, բայց և չեն արգելում գրքի տպագրությունը: 1855թ. հունիսի 15-ին առաջին հատորը թույլատրվում է տպագրության, բայց լույս է տեսնում 1857թ.: Երկրորդ հատորը, որը 1856թ. նույնպես պատրաստ էր տպագրության, հրատարակվում է 1858 թվականին:

Առաջին հատորին կցված «Ողջույն-ծանուցման» առթիվ Նազարյանցը նշել է, որ այն պարունակում է «գրքի հանգամանքն ու խորհուրդը»: Նրան հուզող մշտական հարցերից մեկը ազգային գրականության ստեղծման անհրաժեշտությունն էր, առանց որի նա չէր պատկերացնում ժողովրդի հետագա զարգացումը և ազգային հոգևոր կյանքի բարգավաճումը: «Մի անպատմելի ուրախությւն է գալիս իմ սրտի վերայ,- գրում է նա,- որ այսօր պատճառ ունիմ բարձրացնել իմ ձայնը և քարոզել հրապարակաւ, թէ հայոց բանական հոգին, որ այդքան երկար ու ձիգ դարեր մահանման քնի մեջ թմրած ու կապած մնացել էր, ահա սկսանում է զարթոնուլ և նայել ետ ու առաջ, հասկանալ իւր տխուր անցեալը, հասկանալ իւր տգեղ ներկան, որպէս անցածի հարկավորապէս հետևանքը և ներկայումս հոգաբարձու լինել ապագային»⁴:

Այժմ եկել է ժամանակը, որպեսզի հայերը վերահասու լինեն այն խորհրդին, որ իրենց լուսավորությունը պետք է կատարվի իր իսկ «հատուկ ձեռքի վատակած վաստակով» և հասկանան, որ իրենք պարտավոր են իրենց սեփական

³ Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. 5, 1950, էջ 50:

⁴ Ստ. Նազարյան, Հանդես նոր հայախօսութեան, հ. 1, 1957, էջ Ա: Այսուհետև տեքստում՝ ՀՆՀ:

գութանով «մշակել և սերմանել ազգի անդաստանը», եթե ցանկանում են «ժողովել մի օրինեալ հունձ»⁵:

Բնորոշելով ամբողջ գրքի խորհուրդը՝ Նազարյանցը գրում է, որ կամեցել է մի հարմար ընթերցանության գիրք տալ ազգին, որի միջոցով ազգը հնարավորություն կունենա թե արժանապես իր ժամանակն անցկացնել, թե իր միտքը հարստացնել: Մարդիկ կարող են իրենց սրտերը և զգացողությունները ազնվացնել գեղեցիկ գաղափարներով. «... մեր խորհուրդը այն լինելով, որ տալինք ազգին մի բազմօրինակաբար դաստիարակիչ և առաջնորդող գիրք, որ լցուցաներ նոցա իմացական և հոգևոր պիտոյքը, ընտիր-ընտիր եվրոպական աղբյուրներից հանեցինք զանազան իմաստալից գրոյցք, պատմութիւնք, առակք, նմանախոսութիւնք, բնագիտական ճառեր, երևելի մարդերի վարքագրութիւնք և արժանի յիշատակի իրողութիւնք բնական և մարդկեղեն աշխարհի մեջ»⁶:

Նպատակը պարզ է. հայ ընթերցողի ձեռքը տալ բազմաբովանդակ նյութերի գրական և գիտական ժողովածու, որը մի հանրագիտարան էր ինքնակրթության համար:

Իր «Հրապարակախօս ձայն» աշխատության մեջ Սմբատ Շահագիզը «Հանդես նոր հայախօսութեան» մասին գրում է. «Ինչո՞ւ գործիքնակ Նազարյանցը մենակ հանձն է առել գրել մի այդպիսի երկար ու ձիգ շարադրություն և չէ թողել մեզ մանկավարժներին, պատմաբաններին, բնագետներին և առհասարակ մասնագետներին համարել այդ գործը: Այս հարցին դժվար չէ պատասխանել, որովհետև այդ մասնագետներս չենք եղել այն ժամանակ, չկանք և այժմ: Բայց ազգը յուր գավակներով կարոտ է ընթերցարանի, մի բազմօրինակ ընդհանրախօս ընթերցարանի»⁷:

Լեոն իր «Ստ. Նազարյանց» մենագրության մեջ իրավացիորեն նշում է, որ «Նազարյանցն առաջինն է, ոչ թե հայոց գրականության մեջ, այլ ռուսահայերի մեջ, որ ձեռքի տակ չունենալով մշակված հարուստ լեզու, նա չսարսափեց դժվարություններից և 1000 տպագիր մեծադիր երեսների վրա տվեց իր ազգին այն, ինչ կարողացել է քաղել եվրոպական շքեղ գրականությունից»⁸:

Առաջին հատորում Նազարյանցը զետեղել է հին հունական, եվրոպական, արևելյան աղբյուրներից հանված գեղարվեստական նյութեր, որոնք հիմնականում ունեն ուսուցողական և բարոյակրթական արժեք («Հանճարեղ ասացվածք», «Զօրավոր ասացվածք», «Քաջասիրտ խոսուածք», «Պատշաճավոր խոոսքեր»): Հատորի երկրորդ բաժնում ընդգրկված են մարդուն, բնությանը, հողագնդին նվիրված ուսմանական նյութեր:

Գրքի «Ծանուցման» մեջ Նազարյանցն անդրադառնում է իրեն հուզող հաջորդ հարցին, այն է՝ գրական լեզվի մշակման անհրաժեշտությանը:

Ինչպես գրականության մեջ ժողովրդի կենդանի լեզվի դիրքերն ամրապնդելու համար, այնպես էլ աշխարհաբարը մշակելու խնդրում Մ. Նալբանդյանը անխուսափելիորեն պետք է գործակցեր Ստ. Նազարյանցին՝ ժողովրդի կենդանի լեզուն մշակելու ուղղությամբ: Դեռևս 1845թ. Նալբանդյանը գրում էր. «Ազգն պահանջել, զի գրուածքն մեր լիցին նմա հասկանալի, կիրթ և մաքուր նոր հայախօ-

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ Բ:

⁷ Սմբ. Շահագիզ, Հրապարակախօս ձայն, Մ., 1881, էջ 80:

⁸ Լեոն, Երկերի ժողովածու, հ. 6, 1987, էջ 74:

սութեամբ, զոր ընթերցեալ և աճեցի բարոյապէս և աճեցուցէ զբողոք լեզուին, որ նա ուրեմն յետ երեք տասան դարուց ձմեռոց պոկեալ ի ստեղծունս, խոստանայ զպտուղ շաղ տալ, թէ միայն մշակողքն մշակէին գտունկն ըստ արժանոյն»⁹:

Հասունկ ուշադրություն դարձնելով իր գործածած գրական նոր լեզվին՝ Նազարյանն ընդգծում է, որ հրաժարվելով բարբառների գործածությունից, փորձում է «բազմօրինականաբար մշակել այն»՝ կանոնի և արվեստի տակ դնելով «հայկական աշխարհաբար բանախօսութիւնը»: Այս հատորը կազմելիս նա նկատի է ունեցել ընթերցողների ավելի լայն շրջան, ուստի աշխատել է պարզեցնել լեզուն՝ գիտական նյութերը ավելի հասկանալի ձևով մատուցելու համար: Նկատելով, որ հաճախ «ամենևին մաքրախօսքը» դառնում են «ամենևին մթախօսք», նա նոր հայախոսության մեջ է առնում նաև օտար բառեր: Հաշվի առնելով նաև գիտական մի շարք տերմինների թարգմանության հետ կապված դժվարությունները՝ Նազարյանցը մտածում է թողնել այնպես, ինչպես կան եվրոպական ձևերի մեջ (օրինակ՝ օրգանական, ինկվիզիցիա, վուլկանական, պոլարիզացիա, տեխնիկական և այլն): Ինչպես նկատում է Ռ. Նանույանը. «Այս և մի շարք այլ տերմիններ հայոց լեզվի գանձարանն են մտել Նազարյանցի բառապաշարից»¹⁰:

Նազարյանցը մատնանշում է նաև հին փոխառությունների գոյությունը, քանի որ մեր նախահայրերը ուսումնառելով Հայաստանում, բավականին շատ բառեր են հունարենից ներմուծել հայոց լեզվի մեջ, ինչպես օրինակ՝ մեքենա, փիլիսոփա, քարտեզ, գայիսոն, մորուս և այլն. այս բառերի գործածությունն ամենևին էլ չի տգեղացնում «հայկական լեզվի գեղեցկությունը»:

ՀՆՀ երկրորդ հատորի մասին Նազարյանցը նույն առաջաբանում գրում է, որ այն ունի ավելի վերամբարձ և իմաստասիրական նյութեր, «լեզուն ավելի գերապանծ և ոճը ավելի հեշտ ուսումնական». «Երկրորդ մասը սահմանեցինք առաելապէս փոքր ի շատե կրթեալ, և գիտուն հայերի համար թեպէտ և ժողովուրդը կարող էր օգուտ քաղել սորանից, եթէ կամենար մտածելով կարդալ և ուշադրությունը լարել մի փոքր»¹¹: Աշխարհաբարով գրված այս աշխատությունով Նազարյանն ապացուցում է, որ նոր լեզուն կարող է և պետք է լինի լուսավորության ու կրթության գործիք:

Ստ. Նազարյանցի դիրքորոշումը աշխարհաբարի նկատմամբ կատաղի հարձակման տեղիք է տալիս: Առ. Արարատյանը, որ պաշտպանում էր գրաբարի իրավունքները և անաղարտությունը, առանձին քննության առարկա է դարձնում Ստ. Նազարյանցի «Հանդէս նոր հայախօսութեան» աշխատությունը իր «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական նախամայր մաքուր լեզուիս հայոց» գրքում, որտեղ առաջարկում է «ճարակ հրոյ տուեալ զամենայն մատեանս նորա, խափանէին զնա մի ևս խօսիլ կամ գրել ինչ զազգէ, զկրոնէ և զլեզուէ մերմէ»¹²:

Առ. Արարատյանը Նազարյանցի գրվածքներն ուղղում է գրաբարով, ինչպես օրինակ՝ Նազարյանցը գրում է. «Բարձրացաւ մի սաստիկ պատերազմ. բարձրացաւ մի սաստիկ մրրիկ»: Արարատյանը կատարում է իր ուղղումը. «Պատերազմ և մրրիկ ոչ անկանին ի վայր, զի բարձրացցին. չէ այդ ոճ հայոց: Հարա-

⁹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 58:

¹⁰ Ռ. Նանույան, Ստ. Նազարյան, Եր., 1978, էջ 118:

¹¹ ՀՆՀ, հ. 1, էջ Դ:

¹² Առ. Արարատյան, Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոյ . . ., 1858, էջ 22:

գատութիւն լեզուին պահանջէ ասել. Եղև պատերազմ մեծ. Յարեաւ մրրիկ սաստիկ»¹³:

Կամ, Նազարյանցը պատմում է լուսնի մասին, գիտության վերջին գյուտերի համաձայն: Առաքելյանը վրդովվում է. «Պաւլոս (առաքեալը) մինչև յերրորդ յերկին յափշտակեցաւ և լուսաւ անդ բանս անձառս զոր ոչ է պարստասէ, մարդոյ խոսել»: Որպիսի գաղտնիք է, որ միայն վարդապետին Նազարեանց յայտնեցաւ, և այլոց սրբոց և ծառայից ոչ երբէք»:

Առ. Արարատյանն առաջնորդվում է հնացած սկզբունքով, թէ «լեզու և կրոն են երկու հաստափն միմեք տաճարի ազգութեան ի խախտիլ միոյն, հարկաւ խախտի եւ միւսն, որով և կործանի զազգութիւնն»¹⁴: Նա նույնիսկ ամբաստանում է Նազարյանին, իբրև թէ վերջինս կամենում է փոխել հայկական կրոնը, ինչպես փոխում է հայոց լեզուն:

Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ այս պատկառելի հատորները իրենց բազմաձևալ նյութերով և հոդվածներով, իրոք որ հանդես են նոր հայախոսության:

Ինքը՝ Նազարյանը, ամենևին էլ կատարյալ չի համարում գործածած լեզուն և պատրաստ է ուսանել ավելի գեղեցիկ և մաքուր խոսողներից, ովքեր ցույց կտան սխալներն ու թերությունները, որը կնպաստի աշխարհիկ հայախոսության մեջ ավելի վարժ և կիրթ լինել:

Մ. Նալբանդյանը «Հանդէսի» առաջին հատորի առթիվ տպագրած իր «Կրիտիկայում» գրում է, որ այդ գիրքը «... առավել ճոխ է, առավել հարուստ և առավել մոտ կենդանի ժողովրդի բարբառին, քան թէ հեղինակի այլ գրվածքը մինչև այսօր»¹⁵: Իսկ Նազարյանի անհատական ռճի մասին նա գրում է. «Իսկ թէ երբեմն էլ ոչ հայաբար, այլ եվրոպաբար բացատրել է յուր միտքը, դորա պատճառը կարծում ենք այն, որ հայոց ազգի ժողովրդական լեզուն մի անմշակ և անմարդացած լեզու լինելով, չունի դեռևս այն բոլոր ձևերը, այն լոգիկաբար կապակից պարբերությունքը, որոնցով հարազատորեն կարելի էր ամենայն եվրոպական գաղափար թափել հայերենի միջև»¹⁶: Մ. Նալբանդյանը ցանկանում է «առավել ժողվրդացած տեսնել նորա լեզուն»:

Իսկ այժմ տեսնենք, թէ լեզվական ի՞նչ տարբերակիչ հատկանիշներ են դրսևորվում Ստ. Նազարյանի «Հանդէս նոր հայախոսութեան» աշխատության մեջ՝ որպես լեզվական նոր իրողություն.

1. **Ուրիւն** ածանցով կազմված բառերի հոգնակին կազմվում է և՛ գրաբարյան **-ք**, և՛ աշխարհաբարյան **-ներ** վերջավորություններով, իսկ հոլովման ժամանակ օգտագործվում են նույն բառերի հնչյունափոխված (**-թեն**) և անհնչյունափոխ (**-թին**) ձևերը: Օրինակ՝ զգայութիւնք (ՀՆՀ, 2, 382)¹⁷, արտահոսութիւնք (ՀՆՀ, 2, 1, 79), փլատակութիւնք (ՀՆՀ, 2, 70), տարաձայնութիւնք (ն. տ., 278), բայց հանդիպում ենք նաև՝ ճեղքուածներ, ջրհեղեղներ (2, 72), արագութենով (ն. տ., 65), բարձրութենով (ն. տ., 73), տեղեկութիւններով (1, 53): Հոգնակի սեռակաճում այս կազմությամբ բառերը առավելապես **-ի** հոլովման են ենթարկվում՝ իշխանութիւնների, տերութիւնների (2, 453), բազմութիւնների (2, 341) և այլն:

¹³ Նույն տեղում, էջ 28:

¹⁴ Նույն տեղում, էջ 8:

¹⁵ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 148:

¹⁶ Նույն տեղում, էջ 149:

¹⁷ Այսուհետև ՀՆՀ-ից մեջբերվող օրինակների մոտ կնշվեն միայն աշխատության հատորը և էջը:

2. Հետաքրքիր է Ստ. Նազարյանի լեզվում **ի** հոլովման հաճախակի գործածությունը, պատմականորեն այլ հոլովումների պատկանող բառեր նույնպես ենթարկվում են այս հոլովման: Օրինակ՝ օրի մեջ (1,56), տղամարդերի գործ (2, 116), մարդերի անձինքը (ն. տ., 117), ընկերի հետ (1, 6) և այլն:

3. Բացառական հոլովը Ստ. Նազարյանը գործածում է գերազանցապես աշխարհաբարյան –ից վերջավորությամբ: Որոշիչ հոդ (հիմնականում՝ **ը**) է օգտագործվում ոչ միայն բացառական, այլև գործիական և ներգոյական հոլովների հետ: Օրինակ՝ **տեղիցը** չէր շարժվում (1,30), պատանու **կուրծքիցը** (ն.տ.), վեր առնուն ոսկի **ձկներիցը** (1,94), գործիական՝ գորաւոր **խստութեամբը** (2,230), այդ **արծաթովը** (1,95), իր **կերպարանքովը** (2,9), ներգոյական՝ Բրամայի **գրկումը** (1,30), առաջին **օրումը** (1,99), մեր **շրջակայքումը** (2, 380), այդ **միջոցումը** (2,9):

4. Չի կարելի չնկատել անձ ցույց տվող բառերի հոլովման առանձնահատուկ բնույթը, այն, որ այդ բառերի հայցականը գործածում է ոչ միայն տրականի, այլ մեծ մասամբ ուղղականի ձևով: Օրինակ՝ «Միթէ դու **չես մեծարում** մեր **թագաւորը**» (1, 209), «Նա **կարող էր ճանաչել** իւր **թշնամին ու բարեկամը**» (1, 229), «Գուցէ դու անիրաւութիւն **արեցիր սարդը**» (1, 208) և այլն:

5. Ստ. Նազարյանցն առավելապես գրաբարյան ձևով է օգտագործում.

ա) Մենք դերանվան **մեք** ձևը. «**Մեք** կարծում ենք» (1, 7), «Մեք յօժարութեամբ խոստովանում ենք» (2, 74):

բ) Սա, դա, նա, ինքը դերանունների հոլովական ձևերը. ուշագրավը սա, դա, նա ձևերի հոլովական երկձևություններն են՝ նոցա-նորանց, նոցա-նորանցից, սոցա-սորանց, սոցանից-սոցանցից և այլն. «**Սոցա** վերայ պիտոյ է մեծ զգուշութեւնով հսկող լինես» (1, 92), «**Սոցանցից** մինիւն պատահե արծաթի կարօտութիւն» (ն.տ. 94), «**Նոքս**, պատասխանեց վանահայրը, հիմար գանգատներ են» (ն. տ., 92), «Ուսուցանում են **նոցա** իւրեանց համար գանձեր ժողովել» (2, 115), «... **իւր** բոլոր բնակիչներով» (ն. տ., 75):

6. 1850-57թթ. Նազարյանի լեզվին բնորոշ է **պիտոյ է** եղանակիչը, օրինակ՝ **պիտոյ է ... լինեմ** (1, 92), **պիտոյ է** հաստատել (2, 211), **պիտոյ է** ասել (1, 32) և այլն:

7. Պատճառական բայերի հիմքը ոչ հաճախ, բայց հանդիպում է նաև գրաբարյան ձևով: Օրինակ՝ **յառաջացուցել** են (2, 119), **լցուցանում է** (1, 309), **բարձրացուցանելով** (ն.տ., 121), **գարթուցանել** (2, 388), բայց և՛ **բարձրացնես**, **արմատացնել** և այլն:

8. Բոլոր դեպքերում «ն» սոսկածանցավոր բայերի համար գործածվում է նրանց գրաբարյան ձևերը՝ հոգատար է **գտանվել** (1, 95), **հասանեն** դեպ առաքինություն (2, 394), ներս **մտանեն** (ն. տ., 8) և այլն:

9. Օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ժխտական ձևի համար գործածում է **չէ** ձևը, ինչպես օրինակ՝ **չէ** բաղադրած (2, 118), **չէ** կարող (ն.տ., 45): Նույն դեմքի հաստատական խոնարհման համար միշտ ունենք է: Օրինակ՝ **խօսում է** (1, Է), **հանդիպել է** (ն.տ., 120), **վեր է պահում** (ն.տ., 285) և այլն:

10. Այս շրջանում լայն կիրառություն ունեին առաջին խոնարհման բայերի անցյալ կատարյալի **–այ**, **–ար**, **–աւ**, **–անք**, **–աք**, **–ան** վերջավորությունները: Օրինակ՝ **ընդարձակուեցան** (2,308), **բարեկարգուեցան** (ն.տ.), **արբեցաւ** (1, 230), **թակուեցաւ** (ն.տ., 33), **վառուեցաւ** (ն.տ., 230) և այլն:

11. Հայտնի է, որ մեր գրական լեզվում որոշ կապեր (հետ, մոտ, վրա, պես, համար և այլն) ես, դու,մենք, դուք անձնական դերանունների հետ գործածվելիս

դառնում են տրականով խնդիր, սակայն այսպիսի ձևերը Նազարյանի լեզվում հազվագյուտ կիրառություն ունեն և գործածական են դերանվան սեռական հոլովով արտահայտված խնդիրների դեպքերը, որ գրաբարի ամսիջական ազդեցության արդյունքն են: Օրինակ՝ **քո** հետ (1, 11), **իմ** համար (ն.տ., 15), **ձեր** հետ (2, 24), **մեր** հետ (ն.տ., 36):

Շատ հաճախ **վրա** կապը գործածվում է գրաբարյան **վերայ** ձևով՝ հիմքերի վերայ, նորա **վերայ** (1, 9) , սահմանների **վերայ** (ն.տ., 74), որսի **վերայ** (ն.տ., 75), սեղանի **վերայ** (2, 116) և այլն:

1850- 57թթ. Ստ. Նազարյանի լեզվում գրաբարյան մի շարք բառերի փոխարեն, գործածական էին նաև նրանց աշխարհաբարյան ձևերը, սակայն Նազարյանը, հետագայում նաև Մ.Նալբանդյանը նախընտրում էին գրաբարյան ձևերը: Խոսքը վերաբերում է մի շարք հնաձև բառերի, ինչպես օրինակ՝ **ամենայն**՝ *ամենայն* մարդ (2, 116), *ամենայն* բարութեններ (ն. տ., 117), **ոչինչ**՝ «*Ոչինչ* փոփոխություն չէ կրել» (ն.տ., 79), «*Ոչինչ* հարաբերություն չունի» (71), **ըմբռնել**՝ *ըմռնեց* ձեռքս (1,140), «*Ըմբռնեն* վանքերից փախած աբեղայքը» (2, 247):

Կամ էլ **առնել** (անել), **առնուլ** (առնել, վերցնել), **թողուլ** բայերը, որոնք գործածվում են գրաբարյան իմաստով: Օրինակ՝ «Պարտք... **առել է**» (1, 120), եզրակացություն **առնել** (ն.տ., 33), թողություն **առնուլ** (ն.տ., 231), **թողուլ** քաղաքը (ն.տ., 148):

Այ շարքին ավելանում են նաև մի շարք ոճական անհարթություններ, որոնք առաջանում են կա՛մ օտար լեզվի այս կամ այն դարձվածք բառացի թարգմանելու, կամ անհաջող հայկական բառ ու կապակցություն ստեղծելու պատճառով, ինչպես՝ «Մի հատ **արտասուք թորելուց** հետո» (1, 233), «մսակեր **մարդերի անձինքը**» (ն.տ., 232), «Քո հայրը **անյուսալի մեռած է**» (ն.տ.), «սպանողական **հետևանք**» (ն.տ., 230) և այլն:

Նազարյանի բառապաշարում մեծ թիվ են կազմում **-իչ** և **-եալ** ածանցներով կազմված բառերը՝ տուիչ, լցուցիչ (1,117), մահացուցիչ (ն.տ.), զգուշացուցիչ (1, 229), ապականեալ(ն.տ.), օրհնեալ, սահմանեալ (2, 118) և այլն:

Ներկայացված օրինաչափությունների որոշ մասը ժամանակի գրական լեզվում քիչ կամ շատ տարածված, իսկ մի քանիսն էլ որպես Նազարյանի լեզվի բնորոշ առանձնահատկություններ են հանդես գալիս XIX դարի 50-ական թվականների սկզբին և կեսերին, որոնք, բոլորը ի մի հավաքելով կազմում են այն, ինչ սովորաբար կոչվում է **նազարյանական ոճ**¹⁸:

Այսպիսով՝ Ստ. Նազարյանն իր գործունեության նախահյուսիսափայլյան շրջանում (1843-1858թթ.) նոր գրական լեզվի անդրանիկ փորձերն է կատարում ոչ միայն աշխարհաբարի մշակման իր տեսությամբ, այլև պրակտիկայով՝ տարբերվելով գրական լեզվի մշակման նախորդ ու ժամանակակից բոլոր ուղղություններով: «Հանդես նոր հայախօսութեան» աշխատության մեջ Ստ. Նազարյանը հիմնավորում է հայ նոր գրական լեզվի և գրականության դերն ու անհրաժեշտությունը սեփական ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման համար: Նա առաջարկում էր ամրապնդել նոր գրական լեզուն գրականության, մատենագրության մեջ, որը կնպաստեր նոր ձևի և նոր բովանդակության ներդաշնակությանը:

¹⁸ Տե՛ս Մ. Գալստյան, Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Երևան, 1963, էջ 17:

Лусине Туманян – *Вопросы литературного языка XIX века в работе С. Назаряна „Сборник текстов новоармянского языка“*. – В статье рассматривается работа армянского выдающегося деятеля XIX века, публициста С. Назаряна “Сборник текстов новоармянского языка”, в которой автор обосновывает общественную роль и значение живого языка- “ашхарабар”. Важно не то, каков индивидуальный стиль С. Назаряна, а то, что он создал новый сборник который должен был способствовать развитию армянского языка и литературы, делая его более жизнеспособным и доступным для широких общественных слоев, одновременно становясь связующим звеном между армянкой и европейской культурой.

Lusine Tumanyan – *Literary language problems of the 19th century in St. Nazarean's "Journal for new armenian reading-book" work*. – In the article the 19th century Armenian famous statesman, public figure St. Nazaryan's “Journal for New Armenian Reading-book” work is examined where the author speaks about the social role and meaning of the living language-Ashkharabar. It is not essential how St. Nazaryan's individual style is but he opened a new journal which had to promote the development of Armenian literature and language making it more viable and available for social vast groups, at the same time becoming a bridge between Armenian and European culture.

ABBREVIATIONS AND THEIR USE IN THE INTERNET

SONIK ABRAHAMYAN

Lecturer of Ijevan Branch of Yerevan State University

Many words and word groups are abbreviated which were previously done to save space. In modern English such kind of abbreviations are used to give as much material as possible at a short period of time.

In the article different kinds of abbreviations, frequently used abbreviations, as well as a number of internet abbreviations are observed which are widely used mainly by the young.

Those language realities are consonant with the requirements of the present day linguistic thinking.

Key words: abbreviations, graphical abbreviations, internet abbreviations.

Nowadays we constantly come into contact with a lot of abbreviations. They are so widely used that we can't imagine our life without them.

Abbreviation is a shortened form of a word or a phrase. The word abbreviation comes from Latin word "brevis", meaning short. Abbreviations are commonly formed by omission of letters from one or more parts of the whole: doz, dz (dozen). Sometimes abbreviations are created by substitution or other alteration in the part or parts retained: oz (ounce), Xmas (Christmas). A plural abbreviation may be formed by doubling initial letters: mss (manuscripts), pp (pages).

Abbreviations are used to save space. They are used in tables, in technical or scientific materials, in indexes, footnotes and bibliographies. They are also used instead of long official names, as in AFL – CIO (American Federation of Labour and Congress of Industrial Organizations).

Abbreviations have been found on the earliest known tombs, monuments and coins. When manuscripts were written by hand, abbreviations were used to save time and space. Many Latin abbreviations are still used¹. Two types of abbreviations are distinguished: simple and compound. Simple abbreviations are formed by means of clipping the final or initial syllables of the stem of the word, such as **caps** - capital letters, **demo** - demonstration, **ad** -advertisement.

Such units being secondary names given to an object or phenomenon and existing in the given language on the same level as the full form, are stylistically coloured words and have informal conversational character.

Compare, for example, the following words: sister – sis, doctor – doc, professor – prof, second – sec, difference – dif, etc...

If the initial full form of the word is forgotten or starts to be used less often than its abbreviated (shortened, clipped) form, the shortened word becomes stylistically neutral, such as plane (aeroplane), cab (from cabriolet), phone (from telephone), bus (from omnibus), etc...

¹ The World Book Encyclopedia, A, Chicago, 2002, p. 7.

Compound abbreviations are formed by means of shortening and consist of initial letters or syllables of words and stems, or of their combination with full stem, such as: Interpol – International police, Hi-fi – high fidelity, B-Day – birthday, sci-fi – science fiction.

Abbreviations should not be confused with contractions or acronyms (including initialisms) with which they share some semantic and phonetic functions, though all three are connected by the term “abbreviation” in loose parlance.

Acronyms are words made up of the first letters or syllables of other words, such as UNESCO (United Nations Educational, Scientific and Cultural Organization). Such abbreviations are often written without periods. Symbols that are not made up of letters of the alphabet are not abbreviations, but they serve the same purpose abbreviations do. In other words *acronym* is an abbreviation formed from the initial letters of the various word elements and read as a single word: AIDS, NATO. An initialism is an abbreviation formed from the initial letters of its various word elements, but it is read as a series of letters: ATM, BBC. A contraction refers to a type of abbreviation that includes the first and last letters of a full word: amt., Mr.

You can abbreviate more than one word into an acronym using the first letter of each word and pronouncing the letters as a word. AIDS and NATO demonstrate this type of abbreviation, although you do not have to write all acronyms in capital letters.

An abbreviation is a shortening by any method, a contraction is a reduction of size by the drawing together of the parts. A contraction of a word is made by omitting certain letters or syllables and bringing together the first and the last letters or elements. An abbreviation may be made by omitting certain portions from the interior or by cutting off a part. A contraction is an abbreviation, but an abbreviation is not necessarily a contraction. However, normally, acronyms are regarded as a subgroup of abbreviations.

Aphesis could be a source of confusion, as the only difference between this and apheresis lies in the syllable being dropped. When you say, “I danced with Mike ‘cause he’s nicer than Ted,” that first apostrophe indicates that you’ve used an aphasis. You have dropped the unstressed vowel at the beginning of the word “because”. Most of these occur in casual speech and not intentionally in a written piece, outside of dialogue. In other words *aphesis* is the dropping of a first syllable or syllables from a word: bus (omnibus), phone (telephone). Aphasis is the dropping of an unstressed vowel from the beginning of a word: ‘cause (because), ‘cept (except). A clipped form indicates the dropping of an end of a word: fan (fanatic). A blend or portmanteau word is made from two or more other words: brunch. Signs and symbols are sometimes referred to as abbreviations. Abbreviations are often classified into three types: 1) letter-based (AA), 2) syllable-based (con.), and hybrid (Ph.D., B. Com.).

In the English language, unlike Armenian, abbreviations (graphical shortenings) can end in vowels, such as: ave – avenue, Fri – Friday, co – company, country.

The oldest group of graphical abbreviations in English having no parallel in Armenian is of Latin origin. In these abbreviations, in the spelling the Latin words are shortened, while in the oral manifestation the corresponding English equivalents are pronounced in the full form, such as: a.m (Lat. Ante meridiem) – in the morning, e.g (Lat. exempli gratia) – for example, No (Lat. Numero) – number, i.e (Lat. Id est) – that is, p.m (Lat. post meridiem) – in the afternoon².

² **Arnold I.V.**, The English Word, 3-rd, Moscow, 1986, p. 144.

There are also graphical abbreviations of native origin, where in the spelling we have shortened forms of words and word-groups of corresponding English lexical units. There are several semantic groups of graphical abbreviations in English:

- a) Days of the week, Mon – Monday
- b) Names of months, Apr – April
- c) Names of countries in UK, Yorks – Yorkshire
- d) Names of states in the USA, Alas – Alaska
- e) Names of address – Mr, Mrs, Dr.
- f) Military ranks – capt – captain
- g) Scientific degrees – B.A. – Bachelor of Arts
- h) Units of time, length, weight – f/ft – foot/feet, sec – second, in – inch, mg – milligram

COMMON ABBREVIATIONS

AAA- American Automobile Association
A.B.S. – American Broadcasting System
A.D. – Anno Domini – լատ. (մեր թվարկության, մեր դարաշրջանի)
advt – advertisement
a.m – ante medietem (before noon) կեսօրից առաջ
BBC- British Broadcasting Corporation
B.C.- before Christ
CD- compact disc
D.C.- District of Columbia
Dr.- doctor
e.g.- exempli gratia (for example)
etc.- et cetera
HIV- human immunodeficiency virus
hr.- hour
i.e – id est (այսինքն, այն է)
Jr.- Junior
J.P. – Justice of Peace (հաշտաբար դատավոր)
lab- laboratory
mms – Multimedia Messaging Service
M.P. – member of Parliament
NATO – North Atlantic Treaty Organization
No.- number
N.Y.- New York
N.Z.- New Zealand
OE- (in dates) Old English
P.M. – Prime Minister
p.m. – post Meridiem
Pop.- popular
Q.- queen
R.C. – Red Cross
Rec.- record
Shaks.- Shakespeare

SMS – Short Message Service
S.O.S. – save our souls
St.- Saint
St.- street
T.U. – Trade Union
UFO – Unidentified flying object
U.K.- United Kingdom
UNO – United Nations Organization
U.S.- United States
U.S.A.F.- United States Air Force
U.S.S.R.- Union of Soviet Socialist Republics
www – World Wide Web
Xmas – Christmas
Yr.- year
Zool.- zoology, zoological

The Internet has already entered our ordinary life. It is a global computer network which helps us to communicate with each other. It is a system that lets computers all over the world talk to each other. The Internet developed in the 1960s in the USA as an experimental network which quickly grew to include military, federal, regional, university, business, and personal users. It is now the world's largest computer network, with over 100 million hosts connected by the year 2000, providing an increasing range of services and enabling unprecedented numbers of people to be in touch with each other through electronic mail (e-mail), discussion groups, and the provision of digital "pages" on any topic³.

Nowadays the Internet allows people to engage in online conversation. A "chat room" is an Internet environment where a person can use text to have synchronous or asynchronous conversation with many people at the same time. Since conversations in chat rooms mainly take place in real time. It may be difficult for a slow typist to communicate clearly and catch up with others. Therefore, chat room abbreviations are used to help people to easily and quickly interact with each other and save time⁴. There are a lot of frequently used chat room abbreviations:

asap - As Soon As Possible
bc, b/c – Because
b4 – Before
c – Computer
fcf – Face to Face
imo – In My Opinion
j – Just
np – No Problem
r – Are
ttyp – Talk To You Later
ty – Thank You

³ **Crystal D.** Language and the Internet. Cambridge: Cambridge University Press, 2004, p. 3.

⁴ **Hinders D.** "Chat Room Abbreviations". Love to Know Social Networking 2010.

tyt – Take Your Tyme
u – You
y – Why
yw – You're Welcome

This kind of abbreviations have become especially popular amongst the younger generation. However they have some negative effects. It is hardly ever polite to use them in formal conversation. Anyway, they have become quite common.

Արրահամյան Սոնիկ – Հապավումները և նրանց գործածությունը համացանցում: – Անգլերենում շատ բառեր և բառախմբեր համառոտագրվում են, ինչը նախկինում արվել է քիչ տեղ զբաղեցնելու նպատակով: Ժամանակակից անգլերենում նմանատիպ կրճատումները հիմնականում կատարվում են կարճ ժամանակահատվածում՝ հնարավորինս շատ նյութ հաղորդելու համար:

Հոդվածում դիտարկվում են հապավումների տեսակները, քննվում հաճախակի գործածվող, ինչպես նաև համացանցային մի շարք համառոտագրություններ, որոնք մեր օրերում խիստ գործածական են և մասնավորապես կիրառվում են երիտասարդության կողմից:

Այդ լեզվական իրողությունները համահունչ են նորօրյա լեզվամտածողության պահանջներին:

Абрамян Соник – Сокращения и аббревиатуры и их использование в интернете. – В английском языке многие слова и группы слов сокращаются, что раньше делалось, чтобы занимать мало места. В современном английском языке подобные сокращения делаются в основном с целью передачи большего количества информации за короткий промежуток времени.

В статье рассматриваются виды аббревиатур, анализируются наиболее часто употребляемые, а также ряд интернетных сокращений, которые часто используются в наши дни в частности со стороны молодежи.

Эти языковые реалии соответствуют требованиям нового языкового мышления.

PERSUASION IN DISCOURSE

ASTGHIK SIMONYAN

Lecturer of Ijevan Branch of Yerevan State University

In recent years persuasion has been in the center of the attention of linguists and psychologists. In the present article the role of persuasion through speech act, in general, and in political discourse, in particular, is concerned. Language is perceived as a powerful tool in accomplishing the desired results by means of exerting influence on the listeners and readers and manipulation with them.

Key words: Persuasion, discourse, speech act, linguistics, psycholinguistics, manipulation, political, influence, rhetoric.

The Art of Rhetoric and Basics of Persuasion: Along centuries linguists and representatives of other sciences have been trying to study and define the phenomenon called persuasion that influences anyone by different means at any given time and everywhere, for either we tend to persuade through our behavior or speech, or we are being persuaded by others when watching, hearing or reading an ad, or buying products in the market, or even just talking to each other. Sometimes it happens without our knowledge. Thus, some succeed in manipulating with certain helpful strategies to get the effect desired, while others fall flat in making use of these same tools.

Persuasion is a variation of the argumentative mode of discourse. Argument and persuasion differ in two primary ways. The first is the intent. While the intent of argument is to present reasons and evidence to elicit logical agreement, the purpose of persuasion goes beyond this to get the reader to act on his belief. A successful argument may convince someone that the given choice is the best but successful persuasion will make that person act respectively.

The second way the two differ is in the methods that a writer uses to win the assent of his readers. The Greek philosopher Aristotle suggested in his *Rhetoric* that there are three kinds of proofs that speakers or writers may use to win over an audience. He called the first *logos* and it employs evidence and reasoning. In other words, the writer must give facts and figures, expert testimony, illustrative examples, or other kinds of evidence, and then demonstrate how these support his thesis. Both argument and persuasion make use of *logos*. But persuasion also employs *pathos* which is "proof based on motives and emotions"¹.

Next is *ethos* which assumes that people can be persuaded by the personal influence of the source of a message. In a speech, the speaker must project an impression that he is honest, sincere, and trustworthy. He must establish credibility and be likable. If he is successful, the audience will be more inclined to accept and to act on his message. In written appeals, *ethos* is also important.

According to Aristotle "Of the modes of persuasion furnished by the spoken word there are three kinds. The first kind depends on the personal character of the speaker; the second on putting the audience into a certain frame of mind; the third on

¹ *Osborn M.*, Osborn S. Public Speaking, 8th ed., USA, Pearson, 2007, p.379

the proof, or apparent proof, provided by the words of the speech itself”². We need to keep in mind Aristotle’s words that the best rhetorician is that who is expert in syllogisms. It is noteworthy that in the composition of a discourse Aristotle gives a special importance to the *logos* (logos), i.e. to the configuration and ordering of the elements of the discourse.

Rhetoric is obviously not only important for argumentation theorists, but for the production, analysis and evaluation of any kind of persuasive discourse. The study of audiences by the new rhetoric takes an especial importance today, because of the new kinds of audiences derived from new forms and modes of communication, in a time where information technologies applied to communication systems are evolving fast.

Particular interest deserves the study of complex (media) audiences. It has to be noted that the interest of rhetoric for audiences is not a sociological one. Rhetoric is interested in the way of shaping audiences by means of the realization of discourses.

To return to Aristotle’s *Rhetoric* means basically to take into account the role played by the *logos* (and the *ethos*) jointly with the *pathos*. The *ethos* and the *pathos* are constructed by the discourse itself, they are not external to it, on the contrary, they are shaped in terms of the evolution of the discourse. This is the main reason for giving so much importance to the *logos*, as Aristotle did³. Consequently this is also the main reason for emphasizing the relevance of the structure of discourse as it is fixed in the *taxis* phase of its composition⁴.

Being rooted in rhetoric the study of persuasive speaking later on goes to be elaborated by two distinct scientific disciplines: linguistics and psychology, which have their meeting point – psycholinguistics. Yet, here we’re inclined to represent the material from purely linguistic viewpoint having it accompanied with some additional information provided by psychology on influential and persuasive discourse as such.

As the topic of our investigation covers mostly the third mode of persuasion, we’ll rest upon it by firstly manifesting the different definitions of persuasive discourse and persuasion in its wide sense at hand. Persuasion is “a deliberate attempt on the part of one party to influence the attitudes or behavior of the other party, so as to achieve some predetermined end”⁵, “that activity in which the speaker and the listener are “conjoined” and in which the speaker consciously attempts to influence the behavior of the listener by “transmitting audible and visible symbolic cues”⁶, “any conscious, deliberate and predetermined attempt of an individual to make certain changes in the interlocutor’s cognition or behavior, i.e. to make the interlocutor adhere to his/her own point of view through the transmission of some message”⁷.

Pragmatics of Persuasion: Pragmatics, in general, is known for its studies in Speech Act Theory and language use. One of the forerunners of pragmalinguistics – J.L. Austin, states that any proposition, i.e. a locutionary act, may possess a specific intention or function, i.e. illocutionary act, which is intended on the part of addresser to

² <http://ebooks.adelaide.edu.au/a/aristotle/a8rh/>

³ **Conley, Th.M.**, *Rhetoric in the European Tradition*. Chicago: The University of Chicago Press, 1990, pp. 55-57

⁴ **Réboul, O.**, *Introduction à la Rhétorique*. Paris: PUF, 1991, p.106

⁵ **Zanden, J.W.**, *Social Psychology*. New York: Random House, 1997, p.11.

⁶ **Scheidel, T.**, *Persuasive Speaking*. London: Glenview IL: Scott Foresman, 1985, p.73

⁷ **Ghaltakhchyan, S.**, *On Ways of Expressing Persuasion in Discourse*.//Armenian Folia Anglistika. N 1-2 (6). Yerevan: Lusakn, 2009, pp.93-97.

have an effect of some kind on the addressee, i.e. perlocutionary act⁸. The illocutionary acts, in their turn, may convey implicit and explicit meaning. What is said is the explicit meaning, and what is meant or implied is the implicit one. The latter specifically depends on a particular context and the general background knowledge of the sender of the message and its receiver. Thus, if persuasive speech acts be studied from the pragmalinguistic viewpoint, then it can be inferred that persuasion is a perlocutionary act, the effect of some linguistic behavior.

What is mentioned above is all about the sender factor. The recipient factor is not less important. Explicit persuasion is mostly exposed upon addressees with low self-esteem, of humble and submissive nature and of a lower social status. Anyhow, the effect of explicit persuasion decreases. That's why instances of explicit persuasion expressed through imperative sentences are not very frequently observed in discourse, for in their form and structure such speeches used in any persuasive communicative situation sound rather impolite and inadequate and hinders in reaching the communicative end.

The implicit mode of persuasion is exerted when an attempt is made by the sender of the message to identify and change the addressee's preconceived idea, belief, attitude, or behavior, concealing their intention, trying to convince in an indirect way pretending that you have a wish but advising, encouraging, complimenting or just providing with a piece of information. The choice of the way of persuading is much conditioned by not only the addresser of the message but also and mainly by the addressee of the message, his/her age, gender and, what is of utmost importance, of the self-esteem and intelligence of the receiver. The more intelligent the addressee is, the more difficult it is for the communicator to make him/her yield to the persuasive message because of his/her greater critical faculties⁹.

Implicit and explicit modes of persuasion have to do with such notions as direct and indirect speech acts. An indirect speech act is defined, in John Searle's terms, as an utterance in which one illocutionary act (a "primary" act) is performed by way of the performance of another act (a "literal" act)¹⁰. In other words, to understand the addresser's message the comprehension of a factual knowledge put into words is not sufficient. One ought to follow the enumerated steps to catch the whole purport of their interlocutor's message: identification of the utterance, comprehension of the meaning implied, drawing inferences.

Implicit meaning is defined as a range of meanings emerging from the contextually embedded character of speech. It's not a fixed entity and is feasible to be reshaped in the course of linguistic interaction. Implicit meaning is present both in oral and written discourse. Anyhow, written texts form a medium which calls for certain types of explicit information because the producer (writer) and the interpreter (reader) don't share the same time and space¹¹. In a number of cases, they don't carry an equal amount of unshared information which is assumed to be known.

To avoid confusion and ambiguity, the implicit meaning of an utterance is fleshed out by the speaker or writer by means of more explicit representations of meaning known as "explicature", i.e. some additional information that help to fill the gap in the reader's knowledge.

⁸ *Austin, J.L.*, How to Do Things With Words. London: OUP, 1969, pp 24-33

⁹ *Bettinghaus, P.E.*, Persuasive Communication. New York: Appleton-Century-Crofts, 1979, p 214.

¹⁰ http://www.personal.unijena.de/~mu65qev/wikolin/images/1/18/Searle_Indirect_Speech_Acts59-82.pdf

¹¹ *Paronyan, Sh.*, Pragmatics. Yerevan: YSU Press, 2012, pp.74-84

Thus, in contrast with actual communicative situation (oral speech) where there's no limitation on the choices done among the implicit and explicit means of communication, and persuasive communication to note out, where all these choices depend solely on personal preferences and the experience one piled up in result, written discourse is pretty much susceptible to constraints, namely the writer of a certain type of text, be it a report, an article, whatsoever, has to take into consideration the unseen scenario beyond the scope of his view, predict the probable amount of knowledge of the readers (mainly in newspaper writings), their social level, etc. that will put their investment in forming a decision whether to present the material in an explicit or implicit way. In written texts one should avoid making use of only the implicit rather than explicit mode. A better choice, in this respect, is the moderate combination of both, in the result of which a writer will most likely reduce his chances of failure to minimum.

Persuasion in Political Discourse: To dwell upon the issue of persuasive technique in political discourse, we first of all need to specify the terms in which politics is used. Thus, in the current context politics is referred to, in its classical meaning as “the art of governance and power”.

Politicians, while communicating with their prospect audience – making speeches, addressing the electorate in the newspapers – need to mind their speech, the language they use for these ends. For this matter there's no difference in the regime, either being democratic or totalitarian, communication aims at informing, persuading, advertising, issuing their rules and regulations, legislating and the like.

What political discourse focuses on is the utilization of proper linguistic strategies that, in their turn, comprise manipulative application of language, i.e. linguistic manipulation. According to N. Fairclough, “linguistic manipulation is the conscious use of language in a devious way to control the others”¹².

Linguistic manipulation is an influential instrument of political rhetoric because political discourse is primarily focused on persuading people to take specific political actions or to make crucial political decisions.

To convince the potential electorate in present time societies, politics basically dominates in the mass media, which leads to creating new forms of linguistic manipulation, e.g. modified forms of press conferences and press statements, updated texts in slogans, application of catch phrases, allusions, a combination of language and visual imagery. To put straight, language plays a kernel ideological role being an instrument by means of which the manipulative intents of politicians become apparent.

For the matter of political discourse an especial importance is given to the so-called legal and acceptable means of convincing which is persuasion¹³. It's the basis and the axis around which political discourse is structured. Persuasive communication is a highly conscientious, purposeful (mainly) speech activity, whose success is very often pursued in the result of exerting certain intellectual efforts and having a high level of informedness (of course, dependent upon the stamina of the preparedness and disposition of the audience). Logical argumentation and appeal to emotions are an inseparable part of the political discourse, and political persuasion is carried in this way¹⁴. Thus, one needs

¹² **Fairclough, N.**, Language and Power. London: Longman, 1989, p.6.

¹³ **van Dijk, T.A.**, Discourse and Manipulation: Discourse and Society, 2006, 17:2

¹⁴ **Բաղդասարյան, Մ.Ս.**, Քաղաքական ելույթը որպես լեզվական և արտալեզվական իրողությունների փոխներթափանցում (առնչախոսություն), Երևան, ԵՊՀ, 2011, pp.25-31

not hesitate to add that political discourse is a powerful form of persuasion not only when expressed in oral form, but also on the pages of a newspaper.

In the hands of politicians a language may be applied to embody two kinds of power – explicit, the usage of a language as an instrument, and implicit – the latent desire to influence, to persuade. Instrumental power is imposed mainly by the state, by the laws and conventions of the same state and it shows itself in social spheres like education, business and other types of management, while influential power is exerted indiscriminately almost everywhere.

This second type of power has a strong tendency to make people behave in a predicted and desired way and adopt this or that opinion and attitude without exerting obvious force on them. Hence, if in the former case one is supposed to be subject to some kind of penalty when breaking the laws and the conventions, in the latter case, implicit power doesn't presuppose anything of the kind, and people generally don't get into trouble for resisting to commit to a purchase of some goods advertised, or for not taking the part of a certain political party.

Hence, it goes without saying that explicit power makes use of a similar way of expression mode, while implicit persuasive discourse needs much more than denotative meaning of words to catch some attention, to influence and to finally persuade the proposed audience or readership. Here come a range of devices used to enhance the effect of a speech (be it oral or written), a kind of logical and emotional appeal to the minds of the preceptors through a set of modified linguistic means that create associative links in them and are, thus, easier to be persuaded.

In modern societies with the expansion of the means of mass information, politics is conducted through the mass media; therefore it leads to new forms of linguistic manipulation.

Thus, the language applied in political discourse and used in newspaper uses a bundle of rhetorical devices on the phonological, syntactical, lexical, pragmatic and textual levels. The primary goal of so doing is to be easily adoptable by the mass media and be memorized by the target audience.

Աստղիկ Միսնյան – Համոզումը խոսույթում: – Համոզումը (պերսուազիա) վերջին տասնամյակներում գտնվում է լեզվաբանների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Սույն հոդվածում ընդգծվում է խոսքային ակտի միջոցով համոզման դերը՝ ընդհանրապես և քաղաքական խոսույթում՝ հատկապես: Լեզուն ընկալվում է որպես հզոր գեներ՝ հասնելու ցանկալի արդյունքին՝ ունկնդիրների և ընթերցողների վրա ներազդելու և նրանց մանիպուլյացիայի ենթարկելու միջոցով:

Астгик Симонян – Убеждение в дискурсе. – Персуазия в последние десятилетия находится в центре внимания лингвистов и психологов. В данной статье подчеркивается роль персуазии посредством речевого акта вообще и в политическом дискурсе в особенности. Язык воспринимается как мощное оружие для достижения желаемого результата путем воздействия на слушателей и читателей и манипулирования ими.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ-ԼԵԶՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

ՏԻՖՐԱՆ ԽԱՌԱՏՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ

Հոդվածում քննարկվում են ընտրության ու «Միաձուլման և Կլանման» թեմայի օրինակով տերմինաբանական բառապաշարի ներկայացման միջոցները: Հոդվածի տեսական մասում նկարագրվում են գիտելիքների երկու տեսակներ՝ իմացաբանական և գործընթացային, որոնց հիման վրա մշակվում են ճանաչողական և լեզվական իրավասություններ: Հակիրճ ամփոփվում են կրթության կառուցողական մոդելի հիմնական դրույթները, որոնց հիմնական նպատակը հանդիսանում է անհատական կառույցի կազմավորումը, և ներկայացվում է ուսումնական նյութի ճանաչողական ձևավորման հնարավորությունները՝ այդ նպատակին հասնելու համար: Հեղինակը ներ է մուծում ճանաչողական մոդելի հասկացությունը, որը արտացոլում է գիտելիքների որոշակի մասի հասկացությունների համակարգը և այդ տարրերի միջև կապը:

Բանալի բառեր. ճանաչողական, տերմիններ, բառապաշար, իրավասություն, մոդելավորում, նյութ, տարր, տարածաշրջան, մոտեցում, համակարգ:

Օտար լեզվով հաղորդակցման ժամանակ երկու խնդիր է առաջանում՝ ինչ ասել և ինչպես ասել: Եթե ընդհանուր գրական լեզուն ուսուցանելիս ուսուցիչն ամենից հաճախ ելնում է այն բանից, որ սովորողը գիտի ինչ ասել և ուսուցչի խնդիրն է՝ սովորեցնել սեփական մտքերն արտահայտելու համապատասխան եղանակը՝ հաշվի առնելով ձևավորվող իրավիճակը (դերային, սոցիալական, մշակութային և այլն), ապա մասնագիտական հաղորդակցման ուսուցման ժամանակ խնդիրը բարդանում է նրանով, որ շատ դեպքերում սովորողը բավականին աղոտ պատկերացում ունի գիտելիքների ուսումնասիրվող ոլորտի բովանդակային կողմի վերաբերյալ: Ուսուցչի վրա կրկնակի պարտականություն է ընկնում՝ ապահովել գաղափարային բովանդակության ըմբռնումը՝ ձևավորել ճանաչողական իրազեկումը և օգնել յուրացնելու համապատասխան հասկացության համակարգի արտահայտման մասնագիտական եղանակները՝ ձևավորելով լեզվական իրազեկումը:

Ժամանակակից դիդակտիկայում տարբերակվում են գիտելիքների երկու հիմնական տիպ՝ «ես գիտեմ, որ» և «ես գիտեմ, ինչպես»: Գիտելիքների առաջին տիպին, որոնք կոչվում են իմացաբանական կամ առաջարկվող, վերաբերում է փաստաբանության յուրացումը, որն իր մեջ ներառում է հիմնային տարրերի ու հասկացությունների մասին տեղեկությունները, որոնց սովորողը պետք է տիրապետի՝ առարկան ուսումնասիրելիս, և աշխարհի ճանաչողական-հասկացությային պատկերի ձևավորումը, այսինքն՝ հիմնային տարրերի փոխադարձ կապի գիտակցումը առավել լայն կառուցվածքի սահմաններում, որը թույլ է տալիս դրանց միասին գործածել: Երկրորդ տիպին վերաբերում են այսպես կոչված ընթացակարգային գիտելիքները, որոնք կապված են առաջին տիպի գիտելիքների օգտագործման հմտությունների, կարողությունների և մեթոդների հետ: Բացի այդ, երկ-

րորդ տիպը ներառում է ետճանաչողական գիտելիքները, որոնք ենթադրում են «որսալու» ռազմավարությունների ու կարողությունների տիրապետում, ստացվող տեղեկության պահպանում և միայն այն տեղեկությունը ընտրելու հմտություն, որն անհրաժեշտ է նպատակին հասնելու համար¹: Մասնագիտական լեզուն ուսուցանելու դեպքում անհրաժեշտ է ապահովել ինչպես տերմինաբանական, այնպես էլ հասկաթույին համակարգերը, և՛ սովորեցնել օգտվել ձեռք բերված իրազեկություններից, և՛ տարբեր աստիճանի բարդության գրույցների ստեղծման ժամանակ, և՛ օտար լեզվով գրավոր տեքստերի ու հնչյունային տեղեկությունների ընկալման ժամանակ:

Ճանաչողական գիտությունը, ներառելով մի քանի ինքնուրույն ուսմունքներ, որոնք միավորված են ճանաչողության օրինաչափությունների հանդեպ ընդհանուր հետաքրքրությամբ, գիտելիքների յուրացման, պահպանման և ստացման մտավոր գործունեությամբ, նոր հեռանկարներ է բացում նաև լեզվադիտակ-տիկայի համար: Իմացաբանությունը հաստատում է, լեզվական գիտելիքները չեն տարբերվում գիտելիքների ցանկացած այլ տեսակից և, հետևաբար, ենթարկվում են յուրացման, մտապահման և օգտագործման այն նույն օրինաչափություններին, ինչ գիտելիքները ցանկացած այլ գիտության մեջ: Մարդկային ուղեղում օբյեկտիվ աշխարհի մասին տեղեկությունը արտացոլվում է սուբյեկտիվ մտավոր ներկայացման ձևով՝ վերացական դատողության տարբեր աստիճանով՝ հավասարաձևից մինչև լրիվ կամայական: Դրանց հիման վրա ձևավորվում են հասկացություններ, որոնք միավորվում են հասկացությունների համակարգերում, որ ընդունակ են կազմակերպել ու դասակարգել մարդկային փորձի ցանկացած կողմ և գտնվում են հաղորդակցման հիմքում՝ դիսկուրսի ստեղծման հիմքում՝ հաղորդելու համար որոշակի իմաստային բովանդակություն: Լեզուն խոսողին այդ հասկացությունների ծածկագրման տարբեր եղանակների հնարավորություն է ընձեռում: Երկրորդ լեզուն ուսանելիս սովորողը պետք է ձևավորի նոր մտավոր ներկայացումներ և զարգացնի դրանք տարբեր իրավիճակներում օգտագործելու ունակություններ ու հմտություններ²: Ճանաչողական հոգեբանությունը որպես անբեկանելի ճշմարտություն հաստատում է երկլեզու մարդկանց մոտ երկակի ծածկագրումը: Ուսուցման ժամանակակից կառուցողական տեսությունը ելնում է այն բանից, որ գիտելիքների յուրացման գործընթացը անհատական գործընթաց է, որը ենթադրում է սովորողի ակտիվ մասնակցությունը՝ գիտելիքներ ձեռք բերելիս: Այն հիմնվում է Ջ. Քելլիի՝ «անձնական կառուցվածքի» մասին գաղափարի վրա, որից կարելի է ենթադրել կյանքի իրադարձությունների կառուցման կամ մեկնաբանման ճանաչողական միջոցները³: Անձական կառուցվածքը մտավոր ճանաչողական կառուցվածքի հիմնային միավորն է որը սովորողը նպատակաուղղված կերպով ձևավորում է ճանաչման/ուսուցման գործընթացում և որի միջոցով ընկալում ու գնահատում է նոր տեղեկությունը: Հոգեբանության բնագավառում ավելի ուշ կատարված հետազոտությունները⁴ ցույց են տվել, որ զարգա-

¹ **Anderson R.C.** et al. Four Types of Knowledge//Scribd. 2001. URL:<<http://www.scribd.com/doc/14554355/Knowledge-Types-Revised>>[Accessed 15.09.2013]

² Contemporary Linguistics. London; New York: Longman 1997. p. 535.

³ **Kelly G.A.** Principles of personal Construct Psychology. New York: Norton 1955.

⁴ 1. **Ericsson K.A., Smith J.** (eds). Toward a general theory of expertise: Prospects and limits. New York: Cambridge University Press, 2009. 2. **Hoffman R.R.** The Psychology of Expertise: Cognitive and Empirical Research. New York: Al.; Springer-Verlag, 1992

ցած անձնական կառուցվածքներ ունեցող, այսինքն՝ նրանք, ովքեր ունեն ավելի բարդ աստախճանակարգային կազմակերպում և տարրերի միջև առավել բազմաքանակ կապեր, ավելի արագ են հիշողությունից կորզում հարկավոր տեղեկությունը, ավելի արագ են այն վերածում գիտելիքների: Անձնական կառուցվածքները խորապես անհատական են, կարող են հիմնվել մոլորությունների, սխալ պատկերացումների ու գնահատականների վրա, դրա համար էլ ուսուցչի դերն է օգնել ձևավորելու կայուն մոդել, որը համապատասխանում է ծրագրային պահանջներին, և ցույց տալ առավել բարդ կառուցվածքներին անցնելու ուղիները: Ուսուցման ճանաչողական մոդելը լույս է սփռում նոր գիտելիքների յուրացման առանձնահատկությունների վրա և ընդգծում է անհրաժեշտ նախնական գիտելիքների հատուկ կարևորությունը, որոնց օգնությամբ յուրացվում է նոր տեղեկությունը: Օտար լեզվի ուսուցման պարակտիկայում՝ հատուկ նպատակների համար, որոշակի թեմաներ անցնելիս ուսուցիչը կարող է առջնվել երկու հնարավոր իրավիճակների հետ: Ուսանողն ունի նախնական գիտելիքների ուսուցանվող բնագավառից, հետևաբար ուսուցչի խնդիրը թեթևանում է, և աշխատանքը գիտելիքների բառային ձևակերպման նոր եղանակներ ուսուցանելու հետ է կապված: Իսկ եթե այդպիսի գիտելիքները բացակայում են, ապա հասկացությունների ձևավորումը և դրանց ծածկագրումը տեղի է ունենում գործնականորեն միաժամանակ:

Ոչ մի այլ բնագավառում լեզվի և մտածողության կապն այդքան վառ և ամբողջ ակնհայտությամբ չի դրսևորվում, որքան տերմինաբանական համակարգում: Ե՛վ օնտոգենեզում, և՛ ֆիլոգենեզում լեզուն ծառայում է որպես մարդու մտավոր զարգացման գործիք⁵ հանդես է գալիս որպես մտածողության և տեսական ճանաչման հենարան՝ կատարելով իմացաբանական գործառնություն, հանդիսանում է տեղեկության կազմակերպման, մշակման, փոխանցման և գիտելիքների պահպանման գործիք, որոնք ամրագրված են բառային միավորներում⁶: Բայց միայն տերմինների համար է անբեկանելի ճշմարտություն դիտվում գերակա կամ առաջնային՝ նրա հասկացության հիմքում ընկած դերը: Այսպես, Վիենական դասական դպրոցի հինգ սկզբունքներից առաջինն ասում է. “Տերմինաբանությունը սկսվում է հասկացությունից”⁷: Լեզվի և մտածողության փոխգործակցության հետազոտությունը ճանաչողական լեզվաբանության կողմից թույլ է տվել դիտարկել լեզուն որպես աշխարհի մասին հանրագիտարանային գիտելիքի ձև, իսկ բառի նշանակությունը հավասարեցնել հասկացության վերածելուն (կոնցեպտուալիզացիային)⁸:

Մասնագիտական հետաքրքրությունների ոլորտին վերաբերող տերմինաբանությունը ոչ միայն հասկացությային (կոնցեպտուալ) նշանակությունների կրող է հանդիսանում այլ նաև՝ մասնագիտական հաղորդակցման հիմք, քանի որ բառը, որ գիտական հասկացություն է նշանակում, որպես ճանաչողական – հաղորդակցական միավոր ապահովում է ընդհանուր ճանաչողական միջավայրը⁹, որի շրջանակներում միայն կարող է իրականանալ բարեհաջող հաղորդակցումը:

⁵ *Выгодский Л.С.*, Мышление и речь. Изд. 5-е, испр. М.: Лабиринт, 1999.

⁶ Contemporary Linguistics. London; New York: Longman 1997, p. 279.

⁷ *Wuster E.*, General Terminology Theory – Fine line between linguistics, Logic, Ontology, Information science and Business Sciences // Linguistics. 1974. No. 119. p. 61-106

⁸ Cognitive Linguistics. London; New York: Longman 1997. p. 30.

⁹ *Sperber D., Wilson D.* Relevance: Communication and Cognition. 2nd ed. Oxford; Blackwell Publishing House, 2002. p. 38.

Տնտեսական բուհերի ուսանողների համար անվիճելի հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի բնագավառներ, ինչպես տնտեսությունը, բանկային ծառայությունները, բորսային գործունեությունը, շուկայագիտությունը և այլն: Սակայն նույնիսկ թուուցիկ հայացքը հիշյալ տերմինաբանական համակարգերի վրա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է առանձնահատուկ մոտեցում մշակել “նյութի ընտրությանը, հաջորդականությանը և ներկայացմանը, քանի որ չի կարելի սովորեցնել ամեն բան և միանգամից”¹⁰: Ուսումնական նյութի ընտրության դժվարությունը ժամանակակից տերմինաբանական համակարգերի առանձնահատկությունների մեջ է, որոնք բավականին տարաբնույթ են: Յուրաքանչյուր համակարգ ունի միջուկ, որ բաղկացած է բուն տերմիններից, օրինակ put, call, merger, LBO և այլն: Սակայն հարակից բնագավառներից մասնագետներին հսկայական քանակի ներգրավումը (փորձագետներ, վերլուծությաններ, ներդրող բանկիրներ, նախկին կառավարիչներ, լրագրողներ) մասսայականացնող և լուսավորող գործունեության մեջ՝ ուղղված լեզվի միջին կրողին, առաջացրել է կեղծ տերմինների հսկայական զանգված՝ վառ, պատկերավոր բառեր և արտահայտություններ, որոնք օգտագործվում են զագվածային լրատվամիջոցներում՝ բիզնեսի հետ կապված խնդիրներ քննարկելիս, կամ բազմաթիվ ձեռնարկներում ու ուղեցույցներում: Այսպես, վերլուծաբանը, նկարագրելով բրիտանական նշանավոր *Cadbury* ընկերության կլանումը ամերիկյան *Kraft* ընկերության կողմից, գրում է. “...The war of words over the first approach and before a formal hostile bid (“beer hug”) served to destabilize the share register” (բառերի մարտնչումը, որ բռնկվել էր բաժնետոմսերի գնման նախնական պայմաններից, բաժնետերերի գրացամատյանի լուրջ ապակայունացում առաջացրեց դեռ նախքան այն, երբ ընկերությունն ընկավ կլանող ընկերության “արջի գիրկը”¹¹: “Արջի գիրկ” արտահայտությունը նշանակում է. Որ առաջարկվել է բաժնետոմսերի այնպիսի բարձր գին, որ ընկերության ղեկավարությունը չի կարողացել դիմակայել և բաժնետերերին խորհուրդ է տվել վաճառել բաժնետոմսերը, ինչի արդյունքում 187 տարի բարեհաջող գործունեությունից հետո բրիտանական ընկերությունը դադարել է գոյություն ունենալ:

Բառերի հաջորդ խումբը կազմում են ժարգոնիզմները, այսինքն՝ մասնագետների կողմից օգտագործվող արտահայտությունները միմյանց հետ շփվելու ժամանակ, որոնք նախատեսված չեն լայն օգտագործման համար: Բորքերների (վաճառամիջնորդների) լեզվով investor բառը ձեռք է բերում նվաստացուցիչ համանշանակություն, երբ գործարքատուն (դիլերը) չի հասցնում առևտրային նրստաշրջանի ընթացքում վաճառել բաժնետոմսերի որևէ փափեթ. “Hey, the market is closing in few minutes, are you going to sell the stock, or become an investor?”- “Լսիր, շուկան շուտով փակվում է, դու պատրաստվո՞ւմ ես վաճառել այդ բաժնետոմսերը, թե՞ դառնում ես ներդնող”:

Վերջապես, տերմինոլոգիզմները՝ տերմինները կամ ժարգոնիզմները, որոնք անցել են ընդհանուր գրական լեզվի մեջ: Bottom line տերմինը հաշվապահության մեջ նշանակում է “վերջնական արդյունք” այսինքն տարեկան հաշվետվության մեջ շահույթների և վնասների հաշվի վերջնական տողը: Ընդհանուր գրական լեզվում այդ բառակապակցությունը սկսել է նշանակել “չոր մնացորդ,

¹⁰ Кэтфорд Дж.К., Обучение английскому языку как иностранному//Новое в зарубежной лингвистике. Вып. XXV. Контрастивная лингвистика. М.: Прогресс, 1989. С. 366-385.

¹¹ St'u The Economist, 2010, March 27.

հետևություն”։ Օրինակ՝ քննարկելով Ռուսաստանի հարաբերությունները Եվրոպայի հետ, փորձագետը, ի մի բերելով արդյունքները, ասաց. “...Bottom line is trust” (Ի վերջո, մեզ վստահություն է պետք)¹²։

Ժամանակակից լեզվաուսուցման մեջ հաղորդակցման նպատակներին հասնելու համար ուսուցման ծրագրերը ստորաբաժանվում են գլոբալ ծրագրերի (հաղորդակցական իրազեկությունը բազմակողմանիորեն զարգացնող), մոդուլային (որոշակի բնագավառում ունակությունները զարգացնող), կշռադատված (կախությային) (տարբեր բնագավառներում ունակությունները ոչ հավասարաչափ զարգացնող) և մասնակի (միայն առանձին ունակությունների զարգացնող, մյուսներն անտեսող)։ Ուսումնական ժամերի սահմանափակության պատճառով ոչ լեզվական բուռնում մոդուլային ծրագիրը և գիտելիքների հիմնային մակարդակի ձևավորումը, որը և՛ իմացաբանական և գործառնության լեզվական կոմպետենցիաներից նախընտրելի է մյուս բոլոր մակարդակների համեմատ՝ այն բանով, որ թեթևացնում է նոր տեղեկության ձանագման և յուրացման ընթացքը և ձևավորում է բառայնացման (վերբալիզացիայի) որոշակի թեթևություն։ Բանալի տերմինները ենթակա են պարտադիր յուրացման իսկ կեղծ տերմինների (կվադիտերմինների) իմացությունը, որքան էլ որ դրանք հետաքրքիր լինեն, պարտադիր չի կարող հանդիսանալ։ Այս դեպքում սովորողներին ընտրության ազատության հնարավորություն տալով, մենք մշակում ենք նրանց մասնակցությունը գիտելիքների ձեռքբերման և մտավոր նոր ներկայացումների գործընթացներին։

Մենք առաջարկում ենք օգտագործել ձանաչողական մոդելավորումը նախնական գիտելիքների ձևավորման համար։ ձանաչողական մոդելը արտացոլում է հասկացությունների համակարգը, որ առնչվում է գիտելիքների որոշակի բնագավառի հետ, և հաստատում է կապերն ու նրանց տիպը հասկացությունների միջև, որ մտնում են այդ համակարգի մեջ։ “ձանաչողական մոդելը ոչ լեզվական գիտելիքների կապակցված կառուցվածքի է, իսկ բառային միավորները հանդիսանում են միջոց, որոնք ապահովում են այդ գիտելիքների մատչելիությունը”¹³։ ձանաչողական (կոգնիտիվ) մոդելավորումը թույլ է տալիս կառուցել հասկացության լեզվական տարածքները՝ օգտագործելով այնպիսի բնութագրումներ, ինչպես՝ թեմա, գործակալներ գործողություններ, գործիքներ, մաս, նպատակ և այլն։ Տվյալ հոդվածում համապարփակ հասկացության լեզվական-տերմինաբանական համակարգի նյութի հիման վրա՝ M&A (Mergers and Acquisitions – միաձուլումներ և ներգրավումներ), մենք կփորձենք ցույց տալ այդպիսի մոդելավորման հնարավորություններ։

Գործակալների և նրանց գործողությունների հարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. Ջավթիչ ընկերությունը ձեռնարկում է մի շարք գործողություններ՝ մեկ այլ ընկերություն զավթելու կամ պաշտոնապես ձեռք բերելու ուղղությամբ, թիրախ ընկերությունը նույնպես տիրապետում է ռազմավարությունների և մարտավարությունների մի ամբողջ զինանոցի, որոնք նրան թույլ են տալիս խուսափելու անցանկալի ծախսերից։ Հետագոյնում տերմինաբանական համակարգի միջուկը բաղկացած է հետևյալ անդամներից. The Acquiring Company, (BIDDER – գնորդ), The Target (գործակալներ)։ Merge, acquire, take over, (re)pur-

¹² CNN, 2010, մայիսի 22.

¹³ Evans V. How words mean: Lexical Concepts, Cognitive Models and Meaning Construction. Oxford: Oxford University Press, 2009. p. 199.

chase, sell, buy out, make a bid/tender offer, divest, strip, raid (գործողություններ): Merger, acquisition, hostile/friendly takeover, LBO (level raged buyout), divestiture, consolidation, asset stripping (գործողությունների արդյունք); Cash, stock (shares), premium, consideration (վճարում), Synergy (նպատակ): Տվյալ բառային միավորները կազմում են համակարգի միջուկը և հիմնականում իրենցից ներկայացնում են ըստ էության տերմիններ: Տվյալ համակարգի միջուկին տիրապետելը ձևավորում է գիտելիքների հիմնային մակարդակ, ինչը թույլ է տալիս հասկանալ մասնագիտացված դասագրքերը, թերթային և ամսագրային հոդվածների տեքստերը, որոնք նկարագրում են միաձուլումներն ու ներգրավումները, և դրանով ներկայացնում տվյալ թեմայով ասածները:

Տվյալ հոդվածի շրջանակներում հնարավոր է միայն թռուցիկ հայացք գցել գործողությունների բառայնացման միջոցների վրա, գործողություններ, որ նախաձեռնում է գործակալներից մեկը՝ զավթիչ ընկերությունը: Ձեռք բերող ընկերությունը կարող է պաշտոնական առաջարկություն անել գնման վերաբերյալ (bid/tender offer), սակայն տհաճ անակնկալ կարող է մատուցել ոչ աշխատանքային օրերի հետ կապված (Saturday night special – հատուկ ուտեստ)՝ հայտարարելով զավթելու մտադրությունների մասին շաբաթ երեկոյան, որպեսզի խուսափի աղմուկից, կամ կարող է սկսել մեղմ շանտաժից (Green [back + black] mail – կանաչ փոստ), գնելով շուկայում թիրախ ընկերության բաժնետոմսերը՝ զավթիչ ընկերությունը առաջարկում է ետ գնել այդ բաժնետոմսերը ավելի բարձր գնով կամ ենթարկվել զավթման: Այդպիսի մարտավարությունը հայտնի է նաև որպես bon voyage bonus (վճար հաճելի ճամփորդության համար) կամ good bye kiss (հրաժեշտի համբույր): “Զավթիչը” կարող է գործողությունները տեղափոխել բաժնետերերի ընդհանուր ժողով և փորձել իր համար նախապես ապահովել նրանց ձայները, ովքեր քվեարկում են վստահելով, և նրանց օգնությամբ ընտրել իր համար բայրացական տնօրենների խորհուրդ (Proxy fight/battle – պայքար ձայնի համար), կամ տնօրենների խորհուրդին այնպիսի առաջարկություն անել, որից հնարավոր չէ հրաժարվել (Bear hug – արջի գրկախառնություն)՝ առաջարկելով բաժնետոմսերի շուկայական արժեքից վեր գգալի գումար (premium): Օգտագործվում է նաև բաժնետոմսերի զագնվածային գնման ռազմավարություն՝ բորսայի բացման պահին (Dawn raid – գրոհ լուսաբացին): Այն պահին, երբ թիրախ ընկերությունն իմանա բաժնետոմսերի գնման մասին, արդեն ուշ կլինի ինչ-որ բան ձեռնարկել: Գործունեության տվյալ ոլորտում եռում են իսկապես շեքսպիրյան կրքեր. զավթման ռազմավարություններից մեկը կոչվում է “Lady Macbeth strategy” – լեդի Մակբեթի ռազմավարություն: Զավթիչ ընկերությունը գտնում է երրորդ մի ընկերություն, որը համաձայնում է իրեն ներկայացնել որպես թիրախ ընկերության բարեկամ (white knight – ստիտակ ասպետ), վստահություն շահել և վերջինս համոզել՝ վաճառել բաժնետոմսերն իրեն, իսկ հետո ցույց է տալիս իր իսկական դեմքը և բոլորի բաժնետոմսերը հանձնում է կլլող ընկերությանը:

Ինչպես երևում է նկարագրությունից՝ կեղծ տերմինները ծառայում են բնութագրելու, կոնկրետանալու և գնահատելու “թշնամական զավթում” առանցքային հասկացությունը: Դրանց կազմավորման հիմքում ընկած է իմաստաբանական փոխադրումը կամ հասկացության ներառումը, այսինքն՝ տարբեր բնագավառների հասկացությունների համադրումը (ռազմական, գրական և այլն): Իմաստաբանական փոխադրումների օգնությամբ լեզվի կրողները միավորում են

տարբեր բնագավառների գիտելիքները, որպիսզի հասկանան և արտահայտեն նոր գաղափարներ¹⁴: Բայց պետք է հիշել, որ այդ փոխադրումները իրականացվում են սոցիալ-մշակութային համատեքստի գիտելիքի որոշակի հարացույցի շրջանակներում, դրա համար էլ միշտ չէ, որ կարող են հասկանալի լինել այլ մշակույթի կրողին:

Ճանաչողական մոդելավորման արժանիք է հանդիսանում այն, որ դա արտացոլում է հասկացությունների մի համակարգ, որ հարաբերակցվում է գիտելիքների որոշակի բնագավառի հետ, և այդ համակարգի տարրերի միջև կապերը, և օգնում է այն գիտելիքների համադրմանը, որոնք ինչպես հայտնի է պահպանվում են երկարատև հիշողության մեջ ոչ որպես փոխադարձորեն հարաբերակցող “ամփոփված” նախադրյալներ: Ճանաչողական մոդելավորումը հեշտացնում է նոր տեղեկության վերամշակումը և նպաստում է արդեն գոյություն ունեցող գիտելիքների հետ կապեր հաստատելուն: Մենք կարծում ենք, որ ուսուցման մոդելային ծրագրերը ճանաչողական մոտեցման հետ միասին կարող են տալ դրական արդյունքներ:

Тигран Харатян – Когнитивно-лингвистический подход в обучении профессиональной лексики. – В статье рассматриваются способы отбора и презентации терминологической лексики на примере темы “Слияния и поглощения”. В теоретической части статьи описываются два типа знаний – эпистемологические и процедурные на основе которых вырабатываются когнитивная и лингвистическая компетенции. Кратко суммируются основные положения конструктивистской модели обучения, основной целью которой является формирование “личностного конструкта”, и демонстрируются возможности когнитивного моделирования учебного материала для достижения этой задачи. Автор вводит понятие когнитивной модели, отражающей понятийную систему определенной области знаний и связи между ее элементами, как дидактического приема введения и объяснения новой терминологической лексики.

Tigran Kharatyan – Cognitive and linguistic approach in teaching professional lexicon. – In the article it is discussed the means of selection and presentation of terminological lexicon on the example of the theme of “Mergers and Acquisitions”. In the theoretical part of the article it is being described two types of knowledge – epistemological and procedural types, when cognitive and linguistic competencies are being produced. The main provisions of the constructivist model of learning are summarizing, which main aim is considered to be formation of “Individual construct”, and demonstration of possibilities of cognitive modeling of educational material for achieving the aim. The author introduces the concept of cognitive modeling reflecting the conceptual system of a particular knowledge area and communication between its elements, as a didactic introduction and explanation of the reception of new terminological lexicon.

¹⁴ **Coulson S.** Semantic Leaps. Frame Shifting and Conceptual Blending in Meaning Construction. Cambridge: Cambridge University Press, 2001. p. 115.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ՆԱԻՐԻ ՃԱՂԱՐՁԱՆ

ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի Ֆինանսաձևավային ամբիոնի
մագիստրանտ

Ներդրումները էական դեր են խաղում տնտեսության զարգացման գործում: Ներդրումների արդյունավետ իրականացման համար պետք է գնահատել այն ռիսկերը, որոնց կբխվի ներդրողը ներդրումներ կատարելիս: Հոդվածում ուսումնասիրվել են ներդրումային ռիսկերի գնահատումը հավանականության բաշխման միջոցով, անորոշության պայմաններում օպտիմալ ռազմավարության ընտրության չափանիշները: Յուրաքանչյուր չափանիշի լրացուցիչ մեկնաբանման համար բերվել են օրինակներ: Անդրադարձ է կատարվել նաև «Որոշումների ծափին»:

Բանալի բառեր. ներդրումներ, ներդրումային ռիսկ, ռիսկի գնահատում:

Վերլուծելով և համեմատելով ներդրումային ծրագրերի տարբերակները, ներդրողները գործում են որոշումների ընդունման տեսության շրջանակներում:

Ինչպես նշել ենք նախորդ գլխում, ռիսկ հասկացությունը և անորոշությունը տարբերվում են միմյանցից: Որոշումների ընդունման տեսությունը բաժանվում է 2 տիպի մոդելների¹

- Որոշումների ընդունում անորոշության պայմաններում, երբ որոշումներ ընդունողը չի իմանում հնարավոր արդյունքների մասին կամ յուրաքանչյուր որոշման հետևանքի ի հայտ գալու հավանականության մասին,

- Որոշումների ընդունում ռիսկի պայմաններում, երբ որոշումներ ընդունող անձը գիտի հնարավոր արդյունքների մասին կամ յուրաքանչյուր որոշման հետևանքի մասին:

Որոշումների ընդունումը ինչպես անորոշության, այնպես էլ ռիսկի պայմաններում կարելի է ներկայացնել հավանականությունների բաշխման հիման վրա կառուցվող «եկամուտների աղյուսակի» միջոցով:

Աղյուսակ 1.

Եկամուտների աղյուսակը ընդհանուր տեսքով

Որոշման տարբերակի ընտրություն	«միջավայրի» վիճակը (S) և դրա հավանականությունը (P)		
	$S_1 (p_1)$	$S_2 (p_2)$	$S_j (p_j)$
A_1	X_{11}	X_{12}	X_{1j}
A_2	X_{21}	X_{22}	X_{2j}
A_i	X_{i1}	X_{i2}	X_{ij}

¹ *И.А.Бузова, Г.А.Маховикова, В.В.Терехова*, “Коммерческая оценка инвестиций”, ПИТЕР-2004, стр.178

Եկամուտների աղյուսակում X_{ij} -ն իրենից ներկայացնում է եկամուտը, որը կարելի է ստանալ i -րդ որոշման ընդունումից j -րդ միջավայրի պայմաններում: Աղյուսակը կարելի է ներկայացնել եկամուտների մատրիցի $|X_{ij}|$ տեսքով, որտեղ i -ն եկամուտների մատրիցի տողերի համարն է, այսինքն որոշման տարբերակը, j -ն մատրիցի սյան համարն է, այսինքն միջավայրի պայմանը:

Անորոշության պայմաններում աղյուսակը կունենա այլ տեսք, քանի որ այնտեղ բացակայելու է ընդունված որոշումների արդյունքների հավանականությունը:

Դիտարկենք օրինակ. Ընկերությունը ցանկանում է անցնել լայնածավալ արտադրության, սակայն չգիտի թե երբ դա կարելի է անել՝ անմիջապես, 1 տարի հետո, թե 2 տարի անց: Խնդիրը կայանում է նրանում, որ արտադրանքը թանկարժեք է, և բնական է, որ անմիջապես չի կարող գտնել համապատասխան գրնորդներ: Չի կարելի նաև հապաղել, քանի որ մրցակիցները կխլեն նախաձեռնությունը և բաց կթողնվի հնարավոր շահույթի զգալի մասը:

Ընդունված որոշումների հնարավոր արդյունքները շուկայի տարբեր արձագանքների դեպքում ներկայացվում է աղյուսակում:

Աղյուսակ 2.

Եկամուտների աղյուսակ (օրինակ)

Լայնածավալ արտադրությանը անցնելու որոշման ընտրության տարբերակներ	Վճարումների ծավալը /մլն դոլար/ այն պայմաններում, որ սպառողի մոտ պահանջարկ կվայելի		
	անմիջապես	1 տարի անց	2 տարի անց
Անցնել անմիջապես	16	6	-6
Անցնել 1 տարի հետո	5	12	2
Անցնել 2 տարի հետո	0	2	0

Ինչպես երևում է աղյուսակից, անմիջապես անցումը լայնածավալ արտադրության կարող է տալ առավելագույն շահույթ, բայց անհաջողության դեպքում սպառնում է մեծ կորուստներ: Այլ տարբերակները բացառում են կորուստների հավանականությունը, սակայն շահույթը առավել քան փոքր է:

Արդյունավետ որոշման ընտրության դժվարությունը այստեղ կայանում է շուկայի այս կամ այն արձագանքի իմացության բացակայությունից:

Անորոշության պայմաններում օպտիմալ ռազմավարության ընտրությունը կատարվում է հետևյալ չափանիշներով.

- MAXIMAX չափանիշ,
- MAXIMIN (Վալդայի չափանիշ),
- MINIMAX (Սևիջի չափանիշ),
- Գուրվիցի պեսսիմիզմի-օպտիմիզմի չափանիշ

MAXIMAX-ը ծայրահեղ օպտիմիզմի չափանիշ է՝ լավագույն որոշում է համարվում այն, որը բերում է առավելագույն արդյունք:

$$M = \max_i \left(\max_j x_{ij} \right) \tag{1}$$

Դժվար չէ տեսնել, որ մեր օրինակում առավել արդյունավետ որոշումը կլինի 16-ը, այսինքն լայնածավալ արտադրության անմիջապես անցում:

Վարդի չափանիշը անվանում են նաև «վատատեսի չափանիշ», քանի որ ըստ այդ չափանիշի յուրաքանչյուր որոշումից պետք է սպասել առավելագույն վատ արդյունք, և խնդիրը կայանում է՝ ընտրելու այն որոշումը, որի կորուստները կլինեն առավել լավ այլ վատ արդյունքներից: Այսպիսով.

$$W = \max_i \left(\min_j x_{ij} \right) \tag{2}$$

Սա նշանակում է, որ պետք է գտնել յուրաքանչյուր տարբերակի վատագույն արդյունքը, այսինքն $\min X_{ij}$ և կառուցել աղյուսակ.

Աղյուսակ 3.

Մաքսիմինի հաշվարկ

Լայնածավալ արտադրությանը անցնելու որոշման ընտրության տարբերակներ	Մինիմումների սյուն
Անցնել անմիջապես	-6
Անցնել 1 տարի հետո	2
Անցնել 2 տարի հետո	0

Վատ արդյունքներից վերցնում ենք լավագույնը: Մեր աղյուսակում դա երկրորդ տարբերակն է, այսինքն մասսայական արտադրությունը սկսել 1 տարի անց:

Սևիջի չափանիշը (MINIMAX) ի տարբերություն նախորդ չափանիշի, միտված է ոչ այնքան նվազեցնելու կորուստը, այլ նվազեցնելու բաց թողնված օգուտի չափը: Այն թույլ է տալիս խելամիտ ռիսկի դիմել, հանուն լրացուցիչ եկամտի: Այս չափանիշից կարելի է օգտվել միայն այն ժամանակ, երբ կա վստահություն, որ պատահական կորուստը չի բերի ֆիրմայի սնանկացման:

$$S = \min_i \left(\max_j \left(\max_i X_{ij} - X_{ij} \right) \right) \tag{3}$$

Այս չափանիշը ներառում է հաշվարկի 4 քայլ.

Առանձին սյունակներից գտնում են լավագույն արդյունքները՝ $\max_{ij}$: Մեր օրինակում այդպիսիք կլինեն 16-ը՝ առաջին սյունում, 12-ը՝ երկրորդում և 6-ը՝ երրորդում: Դրանք այն առավելագույններն են, որոնք կարելի է ստանալ, եթե հնարավոր լինի կանխատեսել շուկայի արձագանքը:

Այնհուիետևս յուրաքանչյուր սյունակի համար հաշվում ենք առավելագույն արդյունքի և հնարավոր տարբերակների տարբերությունը՝ $\max_i X_{ij} - X_{ij}$: Ստանում ենք տարբերությունների մատրիցան:

Լայնածավալ արտադրությանը անցնելու որոշման ընտրության տարբերակներ	Բաց թողնված օգուտի հնարավոր մեծությունը՝ ամբողջական պահանջարկի առկայության պայմաններում		
	անմիջապես	1 տարի անց	2 տարի անց
Անցնել անմիջապես	0	6	12
Անցնել 1 տարի հետո	11	0	4
Անցնել 2 տարի հետո	16	10	0

Ընտրելով յուրաքանչյուր տարբերակներից առավելագույնը, մենք կստանանք առավելագույն «ափսոսանքի» սյունակը:

Լայնածավալ արտադրությանը անցնելու որոշման ընտրության տարբերակներ	Առավելագույն ավստսանքի սյուն
Անցնել անմիջապես	12
Անցնել 1 տարի հետո	11
Անցնել 2 տարի հետո	16

Ընտրում ենք այն որոշումը, որի առավելագույն ավստսանքը կլինի մյուսներից ամենափոքրը: Դա մեր մոտ կլինի երկրորդ տողը, այսինքն լայնածավալ արտադրության անցում 1 տարի անց:

Գուրվիցի պեսսիմիզմի-օպտիմիզմի չափանիշը իրենից ներկայացնում է այն, որ որոշումը ընտրելուց խորհուրդ է տրվում առաջնորդվել որոշ միջին արդյունքներով, որոնք գտնվում են ծայրահեղ պեսսիմիզմի և օպտիմիզմի միջև: Այսինքն չափանիշը ընտրում է կամընտրականը առավելագույն միջինով (ենթադրվում է, որ միջավայրի ցանկացած վիճակ կարող է հանդես գալ նույն հավանականությամբ): Այս չափանիշը ունի հետևյալ տեսքը՝

$$H = \max_i \left(k \min_j X_{ij} + (1 - k) \max_j X_{ij} \right) \tag{4}$$

Որտեղ k -ն պեսսիմիզմի գործակիցն է, որը գտնվում է 0-ի և 1-ի միջև՝ կախված այն հանգամանքից, թե ընդունված որոշումը ինչպես է գնահատում իրավիճակը: Եթե այն մոտենում է իրավիճակին օպտիմիստորեն, ապա այդ մեծությունը պետք է մեծ լինի 0.5-ից: Պեսսիմիստական գնահատման դեպքում մեծությունը գնահատվում է փոքր 0.5-ից:

Երբ $k = 0$, Գուրվիցի չափանիշը համընկնում է առավելագույն չափանիշին, իսկ $k = 1$ -ի դեպքում համընկնում է Վալդի չափանիշին:

Հաշվենք Գուրվիցի չափանիշը մեր օրինակի համար՝ k -ն ընդունելով 0.6

$$H_1 = 16 \cdot 0.6 + (-6) \cdot 0.4 = 7.2$$

$$H_2 = 12 \cdot 0.6 + 2 \cdot 0.4 = 8$$

$$H_3 = 6 \cdot 0.6 + 0 \cdot 0.4 = 3.6$$

Այսինքն մենք պետք է անցնենք լայնածավալ արտադրության 1 տարի անց ($H = 8$):

Ռիսկի պայմաններում որոշումների ընդունում: Ռիսկային իրավիճակ աւելով, ինչպես արդեն նշվել է, որոշումների ընդունման տեսության ժամանակ հասկացվում է այնպիսի իրավիճակ, երբ կարելի է ցույց տալ ոչ միայն յուրաքանչյուր տարբերակի հնարավոր արդյունքները, այնպես էլ դրանց ի հայտ գալու հավանականությունը:

Արդյունավետ որոշում ընդունելու համար օգտագործվում են հետևյալ չափանիշները.

- ❖ Մաթսպասման չափանիշ,
- ❖ Լապլասի չափանիշ,

Մաթսպասման չափանիշը համարվում է հիմնական չափանիշը ռիսկային իրավիճակներում որոշումներ ընդունելու համար: Այն ֆորմալ տեսքով ունի հետևյալ տեսքը՝

$$K = \max_i M \tag{5}$$

$$M = \sum X_{ij} \cdot p_j \tag{6}$$

Որտեղ X_{ij} -ն վճարումներն են, որոնք կարելի է ստանալ միջավայրի i -րդ վիճակում, p_j -ն j -րդ միջավայրի վիճակի հավանականությունն է: Այսպիսով, լավագույն ռազմավարությունը կլինի այն, որը կապահովի ներդրողի համար առավելագույն միջին շահույթ:

Օգտվելով մեր օրինակի տվյալներից, հաշվենք չափանիշը՝ ավելացնելով հնարավոր իրադարձությունների ի հայտ գալու հավանականությունը:

Լայնածավալ արտադրությանը անցնելու որոշման ընտրության տարբերակներ	Ամբողջական պահանջարկի ի հայտ գալու հնարավոր ժամկետների հավանականությունը		
	Անմիջապես (0.2)	1 տարի անց (0.5)	2 տարի անց (0.3)
Անցնել անմիջապես	16	6	-6
Անցնել 1 տարի հետո	5	12	2
Անցնել 2 տարի հետո	0	2	6

Յուրաքանչյուր տողի համար, այսինքն յուրաքանչյուր որոշման տարբերակների համար գտնենք վճարումների մաթսպասումը:

$$M_1 = 16 \cdot 0.2 + 6 \cdot 0.5 - 6 \cdot 0.3 = 4.4$$

$$M_2 = 5 \cdot 0.2 + 12 \cdot 0.5 + 2 \cdot 0.3 = 7.6$$

$$M_3 = 0 + 2 \cdot 0.5 + 6 \cdot 0.3 = 2.8$$

Դրանցից առավելագույնը հանդիսանում է երկրորդ տողի մաթսպասումը, որը համապատասխանում է մասսայական արտադրությունը 1 տարի անց սկսելու որոշման հետ:

Եթե ստացված արդյունքները արժեքային տեսանկյունից իրար բավականին մոտ են, ապա ընտրությունը կարելի է կատարել Լապլասի չափանիշի միջոցով:

$$L = \max_i \sum_j X_{ij} \tag{7}$$

Հիմնվելով այս բանաձևի վրա, արդյունավետ պետք է համարել այն որոշումը, որին համապատասխանում է վճարումների առավելագույն մեծություն: Մեր օրինակի համաձայն $\sum X_{1j} = 16$, $\sum X_{2j} = 19$, $\sum X_{3j} = 8$: Այսինքն առավելագույն մեծությունը համապատասխանում է երկրորդ տողի տարբերակին: Այսինքն արդյունավետ որոշումը կլինի այն, որ լայնածավալ արտադրությունը սկսվի 1 տարի անց:

«Որոշումների ծառ»: Գործնական շատ խնդիրներում հաճախ ենք հանդիպում հաջորդական որոշումների ընդունման անհրաժեշտությանը, երբ ընդունված որոշումը պայմանավորում է մի այլ որոշում (կամ որոշումներ) ընդունելու անհրաժեշտությունը: Որոշումների նման հաջորդականությունը հնարավոր չէ նկարագրել և հետա-գոտել եկամուտների աղյուսակների օգնությամբ: Այսպիսի դեպքերում օգտվում են այսպես կոչված որոշումների ծառի եղանակից:

Որոշումների ծառը իր կառուցվածքով նման է հավանականությունների տեսությունից մեզ հայտնի հավանականությունների ծառին: Այս եղանակն օգտագործում են այն դեպքերում, երբ անորոշության պայմաններում անհրաժեշտ է ընդունել տարբեր որոշումներ, որոնցից յուրաքանչյուրը կախված է ընդունված նախորդ որոշման (որոշումների) կամ ելքի (ելքերի) արդյունքներից:

Ներդրումային ծրագրի վերլուծողը, որը կառուցում է որոշումների ծառը, պետք է տիրապետի անհրաժեշտ և հստակ տեղեկատվության՝ հաշվի առնելով մշակված սցենարների հավանականությունը: Որոշումների ծառի կառուցման քայլերը կարելի է ներկայացնել հետևյալ քայլերի միջոցով.

- Որոշել ծրագրի բաղադրիչների շարունակականությունը ծրագրի ողջ ցիկլի ընթացքում,

- Որոշել այն առանցքային իրադարձությունները, որոնք էական ազդեցություն են թողնում ծրագրի հետագա զարգացման վրա,

- Որոշել այդ իրադարձությունների ի հայտ գալու ժամանակը,

- Ձևավորել բոլոր հնարավոր որոշումները, որոնք հնարավոր է, որ կներդրվեն առանցքային իրադարձությունների ի հայտ գալու ժամանակ,

- Որոշել յուրաքանչյուր որոշման հավանականությունը,

- Ընթացիկ գներով հաշվել ծրագրի յուրաքանչյուր փուլի արժեքը:

Հիմնվելով ստացված տվյալների վրա՝ կառուցվում է որոշումների ծառը: Այնուհետև պետք է հաշվել յուրաքանչյուր սցենարի հավանականությունը ծրագրի զարգացման ընթացքում, յուրաքանչյուր սցենարի NPV-ն (Net Present Value-Զուտ ներկա արժեք) և այլն:


Որոշումների ծառը օգտագործվում է այն ներդրումային ծրագրերի դեպքում, որտեղ կան զարգացման կանխատեսելի տարբերակներ: Այս մեթոդը օգտակար է այն ժամանակ, երբ առավել ուշ ընդունված որոշումները կապված են նախորդ որոշումներից:

Որոշումների ծառը արտացոլում է լուծվող հիմնախնդրի կառուցվածքը և կազմված է բնից, հանգույցներից ու դրանցից դուրս եկող ճյուղերից: Որոշումների ծառը ներկայացվում է ձախից աջ: Նրա ճյուղերը ցույց են տալիս հնարավոր այլընտրանքային որոշումները և դրանց ընդունման դեպքում հնարավոր ելքերը: Ծառի ներկայացման համար օգտագործվում են երկու տեսակ ճյուղեր՝ հնարավոր որոշումներին համապատասխանող կետագծեր և ելքերին համապատասխանող հոծ գծեր:

Որոշումների ծառն ընդգրկում է երկու տեսակ հանգույցներ: Ուղղանկյունով նշանակվում են որոշումների ընդունման հանգույցները, իսկ շրջանակով՝ հնարավոր պատահական ելքերին համապատասխանող հանգույցները: Քանի որ որոշում ընդունողը չի կարող ազդել բոլոր հնարավոր ելքերի վրա, ապա ծառի հետագոտման ժամանակ նա գնահատում է միայն տարբեր ելքերի հավանականությունները:

Որոշումների ծառի հետագոտումը կատարվում է մի քանի փուլերով: Մկզբում՝ «շարժվելով ձախից դեպի աջ», կառուցվում է ծառի կմախքը, որտեղ որոշումներին համապատասխանող ճյուղերի մոտ գրվում են դրանց հետ կապված ծախսերը, իսկ ելքերի ճյուղերի մոտ՝ դրանց հավանականությունները: Այնուհետև կատարվում է տարբեր ելքերի հավանականությունների և դրանց համապատասխանող եկամուտների հաշվարկը: Երրորդ փուլում կատարվում է տարբեր հանգույցներում միջին եկամուտների հաշվարկը և «շարժվելով աջից դեպի ձախ» ընդունվում են առավելագույն միջին եկամուտներ ապահովող որոշումները:

Գրաֆիկական պատկերը հետևյալն է.




Որտեղ՝ E -ն որոշումների ընդունման հանգույցն է, Z -ը պատահական ելքերին համապատասխանող հանգույցը, z -ը նկարագրում է հավանականությունը, R -ը արդյունքի հանգույցն է, R/E -ն հանգույց է, որը ցույց է տալիս կոնկրետ արդյունքի առկայությունը և որոշումների ընդունման անհրաժեշտությունը:

Առավել պարզ պատկերացնելու համար, դիտարկենք հետևյալ օրինակը.

Ենթադրենք կան 3 տիպի ներդրումային ծրագրեր՝ $ИП1$, $ИП2$, $ИП3$, որոնցից պետք է ընտրել լավագույնը: Այդ ծրագրերի արժեքներն են՝ $ИП1=200$ մլն դրամ, $ИП2=300$ մլն դրամ, $ИП3=500$ մլն դրամ: Ծրագրերի իրականացումից ակնկալվող շահույթներն են՝ $ИП1=100$ մլն դրամ, $ИП2=200$ մլն դրամ, $ИП3=300$ մլն դրամ: Ներդրված միջոցների կորստի ռիսկը՝ $ИП1=10\%$, $ИП2=5\%$, $ИП3=20\%$: Որ ծրագիրն է լավագույնը:

Այս հարցին գուտ մաթեմատիկորեն պատասխանելը բավականին բարդ է: Որոշումների ծառի միջոցով հարցը հեշտ լուծվում է: Կառուցենք որոշումների ծառը:



Կառուցելուց հետո սկսում ենք ետադարձ վերլուծությունը: Անցնելով աջից ձախ՝ մենք պետք է կազմենք եկամուտների մաթսպասումը: Հաշվարկից հետո որոշումների ծառի E հանգույցի մեջ պետք է գրել այն առավելագույն մեծությունը, որը ստացվել էր մաթսպասումները հաշվելուց հետո: Ինչպես տեսնում ենք լավագույն ներդրումային ծրագիրն է հանդիսանում $ИП2$ -ը՝ 175մլն դրամ:

Наири Джагарян – Оценка инвестиционных рисков путем распределения вероятностей. – Инвестиции играют значительную роль в развитии экономики. Для эффективного осуществления инвестиции следует оценивать риски, которых инвестор будет столкнуться во время инвестирования. В статье изучены оценки инвестиционных рисков путем распределения вероятностей. Изучены критерии выбора оптимальной стратегии в условиях неопределенности. Для дополнительной интерпретации каждой критерии, приведены примеры.

Nairi Tshagharyan – Estimation of investment risks by distribution of probabilities. – Investments play a considerable role in economy development. For effective investment realisation it is necessary to estimate risks which the investor will face during investment. In article estimations of investment risks by distribution of probabilities are studied. Criteria of a choice of optimum strategy in the conditions of uncertainty are studied. For additional interpretation of everyone criteria, are resulted examples.

ՏԱՐԱԾՔԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ
ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԷՌԻԹՅՈՒՆԸ,
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԱԿՄԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ
ԵՊՀ դոցենտ

ՀՈՍՍԵՒՆ ՔԻԱՍԱՐԻ
ԵՊՀ ասպիրանտ

Յուրաքանչյուր տարածքի զբոսաշրջության զարգացման նախադրյալները և պայմանները հանդիսանում են զբոսաշրջային ռեսուրսները և ներուժը: Դրանք բնական, պատմա-մշակութային և սոցիալ-տնտեսական նախադրյալների ամբողջությունն է, որոնք ապահովում են տվյալ տարածքում զբոսաշրջային գործունեությունը: Հոդվածում քննարկվում են տարածքի զբոսաշրջային ռեսուրսների և ներուժի էության, նրա տարրերի և գնահատման հարցերը:

Բանալի բառեր. Ջրոսաշրջություն, տարածք, զբոսաշրջային ռեսուրսներ, զբոսաշրջային ներուժ, գնահատում:

Ցանկացած տարածքում զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ պայմանը զբոսաշրջային ներուժն է: Տարածքի զբոսաշրջային ներուժի մեջ մտնում են բնական, պատմամշակութային և սոցիալ-տնտեսական նախադրյալների ամբողջությունը, որոնք անհրաժեշտ են որևէ տարածքում զբոսաշրջային գործունեություն իրականացնելու համար¹:

Շատ հաճախ զբոսաշրջային ներուժի տակ հասկացվում է տվյալ տարածքում որոշակի բացառիկ կամ ծայրահեղ դեպքում ոչ միայն տեղացիների համար հետաքրքիր օբյեկտների առկայությունը: Չնայած որ դա պարտադիր պայման չէ, այլ միայն ցանկալի:

“Տարածքի զբոսաշրջային ներուժ” հասկացությունն իր մեջ ներառում է “զբոսաշրջային գործունեության զարգացման պայմաններ և գործոններ հասկացություններ”:

Երբեմն օգտագործում են նաև «**զբոսաշրջային արժեքներ**» հասկացությունը, որի տակ ընկալվում է տարածքի զբոսաշրջային ռեսուրսները կամ զբոսաշրջային ռեկրեացիոն ներուժը²:


Տարածքի զբոսաշրջային ներուժն իր մեջ ներառում է *զբոսաշրջային ռեսուրսները* և *զբոսաշրջային ենթակառուցվածքը*: Առաջինը բաժանվում է երեք հիմնական խմբի՝ *բնական, պատմամշակութային և սոցիալ-տնտեսական*: Սոցիալ-տնտեսական ռեսուրսներն ունեն երկակի բնույթ: Դրան պատկանում են զբոսաշրջային ենթակառուցվածքի տարրերը, ինչպես նաև աշխատանքային, տեղեկատվական, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսները, կառավարման էլեմենտները:

Մասնագետների կողմից օգտագործվում է նաև «**զբոսաշրջային ռեկրեացիոն ռեսուրսներ**», հասկացությունը, որի տակ հասկանում են տարածաշրջանի բնակլիմայական, սոցիալ-մշակութային, պատմական, հնէագիտական, ճարտա-

¹ *Кусков А.С., Джаладян Ю.А.* Основы туризма, М. 2008, с. 66.

² *Джанджугазова Е.А.* Маркетинг туристской территории. М. 2006

րապետական, գիտա-արդյունաբերական, տեսարանային, պաշտամունքային և այլ օբյեկտներն ու երևույթները, որոնք հնարավորություն են տալիս բավարարել մարդու պահանջմունքները զբոսաշրջային գործընթացում, ստեղծում են կազմակերպա-տնտեսական և նյութական բազա զբոսաշրջության զարգացման համար [6]:



Տարածքի զբոսաշրջային ներուժի կառուցվածքը

Ռուս մասնագետ Դարինսկու կարծիքով տարածքի զբոսաշրջային ներուժը դա զբոսաշրջային ռեսուրսներն են, զբոսաշրջային ինդուստրիան և զբոսաշրջային ենթակառուցվածքը³:

Որևէ տարածաշրջանի զբոսաշրջային ինդուստրիայի հեռանկարը որոշելու համար մեթոդական առումով ճիշտ է առանձնացնել հետևյալ ասպեկտները.

³ Кусков А.С., Джаладян Ю.А. Основы туризма, М. 2008, с. 68.

- բացահայտել գոյություն ունեցող զբոսաշրջային-ռեկրեացիոն ներուժը,
- գնահատել առկա զբոսաշրջային ռեկրեացիոն ներուժը,
- գնահատել զբոսաշրջային և ռեկրեացիոն ներուժի ժամանակակից վիճակը,

- բացահայտել զբոսաշրջային և ռեկրեացիոն ներուժի օգտագործման ինտենսիվացման հնարավորությունները,

- կատարել տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը խանգարող գործոնների գնահատում,

- կատարել տարածաշրջանի զբոսաշրջային-ռեկրեացիոն ոլորտի տարածքային կազմակերպման հեռանկարային մոդելի նախապատրաստում և իրականացում:

Որևէ տարածաշրջանի զբոսաշրջային ներուժի գրագետ և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է մշակել և կիրառել դրա գնահատման հետևյալ պարամետրերը.

- զբոսաշրջային ռեսուրսների քանակական գնահատում,

- զբոսաշրջային ներուժի կառուցվածքի գնահատում և մասնավոր ներուժների օգտագործման աստիճանների գնահատում,

- զբոսաշրջային ռեսուրսների օգտագործման հնարավորությունների գնահատում,

- զբոսաշրջային և ռեկրեացիոն ռեսուրսների վիճակի սիստեմատիկ հաշվառում և դրանց դերի որոշում տարածաշրջանի զբոսաշրջության զարգացման համար, որոնք հնարավոր են միայն զբոսաշրջային և ռեկրեացիոն կադաստրի համակարգի կիրառման դեպքում:

Տարածքի զբոսաշրջության զարգացման առաջնային պայմաններից մեկն բնառեկրեացիոն ներուժն է: ***Բնառեկրեացիոն բարձր ներուժով տարածքի բազմակողմանի վերլուծությունը***, որն հիմնված է համակարգային մոտեցման մեթոդաբանության վրա, ենթադրում է պարզել այդ տարածքի մի քանի հատկանիշներ. ա) ռեկրեացիոն ռեսուրսների մակարդակը, բ) դրանց ներուժը, գ) բնական և սոցիալ-տնտեսական ամբողջականությունը, դ) դրանց պահանջը ներկայումս և ապագայում:

Տարածքի բնառեկրեացիոն ներուժի գնահատման ***ժամանակ պետք է հաշվի առնել բնական համալիրների այնպիսի հատկանիշներ***, որոնք ինտեգրալ ձևով արտահայտում են այդ տարածքի առավել յուրահատուկ, մարդու համար սպառողական հատկանիշները: Դրանք պետք է նպաստեն մարդու առողջության, հոգեբանական, ֆիզիկական և զգացմունքային վիճակի վերականգնմանը: Այդ գնահատման հիմքում ընկած են հետևյալ դրույթները⁴:

- հանգստի բարձր որակը ապահովվում է միայն հնարավորությունների բազմազանությամբ (բուժական, սպորտային, ճանաչողական, էսթետիկական և այլն),

- ռեկրեացիոն ռեսուրսների առաջնաստեղծ, ***ոչ սովորական և յուրօրինակ լինելը, պայմանավորում են դրանց համամարդկային արժեքը***,

- «վայրի բնության» հետ մարդու շփվելու պահանջը բնական և պետք է անվերապահորեն բավարարվի,

⁴ Кусков А.С., Джаладян Ю.А. Основы туризма, М. 2008, с. 75.

▪ բնական ռեկրեացիոն ռեսուրսներն անփոխարինելի են, սպառվող են, ունեն սահմանափակ հնարավորություն վերականգնվելու համար:

Ելակետային նշված դրույթների հիման վրա մշակվում է տարածքի ռեկրեացիոն ներուժի գնահատման մեթոդաբանությունը: Առաջին փուլում կազմվում է յուրաքանչյուր բաղադրիչի (ռելիեֆի, կլիմայի, մակերևութային ջրերի, բուսականության և կենդանական աշխարհի, հանքային ջրերի ռեսուրսների, բնական և պատմամշակութային հուշարձանների) գնահատման որակական բալային սանդղակ: Դրանց արդյունքում առավել գրավչություն են ունենում այն **տարածքները**, որոնք ունեն առավելագույն հնարավորություններ ռեկրեացիոն ծառայությունների զարգացման համար, իսկ հանգստի ձևի ընտրությունը մարդու իրավունքն է: Տարածքի ռեկրեացիոն արժեքը նվազում է լանդշաֆտի բաղադրիչների բազմազանության նվազմանը համընթաց (միապաղաղ ռելիեֆ, դաժան կլիմա, ջրերի սակավություն և այլն): Որակական գումարային գնահատումը (բալերով) փոփոխվում է հինգ դիապազոնում. մինչև 50, 51-150, 151-300, 301-600 և 600-ից ավելի, որոնք համապատասխանում են գրավչության վարիացիայի գործակցի տատանումին ամենացածրից՝ 0,2-ից մինչև ամենաբարձր՝ 1-ը: Վերջիններս արտացոլում են լանդշաֆտի տիպայնության գոյություն ունեցող տարբերությունների աստիճանը, կենսաբազմազանությունը, բնական և պատմամշակութային ժառանգության հուշարձանները, կլիմայի և ջրերի նպաստավորությունը մարդու հանգստի համար:

Որպես տնտեսության ճյուղ զբոսաշրջությունն ունի խիստ արտահայտված կողմնորոշում բնական և պատմամշակութային ռեսուրսների նկատմամբ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ զբոսաշրջությունն.

▪ առաջացնում է մարդկանց միգրացիա դեպի զբոսաշրջային ռեսուրսների կենտրոնացման շրջաններ,

▪ տնտեսական ոլորտ է ներքաշում նախկինում չօգտագործված բնական և մշակութային համալիրներ և դրանց տարրերը,

▪ բնական և պատմա-մշակութային ռեսուրսներն օգտագործվում է համալիր կերպով,

▪ բազմանպատակ բնօգտագործման առումով միանգամայն բազմազան պահանջներ է ներկայացնում բնական համալիրներին,

▪ հաջող կերպով զուգակցվում է բնօգտագործման մնացած ձևերի հետ (գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության, լեռնահանքային արդյունաբերության),

▪ բնության և մշակույթի վրա ազդեցություն է թողնում սպառողի՝ զբոսաշրջիկի միջոցով,

▪ բնութագրվում է բնական և մշակութային համալիրների վրա մարդածին ներգործության կարգավորման շահագրգռվածությամբ,

▪ որպես տնտեսության ճյուղ տնտեսական առումով արդյունավետ է, զբոսաշրջության աշխատողների աշխատանքն ուղղված ոչ թե դեպի բնությունն ու մշակույթը, այլ ուղիղ դեպի մարդը, նրա ֆիզիկական, հոգեկան և ինտելեկտուալ ուժերի վերականգնումը:

Նախկին ԽՍՀՄ-ում, այդ թվում նաև Հայաստանում զբոսաշրջությունը դիտվում էր որպես ռեկրեացիայի տարատեսակ, ակտիվ հանգստի ձևերից մեկը: Այդ պատճառով **“զբոսաշրջային ռեսուրսներ”** հասկացությունը նույնացվում էր

նեկրեացիոն ռեսուրսներ հասկացության հետ⁵:

Շատ հեղինակներ «տարածքի զբոսաշրջային-նեկրեացիոն ռեսուրսներ» հասկացությունն օգտագործում են որպես «բնական և մարդու կողմից արհեստականորեն ստեղծված օբյեկտների ամբողջություն, որոնք անհրաժեշտ են տարածքի զբոսաշրջային արտադրանքի ձևավորման համար»: Սրա մեջ մտնում են բնական, պատմական և սոցիալ-մշակութային այն օբյեկտները, որոնք ունակ են բավարարելու մարդու ֆիզիոլոգիական և հոգևոր պահանջմունքները, ինչպես նաև նպաստում են մարդկանց ֆիզիկական և հոգևոր առողջության վերականգնմանը:

Զբոսաշրջային ռեսուրսների հիմնական հատկանիշներն են գրավչությունը (ատտրակտիվությունը), մատչելիությունը, ուսումնասիրվածության աստիճանը, դիտելիությունը, բնապատկերային, էկոլոգիական և սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը, պոտենցիալ պաշարները, տարողությունը, օգտագործման եղանակները:

Զբոսաշրջային ռեսուրսները ազգային սեփականություն են: Սակայն դրանց մի մասը, որոնք ունեն առանձնահատուկ նշանակություն, դասվում են համաշխարհային նշանակության օբյեկտների և հուշարձանների թվին: Դրանց ցանկը տարեկան տրվում և թարմացվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Զբոսաշրջային ռեսուրսներն ունեն մի շարք ընդհանուր հատկություններ: Առաջին հերթին դրանք պատմական են, այսինքն չեն կարող փոխել իրենց տեսքը զբոսաշրջային պահանջարկի, տեխնիկա-տնտեսական և սոցիալական հնարավորությունների աճի դեպքում: Երկրորդ, դրանք տարածքային են, այսինքն զբաղեցնում են մեծ մակերես (հանգիստը որպես սոցիալ-տնտեսական երևույթ պահանջում է մեծ տարածքներ): Երրորդ, կազմակերպական դեր են կատարում՝ նպաստում են զբոսաշրջային հատուկ օբյեկտների, շրջանների և գոնաների ձևավորմանը, որոնք ունեն այս կամ այն մասնագիտացումը:

Զբոսաշրջային ռեսուրսների բացառիկ հատկություններից են համարվում ամբողջականությունը, դինամիկությունը, տարողությունը, հուսալիությունը, գրավչությունը, կայունությունը և այլն:

Ամբողջականության տակ հասկացվում է բոլոր ռեսուրսների փոխադարձ կապը (սննդի օբյեկտների, հյուրանոցային տնտեսության, տրանսպորտի և այլն):

Տարողունակությունը տնտեսության մյուս ճյուղերից ռեսուրսների ներգրավման հնարավորությունն է, որոնք զբոսաշրջության հետ սերտ կապ չունեն:

Զբոսաշրջային ռեսուրսների **կայունությունն** ազգային տնտեսության մասշտաբով նշանակում է չխախտել տնտեսական հաշվեկշիռը, այսինքն՝ զբոսաշրջային ինդուստրիայի կողմից օգտագործվում են այն բնական ռեսուրսները և պայմանները, որոնք տնտեսության մնացած ճյուղերի կողմից չեն օգտագործվում:

Զբոսաշրջային ոլորտում **հուսալիությունը** որոշվում է առաջին հերթին սոցիալ-քաղաքական պայմաններով:

Գրավչությունը զբոսաշրջային ռեսուրսների հիմնական հատկությունն է: Հենց սա է օբյեկտը դարձնում զբոսաշրջային ցուցադրման առարկա:

Զբոսաշրջային օբյեկտի **բացառիկությունը** մարդու մոտ, որն ապրում է աշխարհի տարբեր կետերում, առաջացնում է հետաքրքրություն, օբյեկտը ձեռք է

⁵ *Крачипло Н.П.* География туризма, Киев 1987.

բերում համաշխարհային նշանակության կարգավիճակ:

Ճանաչողական արժեքը օբյեկտի կապն է պատմական կոնկրետ սուբյեկտի, նշանավոր մարդկանց կյանքի և ստեղծագործության հետ, էսթետիկական արժանիք է:

Զբոսաշրջային ռեսուրսների **ռեկրեացիոն արժեքը** զբոսաշրջիկների հանգստի և առողջացման կազմակերպման համար օբյեկտի հնարավորությունների օգտագործումն է:

Հայտնիությունը զբոսաշրջային օբյեկտի հանրաճանաչությունն է զբոսաշրջիկների շրջանում:

Էկոտաիկությունը օբյեկտի հակադրականության աստիճանն է՝ զբոսաշրջիկի բնակության շրջանի պայմանների համեմատությամբ դրանց ոչ սովորական լինելն է:

Արտահայտչականությունը օբյեկտի և շրջակա միջավայրի տարրերի, շենքերի, շինությունների և բնության հետ փոխներգործությունն է:

Պահպանվածությունը օբյեկտի վիճակն է, նրա պատրաստվածությունն է զբոսաշրջիկներին կազմակերպված ընդունելու համար:

Սպառողների կողմից զբոսաշրջային ռեսուրսներին ներկայացվող հիմնական պահանջներն են.

ա/ օգտագործել բնական արժեքները (բնական տեսարժան վայրերը, արգելանոցային տարածքները, բնապատկերային օրինակները),

բ/ օգտագործել մշակութային արժեքները (պատմական, մշակութային և ճարտարապետական հուշարձանների դիտում, այցելություն թանգարաններ, ցուցահանդեսներ, թատրոններ),

գ/ սպորտով զբաղվելու հնարավորություն (հետիոտն, ջրային, դահուկային, հեծանվային, ավտո և մոտաճանապարհորդություններ, զբոսանք, լող, սպորտային խաղեր),

դ/ սիրողական զբաղմունքներ (ձկնորսություն, որս և այլն):

Գոյություն ունեն զբոսաշրջային ռեսուրսների **տարբեր դասակարգումներ**: Առաջին հերթին դրանք բաժանվում են երկու խոշոր խմբի. **անմիջական** և **անուղղակի**: Առաջին խմբի մեջ մտնում են առավելապես բնական և պատմա-մշակութային ռեսուրսները, որոնք օգտագործվում են զբոսաշրջիկների և հանգստացողների կողմից (օրինակ լանդշաֆտի գրավչությունը, տեղանքի առողջացող հնարավորությունները և այլն): Անուղղակի կամ սոցիալ-տնտեսական ռեսուրսներն օգտագործվում են զբոսաշրջային անմիջական ռեսուրսները յուրացնելու և օգտագործելու համար: Դրանք լինում են նյութական, տեխնիկական, ֆինանսական, աշխատանքային և այլն:

Ըստ գործառնական հատկանիշի դրանք լինում են **առողջարարական, ճանաչողական** և **սպորտային**: Այս առումով մեծ նշանակություն ունի տարածքի բնական-գեղագիտական արժեքը, որն ուժեղացնում կամ հակառակը նվազեցնում է գործառնական որակը: Տարածքի ճանաչողական հատկությունը պայմանավորված է բնական և սոցիալ-մշակութային օբյեկտներով (պատմության և մշակույթի հուշարձաններով, թանգարաններով, բնակչության ազգային առանձնահատկություններով և ավանդույթներով, բնության օբյեկտներով և այլն):

Զբոսաշրջային ռեսուրսների ողջ համալիրը բաժանում են երեք խմբի.

1) **բնական** (կլիման, ջրային ռեսուրսներ, հանքային աղբյուրներ և բուժիչ

ցելներ, ռելիեֆ, քարայրներ, բուսական և կենդանական աշխարհ, բնական հուշարձաններ, արգելանոցներ, գեղատեսիլ լանդշաֆտներ, բնության բացառիկ օբյեկտներ),

2) **պատմամշակութային** (թանգարաններ, ցուցահանդեսներ, թատրոններ, պատմական, ճարտարապետական և հնէաբանական հուշարձաններ, ազգագրական առանձնահատկություններ, ֆոլկլոր, կիրառական արվեստի կենտրոններ),

3) **սոցիալ-տնտեսական** (տարածքի տրանսպորտային մատչելիությունը և տրանսպորտային ցանցի զարգացման մակարդակը, տնտեսաաշխարհագրական դիրքը, տարածքի, տնտեսական զարգացման մակարդակը, բնակչության սպասարկման մակարդակը, աշխատանքային ռեսուրսները, բնակչության առանձնահատկությունները, ժամանակակից և հեռանկարային տարածքների կազմակերպումը:

Ջրոսաշրջային ռեսուրսները հաստատագրվում են **զրոսաշրջային ռեսուրսների** կադաստրում, որն իրենից ներկայացնում է դրանց (զրոսաշրջային ռեսուրսների) տնտեսական և սպառողական ընդհանրական գնահատումը: Այն պարտադիր պետք է ներկայացված լինի տարածաշրջանային և թեմատիկ ձևերով:

Գոյություն ունեն ռեկրեացիոն և զրոսաշրջային ռեսուրսների նաև այլ տարատեսակներ: Մասնավորապես, կարելի է առանձնացնել այնպիսի տեսակներ, ինչպիսին են բնական բուժիչ և զրոսաշրջային տեղեկատվական ռեսուրսները: **Բնական բուժիչ ռեսուրսները** նախատեսված են բնակչության հանգստի և բուժման համար և դասվում են հատուկ պահպանվող օբյեկտների և տարածքների շարքին, ունեն իրենց օգտագործման և պահպանման առանձնահատկությունները: **Ջրոսաշրջային տեղեկատվական ռեսուրսները** դրանք տեղեկատվություն են տարածքի, նրա պատմության, մշակույթի, բնության և մարդկանց մասին, որոնք ստանում են զրոսաշրջիկները ճանապարհորդության ընթացքում՝ դրան նախապատրաստվելիս կամ որոշակի ժամանակ անց:

Վերջին ժամանակներս տարածքը զրոսաշրջային նպատակով օգտագործելու խնդիրը ակտիվորեն ուսումնասիրվում է ճարտարապետների, աշխարհագետների, հոգեբանների և զրոսաշրջության մասնագետների կողմից: Որպես կարգ գնահատվում են տարածքի ռելիեֆը, կլիման, ջրավազանները և հումքերը, բուսականությունը, տրանսպորտային մատչելիությունը, զրոսաշրջային ենթակառուցվածքը:

Տարածքի զրոսաշրջային գնահատման մեթոդիկան պետք է ընդգրկի հանգստի տարածքային կազմակերպման հիմնական ասպեկտների փոխկապակցված ուսումնասիրումը: Այն նախատեսում է դրանց համալիրային վերլուծությունը և հենվում է համակարգային մեթոդաբանության վրա: Տարածքի զրոսաշրջային գնահատման խնդրի լուծման դրական հնարավորությունները և ռեկրեացիոն համալիրների տեղաբաշխման տեղերի ընտրությունը տալիս է բազմաչափ վիճակագրական ապարատը, մասնավորապես՝ գործոնային վերլուծության մեթոդները:

Գործոնների վերլուծության մեթոդով համալիրային գնահատման անցկացումը ենթադրում է փուլային գնահատման հետևյալ քայլերը.

I քայլ՝ գործոնների (կամ հատկանիշների) առանձնացում և խմբավորում,

որոնցով կատարվում է գնահատումը,

II քայլ՝ գործոնների մակարդակի և ինտենսիվության որոշում,

III քայլ՝ գնահատման չափորոշիչների և գնահատող սանդղակների մշակում,

IV քայլ՝ առանձին գործոնների համար բալային գնահատման իրականացում,

V քայլ՝ ամբողջ խումբ գործոնների համար համալիրային բալային գնահատման անցկացում,

VI քայլ՝ տարածքի միավորների ըստ կարևորության աստիճանի առանձնացում և կատեգորաների առանձնացում նշելով դրանց առաջնահերթությունները:

Գոյություն ունեցող մեթոդիկաներում զբոսաշրջային գնահատման է ենթակա լանդշաֆտը և նրա ֆրագմենտները: Ցանկացած տեղանք (լանդշաֆտ) հանգստի և զբոսաշրջության տեսակետից կարող է հրապուրել կամ վանել: Տարածքի այդ հատկանիշներն անվանում են ատտրակտիվ (հրապուրիչ) և ռեպելլենտային (վանող):

Ատտրակտիվությունը զբոսաշրջային ռեսուրսների, բնական և պատմամշակութային օբյեկտների, գլխավոր համակարգային հատկությունն է, վկայում է դրանց զբոսաշրջային արժեքի մասին:

Ռեկրեացիոն աշխարհագրության ոլորտի մասնագետները ձգտում են այս կամ այն կերպ բնութագրել լանդշաֆտի այնպիսի կողմերը, ինչպիսին է նրա գրավչությունը: Մի շարք մասնագետների գնահատմամբ լանդշաֆտի ռեկրեացիոն որակը որոշող առաջնային հատկանիշներ են համարվում **ռելիեֆի ձևերի հակադրությունը, անտառների տիպաբանական սպեկտրը և մոզայիկությունը** (խայտանկարչությունը), **ջրային օբյեկտների առկայությունը, սնկերի և հատապտուղների առկայությունը, տրանսպորտային մատչելիությունը**: Տարածքի ատտրակտիվությունն ապահովող հատկանիշների ամբողջությունը կարելի է բաժանել երեք խմբի. տոպոլոգիական, գործառության և էսթետիկական:

Առավել մեծ գրավչությամբ օժտված են այն տարածքները, որտեղ նույն տեղամասում զուգացկված են անտառը, լիճը, գետը, լեռները, մարգագետնային բացատները և այլն: Այսպիսի դեպքում առաջին պլան է մղվում լանդշաֆտի խճանկարային, կոմպոզիցիոն հատկանիշը: Դա համարվում է **տեղանքի տոպոլոգիական բնութագիրը**:

Հաշվի առնելով մարդու սպառողական, գործնական-կիրառական պահանջները, հրապուրիչ և գրավիչ կարող են լինել նաև սիրողական գործունեության համար պայմաններ ունեցող տարածքները (արմատապտուղներ և սունկ հավաքել, ձուկ որսալ, որսորդություն անել, այգեգործությամբ զբաղվել և այլն): **Դրանք տարածքի գործառության բնութագրիչներն են:**

Առավել դժվար է ձևակերպել տարածքի **էսթետիկական որակը**: Վերջինիս տակ պետք է հասկանալ տարածքի այնպիսի որակներ, որոնք ազդեցություն են թողնում զբոսաշրջիկի նյարդային համակարգի, հոգեբանազգացմունքային որակի վրա: Այսպիսի դեպքում որոշիչ են դառնում դրական զգացմունքներ առաջացնող գործոնները:

Ատտրակտիվ (գրավիչ) հատկանիշներից բացի տարածքները կարող են ունենալ **ռեպելլենտային** հատկություններ: Դրանց մեծ բաժինը կարող է տա-

րածքի զբոսաշրջային ներուժը իջեցնել մինչև զրո (0) (մարդու համար վտանգավոր կենդանիների և բույսերի առկայությունը, լեռներում քարաթափվածքների վտանգավորությունը, սելավների վտանգը, ձնահոսքերը և տարբեր տեսակի մոծակների առկայությունը, տարածքի ռադիոակտիվությունը և այլն):

Ամփոփելով կատարված վերլուծության արդյունքները կարող եք եզրակացնել, որ.

1/ Ցանկացած տարածքում զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ պայմանը նախ և առաջ զբոսաշրջային ռեսուրսների և զբոսաշրջային ենթակառուցվածքի առկայությունն է, որոնց ամբողջությունն ստեղծում է տվյալ տարածքի զբոսաշրջային ներուժը,

2/ տարածքի զբոսաշրջային ներուժի բաղադրիչներից առաջնային նշանակություն ունի բնատեկրացիոն ներուժը, որի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել բնական համալիրի այնպիսի հատկանիշներ, որոնք ամբողջական ձևով արտահայտում են այդ տարածքի առավել յուրահատուկ, մարդու սպառողական հատկանիշներ,

3/ տարածքի զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսներն ունեն առաջնային նշանակություն զբոսաշրջության կառավարման համար և որոշում են զբոսաշրջային բիզնեսի ձևավորումն այս կամ այն տարածաշրջանում,

4/ տարածքի զբոսաշրջային ռեսուրսներն հանդիսանում են զբոսաշրջային բիզնեսի զարգացման հիմքը, որոշում են տարածաշրջանի զբոսաշրջության զարգացման յուրահատկությունը և ծառայում են ելակետային հիմք զբոսաշրջային արտադրանքի ձևավորման համար:

Аксел Подосян, Хоссейн Киасари – Туристский потенциал и ресурсы территории: сущность, характеристика и оценка. – Основными предпосылками и условиями развития туризма на какой-либо территории являются туристские ресурсы и потенциал. Совокупность природных, историко-культурных и социально-экономических предпосылок, которые обуславливают осуществление туристской деятельности на данной территории.

В статье обсуждаются вопросы, касающиеся сущности и оценки компонентов туристских ресурсов и потенциала территории.

Aksel Potosyan, Hossein Kiasari – The tourism potential and resources of the territory: the essence, characterization and assessment. – In any area the main condition for the development of tourism are touristic resources and potential. Those are complex of natural, historical and cultural and socio-economic preconditions of the area, that provide the implementation of the tourism activity. In the article are discussed issues, concerning essence and assessment of the components of tourism resources, and the potential of the territory.

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱՆԻԶՄԸ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Հոդվածը կրում է հայեցակարգային բնույթ: Նրանում քննության են առնվում արդի հումանիզմի հրատապ հարցերը՝ երրորդ հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում: Հոդվածում մատնանշված են ինչպես ժամանակակից պայմաններում հումանիստական հետազոտությունների առավել կարևոր ուղղությունները, այնպես էլ առանձնացված են այն ամենատարբեր հիմնախնդիրները, որոնք ծառացած են մարդկային քաղաքակրթության առջև՝ նրա պատմության ներկա բարդ ու բեկումնային փուլում: Անդրադարձ է կատարված նաև ներկա աշխարհում ընթացող պրոցեսների ու դրանց զարգացման միտումների հաշվառմամբ նոր հումանիստական պարադիգմայի մշակման հարցերին:

Բանալի բաներ. հումանիզմ, համամարդկային գաղափարներ, արդիականության զլոբալ հիմնախնդիրներ, հումանիզմի հակոտնյաներ, սոցիալական վերափոխումներ, տեղեկատվական քաղաքակրթություն, հումանիստական պարադիգմա, պլանետար հումանիզմ, քաղաքակրթությունների երկխոսություն, ժողովուրդների համագործակցություն:

Հումանիզմը որպես Վերածնության դարաշրջանում ձևավորված աշխարհայացքային հիմնարար սկզբունք՝ անցել է զարգացման ու հարստացման տևական ու ինքնատիպ ուղի: Իր սկզբնավորման ժամանակներից ի վեր՝ այն հանդիսանում է ամեն մի առաջադիմական փիլիսոփայության ամենաբնորոշ հատկանիշը, նրա գլխավոր գործառույթը: “Փիլիսոփայության գործառույթների շարքում, - գրում է ակադեմիկոս Պ.Վ.Ալեքսենը, - փիլիսոփայության բոլոր մնացած հիմնահարցերի մեջ մարդու հիմնահարցի առաջնային նշանակությամբ համապատասխան, առաջին տեղում է նրա հումանիստական գործառույթը”¹:

Որպես փիլիսոփայության հանգուցային պրոբլեմ՝ հումանիզմը պատմական եվոլյուցիայի ընթացքում ոչ միայն չի կորցրել իր կենսունակությունը, այլև տեսական մտքի նվաճումներով ու հասարակական առաջընթացի կենդանի պրակտիկայով հարստացած, ավելի է խորացրել իր բովանդակությունը՝ մեր օրերում ձեռք բերելով արտակարգ կարևորություն: Դժվար է մատնացույց անել փիլիսոփայական մեկ ուրիշ հասկացություն, որն այնպես ճշգրիտ ու խոր բացահայտեր պատմական տարբեր դարաշրջանների բնորոշ հատկանիշները, նրանց էությունը, որոշեր այս կամ այն հասարակության առաջադիմականության, նրա սոցիալական հասունության աստիճանը:

Հումանիզմը դարեր շարունակ անգնահատելի դեր է խաղացել մարդկության սոցիալական ու հոգևոր առաջընթացի, քաղաքակրթության զարգացման

¹ См. у *Алексеев П.В., Панин А.В.* Философия, М., 2000, էջ 4:

գործում՝ ծառայելով որպես սնուցող աղբյուր: Դասական հումանիզմի գաղափարները, որոնք վառ կերպով դրսևորվեցին Վերածնության դարաշրջանի, լուսավորչականության, գերմանական դասական փիլիսոփայության մեջ և մարքսիզմի փիլիսոփայական ուսմունքում, իրենց դրոշմն են դրել անցյալ դարաշրջանի վրա: Այդ գաղափարների բարերար ազդեցությամբ է զարգացել վերջին մի քանի դարերի ոչ միայն եվրոպական, այլև համաշխարհային պատմությունը: Մի ամբողջ շարք նոր հասկացություններ ու սոցիալական արժեքներ (աշխարհիկ մտածողություն, բանականության պաշտամունք, անհատի իրավունքներ ու ազատություններ, սոցիալական առաջադիմության, լուսավորության ու գիտության դերի նոր ըմբռնում և այլն) մարմնավորվեցին իրական կյանքում, սոցիալ-քաղաքական պրակտիկայում ու մարդկանց համոզմունքներում՝ դառնալով հասարակական զարգացման գորեղ լծակ: Հումանիզմի հիմնարար գաղափարներից ու սկզբունքներից շատերն այդ ընթացքում ներթափանցեցին հասարակության սոցիալական ու հոգևոր կյանքի տարբեր ոլորտները, որոշակիորեն պայմանավորելով ոչ միայն մարդկության զարգացման ընթացքը, այլև ապագայի միտումները:

Սակայն դասական հումանիզմի երախտավորների երազանքը բանականության դարաշրջանի հաստատման մասին մնաց անկատար: XX դարի երկրորդ կեսից սկսած հումանիզմի գաղափարները սկսեցին հարցականի տակ դրվել ոչ միայն դասական հումանիստական ժառանգության մերժմամբ հանդես եկած հետմոդեռնիզմի փիլիսոփայության մեջ, այլև սոցիալական պրակտիկայի, մարդկության նորագույն պատմության բուն ընթացքով: Ակներև դարձավ, որ հետմոդեռնիստական քաղաքակրթության մի շարք երևույթներ ոչ միայն չեն համապատասխանում հումանիստական արժեքներին ու իդեալներին, այլև իրենց բնույթով ուղղակի հակահումանիստական են: Աշխարհը լի է սուր բախումներով, հակասություններով ու կոլիզիաներով, իր մի շարք կողմերով անարդար ու անբանական է նոր սոցիալական իրականությունը: Այդ ամենի հետևանքով որոշակի ճգնաժամ է ապրում նաև դասական հումանիզմը: Եվ հարց է դրվում՝ հրաժարվե՞լ, արդյոք, դասական հումանիստական ժառանգությունից, թե՛ հենվելով դասական հումանիզմի ավանդույթների, նրա նվաճումների վրա՝ անցում կատարել արդի աշխարհայացքային սկզբունքների, նոր հումանիստական պարադիգմայի:

Հումանիզմի պրոբլեմն աննախադեպ ակտուալություն է ձեռք բերում մեր օրերում՝ կապված արդի դարաշրջանում մարդկությանը նետված նոր մարտահրավերների ու սպառնալիքների հետ: Մարդկության անցած ուղին վկայում է, որ պատմական յուրաքանչյուր դարաշրջանում մարդկային հասարակությունը հայտնվում է իրեն սպառնացող այնպիսի վտանգների դեմ-հանդիման, որոնց գործողությունը նա պետք է անպայման չեզոքացնի՝ ապահովելու համար քաղաքակրթության հետագա առաջընթացը: Յուրահատուկ օրինաչափություն դարձած այս միտումն առանձնահատուկ սրությամբ է դրսևորվում հատկապես համաշխարհային պատմության ներկա փուլում, որն առանձնանում է նոր ժամանակներում մարդկությանը ներտված մարտահրավերների աննախադեպ մասշտաբներով ու վտանգավորությամբ: Մպառնալի չափեր են ընդունում հատկապես հումանիզմի այնպիսի հակոտնյաներ, ինչպիսիք են միջուկային տեխնոլոգիաների տարածումն ու տիեզերքի ռազմականացումը, զինված հակամարտությունների ծավալումը, բնապահպանական կոլիզիաները, գիտատեխնիկական առաջադիմության բացասական հետևանքների խորացումը, բնական պաշարների

աստիճանական սպառումը, Երկիր մոլորակի կենսական ռեսուրսների նվազումը, բնակչության արագ ու չվերահսկվող աճը, կենսամիջոցների թերարտադրությունը, առանձին երկրների ու տարածաշրջանների հետամնացությունն ու աղքատությունը, անգրագիտության բարձր մակարդակը և այլ նեգատիվ դրսևորումներ, որոնք շարունակում են մնալ մեր օրերի ուղեկիցը: Այդ վտանգները կրում են համապարփակ, գլոբալ բնույթ՝ սպառնալով համայն մարդկությանը, նրա գոյությանը: Ուստի և դրանց դեմ պայքարը ձեռք է բերում արտակարգ հրատապություն, դառնում բոլոր ազգերի ու ժողովուրդների ընդհանուր խնդիրը՝ պահանջելով ընդհանուր նպատակների շուրջ նրանց համախմբում, համայն մարդկության նյութական ու հոգևոր ներուժի միավորում:

Նոր, այսպես կոչված տեղեկատվական քաղաքակրթությունը, որը հավանում է փոխարինել հետինդուստրիալ հասարակությանը, բնորոշվում է ոչ միայն հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգի վերարտադրության սկզբունքորեն նոր տեխնոլոգիական եղանակով, այլև մարդու, տեխնիկայի և բնության փոխներգործության յուրահատուկ բնույթով: Սոցիալ-տնտեսական իմաստով շեշտը դնելով նոր, միջին դասակարգի վրա՝ տեղեկատվական քաղաքակրթությունը փորձում է ավարտված համարել մարդկության պատմության այն տևական ժամանակաշրջանը, որը բնորոշվում էր դասակարգերի գոյությամբ ու պայքարով: Հասարակական արտադրության սոցիալական վերակողմնորոշման և մարդու աշխատանքային գործունեության հումանիզացման միտումները, ծանրության կենտրոնի տեղափոխումը դեպի ինտելեկտուալ, հոգևոր ոլորտ՝ օբյեկտիվորեն նպաստում են հասարակական կյանքում հումանիզմի դերի ու նշանակության աննախադեպ աճին: Տեղեկատվական քաղաքակրթության զարգացումը պահանջում է մարդու, նրա արարող դերի ու ստեղծագործական ունակությունների մշտական կատարելագործում: Նոր պայմաններում մարդը դառնում է ոչ միայն հասարակության հիմնական սոցիալական չափումը, այլև նրա գլխավոր սոցիալական բովանդակությունը:

Սակայն չնայած դրան՝ ժամանակակից հասարակությունը, կարծես թե պատմական զարգացման տրամաբանությանը հակառակ, ցուցադրում է քաղաքական ու ռազմական բախումներ, բռնության զանազան ձևեր, սոցիալ-տնտեսական սուր հակասություններ, էթնիկական ու կրոնական անհանդուրժողականություն, այլևայլ նախապաշարմունքներ: Տպավորություն է ստեղծվում, որ արդի հասարակությունը հրաժարվում է հումանիստական սկզբունքներից ու արժեքներից, իսկ պրոֆեսիոնալ գաղափարախոսները հաճախ անտեսում են այդ պրոբլեմի սրությունը:

Նոր հազարամյակում մարդկությանը վիճակված գլոբալ ճգնաժամի հաղթահարումը պահանջում է մշակել ու հասարակական գիտակցության մեջ սերմանել նոր, դարաշրջանի հասունացած խնդիրներին ու ներքին պահանջմունքներին համահունչ գաղափարներ, աշխարհընկալման ու կենսական արժեքների գնահատման նոր եղանակ՝ միտված արդի հասարակության գաղափարաքաղաքական վերափոխմանը, մարդկանց ու ժողովուրդների գործունեության ռացիոնալ սկզբունքների ձևավորմանը, ընդհանուր նպատակների ու համամարդկային արժեքների շուրջ երկրների ու ժողովուրդների համախմբմանը, նրանց փոխհարաբերությունների ներդաշնակեցմանը, խաղաղ ու անկոնֆլիկտ աշխարհի ստեղծմանը: Մարդկության զարգացման նման հեռանկարը, հավանաբար, ի նկատի ունի մեր ժամանակների գերմանական հայտնի փիլիսոփա ու հասարա-

կազեո Յուրգեն Հաբերմասը, երբ նշում է, որ եթե XIX-XX դարերում մարդն իրեն դրսևորել է որպես անհաշտ, առճակատող էակ, ապա նոր դարում նա պետք է դառնա համաձայնող, կոմպրոմիսի ձգտող:

Այն մնայուն ու անանց արժեքների, վեհ ու հիմնարար գաղափարների շարքում, որոնց շուրջ կարող է համախմբվել մարդկությունը, իրենց նշանակալիությամբ ու մոբիլիզացնող ներուժով բացառիկ տեղ է պատկանում հումանիզմի գաղափարներին, որոնք ներթափանցված են խոր լավատեսությամբ ու կենսահաստատ մեծ ուժով և առավել համահունչ ու ներդաշնակ են քաղաքակրթության զարգացման ներկա փուլի կենսական պահանջմունքներին, նոր դարաշրջանի ոգուն:

Այստեղից էլ՝ մեր օրերում հումանիզմի պրոբլեմի տարբեր ասպեկտների հետազոտման, հումանիզմի սկզբունքների ու գաղափարների տարածման, օգիստական պրակտիկայում՝ պետությունների, ժողովուրդների և մարդկանց փոխհարաբերություններում դրանց ներդրման հույժ կարևորությունը: Հումանիստական պրոբլեմատիկայի արտակարգ հրատապությունը պայմանավորված է, ամենից առաջ, այն բարդ աշխարհայացքային տեղաշարժերի վերլուծության ու իմաստավորման անհրաժեշտությամբ, որոնք կապված են մեր օրերում մարդկության առջև ծառացած գլոբալ հիմնախնդիրների, սոցիալ-տնտեսական ու բնապահպանական ճգնաժամի, ինչպես նաև մեր աչքերի առջև տեղի ունեցող և գնալով ավելի խորացող տեղեկատվական հեղափոխության հետ:

Հումանիզմի աշխարհայացքային ասպեկտների հետազոտումը մեր օրերում ակտուալ է նաև մեկ այլ առումով: Կյանքի տարբեր ասպարեզներում ընթացող հասարակական վերափոխումները, զուրկ լինելով սոցիալական ուղղվածությունից, շատ դեպքերում հանգեցնում են անցանկալի երևույթների, սոցիալական կապերի ու հարաբերությունների դեհումանիզացիայի, սոցիալական անարդարության ուժեղացման, ճգնաժամային երևույթների սրման: Հարցականի տակ են դրվում ու մերժվում դարերի միջով անցած, իրենց կենսունակությունը հաստատած և ամեն մի քաղաքակիրթ ժողովրդի հոգևոր նկարագրի անկապտելի մասը հանդիսացող բարոյական արժեքներն ու սկզբունքները: Հասարակության մեջ նկատվում է հաշտվողականություն դեպի բռնությունը, հանդուժողականություն դեպի հանցավորությունը: Տիրապետող է դառնում արժեքային վակուումը և որպես հետևանք՝ տեղի է ունենում մարդկանց աշխարհայացքի ձևափախույթ, իռացիոնալիզմի ու միստիկայի աճ, մարդկանց կենսական կողմնորոշման նահանջ ռացիոնալիզմի դիրքերից: Ուստի արդի անցումային հասարակության պայմաններում հումանիստական արժեքների, աշխարհայացքային ճիշտ կողմնորոշիչների հաստատման, պատմական նոր իրադրությունում հումանիզմի գաղափարների վերաիմաստավորման, հասարակական ու անհատական գիտակցության մեջ դրանց ներդրման, ճգնաժամային սոցիալական հարաբերություններից բռնության և դաժանության դուրսմղման, սոցիալական իրականության մարդկայնացման հարցերը դառնում են ոչ միայն բարեփոխումների իրականացումը ռացիոնալ հուն մղելու անհրաժեշտ պայման, այլև յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության ապահովման հրամայական:

Այդ սուր և օրախնդիր հարցերը քննական վերլուծության և գիտական իմաստավորման կարիք են զգում: Անհրաժեշտ է ոչ միայն պաշտպանել հումանիզմի՝ փիլիսոփայական այդ կարևորագույն կատեգորիայի իրավունքները, այլև պատմական նոր պայմաններում բացահայտել նրա ռացիոնալ բովանդակություն-

նը, հումանիզմի գաղափարների վեհությունն ու կենսարար բացառիկ ուժը: Մանավանդ, որ այդ գաղափարներն ընդունակ են ոչ միայն լուծում տալու արդիականության հրատապ հիմնահարցերին, այլև ուղղված են գալիքին և նախապատրաստում են այն:

Առաջին պլան է մղվում ժամանակակից դարաշրջանի հիմնախնդիրների համատեքստում արդի հումանիզմի էության ու առանձնահատկությունների, նոր հազարամյակում նրա բացառիկ դերի բացահայտումը, նրա ստեղծարար պոտենցիալի ու միավորիչ ուժի, մշակույթների ու կրոնների, Արևելքի ու Արևմուտքի երկխոսության մեջ նրա տեղի իմաստավորումը:

Չափազանց կարևոր է այն դրույթի հաստատումը, որ համամարդկային գաղափարները հենց հումանիզմի գաղափարներն են, որոնք ընկած են բոլոր քաղաքակրթությունների ու մշակույթների, կրոնների ու կոնֆեսիաների, արևելյան ու արևմտյան աշխարհընկալումների հիմքում և նոր հազարամյակի հիմնախնդիրներին դեմ-հանդիման կարող են դառնալ բոլոր երկրներին ու ժողովուրդներին, համայն մարդկությանը միավորող հուսալի կամուրջ:

Ստեղծված պայմաններում հումանիստ փիլիսոփաների առաջնահերթ խնդիրներն են՝

- անդրադառնալ դասական հումանիզմի պատմական զարգացման հիմնական փուլերի առանձնահատկություններին ու բնորոշ գծերին, հետամուտ լինել դրանց ներքին անհրաժեշտ կապերին, ինչպես նաև դրանց առաջընթաց շարժման ընդհանուր օրինաչափություններին ու զարգացման միտումներին.

- ուրվագծել արդի հումանիստական պրոբլեմատիկայի շրջանակները, նորովի իմաստավորել հումանիստական պրոբլեմատիկան, բացահայտել նրա երանգները՝ կապված արդի աշխարհում մարդու տեղի և բուն “մարդկայինի” էության մասին պատկերացումների փոփոխման հետ.

- վերլուծել հումանիզմի թե՛ աշխարհայացքային, տեսական-փիլիսոփայական և ընդհանուր սոցիոլոգիական ասպեկտները, թե՛ նրա էթիկական իմաստը.

- հետազոտել արդի հումանիզմի տեսության առավել կարևոր ու հանգուցային հարցերը, հումանիստական աշխարհայացքի գիտական-փիլիսոփայական հիմքերը.

- քննական վերլուծության ենթարկել արդի հումանիզմի առավել տարածված տեսություններն ու ուղղությունները.

- հետամուտ լինել նորագույն շրջանի համաշխարհային հումանիստական շարժման հարցերին, նրա զարգացման գլխավոր փուլերին ու միտումներին.

- քննական վերլուծության ենթարկել նորագույն շրջանի համաշխարհային հումանիստական շարժման ծրագրային փաստաթղթերը՝ “Հումանիստական մանիֆեստ - I”-ը (1933), “Հումանիստական մանիֆեստ - II”-ը (1973), “Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիան” (1980) և հատկապես արդի համաշխարհային հումանիստական շարժման առավել նշանավոր ծրագրային փաստաթուղթը՝ “Հումանիստական մանիֆեստ 2000: Նոր պլանետար հումանիզմի կոչը” (1999).

- քննության առնել արդի դարաշրջանում տարբեր մշակույթների, կրոնների ու կոնֆեսիաների, Արևելքի ու Արևմուտքի փոխհարաբերության հումանիստական ասպեկտները. հետազոտության առարկա դարձնել ազգային (էթնիկական) և կրոնական (կոնֆեսիոնալ) գիտակցության փոխհարաբերության հարցը՝ աչքաթող չանելով նաև դրա պատմական ասպեկտը.

- հետազոտել անհատի՝ որպես բազային հումանիստական արժեքի հար-

ցը, քննության առնել մարդու պրոբլեմը, “մարդկային կապիտալը”, քննական վերլուծության ենթարկել եղած տեսակետները, ուրվագծել մարդու նոր ըմբռնումը.

- քննադատական դիրքերից անդրադառնալ գլոբալացման դարաշրջանին բնորոշ սոցիալական կյանքի իրողությունների, հակահումանիզմի տարբեր դրսևորումների, հումանիզմի այնպիսի հակոտնյանների վերլուծությանը, ինչպիսիք են էթնիկական ու կրոնական կոնֆլիկտները, բնապահպանական ճգնաժամը, ռազմական ու քաղաքական դիմակայությունը, տնտեսության ռազմականացումը, սովն ու թերսնումը, հասարակության սոցիալական անհավասարության խորացումն ու բևեռացումը, գործազրկությունը, աղքատությունը, անգրագիտությունը և այլն, խորամուխ լինել դրանց պատճառների ու պայմանների մեջ, մատնանշել դրանց հաղթահարման ուղիներն ու միջոցները.

- համակողմանի վերլուծության ենթարկել օտարման պրոբլեմը.

- քննության առնել միջազգային ահաբեկչության հարցը.

- անդրադառնալ համալսարաններում փիլիսոփայության դասավանդման ակտուալացման և ուսանողների հումանիստական աշխարհայացքի ձևավորման մեջ նրա դերի բարձրացման հարցին և այլն:

Անհրաժեշտ է պատմական նյութի և արդի սոցիալական իրականության վերլուծության հիման վրա ցույց տալ, որ հումանիզմը, որպես պատմականորեն զարգացող երևույթ, հասարակական առաջընթացի յուրաքանչյուր փուլում պահպանելով ու հարստացնելով իր բովանդակությունը, միաժամանակ ձեռք է բերում նոր, միայն տվյալ դարաշրջանին հատուկ հատկանիշներ: Այս համատեքստում չափազանց կարևոր է համակողմանիորեն հիմնավորել այն գաղափարը, որ սոցիալական սուր հակասություններով ու կոլիզիաներով լի արդի աշխարհում հումանիզմն այլընտրանք չունի: Ո՛չ կրոնական ֆունդամենտալիզմն ու ազգային էգոիզմը, ո՛չ դեկադենտական հետմոդեռնիզմը ընդունակ չեն առաջադրելու հասարակական կյանքի, սոցիալական իրականության բարելավման իրական ուղիներ: Միակ հուսալի ճանապարհը պատմական նոր իրողություններին, մեր դարաշրջանի ներքին պահանջմունքներին համահունչ հումանիստական աշխարհայացքի մշակումն է, հումանիզմի գաղափարների տարածումը, հասարակական բոլոր հարաբերություններում հումանիզմի սկզբունքների ու հումանիստական նորմերի հետևողական արմատավորումը:

Կարևոր է նկատի առնել նաև այն, որ հումանիզմը մեր օրերում ավելի ու ավելի է ընդլայնում իր մասշտաբները, դուրս գալիս համամոլորակային մակարդակ: Եվ դա տեղի է ունենում ամեննին ոչ պատահաբար, այլ պայմանավորված է մի կողմից՝ հումանիզմի գաղափարների համամարդկային բնույթով, մյուս կողմից՝ արդի աշխարհում հումանիստական արժեքների լայն տարածմամբ՝ կապված ժողովրդավարության սահմանների ընդլայնման, մարդկանց ու ազգերի միջև քաղաքակիրթ տրանսմշակութային հարաբերությունների ակտիվացման հետ:

Հատուկ իմաստ է ձեռք բերում հումանիզմի բնորոշ գծերի, հատկապես նրա այնպիսի հիմնարար հատկանիշների ուսումնասիրությունը, ինչպիսիք են գիտականությունն ու ռացիոնալությունը, որոնք միաժամանակ հանդիսանում են արդի հումանիզմի ուժի ու կենսունակության աղբյուրը: Որպես “մտածող աշխարհայացք”² հումանիզմն իր այդ հատկության շնորհիվ ընդունակ է արթնաց-

² Ալբերտ Շվեյցերի արտահայտությունն է (տե՛ս *III Եթեր* А. Кольтура и этика, М., „Прогресс“, 1973, стр. 82):

ներևո և զարգացնելու մարդու հոգևոր ընդունակությունները: Եվ ընդհանրապես՝ “Յանկացած իրական առաջադիմություն աշխարհում կանխորոշված է վերջին հաշվով ռացիոնալիզմով”³:

Ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում արդի հումանիզմի ձևերի գիտական դասակարգումը և նրա հիմնական տարատեսակների քննական վերլուծությունը, որոնք ավելի ու ավելի են հանգեցնում այն եզրակացության, որ այդ ուսմունքները, իրենց կոնցեպտուալ յուրահատկություններով հանդերձ, հանդիսանալով հումանիստական ընդհանուր պրոբլեմատիկայի, արդի սոցիալական իրականության մեջ մարդու վիճակի արձագանք՝ պարունակում են այնպիսի հարցադրումներ, որոնք տարբեր տեսակություններից լույս են սփռում հումանիզմի պրոբլեմի վրա և կարող են այս կան այն չափով ծառայել հումանիստական պրոբլեմատիկայի ճշգրտմանն ու հստակեցմանը, նրա բովանդակության հարստացմանն ու կոնկրետացմանը, հումանիստական նոր ուսմունքի մշակմանը: Մանավանդ, որ արդի հումանիզմի տարատեսակները, հոսանքներն ու ուղղությունները աշխարհայացքային, տեսական-գաղափարական, կազմակերպական և այլ տարբերություններով, իսկ երբեմն էլ՝ ուղղակի հակադրությամբ հանդերձ՝ մի շարք դեպքերում դրսևորում են նաև փոխադարձ շփումների ու համագործակցության հաստատման, առկա գլոբալ խնդիրները համատեղ ուժերով լուծելու ձգտում:

Արդի աշխարհում արտակարգ հրատապություն են ձեռք բերում ազգերի ու ժողովուրդների հոգևոր շփման ու համագործակցության հաստատման հարցերը: Ազգային, մշակութային մեկուսացման ձգտումը, ուրիշ մշակույթների նկատմամբ նիհիլիստական, մերժողական վերաբերմունքը, առավել ևս՝ անհանդուրժողականությունը հակասում են նոր ժամանակների ոգուն, մշակույթների զարգացման իմանենտ օրենքներին ու տրամաբանությանը: Ոչ մի մշակույթ իր ինքնատիպությամբ ու արժեքավորությամբ հանդերձ՝ ինքնաբավ ու կատարյալ չէ և իր նեղ սահմաններից դուրս գալու, մյուս մշակույթների հետ շփման ներքին պահանջ է զգում: Մյուս մշակույթների հետ ակտիվ շփումն ու համագործակցությունն էլ հենց դառնում են կարևոր խթան՝ բացահայտելու այն ստեղծագործական ներուժը, որ պարունակում է տվյալ մշակույթը:

Նոր ժամանակների հրամայականներին, մարդկությանն սպառնացող վտանգներին դեմ-հանդիման՝ անհրաժեշտ է գործի դնել հումանիզմի գաղափարների մոբիլիզացնող ու կոնսոլիդացնող ներուժը, ըստ ամենայնի նպաստել վարքագծի հումանիստական սկզբունքների ու նորմերի ձևավորմանը, մարդկանց ու ժողովուրդների փոխհարաբերություններում դրանց արմատավորմանը այն հաշվով, որ թույլ չտրվի հասարակական հարաբերությունների ապամարդկայնացում, հումանիզմի սկզբունքների ու պահանջների անտեսում:

Բռնությունն ու կոպիտ ուժը տարանջատում ու խորթացնում են մարդկանց ու ազգերին՝ նրանց դնելով համընդհանուրի առճակատման եզրին: Պատերազմներն ու ռազմական գործողությունները չեն կարող և չպետք է դառնան աշխարհում առկա խնդիրների լուծման միջոց, ուստի և դրանք պետք է փոխարինվեն քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, հոգևոր և այլ ներգործության միջոցներով, որոնք կծառայեն ոչ թե ժողովուրդների օտարմանը, այլ մերձեցմանը: Դա նշանակում է, որ մարդկության ապագան պետք է փնտրել ոչ թե պառակտման ու դիմակայման ուղիներում, այլ տարբեր քաղաքակրթությունների ու

³ Տե՛ս նույն տեղում, էջ 84:

մշակույթների, կրոնների ու դավանանքների, Արևելքի ու Արևմուտքի երկխոսության, փոխըմբռնման ու համագործակցության մեջ: Միայն մարդկանց ու ժողովուրդների միջև համագործակցության հաստատմամբ, բարեկամության ու համերաշխության միասնական ոգով ու համատեղ ջանքերով է հնարավոր դիմագրավել մեր ժամանակներում մարդկությանն սպառնացող մարտահրավերներին, հասնել առկա հիմնախնդիրների լուծմանը, ներկա հազարամյակում մարդկային քաղաքակրթության աննախընթաց վերելքի ապահովմանը, հակամարտություններից ու բախումներից ազատ, խաղաղ ու ներդաշնակ աշխարհի ստեղծմանը: Դա մեծապես կնպաստի նաև տարբեր ժողովուրդների, հատկապես անմիջական հարևանությամբ, պատմական հանգամանքների բերումով իրար կողք-կողքի ապրող ազգերի միջև առկա կոնֆլիկտների ու անցյալից եկող թնջուկների ու անհամաձայնությունների փոխզիջումային կարգավորմանը, ազգային էգոիզմի, օտարման, թշնամանքի ու առճակատման աստիճանական հաղթահարմանը, անցյալի իրողությունների ու պատմական արդարության հիմքի վրա փոխշահավետ շփումների ու բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը:

Պետությունների, մարդկանց ու ժողովուրդների փոխհարաբերություններում հումանիստական սկզբունքների ու նորմերի հետևողական հաստատմամբ հումանիզմի գաղափարները ձեռք կբերեն կենսական միս ու արյուն, կդառնան պատմական զարգացման ներկա փուլում մարդկանց ու ազգերին միավորող մեծ ու ստեղծարար ուժ, հուսալի պատվար՝ ընդդեմ մարդկության միասնությունը ջլատող գործոնների, նոր ժամանակների սպառնալիքների ու մարտահրավերների, գալիք ժամանակների անակնկալների: Դրանք կծառայեն բանականության ու արդարության սկզբունքների վրա խարսխված և ապագային միտված նոր հասարակության կերտմանը, մարդու գոյության և ստեղծագործության համար այնպիսի պայմանների ստեղծմանը, երբ մարդկային ուժի զարգացումը հանդես է գալիս որպես գերիշխող սկզբունք, դառնում հասարակական առաջադիմության գերագույն նպատակը:

Григор Асатрян – Гуманизм в контексте проблем нового тысячелетия. – Статья носит концептуальный характер. В ней рассматриваются актуальные вопросы современного гуманизма в контексте проблем третьего тысячелетия. В статье указываются и выделяются как наиболее важные направления гуманистических исследований в современных условиях, так и острейшие проблемы, стоящие перед человеческой цивилизацией на нынешнем сложном и переломном этапе ее развития. В ней также затрагиваются вопросы разработки новой гуманистической парадигмы с учетом происходящих в современном мире процессов и тенденций их развития.

Grigor Asatryan – Humanism in the context of the problems of the new millennium. – This is a conceptual paper, dwelling on the actual issues of contemporary humanism in the context of the problems offered by the third millennium. It highlights both the key trends of humanistic studies under the current conditions, and the critical problems facing the human civilization in today's complicated and transformative phase of its development. It also addresses the issues of developing a new humanistic paradigm with a consideration of the evolutionary processes and tendencies in the modern world.

ԸՆՏԱՆԻՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՍՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԽԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԵՊՀ ԻՄ Տուրիզմի կառավարման և
մշակութաբանության ամբիոնի ասիստենտ

Առաջին հասարակական միավորը, որի ներսում մենք սովորում ենք մեկնաբանել մեր սեփական կենսափորձը, ընտանիքն է, որը վճռական դեր է խաղում մեր սոցիալականացման գործընթացում: Շեշտելով այս հանգամանքի կարևորությունը՝ հոդվածում վերլուծվել է ընտանիքի ինստիտուտի առանձնահատկությունները փոխակերպվող հասարակությունում: Ընտանիքի ավանդական պատկերացումները փոխարինվել են ժամանակակից պատկերացումներով՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով: Հոդվածում վերլուծվել է ընտանիքի ֆունկցիաները, ընտանիքում սոցիալական դերերի շրջանակների փոփոխման պատճառները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հասարակության մեջ գենդերային հավասարության հիմնախնդրին: Ընտանիքի ուսումնասիրման ընթացքում ուշադրություն է դարձվել խնդրի արժեքային մոտեցմանը, ներընտանեկան և արտաընտանեկան արժեքների միջև առկա հակասություններին:

Բանալի բառեր. ընտանիք, ընտանիքի արժեքային կոդնորոշումներ, ընտանիքի արժեքային կոդմորոշման փոխակերպման գործոններ, սոցիալական դեր:

Ասացեք ինձ, ինչպիսին է ձեր ընտանիքը, և ես կասեմ, թե ինչպիսին է ձեր ողջ հասարակությունը:
Ֆրեդերիկ Լե Պլեյ

Դժվար է չհամաձայնել արդիական հնչեղություն ունեցող այս մտքի հետ, միտք, որն արդիական է ցանկացած ժամանակաշրջանում և հատկապես, անցումային ժամանակաշրջաններում, երբ ընտանիքի ավանդաբար ընկալվող պատկերացումները փոխվում են, երբ փոխվում են ընտանիքում հոր և մոր սոցիալական դերերի շրջանակները և երբ ավելի, քան երբևէ, կարևորվում է հասարակության մեջ գենդերային հիմնահարցը: Արդի ժամանակաշրջանին բնորոշ արագընթաց փոփոխություններն անդրադառնում են հասարակության բոլոր շերտերի վրա և այդ համատեքստում ժամանակակից ընտանիքը հայտնվում է ճգնաժամային վիճակում՝ դրան բնորոշ համապատասխան դրսևորումներով.

ա/ամուսնալուծությունների բարձր տոկոս,

բ/ընտանեկան ավանդական հարաբերությունների փոփոխություն,

գ/նոր տիպի ընտանիքի որոնումներ,

դ/«սեռական հեղափոխության» ազդեցությունը ընտանեկան հարաբերությունների, ընտանիքների ստեղծման ընթացքի և ընտանիքի այլ կողմերի վրա,

ե/ընտանիքի գլխավորի, այդ փոքր խմբի լիդերի պրոբլեմի այժմեական դառնալը և այլն¹:

¹ Ազգային հոգեբանություն և ընտանիք, Երևան, 1991թ., էջ 3:

Առաջին հասարակական միավորը, որի ներսում մենք սովորում ենք մեկնաբանել մեր սեփական կենսափորձը, ընտանիքն է, որը վճռական դեր է խաղում մեր սոցիալականացման մեջ: Այս առումով ընտանիքի ուսումնասիրության հարցում ուրույն տեղ ունեն փիլիսոփայությունը և սոցիոլոգիան: Փիլիսոփայությունն ընտանիքն ուսումնասիրում է հասարակության ողջ կառուցվածքի և սոցիալական զարգացման ընդհանուր միտումների ասպեկտով, իսկ սոցիոլոգիան՝ ընտանիքն ուսումնասիրում է որպես սոցիալական ինստիտուտին ներհատուկ գծեր ունեցող սոցիալական համակարգ: Ամերիկացի սոցիոլոգ Չ.Քուլիին ընտանիքը դիտարկում էր որպես «առաջնային խումբ», որտեղ ընթանում է մարդու առաջնային գործունեությունը՝ անհրաժեշտաբար ենթադրելով անմիջական հաղորդակցում և շփում: Որպես սոցիալական ինստիտուտ ընտանիքը բնութագրվում է սոցիալական նորմերի, սանկցիաների և վարքաձևների համակարգով, որը կարգավորում է ամուսինների, ծնողների, երեխաների և այլ ազգականների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները:

Պոզիտիվիզմի հիմնադիր Օգյուստ Կոնտը հասարակության սոցիալական կառուցվածքում տարբերակում էր երեք հիմնական ինստիտուտ՝ ընտանիքը, պետությունը և կրոնը, որոնք սոցիալական տարբեր ֆունկցիաներ և դերեր են կատարում: Ընտանեկան հարաբերությունները նա բնութագրում է որպես աստղակցիայի /գրավչության/ և փոխադարձ համակրանքի վրա հիմնված բարոյահուզական միություն: Ընտանիքի վերաբերյալ սոցիալ-հոգեբանական հետազոտություններն ապացուցում են, որ սոցիալական ոչ մի այլ խումբ չի կարող իրագործել ֆունկցիաների այն համալիրը, որն իրագործվում է ընտանիքի կողմից և ընտանիքի միջոցով: Ընտանիքում է կատարվում սերնդի վերարտադրությունը՝ որտեղ կարևորվում է գործընթացի ոչ միայն քանակական, այլ նաև որակական կողմը: Սոցիալականացման միջոցով նոր սերնդին է փոխանցվում բարոյական, արժեքային նորմերը, որոնք, սակայն, ընկալվում են արդեն յուրովի՝ կախված հասարակական-պատմական զարգացման յուրահատկություններից: Մասնավորապես, փոխակերպվող հասարակություններում, ուր որոշակի առումով փոխակերպվում են արժեքները, փոխվում են նաև արժեքային համակարգերը և ավագ սերնդի համար մեծագույն արժեք համարվող բարոյական նորմերը, կրտսեր սերնդի ներկայացուցիչների համար արժեքային համակարգում իրենց տեղը զիջում են այլ՝ վերջիններիս համար առավել կարևոր թվացող արժեքների:

Ընդհանրապես, ընտանիքի սահմանման հարցում կան որոշակի պրոբլեմներ: Խնդիրը կայանում է նրանում, որ մի դեպքում ընտանիք ասելով հասկանում ենք համատեղ ապրող, աջակցությամբ կամ խնամփությամբ ու ընդհանուր բյուջեով կապված մարդկանց ամբողջությունը: Երկրորդ դեպքում ընտանիք է համարվում այն խումբը, որի միջուկը ամուսնական սերտ կապն է: Ըստ ընտանեկան խմբի մեջ մտնող ամուսնական զույգերի ու սերունդների թվի, այն կարող է լինել նուկլեար /բջջային/ բնույթի /ամուսնական մեկ զույգ՝ երեխաների հետ/ կամ «բազմասերունդ», «չբաժանված», «ընդլայնված»²: Բնականաբար, վերոնշյալ ընտանիքներում իրականացվող ֆուկցիաներն ունեն իրենց առանձնահատկությունները: Հիմնական ֆունկցիաներից մեկը վերարտադրման ֆունկցիան է, որի հիմքում ընկած է վերարտադրության պահանջմունքը, ընտանեկան արժեքների ու ավանդույթների ժառանգման, տոհմի հաջորդականության պահպանման պահանջմունքը, իսկ արդեն առանձին անհատների մակարդակում կարելի է ասել,

² *Խարչև Ա.Զ., Մացկովսկի Մ.Ս.*, Ժամանակակից ընտանիք և նրա պրոբլեմները, Երևան, 1982թ., էջ 29:

որ դրա հիմքում ընկած է սիրո, հայրության, մայրության պահանջմունքները: Ընդ որում ընտանիքում կատարվում է արժեքների վերարտադրման գործընթացը, որը որոշակիորեն պայմանավորված է անհատի՝ միայն իրեն բնորոշ առանձնահատկություններով: Ինչպես նշում է Գ.Սողոմոնյանը «միևնույն հասարակության պայմաններում ապրող և գործող մարդիկ հասարակական հարաբերությունների ու արժեքների կրման ու վերարտադրության ընթացքում տարբեր դեր են կատարում»³: Մարդն ունի ներքին բարդ սուբյեկտիվ աշխարհ՝ արտահայտման իր յուրահատկություններով: Ընտանիքի համար ոչ պակաս կարևոր ֆունկցիաներից մեկը տնտեսական ֆունկցիան է, որը բաժանվում է երկու ենթաֆունկցիաների՝ արտադրողական /տնային տնտեսություն, օժանդակ տնտեսություն, ընտանեկան բիզնես/ և սպառողական /ստեղծվածի նյութական և հոգևոր սպառում, ռեկրեացիա/: Ներկայիս տնտեսական հարաբերություններն իրենց ազդեցությունն են թողել նաև ընտանիքի տնտեսական կյանքի վրա. մասնավորապես, որոշ չափով խաթարվել է աշխատանքի բաժանման ընդունված համակարգը: Նախկինում ընդունված էր երեխաներին վերագրել միայն նյութական բարիքների սպառողի դերը: Այժմ շատ ընտանիքներում ընտանեկան բյուջեն ստեղծողներից մեկը երեխան է /դեռահասը/: Սոցիալ-տնտեսական ծանր պայմանները ծնել են այնպիսի ցավալի երևույթներ, ինչպիսիք են երեխաների մուրացկանությունը, թափառաշրջիկությունը: Նմանատիպ երևույթների արդյունքում հիմնականում երեխաները դուրս են մնում հանրակրթությունից: Եվ այստեղ կարևորվում է ընտանիքի հաջորդ՝ ոչ պակաս կարևոր դաստիարակության ֆունկցիան: Այդ ֆունկցիան յուրաքանչյուր ընտանիք իրականացնում է յուրովի՝ կախված սոցիալական և սոցիալ-հոգեբանական վիճակից, գաղափարա-բարոյական հասունությունից և մանկավարժական գրագիտությունից: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակության նախափուլների կառուցումը, որից հետագայում ձևավորվում և ամրապնդվում են վարքի նորմերը: Ընտանիքում դաստիարակության գործընթացի վրա էապես ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ընտանիքի կառուցվածքը, նրա կազմը, ծնողների բարոյական կերպարը, կրթության մակարդակը, ընտանիքի կենսագործունեության նյութական պայմանները, փոխհարաբերությունները ընտանիքում: Ընտանիքի և ամուսնության սոցիոլոգիայի բնագավառում կատարված հետազոտությունները ընտանիքը դիտարկելով որպես սոցիալական ինստիտուտ, կարևորում էին սոցիալական և հոգեբանական գործոնները, որոնք նպաստում են ընտանեկան կյանքի կազմակերպմանը: Ուշադրություն էր դարձվում ամուսնության կայունության խնդրին, ընտանիքի վերարտադրողական ֆունկցիային, կանանց պրոֆեսիոնալ և հասարակական գործունեությանը և ընտանիքում նրանց ունեցած դիրքին:

Ներկայումս լայն հնչեղություն է ստացել գենդերային հավասարության և արդարության հիմնախնդիրը: Գենդերային անհավասարությունը հասարակական բարիքների և սոցիալական պատասխանատվության անհամամասնական բաշխումն է կանանց և տղամարդկանց միջև: Գենդերային անհավասարությունը ներառում է սոցիոմշակութային բաղադրիչ, որը հասարակական ինստիտուտների գործունեության մեջ դրսևորվում է որպես գենդերային խտրականություն: Հասարակական կյանքում կատարված և կատարվող փոփոխությունները հանգեցրել են հասարակության մեջ ավանդական սեռային դերերի, առաջին հերթին՝

³ **Սողոմոնյան Գ.**, Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Երևան, 2005թ., էջ 64:

կնոջ կարգավիճակի ձևափոխմանը, որը, բնականաբար, իր ազդեցությունն է ունեցել տղամարդու սոցիալական կարգավիճակի վրա: Այսինքն՝ գենդերային հիմնախնդիրները վերաբերում են ոչ միայն կանանց, այլ նաև տղամարդկանց: Սակայն, այդ հիմնախնդիրներն առավել ակնհայտ են կանանց դեպքում, որոնք այսօր դարձել են հասարակության առավել խոցելի խմբերից մեկը: Անցումային՝ հատկապես հայ հասարակությունում տեղի ունեցավ կանանց սոցիալական, քաղաքական, տնտեսական կարգավիճակի կտրուկ անկում: Գործազրկությունը, ծանր սոցիալ-տնտեսական պայմաններն առաջին հերթին անդրադարձան կանանց վիճակի վրա: Տղամարդկանց գերակայությունը հասարակական կյանքի կարևոր ոլորտներում, մասնավորապես՝ վարչական կառավարման ցանկացած մակարդակում, ինչպես համարվում էր, այդպես էլ համարվում է ինքնին ենթադրվող, այսինքն՝ բնական: Դա որոշակի առումով հանգեցնում է կանանց նկատմամբ խտրականության: Բոլոր դեպքերում լավ վարձատրվող աշխատատեղերը զբաղեցնում են տղամարդիկ: Եվ աշխատավարձերի միջև եղած այդ տարբերությունը ամրապնդում է ընտանիքում ավանդական աշխատանքի բաժանումը. նա, ով քիչ է վաստակում, պետք է դա փոխհատուցի տնային աշխատանքի ավելի մեծ ծավալով: Այսպիսով, խտրականությունը հասարակական արտադրության ոլորտում և ընտանիքում դերերի ավանդական բաժանումը լրացնում են միմյանց: Ընդհանրապես, ընդունված է խտրականությունը բացատրել ավանդույթներով: Ընտանիքում աշխատանքի և պարտականությունների անհավասար բաժանումը սահմանափակում է կնոջ հնարավորությունները՝ ազատ ժամանակ գտնելու և զարգացնելու այն ունակությունները, որոնք անհրաժեշտ են որոշումների կայացման գործընթացին մասնակցելու համար: Եվ կանայք փորձում են իշխանություն ձեռք բերել այլընտրանքային կառույցների միջոցով, հատկապես հասարակական կազմակերպությունների բնագավառում:

Ընդհանրապես, սոցիալական նոր կարգը, որը պայմանավորված է ժամանակակից հետինդուստրիալ հասարակություններում ընթացող պրոցեսներով, նախորդ հասարակական ձևերից տարբերվում է նախ և առաջ սոցիալական կառուցվածքում անհատի դերի բարձրացմամբ: Քանի որ սոցիալական փոխակերպման գործընթացներում կարևոր դեր ունի տեխնոլոգիական հեղափոխությունը, իսկ տեխնոլոգիական պրոցեսը խթանում է աշխատողների որակավորման բարձրացման պահանջմունքը, կրթությունը և ինքնակրթությունը դառնում է կարևոր գործոն, որը մարդու համար ապահովում է սոցիալական ստատուս և նշանակություն: Դա նպաստում է արժեքային կողմնորոշումների փոփոխմանը ինչպես անհատական, այնպես էլ ընտանիքի մակարդակում: Երբ ընտրության առջև են կանգնում մի կողմից կրթության, մասնագիտական առաջխաղացման, նյութական բարեկեցության և մյուս կողմից ընտանիքի ստեղծման, երեխայի ծնունդի միջև, հաճախ առավելությունը տալիս են մասնագիտական առաջխաղացմանը: Բացի այդ, արժեքային համակարգի փոփոխումը ստեղծում է լրացուցիչ լարվածություն տղամարդու և կնոջ արտաաշխատանքային ժամանակի բաշխման ընթացքում, սրվում է հակասությունը ամուսինների ընտանեկան և մասնագիտական դերերի միջև:

Փոխակերպվող հասարակությանը բնորոշ գործոններից է բնակչության, մասնավորապես ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը, ինչը նաև գործազրկության բարձր ցուցանիշի արդյունք է: Այս ամենը նպաստում է արտագնա աշխատանքի աճին, որի արդյունքում ընտանիքում որոշակի առումով խախտվում է ամուսինների սոցիալական դերերի շրջանակները:

Արդեն նշվեց, որ ընտանիքի ուսումնասիրման հարցում մասնագիտական գրականության մեջ կիրառվում է նաև արժեքային մոտեցումը: Նմանատիպ մոտեցումը կարևոր է այնքանով, որքանով որ ընտանիքի արժեքային կողմնորոշումները հանդիսանում են անհատի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմքը: Ակնհայտ է, որ ժամանակակից ընտանիքի արժեքային կողմնորոշումները ձևավորվում և զարգանում են սոցիալական հարաբերությունների փոխակերպման գլոբալ գործընթացների համատեքստում: Միաժամանակ, ընտանիքի արժեքային կողմնորոշումների բովանդակությունը պայմանավորված է հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական գործընթացների առանձնահատկություններով, որն ուղեկցվում է գոյություն ունեցող հասարակական ինստիտուտների քայքայման և նորերի ստեղծման գործընթացով: Անցումային հասարակության մեջ փոխակերպվել են այնպիսի սոցիալական արժեքներ /սոցիալիզմի ժամանակաշրջանին բնորոշ/ ինչպիսիք են ազնվությունը, հավատարմությունը, կարգապահությունը, օգնելու պատրաստակամությունը, անշահախնդիր բարեկամությունը և այլն: Ըստ Մ.Վ.Կարնաուխովայի, նոր ժամանակաշրջանի արժեհամակարգը դեռ ամբողջովին չի ձևավորվել. դա արտահայտվում է նրանում, որ ժամանակակից հասարակության մեջ ավելի է սրվում հակասությունը շուկայական սպեցիֆիկ արժեքների /մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, գերշահույթի ստացման ձգտումը/ և դեմոկրատական արժեքների /հավասարություն, ազատություն, սոցիալական պատասխանատվություն, համընդհանուր բարեկեցությունը/ միջև: Այդ հակասությունը արտահայտվում է նաև միկրոմակարդակում՝ մասնավորապես, ընտանիքում, ներընտանեկան և արտաընտանեկան արժեքների միջև. մի կողմից պահպանվում է ընտանիքի բարձր արժեքը, ընտանեկան կյանքի ստեղծման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ նկատվում է մասնագիտական ոլորտում ինքնադրսևորման և սոցիալական բարձր ստատուսի ձեռք բերման նշանակության մեծացումը, ինչն էլ երբեմն անհաջողությամբ է զուգակցվում ընտանեկան պարտականությունների կատարման հետ: Ընդ որում ներընտանեկան և արտաընտանեկան արժեքային կողմնորոշումների վրա ազդում են և տարիքային, և սեռային առանձնահատկությունները: Մասնավորապես, ավագ սերնդի ներկայացուցիչների համար առավել կարեվոր են ներընտանեկան արժեքային կողմնորոշումները, իսկ երիտասարդների համար՝ արտաընտանեկան, կանայք հակված են ներընտանեկան արժեքներին, ընտանեկան կյանքի կազմակերպման ավանդական մոդելին, իսկ տղամարդիկ՝ ինքնահաստատման նպատակով, հակված են ավելի շատ մասնագիտական աճին: Ներընտանեկան և արտաընտանեկան արժեքային կողմնորոշումների ձևավորման ազդում է նաև կրթության մակարդակը: Ն.Մ.Կալմիկովայի կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտությունները հաստատում են այն փաստը, որ «նյութական գործոնը ամուսնության և երեխաների դաստիարակության ցանկության հարցում կրկնակի անգամ ավելի բնորոշ է կրթության ցածր մակարդակ ունեցող անձանց, քան բարձր մակարդակ ունեցողներին: Բնակչության համեմատաբար կրթված մասն իր վարքով տարբերվում է բնակչության մյուս մասից: Այդ խումբը ավելի շատ կողմնորոշված է դեպի մասնագիտական բարձր ձեռքբերումները և հնարավորինս հետաձգում է երեխայի ծնունդը»⁴: Ընդհանրապես ընտա-

⁴ *Калмыкова Н.М.*, Социальные факторы дифференциации брачного поведения населения Москвы //Вестник Московского университета. Серия 18. Социология и политология. 1997. N 2., с. 65-67.

նիքում նյութական արժեքների նշանակության մեծացումը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ անցումային ժամանակաշրջանում ընտանիքների մեծ մասում նկատվում է կենսամակարդակի նվազում, այսինքն տնտեսական պրոբլեմները մղվում են առաջին պլան: Դրա հետ կապված ընտանիքների մեծ մասում գերիշխում են կարճաժամկետ կողմնորոշումները, ինչը միտված է ընտանիքի գոյության պահմանմանը, ստատուսի պահպանմանը, նյութական բարիքների անմիջապես ստացմանը և այլն: Այս ամենը նպաստել է այսպես կոչված կարիերային ընտանիքների ձևավորմանը: Ընտանիքի հիմնական խնդիրը երեխաների ծնունդն է և նրանց դաստիարակությունը, բարոյական արժեքների փոխանցումը: Սակայն հոգեբանական այն անհարմարավետությունը, որն ներկայումս առկա է ժամանակակից շատ ընտանիքներում, երեխաների ապագայի հանդեպ անհանգստությունը ձևախախտում է ընտանեկան հարաբերությունները, խաթարում է դրանց կայունությունը, իջեցնում է ընտանիքի դաստիարակչական պոտենցիալը: Եվ ինչպես նշում է Պ.Ա. Սորոկինը. «Ընտանիքի կազմակերպման բնույթից կախված են բնակչության պատմական ճակատագրերը, մարդկանց հասարակական կյանքը, սոցիալական բարդ միավորի կազմակերպումը և հասարակական գործընթացների ընթացքը»⁵:

Ամփոփելով, կարելի է ասել, որ ընտանիք-հասարակություն կապը փոխպայմանավորված է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններով և ընտանիքի ինստիտուտի ամրացման և զարգացման խնդիրները լուծելն անհնարին է առանց հասարակության գլոբալ սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծման:

Асмик Хачатурян – Особенности института семьи в трансформационном обществе. – Первая социальная единица, в рамках которой мы учимся интерпретировать наш собственный опыт- это семья, которая играет важнейшую роль в процессе социализации. Подчеркивая важность этого факта , в статье анализируются характеристики института семьи в трансформационном обществе. Традиционные представления о семье заменяются современными идеями , присущими им характерными чертами. В статье проанализированы функции семьи, причины изменения памок в семье социальных ролей в семье, также отражены вопросы гендерного равенства в обществе. Во время исследования семьи внимание было уделено ценностному подходу вопроса, противоречия между внутрисемейными и внесемейными ценностями в существующем обществе.

Hasmik Khachaturyan – Peculiarities of family in the changing society. – The first social unit where we study to interpret our life experience is family which has a decisive, fatal role in the process of our socialization. Stressing the importance of this fact the article analyses the main peculiarities of family in the changing society. The traditional idea about family we used to have in past are replaced with modern ideas obtaining their specific features. The functions of family and the reasons for changes in social role borders are analysed in the article. It also analyses the issue of gender equality in our society. The research of family pays much attention to the main. Values of family, to the contrast between its internal and external values.

⁵ **Сорокин П.А.**, Система социологии. Москва, 2008, с. 523.

ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

*ԵՊՀ ԻՄ Տնօրինի կառավարման և
մշակութաբանության ամբիոնի
ասիստենտ*

ՌՈՒԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*ԵՊՀ ԻՄ Պատմության և
քաղաքագիտության ամբիոնի
ասիստենտ*

Հոդվածում վերլուծվում է անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը և դրանց կարևորությունը անձի զարգացման պրոցեսում: Ցանկացած հասարակության գոյության հիմքում ընկած են անհատի կողմից որոշակի արժեքային կողմնորոշումների ամբողջության տիրապետումը: Արժեքային կողմնորոշումները իրենցից ներկայացնում են անհատի կամ որոշակի խմբի վերաբերմունքը արժեքային այս կամ այն համակարգի նկատմամբ: Դրանք խաղում են գլխավոր դեր անձի սոցիալական վարքի կարգավորման հարցում: Հոդվածում անդրադարձ է կատարվել արժեքների երկակի՝ սոցիալական և անհատական բնույթին, ինչպես նաև դրանց կատարած գործառնական նշանակությանը: Անցումային ժամանակաշրջանը նպաստեց սոցիալական նոր նորմերի և վարքագծի չափանիշների ձևավորմանը, ինչն էլ խթան հանդիսացավ անցկացնելու սոցիոլոգիական հետազոտություն երիտասարդների և մեծահասակների արժեքային համակարգերը պարզելու համար և կատարվել է համապատասխան վերլուծություն:

Բանալի բառեր. արժեք, արժեքային կողմնորոշում, սոցիալական վարք, սոցիալական նորմ, պահանջմունք, բարոյական գիտակցություն:

20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը կարելի է բնորոշել որպես մարտահրավերների մի ամբողջական փունջ պարունակող ժամանակաշրջան: Մարդ - արարածը որքան էլ որ դիտարկվի որպես քաղաքակրթության զարգացման արդյունք, այնուհանդերձ նա խոցելի է էությունապես: Անցումային ժամանակաշրջանին բնորոշ փոխակերպվող հասարակությանը բնութագրվում է արժեքային նոր կողմնորոշումներով: Որոշակի առումով խարխլվում են հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպերը արժեքների ընկալման, գնահատման հարցում և բնականաբար, այստեղ «մեղքի առյուծի բաժինը» ունի տնտեսական հարաբերությունների ձևավորման գործընթացը: Հարաբերություններ, որոնք ենթադրում են սեփականատիրական մոտեցումների ձևավորում և՛ դրական, և՛ բացասական առումով: Փոփոխման ենթարկվեցին մարդ-աշխարհի հարաբերությունների շրջանակները: Ըստ փիլիսոփայական մարդաբանական հիմնադիրներից մեկի՝ Մաքս Շելերի, մարդը երբեք չի եղել այնքան «պրոբլեմատիկ», որքան 20-րդ դարում: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ միասնական գաղափար մարդու մասին դեռևս չկա: Մարդու հիմնահարցն արժարժող մասնավոր գիտություններն ավելի շատ քողարկում են մարդու էությունը, քան բացահայտում¹: Այդ պարադոքսն ըստ Մ.Խաչատրյանի «բացատրվում է նրանով, որ գիտական գիտելիքը չի սպառում մարդու էության իմացությունն իր բոլոր դրսևո-

¹ **М.Шелер**, Положение человека в космосе. Проблемы человека в заднй философии. М.1988 с. 32

րումներով: Բանն այն է, որ մարդն ավելին է, քան նրա առկա կեցությունը: Նա ունի ներքին բարդ սուբյեկտիվ աշխարհ՝ օբյեկտիվ իրականությունից անկախ ձևավորման ու արտահայտման յուրահատկություններով, որը կարող է հասու լինել իմացության բոլոր ձևերի ու մակարդակների համադրությամբ: Այս ճանապարհով է բացահայտվում մարդու էության բազմաչափությունը, որը ներառում է միասնաբար հանդես եկող նրա գոյության արտաքին ու ներքին աշխարհը՝ իրենց անհամաչափ զարգացման միտումներով ու հակասություններով»²:

20-րդ դարի վերջին մարդկային կեցության արժեքների իմաստավորման հիմնահարցը կարևորվեց գիտական ճանաչողության շրջանակներում: Չնայած դրան, արժեքները և արժեքային կոդմոտորշումները միշտ հանդիսացել են փիլիսոփայության, բարոյագիտության, սոցիոլոգիայի և հոգեբանության ուսումնասիրման կարևոր օբյեկտները: Գ.Պ. Վիժպեցովը, նկարագրելով փիլիսոփայության զարգացման ծագումնաբանական, իմացաբանական և արժեքաբանական փուլերը, դրանցից յուրաքանչյուրի համար առանձնացնում է հիմնական արժեքներ. բարիք, երջանկություն և հոգևոր ազատություն: Թե ինչ կարևորություն ունի բարիքը, այս հարցին դեռ անտիկ ժամանակաշրջանում փորձել է պատասխանել բարոյագիտության հիմնադիր Սոկրատեսը: Նրա կարծիքով գիտելիքը ձեռք է բերվում բարիքի վրա հիմնվելով, ինչն էլ ընկած է բարոյական վարքի հիմքում: Իսկ ըստ Արիստոտելի, բարիքը կարող է գտնվել հոգում /առաքինություն/, մարմնում /առողջություն, գեղեցկություն/ կամ էլ դրանցից դուրս /հարստություն, իշխանություն, պատիվ/: Արիստոտելի մոտ բարձրագույն բարիք է առաքինությունը կամ այլ կերպ ասած բարոյական նորմերը:

Ի տարբերություն անտիկ եվրոպական փիլիսոփաների, արևելյան, մասնավորապես կոնֆուցիական փիլիսոփայությունը բարոյական պրոբլեմների ուսումնասիրման ժամանակ սեռեցվելով հատկապես արժեքների և մարդու նպատակների հարաբերակցության վրա, հատուկ ուշադրություն էր դարձնում բարոյական արժեքների ու նորմերի ծագման ներքին և արտաքին աղբյուրների հարաբերակցության հարցին: Չինական փիլիսոփայության համար նույնպես կարևոր կատեգորիաներից է առաքինությունը՝ դիտարկելով այն որպես անհատի գոյության ամենակարևոր դրսևորում:

Նկարագրված փիլիսոփայական մոտեցումներին, որոնք իրենց ազդեցությունն են թողել նաև միջնադարյան կրոնական աշխարհայացքի վրա, նոր ժամանակներում հաջորդում է գիտելիքի գիտական հիմքերի ձևավորման փուլը, որը հարցականի տակ դրեց արժեքային կատեգորիաների կիրառման հնարավորությունը: Թ.Հոբսը առաջին անգամ դրեց արժեքների սուբյեկտիվության, հարաբերականության մասին հարցը, քանի որ այն, ինչը մեկի համար կարող է լինել իմաստություն, մյուսի համար կարող է լինել վախի դրսևորում, մեկը մի երևույթը կոչում է դաժանություն, մյուսը նույն երևույթը դիտարկում է որպես արդարության դրսևորում և այլն: Նրա պատկերացմամբ արժեքային դատողությունները պայմանավորված են մարդկային հետաքրքրություններով, հակումներով և այդ իսկ պատճառով էլ գիտական առումով նրանք չեն կարող լինել ճշմարիտ: Որպես արժեքային հասկացությունների գիտական հիմք Թ.Հոբսը փորձում է օգտագոր-

² *Խաչատրյան Մ.*, Սոցիալական կյանքի դինամիզմը և մարդկային զարգացման միտումները: ԵՊՀ Բանբեր N 3/108/ Երևան 2002թ. էջ 3

ծել սոցիալ-տնտեսական մոտեցումները. «մարդու արժեքը, բոլոր իրերի նման, նրա գինն է, այն այնքան է, որքան կարելի է տալ դրա ուժից օգտվելու համար»:

Բ.Մալինոզան, էլ ավելի քննադատաբար էր մոտենում արժեքային հասկացություններին, որոնք ըստ նրա միայն «նախապաշարմունքներ» են, որոնք մարդկանց խանգարում են հասնելու իրենց երջանկությանը: Նա գտնում էր, որ «խելացի մարդը որպես նպատակ ընտրում է իր օգուտը»: Անձի բարոյական արժեքներին գիտական նշանակություն փորձեց տալ Ի.Կանտը, որի ուսմունքին բնորոշ էր բարձրագույն սկզբնաղբյուրի կողմից բարոյական արժեքների «ինքնավարության» պատկերացումը: Չնայած դրան, Կանտը ենթադրում էր, որ բարոյականությունը և պարտքի գիտակցումը գոյություն ունեն միայն բանականության մեջ և ցանկացած նպատակի հիմքում ընկած է բարոյականությունը: Կանտը բարոյական օրենքները և պարտքի գիտակցումը հակադրում էր մարդու զգայական բնությանը, նրա պահանջմունքներին: Սակայն, Կանտը գտնում էր, որ չբավարարված պահանջմունքների առկայությունը մարդու մոտ կարող են առաջացնել պարտքը խախտելու գայթակղություն:

Արևմուտքում արժեքների հասարակական - պատմական բնույթի մասին հետագա զարգացումն արտահայտվեց մասնավորապես Ա.Թոմսիի և Պ.Սորոկինի աշխատություններում, որոնք հիմնվում էին Վ.Դիլթեյի մշակած արժեքների մշակութային -պատմական համակարգի բազմազանության գաղափարի և Օ.Շպենգլերի «մշակութային օրգանիզմների» տիպաբանության վրա:

Ավստրիական հոգեբանության դպրոցում /Ա.Մեննինգ, Խ.Էրենֆելդ/ արժեքները դիտարկում էին որպես բացառապես սուբյեկտիվ երևույթ: Ըստ Խ.Էրենֆելդի օբյեկտի արժեքը որոշվում է նրա ցանկալի լինելու չափով, ինչն էլ պայմանավորված է նրանով, թե տվյալ օբյեկտը բավականության ինչպիսի աստիճան կարող է պատճառել: Այսպիսով, արժեքների հիերարխիան կառուցվում է ելնելով օբյեկտի՝ բավականություն առաջացնելու ընդունակությամբ:

Բնականաբար, արժեքային համակարգերի վերաբերյալ նախորդ ժամանակաշրջաններում արտահայտված դիրքորոշումները չէին կարող չազդել ներկայումս ձևավորված և ձևավորման փուլում գտնվող արժեքային համակարգերի վրա: Հատկապես 21-րդ դարում, երբ աշխարհն այդքան հակասական է և շատ արագ փոփոխվող, փոփոխության են ենթարկվում նաև արժեհամակարգերը և վերաբերմունքը դրանց հանդեպ: Դրան զուգահեռ, մարդու համար ստեղծվում են զարգացման նոր հնարավորություններ: Փոխակերպվող հասարակության մեջ փոփոխության են ենթարկվում սոցիալ-հոգեբանական տարբեր երևույթներ ինչպես անհատի մեջ, այնպես էլ սոցիալական խմբերում, միջանհատական և միջխմբային հարաբերություններում: Ակնհայտ է, որ ինչպես անհատի, այնպես էլ սոցիալական խմբի սոցիալ-հոգեբանական կառուցվածքում կարևոր տեղ են զբաղեցնում արժեքային կողմնորոշումները: Դրանց ձևավորման հիմքում ընկած են որոշակի պահանջմունքներ և հետաքրքրություններ: Ընդհանրապես, արժեք ասելով հասկանում ենք մարդու, սոցիալական խմբի, հասարակության համար կարևորություն ունեցող ինչ-որ բան:

Փորձելով դասակարգել արժեքների տեսակները, դրանք կարելի բաժանել մի քանի խմբերի. նյութական, հոգևոր, սոցիալական և մշակութային: Արժեքների աստիճանակարգության հիմքում ընկած են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են առողջությունը, մայրությունը, հարստությունը, իշխանությունը, կարգավիճակը, հարգանքը, արդարությունը և այլն:

Նույն արժեքը տարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների համար կարող է ունենալ տարբեր նշանակություն: Երիտասարդների և մեծահասակների արժեքային համակարգերը պարզելու համար 2014թ.-ին ՀՀ Տավուշի մարզում անցկացվեց սոցիոլոգիական հետազոտություն: Որպես հետազոտությունների գործիք օգտագործվել է ստորև ներկայացված հարցաթերթիկը.

Արժեքներ	Աշակերտներ /15-17տ./	Ուսանողներ /18-22տ./	Աշխատողներ /30տ.-ից բարձր/
Առողջություն	57,1	96,2	100
Նյութական բարեկեցություն, սեփական բիզնես	38,0	57,1	51,0
Ընտանիք, երեխաներ	66,6	71,4	96,2
Ընկերների հետ հաղորդակցում	23,8	47,6	37,2
Անկախություն, ազատություն	33,3	80,9	55,5
Հոգեհարազատ աշխատանք	14,2	47,6	70,3
Անձնական անվտանգություն	33,3	71,4	81,4
Խաղաղություն	23,8	100,0	100,0
Պրոֆեսիոնալիզմ	22,2	47,6	48,1
Գեղեցկություն	19,0	38,1	7,4
Ընդունակությունների դրսևորման հնարավորություն	23,8	52,3	40,7
Փառք, իշխանություն	14,2	19,0	3,7
Ստեղծագործական աշխատանք, հոգևոր սնունդ	14,2	33,3	33,3
Շփումը բնության հետ	14,2	47,0	40,7

Կատարված հետազոտության վերլուծության արդյունքում ակնհայտ է տարբեր տարիքային խմբերին պատկանող մարդկանց տարբերակված մոտեցումը վերոնշյալ արժեքներին: Նշված արժեքներից միայն խաղաղության կարևորության գիտակցումն է, որ և՛ ուսանողների, և՛ աշխատողների մոտ 100-տոկոսանոց ցուցանիշ է արձանագրել: Գուցե դա պայմանավորված է նաև Տավուշի մարզի Ադրբեջանի հետ սահմանակից լինելու հանգամանքով /ի դեպ Տավուշի մարզի միջպետական 350 կմ սահմանից 300-ը սահմանակից է Ադրբեջանին/, ինչի արդյունքում տավուշցիին անմիջականորեն զգում է հակառակորդի շունչը:

Հետազոտության վերլուծության արդյունքում երիտասարդների և մեծահասակների արժեհամակարգերի բախման փոխարեն ականատես ենք լինում տարբեր չափանիշների ոչ նշանակալից տարբերության: Որոշ դեպքերում աշակերտների և ուսանողների շրջանում մի շարք չափանիշների տարբերությունը շատ ավելի մեծ է, քան ուսանողների և աշխատողների միջև: Ուսանողների շրջանում մեծ է անձնական հաջողության, իշխանության ձգտումը, ինչն ըստ նրանց նյութական բարեկեցության գրավականն է: Նրանց մոտ բարձր ցուցանիշ է արձանագրել նաև ընդունակությունների դրսևորման հնարավորությունները,

որի համար կարևոր գործոն է հանդիսանում կրթական բարձր մակարդակի ձեռք բերումը:

Արժեքները կարող են համապատասխանել պահանջմունքների, հետաքրքրությունների բովանդակությանը, կամ էլ կարող են չհամապատասխանել: Պահանջմունքների, հետաքրքրությունների և արժեքների հնարավոր համապատասխանությունները կամ անհամապատասխանությունները պայմանավորված են նրանով, որ մարդու գիտակցությունը օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ, ինչն էլ հանգեցնում է նրան, որ արժեքները ոչ թե պահանջմունքների և հետաքրքրությունների պատճենն են, այլ իդեալական պատկերացումներ, որոնք միշտ չէ, որ համընկնում են վերջիններիս հետ: Տարբեր սոցիալական խմբերի, անձանց համար նույն օբյեկտը և երևույթը կարող են ունենալ տարբեր նշանակություն: Ընդ որում, արժեքներն ունեն երկակի բնույթ. դրանք սոցիալական են այնքանով, որքանով որ պայմանավորված են պատմականորեն և անհատական են, քանի որ դրանցում կենտրոնացված է կոնկրետ սուբյեկտի կենսավորված: Կոնկրետ սուբյեկտի արժեքները ձևավորվում են սոցիալական այն միջավայրի ազդեցությամբ, որում գտնվում է տվյալ անձը:

Ըստ Ա.Ի.Տիտարենկոյի, արժեքները և արժեքային կողմնորոշումները հանդիսանում են բարոյական գիտակցության գլխավոր տարրը: Իսկ «արժեքային կողմնորոշումները բարոյական գիտակցության համակարգված, հաստատուն պատկերացումներն են, որոնք արտահայտում են մարդկային կեցության բարոյական իմաստի էությունը և անուղղակիորեն՝ համեմատաբար ընդհանուր պատմա-մշակութային պայմանները և հեռանկարները»³: Բարոյական արժեքներ ասելով հասկանում ենք բարոյական նորմերը, գնահատականները, հասկացությունները, սկզբունքները, իդեալները, որոնք կապված են անհատի պահանջմունքների հետ և ունեն կողմնորոշիչ նշանակություն դրված նպատակների իրականացման ճանապարհին մեթոդների ընտրության, ինչպես նաև մարդու վարքի կարգավորման հարցում: Անձի արժեքային կողմնորոշումներն անհատի ձևավորման հիմքն են հանդիսանում: Մարդու արժեքային կողմնորոշումները բնութագրում են անհատին, քանի որ արտահայտում են նրա վերաբերմունքը շրջապատող աշխարհի հանդեպ, պատճառավորում և կարգավորում են մարդու վարքը: Անձի արժեքային կողմնորոշումների կառուցվածքում սովորաբար առանձնացնում են երեք կողմ. ճանաչողական, հուզական և վարքային: Դրանցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն նշանակություն ինչպես բովանդակային, այնպես էլ դրսևորման առումով, ինչն էլ դժվարացնում է վերջիններիս էմպիրիկ տարբերակումը: Բացի այդ, հասարակական երևույթներն արտացոլվելով անհատի գիտակցության մեջ, հիմք են հանդիսանում անհատի արժեքային համակարգի ձևավորման համար: Դրանք իրենց բովանդակությամբ բարդ և բազմազան են, իսկ մեր ընկալումներն ընտրողական բնույթ ունեն, այսինքն փորձում ենք նախ և առաջ ընկալել օբյեկտի արժեքային կողմերը:

Արժեքային կողմնորոշումների ձևավորումը կատարվում է աստիճանաբար և իր մեջ ներառում է մի շարք բաղադրիչներ. աշխարհայացք, ռեֆլեքսիա, ուղղորդվածություն և կողմնորոշում: Աշխարհայացքը ներառում է մարդու՝ աշխարհի մասին ունեցած պատկերացումների, կատարվող երևույթների հանդեպ դրսևորվող վերաբերմունքի համակարգը: Ռեֆլեքսիան արժեքների քննադատաբար վերազնադատումն է, որի համեմատաբար ընդհանուր արտահայտությունը

³ *Титаренко А.И.* Структуры нравственного сознания. М.1974, с. 29

կյանքի իմաստի մասին հարցն է: Այդ հարցի էությունը դրսևորվում է անձի՝ իր և հասարակության հանդեպ ունեցած վերաբերմունքի մեջ, հասարակության մեջ զբաղեցրած իր տեղի և դերի գիտակցման մեջ: Մարդուն անհրաժեշտ է այն բանի գիտակցումը, որ իր սեփական կյանքը կարևոր է ոչ միայն իր, այլ նաև մարդկանց, հասարակության համար: Կյանքի իմաստի ճիշտ ընկալումը մարդուն տալիս է այնպիսի բարոյական ուժ, որն օգնում է նրան հաղթահարելու կենսական դժվարությունները: Կյանքի իմաստի մասին հարցը մարդու առջև ծառանում է նրա բարոյական կայացման ճանապարհին և ինքնագարգացման ընթացքում մարդը վերանայում է այն, ինչպես նաև իր պատկերացումներն արժեքների մասին:

Արժեքային կողմնորոշումներում ուղղորդվածությունը ներառում է այն դրդապատճառների ամբողջությունը, որն անձի կենսագործունեության հիմքն է հանդիսանում: Անձի ուղղորդվածությունը բնութագրվում է նրա հետաքրքրություններով, հակումներով, համոզմունքներով, իդեալներով, որոնցում արտահայտվում է մարդու աշխարհայացքը: Կողմնորոշումն որպես արդյունք բնութագրվում է որոշակի բնագավառում գիտելիքների տիրապետմամբ և ենթադրում է, որ մարդու կողմից ձեռք բերած մակարդակն ինքնագարգացման համար անհրաժեշտ հիմք է: Կողմնորոշումն որպես գործընթաց ներառում է ճիշտ նպատակի և դրան հասնելու միջոցների ընտրություն և գործողությունների գնահատում:

Այսպիսով, արժեքային կողմնորոշումներն իրենցից ներկայացնում են մի ամբողջական համակարգ և անձի զարգացման համար կարևոր նախապայման են հանդիսանում:

Асмик Хачатурян, Рубик Мартиросян – Значение ценностной ориентации в процессе развития личности. – В статье анализируется процесс формирования ценностной ориентации личности и ее значение в процессе развития личности. В основе существования любого общества лежит владение целостностью определенной ценностной ориентации со стороны личности. Ценностные ориентации представляют из себя отношение личности или определенной группы к той или иной системе ценностей. Они играют главную роль в вопросе регулирования социального поведения личности. В статье обращают внимание двойственным характеристикам ценностей – социальным и личностным, а также их функциональным значениям. Переходный период способствовал формированию новых социальных норм и стандартов поведения, которые стимулировали проведение социологических исследований для выяснения системы ценностей молодежи и взрослых и в итоге был проведен соответствующий анализ.

Hasmik Khachaturyan, Rubik Martirosyan – Value orientation role of a person development process. – The article analyses the formation of value orientations of an individual and their importance on the process of development of a personality. Value orientation is the basis of each society. Value orientations represent the opinions and beliefs people have about this or that value systems. They play an important role in the development of social behavior of an individual. The dual nature of values; both social and personal, is reflected in the article. The transitional period promoted the development of social norms and behavior standards thus stimulating in making social research among youth and adults, in order to find out their value systems and make appropriate analyses.

ԳԱԳԻԿ ՀՈՎՈՒՆՑԻ ԵՐԿՈՒ ՊԻԵՄՆԵՐԸ ԿՈՆՏՐԱԲԱՍԻ ԵՎ ԴԱՇՆԱՍՈՒՐԻ ՀԱՄԱՐ (1972)

ՍԱՐԳԻՍ ԲԱԼԲԱՅԱՆ

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ

Հոգևածում տեսական և միաժամանակ կատարողական վերլուծության են ենթարկված Գագիկ Հովունցի կոնտրաբասի և դաշնամուրի համար գրված Երկու պիեսները: Հեղինակն անդրադառնում է պիեսների կառուցվածքին, ներկայացնում դրանց մեկնաբանման սեփական տեսակետները՝ ելնելով ոչ միայն կոնտրաբասի կառուցվածքային առանձնահատկություններից, այլև կոմպոզիտորի իմաստային գաղափարներից: Հոգևածում ներկայացված են կոնտրաբասի՝ սկորդատուրայի կիրառման մեթոդները: Հեղինակը բացահայտում է, որ պիեսներում առկա են այնպիսի ինտոնացիոն կառուցվածքներ, որոնք խիստ բնորոշ են հայ մոնոդիկ երաժշտական մտածողությանը:

Բանալի բաներ. Գագիկ Հովունց, կոնտրաբաս, Ռոդիոն Ագարխին, սկորդատուրա:

Գագիկ Գեդեոնի Հովունցը (ծնվ. 1930) հայ անվանի կոմպոզիտոր է, տեսաբան, մանկավարժ: Նրա կոմպոզիտորական խիստ յուրահատուկ ոճը հիմնված է իր մշակած ուրույն լադատոնայնական համակարգի վրա, որում և գրված է նրա ստեղծագործությունների գերակշիռ մասը: Լինելով տեմպերացված՝ Գ. Հովունցի վերոնշյալ համակարգը որոշ չափով կապված է բնական ակուստիկ օրենքների հետ: Ի տարբերություն դասական հարմոնիայի, որը հիմնվում է կվարտա-կվինտային շրջանի՝ օբերտոնային սանդղակի առաջին չորս հնչյունների վրա, Հովունցը որպես հիմնակետ առաջարկում է վերցնել օբերտոնային սանդղակի ավելի հեռավոր՝ 5-12-րդ հնչյունները¹: Այս համակարգը ներկայացված է երեք սիմետրիկ լադերի ձևով, որոնց մանրամասն նկարագրությունը ներկայացված է Գ. Հովունցի “Мысли о гармонии” գրքով²: Այս երևույթը բնորոշ է 20-րդ դարի երաժշտությանը: Որպես օրինակ կարող են ծառայել Օ. Մեսսիանի և Պ. Հինդեմիտի տեսական աշխատանքները:

Բազմաժանր է Գ. Հովունցի ստեղծագործությունը. «Խորեոգրաֆիկ պիեսներ» սիմֆոնիկ նվագախմբի համար, ինվենցիաների երեք առանձին ցիկլերը, ջութակի, դաշնամուրի կոնցերտները, թավջութակի և նվագախմբի կոնցերտային ինվենցիաները, ինչպես նաև բազմաթիվ կամերային ստեղծագործություններ:

Ինվենցիայի ժանրը մեծ տեղ է զբաղեցնում Գ. Հովունցի կոմպոզիտորական աշխատանքում: Նրա ստեղծագործությունների շարքում առանձնանում են 30 ինվենցիոն պիեսները՝ գրված սիմֆոնիկ նվագախմբի բոլոր գործիքների համար, որոնք 1970-ականներին ձայնագրել են ՍՍՀՄ պետական ակադեմիական

¹ *Հյուսնունց Շ., Բաբաջանյան Ա.*, Գագիկ Հովունց. Ստեղծագործական դիմանկարի ուրվագծեր, զրույցներ կոմպոզիտորի հետ, Երևան, «Էդիթ պրինտ», 2013, էջ 24:

² *Овунц Г.* Мысли о гармонии, Ереван, “Мшакуйт”, 1995, стр. 16.

սիմֆոնիկ նվագախմբի մենակատարները³: Պիեսներում կոմպոզիտորը հատուկ ուշադրություն է դարձրել նվագախմբի յուրաքանչյուր գործիքի տեմբրային և տեխնիկական հնարավորություններին և կերպարային առանձնահատկություններին:

Վերոնյալ շարքում են կոնտրաֆասի և դաշնամուրի համար 1972-ին գրված երկու պիեսները՝ «Հինավուրց երգ» և «Ռիթմիկա» (երկ 7d), որոնք առաջինը կատարել և ձայնագրել է ՍՍՀՄ պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի վաստակաշատ մենակատար, կոնտրաֆասահար Ռոդիոն Միխայիլի Ազարխինը⁴: Պիեսների առաջին համերգային կատարումն իրականացրել է հայ կոնտրաֆասահար Վահե Թերգյանը, ում կոմպոզիտորը նվիրել է վերոնյալ ստեղծագործությունները:

Պիեսներում առկա են տեխնիկական յուրատեսակ լուծումներ, մեծ նշանակություն է հատկացված կոնտրաֆասի զանազան շտրիխների օգտագործմանը: Պիեսները գեղարվեստական բարձր արժեք են ներկայացնում և պարունակում են հայ մոնոդիկ երաժշտությանը բնորոշ ինտոնացիաներ:

Առաջին պիեսի սկզբում կոմպոզիտորը նշել է կոնտրաֆասի լարվածքը, որը սկորդատուրային է: Հայտնի է, որ սկորդատուրայի կիրառումը նախատեսում է գործիքի լարվածքի փոփոխություն, որը հնարավորություն է ընձեռում մեծացնել գործիքի ձայնասահմանը՝ կատարելու որոշակի ակորդներ, բնական ֆլաժոլետներ, որը հնարավոր չէ հնչեցնել սովորական (ընդունված) լարվածքի դեպքում⁵: Որոշ դեպքերում սկորդատուրային լարվածքը կիրառում են բարդ պասաժների կատարումը հեշտացնելու նպատակով: Կոնտրաֆասի դեպքում հիմնականում սկորդատուրան կիրառվում է՝ կես տոնով (որոշ դեպքերում մեկ տոնով) իջեցնելով չորրորդ լարը⁶ (հիմնականում քառալար կոնտրաֆասով կատարելիս): Այս ստեղծագործությունների դեպքում կոմպոզիտորը նշել է, որ չորրորդ լարն անհրաժեշտ է օգտագործել կես տոն ցածր՝ ֆա դիեզի փոխարեն՝ ֆա բեկար⁷: Վերոնյալ հնարը կոնտրաֆասի մենանվագ կատարողականությունում յուրօրինակ մոտեցման ձև է և ապրիկատուրայի իմաստով կատարողի համար որոշակի դժվարություններ է առաջացնում:

Ինչպես հայտնի է, այս մոտեցումը նորություն չէ և որոշ չափով նույնիսկ ավանդական: Այն հանդիպում է Լ. վան Բեթհովենի սիմֆոնիաներում, Յո. Բրամսի «Գերմանական ռեքվիեմում», Ռ. Վագների «Տրիստան և Իզոլդա» օպերայում, Մ. Մուսորգսկու «Գիշերը լերկ լեռան վրա» սիմֆոնիկ ֆանտազիայում, նաև Ժամանակակիցներից Բ. Պենդերեցկու Թավջութակի և կամերային նվագախմբի համար գրված կոնցերտում, Ռ. Շչեդրինի Առաջին սիմֆոնիայում և այլն:

Ներկայացնենք Գ. Հովունցի առաջին պիեսի նախաբանի առաջին տակտերը:

³ Բոլոր պիեսները ձայնագրվել են «Мелодия» ընկերության կողմից:

⁴ Ռ.Մ.Ազարխինը հայտնի է կոնտրաֆասի համար կատարած բազմաթիվ փոխադրումներով, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներով:

⁵ Музыкальная энциклопедия, под редакцией Ю. В. Келдыша, том 5, Москва, 1981, стр. 54.

⁶ **Холопов Ю. Н.** О трех зарубежных системах гармонии, Музыка и современность, Вып. 1, Москва, “Музыка”, 1966, стр. 54-57.

⁷ Ինչպես նշված է ստեղծագործության սկզբում, կոմպոզիտորը գրել է «մենանվագ» լարվածքում՝ կոնտրաֆասի ձայնագծի երաժշտական տեքստը հնչում է ռե լարվածքով:

Օրինակ 1.




Վերոնշյալ օրինակում նկատելի է, որ սկզբնական ինտոնացիոն կառուցվածքը օստիննատային բնույթ ունի, քանի որ կառուցվածքն ուղղված է դեպի սի նոտան, որը մշտական կրկնվելով՝ կարծես ստեղծում է պեղալային հնչողության պատրանք: Այս երևույթը համադրելի է հայ ավանդական երաժշտական մտածողությանը բնորոշ դամի հնչողության հետ: Վերը ներկայացված կրկնվող ռիթմիկ ինտոնացիոն կառույցը յուրօրինակ է, քանի որ կատարողը յուրաքանչյուր հանդիպող սի նոտայից առաջ պետք է լարից լար անցում կատարի և հնչեցնի այն: Հենց այս շարժումն էլ ապահովում է շեշտով և ներքև շտրիխով հնչեցնելու սի նոտան:

Հատուկ ուշադրության է արժանի նաև դաշնամուրի նվագաբաժինը, որտեղ օգտագործված են հայելային իմիտացիոն հնարներ:


Վերը նշված տակտերից հետո կոնտրաբասի ձայնագծում շարադրվում է թեման, որը կանտիլենայի բնույթ ունի: Կոմպոզիտորը մեզ հետ հարցազրույցի ժամանակ նշեց, որ մեղեդու հիմքում ընկած է «Հայոց աղջիկներ» ժողովրդական երգը: Այս մեջբերումը քաղաքային ֆոլկլորային երգի ներդաշնակման յուրօրինակ նմուշ է, որը բխում է ոչ թե ստեղծագործությանը ազգային կոլորիտ հաղորդելու նպատակից, այլ բովանդակային-դրամատուրգիական անհրաժեշտությունից⁸: Ողջ մոտիվը կազմված է կիսատոներով կառուցված վերընթաց և վարընթաց շարժումներով այսպես կոչված «լոմբարդային» ռիթմերից: Ընդհանուր առմամբ երևում է, որ այս մոտիվը ստեղծագործության թեմատիկ կորիզն է:

Օրինակ 2.



Վերը նշված օրինակի կրկնողության տարբերակում կոմպոզիտորն օգտագործել է կրկնակի ֆորշագ, որը հնարավոր է հնչեցնել միայն լյա լարի բթամատի հենքով դիրքում:

Օրինակ 3.



⁸ Նմանատիպ մոտեցման հանդիպում ենք Ա. Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիայի (Զանգով սիմֆոնիա) երրորդ մասում, որտեղ կոմպոզիտորն օգտագործել է «Ռուսկան ախպեր» ժողովրդական երգի մեղեդին, Ալ. Հարությունյանի Միմֆոնիայում և այլն:

Հատկանշական է, որ դաշնամուրի ձայնագծում օստինատոների հնարը պահպանվում է, սակայն ենթարկվում է որոշ կրճատումների՝ մոտիվից որոշ նոտաներ են պակասում, իսկ մի դեպքում էլ՝ մոտիվի «մնացորդը» լայնացված է հնչում: Դաշնամուրի նվագակցության ֆակտուրայի վերոնշյալ ընդհանուր գրաֆիկական ուրվագծերը պահպանվում են մինչև պիեսի ավարտը:

Օրինակ 4.



Վերոնշյալ հատվածի դաշնամուրի նվագաբաժնում հանդիպող ռիթմիկ կառուցվածքը որոշ դեպքերում հանդիպում է պաուզաներով բաժանված տեսքով, իսկ մեղեդու հանգուցալուծման տակտում՝ խտացված (վերոնշյալ օրինակի վերջին տակտը), որը ստեղծում է ընդհանուր շարժման ուժգնացում:


Վերը նշված հատվածի վերջին տակտում դաշնամուրի աջ ձեռքի ձայնագծում սեկունդաներով շեշտված նոտաները որոշ չափով նմանակում են թեմայի կորիզի ինտոնացիոն կառուցվածքին:

Օրինակ 4-ում երևում է, որ Գ. Հովունցը կոնտրաբասի մեղեդային գծում օգտագործել է այնպիսի հնարներ, որոնք բնորոշ են հայ մոնոդիկ երաժշտական մտածողությանը և հանդիպում են թե՛ ժողովրդական, թե՛ եկեղեցական երաժշտության մեջ:

Պիեսի նախաբանին հաջորդող մեղեդու ամբողջ կառուցվածքը (օրինակ 4) շարադրված է այնպես, որ այն լիովին հնարավոր է կատարել մեկ լարի՝ լյա լարի վրա, ինչը կատարողին հնարավորություն է ընձեռում թեման վերարտադրել նույն տեմբրային հնչողությամբ:

Կոմպոզիտորը նյութը կազմակերպում է երկու կցված եռատոնի հիմքի վրա, ընդ որում առաջին տետրախորդի գագաթը երկու օժանդակ հենակետերից առաջինն է, իսկ երկրորդը՝ երկրորդ տետրախորդի գագաթն է:

Օրինակ 5.



Լադի առաջին տոնիկական օղակը (սի-ֆա) դրսևորում է հարմոնիկ բարձր երրորդ աստիճանով փոյուզիական փոփոխական երանգավորում:

Վերոնշյալ լադում առանձնացված մեծացրած սեկունդան հաճախ է հանդիպում հայ մոնոդիկ երաժշտության մեջ:

Փաստորեն թեմայի հնչողությունն ընդգծված է լադային փոփոխականությամբ, քանի որ պիեսի նախաբանը գտնվում է այլ լադային կառուցվածքում, որտեղ, ինչպես նշել ենք, սի հնչյունը հիմնական տոնն է:

Պիեսի երկրորդ բաժինը կառուցված է առաջին բաժնի նմանությամբ. նախքան մեղեդին կրկին հանդիպում է այնպիսի կառուցվածք, որը շատ նման է պիեսի նախաբանին, այնուհետև շարադրվող մեղեդին առաջին կերտվածքի թեմատիկ գծի գրեթե ճշգրիտ կրկնությունն է, որից հետո կրկին երևում է նախաբանի նյութը: Պիեսի ավարտին կրկին հնչում է թեմատիկ նյութի դարձվածքը, որը ենթարկված է ռիթմիկ և դինամիկ փոփոխությունների: Այն ևս մեկ անգամ հնչում է լայնացած: Վերը նկարագրված երկու դարձվածքների մեջտեղում լայնացված հնչում է նախաբանի ինտոնացիոն նյութը:

Օրինակ 6.



Նշանակալի է, որ վերը բերված օրինակում երեք անգամ օգտագործված են լյա և մի լարերի վրա բնական ֆլաժոլետները, որոնց միջոցով այս թեման լայնացված է հնչում: Վերջին ֆլաժոլետը, որը ձգվում է յոթ քառորդի չափով, ենթադրում է, որ այն պետք է հնչի մանր վիբրացիոն տատանումներով, որը մարում է վերջին քառորդի վրա: Անհրաժեշտ է նշել, որ կոնտրաբասի ձայնաբաժնում մեղեդին կատարվում է բթամատի հենքով դիրքում: Այստեղ կոնտրաբասահարն օգտվում է ջութակի բանալուց, որն ապահովում է պիեսի այս մեղեդու ընթերցման և կատարման ճկունությունը:

Ձևակառուցման տեսակետից պիեսն ունի փոքր ռոնդոյի և պարզ եռամաս ձևերի համատեղման հատկանիշներ: Ի դեպ, պիեսի նախաբանի նյութը կարելի է դիտել որպես «ռեֆրեն»: Բացի այդ, պիեսի մեղեդին կազմված է երեք թեմատիկ հատվածից (չհաշված նախաբանի նյութը), որոնցից երկուսում թեման գրեթե ճշգրտորեն կրկնվում է, իսկ երրորդ դեպքում՝ համոզիչ կերպով եզրափակվում:

Պիեսի վերջում նշված “attacca” գրառումը փաստում է, որ Գ. Հովունցի երկու պիեսները կազմում է ամբողջական դրամատուրգիական ցիկլ:

Ուշագրավ է, որ որպես տեմպային ցուցիչներ հեղինակն օգտագործել է միայն մետրոնոմային գրառումներ (առաջին պիեսի համար քառորդը հավասար է 60, իսկ երկրորդի՝ կետով քառորդը հավասար է 92-96), այլ կերպ ասած՝ տեմպի բնույթը գրված չէ: Դրա համար պիեսների անվանումները կատարողի համար կարող են ուղենիշ դառնալ: Առաջին պիեսը կոչվում է «Հինավուրց երգ», որը և բնորոշում է շարադրման սկզբունքը՝ կոնտրաբասի մենանվագը ներկայացված է կանտիլենայի ձևով: Երկրորդ պիեսը կոմպոզիտորն անվանել է «Ռիթմիկա»: Այս դեպքում հեղինակը կատարողի առջև խնդիր է դնում հստակ հետևել երաժշտական ընթացքի ռիթմին: Եվ այս իմաստով պիեսի ֆակտուրան կառուցված է այնպես, որ ողջ պիեսի ընթացքում հստակ զգացվում են 12/8 չափում մետրական բաբախումները: Ֆակտուրայում ընդգծվում են յուրաքանչյուր տակտի չորրորդ, յոթերորդ և տասներորդ հարվածները:

Պիեսի առաջին իսկ տակտերն ուսումնասիրելիս՝ առանձնահատուկ է ներկայացվող ռիթմական նորույթը, որը կապված է կոնտրաբասի *pizzicato* ձայնարտաբերման հնարքի և դաշնամուրի փոխհարաբերության հետ: Առաջին տակտի տասներորդ հարվածում դաշնամուրի նվագակցության մեջ առկա է ստակատային նոտա, որին կոնտրաբասը պատասխանում է այդ նոտային հաջորդ ութերորդական հարվածի վրա: Եվ այս կառույցը հանդիպում է հաջորդ իսկ տակտի առաջին հարվածում, նաև տասներորդի վրա, սակայն այս դեպքում կոնտրաբասը կատարում է հաջորդ երկու ութերորդական նոտաները:

Օրինակ 7.

Contrabasso

Piano

Վերը նշված գծագրում բերված է պիեսի ռիթմական կառույցի հիմնական տեսքը: Պիեսի հետագա շարադրանքում այս ռիթմական հիմքը տարբերակվում է, չնայած երկու ձայնագծերի միասնական ռիթմական կերտվածքը պահպանվում է ողջ պիեսի ընթացքում: Այս սկզբունքը կարելի է համարել պիեսի ալգորիթմական հենքը:

Օրինակ 8.



Տվյալ ֆակտուրային կերտվածքում կոնտրաբասի ձայնաբաժնում կան *arco* ձայնարտաբերման հնարքով հատվածներ, որոնք ունեն անփոփոխ մեղեդային կառուցվածք՝ վարընթաց սեկունդային ինտոնացիայով:

Օրինակ 9.



Պիեսում հանդիպող այսպիսի դարձվածքներում հատկանշական է կոնտրաբասի և դաշնամուրի երկու ձայնագծերի ռիթմային կառուցվածքի միախառնման հնարը. դաշնամուրի ձախ ձեռքի ձայնագծում հանդիպում են քառորդը կետով տևողությամբ նոտաներ, աջ ձեռքում՝ ութերորդականներով շարժում է, իսկ կոնտրաբասի գծում գերիշխում են տասնվեցերորդական նոտաներով կառուցվածքները: Կոնտրաբասի վերոնշյալ նոտաների շարադրանքը կատարվում է գործիքի ցածր դիրքերում (կիսադիրքում և առաջին դիրքում). առկա արագ տեմպի պայմաններում ձախ ձեռքի բացվածքն ընդլայնելով՝ միանգամայն հնարավոր է դառնում հնչեցնել այդ պասաժները: Պիեսի մեկնաբանման ժամանակ առանց որևէ փոփոխության անհրաժեշտ է կիրառել վերոնշյալ օրինակում ներառված շտրիխային գրառումները: Վերոգրյալներից պարզ է դառնում, որ կոմպոզիտորը լիովին տիրապետում է կոնտրաբասի կառուցվածքային առանձնահատկություններին և լայնորեն կիրառում է այդ գիտելիքներն իր ստեղծագործություններում:

Այս պիեսը դժվար է կոչել ատոնալ, սակայն այն այնքան խրոմատիկ հնչյունային միջավայրում է, որ խոսքը կարող է վերաբերել տոնայնության հասկացության տարածական մեկնաբանմանը: Այսպիսի մի մոդել է Պ. Հինդեմիտի տոնայնական համակարգը, որտեղ «պահպանվում է հիմնական տոնի նշանակությունը՝ տոնայնական կենտրոնը, սակայն ի տարբերություն ավանդական

տոնայնության, դրանում պահպանված չեն դիատոնիկ հնչյունաշարի սահմանափակումները»⁹:

Այս ոճի պիեսները մեկ շնչով կատարում են պահանջում: Դրանց առանձնակի «հմայք» են հաղորդում գործիքների միջև ռիթմիկ անհամապատասխանությունները, որոնք բոլոր դեպքերում գտնվում են ռիթմական զարկերի ընդհանուր համակարգում՝ ստեղծելով մոնոլիտ կառուցվածք: Պիեսում անընդմեջ փոխատեղվում են կոնտրաբասի հնչեցման *arco* և *pizzicato* ձայնարտաբերման հրնարքները:

Իրավամբ, «Այս պիեսները (պիեսների շարքը - Ս.Բ.) կոմպոզիտորը մտահղացել է յուրաքանչյուր գործիքի առանձնահատկություններին համապատասխան հարմոնիկ հնարների բացահայտման համար»¹⁰: Ակնհայտ է, որ կոնտրաբասի և դաշնամուրի համար գրված Գագիկ Հովունցի պիեսներն ուղղված են կատարողի տեխնիկական հնարավորությունների զարգացմանը, սակայն միևնույն ժամանակ դրանք լիովին կարող են տեղ զբաղեցնել մենակատար կոնտրաբասահարի նվագացանկում:

Саргис Балбабян – *Две пьесы Гагика Овунца для контрабаса и фортепиано (1972)*. – В статье представлен теоретический и одновременно исполнительский анализ Двух пьес Гагика Овунца для контрабаса и фортепиано. Автор статьи обращается к структуре вышеуказанных пьес, представляет собственное видение интерпретаций произведений, исходя не только из конструктивных особенностей контрабаса, но и смысловой идеи композитора. В статье представлены методы применения скордатуры на контрабасе. Автор выявляет в пьесах интонационные структуры, характерные для армянской монодической музыки.

Sargis Balbabyan – *Two pieces by Gagik Hovunts for double bass and piano (1972)*. – The article presents the theoretical and simultaneously the performing analysis of the composition Two pieces for double bass and piano by Gagik Hovunts. The author of the article focuses the attention on the structures of the compositions, represents his own vision of interpretations of the pieces, basing not only on the design features of double bass, but also on the semantic ideas of the composer. The article presents methods for applying scordatura on double bass. The author also reveals in plays some intonation structures, which are characteristic to the Armenian monodic music.

⁹ **Холопов Ю. Н.** Указ. соч., стр. 246.

¹⁰ **Հրուսնոնց Շ., Բաբաջանյան Ա.**, Գագիկ Հովունց. Ստեղծագործական դիմանկարի ուրվագծեր, գրույցներ կոմպոզիտորի հետ, 2013, էջ 37:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱՍԱՐԴ

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Տվյալ գիտական հոդվածում դիտարկվում է «անձի պարտականություններ» հասկացության հիմնարար նշանակությունը, կարևորությունը անձի իրավական կարգավիճակի ձևավորման գործընթացում, ժամանակակից ժողովրդավարական պետությունում: Մասնավորապես, բացահայտվում է իրավագետների «անձի պարտականություններ» հասկացության բովանդակության, դրա հիմնարար տարրերի վերաբերյալ մեկնաբանությունների բազմազանությունը, պետության և իրավունքի տեսության համատեքստում: Հատուկ ուշադրության է արժանանում անձի իրավունքների և պարտականությունների փոխհարաբերության հարցը, ինչպես նաև բացահայտվում է պարտականությունների, որպես պետության և անհատի միջև հատուկ կապի, սոցիալ-իրավական նշանակությունը: Միևնույն ժամանակ մատնանշվում է անձի պարտականությունների տեսակների բազմազանությունը (ընդհանուր արգելքներ, իրավաբանական արգելքներ և այլն):

Բանալի բաներ. մարդու իրավունքներ, անձի պարտականություններ, իրավական կարգավիճակ, իրավական արգելքներ, անձի հնարավորություններ, ժողովրդական պետություն, պոզիտիվ և նեգատիվ պարտականություններ:

Իրավաբանական գրականության մեջ, մինչ օրս բավարար ուշադրության և գնահատման չի արժանացել իրավաբանական պարտականությունների խնդիրը՝ դրանց սոցիալական, իրավական բնույթն ու կարևորագույն դերը պետության և անհատի փոխհարաբերությունների կարգավորման, ինչպես նաև անձի ազատությունների, օրինական շահերի և հասարակական հարաբերությունների կայունացման ու զարգացման գործընթացում: Հետևաբար, անհրաժեշտ ենք համարում իրավաբանական պարտականության, որպես իրավական կարգավորման կառուցակարգի, սահմանադրականության, օրինականության և իրավակարգի ամրապնդման միջոցի, մանրակրկիտ ուսումնասիրության իրականացումը:

Անձի իրավական կարգավիճակի հիմնարար կառուցվածքային տարրերից է իրավաբանական պարտականությունը:

Անվիճելի է, որ հետզհետե պետության և իրավունքի տեսությունում գիտակցվում է, որ իրավաբանական պարտականությանը անձի իրավունքների և ազատությունների հետ միասնության մեջ կազմում են իրավահավասարության, քաղաքացիական հասարակության և իրավական պետության գործունեության ժողովրդավարական կարգավորման համընդհանուր սկզբունքը¹:

¹ **Байтин М.И.** Сущность права (современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001, с. 81-89; **Барзилова Ю.В.** Юридические обязанности как элемент правового статуса личности.

Պետության և իրավունքի տեսություն գիտության համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ իրավաբանական պարտականությունը օրենսդրությամբ նախատեսված և պետության կողմից պահպանվող իրավական հարաբերությունան մասնակցի պարտավոր վարքագծի անհրաժեշտությունն է հոգուտ իրավագոր սուբյեկտի (անհատի, կազմակերպության, հասարակության, կամ պետությանն ընդհանրապես) (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)²:

Պետության և իրավունքի տեսության գիտաճյուղում իրավաբանական պարտականությունները հաճախ դիտարկվում են որպես անձի իրավունքներին և ազատություններին թղթակից (հարաբերակից) հասկացություն, դրանց հաղորդելով ածանցյալ բնույթ³: Մինչդեռ, իրավաբանական պարտականությունները կարող են լինել ելակետային անձի իրավական կարգավիճակում, ինչը պայմանավորված է հասարակության պահանջներով և շահերով: Հարկ է նշել, որ այդպիսի բնույթ են կրում *անձի հիմնական (սահմանադրական) պարտականությունները*: Հետևաբար, համամիտ ենք, Գ.Վ. Մալցևի այն տեսակետի հետ, համաձայն որի իրավաբանական պարտականությունը վարքագծի հնարավոր դրսևորումն է⁴:

Իրավական տեսանկյունից, պարտավոր անձի վարքագիծը կապված է այնպիսի հնարավորության հետ, որը միևնույն ժամանակ օրենսդրի կողմից ճանաչվում է *անհրաժեշտ*: Պետք է փաստել, որ իրավաբանական պարտականությունը սուբյեկտի հեռանկարային, հնարավոր վարքագծի հնարավորությունն է, որը կրում է պարտադիր բնույթ օրենքում արտահայտված շահերի և անձի կամքի տեսանկյունից: Իրավաբանական գրականությունում իրավագետները իրավաբանական պարտականություն հայեցակարգի բովանդակությունը բացահայտում են «անհրաժեշտություն», «իրավական անհրաժեշտություն», «վարքում պարտադրականություն (անհրաժեշտություն)», «հնարավորության դրսևորում» և այլ հասկացությունների միջոցով: Այսպես, մի խումբ իրավագետներ իրավաբանական պարտականության բովանդակությունը բացահայտում են պետությամբ ճանաչված («իրավական») անհրաժեշտություն և «անձի վարքում անհրաժեշտություն (պարտադրականություն, հարկադրականություն)» հասկացությունների օգնությամբ: Ընդ որում, տարբերակում են «վարքում պարտադրականության անհրաժեշտություն» և «պատշաճ վարք» հասկացությունների միջև: Օրինակ՝ Ս.Ն. Բռատուար պարտականությունը դիտարկում է, որպես պարտավոր անձի *անհրաժեշտ վարքագիծ (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)*, որի պայմաններում այլընտրանք գոյություն չունի⁵: Նույնանման բնորոշում է ներկայացում Ս.Ֆ. Կեչեկյանը. «Իրավական պարտականությունը իրավունքի նորմերի պահանջներով պայմանավորված և պետական հարկադրանքով ապահովված որոշակի վարքագծի անհրաժեշտությունն է»⁶: Ակնհայտ է, որ իրավական նորմերում ամրագրված իրավունք-

Дис.... канд. юрид. наук. Саратов, 2006, с. 199. **Матузов Н.И.** Актуальные проблемы теории права, Саратов, 2003, с. 302-303, **Хачатуров К.Е.** Юридические обязанности граждан Российской Федерации: проблемы теории и практики: Автореф. дис.... канд. юрид. наук. СПб., 2000: Эбзеев Б.С. Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации. М., 2005, с. 215-220.

² **Վ.Ն. Իրնպանյով** Պետության և իրավունքի տեսություն, «Գոշ», Եր, 1997, էջ 115

³ **Кечекян С.Ф.** Правоотношения в Социалистическом обществе, М., 1958, с. 60-67.

⁴ **Мальцев Г.В.** Социалистическое право и свобода личности (теоретические вопросы). с.71 -79

⁵ **Братусь С.Н.** Субъекты гражданского права, М., 1950, с.11.

⁶ **Кечекян С.Ф.** նշված աշխ., էջ 51-52.

ներն ու պարտականությունները հավասարապես արտահայտում են անձի պատշաճ, անհրաժեշտ վարքը, այսինքն, համապատասխան իրավաչափ վարքը: Լ.Դ. Վոնոդինի կարծիքով՝ պատշաճությունը ընդգծում է պարտականության միայն արտաքին կողմը՝ պարտավորությունը պետք է ի կատար ածվի: Մինչդեռ, անձի վարքագծում «հարկադրականությունը» («պարտադրականությունը» (անհրաժեշտությունը) հասկացությունը արտահայտում է իրավաբանական պարտականության ներքին կողմը՝ հնարավորություն ընձեռնելով դիտարկելու իրավիճակը ոչ թե այդ պարտադիր վարքագծի չափը սահմանած պետության, այլ պարտավոր սուբյեկտի տեսանկյունից: Ավելին, Լ.Դ. Վոնոդինի և Ս.Ֆ Կեչեկյանի կարծիքով «իրավական պետության կողմից ճանաչված անհրաժեշտություն» կատեգորիան ի տարբերություն «սուբյեկտիվ իրավունքի» ամբողջությամբ բացահայտում է իրավաբանական պարտականության բովանդակությունը: Մի կողմից այն մատնանշում է, որ պարտականությունը իրական է և զարգանում է օրենքով սահմանված և պետության կողմից երաշխավորված պատշաճ վարքի շրջանակներում, իսկ մյուս կողմից՝ իրավական անհրաժեշտությունը սահմանում է պարտականության բովանդակությանը բնորոշ հատկանիշները՝ պարտադիր վարքագծի չափն ու սահմանները: Ընդ որում, «անհրաժեշտություն» հասկացությունը պարտականության բացահայտման հարցում խաղում է նույնպիսի դեր, ինչպիսին որ սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների համար «հնարավորություն» հասկացությունը⁷: Հետևաբար, «պատշաճ վարքը» պետության հարկադրական ուժով երաշխավորված և իրավական նորմի սանկցիային համապատասխանող վարքն է, որն ամբողջությամբ արտացոլում է իրավունքի յուրահատկությունն ու իրավական նորմերի տարբերությունը այլ սոցիալական նորմերից⁸:

Կարծում ենք, «անհրաժեշտությունը» չպետք է հասկանալ որպես «պարտք»՝ հիմնված հակադրման կամ դրսից ուրիշի կամքի պարտադրման վրա, քանի որ ժողովրդավարական երկրներում քաղաքացիների ճնշող մեծամասնությունը իրենց պարտականությունները կատարում են կամովին, գիտակցաբար, դրանց խելացիության համոզվածությամբ: Հայտնի է, որ իրավական պետության պայմաններում շատ պարտականություններ միաժամանակ հանդես են գալիս որպես իրավունքներ: Օրինակ՝ պաշտոնատար անձանց որոշակի գործողությունների կատարելու իրավունք և այդ գործողությունների իրականացման պարտականություն և այլ: Հետևաբար, վստահորեն կարող ենք ասել, որ ժողովրդական պետությունում, անձի իրավական կարգավիճակից բխող՝ հասարակության կյանքի ներդաշնակության իրավունքների և պարտականությունների փոխկապակցվածությունն է: Ավելին, սուբյեկտիվ իրավունքն ապահովված է այլ անձանց պարտականություններով: Իրավաբանական պարտականությունը պարտավոր անձին ներկայացված վարքագծի պահանջն է, որին անձը պետք է հետևի, ի շահ իրավագործի, և որն ապահովված է պետական հարկադրանքով: *Պարտականությունը սահմանվում է ոչ թե կամայականորեն, այլ իրավական նորմերին համապատասխան, դրա համար էլ կողջվում է՝ իրավական:*

Ժողովրդավարական հասարակությանը բնորոշ է քաղաքացիների իրական (ոեալ) իրավունքների, ազատությունների ներդաշնակությունը նրանց պար-

⁷ **Воеводян Л.Д.** Юридический статус личности в России. Уч.пособ., ИНФРА-НОРМА. М., 1997, с.136.

⁸ **Герхард,** Социалистическое право и личность. М., 1971, с.239

տականությունների և հասարակության առջև պատասխանատվության հետ: Այսպես, ՀՀ Սահամանդրությունը, ընթացիկ օրենսդրությունը, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի համապատասխան, պահպանում են պետության անվտանգությունը, հասարակական կարգը, բնակչության բարեկեցությունը, իրավունքները, պարտականություններն ու օրինական շահերը: Դրան համապատասխան, ժողովրդավարական հասարակությունում, քաղաքացիների հավասար իրավունքներին համապատասխանում են հասարակության և պետության հանդեպ հավասար պարտականությունները: Հասարակությունում միայն անձի իրավունքների և պարտականությունների փոխկապակցվածությունն ու միասնությունը ապահովվում են անձի իրական ազատությունը: Իրավունքների և պարտականությունների միասնությունը մեր հասարակությունում հանդիսանում է անձնական և հասարակական շահերի, փոխադարձ պատասխանատվության և փոխադարձ սոցիալական պահանջների, քաղաքացու և իրավական պետության հավակնությունների ներդաշնակ զուգակցումն արտահայտող կարևորագույն սկզբունք՝ «չկան իրավունքներ առանց պարտականությունների և պարտականություններ առանց իրավունքների»⁹: Ընդ որում, իրավունքների և պարտականությունների միասնության մեջ արտահայտվում է սոցիալական արդարության գաղափարը արտահայտված է՝ յուրաքանչյուրն օժտված է ինչպես իրավունքներով, այնպես էլ պարտականություններով: Հարկ է նշել, որ իրավաբանական պարտականությունները սոցիալապես պայմանավորված են, քանզի չեն հանդիսանում կյանքի պայմաններից անկախ՝ ազատ կամքի արդունք¹⁰: Իրավական պետությունը ավելի ակտիվ դեր է խաղում յուրաքանչյուր մարդու կյանքում, սակայն ոչ թե վարքագծի ավելի խիստ իրավական կարգավորման, արգելքների և սահամանափակումների ներմուծման համար:

Իրավաբանական պարտականությունը, որպես սուբյեկտիվ իրավունքին թղթակցող տարր (հարաբերակից հասկացություն) հանդիսանում է այլ անձանց վրա ազդեցության հատուկ իրավական միջոց, որի կարիքն ունի անհատը, իր սուբյեկտիվ իրավունքների իրացման գործընթացում: Ընդ որում, պարտավոր անձի գործողությունները ուղղված են իրավագործի իրավունքների և օրինական շահերի բավարարմանը: Միևնույն ժամանակ, *պարտականությունը իրավունքների ապահովման եղանակն է*: Եթե սուբյեկտիվ իրավունքը անձի ազատության և իշխանության ոլորտն է, ապա իրավաբանական պարտականությունը՝ անհրաժեշտության, ենթարկման և հնազանդման ոլորտը: Իրավաբանական պարտականությունների *գործառույթային կոչումն է՝* իրավական կարգավորման ընդհանուր մեխանիզմում կատարելով իր աշխատանքը, թղթակցել (համապատասխանել) սուբյեկտիվ իրավունքներին, հաղորդելով անձի գործողություններին ճիշտ ընթացք: Իսկ *սոցիալական կոչումը՝* կազմավորել քաղաքացիների մոտ անրաժեշտ, պարտադիր իրավագիտակցություն, իրավական մշակույթ, ծառայել կարգավորիչ գործոն օրինականության ու իրավակարգի ամրապնդման համար:

Իրավաբանական պարտականության *բովանդակությունն* արտահայտվում է երկու տարատեսակներով.

1) Հօգուտ իրավահարաբերության այլ մասնակիցների իրավագոր անձնաց ակտիվ գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ (ակտիվ պարտականություն):

⁹ *Маркс К., Энгельс Ф.*, Соч. Т.22, М., 1967, с.235.

¹⁰ *Jellinek G.*, System der subjektiven öffentlichen Rechte, p. 86-87.

2) Իրավահարաբերության պարտականությունն արտահայտվում է իրավունքի նորմերով արգելված գործողություններից ձեռնպահ մնալու անհրաժեշտությամբ (պասիվ պարտականություն):

Միաժամանակ, գոյություն ունեն *ընդհանուր (համընդհանուր) իրավաբանական* պարտականություններ, որոնց բովանդակությունը անմիջականորեն չի բխում անձի սուբյեկտիվ իրավունքներից, որպես դրանց հարաբերակից հասկացություն կամ տարր: Այդ իրավաբանական պարտականությունները ապահովվում են հասարակական շահերի, բարիքների, արժեքների պահպանությունը, անձի ակտիվ գործողությունների ազատությունը, պաշտպանում անձի կյանքն ու արժանապատվությունը, պոզիտիվ ազատությունը և անձնական կյանքի այլ ոլորտները անօրինական միջամտությունից: Հետևաբար, այդպիսի իրավաբանական պարտականությունների նպատակն է ապահովել հասարակության, կոլլեկտիվի, անձանց օրինական շահերի պաշտպանությունը, անձի ակտիվ գործողությունների ազատությունը, պոզիտիվ ազատությունը և անձնական կյանքի այլ ոլորտները անօրինի միջամտությունից: Ընդհանրապես, ժողովրդավարական, իրավական երկրներում, համընդհանրապես իրավաբանական պարտականությունները ամրագրվում, երաշխավորվում են սահմանադրությամբ ստանալով սահմանադրական (հիմնական) պարտականությունների կնիք: Ավելին, սահմանադրական կապված չեն անձի կոնկրետ իրավական վիճակի հետ: Սահմանադրությամբ սահմանադրական իրավունքով ամրագրված պարտականություններն անձը կրում է անմիջականորեն հասարակության հանդեպ, իսկ քաղաքացին՝ պետության հանդեպ:

Մեր կատարած ուսումնասիրությունները վկայում են այն ասին, որ ԱՊՀ երկրների սահմանադրություններն հիմնական իրավունքների հետ միասին, ամրագրում են նաև քաղաքացիների հիմնական պարտականությունները: Դրանք են՝

- հարգել և պահպանել օրենքները,
- հարգել այլոց իրավունքները, ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,
- պաշտպանել հայրենիքը,
- հարգել պետական խորհրդանիշները,
- հարկերի և տուրքերի բարեխիղճ վճարումը,
- պահպանել բնությունը և շրջակա միջավայրը, պահպանել պատմության և մշակույթի հուշարձանները:

Մարդու և քաղաքացու պարտականություններն իրենց բնույթով խայտաբղետ են և առնչվում են հասարակական բազմաբնույթ հարաբերությունների ամենատարբեր ոլորտների հետ: Պարտականություններից ոմանք տարածվում են տվյալ պետության քաղաքացիների, իսկ մյուսները՝ տվյալ պետության տարածքում բնակվող բոլոր անձանց վրա: Որոշ պարտականությունների գոյությունը կարող է պայմանավորված լինել անձի իրավական կարգավիճակի բնույթով (ծառայող, ուսուցիչ, ուսանող, մեղադրյալ և այլն), ինչպես նաև, կազմակերպությանը կամ միավորմանն (քաղաքական, հասարակական, տնտեսական և այլն) անդամ ակցելու փաստով: Հետևաբար, անձի պարտականությունները կարող են կարգավորվել ինչպես իրավունքի բոլոր ճյուղերի նորմերով, այնպես էլ հասարակական, քաղաքական կազմակերպությունների կանոնադրություններով, որոնք չունեն իրավական բնույթ:

Ինչպես նշում է Բ. Էրգենը՝ մարդու և քաղաքացու պարտականությունները սահմանադրական նորմերում ամրագրված անձի իրավաչափ վարքագծի տեսակներն ու չափն են, որոնք ընդգրկում են (ներառում) են հասարակության յուրաքանչյուր անդամի վարքի նկատմամբ պահանջները, որոնց իրականացումը մի կողմից անհրաժեշտ է մյուս անձանց իրավունքների և ազատությունների ապահովման համար, իսկ մյուս կողմից՝ ժողովրդավարական հասարակության արդարացի պահանջների, հասարակական կարգի և բարեկեցության բավարարման ապահովման համար¹¹։ Ակնհայտ է, որ, իրավաբանական պարտականություններում, ինչպես և սուբյեկտիվ իրավունքներում, արտացոլված են մարդու վարքագծի շարժառիթները, նպատակները, հույզերը, որոնք արտահայտում են հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափություններն ու միտումները։ Միննույն ժամանակ, իրավաբանական պարտականության մեջ արտահայտված և անձին ուղղված պահանջը իրական է՝ հնարավոր չէ անձին ծանրաբեռնել այնպիսի պարտականությամբ, որը վերջինս երբեք չի կարող իրականացնել։ Այդ դրույթի իրավաբանական ուժը տարածվում է ինչպես դրական պարտականությունների, այնպես էլ արգելքների (նեգատիվ պարտականությունների) վրա։ Իրավաբանական պարտականության հատուկ խումբ են կազմում *իրավական արգելքները*, որոնք սահմանելով որոշակի ակտիվ գործողություններ կատարելուց զերծ մնալու անհրաժեշտություն, պարտավորեցնում են ձեռնպահ մնալ որոշակի ակտիվ գործողություններ կատարելուց, ինչպես նաև արգելում են կատարել որոշակի ակտիվ գործողություններ (խախտել քաղաքացիների իրավունքները, չարաշահել իշխանությունը և այլն)։ Դրանք արտացոլվում են պասիվ բնույթի իրավաբանական պարտականություններում։ Օրինակ՝ արգելվում է իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անձի կողմից՝ համարելով այն հանցագործություն, այն օրենքների կիրառումը, որոնք պաշտոնապես հրատարակված չեն, իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային ռասայական կրոնականատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով, պաշտոնատար անձնաց կողմից այնպիսի գործողությունների կատարումը, որոնց համար նրանք լիազորված չեն, և այլն։ Անվիճելի է, որ իրավաբանական արգելքները կյանքի են կոչվել հասարակության մեջ անցանկալի արարքների հետևանքով։ Պոզիտիվ և նեգատիվ պարտականությունների մեջ ներդրված է որոշակի անհրաժեշտություն, որը բացահայտվում է մարդու գործունեության վերջնական արդյունքի միջոցով¹²։ Հետևաբար, իրավական արգելքների սոցիալ-իրավական նշանակությունն է՝ հասարակական շահերի, բարիքների, կյանքի, առողջության, պատվի, արժանապատվության և այն բարիքների պաշտպանությունը, առանց որոնց անհնարին է դառնում անձի բնականոն կենսագործնեությունն ու զարգացումը։ Միննույն ժամանակ, ազատ ժողովրդավարական հասարակությունում, իրավական պետությունը իր բոլոր միջոցներով ապահովվում է իրավաբանական պարտականություններում արտացոլված վարքածի իրավական անհրաժեշտություն։ Այդպիսի միջոցներից է նախ և առաջ, համոզմունքը, իսկ եթե այն բավարար չէ անձանց մոտ անհրաժեշտ վարքագծի դրսևորման համար, ապա կիրառվում են

¹¹ *Эбзеев Б.С.* Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации, М., 2005, с. 218.

¹² *Мальцев Г.В.* Социалистическое право и свобода личности (теоретические вопросы), с. 71-73, 76, *Архангельский Л.М.* Курс марксистско-ленинской этики, М., 1974, с. 200-201

պետական հարկադրանքի միջոցները: Իրավական արգելքների թվին են դասվում սահմանադրական արգելքները:

Ուշագրավ է նաև Ն. Այվազյանի դիրքորոշումը իրավաբանական պարտականության վերաբերյալ, որի համաձայն. «Իրավաբանական պարտականությունը՝ անձին վերապահված պարտադիր, անհրաժեշտ վարքագծի չափն է»¹³: Իրավաբանական պարտականություններին բնորոշ առանձնահատկությունները (ի տարբերություն բարոյական բնույթի, սովորության պարտականությունների)՝ դրանց միանշանակ հրամայական, անառարկելի լինելն է, ինչպես նաև կողմերից մեկի, տվյալ դեպքում պետության իրավունքը՝ պահանջելու մյուս կողմից տվյալ դեպքում քաղաքացուց կատարելու իր վրա դրված պարտականությունը: Ավելին, Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված պարտականությունների չկատարման կամ անբարեխիղճ կատարման դեպքում կարող է վրա հասնել պետական հարկադրանքի ներգործության կիրառումը: Ուշադրության է արժանի Լ.Դ. Վոևոդինի և Ե.Ա. Լուկաշևայի տեսակետը, համաձայն որի, պետական հարկադրանքը չի կարող հանդիսանալ իրավական պարտականության հիմնատարր, բնորոշ գիծ: Միևնույն ժամանակ, հեղինակները այդպիսի տարր են համարում սահմանադրության և օրենքների պահանջների ոչ պատշաճ կատարման հետևանքով վրա հասած պատասխանատվությունը¹⁴: Սակայն, ինչպես գիտենք, «ոչ պատշաճ իրականացման համար պատասխանատվությունը» պետական հարկադրանքի իրավական միջոցներից է: Իրավաբանական պարտասխանատվության բնորոշման մեջ «օրենքի պահանջի ոչ պատշաճ կատարման հետևանքով առաջացած պատասխանատվության» հասկացության ընդգրկումը չի համապատասխանում հեղինակների այն կարծիքին, որ անձի իրավունքներն ու պարտականությունները սահմանող, սահմանադրական նորմերը օժտված չեն սանկցիայով: Մինչդեռ, հայտնի է, որ սանկցիան իրավանորմի այն տարր է, որում սահմանվում է, թե ինչպիսի պետական տույժի միջոցներ կարող են կիրառվել իրավանորմով նախատեսված վարքի կանոնները խախտելու համար: Լ.Դ. Վոևոդինը հետևողական չէ նաև «պատասխանատվության» հասկացության բացահայտման հարցում: Մի կողմից նա դիտարկում է, պատասխանատվությունը որպես «օրենքի պահանջի ոչ պատշաճ կատարման պատասխանատվություն», այսինքն՝ իրավախախտման հետևանքով առաջացած պատասխանատվություն: Մյուս կողմից, պարտականությունների մեջ որպես էական հատկանիշ տեսնում է օրենքի պահանջի կատարումը, մեկնաբանելով, որ պարտականությունը սուբյեկտին շաղկապում է գոյություն ունեցող իրավակարգի հետ, ապահովվելով պահանջների անշեղ կատարում: Անկասկած խոսքը վերաբերվում է անձի պոզիտիվ (ակտիվ) պարտականություններին:

Համամիտ չենք Լ. Վոևոդինի հետ նաև նրանում, որ անձի իրավունքը ներկայացվում է որպես ազատության դրսևորում, իսկ պարտականությունը՝ որոշուկի վերապահումներով պատասխանատվություն: Կարծում ենք, ազատությունը և

¹³ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (պատասխանատու խմբագիր՝ Այվազյան Ն.Ա.), Երևան, 2008, էջ 206-207:

¹⁴ **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России. Уч.пособ., ИНФРА-НОРМА, М., 1997 с. 139; Նույնի **Конституционные права и обязанности советских граждан**, М., 1972, с. 33-35, 68; **Лукашева Е.А.** Права человека. Норма. М., 2008, с.145-146.

պատասխանատվությունը հավասարապես բնորոշ են ինչպես անձի իրավունքներին, այնպես էլ պարտականություններին: Ինչպես արդեն նշել ենք, անթույլատրելի է ազատությունների չարաշահումը: Հետևաբար, իրավունքին, ինչպես և պարտականությանը բնորոշ է անձի պատասխանատվությունը դրա ոչ պատշաճ իրականացման համար: Ժողովրդավարական պետության մեջ անձի յուրաքանչյուր պարտականության հիմքում ընկած է սոցիալական ազատության չափը, որպես անձի սոցիալական վարքագծի անհրաժեշտություն: Հարկ է նշել, որ Լ. Վոելդին անձի իրավունքները բնութագրող ազատության ներքո ընկալում է հնարավորություն ինքնուրույն ընտրելու վարքագիծը, ազատությունը: Այլ խոսքով, նա նկատի ունի անձի ընտրության հնարավորությունը, որը հավասարապես կարևոր է ինչպես իրավունքների, այնպես էլ իրավաբանական պարտականությունների իրացման համար:

Ի վերջո իրավաբանական պարտականությունը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. *Իրավաբանական պարտականությունը անձի վարքագծի սոցիալապես պայմանավորված և երաշխավորված հնարավորությունն է որի սահմանները որոշվում են օբյեկտիվ իրավունքով (սահմանդրությամբ, օրենքներով), անձնական և հասարակական շահերի և պահանջմունքների բավարարմեն նպատակով որոշակի բարիքների, արժեքների օգտագործմամբ:*

Վերոգրայլը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավաբանական պարտականությունները և իրավունքը կազմում են միասնական համակարգ: Եթե սուբյեկտիվ իրավունքի բովանդակությունը թույլատրվող վարքագծի չափն է, ապա պարտականության բովանդակությունը՝ իրավահարաբերությունում պարտադիր, անհրաժեշտ վարքի չափը: Պարտավոր անձին վերագրվում է պատշաճ վարքի չափ իրավագոր անձի շահերի բավարարման նպատակով: Ընդ որում, իրավահարաբերություններում իրավաբանական իրավունքներն ու պարտականությունները դեռևս սուբյեկտի բուն վարքը չէ, այլ իրավունքի նորմերով նախատեսված վարք տրամադրելու հնարավորությունն է, կամ անհրաժեշտությունը: Սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների իրացումը նշանակում է իրավահարաբերության մասնակիցների փաստացի վարքագծի վրա նրանց ազդեցությունը, նրանցում դրաված թույլատրելի և պատշաճ վարքագծի մարմնավորումն է իրական հասարակական հարաբերություններում:

Лилит Казанчян – Обязанности личности – основной элемент правового статуса личности. – В данной научной статье рассматривается фундаментальное значение понятия «обязанности личности» в формировании правового статуса личности в современном демократическом государстве. В частности, раскрывается разнообразие трактовок содержания «обязанностей личности», его структурных элементов, правоведами в контексте теории государства и права. Особое место уделяется вопросу взаимоотношений прав и обязанностей личности. а так же раскрывается социально-юридическое значение обязанностей-как особой формы юридической связи между государством и личностью.

Одновременно, подчеркивается разнообразие видов обязанностей личности таких как общие запреты, юридические запреты, и т.д.

Lilit Kazanchian – *Obligations –the main element of the legal status of an individual*. – This scientific article is dedicated to the fundamental concepts of «obligation (liability)» in the formation of the legal status of an individual in a modern democratic state.

Particularly, the author reveals the diversity of interpretations of the content of «the obligation of the person», its structural elements, by legists in the context of theory of state and law. A special place is given to the question of the relationship of the rights and duties of an individual. and as disclosed socio-legal duties-as a special form of a legal link between a state and an individual.

At the same time, the article stresses the diversity of the duties of the individual such as general, legal prohibitions, ets.

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԱՐԺԵՔԱՅԻՆ ԲԱԶՄԱԶՍՓՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ Կառավարման ակադեմիայի մագիստրանտ

Հոդվածը նվիրված է քաղաքական մշակույթի՝ որպես քաղաքագիտության շրջանակներում ուսումնասիրության նոր կատեգորիայի առանձնահատկությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում քաղաքական մշակույթի արժեքային բազմաչափության բացահայտմանը: Աշխատանքում անդրադարձել ենք քաղաքական մշակույթի ուսումնասիրության փուլերին, ներկայացրել այն գործառույթները, որոնք քաղաքական մշակույթը կատարում է հասարակության մեջ: Հանգամանալից կերպով ներկայացրել ենք նաև քաղաքական մշակույթի կառուցվածքը, մասնավորապես՝ քաղաքական կողմնորոշումները, քաղաքական կարծրատիպերը, միֆերն ու խորհրդանիշները՝ զուգահեռներ անցկացնելով Հայաստանում քաղաքական մշակույթի առանձնահատկությունների հետ:

Բանալի բառեր. քաղաքական մշակույթ, քաղաքական համակարգ, քաղաքական կողմնորոշում, քաղաքական վարք, արժեքներ, քաղաքական համոզմունքներ:

Յուրաքանչյուր գիտությանը բնորոշ է ոլորտի սահմանների ճկունություն: Քաղաքագիտությունն էլ այս առումով բացառություն չէ. այն հաճախ բախվում է սեփական սահմաններից դուրս գալու և երևույթների բացատրությունը սահմաններից դուրս փնտրելու անհրաժեշտությանը: Ոմանք որոշ երևույթների համար հիմնավորումներ փնտրում են տնտեսության մեջ, մյուսները՝ հասարակական կարգի, մի մասն էլ՝ մշակույթի մեջ: Այս պարագայում մշակույթային հիմնավորումները բուն քաղաքականության մեջ չեն մտնում: Մշակույթի և քաղաքականության հատման կետում էլ ձևավորվում է «քաղաքական մշակույթ» հասկացությունը, որի ուսումնասիրությամբ պայմանավորվեց քաղաքագիտության մեջ նոր ուղղության առաջացումը:

Քաղաքական մշակույթի հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված էր ոչ միայն տեսական զարգացումներով, այլև մի շարք քաղաքական խնդիրներով, որոնք առաջ եկան XX դարի ընթացքում: Կարելի է առանձնացնել երեք շրջան՝

Առաջին շրջանը սկսվում է 20-30-ականներին, երբ առաջնային էր սոցիալական կայունության խնդիրը: Քաղաքական մշակույթի գաղափարի զարգացման առաջին փուլը կապված էր սոցիալական կոնֆլիկտների հաղթահարման ուղիների որոնման հետ. քաղաքական համակարգերի ուսումնասիրությունն այլևս անհրաժեշտ արդյունքի չէր հանգեցնում, և քաղաքագետները դիմեցին քաղաքական վարքի հոգեբանական և սոցիալական ասպեկտների ուսումնասիրությանը:

Երկրորդ շրջանը, որը սկսվեց 60-ականներից, կապված էր ընթացիկ սոցիալական վերակառուցմանը համապատասխան օրակարգում քաղաքական համակարգերի բարեփոխման հարցի բարձրացման հետ: Հետաքրքրությունը

կապված էր նաև ապագա դրության գործընթացների և երրորդ աշխարհի երկրներում ժողովրդավարական տրամադրությունների զարգացման հետ:

Երրորդ շրջանը կապված էր Արևելյան Եվրոպայում ժողովրդավարացման գործընթացների հետ՝ հատկապես հետխորհրդային երկրներում:

«Քաղաքական մշակույթ» եզրույթը պարբերական կիրառում է ստացել XX դարի 50-ականներից: Մինչ եզրույթի կիրառումը բազմաթիվ պատմաբաններ և մարդաբաններ անդրադարձել են ազգային բնավորությանը, և «ազգային բնավորությունը», ըստ էության, «քաղաքական մշակույթ» եզրույթի նախատիպն էր¹:

«Քաղաքական մշակույթ» եզրույթն առաջին անգամ կիրառվել է գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերի կողմից 18-րդ դարում², իսկ քաղաքագիտություն այն ներմուծեց ամերիկացի քաղաքագետ Գ. Ալմոնդը: Մշակելով քաղաքական համակարգի մոդել՝ Ալմոնդն ընդգծեց ոչ միայն դրա ֆորմալ կառուցվածքը, այլ նաև՝ քաղաքական համակարգի հանդեպ սուբյեկտիվ կողմնորոշումը: Վերջինս էլ կոչվեց քաղաքական մշակույթ³: Իր առաջին ուսումնասիրություններում Ալմոնդը սահմանեց քաղաքական մշակույթը որպես քաղաքական օբյեկտների հանդեպ կողմնորոշման հատուկ տեսակ, որի մեջ մտնում է նաև քաղաքական համակարգը⁴: Նրա համախոհները՝ Լ. Պայը և Ս. Վեբերը ավելացրին այդ սահմանմանը քաղաքական մշակույթի մեկնաբանությունը՝ որպես «քաղաքականության սուբյեկտիվ հոսք, որը իմաստ և կարևորություն է հաղորդում քաղաքական որոշումներին, կարգավորում ինստիտուտները և սոցիալական իմաստ հաղորդում անհատական գործողություններին»⁵:

Հայաստանի Հանրապետությունը վերջին քսանյակում անցել է անցումային փուլին բնորոշ մի շարք փոփոխությունների միջով, որոնք իրենց անդրադարձել են ոչ միայն պետության՝ որպես քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտի վրա, այլ նաև հասարակության և վերջինիս կողմից պետության յուրովի ընկալման վրա:

Քաղաքական մշակույթը, որն առավել համապարփակ սահմանմամբ կարելի է ներկայացնել որպես քաղաքական համակարգի և նրա բաղադրիչների, ինչպես նաև քաղաքական վարքի կաղապարների հանդեպ կողմնորոշումների և դիրքորոշումների համակարգ, հասարակության մեջ կատարում է հատուկ գործառնություններ

1. Ինդենտիֆիկացիա՝ իրացնելով մարդու պահանջը՝ խմբային պատկանելիությունը հասկանալու տեսանկյունից,
2. Օրիենտացիա՝ բացատրելով քաղաքական երևույթների իմաստը,
3. Ադապտացիա և սոցիալիզացիա քաղաքական վարքի հետ ծանոթացման միջոցով,
4. Ինտեգրացիա, որն ուղղված է արժեքների պահպանմանն ու դրանց շուրջ տարատեսակ խմբերին հավաքագրելուն,

¹ *Е.Б. Шестопал*, Политическая психология, Москва, ИНФРА-М, 2002, էջ 95-97

² *Мелешкина Е.Ю.* Политический процесс: основные аспекты и способы анализа. - М.: Весь Мир, 2001. - 304 с, էջ 93

³ *М.А. Васильяк*, Политология, Москва, Гардарики, 2009, էջ 363

⁴ *Almond G.* Comparative Political System //Journal of Politics, 1956. Vol. 18.№3

⁵ *Almond G.*, Verba S. The Civil Culture. Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton, 1963, էջ 14

5. Հաղորդակցություն՝ իրականացնելով սուբյեկտների և ինստիտուտների փոխազդեցություն, որի հիմքում կարծրատիպեր են, միֆեր, խորհրդանիշներ⁶:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական մշակույթի բազմաչափությունը նախևառաջ դիտարկենք Գ. Ալմոնդի ու Ս. Վեբերի կողմնորոշումների համակարգի շրջանակներում: Նրանք կարծում էին, որ քաղաքական համակարգի կառուցվածքը բաղկացած է հետևյալ տեսակի կողմնորոշումներից:

1. Կոգնիտիվ կողմնորոշում՝ քաղաքական համակարգի, դրա դերի և քաղաքական դերեր ստանձնաձևների մասին գիտելիք և համոզմունք:

2. Աֆեկտիվ՝ քաղաքական համակարգի, դրա դերի և քաղաքական դերեր ստանձնաձևների մասին զգացմունքներ,

3. Գնահատողական՝ քաղաքական օբյեկտների մասին հաոգմունք, կարծիք⁷:

Այսօր պետք է ցավով փաստենք, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական համակարգի, ինչպես նաև քաղաքական դերակատարների հանդեպ կա վստահության պակաս, որի հիմքում կարելի է գտնել և՛ կոգնիտիվ, և՛ աֆեկտիվ, և՛ գնահատողական տարրեր: Քաղաքացիների շրջանում արված մեր հարցումների⁸ արդյունքները միայն հաստատում են վստահության ճգնաժամը, որն ապրում է հասարակությունը: Հարցումը, որը վերաբերում էր Նախագահի, Ազգային ժողովի և Կառավարության հանդեպ քաղաքացիների վստահությանը, կազմված էր 3 հարցից՝ յուրաքանչյուր հարցի համար ներկայացնելով պատասխանների 4-ական տարբերակ: Այն հարցին, թե արդյոք վստահում են Նախագահին, հարցման մասնակիցներից 9-ը պատասխանել են, որ միանգամայն վստահում են, 55-ը՝ ընդհանրապես չեն վստահում, 25-ը վստահում են մասամբ, իսկ 11-ը դժվարանում են պատասխանել: Հարցումների արդյունքների համաձայն՝ Կառավարությանը միանգամայն վստահում են 6-ը, ընդհանրապես չեն վստահում 63-ը, մասամբ վստահում են 22-ը, դժվարացան պատասխանել 9-ը, իսկ ինչ վերաբերում է Ազգային ժողովին, ապա միանգամայն վստահում են 6-ը, ընդհանրապես չեն վստահում 68-ը, մասամբ վստահում են 18-ը, և 8-ը դժվարանում են պատասխանել:

Քաղաքական կողմնորոշումների կառուցվածքի հետ կապված ուսումնասիրություններում իր ներդրումն ունի Ու. Ռոզենֆաուդը, ով քաղաքական օբյեկտների հանդեպ կողմնորոշումների երեք տեսակ է առաջարկել.

1. Պետական կառավարման ինստիտուտների հանդեպ կողմնորոշում՝ ա) վարչակարգի հանդեպ կողմնորոշում, բ) տարատեսակ պահանջների և իրենց պահանջներին ի պատասխան արված արձագանքների հանդեպ կողմնորոշումներ:

Պետական կառավարման ինստիտուտների հանդեպ վստահության ճգնաժամը ակնհայտ կերպով արտահայտված էր հարցման արդյունքում, իսկ ինչ վերաբերում է վարչակարգին, ապա հաճախ կարելի է հանդիպել քաղաքացիների կողմից վարչակարգի ավտորիտար կամ տոտալիտար որակումների՝ չնայած

⁶ *М.А. Васьлик*, Политология, Москва, Гардарики, 2009, էջ 364

⁷ *Мелепкина Е.Ю.* Политический процесс: основные аспекты и способы анализа. - М.: Весь Мир, 2001. - 304 с, էջ 97

⁸ Իրականացրել ենք անկետային հարցում համացանցի և պատահականության սկզբունքով ընտրված հեռախոսահամարների զանգեր կատարելու միջոցով:

նրան, որ հաստատված են ժողովրդավարական վարչակարգին բնորոշ բոլոր կառուցակարգերը: Նման բնորոշման պատճառները կարելի է փնտրել ինչպես խոսքի անպատժելիության հասնող ազատության ձգտման նկրտումներում, այնպես էլ՝ ժողովրդավարական կառուցակարգերի ոչ միշտ արդյունավետ գործունեության մեջ:

2. Կողմնորոշումներ քաղաքական համակարգում «այլոցե հանդեպ՝ ա) քաղաքական ինդենտիֆիկացիա (անհատի՝ որոշակի սոցիալական խմբի, կուսակցության պատկանելիություն), բ) քաղաքական համոզմունքներ, որոնք արտահայտում են վերաբերմունքը այլ քաղաքական խմբերի հանդեպ «լավ-վատ» տեսանկյունից, գ) հիմնական նորմաների և կանոնների մասին պատկերացումներ, որոնք պետք է կարգավորեն քաղաքական համակարգի գործունեությունը:

Հայաստանյան քաղաքական համակարգի խիստ կուսակցականացված լինելու պատճառով հաճախ «յուրայինների և օտարների» խնդիրը սուր արտահայտված է կուսակցական հիմքով: Եվ կախված այն հանգամանքից, թե համագործակցային կամ մրցակցային ինչպիսի հարաբերություններում են այն կուսակցությունները, որոնց անդամակցում են, կամ, առնվազն, հարում, կախված է միմյանց «լավ-վատ» գնահատականներ տալը:

3. Կողմնորոշումներ, որոնք վերաբերում են սեփական գործունեությանը՝ ա) քաղաքական մրցունակություն, բ) քաղաքական գործունեություն⁹:

Քաղաքական համակարգում սեփական մրցունակությանն ու քաղաքական գործունեության մասին պատկերացումներն ու կողմնորոշումները կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ իշխող կուսակցությանը անդամակցելու դեպքում կարելի է օժտվել բավականաչափ ռեսուրսներով՝ քաղաքական կյանքում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար, իսկ ոչ իշխանական կուսակցությանը հարելու պարագայում մասնակցության հիմնական ռեսուրսը բողոքներն ու ցույցերն են, որոնք, ինչպես ցույց են տալիս տարատեսակ քաղաքացիական շարժումների արդեն իսկ գրանցած սակավաթիվ, սակայն, հստակ օրինակները, նույնպես օժվում է հաջողությամբ:

Քաղաքական մշակույթի բաղադրիչներ են նաև կարծրատիպերը, միֆերը, խորհրդանիշները:

Քաղաքական կարծրատիպը պարզեցված, սխեմատիկ, դեֆորմացված և արժեքային կողմնորոշում պարունակող պատկերացում է քաղաքական օբյեկտների մասին: Քաղաքական կարծրատիպերի շրջանակներում հայաստանյան իրականության շրջանակներում հաճախ հանդիպում ենք անձնավորման, երբ այս կամ այն երևույթների պատճառները կապվում են կոնկրետ անձանց կամ խմբերի գործունեության հետ, անձնավորումը արտահայտված է նաև կուսակցությունների ընկալման տեսանկյունից, էմոցիոնալ երանգավորում իրադարձությունների ընկալման և մեկնաբանման առումով. հաճախ լսում ենք ոչ թե պատճառահետևանքային կապերի կամ փաստարկների հիման վրա գնահատականներ, այլ՝ հուզական:

Քաղաքական միֆ՝ ստատիկ կերպար, որի հիմքում համոզմունքներն են և որոնք թույլ են տալիս մեկնաբանել շփոթմունք առաջացնող փաստերն ու իրադարձությունները համակարգել կոլեկտիվ ներկայի և ապագայի տեսլականները:

⁹ *М.А. Васьлик*, Политология, Москва, Гардарики, 2009, էջ 365

Միֆերն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ որևէ խումբ կամ հասարակության գերակշռող մասը բախվում է նոր, անհասկանալի և իր վերահսկողությունից դուրս երևույթների, որոնց մեջ կա ակնհայտ կամ պարտական ասպանալիք՝ ուղղված իր գոյությանը: Հոգեբանության տեսանկյունից միֆի ստեղծումը կապված է արմատական փոփոխությունների տրամաբանությամբ բացատրելու անկարողությունից:

Քաղաքական միֆերի համար կարելի է առանձնացնել հետևյալ 4 թեմաները՝ դավադրություն, ոսկե դար, ամենափրկիչ-հերոս, միասնություն:

Դավադրության մասին միֆը մեկնաբանում է բացասաբար ընկալվող երեվույթը որպես «մութ ուժերի» գաղտնի ազդեցություն: Դրանք կարող են լինել ազգի թշնամիներ, սեկտաների, գաղտնի ծառայությունների գործակալներ և այլն: Հայաստանյան քաղաքական մշակույթում որպես նման բաղադրիչ կարելի է առանձնացնել ազգի թշնամիների կողմից դավադրաբար ցեղասպանության փորձի կրկնության միֆը: Ազգի հանդեպ ցանկացած ոտնձգություն որակվում և գնահատվում է հիմնականում էմոցիոնալ հողի վրա որպես ցեղասպանություն: Վերջինիս վառ օրինակ էր Քեսաբում տեղի ունեցած դեպքերի գնահատականը հասարակության կողմից որպես ցեղասպանություն, և ոչ տեղական լրատվամիջոցների կողմից այդ միֆի չարաշահումը և ստահող տեղեկությունների և նկարների տարածումը:

Ոսկե դարի մասին միֆը կամ կոչ է անում վերադառնալ արմատներին՝ լուսավոր անցյալ, կամ՝ դեպի պայծառ ապագա՝ դիտարկելով նախորդող շրջանները որպես նախապատմություն: Հայաստանյան իրականությունում մեծապես տարածված է «ծովից ծով Հայաստան» ոսկեդարյան միֆը:

Ամենափրկիչ հերոսի մասին միֆը առանձին կերպարներին օժտում է խարիզմատիկ հատկանիշներով: Հասարակությունը, հաճախ հայտնվելով վստահության և լեզհիտիմության ճգնաժամերում, կարծես թե սպասում է որևէ քաղաքական գործչի, ով միանգամայն կտարբերվի համակարգում արդեն իսկ գործունեություն ծավալող քաղաքական գործիչներից: Ամենափրկիչ հերոսի միֆի շնորհիվ նման խարիզմատիկ հատկանիշներով հասարակությունն օժտեց Ռաֆֆի Հովհաննիսյանին, ով նման դերի արժանացավ իր «ջինսային քաղաքականության» շնորհիվ:

Միասնության մասին միֆը հիմնված է «ընկերներ-հակառակորդներ», «յուրայիններ-օտարներ», «մենք-նրանք» հակադրության վրա. «նրանք» են մեր դրժբախտությունների պատճառը և պետք է միավորվել նրանց դեմ: Միասնության միֆի անբաժանելի մասն է դարձել մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի «Ռ՝վ, հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» տողերը: Միասնության միֆը բավականին խորը արմատներ ունի հայ ժողովրդի գիտակցության մեջ, որի առաջին և գլխավոր պատճառը աշխարհրասփյուռ հայությունն է: Սփյուռքը՝ որպես հայաստանյան քաղաքական գործընթացներում կարևոր ինստիտուտ, իր միասնական գործունեության շնորհիվ հստակ հաջողություններ ամրագրել է՝ հատկապես հայկական շահերի լոբբինգի շրջանակներում:

Քաղաքական խորհրդանիշը նշան է, որը կատարում է հաղորդակցական գործառույթ անհատի և իշխանության մեջ: Որպեսզի խորհրդանիշը հաղորդակցական գործառույթ իրականացնի, այն պետք է ընդունելի լինի և համընդհանուր նշանակություն ունենա շատերի համար և դրա իմաստը պետք է ինտուիտիվ

կերպով ընկալվի որոշակի խմբի կողմից: Քաղաքական խորհրդանիշները հատկապես կարևոր են հայ ժողովրդի համար՝ հաշվի առնելով օտարության մեջ ապրող մեծաքանակ հայերին, որոնց միջև պետք է հստակ հաղորդակացկան կապեր ապահովվի հայրենիքի հետ: Նման խոչիդանիշներ են դրոշը, գերբը, հիմնը, պատմական ամսաթվերը, իսկ ներքաղաքական գործընթացներում կարելի է առանձնացնել նաև քաղաքական արարողակարգերը՝ ցույցերը, մասնավորապես մարտիմեկյան հավաքները, որոնք 2008 թվականից ի վեր դարձել են խորհրդանշանական: Նման խորհրդանշական բնույթ ունի նաև Ազատության հրապարակը:

Առանձնացնում են քաղաքական մշակույթի երեք տեսակ՝

1. *Հայրիշխանական* տեսակին բնորոշ են քաղաքացիների կողմնորոշում տեղական արժեքների հանդեպ՝ համայնք, գյուղ և այլն: Քաղաքական համակարգի մասին տեղեկությունն, առհասարակ, բացակայում է և չկան ակնկալիքներ համակարգից:

2. *Հպատակեցնող* տեսակը բնորոշվում է քաղաքացիների՝ քաղաքական համակարգի հանդեպ պասիվ վերաբերմունքով: Այս պարագայում անհատն արդեն կողմնորոշված է դեպի քաղաքական համակարգ, ունի դրա հետ կապված որոշակի ակնկալիքներ, բայց միևնույն ժամանակ զգուշանում է սանկցիաներից:

3. *Ակտիվ կամ մասնակցային* տիպը առանձնանում է անհատների քաղաքական կյանքում ակտիվ ներգրավվածությամբ և մասնակցությամբ:

Սակայն, իրական կյանքում, ինչպես նշում է Ալմոնդը, քաղաքական մշակույթը որևէ հասարակությունում իրենից ներկայացնում է կոմբինացիա՝ քաղաքական մշակույթի տարբեր տեսակների միախառնում: Նրա ուսումնասիրությունների կենտրոնում հայտնվեցին նման կոմբինացիաների 3 տեսակ: Ժողովրդավարական արդյունաբերական քաղաքական համակարգին ներհատուկ է հետևյալ համադրությունը՝ 60% ակտիվ մշակույթի ներկայացուցիչներ, 30% հըպատակեցնող, 10% հայրիշխանական, ավտորիտար անցումային համակարգերի դեպքում՝ 30, 40 և 30% համապատասխանաբար, իսկ ժողովրդավարական մինչարդյունաբերական հասարակություններին՝ 20, 20, 60%:

Ժողովրդավարական արդյունաբերական քաղաքական համակարգերին, ըստ Ալմոնդի, համապատասխանում է քաղաքացիական քաղաքական մշակույթը, որի հիմնական հատկանիշներն են քաղաքական ինստիտուտների լեգիտիմության առումով փոխզիջումը, հանդուրժողականությունը այլ արժեքների և շահերի հանդեպ¹⁰:

Ինչ վերաբերում է հայաստանյան քաղաքական մշակույթի դասակարգմանը, ապա դիտվում է երեք տեսակն էլ: Ծայրամասային շրջաններում գերիշխում է հայրիշխանական տեսակը, քանի որ քաղաքական համակարգի մասին գիտելիքները, սեփական որոշումները, ընտրություններում որևէ թեկնածուին նախապատվություն տալը հաճախ սկսվում և ավարտվում է գյուղապետի հեղինակությամբ: Հպատակեցնող տարրերի նույնպես կարելի է հանդիպել հայաստանյան քաղաքական մշակույթում՝ հատկապես հաշվի առնելով վարչական ռեսուրսները, որոնք հաճախ կիրառվում են իշխանության կողմից: Բողոք-ցույցերին մասնակցելու մեծ ցանկության դեպքում անգամ պետական համակարգում աշխա-

¹⁰ *М.А. Васьилик*, Политология, Москва, Гардарики, 2009, էջ 366-371

տողները խուսափում են կամքի նմանատիպ դրսևորումներից հաշվի առնելով աշխատանքից ազատվելու սանկցիաների հավանականությունը: Այդուհանդերձ, պետք է նշենք, որ քաղաքներում, հատկապես՝ Երևանում, գերակշռում է ակտիվ մասնակցային տիպը:

Арман Саргсян – *Ценностная многомерность политической культуры в Республике Армения.* – Статья посвящена раскрытию особенностей политической культуры как новой категории политической науки, а также многомерности политической культуры в Республике Армения. В статье мы рассматриваем этапы исследования политической культуры, функции которые выполняет политическая культура в обществе. В статье также представлена структура политической культуры, в частности политические ориентации, стереотипы, мифы и символы, проводятся параллели с особенностями политической культуры в Армении.

Arman Sargsyan – *Valuational multidimensionality of political culture in the Republic of Armenia.* – The article is dedicated to the revelation of the peculiarities of the political culture as a new category in political science, as well as of the multidimensionality of the political culture in the Republic of Armenia. In the article a reference has been made to the phases of investigation of the political culture with the representation of the functions that it implements in the society. We have also represented the structure of political culture, in particular political orientations, stereotypes, myths and symbols, drawing parallels with the peculiarities of the political culture in Armenia.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ Բյուրո – Կառավարության և Խորհրդային Ռուսաստանի
բանակցությունների առաջին փուլը 3

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ իրականության և հանրային կյանքի
թերություններն ըստ «Արմենիա» պարբերականի 15

ВАЛЕРИ ТУНЯН

Лазаревский формат туркманчайского мира 1828 г..... 33

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Մեղքերի թողության երևույթի մի առանձնահատկություն
միջնադարյան աղբյուրներում 51

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Պատարագների փոխհատուցման խնդիրը 60

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՅԱՆ

Պայքար վրացական եկեղեցու ինքնավարության
վերականգնման համար (1906-1907թթ.) 65

ԱՐՄԱՆ ԽԱՉԻԿՅԱՆ

Եվրոպական Միության ծագման գաղափարը..... 75

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կիլիկիայի Հայոց կաթողիկոսության խնդիրը 1894-1902թթ. 81

ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ստեփանոս Սալմաստեցի և Միքայել Սեֆաստացի
կաթողիկոսների հայեցակարգերը հայ
ժողովրդի ազատագրության վերաբերյալ..... 89

ТАРОН САКОЯН

Из военно - дипломатической истории семилетней
войны (1756 - 1763) 95

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Հայրենիքի իմաստավորումը Ավ. Բասիակյանի
չափածո լեզենդներում..... 102

ՄՈՒՇԵՂ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Գուրգեն Մահարին և քրիստոնեությունը..... 111

ԱՐՄԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

Նեոռոմանտիզմի դրսևորումը Դանիել
Վարուժանի ստեղծագործության մեջ..... 119

ՄԱՐԻՆԵ ԱՆԴՐԱՍՅԱՆ

Ամերիկայի սոցիալական կյանքի խնդիրների
դրստորումը Չիկերի պատմվածքներում..... 133

ՏԱԹԵՎԻԿ ԱՇՉՅԱՆ

«Անի» ամսագրի հիմնադրման և գրական քաղաքականության
կազմակերպման յուրահատկությունները 138

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Հայրենական պատերազմի թեման
Սերո Խանգադյանի պատմվածքներում 145

ԳԵՎՈՐԳ ԷՍԻՆ-ՏԵՐՅԱՆ

Վահան Տերյանի նամակները՝ Պողոս Մակինցյանի արխիվում 151

ԱԻԴԱ ՍԱՐԶԱՏՅԱՆ

Կրկնությունների խորհուրդն ու ոճական
արժեքը Համո Սահյանի քնարերգության մեջ 168

МАРАТ ЗУРАБЯН

Игра слов как художественный прием 180

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը
Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում..... 193

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

XIX դարի գրական լեզվի հարցերը Ստ. Նազարյանի
«Հանդէս նոր հայախօսութեան» աշխատության մեջ..... 206

SONIK ABRAHAMYAN

Abbreviations and their use in the internet 215

ASTGHIK SIMONYAN

Persuasion in discourse 220

ՏԻԳՐԱՆ ԽԱՌԱՏՅԱՆ

Մասնագիտական բառապաշարի ուսուցման
ճանաչողական-լեզվական մոտեցումը 225

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԻ ՃԱՂԱՐՅԱՆ

Ներդրումային դիսկերի գնահատումը
հավանականությունների բաշխման միջոցով..... 232

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՀՈՍՍԵՐՆ ՔԻԱՍԱՐԻ

Տարածքի զբոսաշրջային ներուժը և ռեսուրսները.
Էությունը, բնութագիրը և գնահատումը..... 240

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Հումանիզմը նոր հազարամյակի
հիմնախնդիրների համատեքստում..... 249

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Ընտանիքի ինստիտուտի առանձնահատկությունները
փոխակերպվող հասարակությունում..... 257

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ, ՌՈՒԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Արժեքային կողմնորոշումների դերը անձի
զարգացման գործընթացում..... 263

ՍԱՐԳԻՍ ԲԱԼԲԱԲՅԱՆ

Գազիկ Հովունցի երկու պիեսները կոնտրաբասի
և դաշնամուրի համար (1972)..... 269

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

Պարտականությունները, որպես անձի
իրավական կարգավիճակի հիմնատարր..... 277

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Քաղաքական մշակույթի արժեքային բազմաչափությունը
Հայաստանի Հանրապետությունում..... 286

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, և բանալի - բառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
 - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Բնական գիտությունների ֆակուլտետի մասնաշենք՝ Նարինե Դավթյանին, կամ
 - ուղարկել akunq.yisuib@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(10)

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Չափսը՝ 70x100¹/₁₆: Տպ. մամուլը՝ 18.625:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025 Ալ. Մանուկյան 1